Գաբրիել Գարսիա Մարկես

ՆԱՀԱՊԵՏԻ ԱՇՈՒՆԸ

ԱՐՄԱՆ ՀԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ

ՆԱՀԱՊԵՏԻ ԱՇՈՒՆԸ

Թարգմանեց՝
ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

ՆՈՐՔ
ԵՐԵՎԱՆ 2000

ԳՏԴ 860.3 Գարսիա
ԳՄՍ 84.7 Կո
Գ 363

CABRIEL CARCIA MARQUEZ
EL OTONO DEL PATRIARCA

Գիրքը հրատարակվում է Մեծի Տանն Կիլիկիո
Կաթողիկոս ԱՐԱՄ Ա-ի աջակցությամբ

Գ 4703040100 2000 ԳՄԴ 84.7 Կո
0142(01)-2000

© «Նորք» հրատարակչություն, 2000

ISBN 99930-862-1-0

Տաբաթվա վերջին գիշակեր անգղերը բգկոնցին պատուհանների մեռաղյա ցանցերը, լուսամուտներով ու պատշգամբով խուժեցին պրեզիդենտական պալատ, թեւաբախումներով ալեկոծեցին մեռյալ ժամանակի հեղձուկ օդը, եւ երկուշաբթի լուսաբացին քաղաքն, ի վերջո, արթնացավ լեթարգիական դարավոր քնից, ուր ընկղմվել էր փթռակած իր ողջ վեհությամբ. այդ ժամանակ միայն մենք համարձակվեցինք ներս մտնել, եւ հարկ չկար ամրոցի խարխուլ պատերը գրավել գրոհով, ինչպես կոչ էին անում ոմանք, ամենակրակոտները, կամ շրամուտքը խոյահարել եղների լծասարքի առեղով, ինչպես առաջարկում էին մյուսները, քանզի մատով դիպչելն իսկ բավական էր, որ իրենք իրենց բացվեին այդ չինության հիշարժան ժամանակներում Ուիլյամ Դեյմպերի արկերի տակ կանգուն մնացած զրահապատ դարպասները. եւ ահա մենք քայլ ենք գցում անցյալ մի ժամանակաշրջան ու քիչ է մնում շնչահեղձ լինենք վիթխարի, ամերակ դառած տիրակալության որջում, ուր նույնիսկ լռությունն էր գառամ, լույսը՝ աղոտ եւ ամենայն իր աղոտ, ցնորական այդ լույսի մեջ հազիվ էր նշմարվում. առաջին բակում, որի քարե սալիկները ճկվել, ճաքճքել էին ուղտափշերի ընդվզումից, մենք տեսանք ճողոպրած պահակախմբի այս ու այն կողմ շպրտված զենքը, հանդերձանքը, տեսանք երկար, տախտակյա մի սեղան՝ վրան կիրակնօրյա ճաշի բորբոսած մնացուկներով ափսեներ, տեսանք մռայլ, կիսամութ մի կառույց, որտեղ ժամանակին տեղավորված էր գրասենյակը, ներսում թունավոր սնկեր, դալուկ, ժանտահոտ ծաղիկներ, որ բուսել էին լուծում չստացած այն գործերից, որոնց քննարկումն այստեղ ամենասանպտուղ կյանքից էլ դանդաղ էր ընթացել. այդ բակում մենք տեսանք նաեւ բարձրադիր կնքավազանը, որի մեջ կնքվել

էին պալատի տիրակալ բոլոր հինգ սերունդները, բակի խորքում տեսանք փոխարքայական կառասրահի փոխակերպված Նոյի տարվա ախոռը եւ ներսում, ամպ կազմած ցեցերի միջից տեսանք Մեծ Աղմուկի ժամանակի կառքը, Ժանտախտի ժամանակի ծածկված սայլը, Գիսաստղի ժամանակի լծասարքով կառքը, կարգուկանոնի շրջանակներում Առաջնթացի ժամանակների դիակառքը, Խաղաղության Առաջին Դարի լուանոտ լիմուզինը, եւ այս ամենը սարքին-կարգին, ներկված ազգային դրոշի գույնով, թեեւ աղտոտ էին, սարդոստայնով պատած, հաջորդ բակում, երկաթյա ցանկապատից այն կողմ ծաղկել էին արծաթավուն, ասես լուսնափոշով օծված վարդերը. այս վարդենիների հովանու տակ, պալատի փառավոր օրերին քնում էին բորոտները. վարդաթփերն այնպես էին հուռացել, որ շրջապատը լցրել էին իրենցով. օդը արբած էր վարդահոտից, խառնված այգու խորքից եկող գարշահոտով, որին էլ խառնվել էին հավանոցի, թրիքի, ինչպես նաեւ զինվորական մեզի գարշահոտերը,և զինվորներն ի վերուստ իրենց փոքր պետքերն անում էին կաթնաֆերմա դարձած գաղութային բազիլիկի պատի տակ. անցնելով շնչահեղձ անող վարդաթփերի միջով, մենք դուրս ելանք կամարակապ մի պատշգամբ, որ պատված էր մեխակի, բազմաթերթ աստղածաղկի, զառ-մանուշակի ծաղկամաններով. հավանոցի այս պատշգամբը նրա կանանց համար էր եւ դատելով կուտակված ամենատարբեր փալաս-փուլուսից ու կարի մեքենաների քանակությունից՝ կարելի էր ենթադրել, թե քանի կին էր բնակվում բարաքում. հազարից ոչ պակաս՝ յուրաքանչյուրն անհաշիվ ու օրապակաս իր երեխաների հետ. մենք տեսանք փնթի խոհանոցների նողկալիությունը, տեսանք տաշտակներում նեխող սպիտակեղեն, տեսանք զինվորների եւ կանանց համար ընդհանուր պետքարանի բաց հոսքը. տեսանք Փոքր Ասիայից հսկայական չաներով ու այնտեղի հողով բերված բաբելոնյան ուռենիներ՝ թխակապույտ, ասես մանր անձրեւով ցողված, իսկ ուռենիների ետեւում նրա պալատն էր, նրա տունը՝ հսկա, մռայլ,- վարագույրները պոկոտված լուսամուտների բացվածքից դեռեւս ներսուդուրս էին անում անգղերը. մենք հարկադրված չեղանք կոտրել դռները, դրանք բացվեցին իրենք իրենց, ասես ենթարկվելով մեր ձայնին, եւ մենք, ահա, քարե սանդուղքով բարձրացանք գլխավոր հարկա-

բաժին, որ օպերեստային շքեղություն ուներ, ծածկված էր կովերի կճղակների տակ տրորված գորգերով եւ, սկսած առաջին սրահից մինչեւ վերջին ննջասենյակը, մենք եղանք բոլոր սենյակներում, անցանք օժանդակ զետեղարանները, անհամար ընդունարանները, եւ ամենուր թափառում էին անվրդով կովերը. նրանք որոճում էին թավշե վարագույրները եւ մուրտառում բազկաթոռների ատլասե պատառները՝ տրորելով սրբապատկերները եւ զորավարների դիմանկարները, որ թափված էին հատակին, կահույքի ջարդոնի եւ թրիքի մեջ. կովերը տեր ու տիրակալն էին ճաշասենյակում եւ համերգային դահլիճում, որ պղծել էին իրենց մնչոցով, ամենուր էին կովերը. մենք տեսանք նաեւ դոմինո խաղի ջարդված սեղանիկները եւ բիլիարդի սեղանի կանաչասպիտակավուն մահուդը, որ ասես նախորդ սրահից տկլորված մարդագետին լիներ, տեսանք մի կողմ գցած քամու մեքենան, որի թիակները կարող էին նմանակել ուզածդ ուղղության ծովային քամուն, որպեսզի իրենց հարազատ ափերը լքած այս տան բնակիչները չթախծեին ծովի կարոտից. մենք տեսանք նաեւ ամենուր կախված ծածկոցներով թոչնավանդակներ. ինչպես ծածկել էին անցած շաբաթվա գիշերը, այդպես էլ մնացել էին. իսկ անհաշիվ լուսամուտներից երեւում էր քաղաքը՝ վիթխարի մի կենդանի, որի գիտակցությանը դեռեւս չէր հասել արդեն շնչող պատմական երկուշաբթին, իսկ քաղաքից այն կողմ, մինչեւ հորիզոնը, տարածվում էին սմայի խառնարաններ, խորդուբորդ, ասես լուսնի փոշուց կազմված բլրակներ՝ անեզր հարթության վրա, որտեղ երբեւէ ծուն էր ալեկոծվում. իսկ արգելավայր մենաստանից, ուր դեռ երեկ շատ քչերն էին համարձակվում մտնել, փոստի, լեշի հոտ էր փչում, լսվում էր այնտեղից եկող անգղերի ասթմատիկ շնչառությունը, եւ անտանելի գարշահոտի ու անգղերի թռիչքի ուղղությունը բռնած՝ մենք հասանք նիստերի դահլիճ, որտեղ նույնպես կովեր էին, միայն թե սատկած,- նրանց որդնոտած մարմինները, նրանց կլորավուն սուկիները բազմապատկվել էին դահլիճի հսկայական հայելիների մեջ. մենք հրեցինք կողքի դաղտնի դուռը, որ տանում էր նրա առանձնասենյակը եւ տեսանք այնտեղ նրան՝ առանց տարբերանշանի դուչային համազգեստով, ճոքավոր կոշիկներով. ձախ կոշիկի վրա պսպղում էր ոսկյա խթանը: Նա, որ ամենատարեցն էր աշխարհի բոլոր մահ-

կանացուներից, ամենահինը ջրային ու ցամաքային նախանպատմական կենդանիներից, պառկած էր բերանքսիվայր, դեմքը խրած ափերի մեջ,- ահա այսպես, այս դիրքով էր նա քնում միշտ, ինքնիշխան-ճգնավորի իր երկար կյանքի երկար գիշերները. բայց երբ մենք շրջեցինք նրան, որ տեսնենք դեմքը, հասկացանք, որ նրան ճանաչելն անհնար է, եւ ոչ միայն այն պատճառով, որ դեմքը կտցահարել էին անգղերը. ինչպե՞ս կարող էինք ճանաչել, երբ մեզանից եւ ոչ մեկը չէր տեսել նրան կենդանության օրոք: Եվ թեեւ նրա կիսադեմը դրոշմված էր ցանկացածդ մետաղադրամի զույգ երեսին էլ, պատկերված էր փոստային դրոշմանիշների, փորլուծության դեմ դեղերի պիտակների, կալանդների ու մետաքսյա խնկամանների վրա, թեեւ ոսկյա շրջանակով նրա վիմագրական դիմանկարը՝ դրոշակով, վիշապի նշանը կրծքին, յուրաքանչյուր պահին եւ ամենուր բոլորիս աչքի առաջ էր, մենք գիտեինք, որ դրանք պատճեններն էին նախկին պատճենների, որ անհավատի էին համարվում դեռեւս Գիսաստղի տարին, երբ մեր ծնողներն իրենց ծնողներից իմացան, թե ով է նա եւ ինչ տեսք ունի, իսկ նրանք իմացել էին իրենց պապերից. փոքր տարիքից մենք վարժվել էինք հավատալ, որ նա անմահ է ու ընդմիշտ ապրելու է Իշխանության տանը. մենք գիտեինք, որ տոնի նախօրյակին նրան տեսնող էր եղել Իշխանության տանը կանթեղի գնդերը վառելիս, լսել էինք պատմությունները, թե ինչպես է մեկը տեսել նրա թախծոտ աչքերը, գունատ շրթները՝ պրեզիդենտական կառքի լուսամուտիկից, տեսել էր նաեւ ձեռքը, որ դուրս էր եկել եկեղեցական շուրջառի նման արծաթահյուս վարագույրի վիրեւից,- այդ ձեռքը մտախոհ օրհնում էր ամայի փողոցը. մենք լսել էինք, որ նա ողջ-առողջ է այն կույր թափառաշրջիկից, որին տարիներ առաջ, կիրակի օրով ձերբակալեցին հենց փողոցում, որտեղ նա հինգ սենտավո վճարով արտասանում էր մոռացված պոետ Ռուբեն Դարիոյի բանաստեղծությունները,- ձերբակալեցին, բայց շուտով էլ երջանկացրած բաց թողեցին՝ մաքուր ոսկյա դրամը գրպանը խցկած, որ հոնորարն էր հատուկ պրեզիդենտի համար կայացած պոեզիայի երեկոյի. թափառաշրջիկն, իհարկե, նրան չէր տեսել, քանզի կույր էր, բայց եթե առողջ աչքեր էլ ունենար, միեւնույն է, չէր տեսնի գենեբալին, որովհետեւ Դեղին Տենդի ժամանակից ի վեր նրան չէր կա-

ոչ տեսնել եւ ոչ մի մահկանացու: Եվ, այսուհանդերձ, մենք գիտեինք, որ նա կար, որովհետեւ երկրագունդը պտտվում էր, կյանքը շարունակվում, փոստը գալիս էր, քաղաքապետարանի փողային նվագախումբը մինչեւ շաբաթ օրվա վերջին զանգը նվագում էր անհեթեթ վալսերը դե Արմս հրապարակի փոշոտ արմավենիների եւ տխուր լապտերների ներքո,- մեռնող երաժիշտներին փոխարինում էին նորերը,- նույնիսկ վերջին տարիներին, երբ Իշխանության տնից այլեւս չէին լսվում ոչ մարդկային ձայներ, ոչ թուչնային երգեր, երբ դաղարեցին բացվել զրահապատ դարպասները, մենք գիտեինք, որ պալատում կա մեկը, որովհետեւ նախկին ծովին նայող լուսամուտներից, ինչպես նավի լուսամուտներից, լույս էր նշմարվում, իսկ եթե մեկը համարձակվում էր մոտ գնալ, լսում էր սմբակների դոփյուն եւ ինչ-որ խոշոր կենդանիների շնչառություն, որ գալիս էր ամրոցի պատերի այն կողմից. իսկ մի անգամ, հունվարին, մենք տեսանք պրեզիդենտական պատշգամբից արեւամուտը վայելող կովին. պատկերացնո՞ւմ եք, կովը Հայրենիքի գլխավոր պատշգամբում: Ինչպիսի՜ այլանդակություն. թրիքոտ երկիր չէ՞: Բայց կասկածն սկսեց կլծել ամենքիս. հնարավո՞ր է, արդյոք, որ կովը Հայոնվի պրեզիդենտական պատշգամբում: Մի՞թե կովերը ճեմում են սանդուղքներին, այն էլ պալատական, այն էլ զորգածածկ: Եվ այնպիսի մի դատարկ խոսքուզրույց սկսվեց, որ մենք, ի վերջո, չգիտեինք, թե ինչ մտածենք. տեսե՞լ ենք անիծյալ այդ կովին պրեզիդենտի պատշգամբում, թե աչքներիս է երեւացել: Չէ՞ որ այդ պատշգամբում ոչ ոք երբեք, ոչինչ չի տեսել մինչեւ ճակատագրական ուրբաթ օրվա լուսաբացը, երբ այստեղ եկան առաջին սնդղերը՝ լքելով աղքատաց Հիվանդանոցի քիվերը, ուր սովորաբար թառում էին դանթելու. բայց թան-եկան ոչ միայն դրանք, հեռու-հեռուներից եկան բազմաթիվ այլ երամներ,- նրանք Հայոնվում էին մեկը մյուսի ետեւից, ինչպես երբեմնի ալիքները, որ գլորվում էին հորիզոնի տակից, որտեղ հիմա նախկին ծովի փոխարեն փոշու ծովն է փռված. ողջ օրն անգղերի երամները ծուլորեն պտտվում էին Իշխանության տան գլխավերեւում, մինչեւ առաջնորդը, երկար, կարմիր վզով, սպիտակ փետրափնջով, ատես թագով պսակված նրանց արքան անձայն հրահանգ տվեց եւ այնժամ շրխկացին կոտրատվող ապակիները, մեծ հանգուցյալի

գարշահոտն ընկավ, անգղերն այսուայն կողմ էին թռչում, մտնում-դուրս գալիս պատահած լուսամուտով, ինչպես լինում է տիրոջից լքված տանը, կենդանի շունչ չունեցող տանը. եւ երկուշաբթի օրը մենք էլ սիրտ առանք, ներս մտանք ու դատարկ սրբարանում տեսանք երբեմնի վեհության ավերակները, գտանք նրա մարմինը՝ բզկտված դեմքով, խնամված, կանացի ձեռքերով,- աջ ձեռքի անանուն մատին մատանի կար՝ պետական կնիքով. ամբողջ մարմինը ծածկված էր մանր ցանով, հատկապես թեւատակերին եւ աճուկների վրա. նա հագել էր բրեզենտե կալանդ, որ սեղմած պահում էր նրա հսկայական, ինչպես ցլի երիկամ փոշտանկը, միակ բանը, որին չէին դիպել անգղերը: Բայց նույնիսկ հիմա մենք չէինք կարողանում հավատալ, որ մեռած է, որովհետեւ մի անգամ արդեն նրան այս նույն առանձնասենյակում գտել էին մեռած,- թվում էր մեռել է բնական մահով, քնի մեջ, ճիշտ այնպես, ինչպես ջրով լի թասին նայելով տարիներ առաջ գուշակել էր գուշակ-պայծառատեսը. այն ժամանակ նրա աչնան տարիները դեռ նոր էին մոտենում, իսկ երկիրը դեռ այնքան էր աշխույժ, որ նա չէր կարող իրեն ապահով զգալ նույնիսկ սեփական առանձնասենյակում, իր գաղտնի ննջասենյակում, բայց եւ կառավարում էր այնպես, ասես համոզված էր, որ չի մեռնելու երբեք, եւ պրեզիդենտական պալատն իր բոլոր բակերով ու ծառայություններով ավելի շատ շուկայի էր նման, քան պալատի,- այս շուկան դյուրին չէր խցկվել ավանակների ծանր հակերը բեռնաթափող, պալատի միջանցքներով բանջարեղենի, հավերի զամբյուղները քարշ տվող ոտաբոբիկ սպասյակների պատնեշի միջով. հարկ էր շրջանցել կանանց խմբերը, որոնք քաղցած երեխաներին գրկած ննջում էին սանդուղքների վրա՝ սպասելով պաշտոնական ողորմածության հրաչքին. հարկ էր լինում խուսափել պղտոր ջրերից, որ թափում էին նրա կովարար սիրուհիները ծաղկամաններից, որպեսզի դիշերվա ընթացքում թառամածների փոխարեն նոր ծաղիկներ տնկեն. այդ տիկինները թաց փալասներով սրբում էին հատակը եւ վասն մեղսալի սիրո երգեր երգում, չափ զարկում այն ավելներով, որոնցով պատշգամբում գորգերն էին ծեծում. ավելների աղմուկը եւ երգեցողությունը խառնվում էին նույն պաշտոններին ցմահ գամված չինովնիկների ճղճղան ձայներին. սրանք հայհոյում էին մեկմեկու եւ

Հայհոյանքով էլ իրենց գրասեղանների դարակներից վռնդում հենց այդ դարակներում հանգիստ խղճով ձու ածող հիմար հավերին, իսկ սրանց հայհոյանքին ձայնակցում էին կանանց եւ զինվորների համար ընդհանուր պետքարանի աղմուկը, թռչունների հովոցյունը, նիստերի դահլիճից լսվող անտուն շների զզվատոցի ձայները. եւ ոչ մեկն այստեղ չգիտեր, թե ով ով է, չգիտեր՝ որտեղ ինչ կա լայնորեն բացվող հարյուրավոր ու վիթխարի պռներով այս պալատում եւ, անշուշտ, ոչ մի կերպ հնարավոր չէր որոշել, թե այս խենթանոցում, բացառիկ այս խառնաշփոթության մեջ որն է եւ որտեղ է կառավարությունը. պալատի տիրակալը չուվյական այդ չվոթի սոսկ մասնակիցը չէր. արարիչն էր, ոգեշնչողն ու զրդիչը, եւ հենց լուսավորվում էր նրա ննջասենյակի լուսամուտը,- իսկ դա լինում էր առաջին աբլորականչից էլ շատ առաջ,- պրեզիդենտական գվարդիայի չեփորահարը փչում էր նոր «օրվա կանչը, ազդանշանին արձագանքում էին մոտակա Կոնդե զորանոցները եւ հաղորդում ավելի հեռու՝ Սան Խերոնիմա բուլվ. այնտեղից էլ հասնում էր նավահանգստի ամրոցին, եւ ամրոցը նմանապես կրկնում էր չեփորականչի վեց տակտը՝ վեց ազդանշան, որոնք արթնացնում էին նախ մայրաքաղաքը, հետո նաեւ ողջ երկիրը, քանի դեռ փոքրիկ պետքարանում կքված պալատի տիրակալը ընկղմված էր լինում վաղորդյան խոհերի մեջ. նա ափերով փակում էր ականջները, որպեսզի լուցկի գլխամեջի աղմուկը, ինչն այդ տարիներին սկսել էր տանջել նրան, եւ նայում կենդանի, տոպազի նման ծխատ-երփնագույն ծովի վրայով սահող նավերի կրակներին,- փառավոր այն ժամանակներում ծովը դեռ ծփում էր նրա լուսամուտների տակ. հետո նա կաթնաֆերմա էր գնում ստուգելու՝ այդ առավոտ որքա՞ն կաթ է կթվել եւ կարգադրելու դրա բաշխումը, որից հետո պրեզիդենտական երեք կառքերը կաթը տեղափոխում էին քաղաքի զորանոցները,- նա անձամբ էր ստուգում կաթի քանակը եւ կարգադրում բաշխումը պալատ մտնելու օրից. հետո խոհանոցում մի գավաթ սուրճ էր խմում եւ ուտում մի պատառ կասաբի՝, չերեւակայելով էլ, թե ուր են տանելու իրեն նոր օրվա քամիները, ինչով է զբաղվելու, եւ հետաքրքրությամբ ականջ դնում սպասուհիների զրույցին. նա միշտ էլ ականջ էր դնում,

* Կասաբե - թխվածք՝ հացարմատից:

քանզի այդ մենաստանում ընդհանուր լեզու էր գտնում միայն սպասուհիների հետ. նրանց հաղորդակցվելը հեշտ էր, եւ նա լրջորեն էր ընդունում սպասուհիների գովաբանությունները իր հասցեին ու առանց դժվարության կարդում նրանց սրտի գաղտնիքները...

Եվ այսպես նա սուրճ էր խմում, ուտում մի պատառ կասաբե եւ ինչի մոտերքը մտնում գրանիտյա տաշտը, որ դրված էր նշենիների ստվերի տակ, իր անձնական բակում՝ ետնաբակում, եւ պառկում տաք, բուժիչ տերեւների գոլորշիներով հագեցած ջրերում մինչեւ տասնմեկը, եւ այս արարողությունը նրան օգնում էր հաղթահարել անորոշ տագնապի զգացումը, ձեռք բերել խաղաղություն՝ կյանքի հերթական անակնկալներին դիմագրավելու: մի ժամանակ, այն օրերին, երբ դեռ նոր-նոր էր ավ իջել իրեն պրեզիդենտ դարձնող ծովային դեսանտը, նա փակվում էր դեսանտային զորքերի հրամանատարի հետ իր առանձնասենյակում՝ վճռելու հայրենիքի ճակատագիրը, ստորագրում էր ամեն տեսակի օրենքներ ու հրահանգներ բթամատի սեղմումով, քանզի բացարձակապես անգրագետ էր՝ ոչ կարդալ գիտեր, ոչ գրել, բայց երբ նրան թողեցին մեն-մենակ հայրենիքի ու իշխանության հետ, նա վճռեց, որ չարժե արյուն պղտորել ծուռտիկ-մուռտիկ տառերով գրված, նրբանկատություն պահանջող օրենքների պատճառով, եւ սկսեց կառավարել երկիրը՝ ինչպես աստվածն էր հոգուն թելադրում, եւ դարձավ ամենապո ու անառարկելի, իշխանության գագաթներում ցուցաբերելով ժայռագնացի զգուշավորություն, միեւնույն ժամանակ իր տարիքին անհավատալիորեն ոչ հատուկ ճարպկություն, անվերջ շրջապատված բորոտների, կույրերի ու ընկնավորների ամբոխով. սրանք մի պտղունց աղ էին խնդրում, որովհետեւ կարծում էին, թե նրա ձեռքի աղը բուժիչ է. շրջապատված էր նաեւ դիվանագետ-քաղաքագետներով, լկտի ստահակներով ու քծու շողոքորթներով, որոնք նրան երկրաշարժների, երկնային նշանների, նահանջ տարիների եւ աստծո այլեւայլ սխալների կորեխիդոր* էին հռչակում, իսկ նա, ձյան վրա քայլող փղի նման պալատով մեկ քարշ էր տալիս իր վիթխարի ոտքերը, հենց ընթացքում վճռում

* Կորեխիդոր - նահանդապետ: Այստեղ բառախաղ է. կորեխիդորի առաջին նշանակությունը ուղղող, սրբադրիչ է:

պետական ու կենցաղային հարցերը, ճիշտ այնպիսի հեշտությամբ, ինչպես հրամայում էր հանել ու տեղափոխել այս կամ այն դուռը. հրամանն իրագործվում էր առանց ուշացման, թեեւ նա տեղնուտեղն էլ կարգադրում էր ետ տանել դուռը. այս կարգադրությունն էլ էր կատարվում իսկույն, ինչպես եւ հրամանը՝ որ աշտարակի ժամացույցը կեսգիշերին եւ կեսօրին զարկի ոչ թե տասներկու, այլ երկու անգամ, որպեսզի կյանքը առավել երկար թվա,- հրամանները կատարվում էին անառարկելիորեն, անտրտունջ: Եվ միայն սիեստայի մեռյալ ժամերին էր ամեն ինչ սկվում, ամեն ինչ կանգ առնում, իսկ նա այդ ժամերին շոգից փրկվում էր կանանց հավանոցի կիսախավարում, որտեղ ընտրության վրա պահ իսկ չկորցնելով, հարձակվում էր առաջին պատահած կնոջ վրա, ճանկում ու պառկեցնում էր անկողնու լայնքով՝ առանց մերկացնելու, ինքն էլ չէր հանվում, ետեւից դուռն էլ չէր փակում, եւ ամբողջ պալատը լսում էր նրա ծանր փնչոցը, նրա շնային կաղկանձը, նրա հապշտապ հեւոցը, խթանների հաճախակի զնգզնգոցը, որ ոտքերն ընկած թույլ դողէրոցքից էր ծնվում, եւ լսվում էր սարսափով համակված կնոջ ձայնը,- կինը սիրո այդ պահերին փորձում էր իր վրայից ետ վանել նիհար, վտիտ օրապակասների հայացքները. «Դուրս կորեք, գնացեք բակ. ձեր տեսնելու բանը չէ. երեխաներին չի կարելի տեսնել այդ բանը»: Եվ կարծես խաղաղ հրեշտակն էր ճախրում հայրենիքի երկնքում. լռում էին ձայները, կանգ էր առնում ամեն մի շարժում, ողջ երկիրը մատը շրթներին էր տանում. «Սուս... մի շնչեք... լռություն... գեներալը սեր է վայելում...»: Սակայն ովքեր ծանոթ էին նրան, հավատ չէին ընծայում, նույնիսկ պետության կյանքի այդ դադարին, չէին հավատում, թե նա զբաղված է սիրո վայելքով, որովհետեւ քաջ գիտեին՝ նա երկատվելու սովորություն ունի. երեկոյան ժամը յոթին նրան տեսել էին դոմինո խաղալիս, բայց ճիշտ ժամը յոթին նա այրվող աթարի ծխով նիստերի դահլիճից դուրս էր քշում մժղուկներին. ոչ մեկը հաստատ ոչինչ չէր կարող իմանալ, քանի դեռ չէին մարում բոլոր պատուհանների լույսերը, եւ չէր լսվում նրա ննջասենյակի դռան երեք կողպեքների ճռնչոցը, երեք մղլակների չրխկոցը եւ երեք շղթաների զնգոցը, քանի դեռ այնտեղից, ննջասենյակից չէր լսվում խուլ թրխկոցը, որ նշան էր, թե նրա ծանր, հոգնած մար-

մինն ընկավ քարե հատակին, որից հետո կարելի էր լսել մանկան քուն մտած ծեր մարդու արագահար շնչառությունը, որ ծովի գիշերային մակընթացության հետ ավելի ու ավելի համաչափ ու խոր էր դառնում. եւ այդ ժամանակ քամու տավիղները թմբկաթաղանթներում խլացնում էին ճպուռների ճռռոցը, լայն, փրփրալի ալիքը վազ էր տալիս փոխարքաների ու բուկանյերների՝ հինավուրց քաղաքի փողոցներով, զարկվում լուսամուտներին, ողողում պալատը, եւ խխունջները կպչում էին հայելիներին, նիստերի դահլիճում երախները լայն բացում էին շնաձկները, իսկ ալիքը բարձրանում էր նախապատմական օվկիանոսի ամենաբարձր մակարդակից էլ վեր, գրավում երկիրը, տարածությունը, ժամանակը եւ միայն նա էր լուսնալույս ծովով լողում իր երազներում որպես մենավոր ջրահեղձ՝ դաշտային համազգեստով, ոսկյա խթանով ճոքավոր կոշիկները հագին, լողում էր երեսն ափերի, ինչպես բարձի, մեջ խրված:

Նրա երկատվելու, այսինքն միաժամանակ տարբեր տեղերում լինելու երեւույթը՝ բարձրանում էր երկրորդ հարկ եւ նույն պահին էլ առաջին հարկ իջնում, միայնության մեջ ծովի հեռվին էր նայում եւ նույն պահին էլ թրթռում սիրո վայելքի մեջ.- այս ամենը բոլորովին էլ արտահայտությունը չէին նրա անձնական ինչ-ինչ արտակարգ հատկությունների, ինչպես հավատում էին շողոքորթները, եւ ոչ էլ զանգվածային տեսապատրանք էր, ինչպես պնդում էին թշնամիները. պարզապես նա նմանակ ուներ, ճիշտ իր պատճենը, չան պես հավատարիմ մեկը, որը հանուն նրա պատրաստ էր ամեն ինչի. Պատրիսիո Արագոնեսն էր, որին, ի դեպ, գտան պատահականորեն, քանզի ոչ մեկը հատկապես չէր փնտրել նրան. պատահեց այնպես, որ մի անգամ պրեզիդենտին զեկուցեցին. «Իմ գեներալ, պրեզիդենտական կառքի նման մի կառք է շրջում հնդկացիների գյուղերով, եւ նրա մեջ նստած է մի ստահակ, որն իրեն մեծ հաջողությամբ ներկայացնում է ձեր փոխարեն: Մարդիկ կառքի կիսախավարում տեսել են նրա թախծոտ աչքերը, եւ դրանք ձեր աչքերն են, իմ գեներալ. տեսել են նրա գունատ շրթները, եւ դրանք ձեր շրթներն են, իմ գեներալ. տեսել են, թե

* Բուկանյերներ - Ամերիկայի խոպանական տիրույթները թալանող ծովահեններ:

ինչպես է նա մետաքսե ձեռնոցը հագին կանացի, ձերի նման ձեռքով կառքի լուսամուտից աղ շպրտում հիվանդներին, որոնք ծնկի են գալիս ճանապարհի երկայնքով, իսկ կառքի ետեւից սպայական համազգեստով երկու հեծյալ են գնում ու փող ժողովում իբրեւ թե բուժիչ այդ աղի համար: Ինչպիսի՜ սրբապղծություն, իմ գեներալ»: Նա, սակայն, չհրամայեց անհապաղ պատժել խաբեբային, հրահանգեց ծածուկ պալատ բերել նրան՝ գլխին պարկ հագցրած, որպեսզի ոչ մեկը ստահակին չչփոթեր պրեզիդենտի հետ. իսկ երբ ստահակն արդեն պալատում էր, գեներալը նվաստացման տարօրինակ զգացում ապրեց՝ ասես իրեն տեսավ կողքից. նվաստացուցիչն այդ տականքի հետ հավասարվելու վիճակն էր: «Գրողը տանի, այդ մարդն, ախր, ես եմ»,- ասաց նա ինքն իրեն, թեեւ առայժմ այդպես չէր. երկվորյակը չէր կարողանում նույնիսկ նմանակել պրեզիդենտի ձայնը, ափամիջի կյանքի գիծն էլ շատ որոշակի էր ընդգծված. ահա այս հանգամանքն էլ ամենից շատ հուզեց նրան, հատկապես այդ պատճառով չհրամայեց գնդակահարել ստահակին. սարսափում էր, որ նրա ձեռքի ճակատագրի գիծը կարող էր ինչ-ինչ կերպով ազդել իր իսկ ճակատագրի վրա. Պատրիսիո Արագոնեսին պաշտոնական նմանակ դարձնելու գաղափարը ծնվեց ավելի ուշ, երբ համոզվեց, որ իր սարսափն անհիմն է: Այդ ժամանակ Պատրիսիո Արագոնեսն արդեն հասցրել էր մեծ հաջողությամբ խուսափել վեց մահափորձից, վարժվել էր ոտքերով քստքստացնելուն, փայտե մուրճիկով այնքան էին հարվածել ներբաններին, որ գրեթե հարթաթաթություն էր ձեռք բերել, տառապում էր ականջներում հնչող աղմուկից եւ ճողվածքից՝ ամենից շատ ձմռանը եւ ավելի հահաթ առավոտները, սովորել էր խթանի հետ խաղալ այնպես, ասես իրար էր խառնել իր բոլոր գոտիներն ու ճարմանդները. դա արվում էր ընդունելություններին՝ ժամանակ շահելու նպատակով. իբր, խթանն էր ամրացնում ու փնթփնթում քթի տակ. «Գրողը սրանց տանի, այս ճարմանդները, ֆլամանդական դարբիններին էլ՝ ոչինչ չեն կարողանում սարքել»: Խեղկատակից ու շատախոսից, ինչպիսին էր նա, երբ հոր մոտ ապակի փչող էր աշխատում, վերածվել էր մռայլ լռակյացի, երբեք ուշք չէր դարձնում բարձրաձայն արտասանված բառերին, հայացքով սուզվում էր զրուցակցի աչքերի խորքը՝ այնտեղ կարդալու չաս-

վածը. նա ետ վարժվեց հարցերին մեկեն պատասխանելու սովորությունից եւ ցանկացած հարցին պատասխանում էր հարցով. «Իսկ դո՞ւք ինչ եք կարծում»: Այդ անբան սրիկան, որ դեռ վերջերս զբաղվում էր կաղերի ու խեղճուկրակների ապաքինման հրաշագործությամբ, հիմա դարձել էր գործունյա, ոչ մի բոպե չէր նստում միեւնույն տեղում, ամբողջ ժամանակ դեսուդեն էր ընկնում, դարձել էր ժլատ եւ հաշտվել այն մտքին, որ կանանց պետք էր տիրանալ աքլորի պես, մի ցատկով, եւ քնել հատակին, առանց բարձի, դեմքը խրած ափերի մեջ. նա հրաժարվեց փառասիրական իր տարփանքից, որովհետեւ ինքնիշխան էր ուզում ապրել, որովհետեւ ի ծնե նրան ապակյա շշեր փչելու շնորհք էր տրված, ինչով եւ զբաղվեց մի որոշ ժամանակ՝ փայփայելով բարի մտադրություններ. աշխարհում ունեցած ամեն ինչը նա փոխեց մահացու վտանգի հետ, ինչով նախանշված է դերագույն իշխանությունը կրողի կյանքը. այդ վտանգին Պատրիսիո Արագոնեսը ենթարկվեց բոլոր այն արարողություններում, որտեղ առաջին հիմնաքարերն էին դրվում, որտեղ երկրորդները չէին դրվելու, այն հանդիսությանը, որտեղ ինչ-ինչ ցուցահանդես էին բացում, եւ ինքը կտրեց ժապավենը, իսկ շուրջը վխտում էին խաբուսիկ եւ անհասանելի թշնամիներ, գեղեցկության թագուհիների օծման անհաշիվ ծեսերին. գեղեցկուհիներին նա չէր համարձակվում ափլափիլ ինչպես հարկն է, քանզի հաշտվել էր իր խեղճ ճակատագրի հետ. անշուշտ, այս ամենին նա տրվեց ոչ ագահությունից եւ ոչ էլ համոզմունքից, պարզապես այլ ելք չուներ, որովհետեւ ամսական հիսուն պեսո աշխատավարձով ցմահ նմանակի պաշտոնը, արքա չլինելով արքայավայել ապրելու հնարավորությունը նրան շնորհվել էր մահապատժի փոխարեն. այլեւս ի՞նչ հրաժարվելու մասին է խոսքը: Բայց մի գիշեր պրեզիդենտը ընկճված Պատրիսիո Արագոնեսին տեսավ ծովափին, հասմիկի բուրումնավետ թփի տակ հառաչելիս եւ անկեղծ անհանգստացած հարցրեց, թե ինչ է պատահել. հո չե՞ն թունավորել ճաշին, կամ գուցե չար աչք է դիպել, որ այդպես ծեծված է երեւում, կծկված. եւ Պատրիսիո Արագոնեսը պատասխանեց. «Ոչ, իմ գեներալ, ավելի վատ բան է կատարվել»: Եվ իսկույն էլ պարզվեց, որ շարաթ օրը նա թագադրել էր պարահանդեսի թագուհուն, պարել նրա հետ առաջին վալսը ու հիմա ոչ մի կերպ չի կարողա-

նում գտնել այդ հիշողությունը ճանապարհ գցելու դուռը, չի գտնում փախուստի ուղին, քանզի այդ կինը, աշխարհի ամենագեղեցկուհին նրանցից է, ովքեր թեեւ լավն են, բայց մերը չեն, իմ գեներալ. եթե՞միայն տեսնեիք նրան: Եվ այդժամ, թեթեւացած շունչ քաշելով, գեներալն ասաց, որ կնկա համար այդպես հալումաշ լինելը բանի նման չէ, սակայն ինքը հասկանում է՝ Պատրիսիոն պարզապես անկնիկ է մնացել, եւ առաջարկեց փախցնել գեղեցկուհուն, ինչպես ինքն է փախցրել շատ անգամներ անմատչելի թվացողներին, որոնք հետո մեծ բավականությամբ էին ապրում իր հետ: «Ես կպառկեցնեմ նրան քո մահճակալին,- ասաց նա,- չորս զինվոր կբռնեն նրա ձեռքերը եւ ոտքերը, քանի դեռ դու զբաղված կլինես նրան հաչակելով: Թող նա դիմադրի... Տանձիդ... նույնիսկ ամենասրբերն են սկզբում չարանում, այս ու այն կողմ շուռ գալիս, իսկ հետո աղաչում են՝ չլքեք ինձ, իմ գեներալ, կծած խնձորի նման ինձ դեն չշպրտեք»: Սակայն Պատրիսիո Արագոնեսը չբավարարվեց այդքանով, ավելին էր ուզում, սեր էր ուզում, ցանկանում էր սիրելի լինել, որովհետեւ, ասաց նա, այդ կինը աննման է, գիտե, թե ինչ բան է սերը, գիտե՝ ինչն ինչոց է, ինքներդ կհամոզվեք, իմ գեներալ, երբ տեսնեք նրան: Եվ այդժամ գեներալը մեղմացրեց Պատրիսիոյի հոգը, որպես փրկության բանաձեւ մատնացույց անելով թաքուն այն արահետները, որ տանում էին տիրոջ կանանոց-ննջասենյակները, եւ թույլատրեց նրան օգտվել սրտին ուզածի չափով, միայն թե իր պես, աքլորի նման, մի ցատկով, առանց մերկացնելու ու մերկանալու. եւ Պատրիսիո Արագոնեսը բարեխղճորեն սողոսկեց ուրիշի սիրո ճահիճը, հավատալով, թե այդ կերպ կկարողանա խեղդել սեփական կիրքը, սեփական ցանկությունը, բայց կիրքն այնքան մեծ էր, ցանկությունն այնքան ուժեղ, որ նա, պատահում էր, մոռանալով պայմանը, գործում էր անշտապ, վայելքով, ոգեշնչված, արթնացնելով նույնիսկ քնքշանքից ժլատ, ամենասառը կանանց, կենդանացնելով նրանց քարացած զգացմունքները, ստիպելով տնքալ հաճույքից եւ զարմացած հրճվել մթության մեջ. «Ա՛յ, քեզ բան, օր-ծերության ավելի անխոնջ եք դառնում, իմ գեներալ...»: Եվ այդ ժամանակից սկսած ոչ ոք՝ ո՛չ գեներալը, ո՛չ Պատրիսիոն, ո՛չ էլ կանանցից որեւէ մեկը, չէր կարող իմանալ, թե ումից է սաղմնավորվել այս կամ այն երե-

խան, որն է ում տլան եւ ով է ում հայրը, որովհետեւ Պատրիսիո Արագոնեսից, ինչպես եւ գեներալից, միայն օրապակասներ էին ծնվում: Ահա այդպես եղավ, որ Պատրիսիո Արագոնեսը դարձավ պալատականներից ամենամտերիմը, ամենասիրելին եւ, թերեւս, ամենասարսափելին, իսկ գեներալը Պատրիսիոյի շնորհիվ ազատ ժամերի մեծ պաշարի տեր դարձավ, սկսեց զբաղվել ռազմական ուժերով, ներդրեց իր ողջ ուշադրությունը, ինչպես այն ժամանակ, երբ ստանձնեց բարձրագույն պաշտոնը: Բայց նա զբաղվում էր ռազմական ուժերով ոչ այն պատճառով, որ իր իշխանության հիմքը բանակն էր համարում: Ընդհակառակը: Նա կարծում էր, որ ռազմական ուժերը իր ամենաերդվյալ թշնամիներն են եւ այս համոզմունքին էլ համապատասխան ձգտում էր իրար դեմ լարել սպաներին. մեկի ականջին շշնջում էր, թե իր նկատմամբ որոգայթներ են լարում մյուսները, այս ու այնտեղ տեղափոխելով, նշանակումներով, նա այնպես էր խառնշտորում նրանց ճակատագրերը, որ անհնարին դառնար դավադրությունը. նա զորանոցներ էր ուղարկում փամփուշտներ՝ տասից ինը դատարկ, ծովի ավազով խառնված վառոդ էր մատուցում, իսկ ինքը ուներ գերազանց զինանոց, որ տեղավորված էր պալատի նկուղներից մեկում. նկուղի բանալիները թաքուն զրնգում էին այլ դռների բանալիների հետ միեւնույն փնջում եւ յուրաքանչյուր բանալուց գոյություն ուներ միայն մեկը. միայն ինքն իրավունք ուներ բաց անել զինանոցը՝ ստվերի պես ուղեկից-պահակ ունենալով գեներալ Ռոդրիգո դե Ագիլարին, իր թանկագին ընկերոջը, կադրային հրետանավորին, որը զբաղեցնում էր պաշտպանության մինիստրի, պրեզիդենտական գվարդիայի հրամանատարի եւ ազգային անվտանգության ծառայության պետի պաշտոնները. նա մեկն էր սակավաթիվ այն մահկանացուներից, որին թույլատրվում էր հաղթել գեներալին դոմինո խաղում,- չէ՞ որ Ռոդրիգո Ագիլարն էր կորցրել աջ ձեռքը՝ ուժանակի լիցքը վնասազերծելիս, մի քանի լոպե առաջ այն պահից, երբ անցնելու էր պրեզիդենտական կառքը մահափորձի համար նախատեսված վայրից: Գեներալ Ռոդրիգո դե Ագիլարի թիկունքում եւ Պատրիսիո Արագոնեսի դեմքով նա իրեն այնքան սպահով էր զգում, որ բթացրեց ինքնապաշտպանության բնազդը, սկսեց հայտնվել մարդկանց ավելի ու ավելի հաճախ, հա-

մարձակվեց գրոսնել քաղաքում միայն համհարգի ուղեկցությամբ, առանց գերբի սովորական կառքով, որի վարագույրը ետ քաշելով՝ նայում էր ոսկեգույն քարերով շարված, չքեղ պրեզիդենտական Հրովարտակով աշխարհի ամենագեղեցիկը հռչակված տաճարին, նայում էր հինավուրց, աղյուսաշեն տներին, որոնց չքամուտքերում քարացել էր հեռավոր, ննջող ժամանակը, արեւածաղիկներին, որ դեղին երեսներով ծովի կողմն էին շրջվում, սալիկապատ փողոցներով փոխարքայական թաղամասին, որտեղից այրված մոմերի հոտ էր գալիս, որի պատշգամբներում մեխակով ծաղկամանների, պատատուկների կանաչ թելերի ոստայնում նստոտած քարե առաքինի արտահայտությամբ աղջիկները շյուղերով անվերջ մանյակներ էին հյուսում. նայում էր բիսկայեկների մենաստանի պատուհանների մութ խոռոչներին, որտեղից կեսօրվա ճիշտ ժամը երեքին լսվում էր կլավիկորդային այն նույն վարժությունը, ինչը լսվում էր անհիշելի ժամանակներից,- այդ վարժանքով էր իր ժամանակին նշանավորվել առաջին գիսաստղի հայտնությունը: Իսկ մի անգամ նա մտավ առեւտրական թաղամասի բաբելոնյան իրարանցման մեջ եւ կտրեց-անցավ ողջ թաղամասը, որ հռնդում էր անտանելի երաժշտությամբ, նայելով վիճակախաղի տոմսակների դրասանգներին, գուարապոյով լի սայլակներին, իգուանների** ձվերի բլրին, թուրքական կրպակներին, ծնողներին չլսելու համար կարիճ դարձած աղջկա՝ արեւից ճերմակած սարսափելի դիմանկարին, այրի կանանց նրբանցքի խղճուկ խրճիթներին,- երեկոյան դեմ մերկ այդ կանայք հայտնվում են կրպակների դիմաց, որպեսզի մի քանի ձուկ գնեն ընտանիքների համար եւ միաժամանակ հոգիները թեթեւացնեն հայհոյելով կանաչի վաճառողներին՝ մինչեւ վարպետորեն զարդաքանդակված փայտե պատշգամբներում չորանա սպիտակեղենը. հետո նրա քթին նեխող խխունջների հոտ դիպավ. նա տեսավ հեռավոր ու պայծառ մի լույս, որ հավալանի երամ էր, եւ աչքերը շաղվեցին ծովախորշի երկայնքով տնկված բլրակներին կառչած նեգրական տնակների խայտաբղետությունից, եւ հանկարծ երեւաց նավահանգիստը. նավահանգիստը... փտած, խոնավ տախտակներից պատրաստված

* Գուարապո - չաքարեղեղնի գինի:

** Իգուան - վիթխարի մողես:

նավամատույց, երկար, ճշմարտությունից էլ մռայլ, հինավուրց ու կառանված դեսանտայինների զրահանավ: Եվ այստեղ կառքը քիչ մնաց անիվների տակ տրորեր բեռնակիր նեգրուհուն, որը ետ ցատկեց, ազատելով անսպասելիորեն շրջվող, ասես ինչ-որ բանից վախեցած կառքը, եւ նրան թվաց, թե տեսավ հենց իրեն՝ մահին, որը համաշխարհային վիշտն իր մեջ առածի հայացքով զննում էր նավահանգիստը: «Նա է,- ճչաց ցնցված նեգրուհին:- Նա է: Կեցցե՛ իսկական տղամարդը».- «Կեցցե՛»,- բղավեցին տաղավարներից ու չինական խորտկարաններից, ամեն կողմից մոտ վազող տղամարդիկ, կանայք, տղաներ: «Կեցցե՛, կեցցե՛, կեցցե՛»,- ճչում էին նրանք, ովքեր բռնեցին կատաղած ձիերի սանձերը, եւ ովքեր շրջապատեցին կառքը, որպեսզի սեղմեն իշխանության ձեռքը. ներշնչված ողջ այս ամբոխը զոյացավ այնպես անմիջականորեն եւ, որ գլխավորն է, այնպես արագ, որ նա հազիվ հասցրեց մի կողմ հրել համհարզի ատրճանակը սեղմած ձեռքը, ճչալով. «Չի կարելի վախկոտ լինել, լեյտենանտ, նրանք սիրում են ինձ, մի խանգարեք նրանց»: Նա ծայր աստիճան հուզվեց սիրո նման պոռթկումից եւ համանման արտահայտություններից, որ տեսավ հաջորդ օրերին, այնպես որ Ռոդրիգո դե Ագիլարին հարկ եղավ մեծ ջանք թափել փոխելու բաց կառքով զբոսնելու նրա վճիռը.- «Թող երկրի հայրենասերները տեսնեն ինձ ոտքից գլուխ: Ոչ մի վտանգ չկա, դատարկ բաներ են»: Նա գլխի չէր էլ ընկնում, որ նավահանգստում ծագած հայրենասիրական հրճվանքի պոռթկումն էր միայն եղել տարերայնորեն, իսկ շարունակությունը կազմակերպվել էր անվտանգության ծառայության կողմից, որպեսզի առանց վտանգի ենթարկելու սիրաշահեն գեներալին. կյանքի աշնանամուտին նա այնպես էր հուզվել իր անձի նկատմամբ ցուցաբերված սիրուց, որ երկարամյա մեկուսացումից հետո համարձակվեց դուրս գալ մայրաքաղաքից, հրամայեց բորբոքել ազգային դրոշի գույնով ներկված հին գնացքի հնոցը, եւ գնացքը կատվի նման մագլցելով հուսահատության եւ վշտի թագավորության քիվերը, սողալով խոլորձների եւ ամազոնյան հինածաղիկների մացառուտների միջով, վախեցնելով կապիկներին, դրախտահավերին ու երկաթուղագծերին քնած ընձառյուծներին, քարշ եկավ երկրով մեկ դեպի ձյունապատ գյուղերը, պրեզիդենտի հարազատ վայրերը, որ

կորել էին մերկ սարահարթի ամայի անկյուններում. կայարաններում նրան դիմավորում էին ծույլ, կարծես հոգեհանգստի թախծալի երաժշտությամբ, զողանջում էին զանգերը, ծածանվում գեներալին սուրբ երրորդությունից աջ նստող առաքյալ հռչակող ցուցանակներ. գնացքի մոտ քշել-բերել էին հնդկացիներին՝ ցույց տալու իշխանության դեմքը, որ թաքնվել էր պրեզիդենտական վագոնի անդրշիրիմյան կիսախավարում, սակայն ովքեր շատ մոտեցան, փոշոտ լուսամուտից այն կողմ տեսան միայն զարմանքից լայն բացված աչքեր, թրթռացող շրթներ, ողջույնի համար վեր տնկած, չոված մատներով մի թաթ, որն ասես կախված էր օդում, ինքն իր համար, որովհետեւ նկատելի էր չոված այդ թաթը միայն եւ ոչ թե ողջ ձեռքը: Պահակախմբի գնդապետը փորձեց հեռացնել նրան լուսամուտից. «Զգուշացեք, գեներալ, դուք պետք եք հայրենիքին»,- ինչին նա առարկեց համոզվածությամբ. «Մի հուզվիր, գնդապետ, այս մարդիկ սիրում են ինձ»: Հետո նա գնացքից տեղափոխվեց գետային, անվավոր շոգենավ, որի պիանոլայի ստեղների նման փայտյա թիերը իրենց ետեւից ջրերի վրա թողնում էին լայն ու սահուն, վալսի պարաքայլեր հիշեցնող շրջաններ, իսկ շոգենավը լողում էր գարդենիայի տտիպ հոտերի եւ ծանծաղուտներում նեխող հառարակածային սալամանդրների դարշահոտության միջով, շրջանցում գիշատիչ մողեսների ոսկորներից կազմված նախապատմական կուտակումները եւ աստծուց մոռացված, ծանրամարմին ծովահարսերով բնակեցված կղզիները, լողում էր, իսկ հեռվում բոցկլտում էր անհետացող հսկայական քաղաքների հրդեհին նմանվող արեւմուտքը, իսկ գետափին հայտնվում էին տոթից խարկված աղքատիկ բնակավայրեր. մարդիկ գետափ էին դուրս թափվում տեսնելու ազգային դրոշի գույնով ներկված շոգենավը եւ հազիվ էին նշմարում մետաքսյա ձեռնոցով ձեռքը, պրեզիդենտական խցիկի պատուհանից ծույլ թափահարվող ձեռքը, իսկ նա, նկատելով, թե ինչպես են գետափի մարդիկ թափահարում մալանդայի տերեւները, որ դրոշին էին փոխարինում, քանզի աղքատիկ այդ գյուղերում դրոշներ չկային, տեսնելով, թե ինչպես են ոմանք ջուրը նետվում, որպեսզի լող տալով շոգենավ հասցնեն՝ որը կենդանի այծիկ, որը վիթխարի, փղի ոտնաթաթի մեծության նյամեի պալարներ, որը զամբյուղով լի թռչուններ՝ պրեզիդենտա-

կան խոհանոցի համար, հուզված հոգոց հանեց խցիկի եկեղեցական խավարում. «Տեսեք, կապիտան, նրանք լող են տալիս իմ ետեւից: Ինչպե՞ս են նրանք սիրում ինձ»:

Դեկտեմբերին, երբ կարիբյան երկրներում սկսվում է գարունը, նա կառքով կտրեց-անցավ լեռնային ժապավեն-ճանապարհը, բարձրացավ ամենաբարձր լեռան գագաթին տնկված մենավոր ծերանոցը, որտեղ մեկ-երկու իրիկուն մթնեցրեց՝ դոմինո խաղալով մայրցամաքի տարբեր երկրների նախկին բռնակալների, տարբեր հայրենիքների տապալված հայրերի հետ, ում տարիներ առաջ քաղաքական ապաստան էր տվել. նրանք ծերանում էին գեներալի սիրալիր հյուրընկալության ստվերի ներքո, այդ շատախոս, կենդանի մեռելները, որ բազմում էին պատշգամբի բազկաթոռներին վերացած տեսքով, ընկղմվում ցնորական այն երազների մեջ, թե մի օր իրենց ետեւից պիտի գա իշխանության վերադարձի ճանապարհը բաց անող նավը. այդ ապաստարանը, տարբեր հայրենիքների նախկին հայրերի հանգստյան այդ տունը կառուցվեց, երբ նրանց թիվը աճեց, թեեւ գեներալի համար նրանք բոլորն էլ նույն դիմքն ունեին, որովհետեւ բոլորն էլ ներկայացել էին լուսաբացին, գիշերազգեստի վրա թարսուշիտակ հագած գիշերային համազգեստով, պետական գանձարանից թռցրած փողերով լի անդուկով, արտոնագրեր, լրագրային հոդվածներով սոսնձված գրասենյակային մատյաններ եւ լուսանկարների ալբոմ պարունակող պայուսակով. նոր ժամանած հայրենիքի նախկին հայրերից յուրաքանչյուրը գեներալին ալբոմը ցույց էր տալիս որպես հավատարմագիր, քթի տակ խոսելով. «Տեսեք, գեներալ, այստեղ ես եմ դեռեւս լեյտենանտի կոչումով, իսկ այստեղ՝ պրեզիդենտ դառնալու օրը, իսկ այստեղ, ահա, իշխանության գլուխ անցնելուս տասնվեցերորդ տարելիցի օրը, իսկ այստեղ...», բայց գեներալը բոլորովին ուշադրություն չէր դարձնում այդ ալբոմներին, որ ներկայացվում էին իբրեւ հավատարմագիր, քանզի համոզված էր եւ այդ մասին հայտարարում էր ի լուր ամենքի, որ տապալված պրեզիդենտի անձը հաստատող արժանահավատ միակ փաստաթուղթը նրա մահվան վկայականն է. նա արհամարհանքով էր լսում հերթական ժամանածի փքուն ճառիկը՝ թե ինքն, ահա, ժամանել է կարճ ժամանակով, ժամանակավորապես. «Մինչեւ այն պահը, իմ գեներալ, քա-

նի դեռ ինձ ետ չի կանչել իմ ժողովուրդը»: Բայց գեներալը գիտեր, որ քաղաքական ապաստան խնդրելու արարողության այդ մաշված ձեւակերպումները դատարկ խոսքեր են, բարբաջանք: Նա միեւնույն խոսքերը լսել էր յուրաքանչյուրից, թե՛ նրանից, ով տապալվել էր, թե՛ նրանից, ով տապալել էր, քանզի սրան էլ էին տապալել իր հերթին: Այդ ցաւանները կարծես թե չգիտեին, որ քաղաքականությունը արիություն է պահանջում, իշխանությունը մի այնպիսի սայլ է, որ եթե վրայից մի բան ընկավ, համարիր կորած, եւ իզուր է ապուշային ցնորական երազներ փայփայելը: Նոր ժամանածին նա երկու ամիս պահում էր պրեզիդենտական պալատում, հետը դոմինո խաղում, մինչեւ նախկին բռնակալը գեներալին տանուլ էր տալիս վերջին սենտավոն, որից հետո, մի գեղեցիկ օր, գեներալը նրան ծովահայաց լուսամուտի մոտ էր տանում, սկսում հոգեփրկիչ մի զրույց, անիծում արագահոս կյանքը, որն, ավաղ, միայն մեկ ուղղությամբ է ընթանում, ոչ մեկին չի բավարարում, մի խոսքով՝ կյանք չէ, այլ ձեռնաշարժություն, հավատացնում եմ ձեզ: Բայց եւ սփոփանք կա. տեսնո՞ւմ եք ժայռագլխի այն տունը: Տեսնո՞ւմ եք օվկիանոսային վիթխարի այն նավը, որ խրվել է լեռնագագաթներում: Այդ նավում ձեզ հատկացված է հրաշալի մի խցիկ՝ լուսավոր սենյակ: Մնունդը հիանալի է... Այնտեղ, որքան ուզեք, ազատ ժամանակ ունեք... հանդստացեք բախտակից ձեր ընկերների հետ... ծովահայաց չնաչխարհիկ պատշգամբ կա այնտեղ: Նա ինքն էլ էր սիրում հանդստանալ այդ տանը, բայց ոչ այնքան առնությունը կորցրած այդ թափթփուկների հետ դոմինո խաղալու հաճույքի համար, որքան թաքուն այն ուրախության, որ վայելում էր իր վիճակի առավելությունը զգալով. ինքը նրանցից մեկը չէ. եւ նա վայելում էր իր վիճակը, այդ ոչնչությունների, մարդկային այդ ճահճին նայելով նա ձգտում էր ապրել սիրտն ուզածին պես, ձգտում էր իրականացնել քաղցր անուրջները, հագուրդ տալ մեղսալի ցանկություններին. ոտնաթաթերի վրա հետապնդում էր հեշտ տրվող մուլատուհիներին, որոնք վաղ առավոտվա ժամերին ավլում էին տունը, ետեւներից ընկած չնչում էր այդ կանանց բնորոշ բրիլիանտինի եւ ընդհանուր ննջասենյակների գեշ հոտը եւ սպասում, մինչեւ որ մեկի հետ մնում էր մեն-մենակ, որպեսզի տրորեր նրան, ինչպես աքլորը հավին՝ որ

անկյունում էլ պատահեր, եւ լսեր նրա կչկչոցը, սրտաբաց քրքիջը. «Բայց դուք ավազակ եք, իմ գեներալ, եւ անկուշտ՝ ձեր տարիքին ոչ համապատասխան»: Բայց բոպեական սիրուց հետո նրան թախիծ էր համակում, որից փախչելով նա երգում էր որեւէ թաքուն, աննկատ անկյունում. «Օ, հունվարյան լուսին, տես, քո լուսամուտի դիմաց իմ թախիծը ելել է կառափնարան»: Դրանք առանց չար նշանների, առանց վատ կանխազգացումների գարուններ էին, եւ նա այնքան վստահ էր իր ժողովրդի հավատարմության վրա, որ ճոճը կապում էր պալատից հեռու, այն մենատան բակում, որտեղ ապրում էր մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն, եւ այնտեղ, առանց պահակախմբի, հնդկարմավի ստվերի տակ անցկացնում մեռյալ ժամերը, երազում տեսնում ճանապարհորդ-ձկների, որ լողում էին պալատի ննջասենյակների գույնն ունեցող ջրերում. «Հայրենիքը ամենագեղեցիկ հորինվածքն է, մայր»,- հառաչում էր նա, թեեւ բոլորովին չէր ցանկանում, որ մայրը պատասխաներ իրեն,- մայրն աշխարհում միակ մարդն էր, որ համարձակվեց ասել՝ թեւերիդ տակից գեղ հոտ է գալիս. նա կամացուկ պրեզիդենտական պալատ էր վերադառնում շքամուտքով, խաղաղված, բարեհամբույր՝ լույս աշխարհի նկատմամբ, կարիբյան գարնան, հունվարյան փիփերթի բույրերով արբած. այդ օրերին նա հաշտվեց նույնիսկ պապի նվիրակի, այսինքն Վատիկանի դեսպանի հետ եւ սա սկսեց այցելել նրան երեկոները ոչ պաշտոնական այցով, մի բաժակ շոկոլադի եւ թխվածքի սեղանի շուրջը հոգեփրկիչ զրույց բացելով, որի նպատակը գեներալին կաթոլիկ եկեղեցու գիրկը, դեպի քրիստոնեությունը ետ տանելն էր, իսկ նա, ծիծաղից թուլանալով, ասում էր, որ եթե տեր աստվածն այդքան հզոր է, ինչպես դուք եք ասում, ապա հաղորդեք նրան իմ խնդրանքը, սուրբ հայր, թող նա ազատի ինձ այս անպետք ծղրիդից, որ ականջս է մտել, թող փրկի ինձ այս ուռած ձվից, թող բաց թողնի միջից ավելորդ օդը: Եվ արձակելով շալվարի կոճակները, նա ցույց տվեց, թե ինչը նկատի ունի, բայց պապի նվիրակը կայուն մարդ էր, պնդում էր, որ այդուհանդերձ, ամեն ինչ աստծուց է, որ ամեն ինչ ծնվում է սուրբ հոգուց, ինչին գեներալը պատասխանում էր նույն զվարճությամբ. «Իզուր տեղը վատդ մի ծախսեք, սուրբ հայր: Ձեր ինչի՞ն է պետք իմ դարձը, եթե ես, միեւնույն է, ինչ ձեզ պետք է, այն եմ անում»:

Բայց նրա հոգեկան անդորրը անսպասելիորեն խռովվեց մի խուլ քաղաքում, ուր աքլորակռիվ տեսնելու էր գնացել. հերթական մենամարտի ժամանակ մի հզոր, գիշատիչ աքաղաղ պոկեց հակառակորդի գլուխը եւ գազանացած ամբոխի աչքի առաջ սկսեց ագահաբար կտցահարել ու խժռել, քանի դեռ հարբած նվագախումբը ի փառս հաղթողի ցնծալի տուշ էր նվագում. գեներալն իսկույն վատ նշան տեսավ աքլորակռվի ասպարեզում կատարվածի մեջ, պատահածը համարեց երկնից ուղարկված ակնարկ՝ որ իր հետ էլ, ահա-ահա, նույնն է կատարվելու. նա զգաց դա բնազդաբար եւ հրամայեց պահակախմբին ձերբակալել անհապաղ եղջյուր փչող երաժշտին. պարզվեց, որ երաժիշտը զինված էր. տանջանքների ենթարկվելով, նա, ի վերջո, խոստովանեց, որ պիտի կրակեր գեներալի վրա, երբ ամբոխը շարժվելիս լիներ դեպի մուտքը եւ սկսվեր հրմշտոցը: «Ես դա իսկույն հասկացա,- ասաց գեներալը,- հասկացա, որ նա պիտի կրակի: Որովհետեւ ես նայում էի բոլորի աչքերին, եւ բոլորն էլ նայում էին իմ աչքերին, բացի այդ վիժվածքից, դժբախտ այդ կոտոշավորից. կնիկը կոտոշ է տնկել գլխին, դրա համար է կոտոշ փչում»: Այդ պահից գեներալը վերստին սկսեց վախենալ, թեեւ հասկանում էր, որ իրեն բոլորովին էլ աքլորակռվի դիպվածը չէր հուզել, որ խնդիրը դա չէր. նրան սարսափ էր պատում ամեն գիշեր, նույնիսկ պալատի պատերի ներսում, չնայած անվտանգության ծառայության հավաստիացումներին, թե կարգին է ամեն ինչ, անհանգստության ոչ մի հիմք չկա. ահա թե երբ ավելացան Պատրիսիո Արագոնեսի հոգսերը: Պատրիսիոյի հետ գեներալը գրեթե փոխեց իր տեղը, մնում էր նրան իր անձնական կերակուրներով, հյուրասիրում անձնական ամաններում պահվող մեղրով, սփոփվում այն մտքից, թե թունավորվելիս կմեռնեն երկուսն էլ: Համենայնդեպս, ոչ միայն ինքը: Երկուսով էլ թրեւ էին գալիս պալատի հարկաբաժիններում ինչպես ստվերներ, եւ յուրաքանչյուրը ճգնում էր քայլել միայն գորգերի ու ուղեգորգերի վրայով, որպեսզի չմատնեն իրենց փղային քայլվածքը: Թվում էր նրանք իրենցից անկախ լողում էին պալատի դահլիճներով, փարոսի կանաչ լույսերի տակ. կես բոպեն մեկ բոցկլտում էին փարոսի փայլակները անհունության մեջ, որտեղ ծփում էին քնած ծովի կանաչ ալիքները,- բոցկլտում էր փարոսը, ծփում էին ալիք-

ները, եւ գիշերային շոգենավերի թախծոտ, հրաժեշտի ազդանշանները նրա էին խուժում լուսամուտից, ծովափին այրվող աթարի ծխի հետ: Եվ կամ օրեր շարունակ նայում էին թափվող անձրեւին, հաշվում ծիծեռնակներին, ինչպես սեպտեմբերյան սիրտ մաշող երեկոներին վարվում են շարքից դուրս եկած սիրեկանները, եւ այնքան կտրվեցին կյանքից, որ կորցրեցին իրականության զգացողությունը, եւ գիներալի մտքով էլ չէր անցնում, որ ձգտելով ներկայացնել իրեն երկակի, միաժամանակ լինելով թե՛ այստեղ, թե՛ այնտեղ, նա իրականում հարկադրել էր մարդկանց կասկածել՝ իսկ, առհասարակ, գոյություն ունի՞ ինքը: Չի՞ քնել, արդյոք, լեթարգիական քնով: Եվ թեեւ պահակախումբը կրկնապատկվել էր, թեեւ ոչ ոք չէր կարող պրեզիդենտական պալատ մտնել ու դուրս գալ այնտեղից, խոսում էին, թե իբր մեկին, այդուհանդերձ, հաջողվել է լինել պալատում եւ իբր այդ մեկը տեսել էր սատկած թռչնակներով վանդակներ, մկրտության ավազանից, ինչպես սովորական գուտից ջուր խմող կովեր, բուրմնավետ վարդաթփերի տակ քնած կաթվածահարներ ու բորոտներ, եւ ողջ երկիրը քարացավ սպասման մեջ, կարծես կեսօրից հետո կրկին լուսաբաց էր լինելու, որովհետեւ լուր տարածվեց, թե նա մեռել է այնպես, ինչպես կանխատեսել էր ժամանակին գուշակ-պայծառատեսը՝ ջրով լի կոնքին նայելով,- մեռել էր բնական մահով, քնի մեջ, իր անկողնում, բայց,- նոր թափ էր առնում լուրը,- բարձրաստիճան պաշտոնյաները ծածուկ են պահում եղելությունը, որովհետեւ արյունալի հաշիվներ են մաքրում իրար մեջ: Նա ուշք չէր դարձնում այդ խոսակցություններին, թեեւ զգում էր, որ իր կյանքում ահա-ահա ինչ-որ բան է պատահելու եւ, ընդհատելով անվերջանալի դոմինո խաղը, հարցնում էր գիներալ Ռոդրիգո դե Ագիլարին, թե ինչ կաչկա, բարեկամս, եւ սա պատասխանում էր. «Ամեն ինչ մեր ձեռքում է, իմ գիներալ, երկրում խաղաղություն է»: Բայց նա չարագուշակ նշաններ էր փնտրում այրվող աթարի կրակի օձանման լեզվակներում, բակում վաւվող այդ մռայլ խարույկներում, աչք էր գցում այլեւս լքված ջրհորների մութ խորքերը, որպեսզի դրանց հատակում տեսներ իր ճակատագիրը եւ, չգտնելով ոչինչ, տագնապներից բզկտված, գնում էր մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի մոտ, նրա մենատուն, որի բակում, հնդկարմավի ստվերի տակ կարելի

էր հաճելի պաղություն շնչել. մորից սառը շունչ էր փչում. նստում էր կողքին, իր մաշված ճոճում, զառամյալ, բայց հոգեկան ուժերով լի. եգիպտացորենի հատիկներ էր տալիս ոտքերի տակ քշող հավերին ու սիրամարգերին, իսկ գեներալը, ընկղմվելով ճերմակ, հյուսկեն բազկաթոռի մեջ, գլխարկով հով էր անում ու թախծոտ աչքերով նայում բարձրահասակ մուլատուհիներին, որ իրեն վառ ներկած, պաղ մրգաջուր էին մատուցում. «Թարմացեք, ձերդ գերազանցություն»: Նայում էր ու մտածում այն մասին, ինչը ուզում էր, բայց չէր կարողանում խոստովանել մորը. «Մայր իմ, Բենդիսիոն Ալվարադո, եթե միայն իմանայիր, թե ինչպես եմ ես ավարտվել ու չգիտեմ անելիքս այս աշխարհում, թե ինչպես եմ ուզում փախչել այս տառապանքներից, բայց ո՞ւր՝ ինքս էլ չգիտեմ»: Մայրը գլխի չէր ընկնում, թե ինչն է որդու ծանր հառաչանքների պատճառը, ենթադրում էր, թե հառաչում է մուլատուհիների համար, իսկ նա, երբ վառվում էին իրիկնային առաջին լույսերը, կամացուկ վերադառնում էր պալատ՝ ծածուկ, ետնամուտքից, եւ գողունի շարժվում միջանցքներով, ականջ դնելով պարեկների ոտնաձայներին. նկատելով նրան, պարեկները զվարթաձայն զեկուցում էին. «Ամեն ինչ կարգին է, ձերդ գերազանցություն: Բացարձակ խաղաղություն է»: Բայց նա գիտեր, որ պարեկներն այդ խոսքերն ասում են ըստ սովորության, որ նրանք խաբում են իրեն, որպեսզի խաբեն նաեւ իրենց, որովհետեւ իրենք էլ են վախենում. դա մի ճգնաժամային ժամանակ էր, եւ ոչ ոք իրեն վստահ չէր զգում, թեեւ բոլորն էլ ստում էին, թե ամեն ինչ հրաշալի է. հատկապես անվստահությունը, անկայուն վիճակն էր մռայլում նրա գոյությունը, դառնացնում փառքը, մարում նույնիսկ իշխելու ցանկությունը: Եվ այս ամենը՝ ճակատագրական աքլորակռվից հետո: Գիշերներ շարունակ անքնությունից տառապելով, նա երեսնիվայր պառկում էր հատակին եւ լսում բաց լուսամուտից ներս լցվող թմբուկների զարկերը, պարկապզուկի գեղգեղանքը, որ հնչում էին աղքատ մարդկանց հեռավոր ու համեստ հարսանիքներում մի այնպիսի ոգեւորությամբ, ասես իր մահն էին տոնում. լսում էր, թե ինչպես է ափից պոկվում, հրաժեշտի ազդանշան տալով ափից հեռանում ճարպիկ մի նավ, որ ակնհայտորեն անօրեն գործով եւ առանց թույլատրության էր գիշերվա երկուսին ծով

դուրս գալիս. լսում էր առավոտները բացվող վարդերի թղթյա շրշյունը, լսում էր ու մարմինը սառը քրտինքով էր ծածկվում եւ ծանր տնքալով, չվայելելով ոգեշնչման եւ ոչ մի ակնթարթ, քանզի նախնական բնազդը զավթել էր նրա ողջ էությունը այն երեկոյի կանխազգացմամբ, երբ սովորականի նման վերադառնալով մոր մոտից, փողոցներում տեսավ անհամար մարդկանց, տեսավ, թե ինչպես են տներում լայն բացվում լուսամուտները, ինչպես են ծիծեռնակների երամները անսովոր աշխույժով կտրատում դեկտեմբերյան կապույտ երկինքը. եւ նա ետ քաշեց կառքի վարագույրը, որպեսզի ավելի լավ տեսնի անցուդարձը, եւ ասաց ինքն իրեն. «Ահա թե ինչն էր ինձ տանջում, մայր, ահա թե ինչն էր ինձ չարչարում. վերջապես կատարվեց»: Եվ նա վայրենի հանգստություն զգաց, նայելով երկնքում լողացող դունավոր ու անհամար փուչիկներին՝ կարմիր, կանաչ, դեղին, երկնագույն, վիթխարի նարինջներին՝ ողողված բյուրեղյա լույսով, որ հատուկ էր դեկտեմբերյան, կեսօրվա ժամը չորսի երկնքին. իսկ փուչիկները սարսափահար ծիծեռնակների միջեւ լող տալով՝ հանկարծ մեկին ու սնձային պայթեցին, եւ քաղաքի վրա թափվեցին հապարավոր թռուցիկներ, պատվեցին օդում, ինչպես փոթորկից առաջացած անակնկալ տերեւաթափ. եւ պրեզիդենտական կառքի կառապանը պահից օգտվելով՝ կառքը դուրս բերեց մարդկային ջրապտույտից: Բայց ոչ ոք էլ ուշք չդարձրեց կառքին, չճանաչեց, որովհետեւ բոլորն էլ զբաղված էին թռուցիկներ որսալով, հավաքելով - բոլորը, իմ գեներալ: Թռուցիկների տեքստը բարձրաձայն կարդում էին պատշգամբներից, բոլոր խաչմերուկներում ճիչեր էին լսվում. «Կեցցե՛ ժողովրդի եւ բոլոր դասակարգերի միասնությունը՝ հանուն դարավոր բռնակալության դեմ մղվող պայքարի: Կեցցե՛ բոլոր Հայրենասերների միությունը՝ հանուն ծախու զինվորականության դեմ մղվող պայքարի: Կորչի կաշառակերությունը: Վերջ արյունահեղությանը: Վերջ կողոպուտին»: Ողջ երկիրն արթնացել էր հազարամյա քնից ճիշտ այն պահին, երբ նա կառքում նստած՝ իմացավ սարսափելի լուրը. «Իմ գեներալ, Պատրիսիո Արագոնեսին թունավոր նետով մահացու վիրավորել են»:

Մի քանի տարի առաջ տանջվելով իրիկնային ձանձրույթից,

վատ տրամադրության մեջ նա Պատրիսիո Արագոնեսին առաջարկել էր խաղարկել իրենց կյանքը՝ մանրադրամ գցելով: «Գցենք մանրադրամը,- ասել էր նա,- եթե «արծիվ» դուրս գա՝ կմեռնես դու, եթե «գիր»՝ ես»: Պատրիսիո Արագոնեսն առարկեց, ասելով, որ մեռնելու վիճակը երկուսին էլ կընկնի, որովհետեւ որքան էլ գցեն, միեւնույն է, կլինի ոչ ոքի. «Մի՞թե մոռացել եք, իմ գեներալ, որ պրեզիդենտական կիսադեմը դրոշմված է դրամի երկու կողմերում»: Այդժամ գեներալն առաջարկեց խաղարկել իրենց կյանքը դոմինոյով. քսան խաղից ով ավելին հաղթի, նա էլ ողջ կմնա: «Լավ,- ասաց Պատրիսիո Արագոնեսը,- մեծ հաճույքով, իմ գեներալ: Բայց մի պայմանով. դուք պիտի ինձ իրավունք չնորհեք հաղթել ձեզ»: Իրավունքը չնորհվեց, նրանք նստեցին խաղալու, եւ Պատրիսիո Արագոնեսը, որ մինչ այդ տանուլ էր տալիս, որովհետեւ արգելված էր հաղթելը, շահեց բոլոր քսան խաղափուլերը, բոլոր քսան դաժան մենամարտերը եւ թուլացած ձեռքերով մաքրելով դեմքի քրտինքը, ասաց հառաչելով. «Ինչ արած, իմ գեներալ, ցավում եմ, բայց ես չեմ կամենում մեռնել»: Եվ այնժամ գեներալը փայտյա արկղիկի մեջ խնամքով, շարքը շարքի վրա դասավորելով դոմինոյի ոսկյա քարերը, ասաց երգեցիկ ձայնով, դասը բացատրող դպրոցական ուսուցչի պես՝ հատ-հատ, թե ինքն էլ հարկադրական մահով մեռնելու ցանկություն չունի, հատկապես դոմինո խաղում տանուլ տալով, մանավանդ, որ մեռնելու է բնական մահով, սահմանված ժամանակին, իր անկողնում, քնի մեջ, ինչպես կանխատեսել էր հեռավոր օրերում գուշակ-պայծառատեսը՝ ջրով լի կոնքին նայելով: «Ասենք,- շարունակեց նա,- եթե լավ մտածենք, ամեն ինչ այնքան էլ պարզ չէ, քանի որ մայրս՝ Բենդիսիոն Ալվարադոն, ինձ նրա համար չի ծնել, որ կարդամ եղանով ջրի վրա գրածը, ծնել է, որ իշխեմ: Եվ, առհասարակ, ես ես եմ եւ ոչ թե դու, եւ փառք տուր աստծուն, որ այս բոլորը կատակ էր սոսկ»: Նա այդ պահին չէր մտածում, թե կատակ չէ, չէր ենթադրում, որ շուտով իրենցից մեկնումեկին, իրոք, մահվան վիճակ էր ընկնելու: Եվ ահա, կատարվեց:

Նա մտավ Պատրիսիո Արագոնեսի սենյակը եւ տեսավ նմանակին վերջին ջղաձգումների մեջ. փրկության հույս չկար, չափից ա-

վելի էր եղել թույնի բաժինը նետի ծայրին: Եվ, ահա, նա ներս մտավ ու շեմից ողջունեց Պատրիսիոյին վեր բարձրացրած ձեռքով, հռոմեացու պես. «Թող օրհնի քեզ աստված, իմ քաջ: Մեծ պատիվ է՝ մեռնել հայրենիքի համար»: Եվ հետո, նստելով մեռնողի անկողնու մոտ, սպասեց այնքան, քանի դեռ շարունակվում էր հոգեվարքը, իր իսկ ձեռքով մատուցեց ցավերը մեղմող դեղորայք, խմեցրեց դրանք գդալով, իսկ Պատրիսիո Արագոնեսը, թեեւ չէր հրաժարվում խնամքից, սակայն ընդունում էր առանց փոքր իսկ երախտագիտության, եւ կուլ տալով դեղի հերթական բաժինը, անկեղծորեն ասաց այն ամենը, ինչ մտածում էր այդ պահին. «Ես կարճ ժամանակով եմ ձեզ թողնում այս կեղտոտ կյանքում, իմ գեներալ... սիրոս գուշակում է, որ մենք շատ շուտով կհանդիպենք դժոխքի ամենախորքում. ես՝ կապկպված ծովային հանգույցով, այս թույնից եռածալ գալարված՝ դուք՝ ձեր սեփական գլուխը ձեռքներումդ բռնած, չիմանալով, թե ուր խցկեք... Ներեցեք անկեղծությանս համար, իմ գեներալ, բայց հիմա ես ասում եմ միայն ճշմարտությունը... հիմա ես կարող եմ ասել, որ երբեք չեմ սիրել ձեզ... այդ դուք եք ձեր գլուխը մտցրել, թե սիրում եմ ձեզ... այնինչ ես ձեզ միշտ էլ ատել եմ... այն պահից ի վեր, երբ ձեր ողորմածությամբ կորցրեցի իմ ազատությունը... դրկվեցի ազատ թափառաշրջիկի կյանքով ապրելու հնարավորությունից... այդ պահից ես ամեն օր աղոթում էի, որ դուք մեռնեք՝ տանջալից կամ հանգիստ մահով, մեկ է, միայն թե մեռնեք, միայն թե ձեր կյանքով վճարեք խեղանդամված իմ կյանքի դիմաց... ձեր ողորմածությամբ, ախր, ինչպե՞ս վարվեցին ինձ հետ... փայտյա մուրճերով հարթեցրին իմ ներբանները, այլանդակեցին ոտքերս, մինչեւ դրանք դարձան ձերի նման՝ հարթաթաթ, մինչեւ սկսեցին շարժվել դանդաղ, լուսնոտի ոտքերի նման... ծակծկեցին ամորձապարկս կոշկակարի բզով, որպեսզի ես էլ ճողվեմ... ստիպեցին սիպիդար խմել, որպեսզի ետ վարժվեմ կարդալ-գրելուց, մոռանամ թերականությունը, որովհետեւ դուք էլ չգիտեք... Եթե իմանայիք, թե որքան է տառապել խեղճ մայրս ինձ ուտում տալու համար... դուք ինձ ստիպում էիք կատարել ձեր անվերջանալի շքերթապաշտոնական պարտականությունները ոչ թե այն պատճառով, որ պահում էիք ձեզ այլ, ավելի կարեւոր, հայրենիքին առավել անհ-

բաժեշտ գործերի համար, ինչպես կրկնում էիք հաճախ, այլ որովհետեւ՝ նույնիսկ ամենաքաջի հետույքն է սառչում սարսափից, երբ գեղեցկության մրցույթում, հերթական պոռնկին թաղադրելիս, չես իմանում, թե որ կողմից է ահա-ահա վրա պրծնելու մահը... ներեցեք անկեղծությանս համար, իմ գեներալ...»: Գեներալը, սակայն, խայթվեց ոչ այնքան Պատրիսիո Արագոնեսի հանդգնությունից, որքան՝ երախտամոռությունից. «Դո՞ւ, այդ դո՞ւ ես ասում... դու, որ այստեղ ապրում էիր արքայի պես, ում տվեցի ես այն ամենը, ինչ չեմ տվել երբեք եւ ոչ մեկին: Նույնիսկ սեփական կանանցս եմ քեզ տվել»: Բայց այստեղ Պատրիսիո Արագոնեսն ընդհատեց նրան. «Պետք չէ խոսել այդ մասին, իմ գեներալ... Լավ է մարդ կռտված լինի, քան ընկնի դժբախտ այդ կանանց, տանջահար այդ մայրերի վրա, լավ է կռտված լինի, քան պառկեցնի դրանց, ինչպես հորթերին են պառկեցնում խարանելու, այն տարբերությամբ միայն, որ հորթերը քացի են տալիս ու բառաչում, իսկ սրանք անտարբերությամբ դեմ են անում նիհար կովերի քամակի նման հետեւները, շարունակելով կարտոլ կլպել կամ ձայն տալով ընկերուհիներին՝ որ հետեւեն օջախին դրված բրնձի չիլային՝ հանկարծ չայրվի, մինչ ինքը զբաղված է այդ գործով... Միայն դուք կարող եք այդ բութ կենակցությունը սեր կոչել, իմ գեներալ, որովհետեւ ուրիշ ոչինչ դուք չեք տեսել երբեք... ներեցեք անկեղծությանս համար»: Եվ այնժամ նա բղավեց. «Լռի՛ր: Ձայնդ կտրիր, գրողը քեզ տանի: Կտրի՛ր ձայնդ, թե չէ վատ կլինի»: Բայց Պատրիսիո Արագոնեսը շարունակեց շատ հանգիստ ու կշռադատված. «Ոչ, ես չեմ լռի, իմ գեներալ... Դուք ի՞նչ կարող եք ինձ անել... Սպանե՞լ... առանց այն էլ ես համարյա մեռած եմ... ավելի լավ է, մի փախցրեք առիթը, լսեք այն ամենը, ինչ ոչ ոք եւ երբեք չի ասի ձեզ, թեեւ այդկերպ մտածում են բոլորը... ձեզ չէ՞ որ ասում են միայն այն, ինչ դուք եք ցանկանում լսել... Գլուխ են խոնարհում, քծնում, իսկ դրպաններում զենք են պահում... Դուք ինձ շնորհակալ պիտի լինեք անկեղծության համար, իմ գեներալ... Ես միակն եմ, որ խղճում եմ ձեզ... Ես խղճում եմ ձեզ, ինչպես ոչ մեկն աշխարհում չի կարող խղճալ... որովհետեւ պատահականության բերումով, բախտի քմահաճույքով ես գրեթե նույն մարդն եմ, ես չէ՞ որ ձեր նմանակն եմ... ահա թե ինչու եմ ազնվորեն ասում այն ա-

մենը, ինչ չեն համարձակվի ասել երբեք ուրիշները, թեեւ մտածում են նույնկերպ... Բանն այն է, իմ գեներալ, որ դուք բոլորովին էլ պրեզիդենտ չեք... Ոչ ոք ձեզ չի համարում օրինական պրեզիդենտ... Դուք նստած եք պրեզիդենտական աթոռին, որովհետեւ ձեզ նստեցրել են անգլիացիները... Իսկ նրանցից հետո յանկիները ձեզ օգնեցին իրենց զրահանավի մի զույգ մահաբեր ձվերով... Ես չէ՞ որ տեսա, ես չէ՞ որ հիշում եմ, թե ինչպես էիք դուք, բզեզի նման, շփոթված վազվզում, գլուխներդ էիք կորցրել, երբ գրիպոները բղավեցին ձեր վրա: «Վերջ: Կմնաս մենակ կեղտոտ այս բոզանոցում: Տեսնենք՝ ինչպես ես առանց մեզ գլուխ հանելու»: Եվ եթե այդ օրից դուք չեք իջել եւ մտադիր էլ չեք իջնել ձեր աթոռից, ապա բոլորովին էլ ոչ այն պատճառով, որ շատ է դուր գալիս աթոռը... ոչ, պարզապես անհնար է այդ քայլն անելը... Դաղտնիքը սարսափով պետք է բացատրել... Խոստովանեք, իմ գեներալ, դուք քաջ գիտեք, որ եթե փողոց ելնեք հասարակ մահկանացուի տեսքով, ապա մարդիկ կհարձակվեն ձեզ վրա, ինչպես որսաշները, որպեսզի վրեժխնդիր լինեն Սանտա-Մարիա-դել-Ալտարի զանգվածային կոտորածի համար... բերդախրամը նետված, կոկորդիլոսներին ողջ-ողջ որպես կեր տրված բանտարկյալների համար... նրանց համար, ում վրայից քերթել են մաշկը եւ ուղարկել դժբախտների ընտանիքներին, որպեսզի դարուդարեր չմոռանան այդ դասը...»: Այսպես խոսեց Պատրիսիո Արագոնեսը, խոսեց ու խոսեց, հին վիրավորանքների անհատակ ջրհորից հանելով սոսկալի հիշողությունների անհատնելի քարերը, ասես ջոկջկում էր դրանք, ասես աղոթք էր հորինում ի հիշատակ հրեշային բռնակարգի զոհերի: Բայց հանկարծ նա լռեց, որովհետեւ անտանելի ցավը շիկացած փոցիներով ծվատեց նրա ներսը ու քիչ մնաց կանգ առներ սիրտը: Սակայն կրկին ուշքի գալով, նա շարունակեց կամացուկ, առանց վիրավորական բառերի, աղերսալից ձայնով. «Իմ գեներալ, բաց մի թողեք այս հարմար պահը... մեռեք ինձ հետ... ձեզ համար ամենահիշտը մեռնելն է... ով՝ ով, բայց ես դա լավ գիտեմ... ես չէ՞ որ դուք եք, թեեւ, աստված վկա, երբեք չեմ ցանկացել նմանակել մեծությանը, դառնալ հայրենիքի հերոս, բայց այդպես ստացվեց... եւ ես գիտեմ, թե ինչ կյանք է ձեր կյանքը... այլ կյանքերի հետ կարող եմ համեմատել... որովհետեւ հոգուս խորքում ես միշտ էլ հա-

սարակ ապակի փչող եմ մնացել, մեկը նրանցից, ովքեր հորս նման չչեր էին փչում... Մի սարսափեք, իմ գեներալ, մահն այնքան էլ ցավոտ չէ, որքան թվում է...»: Նա այս խոսքերն արտասանեց այնպիսի համոզչականությամբ, այնպես անկեղծ ու ազդեցիկ, որ մեր գեներալն իր մեջ չարություն չգտավ առարկելու: Նա մնաց տեղում նստած, բռնում էր մեռնողին, որ վայր չընկնի անկողնուց, երբ սկսվեցին վերջին ջղաձգումները, ցնցումները, երբ Պատրիսիոն երկու ձեռքով բռնեց փորը եւ հեկեկաց ցավից՝ ու ամոթից. «Օ, տեր աստված: Ես չալվարումս արեցի, իմ գեներալ»: Նա կարծեց, թե .Պատրիսիոն փոխաբերական իմաստով այդպես արտահայտվեց, կարծեց թե ասվածը պետք է հասկանալ որպես վերջին պահին մահից վախենալու խոստովանություն, սակայն Պատրիսիոն կրկնեց, որ չալվարի մեջ է արել ոչ թե փոխաբերական, այլ ամենաուղիղ իմաստով, եւ մեր գեներալը ճչաց. «Աղաչում եմ, համբերիր մի քիչ, զսպիր քեզ: Հայրենիքի գեներալները պետք է մեռնեն տղամարդավայել՝ ինչ զնով էլ լինի»: Բայց արդեն ուշ էր ոգեկոչելու հայրենասիրական զգացմունքները, քանզի Պատրիսիոն Արագոնեսը փռվել էր հատակին եւ ոտքերն իրար քսելով ճռճռում էր վերջին հոգեվարքում ամբողջովին լղոզված կեղտով ու արցունքի մեջ կորած: Նիստերի դահլիճին կից առանձնասենյակ-ննջասենյակում գեներալն անձամբ լողացրեց Պատրիսիոյի մարմինը, հագցրեց իր հագուստը, որ հանել էր վրայից ու մնացել այնպես, ինչպես մայրն էր լույս աշխարհ բերել. նա վրայից հանեց նույնիսկ բրեզենտե կալանդը, փոշոտանկը պահող կալանդը եւ քաշեց Պատրիսիոյի վրա. ոտքերին հագցրեց իր ճոքավոր կոշիկները, ձախին ամրացնելով ոսկյա խթանը: Այս բոլորը նա արեց խոր վշտի մեջ, անհուն մենության զգացումով համակված, գիտակցելով, որ այսուհետ ամբողջ աշխարհում ինքը դարձավ ամենամիայնակ արարածը: Այս զգացողությունը, սակայն, չխանգարեց նրան հանգամանորեն վերացնել հանգուցյալին մշակելու իր բոլոր հետքերը եւ ջանաց հիշել այն տեսիլքի մանրամասները, որ երեւաց իրեն գուշակ-պայծառատեսի շնորհիվ, նախնական ջրերի հայելում, փորձեց հիշել, թե ինչ դիրքով էր պառկած լինելու իր մարմինը, երբ առավոտյան նկատեին սպասուհի-հավաքարարները. երեսնիվայր, դեմքը ափերի, ինչպես բարձի մեջ խրված, առանց տարբե-

բանչանների դաշտային համազգեստով, ճտքավոր կոշիկներով, ձախին՝ ոսկյա խաչան,- ճիշտ այնպես, որպեսզի ասեն, որ նա մեռել է բնական մահով, քնի մեջ, համաձայն գուշակի վաղուց ի վեր կանխատեսման: Բայց, սպասածին հակառակ, ոչ ոք չշտապեց հավաստել նրա մահը. վարչակարգի ժառանգորդները խոհեմաբար սպասում էին, գաղտնի հետազոտություններ կատարում, մեկը մյուսի հետ բանակցում եւ դեռ հարմար առիթով հերքում մահվան լուրը, օգնության հրավիրելով մորը՝ Բենդիսիոն Ալվարադոյին, ստիպում նրան երեւալ առեւտրական թաղամասում, որպեսզի բոլորս համոզվեինք, որ նա սգի մեջ չէ. «Վրաս ծաղկանախշ շրջազգեստ գցեցին, սենյոր, եւ ինձ, որպես մի խրտվիլակի, ստիպեցին գնել թութակի փետուրներով գլխարկ, հազար ու մի զարդարանք ու դատարկ բաներ, որպեսզի բոլորը տեսնեին իմ անհոգությունը, երջանկությունը, թեեւ ես ասում էի նրանց, որ հասել է արտասվելու եւ ոչ թե գնումների ժամանակը. ես, ախր, ոչինչ չգիտեի, ես մտածում էի, որ մեռել է որդիս եւ ոչ թե մեկ ուրիշը, իսկ նրանք ստիպում էին ինձ ժպտալ, երբ ինչ-որ մարդիկ լուսանկարում էին ինձ ամբողջ հասակով. ինձ ասում էին, թե այդպես է պետք հանուն հայրենիքի, սենյոր»: Իսկ նա այդ ժամանակ, իր թաքստոցում նստած, տարակուսանքի ու շփոթության մեջ էր. «Գրողը տանի, այս ինչո՞ւ աշխարհում իմ մահից հետո ոչինչ չփոխվեց: Ինչպե՞ս կարող է պատահել, որ արեւն առաջվա պես ծագում ու մայր է մտնում եւ նույնիսկ ոմպի չի հանդիպում: Ինչո՞ւ, օ՜ մայր իմ, կիրակին կիրակի է մնացել, իսկ շոգը՝ անտանելի նույն շոգը, ինչպիսին իմ ժամանակ էր»: Այսպես ինքն իրեն հարց էր տալիս, երբ անսպասելիորեն որոտաց թնդանոթային կրակոցը նավահանգստի ամրոցում, եւ տաճարի միալար զանգերի հուղարկավորման զողանջը լող տվեց քաղաքի երկնքում, իսկ դեպի պալատը շարժվեցին մարդկային անկանոն շարքեր, որոնց, դարավոր զառամախտից, արթնացրել էր ցնցող լուրը: Եվ այդժամ նա փոքր-ինչ բաց արեց իր գաղտնի ննջասենյակի դուռը եւ, բացվածքից ծիկրակելով, նիստերի դահլիճում տեսավ իր մեռած մարմինը՝ շրջապատված վառվող մոմերով, զգեստավորված ավելի շքեղ, քան Հռոմի պապերից որեւէ մեկը քրիստոնեության պատմության ամբողջ ընթացքում, սակայն սարսափն ու ամոթը ցնցեցին նրան, երբ

տեսավ այդ մարմինը՝ ընկղմված ծաղիկների մեջ, քսուքից հերմակած դեմքով, ներկած շրթներով, քմահաճ պչրուհու փայտացած ձեռքերով, որ դրված էին շքանշաններով զրահավորված կրծքին. այդ մարմնին ինչ-որ մեկի հորինած Տիեզերքի հանգուցյալ գեներալի համազգեստ էին հագցրել՝ ուսադիրներին բոցկլտացող տասական արեգակներ, կարճ, խաղաքարտե թագավորի խաղալիք սուսերը գոտկից կախ. այդ սուսերը տարօրինակ կերպով փոխում էր մասշտաբը եւ ամեն, ամեն ինչ՝ իր անսահման իշխանության բոլոր խորհրդանշանները, սգո մեջ ծիսակատարությունը, զինվորական պատիվները մի տեսակ փոքրացել էին, զրկվել ազդեցությունից ու վեհությունից, դարձել էին սովորական եւ լիովին համապատասխանում էին դագաղում պառկած, մարդկային կանոնավոր, նույնիսկ փոքր-ինչ ողորմելի չափերով հանգուցյալին, այնինչ իրեն արտակարգ տղամարդ էր կարծում, կտրիճ զինվորական, եւ նա շատ բարկացավ ու ասաց ինքն իրեն. «Մի՞թե սա ես եմ: Ոչ, գրողը տանի»: Իսկ մարդիկ անվերջանալի հոսքով անցնում հա անցնում էին հանգուցյալի կողքով, եւ նա մի պահ մոռացավ, որ խաղ է այս ամենը, թատրոն, մոռացավ թատրոնի մութ նպատակները եւ վիրավորվեց, սոսրացավ իշխանության նկատմամբ մահվան դաժան արհամարհանքի համար: «Անարդարություն է, գրողը տանի,- կրկնում էր նա քթի տակ, տեսնելով, թե ինչպես են մարդիկ պահում իրենց, եւ ուրախանում էր, նկատելով ոմանց չփոթվածությունը, անօգնականությունը եւ խղճում իրենց կորցրած այդ մարդկանց եւ չունչը պահած հետեւում էր նրանց, ովքեր ակնհայտորեն եկել էին ճշտելու՝ հո խաբկանք չէ՞, ստո՞ւյդ է լուրը: Նա՞ է դագաղում պառկածը: Նա տեսավ մի ծերունու, ֆեդերացիոն ստեղծելու համար մղված պատերազմի մասնակցի, որ քարացավ դագաղի մոտ՝ հանգուցյալին պատիվ տալու. տեսավ սգո թեւակապով մի տղամարդու, որը կռացավ ու համբուրեց հանգուցյալի մատանին. տեսավ լիցեյի մի սանուհու, որը մի համեստ ծաղիկ դրեց դագաղի մեջ,- տեսավ եւ առանձնահատուկ դրոշմեց հիշողության մեջ,- սրանց եւ չուվայի վաճառողուհուն, որը հանկարծ հատակին գցեց ձկներով լի զամբյուղը, ընկավ հանգուցյալի վրա, գրկեց սծված, ներկված դիակը եւ ողբաց դահլիճով մեկ. «Ողորմած աստված, հիմա ի՞նչ է լինելու մեր վիճակը: Նա մեռել է:

Մեռել է: Նա մեռած է»: Եվ այդ պահին բոլորը սկսեցին շշնջալ, խոսել, ալմկել. «Իրոք, նա է: Տեսնո՞ւմ եք, նա է: Ոչ մի խաբկանք: Մեռած է»,- «Դա նա է: Նա: Նա,- ոռնաց, մռնչաց դե Արմաս Հրապարակում կրակ-արեւի տակ կանգնած ամբոխը:- Նա է»: Եվ անակնկալ դադարից հուզարկավորման զանգի զողանջը, եւ տաճարի բոլոր զանգերը, բոլոր եկեղեցիների բոլոր զանգերը հնչեցին անսպասելի ուրախությամբ, ինչպես ավետման սուրբ չորեքշաբթի օրը, եւ սկսեցին ճայթել զատկվա ճայթռուկները, երկինք սուրացին հրավառության հրթիռները, տկտկացին ազատության թմբուկները, եւ նա տեսավ ապստամբների զրոհային խմբեր, որ պահակախմբի լուռ խրախուսանքով պալատ խուժեցին լուսամուտներից, տեսավ, թե ինչպես նրանք մահակներով ցրեցին դագաղի մոտ հավաքվածներին, հատակին փռեցին· անմիջապես ձկնավաճառուհուն, տեսավ, թե ինչպես նրանք ծանակեցին դիակը, հետո ութ հսկա տղաներ դիակը հափշտակեցին անմահությունից, գրկեցին նրան ծաղիկների հոծ թագավորությունից եւ ոտքերից քարշ տալով իջեցրին սանդուղքներով, իսկ մյուսները նույն պահին քանդում ու ոչնչացնում էին այն ամենը, ինչ հնարավոր էր քանդել ու ոչնչացնել չբեղությամբ ու աղեաններով լեցուն այդ դրախտում. նրանք ջարդեցին համաչափ սալերից շարված դորիական խոյակները, լուսամուտներից դուրս շպրտեցին թռչունների վանդակները, փոխարքայական գահը, դաշնամուրը, փշուր-փշուր արեցին անհայտ հերոսների աճյունասափորները, պատառոտեցին հիասթափության գոնդոլները նստած քնքուշ աղջիկների պատկերներով գոբելենները, ոչնչացրին Նոյի տարվա համազգեստով գինվորականների ու եպիսկոպոսների դիմանկարները, ծովային ահեղ մարտեր պատկերող կտավները. նրանք կարծում էին, թե ընդմիշտ կործանում են ատելի իշխանության որջը, եւ ձգտում էին կործանել ամեն բան՝ առանց մնացորդի, որպեսզի ապագա սերունդներին նույնիսկ հիշողություն չմնար անիծյալ ցեղից. եւ այս բոլորը նա տեսավ, իսկ հետո նետվեց իր թաքստոցի լուսամուտը, որպեսզի ծածկված վարագույրների արանքից հետեւի դրսի անցուդարձին, տեսնի, թե որքան է առաջացել ամեն ինչ ու ամենայն բան կործանելու ալիքը,- «Եվ մի ակնթարթում ես տեսա ավելի շատ ստորություն ու երախտամոռություն քան տեսել ու տեսածի

համար արտասվել էին իմ աչքերը կյանքիս ողջ ընթացքում մա՛յր ես տեսա երջանկությունից խենթացած իմ այրիներին որ խումբ-խումբ լքում էին տունս՝ հետները քշել-տանելով ֆերմայիս կովերը պետական դույքը քո փեթակներից քամված մեղրը մա՛յր ես տեսա իմ երեխաներին բոլոր այդ օրապակասներին որ դիվային համերգ էին սարքել իրար զարկելով կաթսաների կափարիչները եկեղեցական հաշասպասքի արծաթեղենը պղնձյա թասերին զարկելով բյուրեղապակյա ափսեները եւ ճչալով անվերջ թե մեռել է մեր հայրը եւ կեցցե ազատությունը ես տեսա դե Արմաս հրապարակում բոցկլտացող խարույկը եւ կրակների մեջ այրվող իմ պատմական դիմանկարներն ու օրացուցային դիմանկարները»: Եվ, ա-հա, նա դիտում էր, թե ինչպես են բոցավառվում պաշտոնական այդ դիմանկարները, որ հոգնեցրել էին մարդկանց աչքերը ամեն քայլափոխին, վարչակարգի բոլոր տարիներին, եւ կրկին տեսավ սեփական մարմինը,- դիակը քարշ էին տալիս սալահատակի վրայով, քարշ էին տալիս շքանշանները, մեդալները, ոսկեզօծ կոճակները, ոսկեգույն ուսակապերը, դիպակի ցնցոտիները, ծոպավոր կոթով խաղաթղթե թագավորի սուրը, Տիեզերքի Գեներալի մարած տասական արեգակներով ուսադիրները, եւ նա չչնջաց. «Տես, մայր, թե ինչ դարձրեցին ինձ»,- եւ ամբողջ մաշկով, ողջ էությամբ զգաց իր մարմնին շնորհված ամբոխի թուքն ու ծաղրը, շնչեց պատշգամբներից իր վրա թափվող գիշերանոթների պարունակության հոտը, եւ այրող ամոթը կրծոտեց նրան. այդ ամոթը սարսափի էր վերածվում այն մտքից, որ իրեն մահվան այս տոնահանդեսի խելագար ռոնոցների ու պիրոտեխնիկական որոտների մեջ կարող են քառատել, կարող են շների առաջը գցել՝ խժռելու, եւ անգղերին հանձնել՝ բզկտելու: Իսկ երբ այդ թաթառն անցավ, ամեն կողմից երաժշտության ձայներ էին լսվում, որ գալիս էին հեռուներից, թեեւ օրը խաղաղ էր, քամի չկար. նա սկսեց ետուառաջ անել իր ապաստարանում եւ ճանճ սատկեցնել՝ ափերի մեջ ճզմելով, փորձեց նույնկերպ նաեւ ականջը խցկված, մտածելուն խանգարող անտանելի ծղրիդը որսալ, հետո նայեց հորիզոնի հրացոլքին, փարոսին, որի կանաչ լույսը կես բոպեն մեկ թափանցում էր վարագույրի ճեղքից ներս, կես բոպեն մեկ չերտավոր վագր դարձնելով նրան, իսկ նա նայում էր ու լսում, զգալով դրսի առօրեական կյան-

քի շնչառությունը, որ գնալով ավելի ու ավելի էր բռնում իր սովորական ափերը. իր մահը արտակարգ իրադարձությունից վերածվում էր շարքայինի, դառնում էլի ինչ-որ մեկի մահ, ճիշտ այնպիսին, ինչպիսին այլ մահերն էին անցյալում, եւ գոյության հավերժական հորձանուտը տանում էր նրան ոչ մեկին չպատկանող, համընդհանուր ներողամտության ու մոռացման երկիրը: Եվ այդժամ նա ճչաց մահվան վրա. «Դե, գնա, ես քո անքիթ մերը...»,- եւ լքեց իր ապաստարանը, վճռելով, որ հասել է ժամը, բավական է թաքնված մնա. եւ ծանր քարշ տալով ոտքերը, նա անցավ խավարի մեջ ընկղմված, մեռնող ծաղիկների ու այրված մոմերի հոտերով լեցուն կողոպտված դահլիճներով, ինչպես անցյալի բեկորների մեջ շարժվող ուրվական, եւ հրեց նախարա-բաց խորհրդի նիստերի դահլիճի դուռը. ներսում ծուխ էր եւ այդ ծխի մեջ, այնտեղ, որտեղ ընկուզենու փայտից երկար սեղանն էր, լսվում էին խուսափած ձայներ. եւ նա տեսավ, որ սեղանի շուրջը հավաքվել էին բոլոր նրանք, ում ուզում էր հանդիպել. լիբերալները, ովքեր ծախսեցին հաղթանակը ֆեդերացիայի համար մղված պատերազմում, պահպանողականները, ովքեր սրանցից գնեցին այդ հաղթանակը, բարձրաստիճան սպաներ, երեք նախարար, արքեպիսկոպոսը եւ դեսպան Շնոտները. բոլորը միեւնույն ծուղակում: Նրանք ընդլեմ դարավոր բռնակալության միասնության կոչ էին անում, բայց եւ բզկտում էին իր ժառանգությունը, եւ ապահովությունը այնպես էր կլանել նրանց, որ ոչ ոք չնկատեց մեռյալներից հարություն առած պրեզիդենտին, իսկ նա սոսկ ձեռքի ափով շրխկացրեց սեղանին ու հարցրեց. «Այդպես, հա՞»: Եվ նա չհասցրեց որեւէ բառ ավելացնել, որովհետեւ, երբ ձեռքը ետ քաշեց սեղանից, արդեն հնչել էր խուճապի պայթյունը, եւ չքվել էին բոլորը. մնացել էին միայն ծխախոտի մնացորդներով լեցուն մոխրամանները, սրճի բաժակները, շուռ եկած բազկաթոռները եւ մեկ էլ նրա թանկագին բարեկամը՝ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը, որը դաշտային համազգեստով էր. փոքրամարմին, անվրդով այդ զինվորականը, միակ ձեռքով ցրեց ծխախոտի ծուխը եւ նշան արեց. «Պառկեք հատակին, իմ գեներալ: Հիմա կսկսվի հարայհրոցը»: Եվ նա դեռ չէր հասցրել պառկել թանկագին ընկերոջ կողքին, երբ թնդաց կոտորակոտումների մահացու խրախճանքը, եւ սկսվեց կոտորածը, պրեզիդենտա-

կան գվարդիայի արյունալի տոնը. գվարդիականները մեծագույն հաճույքով եւ առանձնահատուկ ջանասիրությամբ էին իրագործում վճռական հրամանը. «Դավադրության եւ ոչ մի մասնակից ողջ չպիտի մնա»: Հետեւելով ձեր այդ հրամանին, իմ գիներալ, գվարդիականները գնդացրային կրակահերթով հնձեցին շքամուտքից փախչողներին, որպես թռչնաձագերի որսացին լուսամուտներից դուրս նետվողներին, իսկ նրանց, ում հաջողվեց թաքնվել հարեւան շինություններում, դուրս բերեցին ծխաբեր նռնակներով եւ սպանեցին՝ հավատարիմ պրեզիդենտական սկզբունքին. «Մահապարժից խուսափածը մինչեւ դարավերջ ոխերիմ թշնամի կմնա»:

Մինչ կատարվում էին այս անցքերը, նա երեսնիվայր պառկած էր հատակին, Ռոդրիգո դե Ագիլարից մի երկու քայլ հեռավորության վրա եւ լսում էր պայթյունների աղմուկը. ամեն պայթյունից հետո նրա թիկունքին թափվում էին ապակու փշուրներ, սվաղի կտորտանք, իսկ նա, այդ կարկտի տակ պառկած, փնթփնթում էր քթի տակ, աղոթքի հանգով. «Վերջ բարեկամս վերջ ամեն ինչին սրանից հետո ինքս եմ միայն ղեկավարելու եւ ոչ մի շուն ոչ մի շուն այլեւս հրաման չի տա վաղն առավոտյան կտեսնենք թե ինչ է մնացել անմնաս այս հարայհրոցից եթե նստելու տեղ էլ չի մնացել կգտնենք մի գույգ էժանագին աթոռ մի քանի խսիր որ ծածկենք ծակուծուկերը եւ էլի որոշ բաներ կառնենք բայց ոչ ամանչաման ոչ ափսե ոչ դդալ ամեն ինչ կվերցնենք զորանոցից ու չեմ պահելու այլեւս ոչ զինվորներին ոչ սպաներին թող կորչեն դրանք գրողի մոր ծոցը միայն կաթ լակել գիտեն դրանք իսկ երբ իրարանցում է սկսվում թքում են կաթնատու ձեռքին ես կպահեմ միայն պրեզիդենտական գվարդիան որի մարդիկ ազնիվ են ու քաջ եւ այլեւս ոչ մի նախարարների խորհուրդ տանձիս պետք չէ ինձ հերիք է միայն առողջապահության մի կարգին նախարար նման նախարար իրոք անհրաժեշտ է եւ էլի որեւէ մեկը որ գեղեցիկ ձեւագիր ունենա հավանաբար հարկ կլինի որոշ բաներ գրի առնել եւ բավական է իսկ բոլոր այդ զորանոցները նախարարությունները կդարձնենք բնակելի շենքեր եւ բնակարանային վարձի գումարով պալատը կպահենք եթե մի պահանջ կա ապա դա փողի պահանջն է եւ ոչ թե մարդկանց կճարենք աշխատասեր երկու սպասուհի մեկը

կեփի մյուսը լվացք ու արդուկ կանի իսկ կովերին ու թռչուններին եթե մնացել են ինքս կխնամեմ եւ ոչ մի բոզ այստեղ այլեւս թրեւ չի գա հերիք է վաղ տան զինվորական արտաքնոց եւ բոլոր բորոտներին որ քնում են վարդաթփերի տակ վռնդել եւ իրավագիտության բոլոր դոկտորներին որոնք ամեն բան գիտեն եւ ուսյալ բոլոր քաղաքագետներին որոնք տեսնում են ամեն ինչ վռնդել որովհետեւ ի վերջո սա պրեզիդենտական պալատ է եւ ոչ թե կեղտոտ բոզանոց ինչպես ասացին յանկիները եթե հավատանք Պատրիսիո Արագոնեսին ես մենակ էլ գլուխ կհանեմ ինձ ոչ ոք պետք չէ գլուխ կհանեմ մինչեւ գիսաստղի երկրորդ հայտնությունը որովհետեւ ես այլեւս մտադիր չեմ մեռնելու ով ուզում է թող մեռնի եւ թող կորչեն դրանք բոլորը գրողի ծոցը»: Այսպես բարձրաձայն, միաձույլ, առանց դադարի, ինչպես աղոթք, ինչպես անգիր արած ոտանավոր փնթփնթում էր նա իր մտքերը. դեռ պատերազմական տարիներից եկած հին սովորություն էր՝ խոսքով խեղդել սարսափը, փրկվել սարսափից բարձրաձայն մտածելով, եւ, ահա, նա մտածում էր բարձրաձայն, դուրս էր տալիս իր մտքերը, ասես չլսելով պալատը ցնցող պայթյունները, կաղմելով նկոզ առավոտվա եւ գալիք հարյուրամյակի ծրագրերը: Բայց, ահա, փողոցում ճայթեց վիրավորներին սպանող վերջին կրակոցը, եւ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը սողաց դեպի լուսամուտը, ուզի նայով, դուրս նայեց ու ինչ-որ մեկին հրամայեց բերել աղբի սայլերը՝ դիակները տանելու, որից հետո հեռացավ, հրաժեշտի պահին մայթելով. «Բարի գիշեր, իմ գեներալ» - «Բարի գիշեր,- արձագանքեց նա,- բարի գիշեր, բարեկամս: Անչափ շնորհակալ եմ»: Նա այդպես էլ մնաց երեսնիվայր պառկած սգո սեւ մարմարե հատակին, նախարարների խորհրդի նիստերի դահլիճում, գլխի տակ հարմարեցնելով աջ ձեռքի արմունկը, խրվեց դրա մեջ դեմքով եւ ակնթարթորեն քնեց՝ ավելի միայնակ, քան եղել էր երբեւէ, օրորվելով իր կյանքի խղճուկ աշնան դեղին տերեւների սփոփոցի տակ. այդ աշունն անվերադարձ եկել էր հատկապես այս մեծ կոտորածի գիշերը, որ նշանավորվել էր ծխացող խրամներով եւ արյան լճակների կարմրավուն լուսնյակներով: Առավոտյան, սակայն, նա ազատվեց նախորդ օրվա ծրագրերն իրականացնելու անհրաժեշտությունից, քանի որ բանակն ինքն էր դադարեցրել իր գոյությունը, զինվորները վա-

խել էին, իսկ մայրաքաղաքի եւ երկրի վեց այլ զորանոցներում մինչեւ վերջ դիմադրած սպաներին գնդակահարեցին պրեզիդենտի գվարդիականները՝ քաղաքացիական կամավորների օժանդակությամբ. ողջ մնացած նախարարները փախել էին արտասահման, բացի երկուսից, ամենահավատարիմներից. մեկը նրա անձնական բժիշկն էր, մյուսը՝ երկրի լավագույն գեղագիրը. դրամական միջոցների հարցն էլ լուծվեց. խնդրելու հարկ չկար, քանի որ պրեզիդենտի կողմնակիցները, որոնք այնքան էլ փոքրաթիվ չէին, ժողովեցին բազմաթիվ մատանիներ, ոսկյա զարդեր եւ հանձնեցին պետական գանձարան. նմանապես հարկ չեղավ գնելու էժանագին, կաշեպատ աթոռներ, խսիրներ, որոնցով հուղարկավորման պղծման օրից ամենուր մնացած ավերածության հետքերը պիտի ծածկվեին, որովհետեւ մինչեւ վերջնականապես կիսաղաղեցվեր երկիրը եւ դեռ դրանից էլ առաջ, պրեզիդենտական պալատը վերակառուցվեց եւ դարձավ առավել չքեղ ու գեղեցիկ. կրկին հայտնվեցին թուչուններով լեցուն վանդակները,- մի վանդակում նստոտած էին լեզվանի գաուկամայա թութակները, մի այլ տեղ, առաստաղից կախ, արքայական թութակները. «Եթե ոչ Իսպանիայում, ապա Պորտուգալիայում» հանրահանուչ երգի մեղեդին էին երգում, իսկ շուրջբոլորը փայլում էր մաքրությունից, ինչպես ռազմանավի վրա,- նավային մաքրությունը եւ կարգուկանոնը պահպանում էին երկու համեստ, աշխատասեր կին. լուսամուտներից ներս էր խուժում նրան փառաբանող երաժշտություն, հնչում էին ճայթռիկների հրճվալից պայթյուններ, լսվում էր զանգերի հանդիսավոր զողանջ. դե Արմաս հրապարակում աղմկում էր մշտապես գործող ցույց, որի ճիչերը կեցցեներ էին պրեզիդենտի եւ ժողովրդի հավերժ միասնության պատվին, իսկ վեր խոյացած ցուցատախտակներին մեծ-մեծ տառերով գրված էր. «Աստված պահապան լինի մեռելներից երրորդ օրը հարություն առած նորին գերազանցությանը»:

Մի խոսքով՝ կյանքը վերածվեց ամենօրյա տոնակատարության, որն անհրաժեշտ չէր բորբոքել արհեստականորեն, ինչպես նախկինում, որովհետեւ ամեն ինչ հրաշալի էր ընթանում. պետական հարցերը լուծվում էին իրենք իրենց, հայրենիքը առաջադիմում էր, կառավարությունն ինքն էր, ոչ ոք ո՛չ խոսքով եւ ո՛չ էլ

գործով չէր խանգարում նրա մտահղացումների իրականացմանը. թվում էր, նույնիսկ, փառքի գագաթում, մենության մեջ մնացած գեներալը թշնամի այլևս չունի,- նրա թանկագին բարեկամը՝ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը կարող էր գոհ մնալ իր աշխատանքից. ինքն էլ էր գոհ, եւ, ահա թե ինչու մի օր հրահանգեց վարժահրապարակում շարել պրեզիդենտական գվարդիայի բոլոր այն շարքայիններին, որոնք անկարգությունները ճնշելիս առավել աչքի էին ընկել, եւ դարձրեց նրանց սպա, թեեւ հասկանում էր, որ հիմա հարկադրված է լինելու վերականգնելու բանակը, որովհետեւ հրամանատար դառնալու համար սպային զինվոր է պետք. այո, հարկադրված էր վերականգնել բանակը, որը վաղ թե ուշ խայթում է իրեն սնող ձեռքը. բայց մեկ է, նա սպա դարձրեց այդ շարքայիններին՝ ցուցամատը շարժելով այս կամ այն աստիճանը շնորհելիս միայն ներշնչանքի ձայնը լսելով. «Դու կապիտան ես: Դու՝ մայոր: Դու՝ գնդապետ: Այսինքն ի՞նչ եմ ասում. դու գեներալ ես, իսկ մնացած բոլորը լեյտենանտներ են: Ոչ մի դեպքում, բարեկամս, չշեղվես ճանապարհից, ընդունիր զորքդ»: Նա չշրջանցեց նաեւ նրանց, ովքեր անկեղծորեն վշտացել էին իր մահվան համար, շնորհակալական զգացումը համակել էր նրան, ահա թե ինչու հրամայեց փնտրել-գտնել այն ծերուկին, որը հրաժեշտի օրը վշտացած կանգնել էր դագաղի մոտ՝ վերջին պատիվը տալու, հրահանդեց գտնել այն տղամարդուն, որը համբուրել էր հանգուցյալի ձեռքի մատանին, եւ սրան ու ծերունուն պարգեւատրեց խաղաղության մեդալով. նա հրամայեց գտնել իր դագաղի վրա հեկեկացող ձկնավաճառ կնոջը եւ տասնչորս երեխա ունեցող այդ խեղճ մորը նվիրեց բազմաթիվ սենյակներով մի տուն, ինչի կարիքն ամենից շատ էր զգացվում. նա հրամայեց գտնել լիցեյի այն սանուհուն, որը ծաղիկ դրեց դագաղի մեջ եւ նրան ամուսնացրեց մի նավաստու հետ, իրագործելով աղջկա ամենանվիրական երազանքը: Այսուհանդերձ, նրա ցնցված սիրտը, որ խաղաղվելու միտք էլ չուներ, ողորմություն բաժանելիս չհանգստացավ, քանի դեռ Սան Խերոնիմո զորանոցի բակում չտեսավ պրեզիդենտական պալատի վրա գրոհած բոլոր ողջ մնացածներին կապկպված. վախն ու ատելությունը սրում են հիշողությունը, եւ նա դաժան անսխալականությամբ ճանաչեց բոլորին եւ խմբավորեց գնդիներն ըստ նրանց

մեղսաչափի. «Դու դեկավարում էիր գրոհը՝ կանգնիր այստեղ: Դու մի կողմ շպրտեցիր դագաղի վրա լացող կնոջը՝ կանգնիր այստեղ: Դուք անարգում էիք դիակը, քարշ էիք տալիս սանդուղքով եւ ցեխաջրերի միջով՝ կանգնեք այստեղ: Իսկ մնացածներդ՝ այստեղ: Ես ձեզ ցույց կտամ, կոտոշավորներ»: Բայց կարեւորը նրա համար պատժելը չէր, պատիժը նրան չէր բավարարում,- նրան պետք էր համոզել ինքն իրեն, որ պալատի վրա գրոհող մարդկանց դաժանությունը, դիակի անարգումը ժողովրդական անբավականության տարերային պոռթկման արդյունք չէր, այլ կեղտոտ վարձկանների ձեռքի գործ եւ այդ պատճառով նա գերիներին հարցաքննեց անձամբ, ցանկանալով նրանցից կորզել սիրտը շոյող խոստովանություն: Բայց գերիները չէին խոստովանում, եւ այդժամ նա հրամայեց գլխիվայր, որպես թուլթակ, կախել նրանց, կախել առաստաղի հեծանից, ոտուձեռքը կապած, մի քանի ժամով, իսկ երբ սա էլ չօգնեց, հրամայեց պատահական մեկին բերդախրամը նետել, մնացածներին էլ ստիպեց նայել, թե ինչպես են ընկերոջը ողջ-ողջ լափում կայմանները. երբբ սա էլ չօգնեց, նա գերիների խմբերից մի-մի մարդ ընտրեց եւ հրամայեց ի տես բոլորի քերթել դրանց կաշիները. բոլորը պարտավոր էին նայել անջատվող, դեղին ու նուրբ, ծննդվանից հենց նոր դուրս թափված ընկերքի նման մաշկին, պարտավոր էին տեսնել, թե ինչպես է մինչեւ կենդանի միսը մերկացած, զորանոցային վարժահրապարակի քարե սալիկների վրա թրթռացող մարմիններից առատորեն ծորում տաք, մածուցիկ արյունը. եւ այդժամ բոլոր պնդաճակատները խոստովանեցին, որ, այո՛, հենց այդպես է որ կա, իրենք վարձկաններ են, իրենց վճարել են չորսհարյուրական ոսկե պետ, որպեսզի պղծեն դիակը, քարշ տան շուկայի աղբանոց, որ իրենք սկզբում չէին համաձայնում եւ ոչ մի գնով, քանզի այդ ամենը հակառակ է իրենց համոզմունքներին, որ իրենք ոչինչ չունեն գեներալի դեմ, առավել եւս մեռածի, բայց պատահեց այնպես, որ մի գաղտնի հավաքում, որտեղ ներկա էին բանակի երկու բարձրաստիճան գեներալ, իրենց հարկադրեցին, վախեցրին հազար ու մի սպառնալիքով. «Միայն այդ կերպ համաձայնեցինք, ազնիվ խոսք»: Եվ այդժամ, հանգիստ շունչ քաշելով, նա հառաչեց. «Խեղճ իմ խարված աղաներ»,- հրամայեց սնել նրանց, քնելու հնարավորություն տալ, իսկ առավո-

ության չպրոնել կայմանների առաջ՝ որպես կեր: Այս հրամանը տալով, նա մեկնեց պալատ, զգալով, թե ինչպես է հոգին ազատագրվում կասկածի քրձից եւ մեծ բավարարվածությամբ նա մրմնջաց ինքն իր համար. «Ահա գրողը տանի բոլորը համոզվեցին որ ժողովուրդն այստեղ գործ չունի ժողովուրդն ինձ սիրում է»: Ոտնատակ տալով տագնապների այն խարույկի վերջին խանձուրատները, որ իր սրտում վառել էր Պատրիարք Արագոնեսը, նա վճռեց խոշտանգումները վերացնելու որոշում կայացնել եւ երդվեց, որ այս հրաշալի երկրում այլեւս ոչ մի անգամ ոչ մի խոշտանգում չի լինի. դրանից հետո սատկեցրին բոլոր կայմաններին եւ վերասովորեցին խոշտանգումների խցիկները, որտեղ առանց մարդուն սպանելու հնարավոր էր աղալ նրա ոսկորները. հետո համընդհանուր ներում հռչակվեց, որից հետո, ապագայի մասին մտածելիս, նրա ուղեղը հանկարծ լուսավորվեց. ասես պարզվեց այն գաղտնիքը, որ պատճառն էր դարձել երկրի բոլոր դժբախտությունների. մարդկանց ազատ շատ ժամանակ էր տրված տարբեր տեսակի խոհերի, մտածմունքների համար, ուրեմն, հարկավոր է ինչ-ինչ բաներով զբաղեցնել այդ ժամերը. այդ նպատակով նա վերականգնեց պոեզիայի մարդության եւ գեղեցկուհիների ամենամյա մրցույթները, կառուցեց կարիբյան երկրներում ամենախոշոր փակ մարզահրապարակը՝ ձեռքի գնդակի հրաշալի դաշտով, մեր թիմին պարտավորեցնելով խաղալ «Հաղթանակ կամ մահ» նշանաբանով. յուրաքանչյուր գավառում նա հիմնեց հավաքարարների անվճար դպրոց, եւ ձրի ուսուցման համար նրան մոլեռանդորեն նվիրված սանուհիները մեծ ոգեւորությամբ ավլում էին ոչ միայն տների, այլեւ փողոցների աղբը, իսկ հետո նախաձեռնեցին ավլել ճանապարհները՝ գյուղամիջյան եւ գլխավոր, բոլորն անխտիր, այնպես որ՝ ապրի կույտերը մի գավառից մյուսն էին տեղափոխում, չիմանալով ինչ անել, եւ աղբակույտի յուրաքանչյուր տեղափոխում կատարվում էր պետական դրոշի ներքո եւ բոցավառ ցուցանակներով. «Թող աստված պահի առաքինության առաքյալին, որը հոգ է տանում ազգի մաքրության համար»,- իսկ նա այդ ժամանակ հնարելով նորանոր զբաղմունքներ երկրի քաղաքացիների համար, անշտապ, ինչպես խոհուն կենդանի, քարշ էր տալիս ոտքերը այդու ծառուղիներով՝ շրջապատված բորոտներով, կույրերով եւ կաթվածա-

հարներով, որոնք խնդրում էին նրանից մի պտղունց բուժիչ աղ, բայց երկնքի տակ դրված մկրտության ավազանում կնքում էր հին սանիկների երեխաներին, որոնցից յուրաքանչյուրին իր անունն էր բաշխում. շողոքորթները փառաբանում էին նրան, կոչում միակը, իսկ նա այն օրերին իր տեսակի մեջ իրոք միակն էր, որովհետեւ այլեւս նմանակ չուներ եւ հարկադրված էր հանդես գալ նմանակի փոխարեն շուկա դարձած այդ պալատում, որտեղ ամեն օր անհամար թռչուններով վանդակներ էին բերում,- ամեն օր, սկսած այն օրից, երբ լուր տարածվեց, թե նրա մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն ինչ-որ ժամանակ թռչնավաճառ է եղել. ոմանք թռչուններ էին ուզարկում քծնելու համար, ոմանք էլ՝ բացահայտ ծաղրանքով, բայց ինչ էլ լիներ, պալատում շուտով ազատ տեղ չմնաց, որտեղ հնարավոր լիներ վանդակ կախել. այս հոգսերին ավելացան նաեւ պետական շատ ուրիշ հոգսեր, գործեր, եւ այս ամենը փորձում էին լուծել միաժամանակ, ինչի շնորհիվ առանձնասենյակում այնքան մարդ կուտակվեց, որ անհնար էր որոշել՝ ով է այստեղ պաշտոնյան եւ ով՝ խնդրատուն. որպեսզի ընդարձակեն տարածությունը, որպեսզի բոլորը կարողանան հիսնայ ծովով, այնքան միջնորմ քանդեցին, այնքան նոր պատուհաններ բացեցին, որ սովորական անցումը մի սրահից մյուսը նմանվեց հանդիպակաց քամուց փքված, աշնանային ծովի անհզորության մեջ կորչող առագաստանավի տախտակամածի տեղաշարժին: Եվ թեեւ մարտյան պատատները միշտ էլ փչում էին պալատի լուսամուտներին, բոլորը սկսեցին ասել, թե այդ քամիները հանգստության ու խաղաղության քամիներ են, իմ գեներալ, նույնիսկ ականջների աղմուկը, որ տարիներ շարունակ չարչարել էր նրան, վերածվեց հանդարտության ու խաղաղության ձայնի, անձնական բժիշկը հենց այդպես էլ ասաց. «Դա խաղաղությունն ու անդորրությունն է հնչում ձեր ականջներում, իմ գեներալ»: Երկրի վրա ու երկնքում ամեն արարած խաղաղություն ու անդորր էր ներկայացնում, համընդհանուր բարեկեցություն էր այն օրից, երբ ինքը հարություն առավ մեռյալներից, եւ նա հավատաց այդ իրավիճակին, հավատաց՝ լռություն է սկսվել, անդորր եւ աստվածային երանություն, հավատաց այնքան, որ դեկտեմբերին կրկին այցելեց ժայռի վրա կառուցած տունը, որպեսզի հաճույք ստանա՝ տեսնելով այդ տանը ձանձրալի մի

միաբանություն ստեղծած նախկին բռնակալների դժբախտությունը, իսկ նրանք ընդհատեցին խաղը, որպեսզի այս էլ որերորդ անգամ դոմինոյի քարերով ցույց տան իրենց գլխով անցածը. «Ես, ասենք, զույգ վեցն եմ, իսկ պնդաճակատ պահպանողականները՝ զույգ երեքը, բայց ես հաշվի չառա տերտերների ու մասոնների անդրկուլիսյան գործարքները»: Եվ ասա պե՞տք է քեզ, պառաված դոդոշ, շատախոսել այդ մասին, մոռանալով, որ սառչում է ապուրդ: Իսկ հետո մի ուրիշ պառավ դոդոշ սկսեց բացատրել այս կերպ. այս շաքարամանն, ասենք, պրեզիդենտական պալատն է, իսկ թշնամական հրանոթները համընթաց քամու օգնությամբ արկերը հասցնում էին չորս հարյուր մետր հեռավորության վրա. եթե չլիներ համընթաց քամին, արկերը չէին հասնի պրեզիդենտական պալատ,- «Եվ եթե դուք հիմա ինձ տեսնում եք այս վիճակում, մեղքը եղած-չեղած ութսուն սանտիմետրինն է: Բախտի բան է»: Սակայն նույնիսկ ամենահամառներն էլ կոտրվել էին չափից ավելի երկարատև վտարանդիության մեջ, կորցրել ամեն տեսակի հույս եւ ապրում էին նրանով, որ հորիզոնում իրենց հայրենիքի նավն էին տեսնում,- ճանաչում էին ծխի գույնով, ազդանշանների դժժոցով,- նավահանգիստ էին իջնում եւ մանր անձրեւի տակ փնտրում նավաստիների գցած ուտելիքի փաթեթ-լրագրեր, հանում էին աղբարկղերից, կարդում ծայրից ծայր ոչ միայն ձախից աջ, այլեւ աջից ձախ՝ ճգնելով մեկ-երկու հաղորդագրությունների հիման վրա,- ով է հայրենիքում ամուսնացել, ով է մահացել, ով ում է հրավիրել եւ ով ում չի հրավիրել իր ծննդյան առթիվ կազմակերպված երեկոյին,- դուշակել քաղաքական հասունացումը իրենց երկրներում. յուրաքանչյուրը սպասում էր, որ իր ճակատագիրը փոխելու է ահեղ որեւէ ամպի ուղղությունը, եւ այդ ամպը, աստված տար, ամենակույ փոթորկի ձեւով փլչելու էր իր երկրի վրա, քանդելու էր բոլոր թմբերն ու ամբարտակները, եւ գետերը հոսելու էին դեպի դաշտերն ու ոչնչացնելու էին բերքը, քանդելու տները. սով էր սկսվելու, ժանտախտ, մահացություն, եւ մարդկանց ոչինչ չէր մնալու անել, քան օգնության կանչել նրան, ում վռնդել էին, որպեսզի նա փրկեր իրենց աղետի հետեւանքներից ու անօրինականություններից: «Այդպես էլ կլինի, ա՛յ, կտեսնեք»: Այդ մեծ ժամին սպասելիս, սակայն, հարկ էր լինում մի կողմ կան-

չել ապաստարանի համեմատաբար երիտասարդ բնակիչներից մեկին եւ խնդրել կամացուկ. «Բարի եղեք, այս թելը ասեղն անցրեք. ես պետք է կարկատեմ շալվարս, ես չեմ կարող այն մի կողմ շպրտել, որովհետեւ հիշատակ է եւ թանկ... սա իմ հոգեւոր արժեքն է...»: Հարկ էր լինում բոլորից ծածուկ զբաղվել նաեւ լվացքով, աննկատ հավաքել սափրվելու օգտագործված սրիչները, որ սկզբում շպրտում էին ապաստարանի նորեկները, ճաշել մենության մեջ՝ կողպելով դուռը, որպեսզի չբացահայտվեր անատամության խեղճությունը, որպեսզի հրապարակավ չմատնվեին զառամախտի նշանները, ծերունական անզսպության՝ շալվարը մուրտառելու վկայությունները: Եվ մի գեղեցիկ օր նրանցից մեկին, որն ակնհայտորեն երկարաձգել էր իր գոյությունը այս լույս աշխարհում, վերջին պահին հագցրին պատշաճ շապիկ, կրծքին ամրացրին ունեցած բոլոր շքանշանները, մարմինը փաթաթեցին Հանգուցյալի հայրենիքի ազգային դրոշով եւ երգելով նրանց ազգային հիմնը, ուղարկեցին մոռացության երկիր, հանձնեցին ի տնօրինություն քայքայումից կրծոտված վշտերի իշխանությանը. թախծից քարացած Հանգուցյալի սիրտը միակ բալասանն էր, որ իր հետեւից տանում էր նրան ծովի հատակի, ժայռաստորոտի այդ երկիրը. երկրի վրա նրանից հետո մնաց դատարկ մի տեղ, լողափի սթոռակ՝ անելանելիության պատշգամբում. «Մենք նստեցինք այդ աթոռակին, իրար մեջ խաղարկելով Հանգուցյալի իրերը, եթե նրանից, իհարկե, մնացել էր որեւէ բան: Ինչպիսի խղճուկ ավարտ՝ այնպիսի փառքից հետո»:

Մի ուրիշ, վաղուց անցած հեռավոր դեկտեմբերին, երբ նոր էին բացում ապաստարանը, նա հենց այս պատշգամբից Հանկարծ նկատեց Անթիլյան կղզիների մանյակը, Կարիբյան ծովափի քաղաքները: Կարծես երազ լիներ: Բայց երազ չէր, ինչ-որ մեկը ցույց տվեց, մատը հպելով կապույտ ծովի ցուցափեղկին. «Ահա այնտեղ, իմ գեներալ, Մարտինիկան է»: Եվ նա տեսավ Մարտինիկան, անուշաբույր, մարած հրաբուխը, թոքախտավորների առողջարանը, ժանյակե կոֆտա հագած վիթխարի նեգրին, որ տաճարի սյուների տակ հողաթմբերը հետը գարգինյա էր վաճառում քաղաքագլուխների կանանց: «Իսկ այնտեղ Պարամարիբոն է, իմ գեներալ»: Եվ նա տեսավ տարտարոսի նման Պարամարիբոյի շուկան, տեսավ

խեցգետիններ, որ ծովից դուրս էին գալիս արտաքնոցի հոսքային խողովակներով ու մապցում ծովափնյա սրճարանի սեղանների վրա, տեսավ ադամանդներով ատամները լցրած հաստաքամակ պառավ նեգրուհիներին, որ հնդկական դիմակներ ու զենջեֆիլի արմատներ էին վաճառում ապուրի պես թանձր անձրեւի տակ: Նա տեսավ Տանգուարենի ծովափում պառկած, արեւից ոսկեգույն դառած կովերի նման պատկառելի տիկիններին,- «Մաքուր ոսկի են, իմ գեներալ»,- տեսավ կույր պայծառատեսին Գուայրոյից, որը երկու ռեալով մեկ լարանոց ջութակ էր նվագում վանդելով հնդկուհի մահին, տեսավ Տրինիդադի շոգ օրը, ետնամասով առաջ գնացող ինքնաշարժերը, կանաչ հագած հնդկացիներին, որոնք իրենց մեծ պետքը հոդում էին հենց փողոցի մեջտեղում, իրենց կրպակների դիմաց, որտեղ վաճառում էին բնական մետաքսից շապիկներ եւ նեղաչք մանդարինների արձանիկներ՝ քանդակված փղի ամբողջական ժանիքից. տեսավ Հաիթիի մդձավանջը. այնտեղ շրջում էին մազաթափ, կապտախտավոր շներ, իսկ եղներով լծված սայլերը առավոտները հավաքում էին փողոցներում փռված դիակներ. տեսավ Կյուրասաոյի բենզինի պահեստը՝ զարդարված վարդակակաչներով, որ նշան էր, թե վերադարձել է Հոլանդիան, տեսավ ալրաղացի նման տներ՝ ձյունառատ ձմեռվա համար նախատեսված թեք տանիքներով, տեսավ օվկիանոսային տարօրինակ մի նավ, որ լողում էր քաղաքի կենտրոնով մի հյուրանոցից մյուսը, տեսավ Կարտախենի քարե փափսիը, շղթաներով շրջապատված նրա ծովախորշը, լուսավոր պատշգամբները, փոխարքայական կերի կարոտից հորանջող, ուժասպառված շքերթաձիերին,- «Թրիքի հոտ է գալիս, իմ գեներալ: Ահ քեզ հրաշք: Ի՜նչ հսկայական է աշխարհը»: Աշխարհն, իրոք, հսկայական էր, բայց եւ նենգ, այնպես որ եթե այս տարվա դեկտեմբերին էլ գեներալը բարձրացավ ապաստարան, ապա բոլորովին էլ ոչ նրա համար, որ զրուցի բնակիչների հետ, որոնց ատում էր, ինչպես դժբախտության հայելում արտացոլվող իր սեփական պատկերը, այլ նրա համար, որպեսզի ներկա լինի կախարդական այն ակնթարթին, երբ դեկտեմբերյան լույսը դառնում է հրաշալիորեն թափանցիկ եւ կապույտ ծովի յուցափեղկի վրա նկատելի է դառնում Անթիլյան մանյակն ամբողջությամբ՝ Բարբադոսից մինչեւ Վերակրուս: Եվ, ահա, այդպես էլ ե-

դավ, եւ նա մոռացավ, թե ինչի համար է զույգ վեցով խաղաքարը ու դուրս եկավ պատշգամբ, որպեսզի հիանար ծովախորշում քնած կայմաններին նման կղզիների լուսնային լուսարձակումով, եւ նայելով դրանց, կրկին հիշեց, վերստին ապրեց պատմական այն հոկտեմբերի ուրբաթ օրը, երբ ինքը վաղ առավոտյան դուրս եկավ իր ննջասենյակից եւ նկատեց, որ պրեզիդենտական պալատի բոլոր բնակիչներն անխոիր կարմիր թասակներ են դրել: Կարմիր թասակով էին նրա սենյակները ավլող ու թռչնավանդակների ջուրը թարմացնող կենակցուհիները, ֆերմայի կթվորուհիները, ե՛ւ ժամապահներն էին կարմիր թասակներով, ե՛ւ սանդուղքներին մշտապես նստոտած կաթվածահարները, ե՛ւ վարդանոցում զբոսնող բորոտներն էին կիրակնօրյա պարահանդեսի կարմիր թասակներով. նա ոչ մի կերպ չէր հասկանում, թե այդ ինչու են պալատի ու քաղաքի բոլոր բնակիչները շրջում թասակներով, եւ թե ինչ չխչխկանների կապ է յուրաքանչյուրի ձեռքում, բայց, ի վերջո, գտնվեց մեկը, որը բացատրեց նրան, թե ինչ է կատարվում. «Ինչոր օտարերկրացիներ են ժամանել, իմ գեներալ. նրանք խոսում են իսպաներեն, բայց դա մեր իսպաներենը չէ, որովհետեւ նրանք «ծովը» իգական սեռով են օգտագործում, մեր թութակներին անվանում են «պապագայո», մակույկները՝ «ալմադիյամ», իսկ «եռաժանին»՝ «ասագա». իսկ երբ մենք մեր մակույկներով ծով դուրս եկանք եւ սկսեցինք պտտվել նրանց նավերի շուրջը, նրանք բարձրացան կայմերի վրա եւ մեկը մյուսի ետեւից բղավում էին, թե մենք, իբր, հրաշալի կազմվածք ունենք, գեղեցիկ մարմին ու դեմք, եւ զովաբանում էին մեր մազերը, համեմատում ձիու մազերի հետ, իսկ երբ նրանք նկատեցին, որ մենք ծածկված ենք ներկով, որպեսզի արեւը չպլոկի մեր մաշկը, բլբլացին ինչպես կոտորոներ*, թե մենք, իբր, իրենց պես սպիտակամորթ չենք եւ ոչ էլ կանարցիների նման սեւամորթ, սատանան գիտե, թե ինչպիսին ենք, որովհետեւ ծածկված ենք մուգ-դարչնագույն ներկով, եւ ծիծաղում էին, իսկ մենք չէինք հասկանում նրանց ծիծաղի պատճառը, որովհետեւ մենք ամենաբնական տեսքով էինք, իմ գեներալ, ինչպես մեր մայրերն են մեզ ծնել. այդ նրանք էին հագնված խաչի

* Կոտորո - փոքրիկ թութակ, չատախոսության խորհրդանիշ:

տղաների պես, թեեւ շոգ էր. նրանք «շոգը» արտասանում էին հոլանդացի մաքսանենգների նման, իսկ մազերը կանացի էին, թեեւ մեջները ոչ մի կին չտեսանք, բոլորը տղամարդիկ էին. նրանք բղավում էին, թե ինչու չենք հասկանում մարդկային լեզուն, իսկ հետո մոտեցան մեզ իրենց մակույկներով, որ, ինչպես ասվեց, կոչվում էին «ալմաղիյամներ», եւ զարմացան, որ մեր որսատեղերի ծայրերը սարալո ձկան ոսկրից են սարքված. այդ ձկանը նրանք «ատամ-ձուկ» են կոչում. եւ նրանք սկսեցին փոխանակել մեր ունեցածը կարմիր այդ թասակների ու թելն անցկացրած ապակեղենի հետ. այդ կապերը մենք մեր վզերը դցեցինք, որպեսզի զվարճացնենք օտարերկրացիներին. իսկ հետո մեր ունեցածի դիմաց նրանք տվեցին մի մարավեղի* էլ չարժեցող թիթեղյա չխկչխկաններ եւ անդրծոլյան էժանագին այլ հիմարություններ, իմ գեներալ. երբ մենք համոզվեցինք, որ նրանք չար մտքեր չունեն եւ ինչոր բան գիտակցում են, իրենց համար էլ աննկատ ափ հասցրեցինք եւ այստեղ ամեն ինչ խառնվեց, մի այնպիսի շուկա առաջացավ, որ գլուխ չէիր հանի. ով չէր ալարում, բերում էր թուխակ, ծխախոտ, գլուխ-գլուխ շոկոլադ, իդուանի ձվեր, բերում էին ու բերում, իսկ նրանք այս ամենը մեծ բավականությամբ վերցնում էին եւ հաճույքով տալիս իրենց ունեցածը. ցանկանում էին նույնիսկ մեզանից որեւէ մեկի թավշե խուրջինը փոխանակել, որպեսզի ցուցադրեին Եվրոպայում, պատկերացնո՞ւմ եք, իմ գեներալ, թե ինչ էր կատարվում»: Նա ծայր աստիճան շփոթմունքի մեջ էր եւ չգիտեր՝ կարո՞ղ է, արդյոք, միջամտել այդ տարօրինակ գործին: Արդյոք, կարո՞ղ է իշխել իշխանությունների վրա: Այդպես հուզված վերադարձավ պալատ, իր ննջասենյակը, հուսալով, թե նոր օրվա առավոտը նոր լույս կսփռի կատարվածի վրա եւ ինքը կհասկանա, թե ինչ է նշանակում այս երազը, կպարզաբանի այն շփոթը, որ հիմա լսեց: Բայց երբ բացեց լուսամուտը, տեսավ, որ նավամատույցում, բացի ժամանակին հետեւակից լքված զրահանավից, խարիսխ էին գցել երեք առագաստանավ:

Երբ նրան կրկին մեռած գտան նույն առանձնասենյակում, նույն դիրքով, նույն հագուստով, բզկտված դեմքով, մեզանից ոչ

* Մարավեղի - հին մետաղադրամ:

մեկը դեռ այնքան ծեր չէր, որ հիշեր, թե ինչպես է եղել այդ ամենն առաջին անգամ, բայց մենք գիտեինք՝ ոչ ոք համոզված չէր կարող պնդել, թե իրոք նա է մեռել, չնայած մահվան ակնհայտությանը, քանզի նախկինում բազմիցս պատահել էր նույնը, քանզի նրան վերաբերող բոլոր հարցերում ակնհայտությունը կարող էր սոսկ երևութական լինել, իսկ ականատեսների վկայությունը վերածվել վայրահաչության. պնդում էին, օրինակ, թե ինչ-որ մեկին ընդունելիս, նա հանկարծ սոսկալի գալարումներով ընկել է բազկաթոռից ու դեղին փրփուր է թափվել նրա բերանից. պնդում էին, թե երկնավորը պատժել էր նրան պիղծ լեզվի համար եւ զրկել խոսելու ունակությունից. իբր, անձամբ ինքը ոչ մի բառ չի արտասանում, միայն բերանն է բացում-փակում, իսկ նրա փոխարեն խոսում է չիրմայի ետեւ թաքնված որովայնախոսը. պնդում էին, թե մեղքերին ի պատիժ, նրա ողջ մարմինը պատվել է ձկան թեփուկով, թե վատ եղեռակներին փոշտանկն այնպես է տանջում նրան եւ այնպես փքվում, որ նա ոռնում է հայհոյելով, իսկ որեւէ տեղ գնալիս, փքված այդ ձուն, իբր, հարկ է լինում հատուկ սայլակի մեջ դնել, այնպես որ՝ մահը յոթ սարի ետեւում չէ. պնդում էին, վերջապես, թե ոմն մեկը իր սեփական աչքերով տեսել էր պալատի եռնամուտքից դուրս բերված, ալ թավշապատ, ոսկյա սկզբնատառերով կնքված դագաղը, Անձրեւների այգում արյուն-արցունք թափող Լետիսիա Նասարենոյին: Սակայն ինչքան ճշմարտանման էին հնչում նրա մահվանը վերաբերող ամենաբազմազան լուրերը, այնքան մեծանում էր հիասթափությունը, երբ հանկարծ պարզվում էր, որ նա ողջ-առողջ է եւ նախկինից ավելի ամուր է ձեռքում սեղմել կառավարման սանձերը՝ կտրուկ փոփոխելով մեր ճակատագրերը իր ողջ կյանքի ընթացքում... Թվում էր՝ բարդ գործ չէր դիակը ճանաչելը: Չէ՞ որ միայն նա էր կրում պետական կնիքով մատանի, միայն նա ուներ անխոնջ ուսավորի վիթխարի ներբաններ, թեեւ տառապում էր հարթաթաթությամբ. իսկ գլխավորը՝ բոլորը գիտեին չափսերով աննախադեպ նրա փոշտանկի մասին, որին չգիտես ինչու, չէին դիպել անգղերը: Բայց մեր մեջ մարդիկ եղան, հիշեցին, որ մի անգամ արդեն նման մատանիով, վիթխարի ներբաններով ու հսկայական փոշտանկով հանգուցյալ տեսել է երկիրը, այդ իսկ պատճառով մենք վճռեցինք մանրազնին տնտղել

ողջ պալատը՝ վերջնականապես համոզվելու, որ կեղծ չէ մեր հայտնաբերած դիակը. սակայն պալատի զննումը ոչինչ չհատուցեց եւ ոչինչ չհերքեց: Բենդիսիոն Ալվարադոյի ննջասենյակում,- նրա մոր, որի մասին այդ օրերին մենք ոչինչ չգիտեինք, բացի մշուշապատ այն ավանդությունից, թե ինչպես է հատուկ հրովարտակով սրբերի շարքը դասվել,- ահա նրա ննջասենյակում մենք գտանք թռչունների քարացած կմախքներով ջարդոտված մի քանի վանդակներ, ծղոտահյուս, թրիքոտ բազկաթոռ, ջրաներկի պարկուճներ եւ նկարչական բազմաթիվ վրձիններ - այդ ներկերով ու վրձիններով Բենդիսիոն Ալվարադոյի ընկերուհիները, սարահարթցի այդ կանայք, սովորական թռչնակներին պիրոլ էին դարձնում եւ հարյուրավոր կեղծ պիրոլները վաճառվում էին թռչնաշուկայում: Բենդիսիոն Ալվարադոյի ննջասենյակում մենք տեսանք մեղվախոտի վիթխարի մի թումբ. առանց խնամքի մնացած մեղվախոտը ոչ միայն չէր չորացել, այլեւ հուտացել էր, նրա ճյուղերը մագլցել էին պատերն ի վեր, փաթաթվել կախված դիմանկարներին, ետեւի կողմից ծակել նկարներից մեկի կտավը եւ կանաչ շյուղերով աչքերը խրվել. մեղվախոտի ճյուղերը ձգվել էին դեպի լուսամուտ, դուրս ճողոպրել եւ միահյուսվել այգու փարթամ բուսականությանը. նա, ում մահվան փաստը կասկածելի էր, չէր կարող այստեղ թաքնված լինել՝ ոչ մի հետք չկար: Լեոնիսիա Նասարենոյի պատկերը մեր հիշողության մեջ բավականաչափ վառ էր մնացել ոչ միայն այն պատճառով, որ դեռ վերջերս էր թաղավորում, ո՛չ, պարզապես, չէր եղել հասարակական որեւէ միջոցառում առանց նրա աղմկալի մասնակցության. ահա, նրա ննջասենյակում մենք ամենից առաջ տեսանք սիրո շքեղ մահիճը՝ ժանյակավոր ամպհովանիով հսկայական մահճակալը, որի վրա կչկչում էին հավերը. մենք բաց արեցինք բոլոր անդուկները ու տեսանք դրանց մեջ միայն փոշի՝ ցեցն էր աղացել սեւադրոշ աղվեսենուց կարած օձիքները. տեսանք օղակապերով շրջազգեստի մետաղալարե կմախքը, փոշոտ անձրեւանոցները, բրյուսելյան ժանյակավոր կրծկալները, աղամարդու հողաթափեր, որ այստեղ սովորություն ունեին հագնել նաեւ կանայք, տեսանք ոսկեկար ալ կոշիկներ, որոնցով Լեոնիսիան ընդունելություններին էր ներկայանում. տեսանք նրբաթաղիքին մանուշակներ ասեղնագործված նրա երկա-

բավեշ շրջազգեստը եւ դիպակե սգո ծանր ժապավենները - երկրի առաջին տիկնոջ շքեղ հուղարկավորման պարագաներն էին դրանք. անդուկներից մեկում մենք գտանք սանուհու կոպիտ բրդյա շրջազգեստը, որը հագին էր Լետիսիան առեւանգվել Յամայկայից ու բերվել մեր երկիր բյուրեղյա սպասքի արկղի մեջ փակված,- ուղեւորության անհարմարությունը հատուցվեց հետագայում, երբ Լետիսիան շատ հարմարավետ տեղավորվեց փաստաբի պրեզիդենտուհու բազկաթոռում. սակայն նրա հետքերը, ում փնտրում էինք, Լետիսիայի ննջասենյակում նույնպես չկային՝ ոչ մի հետք. նույնիսկ Լետիսիայի առեւանգումը սիրո թելադրանքով բացատրելու հետքերը չկային, մենք չգտանք ոչինչ, որ վկայեր նրա սերը, կարծես թե ոտք էլ չէր դրել այս ննջասենյակի շեմից ներս: Նրա անձնական ննջասենյակում, ուր նա առանց դուրս գալու անց էր կացրել իր կյանքի գրեթե բոլոր վերջին տարիները, խնամքով հարդարված դինվորական մի մահճակալ կար, փոքրիկ մի սեղանակ,- նրանցից, որ ամեն հնոտի գնող ժամանակին կարող էր գտնել ծովային-հետեւակ գրենգոների տներում,- եւ կար մի անդուկ՝ ներսում իննսունվերկու շքանշան ու առանց տարբերանշանների դաշտային համազգեստ, ճիշտ այնպիսին, ինչպիսին հագել էր անգղերից բզկտված մեռելը, բայց անդուկի համազգեստը ծածկված էր խոշոր տրամաչափի վեց գնդակներով. եզրերը խանձված վեց խոշոր անցքեր էին բացված կրծքին, եւ մենք ստիպված էինք գրեթե հավատալ նրա անխոցելիության առասպելներին. ասում էին, թե հմայված է գնդակների դեմ, իբր, եթե մեկը զավականաբար կրակում է նրա թիկունքից, ապա գնդակը անցնում է մարմինը՝ առանց վնասելու, իսկ դեմ դիմաց թռչող գնդակները ետ են ցատկում ու զարկում կրակողին. ասում էին, թե նրան կարող է սպանել անսահմանորեն նվիրված, ուզածդ պահին նրա համար մեռնելու պատրաստ այն մարդը միայն, ով հարկադրված կլինի կրակել կարեկցանքի թելադրանքով - կարեկցանքի գնդակն է ի զորու միայն սպանել նրան: Մեր հայտնաբերած համազգեստները շատ փոքր էին նրա համեմատ, բայց մենք կասկած չունեինք, որ իրենն են, որովհետեւ մանկուց գիտեինք՝ նա չարունակում էր աճել մինչեւ հարյուր տարեկան հասակը, հարյուր հիսունում երբոյոյ անգամ նոր աստամներ դուրս եկան - նրա աստամները, իրոք,

սոսկալի էին, փոքր եւ բութ, ինչպես կաթնատամներ. մաշկը դեղնավուն էր, ամբողջովին պատված ծերունական պիգմենտային բծերով, ամենուր ծալքեր էին ու պարկեր, ասես մի ժամանակ շատ պկեր էր եղել, բայց, առհասարակ, միջահասակ, կանոնավոր մարդու մարմին էր,- անբնական ոչինչ չկար, բացի անհավատալի մեծության փոշտանկից եւ վիթխարի ու հարթ, գրեթե քառակուսի ներբաններից՝ արտակարգ ամրության, բազեի ճանկերի պես ոլորված եղունգներով. չափից ավելի խոշոր էին նաեւ դատարկ ակնախոռոչները, որոնց մեջ ժամանակին շարժվում էին անգղերի կոցած աչքերը. համենայն դեպս, հսկայի մարմնով նահապետ չէր, ինչպես նկարագրում էին նրան պատմաբանները. նա, իբր, չէր կարողանում դուրս գալ պալատից, որովհետեւ բոլոր դռներն էլ չափազանց ցածր էին ու նեղ, իբր, խենթանում էր երեխաների ու ծիծեռնակների սիրուց, հասկանում էր շատ կենդանիների լեզուն, կանխագուշակում բնության տարերային երեւույթները, մարդկանց աչքերում կարդում նրանց մտքերը, հասու էր բուժիչ աղի խորհուրդին. մի պտղունց աղն ապաքինում էր բորոտներին ու ոտքի հանում կաթվածահարներին - համազգեստից բացի բոլոր մնացած բաները, որոնց մասին խոսում էին պատմաբանները, չափազանց մեծ էին նրա վրայով: Իսկ ինչ վերաբերում է նրա ծագմանը, թեեւ ոչնչացվել էին տպագիր բոլոր հիշատակումները, մարդիկ համոզված էին, որ նա սարահարթից էր, վկա՝ իշխելու նրա անհագուրդ ծարավը, որ հատուկ է սարահարթում ծնվածներին. նույն բանն էին վկայում կառավարման նրա դաժան եղանակները, անփոփոխ մտայլությունը, այն չարախնդությունը, որով նա օտարերկրյա մի պետության վանահեց մեր ծովը եւ դատապարտեց մեզ ապրելու անծայրածիր ու ամայի, լուսնի մեռյալ ու կոշտ փոշով ծածկված այս տաղտկալի հովտում, որի արեւամուտները մարդու հոգու մեջ անբացատրելի ցավ են սրսկում: Ինչ վերաբերում է նրա անձնական կյանքին, ենթադրում են, որ անհամար սիրուհիներից, ավելի հիշտ, կենակցուհիներից,- որովհետեւ նրանց նկատմամբ սեր չէր տածում,- նա ունեցավ հինգ հազարից ավելի երեխաներ, բոլորն էլ, առանց բացառության օրապակասներ: Երեխաներից ոչ մեկը չկոչվեց նրա անունով ու չժառանգեց հոր ազգանունը, բացի Լեոնիսիա Նատարենոյի ծնածից - այդ տղան հազիվ էր լույս աշխարհ

եկել, երբ գեներալի կոչում ստացավ եւ անդրանիկության իրավունքով նշանակվեց օկրուգի դիվիզիայի հրամանատար, քանզի Լեռնիսիայի.որդին էր: Մնացած երեխաների համար Հայրն այսպես էր մտածում. մարդուս հերիք է եւ մայրը. նա իրեն էլ նկատի ուներ, քանի որ շատ ու շատ ականավոր բռնակալների նման երբեք չէր տեսել հորը, գիտեր միայն ծնող մորը՝ Բենդիսիոն Ալվարադոյին: Բոլոր դասագրքերում գրված էր, որ Բենդիսիոն Ալվարադոն կույս Մարիամի պես հղիացել էր հրաշագործությամբ, որ երբ մանուկն արդեն արգանդում էր, երկնային ուժերը կանխորոշել էին նրա առաքելական կոչումը: Իշխանության գագաթին հասնելով, նա հատուկ հրովարտակով Բենդիսիոն Ալվարադոյին հռչակեց Հայրենիքի մեծ մայր, քանզի նա միակն էր ողջ աշխարհում, քանզի, գրողը տանի, նա իր մայրն էր:

Անորոշ ծագումով, ցնցող միամտությամբ տարօրինակ կին էր նա, բնավորության ապշեցուցիչ պարզությամբ, որի համար, առանձնապես վարչակարգի առաջին տարիներին, նրան ատում էին պալատական արքունարգի սիրահարները. նրանք պարզապես չէին հաշտվում այն իրողության հետ, որ պետության գլխի մայրը կրծքից կախ խնկանոթ էր պահում՝ քափուրի տերեւներով, որպեսզի պաշտպանվեր ամեն տեսակի վարակներից, խավիար էր ուտում պատառաքաղով՝ ճգնելով որսալ առանձին-առանձին հատիկները, այնպես էր թփթփացնում ոտքերը, ասես ոչ թե լաքած կոշիկներ էր հագին, այլ երկաթե կապանքներ: Նրանք գլուխները կորցրեցին, երբ երաժշտության համար նախատեսված պատշգամբում նա մեղվափեթակներ շարեց, պետական հիմնարկությունների ներսում սկսեց հավեր պահել. նրանք վրդովվում էին, երբ նա ջրաներկերով ներկում էր գորշ թռչնակները եւ որպես պիրոլ վաճառում շուկայում, երբ լվացքը չորացնում էր պրեզիդենտական պատշգամբում, որտեղից պատմական ճառեր էին արտասանվում. նրանց համբերությունը, ի վերջո, սպառվեց դիվանագիտական այն ընդունելության ժամանակ, երբ նա բողոքեց, թե հոգնել է ատծուն խնդրելուց, որ ազատի որդուն պրեզիդենտությունից, որովհետեւ պրեզիդենտական պալատում ապրելը պարզապես անտանելի է. «Կարծես օր ու գիշեր լուսարձակների շողերի տակ լինես, սենյոր»: Այս նախադասությունը արտասանեց ճիշտ այն

նույն անմիջականությամբ, ինչով ազգային տոնի օրը, դատարկ շշերով լի զամբյուղը ձեռքին անցավ պատվո շարասյան միջով դեպի պրեզիդենտական լիմուզինը. ծափահարություններ էին թնդում, հանդիսավոր երաժշտություն էր հնչում, ծաղիկների ծով էր չորս դին. պրեզիդենտական լիմուզինը ահա-ահա պետք է բաց աներ շքերթը, իսկ Բենդիսիոն Ալվարադոն մեքենայի լուսամուտին դեմ արեց շշերով լեցուն զամբյուղը եւ բղավեց. «Երեւում է խանութի կողմն ես գնում, ձեռքիդ հետ հանձնիր այս շշերը, որդիս»: Խեղճ մայր... նրա մեջ չկար պատմական պահը գիտակցելու մի նշույլ, քաղաքական հոտառության մի փչուր, ինչը առանձնապես բացահայտվեց ծովակալ Հիգգենսի հրամանատարությամբ ամերիկյան ծովային հետեւակի ափելման պատվին կազմակերպված խնջույքում. որդուն առաջին անգամ տեսնելով շքերթային համազգեստով, ոսկյա շքանշաններով, մետաքսյա ձեռնոցներով (այդ պահից մինչեւ կյանքի վերջը նա այլեւս չհանեց դրանք), Բենդիսիոն Ալվարադոն չկարողացավ զսպել իրեն համակած մայրական հպարտության զգացումը եւ դիվանագիտական ողջ ծառայության ներկայությամբ բացականչեց. «Եթե իմանայի, որ որդիս հանրապետության նախագահ կդառնա, ես նրան կրթության կտայի, սենյորներ»: Սարսափելի պահ էր, նա խայտառակեց պրեզիդենտին եւ վռնդվեց պալատից, տեղավորվեց տասնմեկ սենյականոց մի մենատանը, որ զառով որդին էր շահել նշանակալից այն գիշերը, երբ Ֆեդերացիայի կողմնակիցների հաղթական առաջնորդները խաղասեղանի շուրջ խաղարկում էին հակառակորդների՝ ճողոպրած պահպանողականների պերճաշուք տները: Բայց Բենդիսիոն Ալվարադոյին դուր չէր գալիս մենատան՝ կայսերական ժամանակների ծեփակերտությունը. «Այդ ծեփի պատճառով ինձ թվում է, թե ես Հռոմի պապի կինն եմ, սենյոր», եւ նա սկսեց ապրել ծառայողների եւ ոչ թե տերունական սենյակներում, վեց հավատարիմ, ոտաբոբիկ սպասուհիների շրջապատում, ազատ ժամանակի մեծ մասն անցկացնելով ամենախորքի զովաշունչ սենյակում, ուր տարել էր կարի մեքենան ու թռչնավանդակները. շոգը երբեք չէր թափանցում կիսախավար, խորդանոցի նման այդ սենյակը, այստեղ համեմատաբար տանելի էին իրիկնային մժղուկները, եւ Բենդիսիոն Ալվարադոն կարող էր հանգիստ խղճով զբաղվել իր կարու-

ձեւով, ետնարակից լուսամուտին ընկնող ոչ պայծառ լույսի տակ ներկել գորշ թռչնակները, որոնցից յուրաքանչյուրը պիրոլի էր վերածվելու, շնչել տամարինդների առողջ օդը եւ մինչ հավերը կշրջեին սրահներում, իսկ պալատական պահակախմբի զինվորները դատարկ սենյակներում կդարանակալեին սպասուհիներին, հասցնում էր նաեւ բողոքել. «Ծանր է խեղճ որդուս կյանքը. ծովային հետեւակը պահում է նրան պալատում: Մայրը կողքին չէ, հոգատար կին չունի: Ո՞վ է սփոփելու նրան գիշերվա կեսին, երբ արթնանա ցավից, երեք հարյուր խղճուկ պեսսո աշխատավարձով պրեզիդենտական աշխատանքի հոգնությունից: Խեղճ տղաս»: Նա գիտեր, թե ինչ է ասում, չէ՞ որ ամեն օր որդին այցելում էր մորը, ճիշտ այն ժամերին, երբ քաղաքը խեղդվում էր սիեստայի հեղձուկ ճահճում. նա մոր համար բերում էր շաքարամիրգ եւ բաց էր անում սիրտը, պատմում ծովային հետեւակի դրածոյի, այսինքն՝ իր, աննախանձելի վիճակից. նա բողոքում էր, որ ստիպված է լինում փաստորեն զողանալ բերած շաքարամիրգը, իբր պատահաբար, անձեռոցիկ է գցում վրան, որովհետեւ անիծյալ այդ գրինգոները ծախսերի իրենց մատյաններում հաշվառում են նույնիսկ կերակրի մնացորդները. իսկ վերջերս,- դառը բողոքեց նա,- զրահանավի հրամանատարը պալատ բերեց մի խումբ ասպազգեստների, թե՞ քարտեզագիրների, եւ սրանք չբարեհաճեցին էլ բարեւել, լուսյայն չափչփեցին սենյակը՝ իր գլխի վրայով ճգելով չափերիզի ժապավենը, անգերենով ինչ-ինչ հաշվումներ արեցին, եւ թարգմանչի միջոցով բղավեցին վրան. «Մի կողմ քաշվիր: Ի՞նչ ես լույսի դեմը փակում: Այստե՛ղ կանգնիր: Մի՛ խանգարիր»: Եվ նա մի կողմ քաշվեց, կծկվեց, հեռացավ, որպեսզի չխանգարի, լույսի դեմը չփակի, ոտքի տակ չընկնի, իսկ նրանք չափելով ամեն ինչ ու ամեն բան, նույնիսկ յուրաքանչյուր պատշգամբի լուսավորվածությունը, շարունակում էին վռնդել նրան տեղից տեղ, այնպես որ՝ նա չգիտեր, թե գլուխն առած ուր փախչի սեփական պալատում. «Բայց սա դեռ ամենասարսափելին չէր, մայր»: Պարզվեց, որ նրանք փողոց էին շպրտել նրա վերջին երկու սիրուհուն, պատճառաբանելով, թե գրինգո-ծովակալի կարծիքով պրեզիդենտին անարժան են ռոխիստավոր այդ աղջիկները: Եվ հիմա կնոջ այնպիսի կարոտ էր ապրում, որ մորից ծածուկ, իբր հեռանալով նրա տնից,

աննկատելիորեն դատարկ սենյակներն էր մտնում եւ հետապնդում սպասուհիներից որեւէ մեկին, եւ այդժամ Բենդիսիոն Ալվարադոն, կարեկցելով որդուն, զիտավորյալ բզրզում էր թռչուններին, որպեսզի սրանք թափահարեին թեւերը, կչկչային, ծղրտային, ճչային կոկորդներով մեկ եւ ստեղծված աղմուկը խլացներ կիսախավար սենյակներից եկող ամոթալի քաշքշուկի ձայնը, որ հարեւանները չլսեին, թե որդին ինչպես է փորձում կոտրել սպասուհու համառությունը, եւ թե ինչպես է խեղդված ձայնով սպասուհին սպառնում որդուն. «Թողեք ինձ, թե չէ կգանգատվեմ ձեր մորը»: Իսկ մայրն այդ ժամանակ չէր խնայում թեւավոր իր ժողովրդին, զրկում էր նրանց սիեստայից, բզում հա բզում էր խեղճերին՝ որ չլռեին, որ ոչ ոք չլսեր շիկացած շնչառությունը այդ շտապող, թույլ սիրեկանի, որը նույնիսկ չէր մերկացնում կնոջը եւ ինքն էլ չէր հանվում, տիրում էր հապշտապ, շան լակոտի նման վնգստալով, տիրում էր՝ չզգալով պատասխան կիրքը, եւ մենության դառը, ժլատ արցունքները գլորվում էին նրա այտերի վրայով, իսկ քաշքշուկից տապնապած հավերը կչկչոցով փախչում էին տարբեր կողմեր, կրկին քաշվում պաղ անկյուններ, իսկ շոգն այնպիսին էր, որ օդը ասես հալված սպակի լիներ. «Խեղճ տղաս, անաստված այս օգոստոսյան շոգին, կեսօրվա ժամը երեքին, ախր, ի՞նչ սեր»: Նա ազքատ էր եւ նույնիսկ ինքն իրեն չէր պատկանում, քանի դեռ օտարերկրյա դեսանտը չէր լքել երկիրը, իսկ լքեց պայմանագրային ժամկետը լրանալուց էլ առաջ, որովհետեւ երկրում ժանտախտ բռնկվեց: Ժանտախտից սարսափած դեսանտայինները տախտակ առ տախտակ քանդեցին եւ բեռնարկղերի մեջ դասավորեցին իրենց սպայական կոտեջները, գետնից պոկեցին երկնագույն, արհեստական լճակները եւ ոլորեցին որպես գորգ, ծալծլեցին մոմլաթե ցիստեռնները, որոնց մեջ հայրենիքից ստացվող թորած ջուր էին պահում, որպեսզի ստիպված չլինեին օգտագործել մեր գետերի նեխած ջուրը, քարուքանդ արեցին իրենց հոսպիտալների ճերմակ շինությունները, պայթեցրին զորանոցները, որպեսզի ոչ ոք չիմանար դրանց կատուցվածքի գաղտնիքները. անվնաս մնաց միայն հին զրահանավ, որի տախտակամածին, հունիսյան գիշերներին, հայտնվում էր ծովակալի զարհուրելի ուրվականը. նավամատույցում միայն այդ զրահանավը մնաց ծովային հետեւակից

հետո, մնացած ամեն ինչը նրանք տարան իրենց օդային գնացքներով: Տարան դրախտային բոլոր շրջիկ հարմարություններն ու հարմարանքները, որ նախատեսված էին մանր պատերազմների համար, բայց տանելուց առաջ նրանք պետության ղեկավարին, նման դեպքերին պատշաճ կարգով, պատիվ տվեցին, ի նշան բարիդրացիական հարաբերությունների պարգևատրվեցին մեդալով, հետո բղավեցին այնպես, որ ողջ աշխարհը լսի. «Վերջ: Մնա մենակ այս կեղտոտ բողանոցում: Տեսնենք առանց մեզ ո՞նց ես դուխ հանելու»: Եվ գնացին: «Դնացին, մայր, սատանայի մոր ծոցը գնացին, ետ դարձան ձեռնունայն, ես դրանց մերը...»: Եվ առաջին անգամ սանդուղքով նա վեր ելավ որպես տեր եւ ոչ թե լծված եզ, աջ ու ձախ նետելով իր եւ ոչ թե այլոց հրամանները՝ բարձրաձայն, անաքող, անձամբ բավարարելով ամենատարբեր ցանկություններ, խնդրանքներ: «Նորից թույլատրել աքլորակռվը: Թույլատրում եմ: Ասում եք կարելի է նորից օդապարիկնե՞ր բաց թողնել: Կարելի՛ է»: Նա հասարակ մարդկանց վերադարձրեց զավթիչների արգելած բոլոր գվարճությունները, ասես արգելքները վերացնելով իր իշխանության հզորությունն էր հաստատում, իսկ երբ համոզվեց, որ ոչ ոք իրեն չի հակառակվում, որ իշխանությունն այժմ, իրոք, իրեն է պատկանում, նա փոխեց ազգային դրոշի գունաշերտերի հաջորդականությունը՝ վերին շերտը ներքեւ տարավ, ներքեւինը՝ վերեւ, պետական զինանշանից հանեց փյունիկյան թասակը եւ հրահանգեց փոխարենը տապալված դեւի պատկերը դրոշմել. «Որովհետեւ մենք, վերջապես, առանց վզակապի ենք, մայր: Կեցցե ժանտախտը»: Բենդիսիոն Ալվարադոն երբեք չէր մոռանում, թե ինչպես էին ապրում մինչեւ օտարերկրյա դեսանտի մեկնումը, հիշում էր ամոթալի կախվածությունն ու խեղճությունը, նույնիսկ աղքատությունը, որի մեջ ընկնում էին ժամանակ առ ժամանակ, բայց առանձնահատուկ դառնությամբ եւ տխրությամբ նա զանգատվեց իրենց անապահով վիճակից այն օրերին, երբ որդին հարություն առավ մեռյալներից, երբ Պատրիսիո Արագոնեսի մահով իր սեփական հուղարկավորության խեղկատակությունը խաղաց, հետո ճնշելով խաղի հրահրած խռովությունը, ընկղմվեց բարեկեցության ճահիճը. հենց այդ օրերին, սկզբում ոչինչ չնկատելով, Բենդիսիոն Ալվարադոն զանգատվում

էր բոլոր նրանց, ովքեր համբերություն ունեին լսելու, որ ինքը թեեւ պրեզիդենտի մայր է համարվում, սակայն չունի ոչինչ, բացի խղճուկ մի կարի մեքենայից եւ որ որդին էլ, իրականում ոչինչ չունի. «Դուք տեսնում եք նրան կառք նստած, սենյոր, եւ ջահակիրներ են ուղեկցում նրան, բայց իմ խեղճ զավակը նույնիսկ իր տեղը չունի գերեզմանատանը, նույնիսկ գերեզմանոցային մի թիզ հող չի ձեռք բերել, որպեսզի կարողանա հանգիստ շունչը փչել: Մի՞թե սա արդար բան է, սենյոր, այն էլ այսքան տարվա անբասիր ծառայությունից հետո»: Բայց շուտով նա դադարեց խոսել որդու դժբախտություններից, որովհետեւ պրեզիդենտն այլեւս չէր բացում սիրտը, առաջվա պես վազ չէր տալիս մոր մոտ՝ պատմելու իշխանության գաղտնիքներն ու նենգությունները, դեսանտայիններ ի ժամանակների համեմատությամբ նա այնպես էր փոխվել, որ թվում էր, թե մորից էլ տարիքով է, կարծես հրաշքով ժամանակի մեջ նա հասել-անցել էր մորը. մայրը նկատել էր, որ որդու խոսքը հանկարծ դառնում է անհասկանալի, անկապ, բառերը սայթաքում են, մտքերը փախչում, ինչպես շաղ եկող ուլունք, երբեմն էլ շողիք է բաց թողնում, եւ այդժամ Բենդիսիոն Ալվարադոյին համակում էր անսահման խղճահարություն. բայց դա ոչ թե մոր, այլ դառեր խղճահարություն էր՝ զառամած հոր նկատմամբ: Այդ զգացումը նա առանձնապես սուր ապրեց այն օրը, երբ որդին իր մոտ եկավ փոթեթավորված-տուփավորված գնումների ահագին կույտով եւ փորձում էր արձակել դրանց կապերը մեկեն, անհամբերությունից թելը կտրատում էր սուսումներով, չսպասելով մոր փնտրած մկրատին. կոտրեց եղունգները, երկու ձեռքով ամեն ինչ թափեց սեղանին ու շնչակտուր, անհասկանալի հանդիսավորությամբ, բառերից խեղդվելով, ասաց. «Տես, թե ինչեր եմ բերել, մայր: Ահա կենդանի ծովահարս՝ ակվարիումի մեջ, ահա բնական չափսերով լարոլի հրեշտակ. նա կարող է թռչել սենյակում եւ զանգակ զնգացնել. սա օվկիանոսային խեցի է, տեսնո՞ւմ ես ինչ խոշորն է, բայց եթե ականջիդ մոտ պահես, մեր ազգային հիմնը կլսես եւ ոչ թե օվկիանոսի աղմուկը, ինչպես երգում են սովորական բոլոր խեցիները: Հրաշք են, չէ՞, մայր, ի՞նչ լավ բան է հարուստ լինելը»: Սակայն մայրն անհաղորդ մնաց որդու հրճվանքին եւ լռելյայն կրծում էր իր վրձինների կոթերը, եւ նրա սիրտը պայթում էր

խղճահարությունից, անցյալի հիշողություններից. անցյալը նա հիշում էր եւ գիտեր բոլորից լավ. բոլորից լավ նա գիտեր ու հիշում էր, թե որքան էր վճարում որդին՝ պրեզիդենտական աթոռը պահելու համար. «Հիմա ուրիշ ժամանակներ են, սենյոր, իշխանությունը հիմա ըմբռնելի է, տեսանելի, աչքիդ առաջ, ապակյա գնդիկ է՝ ձեռքիդ մեջ, ինչպես սիրում է ասել որդիս. այն օրերին իշխանությունը սպրդում էր ձեռքիդդ սաբայո ձկան պես, եւ նա, որ օծված չէր աստծուց եւ ոչ էլ ընտրյալն էր օրինականության, պատից պատ էր զարկվում՝ այն օրերին իսկական խենթանոց դառած այս պալատում»: Այդ խենթանոցում նրան հետապնդում էր հանուն ֆեդերացիայի կռվում առաջ քաշվածների անկշտում երամը. նրանց օգնությամբ էր տապալվել գեներալ եւ բանաստեղծ Լաուտարո Մունյոսի նման ուժեղ բռնակալը, եւ թող չպակասի նրանից տիրոջ ողորմածությունը եւ լատինական պատարագամատույցը՝ ազնվացեղ, քառասուներկու նժույգներով, սակայն որպես փոխհատուցում իրենց ծառայության, նախկին զինակիցները պահանջում էին երկրից արտաքսված ֆեդալների կալվածքներն ու անասունները, երկիրը բաժանում էին ինքնավար դավառների եւ մի-մի գավառ զավթած հայտարարում, թե հենց սա է ֆեդերացիան, որի համար արյուն էին թափել. «Մեր երակներից, իմ գեներալ»: Նրանք իրենց գավառներում դարձան բացարձակ միապետներ, սեփական օրենքներ էին հռչակում, իրենց ծննդյան օրերը հայտարարում էին ազգային տոն, անձնական ստորագրություններով դրամ էին կտրում, պճնվում արծաթակար եւ ոսկեհյուս շքազգեստներով, ադամանդներով զրվագազարդում ոսկյա պատյաններն ու թրերի կոթերը, հագնում սիրամարգի փետրափնջով եռանկյուն գլխարկներ. հասկանալի է, որ ողջ այս հագուստ-կապուստը նրանք պատճենահանել էին փոխարքայական ժամանակների հինավուրց վիմանկարներից: Նրանք բռի էին, սենյոր, բռի ու անտաշ, պալատ էին խուժում առանց որեւէ հրավերի, բայց եւ սեփական արժանապատվության բարձր գիտակցումով. «Պետությունը մենք ենք, իմ գեներալ, երկիրը մեզ է պատկանում, բոլորիս. ե՛ւ երկիրը, ե՛ւ այս պալատը. հանուն դրանց ենք մենք մեզ մահու տվել. մի՞թե այդպես չէ»,- նրանք մենակ չէին պալատ խուժում, գալիս էին իրենց քածերով, մի ամբողջ հարեմ քածերով,

հետները հավուճիվ էին բերում փորները լցնելու,- հավուճիվը խլում էին հասարակ ժողովրդից՝ որպես խաղաղության տուրք, յուրաքանչյուրին անձնական պահակախումբ էր ուղեկցում,- վարձու բարբարոսներ էին, իսկական վայրենիներ, որ քայլում էին առանց կոշիկների, միայն գարշահոտ փսթաթաններով, գրեթե չգիտեին քրիստոնեական լեզուն, բայց ծանոթ էին զառ, խաղաթուղթ եւ այլ խաղերի բոլոր խորամանկություններին, հրաշալիորեն տիրապետում էին զենքի բոլոր տեսակներին. անկոչ ու անկիրթ հյուրերի մշտական արշավանքներից պրեզիդենտական պալատը նմանվել էր գնչուների վաչկատան, սենյոր. անտանելի գարշահոտ էր ընկել պալատը, կարծես գետերը վարարման ժամանակ այստեղ էին ափ հանել իրենց ողջ աղտեղությունը. զլխավոր շտաբի սպաներն իրենց տուն էին քարշ տալիս պալատական կահույքը, բայց չէ՞ որ կահույքը հանրապետության սեփականությունն էր, սենյոր. նրանք դոմինոյով խաղարկեցին պետական նպաստները: Խաղում էին օր ու գիշեր, ուշադրություն չդարձնելով Բենդիսիոն Ալվարադոյի բողոքներին. խեղճ կինը դժվարությամբ էր ոտքի վրա մնում, այնքան էր հոգ տանում, որ այդ անասնոցում փոքրինչ կարգուկանոն հաստատի, փոքր-ինչ կարգի բերի. մարդի կեղտ ու աղբի կույտերից. նա միակն էր, որ տեսնում էր, թե ինչպես է այլասերվում, համընդհանուր նողկալիության վերածվում ֆեդերալիստների լիբերական շարժումը, ինչպես է քայքայվում ամենայն բան. նրան չհաջողվեց կեղտոտ ցախավելով դուրս վռնդել բոլոր այդ տականքներին, երբ տեսավ դրանց անբանությունը, տեսավ, թե ինչպես են խաղաթղթով խաղարկվում պետական բարձր պաշտոնները, ինչպես են տրվում զեխությանը. նրանք պոռնիկներին պառկեցնում էին դաշնամուրի ստեղնաշարի վրա, բնական պետքերը հոգում ալաբաստրե սափորների մեջ, թեեւ ինքը կգուշացրել էր. «Չէ, սենյոր, սա զուգարանի փոքրիկ կոնք չէ, գիշերանոթ չէ, սա սափոր է, որ դուրս են բերել ծովի հատակից»: Ի պատասխան՝ նրանք քրքջում էին եւ շարունակում պղծել թանկարժեք սափորները. «Տապալված հարուստների ջիգրու, սենյորա: Թող չմոգոնեն զիզի-բիզի սափորներ»: Եվ ոչ ոք չէր կարող խանգարել նրանց, ինչպես ոչ մեկը, նույնիսկ, տեր աստված չկարողացավ խանգարել գեներալ Ադրիանո Հուսմանին հարբել պրե-

գիդենտական պաշտոնին անցնելու տասնամյակի առթիվ կազմակերպված կառավարական ինջուլքում: «Ո՞ւմ մոքով կանցներ, որ այդպիսի հիմարություն կանի: Նա հայտնվեց պատշաճ տեսքով՝ վուշե գործվածքի թեթեւ, ձյունաթույր համազգեստով, առանց գենքի, ինչպես խոստացել էր ինձ նախօրյակին, սպայի ազնիվ խոսքով, որ գենքը կթողնի տանը: Նրան ուղեկցում էին քաղաքացիական շորերով թիկնապահները եւ օտարերկրյա լեգեոնից իր կողմն անցած ֆրանսիացիներ. բոլորն էլ ծանրաբեռնված էին նվերներով, որ գնեցրալը բերել էր տվել Կայենից եւ նախատեսել դեսպանների ու նախարարների կանանց համար. նվերները հանձնում էր ինքը՝ Հուսմանը, ոտքերն իրար զարկելով նախ ձիգ կանգնում յուրաքանչյուր տիկնոջ ամուսնու դիմաց՝ թույլատրություն խնդրելու. այս նրբակրթությանը նրան ծանոթացրել էին ֆրանսիացիները, ահա այսպես էր, իբր, ընդունված ֆրանսիական արքունիքում. ընծաները տիկնանց հանձնելով, Ադրիանո Հուսմանը նստեց դահլիճի անկյունում, մի փոքրիկ սեղանի մոտ եւ սկսեց հիանալ պարերով, զոհունակությամբ շարժելով գլուխը եւ քթի տակ խոստովանելով, որ իրեն դուր է գալիս, շատ է դուր գալիս եվրոպական այդ պճնամոլների պարը. թվում էր, թե ինքն իր համար խաղալ նստած էր բազկաթոռին, մոռացված բոլորից, բայց ես տեսնում էի, որ թիկնապահներից մեկը հեղում է նրան շամպայնով, լցնում հա լցնում էր նրա գավաթը. ի վերջո այնպես լցվեց փրփրուն այդ խմիչքով, որ դարձավ ալ կարմիր ու քրանեց. ձյունաթույր բաճկոնակի կոճակներն իրար եռեւից արձակելով, նա սկսեց գկոտալ ու բխկալ, բխկալ ու գկոտալ, մինչեւ բոլորովին շիլվեց, մայր, եւ հանկարծ, երբ պարը մի պահ դադարեց, ելավ իր տեղից, քանդեց շալվարի կոճակները եւ սկսեց ջրջնքել շուրջբոլորը իր խողովակից՝ ամեն ինչ ու ամենքին, մայր. նա միզում էր տիկնանց մուալինե նուրբ փեշերին,- ջայլամի փետուրներով նրանց հովհարներին, կոշիկներին: Իհարկե, աներեւակայելի իրարանցում սկսվեց, աներեւակայելի խայտառակություն, իսկ այդ Հուսմանը շարունակում էր միզել, հետն էլ երգում էր. «Դու ինձ մերժեցիր, բայց ես ջրում եմ քո այգու վարդերը: Օ՜, հրաշալի վարդեր»: Եվ ոչ ոք չհամարձակվեց հասցնել դրա վզակոթին, ոչ ոք, նույնիսկ ես, որովհետեւ գիտեի. թեեւ իմ իշխանությունն ավելի հզոր է,

քան զինակից գեներալներից յուրաքանչյուրինը առանձին-առանձին, սակայն ոչ այնքան, որ կարողանամ դիմադրել նրանցից թեկուզեւ երկուսի դավադրությանը»: Այդպես էր, բայց ոչ մեկը դեռ իրեն հաշիվ չէր տալիս, որ պրեզիդենտը, քարի ամրությամբ այդ մարդը, մինչեւ ուղնուծուծը ճանաչում էր բոլորին, գիտեր, թե ով ինչով է շնչում, այնինչ սեփական մտքերն ու մտահղացումները պահում էր ծածուկ. ոչ ոք, ոչ ոք չէր կարող գուշակել, թե ինչի է ընդունակ նա, ոչ ոք չգիտեր, որ նրա անվրդովությունն ու խաղաղությունը նիրհում էին սթափ ու դաժան հաշվենկատության, սպասելու մեծ կարողության, ամեն ինչ կործանելու ճիշտ պահն ընտրելու մեծ համբերության վրա: Ահա թե ինչու նրա աչքերն անսահման թախծոտ էին, շրթներն անարյուն, իսկ կանացի ձեռքը նույնիսկ չդողաց թրի կոթը բռնելիս, երբ սոսկալի այն կեսօրին զեկուցեցին նրան, թե մարդկային կերպարանքը կորցնելու աստիճան անիսոնի օդիով հարբած բանակի հրամանատար Նարսիսո Լոպեսը արտաքնոցում, ամենավերջին պոռնիկի նման, հարկադրել է դրագունական սպային իր հետ անբնական հարաբերության մեջ մտնել, եւ հետո, ուշքի գալով, նվաստացումից ու չարությունից տատապելով, բռնել է գեղեցկադեմ սպային, քարշ տվել նիստերի դահլիճ եւ հեծելազորային նիզակով, որպես մի թիթեռ, մեխել նրան գարնանային բնանկար պատկերող դոբելենով պատին. դժբախտ դրագունը պատին մեխված մնացել էր երեք օր եւ ոչ մեկը չէր համարձակվել դուրս տանել նրա դիակը. այս դիպվածն այնքան էլ չէր անհանգստացրել պրեզիդենտին, նա հետեւում էր միայն, որ զինակիցներն իր դեմ դավադրություն չկազմակերպեն, իսկ նրանց արարքներին ուշադրություն չէր դարձնում - ի վերջո այդ արարքները նպաստեցին համընդհանուր այն համոզվածությանը, որ վաղ թե ուշ նախկին զինակիցները կկոտորեն մեկ-մեկու: Եվ, իրոք, մի գեղեցիկ օր նրան զեկուցեցին, որ գեներալ Խեսուքրիստո Սանչեսին ստիպված են եղել սպանել աթոռի հարվածներով, որովհետեւ կատվի ճանկոտոցից Սանչեսը կատաղության նոպա է ունեցել: Այդ լուրին բառացիորեն մյուսը հաջորդեց. գեներալ Լոտարիո Սերենոն խեղդվեց ձիով գետն անցնելիս. անհասկանալի բան էր պատահել ձիուն՝ ծնկել էր հանկարծ խեղճը ու սուզվել հատակը, ափսո՜ս: Որոշ ժամանակ անց նոր իրադարձու-

թյուն. «Գեներալ Նարսիսո Լոպեսը, այլեւս չդիմանալով խայտառակ իր արատի ամոթին՝ արվամոլությանը, ուժանակ է խցկել իր քամակը եւ փրթիկ-փրթիկ արել իրեն»: Ահա, այս կերպ, մեկը մյուսի ետեւից հեռանում էին նրանք, իսկ նա տխրությամբ ասում էր յուրաքանչյուրի հասցեին՝ «Խեղճ», եւ մի՞թե հնարավոր էր ենթադրել, որ նա որեւէ չափով մասնակցություն է ունեցել անփառունակ ու հանկարծահաս այդ մահերին: Յուրաքանչյուր անգամ պաշտոնապես հաղորդվում էր, որ սա կամ նա զոհվել է ծառայողական պարտականությունները կատարելիս, բոլորին էլ կառավարական եւ զինվորական պատիվներով թաղեցին ազգային հերոսների պանթեոնում. «Երկիրն առանց հերոսների նույնն է, ինչ տունը առանց դռների, սենյոր»: Եվ, ահա, երբ ողջ երկրում մնացին ընդամենը վեց գեներալ, որոնք անցել էին պատերազմական տարիների բոլոր փորձությունները, նա հրավիրեց նրանց իր ծննդյան տոնակատարությանը, բարեկամական խնջույքի՝ առանց բացառության բոլորին, սենյոր, ներառյալ գեներալ Խասինտո Ազգարաբիին՝ ամենանենգ ու սարսափելի նախկին զինակցին, որը վառոդով խառնված սպիրտ էր խմում եւ երեխա էր ունեցել սեփական մորից: «Մենք մենակ կլինենք,- ասաց նա նրանց,- մեզանից՝ մարտական ընկերներից բացի ոչ ոք չի լինի: Հին օրերի պես կհավաքվենք միասին, առանց զենքի, իհարկե: Բոլորս միասին, կաթնեղբայրների պես»: Եվ բոլորը ժամանեցին, սենյոր, բոլորը հայտնվեցին խնջույքի դահլիճ, առանց զենքի, ինչպես պայմանավորվել էին, բայց իրենց թիկնապահներով, որոնք աչալուրջ սպասում էին կից սենյակներում: Հյուրերը դատարկ ձեռքով չէին եկել, հրաշալի նվերներ էին բերել. «Մեզանից եզակիին, որը կարողացավ միավորել բոլորիս»: Նրա կանչին արձագանքել էր նույնիսկ գեներալ Սատուրնո Սանթոսը, դուրս էր եկել սարահարթի իր որջից, առասպելական Սատուրնո Սանթոսը, ոչ մեկին չվստահող, կասկածամիտ, զտարյուն հնդկացին, պոռնիկի զավակը, որը մշտապես շրջում էր ոտաբոբիկ, որովհետեւ, ինչպես ինքն էր ասում՝ իսկական տղամարդը չի կարող շնչել, եթե ոտքի տակ չզգա հողի տրոփյունը: Նա խնջույքին էլ ոտաբոբիկ էր եկել, վրան գցել երեւակայական կենդանիների պատկերներով պոչո, եկել էր ինչպես միշտ մենակ, առանց թիկնապահների, մաչետեով, որ հրա-

ժարվեց հանձնել, քանի որ դա զենք չէր, այլ աշխատանքային գործիք, սաֆրանների գործիք: «Եվ նա նվիրեց ինձ մարտական մի քարարծիվ, մայր, տղամարդկային ազնիվ մենամարտի համար եւ հետը բերել էր տավիղ, մայր, սուրբ մի տավիղ, որի հնչյունները փոթորիկ էին հանդարտեցնում եւ նպաստում բերքատվության բարձրացմանը. նա նվագեց տավիղը, նվագի մեջ հալելով սիրտը, արվեստը, եւ մեր մեջ արթնացրեց պատերազմական տարիների կարոտը, սոսկալի առաջին օրերի հիշողությունները եւ այդ հիշողությունները նման էին շնային եռուբորին. մենք նույնիսկ զգում էինք պատերազմի հոտերը, նա տակնուվրա արեց մեր հոգիները հեռուները տանող մարտական ոսկե նավակի մասին երգով եւ մենք ձայնակցեցինք խմբովին, երգեցինք սրտանց. «Կամուրջից ես ետ դարձա արտասվելով...»: Նրանք երգում էին, խմում, ուտում, մինչեւ խժռեցին փորը սալոր լցված մի ամբողջ հնդուհավ եւ տապակած վարազի կեսը. ամեն մեկն իր խմիչքն էր խմում, իր անձնական տափաշշից, իսկ գեներալ Սատուրնո Սանթոսը եւ պրեզիդենտը ոչինչ չխմեցին եւ համարյա ոչինչ չկերան, որովհետեւ երկուսն էլ խմող չէին եւ իրենց կյանքում չէին կերել ավելին, քան պետք էր քաղցած չլինելու համար. մարտական երգերից հետո գեներալներն իրենց ընկերոջ պատվին երգեցին Դավիթ Թագավորի առավոտյան սաղմոսները, բոլոր այն մաղթանքի երգերը, որ տարածված էին երկրում, քանի դեռ դեսպան Հանեմանը պրեզիդենտին չէր բերել իր հրաշալի նվերը. ձայնասկավառակ էր, որի վրա մեկընդմիշտ գրանցվել էր «Ծննդյան տոնդ շնորհավոր» երգը. նրանք բղավում ու բղավում էին իրենց երգերը, ավելի ու ավելի հարբում, լպստում մարտական ընկերոջը՝ թախծոտ, վշտոտ ծերուկին, իսկ երբ բոլորովին հարբեցին, պրեզիդենտը լքեց նրանց եւ լամպը ձեռքին, իր հին, գորանոցային սովորությամբ, շրջեց ողջ պալատը, բոլոր սենյակները եւ ննջասենյակ գնալուց առաջ վերջին անգամ տեսավ մարտական ընկերներին այնտեղ, ուր թողել էր. վեցն էլ քնել էին հատակին փռված, մեկմեկու գրկած՝ ծանրացած մարմիններով ու անհույս հարբած, բացի Սատուրնո Սանթոսից. նրանց քունը հսկում էին հինգ թիկնապահներ, քանզի Սանթոսը թիկնապահ չուներ. թիկնապահներն աչքները չէին հեռացնում մեկը մյուսից, որովհետեւ հատակին քնած գեներալները, նույնիսկ

քնի մեջ, նույնիսկ եղբայրաբար իրար գրկած, չէին վստահում միմյանց եւ վախենում էին իրարից ճիշտ այնպես, ինչպես նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին վախենում էր պրեզիդենտից, իսկ պրեզիդենտը սրանց զույգերից, քանի որ երկուսը, զույգը՝ դավադրություն է: Վերջին անգամ քնածներին նայելով նա ուղղվեց ննջասենյակ, դռան մոտ կախեց լամպը, փակվեց երեք կողպեքով, երեք շղթայով եւ երեք սողնակով, պառկեց հատակին՝ երեսը ինչպես բարձին ափերի մեջ խրած, եւ հենց այդ ակնթարթին պալատը դողաց պահակախմբի հրացանազարկի որոտից՝ մեկ: Եվ երկրորդը՝ երկու: «Եվ վերջ ոչ մի ավելորդ աղմուկ ոչ մի հատուկենտ կրակոց ոչ մի տնքոց ամեն ինչ վերջացավ մի հարվածով գրողը տանի ողջ այդ շիլափլավը»: Միայն վառոդի ծուխը նստեց անմոռուչ աշխարհի վրա: Իսկ առավոտն արթնանալով նա համոզվեց, որ այլեւս ոչ ոք եւ ոչինչ չի սպառնում բացարձակ իր իշխանությանը. արյան լճակները չլմփացնելով զինվորները կարգի էին բերում անցած գիշերվա բարեկամական խնջույքի դահլիճը. ցնցված Բենդիսիոն Ալվարադոն սարսափահար բռնել էր գլուխը, նայում էր պատերին, որոնցից արյուն էր կաթկթում, թեեւ սվաղում էին մոխրով ու կրով՝ պատերը արյուն էին քրտնում. արյուն էր ծորում գորգերից, թեեւ նոր էին դրանք քամել, ինչպես սպիտակեղենն են մղում. արյան առվակները վազում էին միջանցքներով, լցվում բոլոր սենյակները,- թվում էր, թե որքան ցանկանում էին աղատվել, այնքան ավելի էր շատանում արյունը,- սրբում էին, չորացնում, մաքրում, որպեսզի քողարկեն պատերազմի վերջին հերոսների սպանության հետքերը. պաշտոնապես հայտարարվեց, որ նրանց սպանել են հանկարծակի խելագարության նոպայով բռնված թիկնապահները, հետո ազգային դրոշներով պատանված նրանց մարմինները հերոսների պանթեոնում հողին հանձնեցին եւ նրանց պատվին պատարագ մատուցեց ինքը՝ եպիսկոպոսը. գեներալների թիկնապահները նույնպես դուրս չպրծան ծուղակից, ոչ մեկը ողջ չմնաց, բայց ողջ-առողջ դուրս պրծավ գեներալ Սատուրնո Սանթոսը, որովհետեւ նա վզից կախ գնդակներ վանող, զրահի պես, յոթ սուրբ խնկաման ուներ, սենյոր, որովհետեւ նա փոխակերպվել էր, կերպարանափոխվում էր ինչպես կամենար. կրիա կարող էր դառնալ, լճակ, կայծակ. պրեզիդենտը ստիպված

էր հավատալ, որովհետեւ Սատուրնո Սանթոսին չգտան նույնիսկ հովազների հետքերը բռնելուն վարժված շները. պայծառատեսգուշակը նույնպես հաստատեց, որ ողջ է Սատուրնո Սանթոսը. «Ահա նա, իմ գեներալ, այս խաչի թագավորն է»: Ինչ գնով էլ լիներ, պետք էր գտնել նրան, որովհետեւ ճողոպրած գեներալն անհանգստացնում էր պրեզիդենտին, չէ՞ որ գիտեր ամեն ինչ. եւ նրան որոնում էին օր ու գիշեր, փնտրեցին տարիներ շարունակ, մինչեւ մի օր պրեզիդենտն իր վագոնի լուսամուտից տեսավ տղամարդկանց, կանանց ու երեխաների մի թափոր, որ թափառում էր կահ-կարասիով, անասուններով. այդպես պատերազմի տարիներին էին գյուղովի գաղթում ֆեդերալիստների զորքերի ետեւից. բայց այս ամբոխը գնում էր գունատ, հյուծված, կոշտ հագուստով եւ պատառոտված պոնչոյով մի մարդու ետեւից, գնում էր հորդ անձրեւի տակ՝ իրենց ծերերին ու հիվանդներին տանելով ճոճերի մեջ պառկած - այդ մարդն իրեն մեսիա էր անվանում եւ ամբոխը քայլում էր նրա ետեւից: Եվ պրեզիդենտը զարկեց իր ճակատին ու բացականչեց. «Ահա նա, գրողը տանի: Սա չէ՞ որ Սանթոսն է»: Իրոք այդ մարդը Սատուրնո Սանթոսն էր, որ ապրում էր քարոզչությամբ, սնվում հավատացյալների ողորմածությամբ եւ հրաշագործ տավիղի նվագով. այո, ինքն էր՝ աղքատ, մռայլ, պատառոտված պոնչոյով եւ մինչեւ վերջին թելը քրքրված փեսրե գլխարկով, սակայն այս խղճուկ տեսքով էլ նա ահեղ էր եւ հնարավոր չեղավ առանց արյուն թափելու ձերբակալել. մաչետեի հարվածներով նա գլխատեց երեքին, պրեզիդենտական պահակախմբի ամենաճարպիկ ու քաջ զինվորներին, որոնք փորձեցին որսալ գեներալին միանգամից. եւ պրեզիդենտը հրամայեց կանգնեցնել գնացքը գերեզմանատան նման տխուր այդ սարահարթում, մեսիային շրջապատած ամբոխի մոտ. մարդիկ իսկույն ցրիվ եկան, երբ ազգային դրոշի գույնով ներկված վագոնից զենքերը պատրաստ դուրս թափվեցին պրեզիդենտի թիկնապահները. ոչ մի շունչ չմնաց, միայն Սատուրնո Սանթոսն էր՝ իր հրաշագործ տավղի մոտ քար կտրած. նրա ձեռքում մաչետեի կոթն էր, իսկ աչքերն անշարժացել էին պրեզիդենտական վագոնի դռանը - գեներալ Սատուրնո Սանթոսը հմայված էր իր երդվյալ թշնամու տեսքով. նա հայտնվեց աստիճաններին առանց տարբերանշանի դաշտային համազ-

գեստով, առանց զենքի. այնքան ծեր էր ու այնպես հեռու. «Ասես չենք տեսնվել մի հարյուր տարի, իմ գեներալ»: Սանթոսի աչքին պրեզիդենտը չափազանց հոգնած երեւաց ու միայնակ, անառողջ - լարդի քմայքներից դեղնել էր մաշկը, դեղնել էին աչքերը, բայց դրանցից մի արտակարգ ճառագայթում էր արձակվում. ողջ իշխանության ուժի բխումն էր, որ կենտրոնացրել էր նա իր ձեռքում՝ սպանելով մյուս հավակնորդներին, եւ գեներալ Սատուրնո Սանթոսը իր մահն ընդունելով վճռեց չդիմադրել, տեսնելով, որ ոչնչի առաջ չի կանգնեցնի, ոչ մի բան խելքի չի բերի բացարձակ իշխանությունից խենթացած, միայն տիրելու ծարավ այդ ծերունուն, բայց պրեզիդենտը Սանթոսին պարզեց կլոր ու հարթ, մանտերայայի* մարմնի նման ձեռքը եւ բացականչեց. «Թող ասված օրհնի քեզ, հայրենիքի քաջ ու փառավոր զավակ»: Որովհետեւ նա գիտեր, որ թիկունքը չծռած, հպարտ թշնամուն հաղթող միակ զենքը բարեկամական ձեռքն է, եթե դու ես առաջինը պարզում: Եվ գեներալ Սատուրնո Սանթոսը համբուրեց պրեզիդենտի ոտքերի տակի հողը եւ ասաց. «Թույլ տվեք հավատով ու ճշմարտությամբ ծառայել ձեզ, իմ գեներալ, քանի դեռ կարող եմ մաշետե բռնել, քանի դեռ նա կարող է երգել իմ ձեռքերում»: Եվ նա ընդունեց Սատուրնո Սանթոսին ծառայության, դարձրեց իր թիկնապահը, պայմանով սակայն, որ նա երբեք չկանգնի իր թիկունքի ետեւում. նա դարձրեց նրան նաեւ իր խաղընկերը, եւ նրանք չորս ձեռքով դոմինո էին խաղում. մինչեւ վերջին սենտավոն մաքրազարդեցին տապալված, գանձարանների հետ մեր երկիրը փախած շատ ու շատ բռնակալների գրպանները. պրեզիդենտական կառքով նա նրան տանում էր ամեն տեղ, գազանի հոտ արձակող այդ ոտաբոբիկին քարշ տալիս դիվանագիտական ընդունելությունների - նույնիսկ շներն էին փախչում հովազի նրա հոտն առնելով, իսկ դեսպանների կանայք սրտխառնուք էին ունենում. նա հրահանգեց նրան հսկել իր քունը եւ Սատուրնո Սանթոսը քնում էր ննջասենյակի դռան տակ. ննջասենյակի տիրոջ հոգին խաղաղվում էր այն գիտակցությունից, որ ոչ հեռվում կենդանի շունչ կա, որովհետեւ նրան մշտապես տանջում էին մղձավանջները եւ նա սարսափում էր մենակ մնալ նրանց հետ, ում տեսնում էր երազում. եր-

* Մանտերայա - ձուլ, «ծովային սատանա»:

կար տարիներ նա պահեց Սատուրնո Սանթոսին իր կողքին, թեեւ լրիվ չէր վստահում, թեեւ որոշ տարածության վրա, բայց կողքին, մինչեւ Սատուրնո Սանթոսին հաղթեց տառապալից հոգատապը, որից նա բոլորովին հյուծվեց եւ մաչետեն այլեւս չէր երգում նրա ձեռքերում, եւ այս հանգամանքը ստիպեց նրան մահ տենչալ. «Սպանեք ինձ, իմ գեներալ: Միայն դուք ունեք այդ իրավունքը»: Բայց նա Սատուրնո Սանթոսին պատկառելի կենսաթոշակ նշանակեց, պարգեւատրեց հավատարիմ ծառայության համար մեդալով եւ մեռնելու ուղարկեց սարահարթ, անասնագողերի խուվ մի գյուղակ, ուր ժամանակին ծնվել էր Սանթոսը. հրաժեշտին նույնիսկ արտասվեց, երբ Սանթոսը հպարտությունը վերջնականապես մի կողմ դնելով, իր անկարողությունից չամաչելով, դառնացած ասաց. «Ահա տեսնում եք, իմ գեներալ, նույնիսկ ամենապինդ տղամարդիկ են թուլանում, դառնում կնիկ»:

Այո, Բենդիսիոն Ալվարադոն լավ գիտեր եւ հիշում էր, թե ինչ գնով էր որդին մնում պրեզիդենտական աթոռին, եւ ոչ մեկը իրենից լավ չէր հասկանում երեխայական այն հրճվանքը, որով որդին լրացնում էր բաց թողածը, այն շռայլությունը, որով նա աջ ու ձախ վատնում էր իշխանության շնորհիվ ձեռք բերած փողերը. վատնում էր, որ ունենար այն ամենը, ինչից զուրկ էր մանկության, երիտասարդության տարիներին, բայց Բենդիսիոն Ալվարադոյին զայրացնում էր այն իրողությունը, որ մարդիկ օգտվելով որդու միամտությունից, առասպելական գներով էին վաճառում նրան արտասահմանյան զանազան ծռոտի-պռոտի բաներ, թեեւ նա տեսնում էր, որ դրանք գրոշի արժեք ունեն, ամեն դեպքում ավելի անարժեք էին, քան ջրաներկով ներկված իր թռչնակները - թռչնակներին կերպարանափոխելը հնարամտություն ու փորձ էր պահանջում, սակայն մեկ թռչնակին չորս պեսոյից ավելի ոչ ոք երբեք չէր վճարել: «Ես դեմ չեմ քո խաղալիքներին,- ասաց նա որդուն,- բայց վատ չէր լինի ապագայի մասին էլ մտածել. ես չեմ կամենում տեսնել քեզ գլխարկդ մարդկանց դեմ արած, երբ քեզ գլորեն քո աթոռից. աստված ոչ անի, իհարկե, բայց չէ՞ որ կարող է այդպես պատահել, ուրեմն, ի՞նչ պիտի անես: Գոնե լավ երգիչ լինեիր կամ արքեպիսկոպոս, կամ նավաստի, բայց դու ընդամենը գեներալ ես, միայն հրամայել գիտես՝ մեկ, երկու: Բա դրանով ապրել կլինի՞»:

Նա որդուն խորհուրդ տվեց ապահով տեղում թաղել պետական ծախսերից ավելացած փողերը, այնպես որ ոչ ոք չիմանար թաքստոցի տեղը, եւ այդ փողերը պետք կգան, երբ հարկ կլինի մի կողմ քաշվել, ինչպես ետ են քաշվել իրենց երկրներից վտարված այն խեղճ պրեզիդենտները, որոնց բաժին էր հասել միայն մոռացությունը, որոնք ողորմածություն ստանալու պես ուրախանում էին հարազատ նավի սոսկ ազդանշանը լսելիս. «Հանախ հիշիր ժայռակատարի տանը ապրող մարդկանց, հիշիր, որ նրանց նայելով դու հայելու մեջ քեզ ես տեսնում»: Բայց նա կամ ուշք չէր դարձնում մոր խոսքերին եւ կամ հանգստացնում էր նրան մոգական խոսքերով. «Ոչնչից մի վախենա, մայր, որովհետեւ ժողովուրդը սիրում է ինձ»: Բենդիսիոն Ալվարադոն ապրեց մինչեւ խոր ծերություն, մշտապես գանգատվելով աղքատությունից, հայհոյելով սպասուհիներին, շուկայում շռայլ ծախսումների համար, երբեմն ինքն էլ իրեն զրկելով ճաշից, միայն թե կրճատի ծախսը, եւ ոչ ոք չէր համարձակվում բաց անել նրա աչքերը, ասել, որ վաղուց արդեն նա աշխարհի ամենահարուստ կանանցից մեկն է, քանզի այն ամենը, ինչ շահում էր որդին կառավարական գործարքների ու մեքենայությունների շնորհիվ, գրանցում էր մոր անունով. նա չգիտեր, որ դարձել է անծայրածիր կալվածքների ու անհամար անասնահոտերի տիրուհի, տեղական տրամվայի գծերի, փոստի, հեռագրատան եւ ազգային ջրերի կառավարչուհի, չգիտեր, որ մեզ պատկանող ջրերը մտնող, մեր գետերով լողացող յուրաքանչյուր նավ պարտավոր էր նրան մաքս վճարել. այս ամենը նա չգիտեր, ինչպես չգիտեր եւ այդպես էլ մինչեւ մահ չիմացավ, որ իր որդին բոլորովին էլ միամիտ չէր, մեծահասակ երեխա չէր, ինչպիսին թվաց իրեն, երբ մենատուն եկավ ու բերեց բոլոր այդ նվեր-խաղալիքները, որոնցով ինքն էլ զվարճացավ. նա չգիտեր, որ այդ ժամանակ արդեն որդին անասնամորթի տուրք էր նշանակել եւ այդ տուրքն ամբողջությամբ իր գրպանն էր լցնում, չգիտեր, որ որդին խոշոր գումարներ էր վերցնում հովանավորելու դիմաց, չէր նողկում շահամոլ արբանյակների շռայլ նվիրատվություններից, բացի դրանցից հսկայական գումարներ էր շահում վիճակախաղում - վիճակախաղի շահումների կարգը չէ՞ որ մանրամասնորեն ինքն էր մշակել եւ խաղարկությունն այնպես էր գործում, ինչպես պետք էր ի-

բեն: Վիճակախաղի գործարքը նա ձեռնարկեց իր կեղծ մահից հետո, ավելի ճշգրիտ՝ Մեծ Աղմուկի ժամանակներում, սենյոր, որ այդպես կոչվեցին ոչ այն պատճառով, ինչպես կարծում են շատերը, թե մի անգամ, սուրբ Էրակլիո մարտիրոսի օրվա լույս գիշերը, ողջ երկրով մեկ դժոխային ստորերկրյա որոտ թնդաց,- ի դեպ, այդպես էլ խելքին մոտ ոչ մի բացատրություն չստանալով,- այլ այն պատճառով, որ այդ օրերին մեծ աղմուկով ամենուր, ամենաբազմազան չինություններ հիմքն էր դրվում. հիմքը գցելու պահին կառույցները հռչակվում էին աշխարհի մեծագույնները, թեեւ դրանցից եւ ոչ մեկն ամբողջությամբ չկառուցվեց, բայց աղմուկը մեծ էր, սենյոր. այդ ժամանակներում նա պետական խորհուրդներ հրավիրելու սովորություն ուներ՝ սիեստայի ժամերին եւ մոր մենատանը, տամարինդների ստվերով ծածկված բակում. ճոճում պառկած, գլխարկով հով անելով, աչքերը փակ նա լսում էր ճոճի շուրջը նստոտած, ներկած բեղերով ճոռոմաբաններին, որոնք շնչահեղձ էին լինում շոգից ցելոլոիդե օձիքներով սեղմված մահուդե այուրթուվների մեջ, շատախոս նախարարներին, ատելի այդ քաղաքացիականներին, որոնց նա ստիպված էր հանդուրժել իր իսկ շահերի համար. նրանք ճամարտակում էին, իսկ նա լսում էր, թե ինչպես են դրանց ձայները սուզվում բակում հավերին հետապնդող աքաղաղների թեւաբախման աղմուկի մեջ, լսում էր ճռիկների անվերջ ու միալար ճռռոցը, մոտերքից եկող անխոնջ գրամաֆոնի միեւնույն երգը. «Սուսաննա, ինձ մոտ արի, Սուսաննա», ննջում էր եւ նախա-լարները իսկույն լռում էին հարդալից. «Սուս, գեներալը քնեց»,- սակայն ընդհատելով խոմփոցը, բայց եւ աչքերը չբանալով, նա բղավում էր. «Շարունակեք, ես լսում եմ»,- եւ նրանք շարունակում էին, քանի դեռ նա դուրս չէր գալիս սիեստայի սարդոստայնից, տանջալից նինջից եւ չէր ամփոփում նիստի արդյունքները. «Հիմարություններ դուրս տվեցիք: Ձեզանից միայն մեկն է գործի մարդ՝ առողջապահության նախարարը, իմ հայրենակիցը: Դե, էլ ի՞նչ է ձեզ պետք: Ցրվեք, վերջացրինք այս շիլաշփոթը»: Հետո նա պետական գործերը քննարկում էր անձնական օգնականների հետ, ճաշի ժամանակ, ետ ու առաջ քայլելով, ափսեն մի ձեռքում, գդալը՝ մյուս, իսկ շատ հարցեր վճռում էր ընթացքում, սանդուղքով բարձրանալիս, նույնիսկ չէր վճռում,

փնթփնթում էր. «Արեք ինչ ուզում եք, միեւնույն է, ես եմ այստեղ տեր ու տիրականը»: Նրան այլեւս չէր հետաքրքրում՝ սիրո՞ւմ են իրեն, թե ոչ,- «Դատարկ բաներ են»,- եւ սկսեց հայտնվել հասարակական հազար ու մի հանդեսներում. անձամբ ժապավեններ էր կտրում՝ բաց անելով ինչ-ինչ ցուցահանդեսներ, ամբողջ հասակով մեկ տնկվելով մարդկանց առջեւ վտանգելով իրեն այնպես, ինչպես չէր վտանգել նույնիսկ առավել խաղաղ ժամանակներում. «Դատարկ բաներ են, ոչինչ չի պատահի»: Իսկ օրվա մնացած ժամանակը նա անց էր կացնում իր թանկագին ընկերոջ՝ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարի եւ առողջապահության նախարարի՝ թանկագին հայրենակցի հետ դոմինո խաղալով: Այս երկուսը միայն իրավունք ունեին խնդրել, որ այս կամ այն կալանավորին ազատի, որեւէ մահապարտի ների, միայն այս երկուսը կարողացան տեսակցության թույլտվություն խնդրել գեղեցկության թագուհի Մանուելա Սանչեսի համար: Հասարակ դասից ծնված մի հրաշք արարած էր նա, աննման ծաղիկ, ծլած աղքատության այն ծովի մեջ, որ մենք անվանում էինք Շնային գզվռտոցների թաղամաս, որովհետեւ այդ թաղամասում բնակվող շները գզվռտվում էին օր ու գիշեր, առանց շունչ քաշելու, առանց դադարի. դա այն թաղամասն էր, ուր չէին համարձակվում մտնել ազգային գվարդիայի պարեկները, որովհետեւ բավական էր հայտնվեին, խլույն տկլորվում էին, իսկ նրանց մեքենաները մի ակնթարթում վերածվում էին պահեստամասերի. այստեղ մոլորված ավանակը դուրս էր ելնում ոսկորներով լի պարկի տեսքով - ահա այդպիսին էր Շնային գզվռտոցների թաղամասը, իր խճճված փողոցների լաբիրինթոսով, մահվան այդ որջը, ուր անհետանում էին հարուստների առեւանգված որդյակները. «Նրանց այնտեղ սպանում էին ու տապակում, պատկերացնում եք, իմ գեներալ»: Բայց հենց այդտեղ էր ծնվել ու մեծացել, այդտեղ էր ապրում Մանուելա Սանչեսը, չարաբաստիկ Մանուելա Սանչեսը, աղբարկղի այդ ծաղիկը. «Այդ աղջկա գեղեցկությունն ապշեցրել է ողջ երկիրը, իմ գեներալ»: Նրա հետաքրքրասիրությունը բորբոքվեց, այնպես բորբոքվեց, որ ասաց. «Եթե նա, իրոք, այդպիսի արտակարգ գեղեցկուհի է, ապա ես պատրաստ եմ ոչ միայն ընդունել նրան, այլեւ հետը վալս պարել: Գրողը տանի, թող գրեն այդ մասին լրագրերը, նման պատմություններ շատ են հա-

վանում հասարակ մարդիկ»: Երեկոյան, սակայն, Մանուելա Սանչեսի տեսակցությունից հետո, սկսելով դոմինոյի հերթական խաղը, նա բացահայտ հիասթափությամբ ասաց գեներալ Ռոդրիգո դե Ագիլարին, որ աղքատների փառաբանված այդ թագուհին արժանի չէ նույնիսկ իր հետ վալս պարելուն, որ նա սովորական մի աղջիկ է, հար ու նման հարյուրավոր այլ Մանուելա Սանչեսների, ովքեր բնակվում են Շնային գզվռտոցների թաղամասում. «Մուլինե բոլորածալերով դրա հավերժահարսի շրջազգե՛ստը, կեղծ քարերով զարդարված, ոսկեջրած դրա թա՛գը, հապա ձեռքի վա՛ղը, վախը՝ մորից, որն այնպես է դողդողում աղջկա համար, կարծես մաքուր ոսկուց է շինված: Բայց սատանան նրա հետ, ես բավարարեցի նրա երկու խնդրանքը. նա ջուր եւ էլեկտրականություն էր խնդրում տալ Շնային գզվռտոցների թաղամասին: Սակայն ես զգուշացրի նրան այլեւս աչքիս չերեւալ իր խնդրանքներով. տանել չեմ կարող մուրացիկներին եւ չեմ կամենում խոսել պատահական ամեն քրջոտի հետ: Ի՞նչ է նրանց ուզածը»: Եվ նա խաղը կիսատ թողած ոտքի ելավ ու հեռացավ դուռը շրխկացնելով, իսկ երբ ժամը ութը դարձավ, հայտնվեց ֆիրմայում, կեր տվեց կովերին, հրահանգեց աթար տանել պալատ, հետո գնաց ընթրելու եւ, սովորության համաձայն, մի ձեռքով ափսեն բռնած - քայլում էր սենյակում, ուտելով տապակած միսը, լոբու, բրնձի եւ չինարի տերեւներով սալաթը, ստուգում ամե՞ն ինչ կարգին է պալատում. հաշվեց բոլոր ժամապահներին, բոլոր պահակակետերը, սկսած պալատի դարպասներից մինչեւ իր ննջասենյակի դուռը, համոզվեց, որ պահակներն, ինչպես կարգն է, տասնչորսն են, հետո ստուգեց՝ տեղո՞ւմ են անձնական պահակախմբի մյուս անդամները եւ համոզվեց, որ տեղում են, պալատի առաջին ետնաբակում դոմինո են շրխկացնում. հետո նա համոզվեց, որ բոլոր բորոտները պառկած են սանդուղքի աստիճաններին եւ երբ ժամը ինը դարձավ, ընթրիքի ափսեն առաջին իսկ պատահած բաց լուսամուտի գոգին դրեց, իսկ ինքն ընկղմվեց գարշահոտ ու թանձր խավարն ու հայտնվեց իր սիրուհիների բարաքը, այն մահճակալի մոտ, որի վրա քնել էին միանգամից երեք կին՝ օրապակաս իրենց երեխաներով. նա խցկվեց այդ մարդակույտի, գեշ հոտ արձակող մարմնեղեն խառնախյուսի մեջ, մի կողմ հրեց իրեն խանգարող երկու գլուխ եւ ե-

րեք զույգ ոտքեր եւ տիրացավ կանանցից մեկին, չտեսնելով նույնիսկ նրա դեմքը, իսկ կինը չարթնացավ էլ, եւ ոչ մեկը չարթնացավ այդ մահճակալի վրա, միայն Հարեւան մահճակալից լսվեց կանացի քնատ մի ձայն. «Մի փնչացրեք այդպես, իմ գեներալ, երեխաները կվախենան»: Հետո նա պալատ վերադարձավ, ստուգեց երեք լուսամուտների բոլոր քսան մղլակները, մժղուկներին քշելու համար միջանցքում սթար վառեց - հանդերձարանից դեպի բնակելի սենյակները շարժվելով, նա հինգ մետրը մեկ սթարի կտոր էր վառում եւ ներշնչելով ծուխը հիշում անհուսալիորեն հեռու իր տկլոր մանկությունը. բայց մի՞թե դա իր մանկությունն էր: Եղած-չեղածը ակնթարթային հիշողություն էր, որ ծնվում էր սթարի ծուխը ներշնչելիս, հետեւյալ պահին նա ոչինչ այլեւս չէր հիշում... Հետո նա շարժվում էր հակառակ ուղղությամբ՝ դեպի հանդերձարան, մարելով բոլոր սենյակների լույսը, ծածկելով թռչնավանդակները եւ հաշվելով դրանք. «Քառասունութ հատ պիտի լինեն»: Այո, քառասունութ հատ էին, բայց նա չհանգստացավ, կրկին շրջեց ողջ պալատը՝ լամպը ձեռքին, տասնչորս անգամ տեսավ իր արտացոլանքը տասնչորս հայելիների մեջ՝ տասնչորս համանման գեներալներ՝ ձեռքներին վառվող լամպ: Ժամը տասը դարձավ: Ամեն ինչ կարգին էր: Մտավ իր գվարդիականների ննջասենյակը, մարեց լույսը. «Բարի գիշեր, սենյորներ»: Հետո աչքի անցկացրեց առաջին հարկի բոլոր առանձնասենյակները, բոլոր ընդունարանները, բոլոր արտաքնոցները, վարագույրների ետեւը տնտղեց, սեղանների տակը՝ ոչ ոք չկար. եւ նա դրպանից հանեց բանալիների փունջը, շոշափելով գլխի ընկավ՝ որը որ փականքինն է, փակեց բոլոր առանձնասենյակները, բարձրացավ գլխավոր հարկաբաժին եւ այնտեղ էլ ստուգեց բոլոր անկյունները՝ սենյակ առ սենյակ, եւ փակելով բոլորը, վերջապես հասավ իր ննջասենյակ, թաքստոցից դուրս բերեց մեղրի պուլիկը, կուլ տվեց ամենօրյա բաժին երկու գդալ մեղրը, հասցնելով մտածել մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի մասին, երեւակայությամբ տեսավ նրան քնած քաղաքամերձ իր մենատանը, թուրինջի թփի եւ օրեգանո խոտի հաճելի բույրերի մեջ, պարզորոշ տեսավ մոր անշարժ, անուժ ցած ընկած ձեռքը, ուղածդ գորշ թռչնակին պիրոլ դարձնող ձեռքը, որը հիմա այնքան անկենդան էր պատկերանում, ասես քնած չէր մայ-

ը, այլ մեռած. «Բարի գիշեր, մայր», չչնջաց նա եւ լսեց քաղաքամերձ իր մենատանը քնած մոր պատասխանը քնի միջից. «Բարի գիշեր, որդիս»: Հետո նա ննջասենյակի մուտքի մոտ, կեռից կախեց լամպը - լամպը վառվելու էր ողջ գիշեր, ոչ ոք մարելու իրավունք չուներ, որովհետեւ այդ լամպը անհրաժեշտություն էր, եթե հարկ լիներ փախչել գիշերով. տասնմեկը դարձավ, եւ նա կրկին շրջեց ողջ պալատը, չվառելով եւ ոչ մի լույս, մթության մեջ շրջում էր հենց այնպես, համենայնդեպս՝ ո՞վ իմանա, գուցե թե մեկն ու մեկը համարձակվել էր ներս սողոսկել: Նա կամացուկ շարժվում էր մի քանի ակնթարթ տեւողությամբ կանաչ ծեգերով, փարոսի պտտվող թիակների կանաչ լուսափնջերով լուսավորվող մթության մեջ, եւ այդ կանաչ լույսերում բոցկլտում էր նրա ոսկյա խաչանը, որն իր ետեւից թողնում էր աստղափոշու առկայծող հետք. երկու բռնկումների արանքում նա տեսավ ոտքի վրա քնած մի բորոտի, որը, հավանաբար, մոլորվել էր, եւ չդիպչելով նրան, ուղեկցեց մինչեւ այգի, վարդաթփերից մեկի մոտ, ճանապարհի խավարը լուսավորելով իր արթմնության լույսով. բորոտին թվի տակ թողնելով եւ կրկին հաշվելով պահակակետերը, նա իր ննջասենյակը բարձրացավ. երկար միջանցքի լուսամուտների մոտով անցնելիս նա յուրաքանչյուրից տեսավ ապրիլ ամսվա Կարիբյան ծովը, տեսավ քսաներեք անգամ, եւ թեեւ կանգ չէր առնում, նկատեց՝ ծովը նույնն էր, ինչ լինում էր միշտ ապրիլ ամսին - նման էր ոսկեզօծ ջրասոպով ծածկված ճահճի. տասներկուսը դարձավ, եւ ժամացույցի վերջին զարկի հետ նա հոգին չամփրող սարսափ զգաց, որ գալիս էր պալատի խորքերից. այդ սարսափը սուլոցի պես խլացրեց նրան, եւ աշխարհում այլեւս ոչ մի զգայողություն, ոչ մի այլ հնչյուն չկար, եւ վախենալով իր սարսափից, նա փակվեց երեք կողպեքով, երեք շղթայով, երեք սողնակով, փոքր պետքը հոգաց՝ քամելով երկու կաթիլ, չորս կաթիլ, յոթը տառասպալից կաթիլներ, եւ փռվեց հատակին, ընկավ բերանքսիվայր ու ակնթարթորեն քնեց աներազ քնով. բայց երեքից քառորդ պակաս արթնացավ քրտնքի մեջ կորած, սոսկալի այն զգացողությամբ, թե իրեն նայող կա. քանի դեռ քնած էր, առանց կողպեքներին դիպչելու պատերի միջով թափանցելու ընդունակությամբ օժտված ինչոր մեկն էր. «Ո՞վ կա այստեղ»,- հարցրեց նա, բայց պատասխանը

լուությունն էր. նա փակեց կոպերը, փորձելով քնի աշխարհ վերադառնալ, բայց հանկարծ կրկին զգաց, որ իրեն նայող կա եւ սարսափից բացելով աչքերը, տեսավ Մանուելա Սանչեսն է քայլում կողպեքներով ու սողնակներով փակ իր ննջասենյակում, պատերի միջով անցած Մանուելա Սանչեսը, չարաբաստիկ գիշերվա Մանուելա Սանչեսը, մուգլինե շրջազգեստով, բոցկլտացող վարդը ձեռքին Մանուելա Սանչեսը, որի շունչը խոլորձի բույր էր արձակում «Ասա, որ դու իրական չես, տեսիլք ես,- մրմնջաց նա,- ասա, որ դու՝ դու չես, որ խոլորձի թմրեցնող այս բույրը քո շունչը չէ»: Բայց նա էր՝ Մանուելա Սանչեսը, եւ վարդը բոցկլտում էր նրա ձեռքին, նրա տաք շնչառությունն էր, որ օդ դարձավ ննջասենյակում. այստեղ ամեն ինչ դարձավ Մանուելա Սանչես, ողջ աշխարհը դարձավ Մանուելա Սանչես, այդ կերպ համառ ժայռն է իրեն ենթարկում ծովի հնադարյան ուժը. «Իմ անկումների Մանուելա Սանչես, դու չէ՞ որ չկաս իմ ափի բախտագծերում, քեզ չեն գուշակել սրճի մրուրում, դու չես երեւացել ջրի այն հայելում, որով հմայում էր գուշակ-պայծառատեսը. ուրեմն, մի խլիր գիշերային քունս, մի զրկիր ինձ սովորական օդից, ննջասենյակիս խավարից, ուր չի մտել եւ չի մտնի ոչ մի կին, հանգցրու քո վարդը»,- ազաչեց նա պատի վրա ափլփելով անջատիչը, բայց ամենուր գտնելով իր ցնորանքի Մանուելա Սանչեսին. «Սատանան տանի, ինչո՞ւ պիտի գտնեմ քեզ, եթե երբեք չեմ կորցրել: Ի՞նչ ես ուզում ինձանից: Ուզո՞ւմ ես վերցրու պալատս, վերցրու ամեն ինչ, ողջ երկիրը, միայն թույլ տուր վառեմ լույսը, իմ գիշերվա կարիճ, իմ փոշոտանկի Մանուելա Սանչես, ես քո մոր եղած-չեղածը»: Նա հույս ուներ լույսը վառելով ազատվել տեսիլքից, Մանուելա Սանչեսի դյութանքից եւ բղավում էր կոկորդով մեկ. «Հեռացրեք սրան, ազատեք ինձ սրա ձեռքից, խարիսխը վզից կախ ծովը շպրտեք դրան, խեղդեք, որպեսզի ոչ ոք չտառապի դրա վարդի շողարձակումից»: Նա բղավում էր, մթությանն մեջ կովի թրիք տրորելով գայթում եւ սարսափահար հարցնում ինքն իրեն. «Այս ի՞նչ կատարվեց լույս աշխարհում: Շուտով առավոտյան ուժը կլինի, իսկ այս նոզկալի տանը դեռ մրափում են բոլորը»: «Ելեք, կոտոշավորներ»,- բղավեց նա եւ սկսեցին վառվել լամպերը, պալատի զորանոցում չեփոր հնչեցրին, արձագանքեց նավահանգստի ամրոցը, հետո նաեւ

Սան-Խերոնիմոյի բազան. չեփորականչ հնչեցրին երկրի զորանոց-ներում, արթնացան բոլորը, չրխկացին զինաբուրգերից փութով վերցված հրացանները, վարդերը բացվեցին առաջին ցողից երկու ժամ առաջ, պալատի սպասուհիները, աստղային երկնքի տակ, ինչպես լուսնոտներ, թափ տվեցին ուղեգորգերը, վանդակներում քնած թռչուններին կեր տրվեց, դեռ չթառամած ծաղիկները դեն շպրտվեցին եւ փոխարենը սափորների մեջ նույն թարմությունն ունեցող նորերը դրվեցին. որմնադիրների մի խումբ հապշտապ պատեր շարեց՝ արեւահայաց յուրաքանչյուր պատուհանին սոսնձելով ոսկեգույն ֆոլգայից մեկական արեգակ, ինչով չփոթեցրին արեւածաղիկներին, բայց ֆոլգայե արեգակներն անհրաժեշտ էին, որպեսզի ցերեկվա տպավորություն ստեղծվեր, քանզի երկնքում գիշեր էր դեռ թեւածում, օրացույցը կիրակի օրն էր ցույց տալիս, երկուշաբթի լուսաբացը դեռ չէր քսվել ապրիլյան ծովին. երկնքում թեւածում էր գիշերը, իսկ ճչան չինացիները՝ լվացքատների տերերը, արթնացնում ու փողոց էին հրում առաքիչներին՝ պատվիրատուներից կեղտոտ սավաններ բերելու, կույրպայծառատեսները գուշակություններ էին սկսել, փորձառու պաշտոնյաները մի այնպիսի տեսք էին ընդունել, ասես սկսված երկուշաբթի օրվա ձվերն էին հայտնաբերում իրենց գրասեղանների դարակներում, այնինչ անցած երեկոյի ձվերն էին դրանք. ամենուր խմբվել էին չփոթված մարդիկ, այն սեղանների տակ, որոնց շուրջ արտակարգ նիստի էին հավաքվել պետական խորհրդի անդամները, իրենց հավերժական գզվռտոցը սկսեցին պալատական շները, իսկ նա անակնկալ այս առավոտից շլացած, ուղղվեց դեպի նիստերի դահլիճ՝ շրջապատված ոչնչով չզարմացող շողոքորթներով, որոնք անվերջ անվանում էին նրան լուսաբացի արարիչ, ժամանակի տիրակալ, արեգակնային ճառագայթների պահապան. երբ գլխավոր շտաբի սպաներից մեկը համարձակվեց կանգնեցնել նրան եւ պատիվ տալով զեկուցեց, որ հիմա ոչ թե առավոտյան ժամը ութն է, այլ ընդամենը երեքն անց հինգ րոպե, նա ապտակեց անպատկառին եւ այնպես բղավեց, որ լսելի էր ողջ աշխարհին. «Հիմա ժամը ութն է, գրողը տանի, ութը, ասացի»: Երբ կեսօրվա ժամը երեքին նա հայտնվեց մոր մոտ, Բենդիսիոն Ալվարադոն զարմացած հարցրեց. «Ի՞նչ է պատահել: Հո քեզ չի՞ խայթել մոր-

մը: Ինչո՞ւ ես բռնել սիրտդ»: Նա լռելյայն ընկղմվեց ցանցահյուս բազկաթոռի մեջ, ձեռքն ուզեց հեռացնի կրծքից եւ նույն պահին էլ մոռանալով, կրկին տեղը դրեց: Եվ այդ ժամանակ Բենդիսիոն Ալվարադոն որդու կողմը տնկելով թռչնակներին ներկող վրձինը, հարցրեց առավել զարմացած. «Դու, ինչ է, իրո՞ք, Քրիստոսի սրբապատկեր ես դարձել, որ այդպես թախծել ես աչքերդ ու ձեռքդ դրել կրծքիդ»: Նա ձեռքը հեռացրեց կրծքից, ոտքի ելավ ու դուռը շրխկացնելով հեռացավ, քթի տակ հայհոյելով մորը. վերադարձավ պալատ, սկսեց թափառել բոլոր հարկերով՝ ձեռքերը գրպանները խոթած, որպեսզի չձգվեն դեպի կուրծքը. թափառում էր ու լուսամուտներից նայում անձրեւի տաղտկալի շիթերին, ապակիներին սոսնձած փաթեթավորման ֆոլգայից կտրատված աստղերին, լուսամուտներից այն կողմ կախված լատունե լուսնյակներին, որոնք երեկոյան ժամը ութի տպավորություն պիտի ստեղծեին. լուսամուտից տեսնում էր պահակախմբի թրջված զինվորներին, տեսնում էր թախծոտ ծովն ու անձրեւը, անձրե՛ւը, անձրե՛ւը, որի ամեն կաթիլի մեջ Մանուելա Սանչեսն էր, իրեն չպատկանող Մանուելա Սանչեսը, թեեւ նա ապրում էր այս քաղաքում, որ իրեն էր պատկանում, իրեն էր ենթարկվում ամեն ինչ. նրան հետապնդում էր իր ամայությամբ սոսկալի սենյակի տեսիլքը,- այդ սենյակում մի սեղան կար՝ բռնված ոտքերը վեր ցցված աթոռներով,- եւ այս տեսիլքը վերածվեց անհույս միայնության, մթնշաղային, վաղանցիկ, էլի մեկ օրվա միայնության, առանց Մանուելա Սանչեսի էլի մեկ գիշեր ապրելու զգացողության. «Սատանան տանի,- հառաչեց նա,- այնպիսի մրմուռ է հոգումս, ասես խլել են ինձանից մի բան, որ իմն է եղել»: Նա ամաչեց իր վիճակից, դեպի սիրտը ձգվող ձեռքը շալվարի ներսը խոթեց, դրից անձրեւի օրորից քնած փոշտանկին,- նույնն էր մնացել՝ վիթխարի, ծանր եւ նախկին ցավն էր նվվում, նախկին, սովորական դարձած ցավը, բայց հիմա անտանելի թվաց, կարծես ձեռքը սեփական սիրտն էր խցկել, կարծես սիրտն առել էր ափերի մեջ՝ կենդանի, մերկ սիրտը, եւ՝ միայն այս պահերին նա հասկացավ իրավացիությունն այն պնդման, որ լսել էր տարբեր ժամանակներ, տարբեր մարդկանցից. «Սիրտը երրորդ ձուն է, իմ գեներալ»: Սատանայի մորը հայհոյելով նա հեռացավ լուսամուտից, ետ ու առաջ արեց ընդունարա-

նում եւ տառապելով ցմահ պրեզիդենտի իր վիճակից, զգալով իրեն այնպես, ասես ձկան փուշ էր խրվել սիրտը, ուղղվեց պետական խորհրդի նիստերի դահլիճ, նստեց այնտեղ ու հին սովորությամբ ոչինչ չլսելով սկսեց լսել, եւ ոչինչ չհասկանալով լսածից համարյա քնեց երկրի ֆինանսական վիճակը ներկայացնող ձանձրալի զեկուցման տակ: Եվ հանկարծ ինչ-որ բան փոխվեց նիստի մթնոլորտում, ինչ-որ բան կախվեց օդում. լռեց ֆինանսների մինիստրը, հայացքը պրեզիդենտին հառեց, եւ բոլոր հավաքվածները հայացքները սեւեռեցին նրա վրա, զննելով նրան, ներս նայելով անթափանցիկության զրահի ճաքերից, որ բացվել էին ցավից, իսկ նա պարզորոշ տեսավ ինքն իրեն՝ անպաշտպան, անսահման մենակ, նստած ընկուզենու փայտից երկար սեղանի ծայրին դրված աթոռին, գունատված այն մտքից, որ ցմահ պրեզիդենտին ոչ վայել խղճուկ վիճակում էր՝ սիրտը բռնած. նրա կյանքն այրվում էր առողջապահության մինիստրի՝ ոսկերիչի աչքերի նման սեւեռուն, սառցե ածուխ աչքերի առաջ. թանկագին հայրենակիցը խաղալով գրպանի ժամացույցի ոսկյա շղթայի հետ, ասես տնտղում էր պրեզիդենտի ներսը: «Երեւի ծակոցներ ունի»,- զգուշորեն ասաց մեկը, բայց նա կրծքից արդեն հեռացրել էր ջրահարսի իր ձեռքը, որ քարացավ սեղանին, դեմքն ամենօրյա գույնը ստացավ, եւ նա, ինչպես արճճե կրակահերթ, բոլորի դեմքին թքեց կատաղի մի ճառ՝ հաստատելով իր անառարկելի իշխանությունը. «Դուք շատ կուզեիք, որ ծակոց լիներ, կոտոշավորներ: Դե, ինչո՞ւ պապանձվեցիք: Շարունակեք»: Նրանք շարունակեցին, ակամա, իրենք իրենց էլ չլսելով, եւ հասկանում էին, որ նման արտակարգ դիպված է պատահել, եթե չարացել է այսպես. սկսեցին փափսալ, մատնացույց անել նրան. «Ինչքա՜ն է հուզված, որ սիրտն է բռնել: Ի՞նչ է պատահել: Նա բոլորովին քարուքանդ է եղել»: Պալատում լուր տարածվեց, թե պրեզիդենտը շտապ իր մոտ է կանչել առողջապահության նախարարին եւ երբ սա ներկայացել է, տեսել է պրեզիդենտին սեղանի մոտ նստած, աջ ձեռքին նայելիս, եւ այդ ձեռքն, իբր, ընկած է եղել սեղանին փքված կոճղի նման. ասում էին, թե պրեզիդենտն առողջապահության նախարարին հրամայել է անհապաղ կտրել այդ ձեռքը, անհնազանդ այդ ձեռքը, որ թունավորում է իր կյանքը. բայց առողջապահության նախարարը, ասում

էին, կտրականապես հրաժարվել է այդ գործից, հայտարարելով, որ նման հրաման չի կատարի նույնիսկ գնդակահարության սպառնալիքի տակ. «Արդարության խնդիր է, իմ գեներալ, ես չեմ կարող անդամահատել ձեզ, որովհետեւ ոտքից գլուխ ես չարժեմ ձեր այդ մի հատիկ ձեռքը»: Այս լուրը եւ նրա վիճակին վերաբերող այլ լուրեր կրկնվում էին բոլոր նրբանցքներում ու խաչմերուկներում աճում ու ընդարձակվում էին, մինչ նա ֆերմայում շարունակում էր իր ձեռքով բաժանել զորանոցների կաթը, տեսնելով, թե ինչպես է երեքշաբթի օրվա մոխրագույն առավոտը գրավում երկինքը - Մանուելա Սանչեսի առավոտը, որովհետեւ այսուհետ ամեն ինչ ու ամեն բան Մանուելա Սանչես էր: Նա կարգադրեց վարդերի թփերի տակից վռնդել բոլոր բորոտներին, որպեսզի նրանց ներկայությամբ չգարշահոտեին վարդերը՝ պղծելով Մանուելա Սանչեսի վարդի բույրը, պալատում որոնեց ամենախուլ անկյունները, որպեսզի ոչ ոք չլսեր իր երգը. «Ես պարում եմ քեզ հետ առաջին վալսը, թագուհի, որպեսզի դու չմոռանաս ինձ: Որպեսզի իմանաս, որ մահվան կդատապարտվես, եթե մոռանաս ինձ»: Այս երգը հոգում նա սուզվեց հարճերի ննջասենյակների ճահիճը, ճգնելով մի կերպ մնդմացնել տառապանքները եւ անպետք սիրեկանի իր երկար կյանքի ընթացքում առաջին անգամ շոապող ագաղաղ չեղավ. չէր շոապում նախկինի պես, հաճույք էր ստանում ու հաճույք պատճառում երկար, շատ, զարմացնելով հարճերին, որոնք երջանկությունից քրքջում էին մթության մեջ ու տաքուկ-տաքուկ շշնջում. «Վատնում եք ձեզ, իմ գեներալ, այն էլ ձեր այս տարիքում»: Բայց նա շատ լավ գիտեր, որ այս ամենն ինքնախաբեություն է, անխուսափելիության հետաձգում, գիտեր, որ անդիմադրելիորեն մոտենում է այն օրը, երբ ինքը պիտի մեկնի Մանուելա Սանչեսի սերը պաղատելու, հանուն բոլոր սրբերի նրա սերը մուրալու, պիտի մեկնի փնտրելու նրա պալատը բարբարոսական թագավորության աղբակույտերի թավուտում՝ Շնային զզվառոցների թաղամասի սրտում: Նա այնտեղ մեկնեց ամենաշոգ մի օր, կեսօրվա ժամը երկուսին, քաղաքացիական հանդերձով, առանց պահակախմբի, սովորական մեքենայով, որը երկար պտտվեց սիեստայի մահաքունն ընկղմված քաղաքում, ետեւից այրված գազի հոտ բաց թողնելով. նա ետեւում թողեց առեւտրական փողոց-

ների ասիական խառնաշփոթությունը եւ տեսավ իր ճգնաժամի Մանուելա Սանչեսի մեծ ծովը, տեսավ հորիզոնում նշմարվող միայնակ հավալուսինը, մինչեւ Մանուելայի տունը ընթացող հնացած տրամվայները եւ հրամայեց փոխարինել դրանք դեղնագույն նորերով, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա փայլատ լուսամուտներ եւ թավիշե նստատեղ՝ Մանուելա Սանչեսի համար. տեսավ մերկ լողափեր, որտեղ Մանուելան անց էր կացնում իր կիրակիները եւ հրամայեց այնտեղ հանդերձարան դնել եւ եղանակի դրոշ տնկել, որպեսզի դրա գույնով իմացվեր՝ կարելի՞ է, արդյոք, ծովը մտնել, եւ հրամայեց նաեւ մետաղական ցանցով շրջափակել Մանուելա Սանչեսի անձնական լողափը. ծովափին նա տեսավ իր օգնությամբ հարստացած տասնչորս ընտանիքների ամառանոցները՝ մարմարյա պատշգամբներով, խաղաղ լճակներով, հատկապես ուշադրության արժանացրեց բոլորից առանձնացված մի մենատան, որ ամենամեծն էր, պտտվող շատրվաններով, եւ ցանկացավ. «Ուզում եմ, որ դու ապրես այս ամառանոցում եւ այստեղ սպասես ինձ»: Եվ, իհարկե, ամառանոցն իսկույն բռնագրավվեց, հանձնվեց Մանուելա Սանչեսին. ահա այսպես նա մտքում վերակառուցում էր շրջապատող աշխարհը, անրջում աչքերը բաց, մեքենայի ետնամասում թիկնած, մինչ մեքենան սահում էր ծովափով, բայց, ի վերջո, կտրվեց առափնյա զեփյուռի շունչը, քաղաքը ետեւում մնաց եւ մեքենա խուժեց Շնային զզվռտոցների թաղամասի դիվական աղմուկը. նա հայտնվել էր թաղամասում ու չէր հավատում աչքերի առաջ փռված տեսարանի իրողությանը. սարսափից նա ոռնաց իր ներսում. «Մայր իմ, Բենդիսիոն Ալվարադո, ապա մի տես, թե ուր եմ ընկել: Փրկիր ինձ»: Սակայն ոչ ոք այդ խենթանոցում չճանաչեց նրա թախծոտ աչքերը, բարակ շրթները, հոգնած, կրծքին դրած ուռած ձեռքը, ոչ ոք ուշք չդարձրեց սպիտակ, վուշե կոստյում հագած, հասարակ կեպի դրած զառամ ծերունու նողկալի ձայնին, ոչ մեկին չհետաքրքրեց պառաված այդ նախապապը, որը գլուխը մեքենայի լուսամուտից դուրս հանած հարցնում էր. «Որտե՞ղ է ապրում իմ խայտառակության Մանուելա Սանչեսը, աղքատների թագուհին, վարդը ձեռքին սենյորան»: Հարցնում էր հասցեն, իսկ ինքը հուզմունքով մտածում էր. «Ինչպե՞ս ես կարողանում ապրել այստեղ որտեղ հրեշավոր մի կծիկ են

դարձել կատաղի կաղկանձող արյունոտ ժանիքներով արյունալի սատանայի աչքերով շները մղձավանջային այս խորխորատում որտեղ կիսամահության չափ բզկտված քած շները պոչերը ծալած ոռնում են եւ իրենց վերքերը լիզում այս գարշահոտ ջրափոսերի մեջ ինչպես որսալ խոլորձի քո քաղցր շունչը գինետներից աքացիներով դուրս վռնդված հարբեցողների այս գոռում-գոչյունի մեջ ինչպես քո մորն էսպես ու էնպես ինչպես կյանքիս տառապանք ինչպես գտնեմ քեզ մարանգուանգոյի եւ բուլանդանգո գաղտնոցի եւ մանտա-դե-բանդերայի* անվերջանալի պտտահողմում բազմամարդ Հարայ-Հրոց ճաշարաններում, որոնց գարշելի երշիկների քաշվիցի հարեւանությամբ ընկած մետաղադրամը նույնիսկ սեւ է կտրում ինչպես գտնեմ քեզ գրողը տանի Սեւ Աղամի եւ Խուանիտո Տրուկուպեյի** ցնորական այս դրախտում ինչպես գտնեմ դեղին ճաքճքված պատերով մուգ-կարմրավուն ինչպես եպիսկոպոսի վարաչա եզրազարդերով ու լուսամուտի թուխակային կանաչ ապակիներով երկնագույն շրջանակներով քո տունը խլճուկ տների այս շփոթի մեջ ինչպես գտնեմ քո տունը որտեղ ձեռքիդ վարդը բացված է ինչպես վարդախեցի ինչ ժամ է ցույց տալիս այս պահին քո ժամացույցը այս դժոխքում որտեղ անարժան խուժանը չի ընդունում իմ սահմանածը հիմա կեսօրվա ժամը երեքն է եւ ոչ թե երեկվա երեկոյան ութը թեեւ նման դժոխքում կարելի է խճճել ցերեկն ու երեկոն ինչպես ճանաչեմ քեզ այս կանանց մեջ որոնք դատարկ սենյակներում օրորվում են ճոճերում թափահարելով փեշերը որպեսզի փոքր-ինչ հովացնեն ոտքերի բոցավառվող արանքը...»: Այսպես մտածելով նա նայում էր բաց լուսամուտին եւ հարցնում. «Որտե՞ղ է ապրում իմ հուսահատության Մանուելա Սանչեսը, նա, որի հազին աղամանդի շողերը վրան փրփուրե շրջազգեստ է, մաքուր ոսկուց ապարոչ, որ ուղարկել էին նրան թագադրման առաջին տարեդարձի առթիվ»: Եվ վերջապես մեկը, դիվային այդ աղմուկի մեջ լսելով նրան, ասաց. «Հը՛մ, գիտեմ, թե ում եք փնտրում: Մի հաստաքամակ, քիթը վեր ցցածի մեկն է, որ կարծում է, թե ինքը բոլոր կապիկներից ամենակապիկն է: Նա ապրում է ահա այնտեղ, սենյոր, այ, այն տանը»: Ոչնչով մեջքի

---

* Այստեղ թվարկված են կոլումբիական ժողովրդական պարերի անունները:

** Խուանիտո Տրուկուպեյ - բանահյուսական կերպար, զվարճաբան-պարող:

չընկնող, թերեւ՝ միայն ճչացող գույներով, ներկված մի տուն էր, շեմին չան կեղտի կույտեր. երեւում էր, որ մեկը քիչ առաջ սայթաքել էր այդ կույտը տրորելով. աղքատ այդ տունը ոչ մի կերպ չէր ներդաշնակվում տեսակցության ժամանակ փոխարքայական բազկաթոռին նստած Մանուելա Սանչեսի պատկերի հետ. «Մայր իմ, Բենդիսիոն Ալվարադո, ուժ տուր ինձ, որ կարողանամ ներս մտնել...»: Բայց ներս մտնելուց առաջ նա տասը անգամ պտտվեց թաղամասում, հետո շունչը տեղը բերելով, երեք անգամ թրխկացրեց դուռը, եւ այդ երեք թակոցները հնչեցին որպես երեք աղաչանք. նա կանգնել ու սպասում էր մուտքի չիկացած ստվերում եւ չէր հասկանում, թե որտեղից է փչում սոսկալի գարշահոտը. կամ օդն էր հոտել շոգից, կամ հենց ինքն էր հուզմունքից հոտ բաց թողել: Վերջապես Մանուելա Սանչեսի մայրը նրան տարավ պաղ, ընդարձակ մի դահլիճ, որտեղ նեխած ձկան հոտ կար, իսկ ինքը գնաց արթնացնելու դստերը, որ քնած էր սիեստայի այդ ժամին. իսկ նա նստեց ու աչքի անցկացրեց խղճուկ այդ դահլիճը, իր դժբախտության այդ սենյակը եւ պատերին նկատեց անձրեւահոսքի հետքեր, տեսավ մաշված մի բազմոց, մաշված կաշվով երկու աթոռակ (նույնպիսի երրորդի վրա ինքն էր նստած), տեսավ կորատված լարերով մի դաշնամուր: Եվ ուրիշ ոչինչ չկար դահլիճում. «Ոչինչ, գրողը տանի, եւ այս համատարած խեղճությունը տեսնելու համա՞ր ես այսքան տառապեցի»: Մանուելա Սանչեսի մայրը ետ եկավ ձեռագործի զամբյուղով, նստեց աթոռակներից մեկին եւ սկսեց ժանյակ գործել, քանի դեռ դուստրը հագնվում էր, սանրվում, փնտրում իր լավագույն կոշիկները, որպեսզի ինչպես հարկն էր պատշաճ ներկայանա անսպասելի հյուրին, անակնկալ հայտնված ծերուկին, իսկ սա դեռեւս շփոթմունքի մեջ փնթփնթում էր քթի տակ. «Որտեղ ես դու իմ դժբախտության Մանուելա Սանչես ես եկել եմ քո տուն բայց չեմ տեսնում քեզ այս աղքատիկ տունը չեմ զգում խոլորձի բույրով քո շունչը զգում եմ միայն թերմացքի գարշահոտը ուր է քո վարդը ուր է քո սերը ազատիր ինձ իմ շնային չարչարանքների բանտից»: Այսպես փնթփնթում էր նա քթի տակ, հառաչելով եւ., ահա, ներքին սենյակի շեմին հայտնվեց Մանուելա Սանչեսը. ճիշտ այնպիսին էր, ինչպիսին երեւակայում էր իր անուրջներում, երազներում, բայց եւ բոլորովին ուրիշ էր, մի

երազի արտացոլանքն էր մյուսի հայելում. էժանագին չթե շրջազգեստ էր հագել, մաշված կոշիկներ, մազերը հապշտապ հավաքել էր ասանրի-տակ, բայց միեւնույն է, աշխարհի ամենագեղեցիկ ու ամենահպարտ կինն էր նա, եւ վարդը բոցավառվում էր նրա ձեռքին. մի այնպիսի շլացուցիչ տեսիլք էր, որ նա իր մեջ հազիվ ուժ գտավ ոտքի ելնելու, գլուխ խոնարհելու, երբ Մանուելան, թագուհուն վայել բարձր պահած գլխով ողջունեց նրան. «Աստված պահապան ձեզ, ձերդ գերազանցություն»,- ողջունեց ու նստեց բազմոցին, ուր չէր կարող հասնել հյուրից արձակվող տոպանքի դարշահոտը, մատներով պտտեցրեց վարդը ու համարձակ նայեց ուղիղ հյուրի դեմքին. «Ես տեսա չղջիկի շրթեր, մեծաչղջիկի շրթեր, ջրահեղձի չթարթվող աչքեր, որ ինձ էին նայում ասես ջրի շերտերի տակից, տեսա անմազ, հողագույն, թորշոմած դեմքի մաշկը, բայց այդ մաշկը լավ խնամված ու հարթ էր ձեռքերի վրա. աջ ձեռքը նա պահում էր ծնկին, եւ հրաչալի երեւում էր պրեզիդենտական կնիքով մատանին. վուշն ճերմակ կոստյումը կախված էր նրանից, ինչպես հանդերձարանի կախիչից, կոշիկները խոշոր էին - հանգուցյալներին են նման կոշիկներ հագցնում, սենյոր: Ես կարդում էի նրա թաքուն մտքերը, զգում էի ամենաղաժան, ողջ երկրով մեկ ատելի, խղճահարության, կարեկցանքի կաթիլ իսկ չառաջացնող այդ զառամ ծերունու իշխանության անիրական ուժը, իսկ նա կեպին էր թափահարում ու տնտղում ինձ կյանքի մյուս ափից: «Աստված իմ, ինչ մռայլ մարդ է»,- սարսափահար մտածեցի ես, բայց շատ սառը հարցրի. «Ինչո՞վ կարող եմ ծառայել, ձերդ գերազանցությանը»,- ինչին նա հանդիսավոր պատասխանեց. «Ես եկել եմ հենց այնպես, թագուհի: Հենց այնպես»: Այս այցելությունը նրան թեթեւություն չպարգեւեց: Սկսեց ամեն օր այցելել, ամեն օր՝ ամիսներ շարունակ, ամեն անգամ սիեստայի շոգ, մեռյալ ժամերին. նա հատկապես այդ ժամերն էր ընտրել, որ կարողանար խաբել ազգային անվտանգության ծառայությանը - թող կարծեն մոր մոտ է գնում: Բայց միայն ինքը չգիտեր այն, ինչ հայտնի էր ողջ աշխարհին. գեներալ Ռոդրիգո դե Ագիլարի կարաբինավորները տանիքներին պառկած ապահովում էին նրա յուրաքանչյուր քայլը, միտումնավոր խանգարում փողոցային երթեւեկությունը, առաջացնելով դիվային շփոթ, հետո խզակոթերով մաքրում էին

փողոցը անցորդներից. դադարեցվում էին բոլոր տեսակի շարժումները այն փողոցներում, որտեղով պիտի անցներ նա. այդ փողոցներն ամայանում էին ժամը երկուսից մինչեւ հինգը. կարաբինավորները հրաման էին ստացել առանց նախազգուշացման կրակել նրանց վրա, ովքեր կհամարձակվեն այդ ժամերին հայտնվել պատշգամբներում: Միայն ամենաանհետաքրքրասերներն էին հաջողեցնում հետեւել հասարակ մեքենայի դիմակով պրեզիդենտական լիմուզինի ընթացքին, հասցնում էին տեսնել մեքենան նստած, վուշե սպիտակ կոստյումը հագին տաքարյուն ծերունուն, տեսնում էին նրա գունատ, որբի անհամար լուսաբացներ տեսած նրա երեսը. բոլորից ծածուկ այդ ծերը վշտի արցունքներ էր թափում, եւ նրա պետքը չէր, թե ինչ կմտածեն կամ կասեն մարդիկ իր ձեռքը սրտին սեղմելու համար: Նրա ողջ տեսքը վկայում էր, որ նա չի իշխում իր հոգուն, որ մատաղի գառան նման այս ամայի փողոցներով, շոգի այս մեռյալ ժամերին, երբ օդը դառնում է հալված ապակու նման, գնում է մատնվելու հավետ կորստյան: Եվ հետզհետե, անըմբռնելի ու տարօրինակ նրա արատների շուրջ եղած խոսակցությունները վերածվեցին ասեկոսեների՝ իբր սիեստայի ժամերը նա անց է կացնում ոչ թե մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի տանը, այլ Մանուելա Սանչեսի խաղաղ լճախորշում, նրա բնակարանի սովերաշատ դահլիճում, Մանուելայի մոր աչալուրջ հսկողության տակ. Մանուելայի մայրն առանց հոգնության իր ժանյակներն էր գործում, ոչ մի ակնթարթ չթողնելով դատերը պրեզիդենտի հետ միայնակ, բայց եւ ջանալով մնալ աննկատ - վերջիվերջո պրեզիդենտը հանուն իր դատեր էր ճանապարհին թանկարժեք խաղալիքների, հազար ու մի տեսակ խորամանկ մեքենաների վրա փող չսայլում, ձգտում զբաղեցնել նրան մագնետիզմի խորհրդավորություններով, նվիրում էր լեռնային բյուրեղապակուց ճնշածան, որի բեկորում, լուսախաղի շնորհիվ, գերուհիների նման ձնաբքեր էին մրրկում, նվիրում էր աստղագիտական եւ բժշկական տարքեր, մանոմետր, մետրոնոմ, գիրոսկոպ, նա գնում էր դրանք որտեղից պատահեր, դրամ էր շաղ տալիս ի հեճուկս մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի դժգոհության. նա երջանկություն էր համարում զվարճանալը Մանուելա Սանչեսի հետ, երբ ականջին մոտեցնում էր ծովային այն խեցին, որը ոչ թե ծովի ալեբախումների աղ-

մուկն էր հաղորդում, այլ վարչակարգի պատվին ստեղծված զինվորական քայլերգը. նա վառվող լուցկին մոտեցնում էր պատի ջերմաչափին, որպեսզի Մանուելա Սանչեսը կարողանար տեսնել, թե ինչպես է վերուվար անում իր նվիրական խոհերի ճզմված սնդիկը. նա ոչինչ չէր խնդրում Մանուելայից, միայն նայում էր նրան, ոչ մի արարքով չէր մատնում մտադրությունը, լռելյայն փորձում էր ճնշել նրան խենթ ու խելառ նվերներով, դրանց միջոցով ասել այն, ինչը չէր կարողանում արտահայտել բառերով. չէ՞ որ իր ցանկությունները վարժվել էր պարուրել սեփական ամենակարողության, մի տեսակ տեսանելի, շոշափելի, նյութականացված խորհրդանշաններով: Եվ ահա մի անգամ, Մանուելա Սանչեսի ծննդյան օրը, նա առաջարկեց բաց անել պատուհանը, որպեսզի թագուհին հրճվի հայացքի առջև փռվող տեսարանով. «Ես բաց արեցի, սենյոր, եւ քարացա սարսափից: Ի՞նչ էին արել նրանք իմ խեղճ, Շնային գզվռտոցների թաղամասը: Ես տեսա հապշտապ կառուցված ու կլրով ճերմակեցրած փայտե տներ, տեսա երկնագույն, պտտվող շատրվաններով արհեստական լճակներ, տեսա սիրամարգեր, սպիտակ, ինչպես սառցե պտուտահոդմ ԴԴՏ-ի փոշուամսյ. պատկերացնո՞ւմ եք, սենյոր»: Ժամանակին ծովային հետեւակի համար կառուցված թաղամասի խղճուկ պատճենավորումն էր փռված լուսամուտից այն կողմ. ամեն ինչ կառուցվել էր գիշերով, ծածուկ, որ աղմուկ չբարձրանա, կոտորել էին բոլոր շներին, իսկ բնակիչներին փտելու աքսորել աղտեղությունների մի այլ աղբահոր. նոր թաղամաս էր վեր խոյացել, Մանուելա Սանչեսի թաղամասը, որ նա պիտի տեսներ իր լուսամուտից, իր ծննդյան օրը. «Ահա, տես, թագուհի, ու երջանիկ եղիր»: Իշխանության ամենազորությամբ, իշխանության հնարավորություններով աղջկան չշմեցնելու, գայթակղելու, նրա շատ նուրբ, բայց համառ անզիջողականությունը ցնցելու մի փորձ էր կատարվածը. «Խնդրում եմ չսեղմվել ինձ, ձերդ գերազանցություն: Չէ՞ որ մայրս այստեղ է»: Եվ նա ստիպված էր հաշվի առնել դստեր պատվի բանալիները պահպանող մորը, եւ ցանկությունից տառապելով, ցանկության մեջ աղտոտվելով, ինքն իր ներսում կրծում էր չարության ոսկորը, իսկ Մանուելա Սանչեսը զվանաբանի ծառի պտղի հյութով խառնված սառը ջուր էր մատուցում, եւ նա ծերունական

դանդաղ կումերով խմում էր այդ ջուրը, համբերությամբ տանում երակների սառցային ցավը, միգրենի ներթափանցող խիթերը, ճգնելով ցույց չտալ տարիքի թուլությունները, վախենալով, թե Մանուելը հանկարծ իրեն կսիրի խղճահարությունից, ոչ այնպես, ինչպես ինքն է տենչում, իսկ Մանուելան թեեւ կողքին նստած, թեեւ մոտիկ, բայց նետել էր նրան մենության անտանելի մի խորխորատ, եւ նա մեռնում էր նրան զոնե շնչով քավելու ցանկությունից, եւ այս վիճակը պահպանվում էր մինչեւ այն պահը, երբ լարովի բնական չափսերով հրեշտակը սենյակներում ճախրելով ու զանգակը խփելով ազդարարում էր, որ ավարտվել է ժամադրությունը. «Իմ մահվան ժամն ավետեց այդ հրեշտակը»: Նա երկարաձգում էր իր ներկայության վերջին րոպեները՝ վայելելով դահլիճի օդի վերջին ումպերը, նա ձգում էր ակնթարթը, արկղիկների մեջ խաղալիքները դասավորելով, որպեսզի խոնավ, աղով գերհագեցած այս եղանակին սարկոմայի նման ժանգը չփոշիացներ դրանց,- «Մի րոպե, թագուհի: Ես միայն թաքցնեմ այս ամենը»: Բայց ահա, ավարտվեց այդ րոպեն եւ նա պիտի հեռանա, մինչեւ նոր օրը բացվի: Մինչեւ վաղը մի ամբողջ կյանք է, մի ամբողջ հավիտենություն, իսկ առայժմ նրան չէր բավականացնում մի ակնթարթը, ակնթարթի մի մասը՝ որ էլի մի անգամ նայեր անհասանելի աղջկան, զանգակով հրեշտակի ճախրանքից քար կտրած աղջկան, որ թառամած վարդը վեր առած, սպասում էր երկրպագուի հեռանալուն: Վերջապես նա գնում էր, չքվում, վերածվում իրիկնամուտի ստվերի, հեռանում խայտառակության տառապալից վախով, հասարակության աչքին ծիծաղելի երեւալու սարսափով. նա չգիտեր, որ վաղուց ի վեր ծիծաղում էին իր վրա, որ իր կրքից ասում-խոսում էին բոլոր խաչմերուկներում եւ նույնիսկ երգ էին հորինել եւ այդ երգը միայն ինքը չէր լսել: Ողջ երկիրը գիտեր այդ երգը, նույնիսկ կոկորդները պատռելով թութակներն էին երգում ամեն եռնաբակում: «Աչքերը թաց, թախիծը կանաչ գեներալն է քայլում սիրահարված, ձեռքը կրծքին սեղմած: Մի սրան նայեք. ամեն ինչ խժռել է իր չար կրքով՝ թե արժանապատվություն եւ թե իշխանություն: Ողջ երկրին է հայտնի՝ կառավարում է նա մեզ երազում»: Այս երգը ընտանի թութակներից սովորեցին նաեւ վայրիները, սրանցից էլ թոցրեցին կաչաղակներն ու ծաղրահավիկնե-

ը, եւ սրանց շնորհիվ երգը դուրս եկավ մայրաքաղաքի սահմաններից, սկսեց երգվել ողջ երկրով մեկ, ամենուր, ազգային անվտանգության աշխատակիցներից ցրած մարդկային խմբերը համերաշխ ճչոցով այդ երգի բառերն էին արտասանում. հետո այլ քառյակներ էլ ավելացան, ահա մեկը. «Մեր սիրելի զեներալը ողջ երկիրը մուրտառեց. այնքան լավ գործ կատարեց, որ իր գլխով տակն արեց, իսկ նորագույն օրենքը իր քամակով շարադրեց»: Նոր քառյակները բազմանում հա բազմանում էին, հորինել էին սկսել նույնիսկ թութակները՝ շվոթեցնելով ազգային անվտանգության ծառայությանը, որ ճգնում էր արմատախիլ անել երգը. ոտքից գլուխ զինված զինվորական պարեկները ներխուժում էին ետնաբակերն ու գնդակահարում վարչակարգի հիմքերը քանդող թութակներին, թառերից հանելով ողջ-ողջ գցում շների առաջ. նույնիսկ պաշարման դրություն հայտարարվեց, որ այդկերպ ոչնչացնեն ըմբոստ քառյակները, այդկերպ զրկեն մարդկանց տեսանելին տեսնելու հնարավորությունից՝ թե ինչպես է նա մթնշաղին գաղտագողի մոտենում պարտի ետնամուտքին, ինչպես է ներս սողսկում գիշերային թավուտաշրջիկի նման, ինչպես է անցնում խոհանոցով եւ թաքնվում այրվող ատթարի ծխի մեջ, որով բնակելի սենյակներից դուրս էր վռնդում մժղուկներին. «Մինչեւ վաղը, թագուհի: Մինչեւ վաղը»: Իսկ հաջորդ օրը, ճիշտ նույն ժամին նա կրկին ներկայանում էր Մանուելա Սանչեսին՝ ծանրաբեռնված աներեւակայելի ընծաների հսկայական քանակությամբ եւ, ի վերջո, այնքան նվեր կուտակվեց, որ հարկ եղավ Մանուելայի տունը միացնել հարեւան տներին. այս տները որպես կից շինություն միացան Մանուելայի բնակարանի այն դահլիճին, ուր հյուրընկալվում էր պրեզիդենտը, եւ այս ամենը միասին վերցրած վերածվեց վիթխարի, խավար մի պահեստի, որի ներսում պահվում էին բոլոր ժամանակների ամենատարբեր ժամացույցներ, բոլոր տեսակների ու նմուշների գրամաֆոններ՝ սկսած ամենապարզունակից, գլանային-ից, վերջացրած նորագույն, նիկելապատ մեմբրանով, բազմաթիվ ձեւքի, ոտքի եւ էլեկտրական կարի մեքենաներ, գալվանոմետրեր, երաժշտական զարդարկղեր, օպտիկական աճպարարությունների սարքեր, չորացրած թիթեռների հավաքածոներ, ասիական բույսերի հերբարիումներ, ֆիզիոթերապեւտիկ եւ ֆիզիկա-

կան կուլտուրայի փորձասենյակների սարքավորումներ, աստղագիտական եւ ֆիզիկայի գործիքներ, ինչպես նաեւ մարդկանց կապկելու համար ներքին մեխանիզմ ունեցող անհամար տիկնիկներ. պահեստի շատ բաժանմունքներում մարդու ոտք չէր դիպչում, իրերը մնում էին իրենց տեղերում ու փոշոտվում, այս պահեստը նույնիսկ չէին ավլում, ոչ մեկը կապ չուներ պահեստի հետ, առավել եւս Մանուելա Սանչեսը. աշխարհում ամեն ինչի նկատմամբ անտարբեր էր դարձել նա ու սառը, սկսած այն սեւ շաբաթ օրից, երբ իրեն թաղադրեցին դիմակահանդեսում. «Այդ օրն ինձ դժբախտություն բաժին հասավ, ես դարձա գեղեցկության թագուհի: Այդ երեկո ինձ համար աշխարհի վերջը եղավ: Բոլոր իմ նախկին երկրպագուները մեկը մյուսի ետեւից մեռան՝ որը սրտի պայթյունից, որն այս կամ այն անհայտ հիվանդությունից, անհետ կորան իմ բոլոր ընկերուհիները»: Հարազատ տնից դուրս չգալով, նա հայտնվեց օտար, անծանոթ թաղամասում, որովհետեւ շուրջբոլորը վերակառուցված էր, վերաձեւած, հայտնվեց ճակատագրի ծուղակում, դարձով անսահման իշխանության տեր սիրահարի գերուհին եւ քաջությունը չէր բավականացնում, որ ասեր. «Ոչ», եւ ուժը չէր հերիքում, որ ասեր «Այո», իսկ նա անվերջ հետամտում էր ու հետամտում իր նվաստացնող սիրով, աղջկան նայելով մի տեսակ բութ երկյուղածությամբ, սպիտակ գլխարկը թափահարելով, քրտինքից թրջված, այնքան վերացած ինքն իրենից, որ Մանուելան երբեմն այսպես էր մտածում. «Բավական է: Սա նա՞ է, արդյոք: Գուցե սա սարսափելի մի ուրվական է»: Բայց նա ուրվական չէր: Մանուելան տեսնում էր, թե ինչպես է նա քայլում, ինչպես է խմում մրգաջուրը, քիթը վեր քաշում բաժակը ձեռքին, ցանցահյուս բազկաթոռին նստած ննջելիս, իրիկնամուտի այն ժամերին, երբ ճռռիկների պղնձյա ճռռոցը թանձրացնում էր դահլիճի մթնշաղը, լսում էր նրա խռմփոցը եւ վեր թռչում տեղից, որսում նրա ձեռքից ընկնող ջրով բաժակը. «Զգույշ, ձերդ գերազանցություն»: Նա տեղնուտեղը վախեցած արթնանում էր ու մրմնջում. «Ես բոլորովին էլ քնած չէի, թագուհի: Միայն աչքերս էի փակել»: Նա անտեղյակ էր, որ Մանուելան հասցրել էր ժամանակին վերցնել իր խռմփոցի միջոցին վայր ընկնող բաժակը, նա չէր նկատում աղջկա նուրբ եւ հարպիկ հնարամտությունները, որոնցով Մա-

նուելան կարողանում էր միաժամանակ թե կողքին լինել ու խնամք հոգալ, թե խուսափել նրանից: Այսպես շարունակվեց մինչեւ անելանելի այն օրը, երբ նա հայտնվեց արտակարգ հուզված եւ խոսեց բառերից խեղդվելով. «Այս գիշեր, Թագուհի, ես կմատուցեմ քեզ չտեսնված ու չլսված մի նվեր, տիեզերական նվեր. այս գիշեր ժամը տասնմեկն անց վեց րոպեին հրաշք կտեսնես. երկնքով աստղ կանցնի եւ կանցնի քեզ համար, Թագուհի, միայն քեզ համար»:

Գիսաստղ էր մոտենում. մեզ համար գիսաստղի անցումը մեր երկնակամարով դարձավ մեծագույն մի հիասթափություն, պատմության ամենատխուր իրադարձությունը, դարձավ խորտակված հույսերի օր, որովհետեւ երկար տարիներ լուր էր պտտվում, թե գեներալի կյանքի տեւողությունը ենթակա չէ երկրային, սովորական ժամանակի ընթացքին, պայմանավորված է գիսաստղի պտույտներով, որ նա ապրելու է մինչեւ գիսաստղի հայտնվելը, ճակատագիրն է այդպիսին եւ որքան էլ հակառակը պնդեն շողոքորթները եւ հացկատակները, միեւնույն է, նրան վիճակված չէ տեսնել գիսաստղի երկրորդ անցումը: Այնպես որ՝ մենք սպասում էինք գիսաստղին, ինչպես վերածնության ակնթարթին, ինչպես տիեզերական հրաշագործ մի իրադարձության, որ պատահում է հարյուր տարին մեկ անգամ, նոյեմբերյան գիշերով. այդ գիշերվա համար մենք պատրաստել էինք տոնական հրավառություն, ուրախ երաժշտություն էինք հորինել, հարյուր տարվա մեջ առաջին անգամ հանդիսավոր զանգերի ղողանջը ոչ թե փառաբանելու էին նրան, այլ իրենց տասնմեկ զարկերով, երեկոյան ուղիղ ժամը տասնմեկին նրա անխուսափելի կործանման բոթն էին ավետելու. գիսաստղի պատմական հայտնության սպասման մեջ նա ելել էր Մանուելա Սանչեսի տան հարթ կտուրը, նստել Մանուելայի եւ նրա մոր միջեւ եւ աղմկալից փնչացնում էր, որ չլսվեր վախեցած սրտի զարկը, փնչացնում էր ու նայում սարսափելի նախազգացումից անշարժացած երկնքին, մոտիկից զգալով Մանուելա Սանչեսի գիշերային, քաղցր շնչառությունը, նրա մարմնի հուզիչ բույրերը: Բայց ահա լսվեցին գիսաստղը հմայող թմբուկների հեռավոր զարկերը, լսվեց խուլ ողբը, ստորերկրյա հրաբխային դղրդոցի նման մարդկային ամբոխների գվվոցը. մարդիկ ծնկի էին իջել աշխարհի

կործանման լրաբերի առաջ, խորհրդավոր այն էակի առաջ, ում համար ինքը փոշու հատիկ էր, իր անսահման իշխանությունը՝ ոչնչություն, ում համար իր տարիքն ակնթարթից էլ կարճ էր, քանզի հենց նա էր իսկական հավերժությունը: Եվ նա առաջին անգամ զգաց ժամանակի անհունությունը, առաջին անգամ սարսափեց իր մահկանացու լինելուց եւ այդ պահին տեսավ Մանուելային. «Տես, Թագուհի, այդ նա է»: Գիսաստղը գալիս էր տիեզերքի խորքից, դուրս լողում տիեզերական անհունից, նա ավելի հին էր, քան մեր աշխարհը, վշտահար, կրակե մի մեղուզա էր՝ կես երկնքի մեծության. նրա ընթացքի յուրաքանչյուր վայրկյանը մի ամբողջ միլիոն կիլոմետրերով մոտեցնում էր նրան իր հարազատ ակունքներին. շուտով բոլորը լսեցին նրա շարժման շրշյունը, կարծես քամուց շրշալ սկսեցին արծաթագույն ֆոլգայից կտրատված ժապավենները. բոլորը տեսան նրա վշտալի դեմքը, արտասուքով լի աչքերը, մազերի օձանման գդալները, որ տիեզերական մրրիկներն էին գզգզել. նա անցնում էր ետեւից աստղափոշու լուսարձակում թողնելով, աստղների պարս, ածխացած լուսաբեկորներ, հոր ու նման այն բեկորներին, որոնց անկման հարվածներից էին առաջացել օվկիանոսային խորխորատները, երբ մեր երկրի վրա դեռեւս չէր ծնվել ժամանակը. անցնում էր կրակե մեղուզան՝ զզգված, լույս արձակող, օձանման մազերով: «Նայիր, Թագուհի, լավ նայիր, նա մեկ էլ հարյուր տարի անց է հայտնվելու», Մանուելա Սանչեսը լսեց նրա շշուկը եւ վախից խաչակնքեց. գիսաստղի ֆոսֆորական շողարձակման տակ, աստղափոշով պատված նա գեղեցիկ էր, ինչպես երբեք. խաչակնքեց ու բռնեց նրա ձեռքը. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո, վերջապես կատարվեց Մանուելա Սանչեսը բռնեց իմ ձեռքը»: Մանուելան չզգաց էլ, թե ինչպես դա պատահեց, որովհետեւ իր դիմաց տեսնելով երախը բացող հավիտենության անդունդը, սոսկաց, իրենից անկախ փորձեց որեւէ հենարան գտնել եւ բնազդաբար նրա ձեռքին հենվեց, անգիտակցորեն բռնեց դիշատչի այդ խնամված, հարթամաշկ, պրեզիդենտական կնիքը անանուն մատին հագած ձեռքը, դանդաղ բոցկլտացող ածուխների վրա թխված, ներքին կրակով լեցուն այդ ձեռքը: Իսկ մեկ գրեթե չհուզեց աստվածաշնչյան հրաշքը, կրակե մեղուզան, որ խավարեցրեց համաստեղությունները եւ երկրի վրա

աստեղնային անձրեւ չաղեց, մենք գրեթե ուշք չդարձրեցինք այդ հրաշքի վրա, քանի որ կլանված սպասում էինք դրա անհապաղ հետեւանքներին. նույնիսկ ամենակասկածամիտներն էին հավատում, որ ուր որ է, անհավանական մի բան է կատարվելու, մահացու մեծ աղետ, կործանվելու են քրիստոնեության հիմքերը եւ սկսվելու է նոր՝ երրորդ կտակարանի դարաշրջան. մեծ փոփոխության ապարդյուն սպասման մեջ մենք փողոցում մնացինք մինչեւ առավոտ, իսկ հետո տուն գնացինք՝ տառապած ոչ թե անքնությունից, այլ մեր անհամբեր սպասման լարումից. մենք մեր տները ցրվեցինք թափառելով աստղային բեկորներով լի, աստղային փոշով պատած փողոցներում, եւ հավաքարար կանայք արդեն ավլում էին դիսաստղի թողած երկնային այդ աղբը, իսկ մենք, դեռեւս, չէինք ուզում հավատալ, որ ոչինչ չպատահեց, ոչինչ չկատարվեց, որ զոհ դարձանք պատմական մեծագույն խաբեությանը. չէ՞ որ պաշտոնական օրգանները հայտարարել էին, որ դիսաստղի բարեհաջող անցումը չար ուժերի դեմ վարչակարգի հաղթանակն է մատնանշելու: Կրակե մեղուպայի բարեհաջող անցումն օգտագործվեց նաեւ պրեզիդենտի տարօրինակ հիվանդությունների շուրջ ասեկոսները դադարեցնելու պայքարում - մի՞թե հիվանդ է այն մարդը, որը կառավարում է երկնային ճամփորդների ընթացքը: Հուշակվեց նրա հանդիսավոր ուղերձը ժողովրդին, որով նա հայտարարում էր իր վճիռը՝ մնալ պրեզիդենտական աթոռում ընդհուպ մինչեւ դիսաստղի հաջորդ հայտնությունը: Երաժշտություն էր թնդում, հրավառություն էր,- դրանցով մենք նրա մահը պիտի տոնեինք ու վարչակարգի անկումը,- բայց նա անտարբեր էր երաժշտության ու դե Արմաս հրապարակ եկած ցուցարարների նկատմամբ. մարդիկ բղավում էին ցուցատախտակներին գրածը. «Հավերժ փառք հայրենիքի փրկչին: Թող ապրի նա դարեր ու պատմի մեր մասին ապագա սերունդներին»: Այս ամենի վրա նա ուշադրություն չէր դարձնում, չէր զբաղվում նույնիսկ պետական անհետաձգելի գործերով, հանձնարարելով դրանք աստիճանավորներին, որովհետեւ նրան տանջում էր Մանուելա Սանչեսի ձեռքի այրման հիշողությունը. նա մեռնում էր երջանկության այդ ակնթարթը մեկ անգամ էլ վայելելու ցանկությունից. այդ պահը վերապրելու համար նա համաձայն էր նույնիսկ, որ փոխվեր իրե-

րի բնույթը, խախտվեր տիեզերքի կարգը. նա մի այնպիսի կրքով էր տենչում այդ պահը, որ, ի վերջո, խնդրեց գիտնականներին պիրոտեխնիկական գիսաստղ պատրաստել, թռչող աստղ, երկնային կրակե վիշապ, ցնցող տպավորություն գործող մի այնպիսի սարք, որ հավերժության դեմքի առաջ, գեղեցիկ, մանկամարդ կինը զլխապտույտ ունենար, սակայն միակ բանը, որ կարողացան անել գիտնականները, խոստացան, որ արեգակի լրիվ խավարում կլինի, հաջորդ շաբաթվա չորեքշաբթի օրը, կեսօրվա ժամը չորսին. ստիպված էր համաձայնել. խավարումը, իրոք, ստացվեց ինչպես հարկն էր, օրը յերեկով իսկական գիշեր սկսվեց, աստղերը հայտնվեցին, ծաղիկները քուն մտան, հավերը թռվես նստեցին, անհանգստացան շներն ու կատուները, իսկ նա Մանուելա Սանչեսի կողքին նստած կլանում էր աղջկա շունչը, նրա իրիկնային թեթեւ շունչը, որ վերածվում էր գիշերային քաղցր շնչի, կլանում էր մթությունից խաբված, թառամող վարդի բույրը. «Միայն քեզ համար է սա, թագուհի, քեզ համար է այս խավարումը»: Բայց Մանուելա Սանչեսը ոչինչ չպատասխանեց, չդիպավ նրա ձեռքին, եւ նա այլեւս չէր զգում աղջկա շունչը - աղջիկը նրան անիրական էր թվում: Եվ այդժամ նա մեկնեց ձեռքը, որ մթության մեջ քսվի նրան, բայց ձեռքը հանդիպեց դատարկության. մատների ծայրով նա շոշափեց աթոռը, որի վրա քիչ առաջ նստած էր Մանուելան,- աթոռը դեռ պահպանել էր աղջկա բույրը,- բայց նա չկար, չքվել էր, եւ նա սկսեց որոնել նրան հսկայական տան մեջ՝ ափլփելով պատերը, անկյունները, խավարին նայելով լուսնոտի աչքերով ու հուսահատ հարցնելով. «Որտեղ ես իմ դժբախտության Մանուելա Սանչես ես փնտրում ու չեմ գտնում քեզ քո խավարման գիշերում որտեղ է քո անգութ ձեռքը որտեղ է քո վարդը»: Անծանոթ ջրերում մոլորված ջրասույզի պես նա լողում էր խավարում, դեմ առնելով մեկ անհրեւակայելի լանգուստի՝ դալվանոմետրի, մեկ անհավանական կորալների՝ երաժշտական ժամացույցների, մեկ զարմանահրաշ ծովախեցգետինների, որ աճպարարության սարքերն էին, բայց ոչ մի տեղ խավարի այդ ջրերում, իր ընծաների այդ տուն-պահեստում նա չէր գտնում Մանուելա Սանչեսին, չէր զգում նույնիսկ խոլորձի բույրով նրա շունչը եւ աստիճանաբար, վաղանցիկ գիշերվա ստվերների չքվելու հետ նրան էր հասնում դաժան

ճշմարտության լույսը, պատրանքը ցրող լույսը: Եվ կեսօրվա ժամը վեցին ծագած լուսաբացի այդ ժամին նա այնպիսի անհուն տխրություն ապրեց, որ չէր ապրել երբեք, եւ զգաց իրեն աստծուց էլ տարեց, նա այնպես միայնակ էր վիթխարի ու ամայի այս տանը, ինչպես ոչ ոք աշխարհում. «Հավիտենական բացարձակ մենություն է առանց քեզ իմ Թագուհի որ կորար խավարման հանելուկային գիշերում ընդմիշտ ու հավիտյանս հավիտենից»: Անվերջանալիորեն՝ երկար ձգվեցին դեռ նրա իշխանության տարիները, բայց նա այդպես էլ չգտավ Մանուելա Սանչեսին, թեեւ հաճախ էր փնտրում նրան տուն-պահեստի լաբիրինթոսում. «Որտեղ ես իմ կործանման Մանուելա Սանչես»: Մանուելան կարծես գոլորշիացել էր խավարման այն գիշեր: Նրան հայտնեցին, թե տեսել են Մանուելային Պուերտո-Ռիկայի բազմամարդ պարահանդեսում, որտեղ նա, իբր, Ելենա անունն էր կրում, եւ որտեղ նա զանակահարվեց, սակայն հետո պարզվեց՝ Մանուելան չէր. ասացին, թե նա ռումբա է պարել ռումբայի կատարյալ վարպետ Պապա Մոնտերո* Ռումբերոյի հիշատակին նվիրված սոնակատարությանը, բայց պարզվեց՝ Մանուելան չէր. ասացին, թե տեսել են նրան Բարլովենտո կղզիներում, որտեղ քարանձավներ կան, որտեղ պտտում են քարանձավների մուտքերի մոտ, թմրավների զարկերի տակ. ասացին, թե տեսել են Արակատակայում, որտեղ նա պատվում էր պանամական բոժոժների սրընթաց մրրկի տակ. բայց ամեն անգամ էլ պարզվում էր, որ նա չի եղել. «Աստանան է նրան տարել, իմ դեներալ, սատանան, ուրիշ ոչ ոք» - եւ եթե նա չմեռավ այդ օրերին հուսահատությունից, ապա ոչ այն պատճառով, որ ուժ չուներ ինքնասպանության, ոչ, պարզապես գիտեր՝ մեռնելու է ոչ սիրուց, վիճակված չէր իրեն մեռնել սիրուց. գիտեր հեռավոր այն իրիկվանից, երբ իր տիրակալության հենց սկզբում գիմից գուշակ-պայծառատեսին, որպեսզի սա ջրի վրա գուշակեր իր բախտը, որպեսզի հմայված ջուրը ցույց տար այն ամենը, ինչ գրված չէր ձեռքի ափին, ինչը չգիտեին խաղաթուղթը, սուրճի մրուրը, միայն նախաստեղծ ջրի հայելին էր ընդունակ ցույց տալ ճակատագրի նվիրական գաղտնիքը: Եվ նախաստեղծ ջրի այդ հայելու մեջ նա այն ժամանակ տեսավ իր մահը, տեսավ, թե ինչպես է մեռնելու. տեսավ ի-

* Պապա Մոնտերո - Նիկոլաս Գիյենի բանաստեղծության հերոս:

րեն մեռած բնական մահով, քնի մեջ, նիստերի դահլիճին կից առանձնասենյակում, բերանքսիվայր պառկած հատակին, ճիշտ նույն դիրքով, ինչպես քնում էր իր երկար կյանքի ընթացքում դեմքը ափերի մեջ խրած, առանց տարբերանշանի դաշտային համազգեստով, երկարահիտ կոշիկներով՝ ձախին ոսկե խթան, անորոշ մի տարիքում, որ տարուբերվում էր հարյուր յոթի եւ երկու հարյուր երեսուներկու տարիների արանքում:

Հենց այդպես էլ մենք գտանք նրան իր աշնան նախօրյակին, այսինքն ոչ թե նրա, այլ Պատրիսիո Արաքանոսի ահյունը գտանք, եւ ահա նրա կեղծ մահից շատ տարիներ անց, մենք կրկին գտանք նրա մեռած մարմինը նույն տեղում, նույն դիրքով, նույն հագուստով, բայց այս խառը ժամանակներում ոչ ոք ոչ մի հարցում վստահություն չուներ եւ չէր կարող երաշխավորել, թե այս անգամ իրոք նրա մարմինն էր, թե անգղերի բզկտած ու որդերի խժռած գառամյալի դիակը իսկապես նրանն էր. քայքայումից այլանդակված նրա ձեռքը պետության սիրելի զեկավարի ձեռքը չէր, դա այն ձեռքը չէր, որ սեղմվում էր նրա սրտին Մեծ Աղմուկի դարաշրջանի ամենաարտասովոր աղջկա անպատասխան սիրուց. չկար ոչինչ, որ օգներ անսխալ հաստատել նրա անձը: Այդ իմաստում, անշուշտ, զարմանալի ոչինչ չկար, չէ՞ որ ամենավաստակոր ժամանակներում էլ կասկածներ էին պատվում նրա գոյության իսկության շուրջ. նույնիսկ պալատում ծառայողները պատկերացում չունեին նրա իրական տարիքի ու արտաքինի վերաբերյալ, որովհետեւ տարբեր տեղերում եւ տարբեր հանգամանքներում նա ամենատարբեր տեսքով էր ներկայանում. տոնավաճառում, տոմբոլային մասնակցելիս, նա ութսուն տարեկան էր երեւում, ընդունելություններին վաթսուն, իսկ պաշտոնական հանդիսություններին հայտնվում էր քառասունից էլ երիտասարդ տղամարդու տեսքով: Դեսպան Պալմերստոնը, վերջին դիվանագետներից մեկը, որն իր հավատարմագրերը հանձնեց նրան, մեր երկրում արդեւված հուշերում գրել է, որ դժվար է երեւակայել ավելի զառամ ծերունի, քան նա էր, նկարագրել է աննկարագրելի այն խառնաշփոթը, որ տիրում էր պրեզիդենտական պալատում. «Հարկ էր լինում շրջան-*

---

* *Տոմբոլա - տոնավաճառային վիճակախաղ:*

ցել դեն նետված թղթերի, կովի թրիքի, շան կղկղանքի բուրներ: Միջանցքներում նեխում էին շան լափի մնացորդները, հենց այստեղ էլ մրափում էին շները: Ծառայողների սենյակներում նստածներից ոչ մեկը չկարողացավ պատասխանել իմ եւ ոչ մի հարցին, եւ ես ստիպված դիմեցի այդ ժամանակ բնակելի սենյակները զբաղեցրած բորոտներին ու կաթվածահարներին, խնդրելով ցույց տալ ինձ պետական խորհրդի դահլիճ տանող ճանապարհը: Սույն դահլիճում հավեր էին շրջում եւ փորձում կտցահարել ցորենի արտեր պատկերող գոբելենները, իսկ կովերից մեկը, ակնհայտորեն խժռելու մտադրությամբ, պատառոտում էր եպիսկոպոսի դիմանկարով կտավը: Ինչ վերաբերում է պրեզիդենտին, ապա ես խսկույն գլխի ընկա, որ կոճղի նման խուլ է նա: Նա ոչ միայն հարցերիս պատասխանում էր ինչպես պատահեր, այլեւ ափսոսանք հայտնեց, որ լռում են իր թռչնակները, այնինչ նրանք երգում էին կոկորդները ճղելով, եւ քեզ թվում էր, թե վաղ լուսաբացի ժամերին քայլում ես կուսական անտառով: Հանկարծ նա ընդհատեց հավատարմագրերն ընդունելու արարողությունը, պայծառացավ, ափը շերեփ դարձրած մոտեցրեց ականջին եւ գլխով անելով լուսամուտի կողմը, որից այն կողմ ժամանակին ծովն էր ալիքվում, իսկ հիմա փոշոտ հարթություն էր, բղավեց ամբողջ ուժով, ինձ կոչելով Ստիտսոն. «Լսո՜ւմ եք, իմ թանկագին Սաֆատսոն: Ջորիների դափյուն է: Նրանք փախչում են, որովհետեւ ծովը ետ է գալիս: Լսո՞ւմ եք»: Անհավատալի էր, որ այդ զառամ ծերուկը մի ժամանակ ֆեդերալիստների առաջնորդն է եղել, ժողովրդական կուռք, որն իր վարչակարգի առաջին տարիներին սիրում էր անակնկալ հայտնվել քաղաքներում ու գյուղերում գրեթե առանց պահակախմբի, միայն մաչետեով զինված մեն-միակ գուսխիրոյի ուղեկցությամբ եւ փոքրիկ շքախմբով՝ կազմված դեպուտատներից ու սենատորներից, որոնց նա նշանակում էր մատի մի շարժումով, ստամոքսի ձայնին միայն ականջ դնելով: Այս կամ այն գյուղում հայտնվելով, նա հետաքրքրվում էր բերքատվության հեռանկարով, անասունների առողջությամբ եւ յուրաքանչյուր բնակչի անձնական գործերով: Սովորաբար նա ժողովրդի հետ զրուցում էր գյուղամիջի հրապարակում, ճոճվող բազկաթոռին նստած, մանգոյի ծառերի ստվերում, շոգից թափահարելով բոլորովին էլ ոչ գեներալական,

այլ սովորական գլխարկը, ինչը մշտապես գլխին էր դնում այդ տարիներին. եւ թեեւ թվում էր՝ լսում է կես ականջով ու շոգից թուլացած ննջում, իրականում լսում ու հիշում էր բացարձակապես ամեն բան, ինչ ասում էին գեղջուկներն ու գեղջկուհիները, որոնց նա գիտեր անուն-ազգանունով - ողջ երկրի անվանական ցուցակը նա պահում էր իր գլխում, եւ հազարավոր թվեր, ազգի բոլոր չլուծված խնդիրներն էր պահում գլխում. «Մոտ արի, Խասինտա Մորալես,- կանչեց նա ինձ աչքերն էլ չբանալով:- Հապա պատմիր մեզ այն տղայի մասին, որին անցած տարի ես բանակ քշեցի, որպեսզի ճաշակի կյանքի դառնությունը եւ մի երկու հոգնա ընդունի. ինչպե՞ս է նա»: «Ողջույն, Խուան Պրիեստո,- ասաց նա ինձ,- ինչպե՞ս է զգում իրեն քո ցեղական ցուլը: Տեսա՞ր՝ ոնց օգնեցին նրան իմ ադոթքները ժանտախտի օրերին, հիշո՞ւմ ես՝ ոնց բոլոր ճիճուները դուրս սողացին նրա ականջներից»: Հետո նա ինձ ասաց. «Դե, ինչո՞վ ես վարձահատույց լինելու, Մաթիլդա Պերալտո, փախստական ամուսնուդ վերադարձնելու համար: Ահա, վայելիր, մենք նրան քարշ ենք տվել պարանով եւ ես անձամբ եմ զգուշացրել նրան, որ կփտի չինական կոճղերը ոտքերին, եթե մեկ էլ փորձի փախչել օրինական կնոջից»: Կենցաղային գործերում ցուցաբերած պարզությունն ու արագությունը նա կիրառում էր եւ հասարակական հարցերը լուծելիս, դատ ու դատաստան տեսնելիս, մսագործին հրամայում էր հրապարակավ կտրել գող գանձապահի ձեռքը, պիտակի կեցվածքով խոսում ամեն ինչ մասին, նույնիսկ լոլիկի եւ լոլիկը սնող հողի. համտես անելով որեւէ մեկի բանջարանոցի լոլիկը, նա հեղինակավոր հայտարարում էր ուղեկցող գյուղատնտեսներին. «Այս հողին թրիք է պակասում, բայց ոչ ամեն տեսակի. սրա էշի թրիք է պակասում: Եվ ոչ թե՝ էգի: Ես կկարգադրեմ՝ պետության հաշվին կբերեն»: Եվ ծիծաղելով առաջ էր անցնում:

Գլուխն իմ լուսամուտը խոթելով նա ասաց ինձ ուրախ. «Ըհը, այդ դո՞ւ ես, Լորենսա Լոպես: Ինչպե՞ս է աշխատում կարի մեքենադ»: Մեքենան ինքն էր նվիրել ինձ քսան տարի առաջ, եւ ես ասացի, որ մեքենան վաղուց ի վեր փչել է հոգին. աշխարհի կարգն է, ասացի, հավերժական ոչինչ չկա՝ ո՛չ մարդը, ո՛չ իրը: Բայց նա ասաց, որ ես ոչինչ չեմ հասկանում, որ հավերժական է աշխարհը,

եւ տուն մտավ, պտուտակահանի օգնությամբ քանդեց մեքենան, յուղեց բոլոր մասերը՝ մոռանալով փողոցում սպասող շքախմբին: Նա երկար չարչարվեց, երբեմն ծանր հոգոց էր հանում, փնչացնում ցուլի պես, լցվեց մեքենայական յուղով, նույնիսկ դեմքը մուրտառեց, բայց երեք ժամից մեքենան աշխատեց նորի նման»: Ահա թե ինչպես էր կյանքը այն ժամանակ, երբ նա տարբերություն չէր տեսնում կենցաղային փուչ եւ պետական կարեւորություն ունեցող գործերի միջեւ, երբ անկեղծորեն հավատում էր, թե մարդկանց կարելի է երջանկություն պարգեւել, իսկ մահին խաբել մարտունակությամբ: Իսկ հիմա, խնդրեմ՝ զառամյալ ծերուկ: Եվ ոչ մի կերպ չես կարողանում հավատալ, որ այս ծերը նա է, որի իշխանությունն անսահման էր, որի հարցին՝ թե ժամի քանիսն է, պատասխանում էին. «Ո՞ր ժամը կհրամայեք, իմ գեներալ»: Եվ իրոք, նա օրերի հետ խաղում էր ինչպես կամենար, հրամայում էր ցերեկը գիշեր կոչել, գիշերը՝ ցերեկ, եթե այդ փոփոխությունը պետք էր իրեն եւ հարմար, օրեցօր նա հետաձգում էր պարտադիր տոները, օրացույցը կազմում էր այնպես, որ երկրի այս կամ այն շրջանում իր հայտնվելը համընկներ որեւէ տոնի, որպեսզի նույն այդ տոնը հասցներ վայելել մի այլ վայրում եւս. ամենուր նա հայտնվում էր իր ստվերի, ոտաբոբիկ հնդիկի ուղեկցությամբ, որ զինված էր մաչետեով, նրան ուղեկցում էին նաեւ թշվառ սենատորները՝ մարտական հրաշալի աքաղաղներով, որ փակված էին փայտյա վանդակներում՝ մարտի նետվելու պատրաստ ուզածդ գյուղի ամենակատաղի աքաղաղների դեմ, յուրաքանչյուր գյուղում պարտադիր աքլորակռիվներ էին կազմակերպվում: Նա բարձրաձայն դրազ էր բռնում հանդիսատեսների հետ, խոշոր գումար դնելով այս կամ այն աքլորի վրա. նրա տարօրինակ քրքիջից դողում էր գայլերայի* փայտամածը, այդ քրքիջը խլացնում էր երաժշտությունը եւ հրթիռների ճայթյունները, որովհետեւ մենք բոլորս պարտավոր էինք քրքջալ նրա հետ, լռել, երբ ինքն էր լռում, բուռն ծափահարել, երբ նրա աքլորները հաղթում էին մերոնց. մեր աքլորներն այնպես վարպետորեն էին վարժված, որ, մշտապես պարտվելով, մեզ ամոթով չէին թողնում, եթե չհաշվենք այն դեպքը, երբ Դիոնիսիո Իգուարանի հանդուգն աքաղաղը սրընթաց,

* Գայլերա - աքլորակռվի սրահ:

անդիմադրելի գրոհով մահացու կոցեց բարձրաստիճան հյուրի թխակապույտ աքլորին. բոլորը քարացան տեղերում, բայց գենեռալը ոտքի ելավ եւ ուղղվեց դեպի Դիոնիսիոն, սեղմեց նրա ձեռքը. «Կեցցես, դու իսկական տղամարդ ես»: Նա հրաշալի տրամադրություն ուներ եւ նրա համար մեծ բան չէր Դիոնիսիոյին գովաբանելը, նա նույնիսկ շնորհակալ եղավ սուր զգացողություն ապրելու համար եւ հարցրեց՝ «Որքա՞ն ես պահանջում կարմիր այդ աքլորի համար», ինչին Դիոնիսիո Իգուարանը պատասխանեց երկչորեն. «Ձերն է այդ աքլորը, պարոն գեներալ, վերցրեք», ամբոխը Դիոնիսիոյին վարձատրեց ծափահարություններով, երբ նա երաժշտության եւ ճայթռուկի պայթյունների ուղեկցությամբ տուն գնաց՝ ողջ աշխարհին ցույց տալով ցեղական գեղեցիկ վեց աքաղաղները, որ նվեր էր ստացել անհաղթելի կարմրի փոխարեն, բայց հենց նույն գիշեր Դիոնիսիո Իգուարանը փակվեց իր ննջասենյակում, մի ամբողջ շիշ շաքարեղեգի ռոմ խմեց եւ կախվեց ճոճի պարանով. խեղճը շատ լավ գիտեր, թե ինչ անհամար դժբախտություններ ու փորձանքներ են դարանակալում բարձրագույն ողորմածությանն արժանացած մարդուն. գեներալն իրեն հաշիվ չէր էլ տալիս, որ իր յուրաքանչյուր ուրախ հայտնություն-այցելությունից հետո մարդկանց գլխին փորձանքներ էին թափվում, որ իր ետեւից ծորում էր «անցանկալի մարդկանց» սպանության արյունալի հետքը. նա չէր էլ մտածում հավերժական անհծքի մասին, որ ճակատագիրն էր դառնում իր կողմնակիցների, որոնք կարող էին փորձանքն ընկնել, եթե նա նրանց հանկարծ չկոչեր ինչպես հարկն է, եւ այն էլ հաճոյակատար վարձկանների ներկայությամբ, ովքեր անմեղ սխալը, բերանից թռածը մեկնաբանում էին որպես հետապնդման հրաման: Նա երկրով մեկ թափառում էր արմադիլյոյի* տարօրինակ քայլվածքով, չսափրված դեմքով, քրտնքի կծու հոտ արձակելով եւ անակնկալ կարող էր հայտնվել ուզածդ տանը, ուզածդ խոհանոցում՝ տան բնակիչներին ստիպելով արտաքուստ կարծես անվնաս ճանապարհորդին տեսնելուն պես դողալ սարսափից. իսկ նա տոտունայով** ջուր էր վերցնում կավե գուռից, խմում-հագեցնում ծարավը եւ կամ մոտենում կաթսային ու ձեռ-

---

* Արմադիլյո - զրահակիր (կենդ.):

** Տոտունա - դդմի տերեւից պատրաստված չերեփ:

քով միջից մակտոր հանում, ուտում այնպես տնավարի, այնպես հասարակ, որ նողկանք էր առաջացնում, թեեւ ինքը կասկած չուներ, որ այսուհետ եւ ընդմիշտ իր այցելության խարանը կդաջվեր այս տան վրա. նա այդպես հասարակ էր վարվում սմենեւին էլ ոչ քաղաքական նկատառումներով, բնավ ոչ այն պատճառով, որ համընդհանուր սիրո ու ճանաչման էր տենչում, ինչպես եղավ ավելի ուշ, այլ որովհետեւ, իրոք, հասարակ մի մարդ էր եւ վարվում էր իր բնությանը համեմատ, եւ իշխանությունը դեռեւս ներծծող ճահիճ չէր, ինչպես դարձավ նրա հասուն, աշնան տարիներին, այլ փոթորկուն հեղեղ, որ հենց մեր աչքերի առաջ ժայթքում էր նախնական խորքերից. իշխանությունը չէ, ինքն էր իշխում իշխանությանը, եւ բավական է մատնացույց աներ այն ծառերը, որ բերք պիտի տային, եւ նրանք բերք էին տալիս, մատնացույց էր անում կենդանիներին, որոնք պիտի ձագ ծնեին, եւ նրանք ծնում էին, հաջողության սպասող մարդկանց էր մատնացույց անում, եւ նրանք հաջողության էին հասնում, նա կարող էր դաղարեցնել անձրեւն այն տեղերում, ուր բերքին էր մնասում, եւ հարկադրել թափվել պապակ հողերի վրա. «Ես դա քաջ գիտեմ, սենյոր, որովհետեւ աչքովս եմ տեսել»: Առասպելը նրա շուրջ ստեղծվեց ավելի վաղ, քան նա կհասներ բացարձակ իշխանության եւ կհավատար, որ հասել է, ստեղծվեց դեռ այն տարիներին, երբ նա առանց որեւէ կասկածի հավատում էր գուշակություններին եւ սարսափելի երազների մեկնությանը. այդ ժամանակներում նա կարող էր ընդհատել նոր սկսած ճամփորդությունը սոսկ այն պատճառով, որ մարգարեական պիգվա թռչունը գլխավերեւից թռչելիս երգ էր ասել, նա հաջորդ օրվա հանդիպումը ժողովրդի հետ հետաձգեց, որովհետեւ մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն հավկիթի մեջ երկու դեղնուց էր հայտնաբերել. իսկ մի անգամ նա հրաժարվեց շքախմբից, ամենուր իրեն ուղեկցող սենատորներից ու դեսպանատներից, որոնք սովորաբար նրա փոխարեն ճառեր էին ասում, քանզի ինքը չէր համարձակվում ճառախոսել - հրաժարվեց, որովհետեւ հերթական ուղեւորության նախօրյակին տեսավ իրեն գեղ երազի մղձավանջում, մի հսկայական ամայի տանը, ուր իրեն ամեն կողմից շրջապատել էին գորշ սյուրթուկ հագած, մսագործի դանակներով զինված, գունատ տղամարդիկ, ատամները բաց արած,

հոհոալով, նրանք այդ դանակներով ծակծկում էին իրեն եւ որքան էլ ինքը փորձում էր խույս տալ, որ կողմն էլ շրջվում էր, միեւնույն է, հանդիպում էր դեմքին զարկվելու կամ աչքերը հանելու պատրաստ դանակի շեղբերին. գունատ, լուռ, տարօրինակորեն ժպտացող այդ մարդասպանների շրջապատում նա ծուղակն ընկած գազան էր. նրանք ոչ մի կերպ չէին կարողանում վճռել, թե իրենցից ով է հասցնելու վերջին հարվածը, ով է ավարտելու զոհաբերության ծեսը եւ առաջինը խմելու նրա արյունը, բայց նա արդեն ոչ սարսափ էր զգում, ոչ չարություն, միայն թեթեւություն էր զգում, որը, մարմնից հեռացող կյանքի փոխարեն, համակում էր ողջ էությունը. նա դարձավ անկշռելի, հոգում այնպես խաղաղ էր ու պարզ, որ ժպտաց մարդասպաններին ու իր ճակատագրին. եւ, ահա, վերջապես մեկը, որը երազում, իբր, որդին էր, դանակը նրա փորը խրեց, բաց թողեց վերջին օդը եւ արյուն ցայտեցրեց այդ տան ճերմակ պատերին, մզձավանջի ճերմակ պատերին. «Եվ այդժամ ես գլխիս զգեցի արյունով ներծծված պոնչոն, որպեսզի նրանք, ովքեր չճանաչեցին ինձ կյանքում, չճանաչեն նաեւ մեռած, եւ ընկա հատակին ու մահամերձի ջղաձգումները բռնեցին իմ ողջ մարմինը»: Երազն այնքան էր իրական, որ նա չդիմացավ, իսկույն պատմեց հայրենակցին՝ առողջապահության նախարարին, եւ սա կրկնապատկեց նրա հոգու մռայլությունը, առանց թաքցնելու ասելով, որ նման մահ արդեն նկարագրված է մարդկության պատմության մեջ. «Ճիշտ եւ ճիշտ ձեր երազի նման, իմ գեներալ»: Եվ առողջապահության նախարարը ձեռքն առավ գեներալ Լաուտարո Մույոսի հաստիկ, խանձուտներով հատորյակը եւ կարդաց նման մահ, նման սպանություն պատկերող մի դրվագ. «Ճիշտ եւ ճիշտ իմ երազի նման մայր: Լսելով պատմությունը ես մտաբերեցի մոռացված բոլոր մանրամասները ինչպես այն մեկը որ երբ արթնացա տեսա թե ոնց են առանց քամու իրենք իրենց բացվում պալատի բոլոր քսաներեք լուսամուտները իսկ երազում ինձ հասցրել էին դանակի ուղիղ քսաներեք հարված: Ինչպիսի՜ ճակատագրական զուգադիպություն»: Սա միակ զուգադիպությունը չէր, երազն իրականանում էր. նույն այդ շաբաթվա մեջ, զինվորական ուժերի անտարբեր թողտվության պայմաններում, ավազակային հարձակման ենթարկվեց սենատը եւ գերագույն դատարա-

նը. ավազակները մինչեւ հիմքերը քարուքանդ արեցին մեր ազգային սրբությունը՝ սենատի շենքը, որի ներսում անկախության պայքարի մեր հերոսները ժամանակին հռչակել էին մեր ազգի անկախությունը. հրդեհի բոցը հուրհրում էր մինչեւ ուշ գիշեր եւ հրաշալի նկատվում պրեզիդենտական պատշգամբից, սակայն պրեզիդենտին բնավ չվշտացրեց բոթը՝ թե պատմական շինությունից չի մնացել նույնիսկ հիմը, թե ինչ-որ մեկը ջանացել է արմատախիլ անել այդ շինության հիշողությունը նույնիսկ. մեզ խոստացան հրապարակով պատժել հանցագործներին, որոնց այդպես էլ չգտան, եւ կառուցել հերոսների տան ճշգրիտ պատճենը, որի ավերակները պահպանվել են մինչեւ օրս: Ինչ վերաբերում է սենատորներին ու արդարադատության ծառայողներին, ապա նա միտք էլ չուներ թաքցնել նրանցից իր երազի չարագուշակ նշանները, ընդհակառակը, իր գործողություններն արդարացնելով երազից հաղորդված նախազգուշացումով, նա ուրախ էր, որ առիթ եղավ ցրելու օրենսդիրներին եւ քարուքանդ անելու հնացած հանրապետության դատավարական համակարգը. սենատորներին, դեպուտատներին եւ գերագույն դատավորներին (որոնց պետքն այլեւս չուներ, քանի որ իր իշխանության օրինականության հաստատման հարկը չկար), նա պարգեւատրեց շքանշաններով, դարձրեց նրանց ունեւոր եւ, որպես դեսպան, բարեբեր ու հեռավոր երկրներ ուղարկեց, պալատում թողնելով միայն ոտաբոբիկ, լուսկյաց, մաշետեով զինված հավատարիմ հնդկացուն. անբաժան այդ ստվերը չէր լքում նրան եւ ոչ մի ակնթարթ, առաջինն էր փորձում ջուրն ու ուտելիքը, հետեւում, որ ոչ ոք չխախտի մոտենալու սահմանված տարածությունը. «Այդ հնդկացին կանգնում էր իմ դռանը, քանի դեռ պրեզիդենտը մի քանի ժամով մնում էր ինձ մոտ: Ասում էին, թե պրեզիդենտն իմ թաքուն սիրեկանն է, մինչդեռ նա ինձ այցելում էր ամիսը երկու անգամ, որպեսզի ես խաղաքարտով իր բախտը գուշակեի: Երկար տարիներ էր նա իմ հաճախորդը, քանի դեռ նա իրեն մահկանացու էր կարծում, քանի դեռ նրան տանջում էին կյանքածները, քանի դեռ խոստովանում էր, որ կարող է սխալվել, եւ քարտերին ավելի էր հավատում, քան իր վայրենի բնազդին: Սովորաբար նա ինձ մոտ էր գալիս ինչ-որ բանից վախեցած ու վախից ծերացած, այնպես, ինչպես հայտնվել էր մոտս առաջին

անգամ եւ անխոս մեկնել կլոր, դոդոշի փորի նման պիրկ, հարթ մաշկով ձեռքերը - նախկինում եւ հետո էլ ես երբեք չեմ տեսել նման ձեռքեր, թեեւ ճակատագիր գուշակողի երկար կյանք եմ ապրել: Նա լուռ աղոթողի եւ հուսահատվածի արտահայտությամբ էր սեղանին դրել գույգ ձեռքը. ես զգացի, որ նրան տանջում է անորոշ մի տագնապ եւ անվստահությունն է կրծում հոգին, որ նա զրկվել է երազանքից, հույսից, եւ ինձ այդ ժամանակ զարմացրեցին ոչ այնքան այդ ձեռքերը, որքան նրա անհուն թախիծն ու մենությունը: Ես խղճացի նրա դժբախտ, ծերունական, կասկածներից տառապող սիրտը եւ սկսեցի գուշակել, բայց նրա ճակատագիրն ինձ համար մնաց անհասանելի, խուլ, փակ: Հնարավոր չէր որեւէ բան իմանալ նրա ձեռնափերից, գուշակման իմացածս բոլոր միջոցներն անզոր էին, որովհետեւ հենց նա, ասենք, կլոսում էր կապուկը, քարտերը խճճվում էին, սրճի մրուրը նրա բաժակում վերածվում էր պղտոր դոնդողի: Ոչինչ հնարավոր չէր իմանալ նրա մասին, փոխարենը շատ պարզորոշ երեւում էին մոտիկ մարդկանց ճակատագրերը: Ահա, այդկերպ ես տեսա նրա մորը՝ Բենդիսիոն Ալվարադոյին եւ ցույց տվեցի նրան, թե ինչպիսին է լինելու նա մոտ ապագայում, զառամյալ հասակում. աչքերը կուրանալու են, բայց շարունակելու է ներկել անհայտ ինչ-որ թռչնակների, ներկելու է՝ չզանազանելով գույները, եւ նա ասաց. «Խե՜ղճ մայր»: Իսկ մի ուրիշ անգամ, գուշակելիս, մենք տեսանք քարուքանդ եղած մեր քաղաքը, եւ կործանողը կատաղի մի ցիկլոն էր, որի կանացի անունը հնչում է հրեշավոր ծաղրանքի նման: Մի օր էլ տեսանք կանաչ դիմակ հագած, ձեռքին սուսեր բռնած մի տղամարդու, եւ պրեզիդենտը տագնապով հարցրեց, թե որտեղ է բնակվում այդ մարդը. քարտերը պատասխանեցին, որ երեքշաբթի օրերն այդ մարդը պրեզիդենտին ավելի մոտ է լինում, քան շաբաթվա մյուս օրերին, եւ նա ասաց՝ «Ահը», եւ հարցրեց՝ ի՞նչ գույնի են այդ մարդու աչքերը, եւ քարտերը պատասխանեցին, որ նրա մի աչքը գուարապոյի գույնի է, գինու գույնի, եթե լույսի տակ նայես, իսկ մյուսը մուգ է, եւ նա ասաց՝ «Ահը», եւ հարցրեց, թե ի՞նչ մտադրություններ ունի այդ մարդը: Եվ ես չհամբերեցի այլեւս ու ասացի նրան ողջ ճշմարտությունը, քարտերի ցույց տված ճշմարտությունը. ես ասացի, որ կանաչ դիմակը նշանակում է դավաճանու-

թյուն ու նենգություն, իսկ նա բղավեց շատ հանդիսավոր. «ԸՀը: Ես գիտեմ թե ով է նա: Գիտեմ»: Այդ մարդը, պարզվեց, գնդապետ Նարսիսո Միրավալն էր, նրա մտերիմ գնդապետներից մեկը, որը երկու օր անց ատրճանակը պարպեց ականջի մեջ եւ նույնիսկ, որեւէ գրություն չթողեց խեղճը...»: Ահա այսպես, հսկատալով քարտերի գուշակությանը, նա վճռում էր մարդկանց ճակատագրերն ու հայրենիքի բախտը, հայրենիքի պատմական ընթացքը, քանի դեռ չէին հայտնել իր տեսակի մեջ եզակի պայծառատեսի լուրը. սա գուշակում էր սովորական ջրով, կանխատեսում էր, թե ով, ինչպես եւ երբ է մեռնելու. նա բոլորից ծածուկ, մաչետեով զինված պահապան հրեշտակի ուղեկցությամբ մեկնեց փնտրելու այդ պայծառատեսին, եւ կտրելով լեռնային արահետներ, ձորեր, որտեղով լոկ ջորիներն էին անցնում, հասավ սարահարթի մենավոր մի խրճիթ, ուր ապրում էր պայծառատեսն իր ծոռնուհու հետ, որն ուներ երեք երեխա, իսկ չորրորդին շուտով պիտի ծներ. այրի էր, մի ամիս առաջ էր թաղել ամուսնուն: Պայծառատեսին նա գտավ իավար սենյակի խորքում. պառավը կաթվածահար էր եւ գրեթե կույր, բայց երբ եկվորին կարգադրեց ձեռքերը պահել ջրով լի կոնքի վրա, խավարը ցրվեց. ջուրը կոնքում լուսավորվեց ներքին, պարզ ու մաքուր լույսով, եւ նա այդ ջրում տեսավ, որ պառկած է հատակին, բերանքսիվայր, առանց տարբերանշանի դաշտային համազգեստով, երկարաճիտ կոշիկներով, ձախին՝ ոսկյա խաչան. նա հարցրեց պառավին. թե որտե՞ղ է, ի՞նչ տեղ է սա, ուր պառկած է ինքը, եւ պառավը պատասխանեց, որ չափսերով իր սենյակից ոչ մեծ սենյակ է տեսնում, մի դրասեղան, էլեկտրական հովհար, տեսնում է ծովահայաց լուսամուտ, ճերմակ պատեր, որոնց վրա ձիերի նկարներ կան եւ վիշապի պատկերով դրոշ: Եվ այդժամ նա ասաց՝ «ԸՀը», որովհետեւ սույն նկարագրությամբ ճանաչեց նիստերի դահլիճին կից իր առանձնասենյակը, ու հարցրեց. «Իսկ ինչպե՞ս եմ մեռնելու: Բռնի մահո՞վ, թե՞ գեշ հիվանդությունից», ինչին պառավը պատասխանեց, որ ոչ, չի մեռնելու բռնի-մահով կամ գեշ հիվանդությունից, մահը լինելու է բնական եւ վրա է հասնելու քնած ժամանակ, առանց ցավ պատճառելու, եւ այդժամ նա ասաց՝ «ԸՀը», եւ հարցրեց շունչը պահած. «Իսկ ե՞րբ է պատահելու»: Պառավը պատասխանեց, որ կարող է հանգիստ

մնալ, որովհետեւ հասնելու է իր տարիքին՝ հարյուր յոթ տարեկան, որից հետո ապրելու է էլի հարյուր քսանհինգ տարի եւ հետո միայն կկատարվի կատարվելիքը: «ՀՀը»,- ասաց նա եւ սպանեց հիվանդ, պառավ պայծառատեսին հենց ճոճում, խեղդելով նրան իր ոսկյա խթանի քուղով, առանց ցավ պատճառելու, վարպետ դահճի նման, թեեւ նախկինում, անձամբ, ոչ մարդ էր սպանել, ոչ անասուն՝ լիներ դա պատերազմի դաշտում, թե խաղաղ օրերին,- խեղճ պառավը միակ կենդանի արարածն էր, որին նա սպանեց անձամբ, որպեսզի աշխարհում իրենից բացի ոչ մեկը չիմանար՝ ինչպե՞ս, որտե՞ղ եւ ե՞րբ էր մեռնելու ինքը: Իր այս ստոր արարքի հիշողությունները չէին անհանգստացնում նրա հոգին աշնանային գիշերներին, չէին տանջում նրա խիղճը: Ընդհակառակը, նա սիրում էր հիշել այդ դիպվածը ինքն իրեն գովելու, ինքն իրեն քաջալերելու համար - ահա թե ինչպիսին պիտի լինել՝ վճռական, անինա, իսկ երբ խավարման մթության մեջ գոլորշիացավ Մանուելա Սանչեսը, նա վերհիշեց իր նախկին դաժանությունը, որպես թույն լուծեց ներսում, որպեսզի գոնե որեւէ չափով ազատագրվի նախատացման զգացողությունից, սրտից դուրս հանի ողջ էությունը այրող ծարի խայթը. եւ նա պտտվում էր ճոճում, տամարինդների ստվերի տակ, լսում ծառի տերեւների մեջ քամու զանգակների ծլնգոցը, ատելությամբ հիշում Մանուելա Սանչեսին, մտածում էր ու մտածում, իսկ այդ պահին զինվորական ուժերը Մանուելային որոնում էին ցամաքում, ծովում, օդում, անսահման ու մեռյալ անապատում, որտեղ սելիտրա էին արդյունահանում, որոնում էին, բայց հետքն էլ չէին գտնում, եւ նա դաժանորեն տանջում էր ինքն իրեն անպատասխան հարցով. «Ո՞ւր կորար դու գրողը քեզ տանի որտե՞ղ թաքնվեցիր այնպես որ ձեռքս չհասնի քեզ: Օ եթե ձեռքս հասներ քեզ դու կհասկանայիր թե ինչ բան է իշխանությունը»: Այրող ատելությունն ավելի ու ավելի էր համակում նրան, կրծքին դրված գլխարկը ոստոստում էր սրտի կատաղի հարվածներից, նա՛ասես չէր էլ լսում մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյին, որը համառորեն ճգնում էր իմանալ եղելությունը. «Ինչո՞ւ ես լռել խավարման օրից ի վեր: Ինչո՞ւ ես միայն ինքդ քո ներսը նայում»: Նա յուր ոտքի էր ելնում, մորը հայհոյելով հեռանում քարշ տալով փղային իր ոտքերը, հոգում շոշափելով խայթված ինքնա-

սիրության արյունող վերքը, լեղի էր կուլ տալիս եւ տարակուսած հարցնում չգիտես թե ում. «Եվ այս ամենն ինձ հե՞տ է կատարվում: Այդ.ե՞ս եմ այնքան ապուշ կտրել որ չգիտեմ անելիքս: Այդ ե՞ս եմ դաղարել իմ ճակատագրի տերը լինելուց ինչպես առաջ: Եվ այս ամենը այն պատճառով որ աղջկա տուն եմ մտել մոր թույլատրությունը խնդրելով եւ ոչ թե այնպես ինչպես ժամանակին Սանտոս-Իգերոնեսում Ֆրանսիսկա Լիներոյի տան պաղ լռության մեջ մտա»: Ֆրանսիսկա Լիներոյի հետ կապված դեպքը կատարվել էր Պատրիսիո Արագոնեսից առաջ, եւ նա ինքն էր մարդկանց ներկայացնում իշխանության դեմքը. «Նա ներս մտավ դռան մուրճը նույնիսկ չզարկելով, մտավ, որովհետեւ այդպես էր ցանկանում. ժամացույցի զարկերի հետ մտավ՝ տատնմեկն էր, եւ ես հոնսբակի պատշգամբից լսեցի, թե ինչպես է ժամացույցի զարկերի հետ զնգզնգում նրա ոսկյա խթանը, ճանաչեցի նրա քայլերի փղային դոփյունը, որ գալիս էր հոնսբակի աղյուսահատակ ծառուղուց եւ դեռ չտեսած նրան, պատկերացրեցի ողջ հասակով մեկ ու սարսափեցի, ավելի վաղ սարսափեցի, քան նա կհայտնվեր ներքին պատշգամբի շեմին, որտեղ ես էի. ոսկեգույն խորդենիների մեջ ճչում էր ջրցուլը, ժամացույցի պես ազդարարելով տատնմեկը, երգում էր գվինեոյի պտուղների բույրերից արբած պիրոլը, ծառի սաղարթից պոկոտված, կախ-կախ ճթերով բեռնված ճյուղերը ճոճվում էին պատշգամբի գլխին, օգոստոսյան չարաբաստիկ երեքշաբթի օրվա արեւի շողերը խաղում էին թարմ տերեւների, մեղրի քաղցրությամբ լեցուն, մեղրի բծերով պատած պտուղների վրա, մատղաշ եղնիկի վրա, որ ամուսինս՝ Պոնսիո Դասան էր խփել լուսաբացին եւ կախել գլխիվայր, որ արնաքամ լիներ. կախել էր պատշգամբի ծածկի տակ, գվինեոյի պտուղների ողկույզների մոտ: Եվ, ահա, նա ներս մտավ սարսափազդու տեսքով ու մռայլ,- նման տեսքով մարդիկ նույնիսկ ամենազարհուրելի երազներում չեն հայտնվում,- ներս մտավ ցեխոտ, ճահճի լոռատիղմով սվաղված սապոգներով, խակի գույնի, քրտնքից թրջված բաճկոնակով, առանց զոտուց կախ զենքի, բայց կողքին անձայն կանգնած էր ոտաբոբիկ մի հնդկացի, ձեռքը մաչետեի կոթին սեղմած: Ես տեսա անխնա, անխուսափելիությունից խոսող նրա աչքերը, իսկ նա դանդաղ, ինչպես կիսաքնի մեջ, մեկնեց կանացի իր ձեռքը գվի-

նեոյի պատուղներին, պոկեց մի հատիկ, ագահորեն կերավ, հետո պոկեց ու կերավ էլի մի հատիկ, հետո էլի - լիքը բերանով նա ճպճպացնում էր ճահճի նման»: Նա խժռում էր գվինեոյի պտուղները եւ աչքերով լափլփում Ֆրանսիսկա Լինեոյի հրաշալի մարմինը, իսկ սա չգիտեր ուր կորչեր ամոթից, որովհետեւ շատ էր երիտասարդ, վերջերս էր ամուսնացել, եւ նման հայացքները խորապես հուզում էին նրան, բայց նա հասկանում էր, որ գենեալը եկել էր բավարարելու իր ցանկությունը, գիտակցում էր կատարվելիքի անխուսափելիությունը, եթե, իհարկե, գենեալն ինքը միայն ետ չկանգներ որոշումից. «Ես հազիվ լսեցի սարսափից կծկված ամուսնուս շնչառությունը, նա նստեց կողքիս եւ մենք քարացանք՝ ձեռք ձեռքի տված, սրտերս էլ միացած, ինչպես ապտամիները բացիկների վրա, եւ մեր այդ միացած սրտերը, թպրտում էին վախեցած, մի սիրտ դառած, իսկ հրեշավոր ծերուկը կանգնել էր մեզանից երկու քայլի վրա եւ խժռում, հա խժռում էր գվինեոյի պտուղները, ուսի վրայից դեն շպրտում մնացորդները, անթարթ, համառորեն նայում ինձ: Իսկ երբ խժռեց ճյուղի բոլոր պտուղները, մաքրազարդած ճյուղը թողեց իր տեղում, եղնիկի կողքին, նշան արեց ոտաբոբիկ իր հնդկացուն եւ ասաց ամուսնուս՝ Պոնսիո Դասին. «Դուրս եկ բարեկամիս հետ, նա քեզ ասելիք ունի»: Իսկ ես, թեեւ մեռնում էի սարսափից, գիտակցում էի, որ կյանքս փրկելու միակ միջոցը թույլ տալն է, որ նա անի ինձ հետ, մարմնիս հետ այն ամենը, ինչ ցանկանում է անել՝ հենց այստեղ, ճաշասեղանի վրա, եւ ես ինքս օգնեցի նրան մերկացնել ինձ, թե չէ խճճվում էր ժանյակների մեջ. ես շնչահեղձ էի լինում նրա գարշահոտությունից, իսկ նա թաթի մի հարվածով պատառոտեց վրայիս սպիտակեղենը եւ սկսեց առանց հմտության ափլփել մարմինս, իսկ ես մեքենայաբար մտածում էի. «Սուրբ երրորդություն, ես ինքս էլ, ախր, չեմ լվացվել այսօր, ի՞նչ խայտառակություն, ժամանակ չեղավ այդ եղնիկի պատճառով»: Եվ, ահա, վերջապես նա ստացավ ցանկացածը, բայց իր գործն արեց այնպես հապշտապ ու վատ, ինչպես կաներ երեւի տարիքով ավելի մեծը, կամ կաթնակերի մեկը: Նա այնպես ընկճվեց, որ դարձավ անճանաչելի, նա լաց էր լինում մեզի չափ տաք արցունքներով եւ այնպիսի թախիծ կար դեմքին, այնքան տխրություն աչքերում, որքի այնպիսի միայնություն, որ

ես խղճացի նրան եւ աչխարհի բոլոր տղամարդկանց, սկսեցի մատներիս ծայրով շոյել նրա գլուխը, մխիթարել. «Հերիք է. մի հուզվեք այդպես, իմ գեներալ, պետք չէ: Կյանքը դեռ առջեւում է»: Իսկ այդ նույն պահին մաչետեով զինված ոտաբոբիկ հնդկացին այգու խորքն էր հասցրել Պոնսիո Դասին եւ սպանել, որովհետեւ գեներալն այլապես երդվյալ թշնամի ձեռք կբերեր. սպանել էր ու մարմինը կտրատել խոզերին հարմար մանր մասերի, այնպես որ խեղճ Պոնսիոյի մարմինը թաղելուց առաջ չհաջողվեց էլ մի կարգին ի մի բերել - ահա թե ինչպիսին էր նա, ահա թե ինչ հիշողություններ էին հառնում անցյալից՝ կրկնապատկելով նրա հոգու մռայլությունը, նրա չարությունը, որովհետեւ թվում էր, թե ջրիկացել էր իր իշխանության թանձր նստվածքը, այդ իշխանությունը չէ՞ որ անզոր եղավ ոչնչացնել մի ինչ-որ խավարման կախարդական հմայանքը: Սեւ լեղի էր լցվել նրա ներսը, երբ նստեց խաղասեղանի մոտ, սառնարյուն ու անվրդով գեներալ Ռոդրիգո դե Ագիլարի դիմաց, իր թանկագին ընկերոջ, որին վստահում էր, հավատում, որը միակ մտերիմն էր դարձել այն օրից, երբ հոդախտը վերջնականապես շղթայեց մաչետեով զինված ոտաբոբիկ պահապան-հրեշտակի հոգերը, նա նայեց իր թանկագին ընկերոջը եւ մտածեց, որ դլխին թափվող դժբախտությունները գուցե թե ծագում են ընկերոջը չափազանց վստահելուց, գուցե չափից ավելի՞ է նրան արտոնություններ շնորհել. «Իմ թանկագին ընկերը չէ՞ր որ փորձում էր ինձ եզ դարձնել այդ նա չէ՞ր փորձում զրկել ինձ կաուդիլյոյի նշաններից պարզապես սափրել վրայիցս բոլոր այդ նշանները այդ նա չէ՞ր ջանում դարձնել ինձ պալատական հաշմանդամ որի հրամանները կարելի էր եւ չկատարել այդ նա չէ՞ր հորինել նմանակի մնասակար պատմությունը հարկադրելով ինձ թաքնվել ինչ որ մեկի թիկունքում ստիպելով վախենալ անձամբ ժողովրդին ներկայանալուց նույնիսկ թիկնապահների բանակով շրջապատված այնինչ նախկինում մի ոտաբոբիկ հնդկացի էր ամբոխների մեջ իր մաչետեի հարվածներով ճանապարհս բաց անում բղավում էր մի կողմ քաշվեք կոտոշավորներ տիրակալն է գալիս եւ ոչինչ չէր պատահում թեեւ մենք մարդկային այդ անտառում ուր ծափահարությունների փոթորիկն էր մռնչում դեռեւս չէինք տեսնում թե որտեղ են իսկական հայրենասերները եւ որտեղ նենգ դա-

վանքանները ու ավազակները այդ հիմա մենք գիտենք որ առավել նենգերը բոլորից բարձր են բղավում կեցցե իսկական տղամարդը կեցցե գեներալը ստոր վիժվածքներ մի հնդկացին գլուխ էր հանում հսկայական ամբոխներից իսկ հիմա իմ թանկագին բարեկամին բանակներն էլ չեն բավականացնում որ գտնի այդ քնձռոտ թագուհուն»: Եվ հիշելով, թե ինչպես դուրս պրծավ, չհասկանալով, թե ոնց կարողացավ սպրդել ծերունական իր տոփանքի խուլ պարսպից, նա հանկարծ շպրտեց դոմինոյի խաղաքարերը հատակին, ընդհատեց խաղը ամենաթեժ պահին ու հեռացավ, հայհոյելով ամեն ինչ ու ամեն բան. ահա այսկերպ մի անգամ ընդհատելով խաղը, նա խոր ընկճվածության ու թմրության մեջ ընկավ եւ մտածեց հանկարծ, որ այս աշխարհում ամեն ինչ վաղ թե ուշ իր տեղն է ընկնում, միայն ինքն է մնացել անհանգրվան. նա արտասովոր շոգ զգաց, զարմացավ, որ շապիկը քրտնքից ամբողջովին թրջվեց այն ժամին, երբ շոգը, սովորաբար, նվազում էր. ծովային գոլորշիներից նա լեչի հոտ առավ, նրա փոշտանկը նվվում էր խոնավ տոթից եւ սուլում չվիի պես, իսկ նա չէր հասկանում, թե ինչ է պատահել, ու ասաց ինքն իրեն. «Պարզապես տոթ է»: Բայց ասաց մի տեսակ անվստահ եւ անորոշ, անհայտ մի ուժ շարունակում էր ճմլել նրան, երբ լուսամուտի մոտ կանգնած փորձում էր գուշակել, թե ինչ տարօրինակ լույս է երեւում հեռվում, ինչու է քաղաքը մեռած, դատարկ, ասես ողջ էին մնացել միայն անգղերը, սրանք էլ վախեցած լքում էին աղքատաց հիվանդանոցի քիվերը, որտեղ նստոտած ննջում էին սովորաբար. եւ էլի մի կենդանի արարած կար քաղաքում կույրն էր, որ կանգնել էր դե Արմաս հրապարակում եւ կարծես զգալով լուսամուտից դուրս նայող ծերունու մշուշոտ անհանգստությունը, հապճեպ ու տագնապալի նշաններ էր անում ձեռնափայտով եւ անհասկանալի բղավում. նա այդ բղավոցը մեկնաբանեց որպես մի ավելորդ կանխանշան, որ ահա-ահա իրեն ճնշող զգացում պատճառող էլի ինչ-որ անհասկանալի բան կկատարվի, բայց կրկին ասաց ինքն իրեն. «Պարզապես տոթ է»: Պառկեց քնելու եւ իսկույն քնեց, ապակիները կամացուկ ճանկռող, մանր թափվող անձրեւի օրորի տակ, բայց քունը խոր չէր, քնի մշուշոտ զտիչների միջից նրա գիտակցությանը ինչ-ինչ բաներ էին հասնում, եւ նա արթնացավ վախեցած ու բղավեց.

«Ո՞վ կա». սրտի թակոցն էր. վախեցած այն տարօրինակությամբ, որ լուսաբացի այդ ժամին աքլորները չէին երգում, նա հասկացավ՝ մինչ քնած էր, խաղաղության ու հանգստության նավը լքել էր իրեն, թաքնվել անհայտ ծովախորշում. կատաղի եռում էր մշուշապատ ծովը, աստծո ցամաքային, թեւավոր բոլոր արարածները, որ օժտված էին մահը կանխազգալու ունակությամբ, մարդկային ամենախոր գիտությունից ավելի անսխալ մեծ աղետի գալուստը կանխազգալու ընդունակությամբ, համրացան սարսափից. շնչելու օդ չկար, ժամանակը կանգ առավ, եւ այդժամ նա ոտքի ելավ ու զգաց, որ սիրտը փքվել է, զգաց, որ ամեն քայլի հետ սիրտը փքվում է էլ ավելի, ականջներում պայթում են թմբկաթաղանթները, եռ եկող մի ինչ-որ նյութ է ժայթքում քթից, եւ նայելով ինքն իրեն, արյունոտված բաճկոնակին, մտածեց. «Սա մահն է», սակայն նրան առարկեցին. «Ոչ, իմ գեներալ, սա ցիկլոն է»: Եվ այդժամ նրա գիտակցության մեջ թափանցեց ցիկլոնի իրողությունը: Կարիբյան ամբողջական թագավորությունն առանձին կղզիների վերածած բազմաթիվ ցիկլոններից ամենակործանիչն էր դա, խորհրդավոր մի աղետ, որի մոտեցումը նախաստեղծ իր բնազդով նա զգաց ավելի վաղ, քան կզգային խուճապի մատնված շներն ու հավերը. մարդկանց համար ցիկլոնը վրա հասավ այնպես հանկարծակի, որ խառնաշփոթի մեջ հազիվ հասցրեցին դրան կանացի անունով կնքել. ցնցված սպաները սարսափած զեկուցեցին. «Սա վերջն է, իմ գեներալ: Ողջ երկիրը դժոխքի բաժին է դառնում»: Եվ այդժամ նա հրամայեց ամուր փակել լուսամուտներն ու դռները, պահակախմբին հրահանգեց կապկպվել միջանցքում, հենց պահակակետերում, հրամայեց կովերին ու հավերին փակել առաջին հարկի սենյակներում, իրենց տեղերում մեխել բոլոր իրերը, եւ ամբողջ երկիրը, սկսած դե Արմաս հրապարակից մինչեւ սարսափով համակված վշտի այս թագավորության ամենահեռավոր անկյունը, վերածվեց փոթորկի դեմ դիմաց ամուր խարիսխ գցած մի նավի. խուճապի առաջին իսկ նշանի դեպքում հրամայված էր կրակել, սկզբում երկու անգամ երկինք, զգուշացման համար, հետո արդեն ուղիղ կրծքին, եթե զգուշացումը չօգներ. սակայն ցիկլոնին դիմադրելն անհնար էր. մոլեգին պտտվող նրա քամաղացները զարհուրելի մի հարվածով պատառոտեցին գլխավոր դարպասի պող-

պատե զրահը, քանդեցին գլխավոր մուտքը, կովերին երկինք հանեցին. առաջին այս հարվածից ցնցված, նա այլևս չէր հասկանում, թե ինչ է կատարվում. նրա վրա թափվեց ոռնացող հորդ անձրև, որի շիթերը երկնքից չէին ընկնում, այլ սլանում էին հորիզոնական ուղղությամբ. հրաբխային ռումբերի նման որոտալով վար էին թափվում պատշգամբի բեկորները, շրմփոցով գետնին էին զարկվում ստորջրյա ջունգլիներից քամու դուրս հանած արտասովոր գազանիկները, բայց նրան զբաղեցնողը աղետի զարհուրելի չափերը չէին, ջրհեղեղի քաոսում նա ըմբռշխնում էր հիշաչարության ու չարախնդության քաղցրահամը. «Որտե՞ղ ես իմ անեծքի Մանուելա Սանչես որտեղ ես սատանան քեզ հետ թաքնվել որտե՞ղ ես հիմա փրկվում իմ վրեժխնդրության տարերքից»: Իսկ երբ ցիկլոնի կատաղությանը փոխարինեց անվրդով խաղաղությունը, պետական խորհրդի նիստերի դահլիճից դուրս լողաց թիավարող մի տապան, որի մեջ ինքն էր՝ մտերիմ օգնականների հետ, եւ լողաց ավերվածության պղտոր ապուրի միջով. տապանն անցավ կառասրահը եւ խուսանավելով արմավենիների կատարների ու դե Արմաս հրապարակի ծռմռված լապտերների գլխիկների միջեւ, մտավ տաճարի մեռյալ ջրերը. այս անշարժ ջրերում, տաճարի գմբեթի տակի այս լճակում էլ հենց մեր գեներալի գլխում լույսի պես միտք բռնկվեց, նա հանկարծ գիտակցեց, որ ինքը երբեք չի եղել ու երբեք չի լինի ամենազոր, որ կա իր իշխանությունից դուրս մի մեծ ուժ, եւ այս միտքը խորապես խայթեց նրան. նա զգաց այդ մտքի դառնությունը, քանի դեռ տապանը զարկվում էր տաճարի տարբեր անկյուններին՝ մեկ կորչելով թանձր խավարում, մեկ որսալով ապակենկարների շողարձակումները, մեկ լուսավորվելով գահասեղանի զմրուխտների ու ոսկյա քանդակների շողերից. լույս էին արձակում ողջ-ողջ թաղված փոխարքաների գերեզմանաստալիկները, հիասթափությունից վախճանված արքեպիսկոպոսների շիրմաքարերը, առկայծում էր Մեծ ծովակալի դատարկ հանգստարանի գրանիտը,- երբեւէ կարավելաների պատկերը վրան դաջված սարկոֆագի գրանիտն էր դա,- հանգստարանը կառուցվել էր համենայն դեպս, եթե Մեծ ծովակալը բարեհաճեր մեր հողին հանձնել իր ոսկորները. զոհասեղանի ետեւում առաջացած ջրանցքով տապանը դուրս եկավ տաճարի ներքնաթաք, որ կարծես լուսավոր

ակվարիում լիներ, որի հախճաղյուսե հատակով սուրում էին ծովային մոխրա ձկների վտառներ ու խժռում արեւածաղիկների ջրասույզ եղած ցողունները. հետո տապանը ուղղվեց դեպի ճգնավորների մենաստան, դեպի կուսանոցի կամարները, եւ այնտեղ, տապանում նստածները տեսան ջրով ողողված դատարկ խցեր, կլավիկորդների խաղաղ սահքը՝ ավազան դարձած երաժշտական դահլիճի կենտրոնում, իսկ ճաշարանում, անշարժ ջրերի շերտերում նրանք տեսան բարեպաշտ բոլոր կույսերին, կուսանոցի բոլոր միանձնուհիներին, որոնցից յուրաքանչյուրը խեղդվել էր իր տեղում, երկար ճաշասեղանի մոտ նստած. իսկ երբ տապանը պատշգամբի դռնից դուրս լողաց կուսանոցից, բոլորը տեսան, որ այնտեղ, որտեղ քաղաքն էր, հիմա հսկայական լիճ էր՝ լազուր երկնքի տակ. «Ուրեմն սա համաշխարհային ջրհեղեղ է որ պայթեց ինձ ազատագրելու համար Մանուելա Սանչես կոչվող հոգեկան տառապանքից դրողը տանի ինչ բարբարոսական են տեր աստծո միջոցները մերի նման չեն»: Նա մեծ բավարարվածությամբ էր նայում քաղաքն իր տակն արած պղտոր լճին, ջրերի անսահման, սատկած հավերով պատված տարածությանը, որի պղտորությունից վեր հառնում էին միայն տաճարի գմբեթները, փարոսի լապտերը, փոխարքայական պալատների արեւտտ, քարաշեն պատշգամբները. հին նավահանգստի շրջանում, ուր ժամանակին ձկան առեւտուր էր եռում, նշմարվում էին ցաքուցրիվ կղզյակներ, որոնց վրա ցիկլոնից փրկված մարդկանց խմբեր էին կուտակվել. անվստահությամբ էին նայում այդ մարդիկ իրենց կողքով դանդաղ անցնող տապանին, որի սահքը սատկած հավերի համատարած զանգվածի միջով թվում էր նույնն է, ինչ լողը Սարգասյան ծովի կարմրագորշ ջրիմուռների միջով. բայց մարդիկ, ահա, տեսան, թե ով է ազգային դրոշի գույնով ներկված տապանում, տեսան ծանոթ, թախծոտ աչքերը, անարյուն շրթները, տեսան ծանոթ ձեռքը, որ հանդիսավորությամբ խաչակնքում էր շուրջբոլորը՝ որպեսզի մաքրվեր երկինքը եւ լուսավորեր արեւը. «Եվ նա կյանքի կոչեց խեղդված հավերին, ջրերին հրամայեց իջնել եւ նրանք իջան»: Զանգերի ուրախ զողանջի տակ, տոնական հրավառության ճայթոցների մեջ, այն մարդկանց աղմուկ-աղաղակի մեջ, որ դե Արմաս հրապարակ էին ելել հանդիսավորությամբ նշելու վերակառուցման առաջին քարը

դնելու ծեսը, երգերով փառաբանելու նրան, ով փախուստի մատնեց փոթորկի դեմին, ինչ-որ մեկը բռնեց նրա թեւից եւ պատշգամբ դուրս բերեց. «Ժողովուրդը հիմա առանձնապես ծարավի է ձեր ոգեշնչող խոսքին»: Եվ չկարողանալով խույս տալ, նա հայտնվեց պատշգամբում եւ լսեց ժողովրդի ձայնը. «Կեցցե իսկական տղամարդը», եւ այդ ձայնը փոթորկաբեր քամու նման թավանցեց նրա հոգու խորքերը. վարչակարգի առաջին իսկ օրերից նրան ծանոթ էր ողջ քաղաքի դեմ-հանդիման կանգնելու անպաշտպանության իր զգացումը, եւ նրա գլխում կայծակի պես փայլատակեց դաժան ու պարզ այն միտքը, որ ինքը երբեք չի խիզախել ու երբեք չի խիզախի ողջ հասակով մեկ կանգնել այն անդունդի առջեւ, որին ժողովուրդ են կոչում. եւ մենք, ներքեւում, դե Արմաս Հրապարակում կանգնածներս տեսանք գրեթե անիրական մի բան, տեսանք լուսապսակով ծերի վաղանցուկ պատկերը. հազին ճերմակ, քաթանե շորեր, պատշգամբի բարձունքից ծերը լռելյայն օրհնեց ամենքին եւ իսկույն էլ չքվեց, բայց մեզ բավական էր եւ այդ ակնթարթային տեսիլքը. նա այնտեղ է, իր տեղում, նա պահպանում է մեզ օր ու գիշեր, նա միշտ մեզ հետ է: Իսկ նա, պատմական տամարինդների տակ, որ աճում էին մոր մենատան ետնարակում, ճոճ-բազկաթոռին նստած, ձեռքին դեռ համը չտեսած լիմոնադով բաժակը, ինչ-որ բան էր մտածում, քանի դեռ մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն մախ էր քամհարում դդումի կճեպից սարքված ափսեի մեջ, աչքերը փակ նա լսում էր հատիկների շրշյունը. ցերեկվա ժամը երեքին, երբ շոգը պատրանք է ծնում, նա նույն դիրքով դեռ նստած էր ճոճ-բազկաթոռին, մորը նայելով շոգի շղարշի միջից, իսկ Բենդիսիոն Ալվարադոն որսաց ուռքերի տակ հորանջող հավին, թեւատակն առավ եւ գրեթե քնքշորեն ոլորեց գլուխը, միաժամանակ որդուն համոզելով չչտապել այսօր. «Դու թոքախտավոր կդառնաս, որովհետեւ շատ ես մտածում ու ոչինչ չես ուտում»: Նա թախանձեց որդուն մնալ մինչեւ երեկո, որ մի կարգին ընթրի, գայթակղեց թեւատակին վերջին ջղաձգումներով թպրտացող հավով, եւ նա համաձայնեց. «Դե, լավ, մայր, մնում եմ», եւ մնաց նստած ճոճ-բազկաթոռում, ներշնչելով կաթսայում քլթքլթացող հավի նուրբ հոտը եւ կանխորոշելով մեր ճակատագրերը: Նա երկրային մեր գոյության միակ երաշխիքն էր, կյանքն անհե-

թեթ էր թվում առանց այն հոմոզմունքի, որ նա կա, ապրում է այնտեղ, իր պալատում՝ ժանտախտից, ցիկլոնից վեր, արհամարհելով Մանուելա Սանչեսի ծաղրը, նույնիսկ ժամանակից էր նա վեր - նա առաքելություն էր՝ ընկղմված մեր բարօրության, մեր երջանկության հոգսերի մեջ. մենք գիտեինք, որ նա մեզ վնասակար ոչ մի բան չի մտածի, նա չէ՞ որ ճակատագրի հարվածներն իր վրա առավ հենց այն պատճառով, որ գիտեր, թե ինչ է մեզ անհրաժեշտ, հավասարվեց մեզ եւ բոլորովին ոչ արիությունը կամ արտակարգ խելամտությունը զորավիգ եղան նրան դիմանալու. այո, նա գիտեր, թե ինչ է մեզ անհրաժեշտ, ինչ է մեզ հարմար ու ինչը՝ անհարմար, գիտեր մեր բոլորի փոխարեն եւ մեզանից լավ. այդ իմացությունը նրա մեջ առավել ամրացավ այն բանից հետո, երբ մի անգամ դժվարագույն արշավի ելավ դեպի երկրի արեւելյան սահմանները, դեպի այն վայրը, որտեղ զոհված ամենավերջին զինվորի անունը, ծննդյան-մահվան տարեթվերը կրող պատմական քարն էր դրված. «Ես հասա այդ սահմանին, մայր»: Հանգստանալու համար նա նստեց այդ պատմական քարին եւ սկսեց սեղմել սահմանից այն կողմ ընկած հողերը, հարեւան պետության տարածությունները, մռայլ այն քաղաքը, որի գլխին մշտապես պաղ անձրեւ էր մաղում եւ մրից սեւացած մշուշ կախվում. նա նայեց մռայլ այդ քաղաքին եւ տեսավ փողոցներով վազվզող տրամվայներ, տրամվայներում՝ ընտիր հագնված մարդկանց, տեսավ ինչ-որ մեկի հուղարկավորությունը, նշանավոր մեկի, որովհետեւ դիակառքի ետեւից շարժվում էր փետրափնջե գլուխներով, ճերմակ բեռնաձիերով լծված կառքերի երկար մի շարան, տեսավ տաճարի գավիթում քնած, լրագրերով ծածկված երեխաների եւ զարմացավ տեսնելով այս ամենը. «Գրողը սրանց տանի, ինչ սքանչելի մարդիկ են այստեղ ապրում. բանաստեղծնե՞ր են, ինչ է»: Բայց մեկը հուշեց նրան. «Նրանք բանաստեղծներ չեն, իմ գեներալ, գոդոներ* են, նրանք են կառավարում այս երկիրը»: Եվ նա ետ դարձավ այդ ուղեւորությունից բարձր տրամադրությամբ, ուրախությամբ բացահայտած իր համար, որ ոչինչ չի կարող համեմատվել նեխող գուայվոյի** սրտամոտ բույրի, հարազատ քաղաքների ու գյուղերի

---

* Գոդո - արիստոկրատների ծաղրական անունը:

** Գուայվո - համանուն ծառի պտուղ:

*չուկայական իրարանցման աղմուկի հետ, որ ոչնչով չես փոխարի-նի հոգին թափանցող թախծի այն զգացողությունը, որ ծնվում է արեւամուտի ժամին, այստեղ, աղքատ այս երկրում, որի սահման-ներից դուրս ինքը երբեք ոտք չի դցի, եւ ոչ թե այն պատճառով, որ վախենում է սթո

բքելուց, ինչպես պնդում են հակառակորդ-ները, «Այլ որովհետեւ մայր մարդը ծառ է իր անտառում որովհե-տեւ մարդն անտառի գոպան է եւ դուրս է գալիս իր որջից միայն կեր գտնելու համար»: Նա իր համար պնդում էր այս միտքը մա-համերձ-խոստովանողի անկեղծությամբ, մտածում անվերջ, մո-ռացմանը տրվելով միայն սիեստայի կարճ, տագնապալի քնի ժա-մերին, հիշում հեռու հեռավոր այն տարին, անցած-գնացած օգոս-տոսյան այն իրիկունը, երբ ստիպված եղավ խոստովանել, որ իր իշխանասիրությունը սահման ունի, որ ինքը բոլորովին էլ հավակ-նություն չունի ավելի շատին, քան երկրի կառավարումն է, միայն այսքանը. այս միտքն արտահայտեց ազատության համար պայ-քարող օտարերկրացի այն երիտասարդի հետ զրուցելիս, որին ըն-դունել էր այդ երեկո իր առանձնասենյակի հեղձուկ կիսախավար-ում. ամաչկոտ երիտասարդ էր, համակված փառասիրական մտահղացումներով եւ դատապարտված միայնության - կան նման մարդիկ, որոնք ծնված օրից մենության խարան են կրում. երիտա-սարդն անշարժ կանգնել էր դռան բացվածքի մեջ, չէր համարձակ-վում առաջ գալ, քանի դեռ աչքերը չէին վարժվել կիսախավարին, որի մեջ, այս շոգ ժամերին, առանձնահատուկ ուժով էր բուրում թիթեռնածաղկի ըցը, եւ քանի դեռ չէր նշմարվել բազկաթոռին նստած ծերունին: Ծերունու ձախ ձեռքի բռունցքն ընկած էր մերկ սեղանին, ծերունու տեսքն այնպես առօրեական էր ու անգույն, որ համեմատության եզր իսկ չուներ պրեզիդենտի պաշտոնական դի-մանկարների հետ, առանձնասենյակում ժամապահներ չկային, ծերունին անզեն էր, քրտնքից թրջված վերնաշապկով, մի սովորա-կան մահկանացու էր, որ քունքերին գլխացավը հանող շալֆեյի տերեւներ էր կպցրել. «Ես դժվարությամբ էի գիտակցում, որ մին-չեւ ուղնուծուծը ժանգոտած այդ ծերն է պատանությանս կուռքը, լուսավոր դաղափարների կենդանի մարմնացումը»: Վերջապես ե-րիտասարդը մոտեցավ սեղանին եւ ներկայացավ հնչեղ, կտրուկ, գործնական մարդու ձայնով, եւ նա սեղմեց նրա ձեռքը իր վավա-*

շոտ, բայց եւ ճկորած ձեռքով, եպիսկոպոսական ձեռքով, եւ զարմացած լսեց երիտասարդ օտարերկրացու հուզումնալից խոսքը, որ վերարկրում էր համընդհանուր երջանկությանը եւ խնդրանք էր՝ քաղաքական ու ռազմական օժանդակության. անիմնա պատերազմով հարկավոր էր մեկընդմիշտ տապալել պահպանողական բոլոր վարչակարգերը՝ Այյասկայից մինչեւ Պատագոնիա. նրան հուզեց երիտասարդի խանդավառությունը եւ նա հարցրեց. «Քիթդ ինչո՞ւ ես այդ գործի մեջ խոթում, գրողը քեզ տանի: Հանուն ինչի՞ ես ուզում մեռնել», ինչին երիտասարդը պատասխանեց առանց ուշացման. «Ի փառս իմ հայրենիքի, ձերդ գերազանցություն: Հանուն հայրենիքի: Մեռնել հայրենիքի համար՝ գերագույն երջանկություն է»: Եվ նա խղճաց երիտասարդին ու ժպտաց տխուր, ասաց. «Հիմարություններ ես ասում, ազատ, կյանքն է հենց հայրենիքը»: Եվ բաց անելով բռունցքը, երիտասարդին ցույց տվեց ափամիջի ապակյա գնդիկը. «Տեսնո՞ւմ ես այս գնդիկը: Սա կամ լինում է կամ չի լինում, եւ միայն նա ունի, ով ունի, ազատ: Նույնն է եւ կյանքի, հայրենիքի հարցում»: Նա այս խոսքերն ասաց երիտասարդին առանձնասենյակից դուրս ուղեկցելիս, տղայի ուսը թափթփացնելով - այդպես էլ համփու դրեց՝ չխոստանալով ոչինչ եւ ասաց երիտասարդից հետո դուռը փակող համհարզին. «Այդ տղային ձեռք չտաք, պա՞րզ է: Եվ նույնիսկ չհետեւեք, իզուր ժամանակ մի կորցրեք, նա վտանգավոր չէ, ոչ մի բանի ընդունակ չէ: Պարզապես ջահել աքլորի պես վիզն է վեր տնկել»: Նույն միտքը նա արտահայտեց տարիներ անց, ցիկլոնից հետո, երբ քաղաքական բանտարկյալներին ներում էր շնորհում եւ վտարանդիներին թույլատրում հայրենիք վերադառնալ - բոլորին, բացի մտավորականներից, անշուշտ. «Դրանց ես երբեք թույլ չեմ տա տուն վերադառնալ, դրանք նոր փետրակալող ցեղական աքլորների նման մշտական եռք են զզում փետրատակերում. դրանք ոչ մի բանի պիտանի չեն. դրանք քաղաքագետներից էլ վատ են, քահանաներից էլ, հավատացեք ինձ: Իսկ մնացածները թող վերադառնան, բոլորը, առանց մորթու գույնի խտրականության, երկրի վերականգնման գործը պետք է միասնորի բոլորին»: Առաջվա պես իշխանությունն ամբողջովին նրա ձեռքումն էր, զինվորական ուժերն անվերապահորեն նրան էին ենթարկվում, հատկապես այն բանից հե-

տո, երբ նա գերագույն հրամանատարությանը բաժին հատկացրեց դեղամիջոցներից, մթերքներից, ինչպես նաեւ միջոցներ՝ սոցիալական ապահովության ֆոնդերից - այն ամենից, ինչ ստացվում էր արտասահմանից՝ տարերային աղետից տուժածներին օգնելու նպատակով. նրա նախարարները հնազանդ էին, ինչպես երբեք, որովհետեւ իրենց ընտանիքների հետ կիրակի օրերը անց էին կացնում ծովափերում, Կարմիր խաչի բաց արած հոսպիտալներում, որովհետեւ արտաքին առեւտրի նախարարությունը, սենք, առողջապահության նախարարությանն էր վաճառում արտասահմանից ձրի ստացված արյան պլազման եւ տոննաներով կաթնափոշի, իսկ առողջապահության նախարարությունն այս ամենը վերավաճառում էր աղքատաց հիվանդանոցներին. գլխավոր շտաբի սպաներն իրենց փառասիրությունը հագեցնում էին հասարակական կառույցներում ներդրվող իրենց կապալներով՝ երկրի վերականգնման ծրագրերի սահմաններում, որ իրագործվում էր դնսպան Ուտրենի տրամադրած արտակարգ փոխառության միջոցներով, փոխարենը մեր ջրերում անսահմանափակ ձկնորսության արտոնություն էր ձեռք բերել: «Սատանան դրանց բոլորին տանի,- ասում էր նա ինքն իրեն, հիշում զրույցն այն երիտասարդի հետ, որի մասին այլեւս ոչ ոք եւ երբեք ոչինչ չլսեց, հիշեց թե ինչպես ցույց տվեց ափամիջի գունավոր, ապակյա գնդիկը, կանիկան, ինչպես կոչում են մանկական համանուն խաղում,- միայն նա ունի, ով ունի»: Նա շատ էր ոգեւորված վերականգնման աշխատանքներով, անձամբ էր ղեկավարում բոլոր հարցերով, խորամուխ լինելով նույնիսկ, ամենաչնչին մանրամասնությունների մեջ, բացարձակապես ինքն էր վճռողը, ճիշտ այնպես, ինչպես իշխանությունն իր ձեռքը վերցնելու առաջին տարիներին. գլխարկը գլխին եւ հահճի սապոգները հագած նա հայտնվում էր հեղեղյան ցեխաջրերով պատված փողոցներում, հետեւում, որ քաղաքը վերականգնեն իր մտահղացումներին համապատասխան, որպեսզի քաղաքը լինի այնպիսին, ինչպիսին տեսել էր մենավոր ջրահեղձի իր երազում. իր փառքը մեծարող քաղաք: Նա հրամայեց շինարարներին. «Տեղափոխեք այս տներն այնտեղ, դրանք խանգարում են ինձ», եւ տներն իսկույն տեղափոխվեցին, հրամայեց. «Բարձրացրեք այս աշտարակը երկու մետրով, որպեսզի գագաթից երե-

ան օվկիանոսային նավերը», եւ աչառարակը իսկույն բարձրաց-րին, հրամայեց. «Շուռ տվեք այս գետի հունը», եւ դա էլ արվեց անտրտունջ. նա մոռացել էր տխրությունը, թախիծը, գլխովին խրվել չինարարության հոգսերի մեջ, ապրում էր կառուցումների տենդագին թափով եւ այնքան հեռացավ պետական այլ գործերից, որ մի անգամ, ճակատով ասես, պատին դիպավ, երբ ինչ-ինչ երեխաների վերաբերող խնդիրը լսեց. «Ինչպե՞ս վարվել երեխաների հետ»,- իր ցրվածության պատճառով հարցրեց համհարգը, որն այդ հարցը տալու իրավունքը չուներ: Բայց հարցը արված էր, եւ գեներալը, վազքի մեջ ասես, ճակատը պատին խփելով հարցրեց այնպես, կարծես երկնքից հենց նոր գետին ընկավ. «Ի՞նչ երեխաներ, գրողը ձեզ տանի»: Եվ նա տեղեկացավ այն եղելությանը, որ երկար տարիներ թաքցնում էին իրենից. բոլորից ծածուկ բանակը փակի տակ էր պահում վիճակախաղի խաղարկումներին պարկերից տոմսակների համարները հանող երեխաներին: Որովհետեւ վախենում էին, որ նրանք կպատմեն գաղտնիքը այն հրաշքի, թե ինչպես է միշտ շահում պրեզիդենտը. «Ծնողները փորձում են պարզել երեխաների թաքստոցի վայրը, մեղադրում են մեզ, որ փակի տակ ենք պահում նրանց: Ամեն անգամ մենք պատասխանում ենք, որ զրպարտում են մեզ, ընդ-դիմության չարամիտ հորինվածքներն են կրկնում, սակայն ծնողները չեն հանգստանում: Եղավ մի պահ, երբ նրանք ապստամբեցին, ցանկացան զորանոցներից մեկը խուժել, այնպես որ՝ հարկ եղավ ականանետային համազարկով ետ քշել նրանց: Միջադեպն արյունալի էր, իմ գեներալ, իսկական կոտորած տեսնվեց, բայց մենք չէինք ուզում անհանգստացնել ձեզ՝ նման մանրուքով: Երեխաներն, իրար, նստած էին բերդի զնդաններում: Իհարկե, հրաշալի պայմաններ են ստեղծված նրանց համար, բոլորն էլ ողջ-առողջ են, բայց հարցն այն է, որ արդեն մոտ երկու հազար երեխա է կուտակվել, եւ մենք այլեւս չգիտենք, թե ինչպես վարվենք այսուհետ, իմ գեներալ»:

Անվերապահորեն շահող խաղարկության եղանակը հայտնագործվեց ինքն իրեն, վերին ներշնչանքով, բիլիարդի համարակալած գնդերին նայելիս: Մտահղացումը հանճարեղության աստիճան պարզ էր, այնքան պարզ, որ չարժեր հետաձգել դրա իրագործումը. համազգային վիճակախաղ հայտարարվեց: Զնայած այրող

արեւին, դե Արմաս հրապարակում մինչեւ կեսօր ոտքի վրա կանգնած, բախտները փորձել ցանկացող մարդկանց ամբոխները փառաբանում էին վիճակախաղի ազնվագույն կազմակերպչին. երաժիշտներ հայտնվեցին, լարախաղացներ, բացվեցին կրպակներ, ամբոխի մեջ ետ ու առաջ էին վազվզում տաքդեղով ու դդմի հետ տապակած լոլիկ վաճառողները, անդրջրհեղեղյան պտուտախաղ էին խաղում եւ այն վիճակախաղը, որի ժամանակ քո փոխարեն տոմսակը դուրս է հանում մազաթափ որեւէ գազանիկ. ժամանակավրեպ բոլոր այս պարագաներն անհետացող աշխարհի բեկորներ էին, մեծ բախտի անիվի առաջ փչրանքներով հարստանալու, նրա պատրանքներից պատառներ փախցնելու մի փորձ: Եվ ահա, ցերեկվա ժամը երեքին փայտամած ելան յոթ տարին էլ չբոլորած երեք երեխա, որոնց ընտրել էր ամբոխը, որ ոչ մի կասկած չհարուցվեր, եւ յուրաքանչյուր երեխային տրվեց բիլիարդի գնդերով մեկական պարկ - ոչ մեծ այդ պարկերը տարբեր գույնի էին, յուրաքանչյուրի մեջ տասական՝ զրոյից մինչեւ ինը համարակալումով բիլիարդի գնդեր. նախօրոք, հատուկ վկաների միջոցով ստուգվել էր նաեւ համարակալման ճշտությունը: Եվ՝ ուշադրություն, տիկնայք ու պարոնայք. կապված աչքերով երեխաներից ամեն մեկը պարկերից հանում էր մեկական գունդ: Սկզբում կապույտ պարկ ունեցողը, հետո նա, ում պարկը կարմիր էր, իսկ վերջում՝ դեղնագույն պարկ ունեցողն էր հանում: Երեքն էլ, մեկը մյուսի հետեւից, ձեռքները պարկերն էին խոթում, շոշափում կլոր ողորկությունները եւ հանում ամենից սառը գունդը. նրանց այդպես էին հրահանգել: Իսկ պարկերում միակ սառը գունդը սառն էր, որովհետեւ նախորդող մի քանի օրը պահում էին սառցով լի դույլի մեջ: Եվ այսպես, երեխաները պարկերից հանում էին մեկական գունդ, ցույց տալիս ժողովրդին, հայտարարելով համարը, եւ հայտարարված երեք համարներն էլ երջանիկ զուգադիպությամբ համընկնում էին պրեզիդենտի տոմսակի եռանիշ համարին. «Մեր մտքով, սակայն, չէր անցնում, իմ գեներալ, որ երեխաները որեւէ մեկին կպատմեն գաղտնիքը: Իսկ երբ հասկացանք, որ նման վտանգը առկա է, այլեւս այլ ելք չկար, պիտի բանտարկեինք նրանց: Սկզբում երեքին, հետո չորսին, հինգին, հետո նրանց թիվը քսանի հասավ... եւ այսպես շարունակ, իմ գեներալ»: Զգելով

թելի մի ծայրից, նա կծկեց ամբողջը եւ ինքն իրեն խոստովանեց, որ վիճակախաղի խարդախության մեջ ոտից գլուխ խառնված են բանակի, նավատորմիղի բարձրաստիճան բոլոր սպաները, իմացավ, որ փայտամած բարձրացած առաջին երեխաները ծնողների համաձայնությամբ էին բարձրացել, որ ծնողներն իրենք էլ են օգնել վիճակախաղի կազմակերպիչներին, հուշել երեխաներին, թե որ գունդն է հարկավոր ընտրել: Բայց հետագա խաղարկություններին արդեն ուժով են հարկադրել երեխաներին փայտամած բարձրանալ եւ սպառնալիքով ստիպել անել այն, ինչ պետք է: Այստեղ արդեն ծնողների համաձայնությունը չկար, որովհետեւ լուրեր էին պտտվում, թե մեկ անգամ փայտամած բարձրացած երեխան այլեւս ցած չի իջնում: Բանակի հատուկ գրոհային խմբերը գիշերներով աներ էին մտնում դանելու հերթական խաղարկությանն անհրաժեշտ երեխաների, բայց ծնողները թաքցնում էին նրանց՝ ով ինչպես կարող էր: Հատուկ նշանակության զորքերը հարկադրված էին շրջափակել դեռ Արմաս հրապարակը ոչ թե հասարակական հուզումները կարգավորելու համար, ինչպես զեկուցում էին պրեզիդենտին, այլ մահվան սպառնալիքի տակ զսպելու նախրի պես փախչող մարդկային ամբոխները: Այն դիվանագետները, ովքեր տեսակցություն էին խնդրում առաջացած ընդհարումները հարթելու առաքելությամբ, կառավարական պաշտոնյաներից լսեցին վայրիվերո բացատրություններ՝ թե ինչու պրեզիդենտը չի կարող ընդունել իրենց: Շրջանառության մեջ շպրտվեցին նրա տարօրինակ հիվանդությունների հինավուրց առասպելները: Պաշտոնյաների մի մասն ասում էր, թե նա չի կարող տեսակցել, որովհետեւ տառապում է փորացավից, նրա փորում, իբր, գորտեր են հայտնվել, մյուսները պնդում էին, որ նա տանջվում է անքնությունից, որովհետեւ ստիպված է քնել ոտքի վրա, քանզի ողնաշարին երաստ է բուսել, ճիշտ այնպիսին, ինչպիսին ուղտի իգուանը: Պաշտոնյաները նրան ցույց չտվեցին բողոքի եւ ոչ մի հեռագիր, երեխաներին ապատելու եւ ոչ մի ողերասագիր, իսկ նման հեռագրերն ու ողերասագրերը ստացվում էին աշխարհի բոլոր ծայրերից: Նրանից թաքցրել էին նույնիսկ Հռոմի պապի հեռագիրը, որով նա առաքելական իր վիշտն էր արտահայտում անմեղ հոգիների դառը ճակատագրերի կապակցությամբ: Բանտերը լեփ-լե-

ցուն էին ապատամբած ծնողներով, անհնար էր որեւէ երեխա գտնել վիճակախաղի հերթական խաղարկման համար. «Գրողը տանի, անելանելի վիճակ է, իմ գեներալ»: Բայց ոտքերի առաջ բացված անդունդի ողջ խորությունը նա ըմբռնեց այն ժամանակ միայն, երբ բերդի ներքնաբակում տեսավ դժբախտ, սպանդանոց քշվող նախրի նման երեխաների խումբը, երբ տեսավ խենթացած այծիկների նման գետնի տակից դուրս պրծնող մանուկներին, որոնք այսուայն կողմ էին վազվզում երկար ամիսների սարսափելի խավարից հետո, պայծառ արեւից շլացած: Նրանք մոլորվում էին լույսի մեջ, այնքան շատ էին նրանք եւ միեւնույն ժամանակ մի այնպիսի ամբողջականություն էին ներկայացնում, որ նա չընկալեց նրանց առանձին-առանձին, ընկալեց ոչ թե որպես երկու հազար տարբեր երեխաներ, այլ որպես հսկայական, անձեւ, բազմագլխանի մի կենդանի - այդ կենդանուց խանձված բրդի հոտ էր փչում, այդ կենդանին աղմկում էր ստորերկրյա ջրերի պես: Այդ կենդանու բազմաղիմությունը փրկեց իրեն անհապաղ ոչնչացումից, քանի որ անհնար էր մեկին վերջ տալ կյանքի այդ հորձանուտն այնպես, որ սարսափը չցնցեր ողջ աշխարհը. «Ոչինչ անել չես կարող, գրողը տանի»: Սակայն պետք էր որեւէ բան ձեռնարկել, եւ նա իր մոտ հրավիրեց գլխավոր հրամանատարությանը: Նրա առաջ ներկայացան արտաքինից անվախ եւ ահեղ տասնչորս հրամանատարներ, անվախ ու ահեղ հատկապես այն պատճառով, որ ինչպես երբեք, վախեցած էին ու դողում էին ամեն մեկն իր կաշվի համար: Նա սեւեռուն նայեց յուրաքանչյուրի աչքերին եւ համոզվեց, որ ինքը մենակ է բոլորի դեմ: Եվ այդժամ նա կոչ արեց միասնություն, հատկապես հիմա, երբ խոսքը զինված ուժերի բարի անվանը եւ պատվին է վերաբերում: Նա հաստատակամ հայտարարեց, որ չի կասկածում իր զորահրամանատարների անմեղությանը, եւ սեղմած բռունցքը սեղանին դնելով թաքցրեց կասկածի դողը: Նա բոլորին հրամայեց մնալ իրենց պաշտոնատեղերում, կատարել պարտականությունները նախկին ջանադրությամբ, չտագնապելով հեղինակազրկումից. «Ոչինչ չի պատահել, սենյորներ, Նիստն ավարտվեց, ամեն ինչի համար ես եմ պատասխանատու»: Նիստից հետո երեխաներին դուրս բերեցին բերդից, բեռնեցին ծածկասայլերը եւ գիշերվա մթության մեջ ուղարկեցին երկրի հեռավոր ու

անմարդաբնակ մի շրջան, իսկ առավոտյան նա հանդես եկավ հանդիսավոր ու պաշտոնական հայտարարությամբ, ըստ որի, բանակի կողմից, իբր, երեխաների բանտարկման լուրը լկտի կեղծիք է, որ կառավարությունը փակի տակ չի պահում եւ ոչ մի երեխայի, ոչ էլ որեւէ մեկին, որ երկրում, առհասարակ, չկան ոչ մի կարգի բանտարկյալներ, բանտերը դատարկ են, զանգվածային բանտարկությունների առասպելները հորինում են ստոր դավաճանները, որոնք ջանում են պղտորել ժողովրդի հայրենասիրական հոգին. «Մեր երկրի դռները բաց են բոլոր նրանց առաջ, ովքեր ուզում են իմանալ ճշմարտությունը. ճշմարտության համար մեզ մոտ եկեք»: Ի պատասխան այս հայտարարության, ժամանեց Ազգերի Համագործակցության հանձնաժողովը, աչքի անցկացրեց բոլոր ծակուծուկերը, քիթը բոլոր թաքստոցները խոթեց, կրքոտ ու մանրազնին հարցաքննեց նրանց, ում ցանկացավ, այդ թվում նաեւ Բենդիսոն Ալիսարադոյին, որը զարմացել էր. «Ովքե՞ր էին հոգեհարցուկի հագուստներով այդ ճարպիկ մարդիկ: Տունս մտան ու սկսեցին երկու հոգոր երեխա փնտրել մահճակալիս տակ, ձեռագործիս գոմրյուզոմ եւ նույնիսկ վրձիններիս ամանում»: Վերջիվերջո, հանձնաժողովը հրապարակով հաստատեց, որ երկրի բանտերը փակված են, որ ամենուր կարգուկանոն է տիրում, որ չկա ոչ մի ապացույց, թե երկրում խախտվել կամ խախտվում են,- կամա թե ակամա, գործունեությամբ, թե անգործունեությամբ,- մարդու իրավունքները, կամ մարդասիրական սկզբունքները. «Քնեք հանդիստ, իմ գեներալ: Ցտեսություն»: Լուսամուտի մոտ կանգնած նա նայում էր, թե ինչպես է լողում հանձնաժողովին տանող նավը եւ, որպես հրաժեշտի նշան, թափահարեց ասեղնագործած թաշկինակը. «Ցտեսություն, ապուշներ, ձեզ խաղաղ ծով եմ մաղթում եւ երջանիկ նավարկություն»: Եվ թեթեւացած շունչ քաշեց. «Վերջ, վերջացավ այս շիլաշփոթը»: Սակայն գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը հիշեցրեց, որ ոչ, չի վերջացել շիլաշփոթը. «Երեխանները չէ՞ որ մնացին, իմ գեներալ»: Եվ այդժամ նա խփեց իր ճակատին. «Գրողը տանի, մոռացել էի, բոլորովին մոռացել էի: Իրոք, ի՞նչ անենք դրանց»: Որպեսզի մի կերպ ազատվեին ճանճրալի այդ հարցից, նա առայժմ հետաձգելով վերջնական որոշումը, հրամայեց երեխաներին անմատային թավոտներից, ուր թաքցրել

էին, տեղափոխել այն վավառները, որտեղ մշտապես անձրևներ են թափվում, որտեղ չեն փչում փոփոխակի քամիներ,- երեխաների ձայնը մարդկանց սկանջներին չհասնելու համար,- հրամայեց տեղափոխել նրանց այնպիսի վայրեր, որտեղ նույնիսկ բառերն են բորբոսնում խոնավությունից եւ որտեղ լալրծուն ութոտնիկները ծառից ծառ են սողում. նա հրամայեց նրանց Անդեր, տամուկ անձամները տանել, որ լեցուն են մշուշներով, որպեսզի ոչ ոք չգուշակեր, ոչ մեկի մտքով չանցներ, թե որտեղ կարող են լինել նրանք. նա հրամայեց անվերջ տեղից տեղ տանել նրանց՝ ցածրադիր վայրերի փտող նոյեմբերից դեպի սարահարթի չիկացած փետրվարը. նրանց համար նա խինին ուղարկեց եւ տաք վերմակներ, երբ իմացավ, որ հիվանդացել են ջերմախտով - մի քանի օր նրանք մինչեւ կոկորդները կանգնած են եղել բրնձարտերի ջրերում, որպեսզի թաքնվեն Կարմիր Խաչի սավառնակներից: Նա հրամայեց կարմիր լույսով մթնեցնել արեւի պայծառ փայլը եւ աստղերի լուսարձակումը, որպեսզի չկկծային երեխաների աչքերը, երբ նրանք հիվանդացան քութեչով. նա հրամայեց փոշեցան անել օդից ինսեկտիցիդներով, որպեսզի չխժռեր նրանց սոսյաց պուրակների սքցանը. նրանց վրա թափում էին քաղցրավենիքի անձրեւ եւ կաթնասերով պաղպաղակի ձյուն, սավառնակները պարաշյուտներով ցած էին նետում նոր տարվա ընծաներ - նա անում էր ամեն ինչ, որպեսզի երեխաները գոհ լինեն եւ ապահով, մինչեւ վերջնական որոշման կհանդեր նրանց ճակատագրի կապակցությամբ: Իր այս բարեգործություններով նա հեռզհետե հանգստացրեց իր խիղճը եւ չարանենգ հարցը՝ «Ինչպե՞ս վարվենք նրանց հետ», դադարեց տանջել. նա մոռացավ երեխաներին, ընկղմվեց ձանձրալի, անքուն դիշերների ու անհաշիվ, համանման ցերեկների միօրինակ ճահիճը, ոչինչ այլեւս նրան չէր հուզում, մինչեւ հասավ այն երեկոն...

Երեքշաբթի էր, ժամացույցը կարկեց ինն անգամ, եւ նա լսելով ժամանակի մետաղային զնգոցը, պալատի լուսամուտի գոգերից վռնդեց թառած հավերին, իրենց բները՝ քշեց, հետո, երբ նրանք նստոտեցին իրենց թառերին, սովորության համաձայն սկսեց հաշվել դրանց. եւ այդ պահին ներս մտավ հերթապահ թռչնապահը՝ մուլատուհին, հավաքելու այդ օրվա ածած ձվերը, իսկ նա հանկարծ չվատնված կրակ զգաց ներսում, կրծկալի շրջու-

նը հուզեց նրան, եւ նա մոռացավ կնոջը: «Զգույշ, գեներալ,- շշնջաց կինը, ամրողջ մարմնով դողալով,- ձվերը կջարդվեն...»,- «Սատանան դրանց հետ,- մրթմրթաց նա,- թող ջարդվեն...»: Եվ թաթի մի հարվածով, տես, ապատագրվելու ձգտումով այն կանխազգացումից, որ ինչ-որ բան է կատարվելու արժանահիշատակ այդ երեքշաբթի օրը, նա մուլատուհուն շպրտեց քնած հավերի կանաչ ծերտով մուրտառված հատակին, սայթաքեց, գլխապտույտ ունեցավ եւ թռավ անուրջների անդունդը, սուտ փրկության ցնորական խորխորատը, քրտնքի հեղձուկ ալիքների, ուժեղ կնոջ շնչառության ալիքների մեջ, մոռացման խոստումների վիհը,- նա թռչում էր, ետեւից ընկնող ատոմի պարաբոլային ծիրի նման թողնելով ոսկյա խիտոնի գնդացող, լույս արձակող հետքը, տարածությունը լցնելով գարշահոտ փնջոցներով, շան պես ատամներն իրար զարկելով, թռչում էր՝ հոմակված գոյի քաղցր սարսափով, կուրացուցիչ բոնկումների եւ անիրեւակայելի ակնթարթային մահվան կայծակների անձայն որոտների միջով, բայց անդունդի հատակին, խորխորատի հատակին նույն այս հավանոցի գետինն էր՝ հավի կանաչ ծերտ. հավերի անքուն քուն, դողացող մուլատուհի՝ շրջազգեստը լղոփված ջարդված ձվերի դեղնուցով. «Ահա, տեսաք, ասում էի, չէ՞, գեներալ: Բոլոր ձվերը ջարդվեցին»: Եվ նա, բավարարություն չստացած, էլի մի անսեր սիրո չարությունը զսպելով ասաց. «Հաշվիր ու գրի առ, թե քանիսն են: Ես դուրս կգրեմ դրանց արժեքը քո աշխատավարձից»: Եվ գնաց: Ժամացույցը տասն էր ցույց տալիս: Նա փերմա մտավ, տնտղեց բոլոր կովերի լնդերը: Անպնելով հարճերի չինության մոտով, լուսամուտից տեսավ հատակին պառկած ծննդկանին. տատմոր ձեռքերում հենց նոր ծնված երեխան էր. «Տղա է ծնվել, իմ գեներալ: Ի՞նչ անուն տանք»- «Ինչպես կուզեք»,- պատասխանեց նա: Ժամը տասնմեկը դարձավ: Սովորականի պես նա հաշվեց ժամապահներին, ստուգեց փականները. ծածկեց թռչնավանդակները եւ ամենուր մարեց լույսերը: Կեսգիշերն էր մոտենում: Երկիրը խաղաղ էր, աշխարհը՝ քնած: Խավարի մեջ նա ուղղվեց դեպի իր ննջասենյակ, անցավ պատվող փարոսի արարած ակնթարթային լուսաբացներով, մութ միջանցքներով: Հասնելով ննջասենյակին, դռան մոտ կախեց լամպը, որ նախատեսված էր հնարավոր փախուստի հա-

մար, փակվեց երեք կողպեքով, երեք սողնակով, դռան վրա ձգեց երեք շղթաները եւ, նստելով փոքրիկ աթոռակին. օրոր ասաց իր անխիղճ զավակին, հրեշավոր իր փոչոտանկին, մինչեւ քնեցրեց ափի մեջ, մինչեւ ցավը մեղմացավ: Բայց իսկույն էլ ցավը ետ եկավ, շամփրեց հանկարծական սարսափի կայծակով. ճիշտ նույն պահին, երբ լուսամուտից ներս խուժեց սելիտրա արդյունահանող հեռավոր անապատից եկած քամին, որ ավազահատիկների նման ննջասենյակը լցրեց երգող անհամար ձայներով: Նրա սրտից վտարված, մռայլ անապատներով թափառող երեխաների երգը հարցմունք էր պատերազմ մեկնած ասպետի մասին. «Ո՞ւր է ասպետը: Ո՞ւր է նա: Օ՜, վիշտ, թախիծ... Բարձրացիր աչտարակը, որ տեսնես նրա վերադարձը, եւ դու կտեսնես, որ նա արդեն վերադարձել է թավշապատ դագաղով: Օ՜, վիշտ, օ՜, տխրություն»: Հեռավոր ձայների խմբերգը կարելի էր աստղերի ձայնի տեղ ընկալել, բայց նա կատաղորեն վեր թռավ տեղից ու բղավեց. «Հերիք է, գրողը տանի: Կամ նրանք, կամ ես»: Իհարկե, վիճակն իր օգտին ընկավ: Լուսարացից առաջ նա հրաման արձակեց երեխաներին ցեմենտով բեռնված նավը լցնել եւ երգերի հետ ուղարկել ջրային մեր սահմաններից այն կողմ, որտեղ բեռնանավը պայթեցվեց ուժանակի լիցքով, իսկ երեխաները, ոչինչ չհասցնելով հասկանալ, քարի նման հատակը սուզվեցին: Երբ երեք սպա ներկայացան նրան ու զեկուցեցին հրամանը ի կատար ածելու մասին, նա նախ բարձրացրեց նրանց կոչումները միանգամից երկու աստիճանով եւ պարգեւատրեց հավատարիմ ծառայության համար մեդալով, հետո հրամայեց գնդակահարել՝ որպես սովորական քրեականներ. «Որովհետեւ հրամաններ կան, որ կարելի է արձակել, իսկ իրագործելը հանցագործություն է, գրողը տանի: Խե՜ղճ երեխաներ»:

Նման դաժան փորձությունները մի ավելորդ անգամ հաստատեցին նրա վաղեմի այն համոզվածությունը, որ ամենավտանգավոր թշնամին վարչակարգի ներսում է՝ օժտված վստահությամբ, պետության ղեկավարի սիրտը գրաված. մի ավելորդ անգամ նա համոզվեց, որ ամենանվիրվածները, ում երբեւէ մեծարել էր եւ որոնք, ըստ էության, իր հենարանը պիտի դառնային, վաղ թե ուշ փորձել են արհամարհել իրենց կերակրող ձեռքը. նա այդպիսինե-

րին ոչնչացնում էր թաթի մի հարվածով, դրանց փոխարեն անէությունից դուրս բերում այլոց, առաջ քաշելով բարձր պաշտոնների, զինվորական կոչումներ չնորհելով ըստ ներշնչման, մատի մի շարժումով. «Դու կապիտան ես, դու՝ մայոր, դու՝ գնդապետ, դու՝ գեներալ, իսկ մնացածները՝ լեյտենանտ: Էլ ի՞նչ է ձեզ պետք»: Սկզբում նա հետեւում էր, թե ինչպես են սրանք գիրանում, ինչպես են լայնանում համազգեստների մեջ այն աստիճան, որ տրաքտրաքում էին կարերը, իսկ հետո կորցնում էր նրանց տեսադաշտից, ենթադրելով, թե նրանք ծառայում են հավատարմորեն, եւ միայն այս անակնկալը, երկու հազար երեխաների հետ կապված պատմությունը թույլ տվեց նրան բացահայտել, որ իրեն անհարմար վիճակի մեջ է գցել ոչ թե մեկը, այլ զինվորական ուժերի ողջ հրամանատարությունը. «Միայն կաթի ծախսն ավելացնելու պահանջ ներկայացնել գիտեն, իսկ փորձության ժամին կարող են վախից այն ափսեների վրա նստել, որոնցից քիչ առաջ ճաշ էին խժռում, իսկ չէ՞ որ ինքս եմ ձեզ ծնել, սրարել իմ իսկ կողոսկրից, հաց ու պատվի արժանացրել»: Դա այդպես էր, բայց նա մի բոպե հանգիստ չուներ, ստիպված էր ամեն կերպ սիրաշահել նրանց, հաշվի առնել յուրաքանչյուրի հավակնություններն ու պատվասիրությունը: Ամենավտանգավորներին նա իր կողքին էր պահում, որպեսզի հեշտությամբ հետեւեր, մյուսներին ծառայելու էր ուղարկում սահմանապահ ուղեկալներ, բայց այս միջոցառումները չէին ազատում նրան կասկածներից: Ժամանակին, հանուն այդ սպանների, նա համաձայնեց գրինգոների ծովային հետեւակին տեղ տալ մեր ծովափում եւ ոչ թե դեղին տենդախտի դեմ համատեղ պայքարի համար, ինչպես պաշտոնական հաղորդագրությամբ հայտարարեց դեսպան Թոմպսոնը, եւ բոլորովին էլ ոչ այն պատճառով, թե իբր, ժողովրդական հուզումներից վախեցավ, ինչպես պնդում էին քաղաքական վտարանդիները. «Ես ուզում էի որ մեր սպաներին կրթեն կարգին մարդ դարձնեն: Եվ նրանք կրթվեցին բայց ի՞նչ դուրս եկավ: Նրանց կոչիկ հագնել սովորեցրին զուգարանի թղթեր ու ապահովիչներ օգտագործել եւ էլի շատ գիտություններ իսկ ինձ հուշեցին զինվորական տարբեր խմբավորումներում տարաձայնություններ բորբոքելու ձեւերը որպեսզի չեղեն ինձ հետ մրցակցելու մտադրությունները գրինգոներն ինձ համար

հորինեցին ազգային անվտանգության վարչություն հետաքննության գլխավոր գործակալություն հասարակական կարգի ազգային դեպարտամենտ եւ նման կարգի այնքան հիմարություններ որ ես չեմ էլ հիշում բոլորի անվանումները»: Ճիշտն ասած, դրանք բոլորն էլ, միեւնույն, ազգային անվտանգության վարչության տարբեր բաժանմունքներն էին, բայց նրան ձեռնտու էր ցույց տալ, թե տարբեր օրգաններ են, տարբեր ծառայություններ, որպեսզի հնարավորություն ունենար խառը ժամանակներում խուսանավել խժդժություններից՝ ազգային անվտանգության մարդկանց ներշնչելով, թե ձեզ հետամտում են հետաքննության գլխավոր գործակալության աշխատակիցները, իսկ սրանց եւ մյուսներին՝ հասարակական կարգի պահպանման դեպարտամենտը: Նա ճակատ ճակատի էր բախում սպաներին, գաղտնի հրահանգում ծովի ավազ խառնել վառոդին եւ մատակարարել անվստահելի զորանոցներին, մեկին այս էր ասում, մյուսին՝ այն, լրիվ հակառակը, խճճում էր ամենքին եւ ամեն ինչ այնպես, որ ոչ ոք չհասկանար իր իսկական մտադրությունը: Եվ, այսուհանդերձ, նրանք ապստամբում էին: «Ապստամբել է այսինչ զորանոցը, իմ գեներալ»: Եվ նա այդ զորանոցն էր խուժում կատաղության փրփուրը շրթներին, վայրենի բղավոցով. «Ճանապարհ տվեք, կոտոշավորներ, իշխանությունը ինձ է պատկանում»: Առանց դադարի նա անցնում էր շփոթված սպաների կողքով, որոնք քիչ առաջ վարժական կրակոցներ էին արձակում նրա դիմանկարների վրա, եւ հրամայում. «Զինաթափվել»: Այնքան ինքնավստահություն կար նրա տիրական ձայնում, որ սպաներն իրենք էին վար թափում զենքերը: «Հանել համազգեստը.- հրամայում էր նա:- Համազգեստին արժանի են միայն իսկական տղամարդիկ»: Եվ սպաները հանում էին համազգեստները. «Ինովություն է բարձրացրել Սան-Խերոնիմա բազան, իմ գեներալ»: Եվ նա բազա մտավ գլխավոր մուտքից, ծերունավարի քարշ տալով խոշոր, հիվանդ ոտքերը, անցավ ապստամբած գվարդիականների կույտ շարքի միջով եւ գվարդիականները զինվորական պատիվ տվեցին իրենց գերագույն հրամանատարին, եւ հայտնվելով ապստամբների շտաբում՝ մենակ, առանց զենքի, տիրական բղավեց. «Մուրմներդ հատակին, վիժվածքներ: Պառկել, բճեր»: Եվ գլխավոր շտաբի տասնինը սպաներ հնազանդ պառկե-

ցին հատակին բերանքսիվայր, իսկ շատ շուտով նրանց արդեն տանում էին ծովափնյա գյուղերով ու ստիպում հող ուտել, որպեսզի բոլորը տեսնեին, թե ինչ արժե համազգեստից զրկված զինվորականը: «Նան որդիներ,- բղավում էին հուզված զորանոցների զինվորները եւ կրկնում պրեզիդենտի պահանջը՝ արճճե կրակահերթ բաց թողնել խռովությունը հրահրողների թիկունքներին, ինչը իրագործվեց, որից հետո դիերը ոտքերից կախեցին կիզիչ արեւի տակ, յոթ քամիների դեմ-դիմաց, որպեսզի բոլորն իմանան, թե ինչ է սպասում նրան, ով համարձակվում է թքել աստծո երեսին. «Ահա, այսպես, ավազակներ»: Արյունալի այս մաքրումները, սակայն, հանգստություն չպարգեւեցին: Այն վարակը, որ թվում էր արմատախիլ արեց, կրկին թափ առավ, տարածվեց, դավադրության հրեշը վերստին պարզեց իր շոշափուկները, ցանց հյուսեց իշխանության միջանցքների տանիքի տակ, ուժ ստանալով առավել վճռական սպաների արտոնյալ վիճակից - նա իր լիազորությունների փշրանքներից չէր կարող բաժին չհանել նրանց, չէր կարող վստահության չարժանացնել՝ հաճախ նաեւ ակամա, քանի որ անհնար էր առանց նրանց աթոռին մնալը, բայց խնդիրն էլ հենց այն էր, որ գոյակցելը նույնպես անհնար էր, անհնար էր շնչել նրանց հետ նույն օդը, նրան խեղդում էր այդ օդը, բայց որովհետեւ դատապարտված էր հավերժական կյանքին, ստիպված էր համբերել. «Գրողը տանի, անարդարացի է այս ամենը»: Կյանքն անտանելի էր դարձել իր թանկագին բարեկամ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարի նկրտումների նկատմամբ ունեցած չփարատվող ու սարսափելի կասկածներից, նրան տառապանք էր պատճառում իր իսկ անվստահությունը, բայց. «Նա իմ առանձնասենյակ մտավ գունատ, ինչպես մեռել եւ հարցրեց, թե ինչ եղան այն երկու հազար երեխաները: Արդյոք ճի՞շտ են խոսում ողջ աշխարհում, թե մենք խեղդել ենք նրանց ծովում»: Զդողացող ձայնով նա պատասխանեց գեներալ Ռոդրիգո դե Ագիլարին, որ այդ լուրերը դավաճանական հերյուրանքներ են, որ երեխաները, բարեկամս, ողջ-առողջ կենում են աստծո սպահով գրկում. «Ես ամեն գիշեր լսում եմ նրանց երգը»: Եվ նա անորոշ ուղղությամբ ու սահուն շարժեց ձեռքը: Իսկ հաջորդ օրը նա ցրեց դեսպան Էվոնսի կասկածը, անվրդով ասելով. «Ես գլխի չեմ ընկնում, թե ինչ երեխաների մասին

եք հարցնում: Չէ՞ որ ձեր երկրի ներկայացուցիչը Ազգերի համագործակցության հավաքում հրապարակավ հայտարարեց, որ երեխաները ողջ-առողջ են ու դպրոց են գնում: Էլ ի՞նչ եք ուզում: Վերջ: Վերջացրինք այս շիլաշփոթը»: Բայց շիլաշփոթն էլի չվերջացավ, նա անպոր էր վերջ տալուն, եւ մի անգամ, կեսգիշերին նրան արթնացրին. «Իմ գեներալ, խռովություն է սկսվել երկու խոշոր զորանոցներում, միաժամանակ ապստամբել են, ինչպես ձեզ հայտնի է, ընդամենը երկու թաղամաս հեռավորության վրա գտնվող Կոնդեի զորանոցները: Ապստամբությունը գլխավորում է գեներալ Բոնիվենտո Բարբոսը: Տեսա՞ք, թե ինչպես նա հզորացավ: Նրա տրամադրության տակ են լավ զինված հազար հինգ հարյուր մարտիկ: Զենքն ու ռազմամթերքը ստացել են մաքսանենգային ճանապարհով, մեր հակառակորդների կողմն անցած որոշ դեսպանատների օժանդակությամբ: Այնպես որ, դրությունը լուրջ է, իմ գեներալ: Վտանգը մեծ է, մեկ էլ տեսար՝ գրողի ծոցը գլորվեցինք»:

Անցած ժամանակներում քաղաքական հրաբխի նման պայթյունը, նրա ներսում պայքարի կրակ կբորբոքեր, խելահեղության դիմելու ձգտում, բայց հիմա... Չէ՞ որ նա քաջ գիտեր իր տարիքի ողջ ծանրությունը: Կամքի գրեթե ողջ պաշարը, ախր նա ծախսել էր օրգանիզմի ներսում կատարվող աննկատ քայքայումներին դիմադրավելու վրա, ձմռան գիշերներին, ախր, անհնար էր քնել առանց շիլելու, առանց նանիկ ասելու իր անխիղճ, շամփրող, ցավող իր երևույթին, գեշ եղանակից փքվող փոշտանկին՝ «Քնիր, իմ պարզ երկինք», ախր անտանելի տատապանքը վերածվել էր աթոռակին անարդյունք նստելու գործողությանը, երբ բորբոսով խցանված զտիչներից անցնող արյունը հենց հոգին էր լցվում: Իսկ ամենակարեւորն այն էր, որ նա գլխի չէր ընկնում, թե ով՝ ով է, ում վրա կարելի է հենվել անխուսափելի ճակատագրի անպատեհ ժամին, այս ճղճիմ պալատում, այս ողորմելի տանը, որն ինքը վաղուց ի վեր հաճույքով կփոխանակեր հեռավոր, հնդկական, քնձռտոտ մի գյուղակի որեւէ խրճիթով, որպեսզի ոչ ոք շրջապատում չմնար, որ երկար, անհիշելի երկար տարիների ընթացքում ինքն է եղել այս երկրի անփոխարինելի պրեզիդենտը: Եվ, այսուհանդերձ, երբ խելամիտ փոխզիջման հասնելու ցանկությամբ նրա մոտ եկավ գե-

ներալ Ռոդրիգո դե Ագիլարը եւ առաջարկեց իր միջնորդությունը պրեզիդենտի ու ապստամբների միջեւ, իր առջեւ տեսավ ոչ թե ընդունելություններին քնող, խելքը թռցրած ծերունուն, այլ նախկին օրերի, խիզախ բիզոնի նման մարդուն եւ այդ մարդը առանց վայրկյան իսկ մտածելու հայտարարեց. «Բան դուրս չի գա, ես հեռացողը չեմ»: Իսկ երբ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարն ասաց, որ խնդիրը հեռանալ-չհեռանալը չէ, այլ այն, որ «բոլորը հակառակ են ձեզ, իմ գեներալ, նույնիսկ եկեղեցին», նա առարկեց. «Բնավ այդպես չէ, եկեղեցին նրա հետ է, ում ձեռքին է իշխանությունը»: Իսկ երբ Ռոդրիգո դե Ագիլարը ասաց, որ միջնորդությունն անհրաժեշտ է, քանի որ գլխավոր հրամանատարները խորհրդակցում են արդեն քառասունութ ժամ եւ ոչ մի համաձայնության չեն գալիս, նա պատասխանեց. «Կարեւոր չէ, թող դատարկ-դատարկ դուրս տան, դու դեռ կտեսնես, թե ինչ որոշման կհանգեն, եթե իմանան՝ ով է ավելին վճարելու» - «Բայց քաղաքացիական ընդդիմության առաջնորդները դեն են նետել զիմակներն ու ցույցեր են անում հենց փողոցներում»,- բացականչեց Ռոդրիգո դե Ագիլարը, իսկ նա պատասխանեց. «Ավելի լավ, հրամայիր կախել դրանց մեկիկ-մեկիկ դեպ Արմաս հրապարակի լապտերներից, թող ամենքը տեսնեն, թե ում ձեռքին է ուժը» - «Դա անհնար է,- առարկեց գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը,- ժողովուրդը նրանց կողմն է անցել» - «Սուտ է,- ասաց նա,- ժողովուրդն իմ կողմն է, այնպես որ՝ այստեղից դուրս կբերվի իմ դիակը միայն»: Եվ նա բռունցքով հարվածեց սեղանին, ինչպես անում էր միշտ, վերջնական որոշում կայացնելիս, որից հետո քնելու գնաց եւ քնեց մինչեւ կովկիթի ժամը: Նա ելավ կովկիթի ժամին եւ տեսավ, որ պետական խորհրդի նիստերի դահլիճը լցվել է ապակու փշրանքներով ու քարերով. Կոնդե զորանոցի ապստամբներն էին կատապուլտներով քար ներս նետել լուսամուտներից: Ջարդոտված լուսամուտներից նրանք ներս էին գցել նաեւ այրվող օդապարիկներ. «Մենք հազիվ հնք ոտքի վրա մնում, իմ գեներալ, չենք քնել ողջ գիշերը, ջրով լի դույլերով ու վերմակներով այս ու այն կողմ էինք վազվզում, որ հանգցնենք կրակը, իսկ կրակը բռնկվում էր ամենաանսպասելի տեղերում, իմ գեներալ»: Զեկույցը նա լսեց կես ականջով եւ մեռելի քայլերով քստքստացրեց մոխրածածկ միջանցքներում, գորգերի, քենջերի,

մոխրացած գորբելենների վրա. «Ես ձեզ ասացի՝ ուշադրություն մի դարձրեք»- «Բայց նրանք չեն դադարեցնում,- ասացին նրան,- նրանք հայտնեցին, որ կրակե օդապարիկները սոսկ զգուշացում են, որ շուտով արկեր են բաց թողնելու, իմ գեներալ» - «Ուշադրություն մի դարձրեք, գրողը տանի»,- կրկնեց նա եւ այգի դուրս եկավ, քայլեց ծառուղով, ոչ մեկին ուշք չդարձնելով, լուսաբացի լռության մեջ լսելով նորածին վարդերի բացման շրշյունը, զգալով, թե ինչպես է ծովի զեփյուռն իր մեջ աքլորային ցանկություն ծնում:

«Այնուամենայնիվ ի՞նչ անենք, գեներալ» - «Ուշադրություն մի դարձրեք, գրողը տանի, քանի անգամ կրկնեմ նույնը»:

Ինչպես միշտ այդ ժամերին, նա գնաց ֆերմա՝ կովերի կաթն ընդունելու, եւ ինչպես միշտ, ամեն առավոտվա նման, շուտով Կոնդե զորանոցների մոտ կանգ առավ ջորիներով լծված, վեց տակառ կաթով բեռնված սայլը. նստելատեղին բազմած ամենօրյա սայլապանը ապստամբներին հաղորդեց պրեզիդենտի խոսքերը, թե ինքը սովորականի պես զինվորներին է ուղարկում իր ֆերմայի կաթը. «Կարգադրված է ձեզ հանձնել կաթը, պարոն գեներալ, թեեւ դուք կծել եք ձեզ կերակրող ձեռքը»: Սայլապանն այս խոսքերը բղավեց մի այնպիսի ուղղամտությամբ, որ գեներալ Բոնիվենտո Բարբոսը հրամայեց ընդունել կաթը, բայց պայմանով, որ առաջինը համտես անի սայլապանը, որպեսզի բոլորը համոզվեն, որ կաթը թունավորված չէ: Եվ ահա, բացվեցին երկաթյա դարպասները եւ հազար հինգ հարյուր ապստամբներ ներքին պատշգամբներից տեսան, թե ինչպես սայլը մտավ գետաքարերով սալարկված Կոնդե զորանոցի վարժահրապարակ եւ կանգ առավ հրապարակի կենտրոնում, տեսան, թե ինչպես սայլի վրա ելավ գեներալ Բարբոսի սպասյակը՝ ձեռքին կուժ եւ շերեփ, որ վերցնի համտեսի կաթը, տեսան, թե ինչպես նա բաց արեց առաջին տակառը եւ թե ինչպես նա վեր ճախրեց կուրացուցիչ բռնկման վաղանցիկ ալիքի հետ. եւ այլեւս ոչինչ չտեսան նրանք եւ չեն տեսնի դար ու դարեր, մոխրացած, ինչպես հրաբխի խառնարան, այդ մռայլ, դեղին շենքում, որի բեկորները վեց տակառ ուժանակի հրեշավոր պայթյունից հետո մի պահ միայն կախվեցին օդում,- նույնիսկ մի ծաղիկ չաճեց այդ տեղում պայթյունից հետո: «Ահա եւ

վերջ»,- շունչ քաշեց նա իր պալատում, ցնցվելով պայթյունի ալիքից, որը Կոնդեի զորանոցներից բացի ավերեց մոտերքի էլի չորս շինություն ու ջարդուփշուր արեց քաղաքի բոլոր տների պահարաններում շարված հարսանեկան ընծա սպասքները, ընդհուպ մինչեւ արվարձանների. «Ահա եւ վերջ»,- շունչ քաշեց նա, երբ նավահանգստի բերդից աղբատար սայլերով դուրս բերեցին տասնութ սպաների դիերը. փամփուշտ խնայելու նպատակով նրանց գնդակահարել էին երկու շարք կանգնեցրած, մի գնդակով երկուսին. «Ահա եւ վերջ»,- շունչ քաշեց նա, երբ Ռոդրիգո դե Ագիլարը ձգվեց նրա դիմաց լարի պես եւ գեկուցեց. «Քաղաքական բոլոր հանցագործները ձերբակալված են, իմ գեներալ: Բանտերում այլեւս տեղ չկա»,- «Ահա եւ վերջ»,- շնչեց նա լիսթոք, երբ ուրախ զողանջեցին զանգերը, աղմկեցին տոնական հրավառությունները, հնչեցին իրեն փառաբանող հիմների հանդիսավոր մեղեդիները՝ ավետելով ապագա հարյուր խաղաղ տարիների սկիզբը: «Ահա եւ վերջ, գրողը տանի,- ասաց նա,- վերջապես ավարտվեց շիլաշփոթը»: Նա այնքան ինքնավստահ դարձավ, որ չափից ավելի թեթեւամիտ ու անփույթ սկսեց վերաբերվել իր անձնական ապահովությանը. այնպես բթացավ նրա զգուշավորությունը, որ երբ մի առավոտ պալատ էր վերադառնում կովկիթից, միանգամից չնկատեց վարդի թփի տակից դուրս ցատկող, դեպի իրեն նետվող բորոտին: Նա սթափվեց այն պահին միայն, երբ բորոտն արդեն փակել էր ճանապարհը, երբ հոկտեմբերյան թխակապույտ, մանր անձրեւի տակ փայլեց ատրճանակի արջնած պողպատը, երբ դողացող մատն արդեն փորձում էր սեղմել շնիկը: Նա ցցեց կուրծքը, լայն տարածեց ձեռքերը ու բղավեց. «Համարձակ, կոտոշավոր, համարձակ»: Միեւնույն ժամանակ նա զարմացած էր, որ մահաժամը հասել էր բոլորովին էլ ոչ այնպես, ինչպես կանխատեսել էր դուշակ-պայծառատեսը, ինչպես երեւացել էր նախաստեղծ մաքուր ջրերի հայելում, եւ նա կատաղի բղավեց. «Դե, կրակիր, եթե տղամարդ ես»: Բայց բորոտը հապաղում էր, տատանվում. աչքերը խավարեցին, շրթների անկյուններն անկամ կախ ընկան, եւ հաջորդ պահին նրան խլացրեց կռան-բռունցքը. նա փռվեց գետնին եւ ծնոտին ստացավ ոտքի սոսկալի մի հարված, իսկ նա, ում վրա մահափորձ էր ձեռնարկվել, իր գլխավերեւում տեսավ աղոտ ու

մենավոր մի տասղ եւ ասես անդրաշխարհից լսեց իր ճիչի վրա վազող պահակախմբի դոփյունը. «Ի՞նչ է պատահել, իմ գեներալ»: Եվ հինգ կրակոց հայթեց, հինգ կապույտ բռնկում լուսավորեցին այգին. բորոան էր փորի մեջ պարպել ողջ պահունակը՝ չցանկանալով ողջ-ողջ ընկնել պլեզիդենտական գվարդիայի դահիճների ձեռքը: Իսկ նա լոր անելով սրյան լճակում կծկված բորոսի մարմնի վրայով, իր կոկորդի ճղոցով խեղդելով պալատի խուճապահար բնակիչների ճիչերը, հրամայեց կտրատեն, ապխտեն մեռածի մարմինը, գլուխը աղեն, բոլորին ի տես տնկեն դե Արմաս հրապարակում, աջ ոտքը ցուցադրեն Սանտա-Մարիա-դել Ալտարի արեւելյան ծայրամասում, իսկ ձախը՝ արեւմուտքում, անապատում, որտեղ սելիտրա են արդյունահանում, մի ձեռքը ցույց տան սարահարթի բնակիչներին, մյուսը՝ անտառային շրջանների մարդկանց, ճարպով տապակած նրա լեշի կտորտանքը կախել արեւի տակ, յոթ քամիների դեմ-դիմաց, կեղտոտ այս բոզանոցի բոլոր լայնություններում, որպեսզի ոչ մեկը կասկած չունենա, որ սա է վերջը նրա, ով կհամարձակվի ձեռք բարձրացնել իր հոր վրա: Արձակելով սույն հրամանը, նա դեռ կատաղությունից կանաչած, մտավ վարդաթփերի մեջ, տեսնելու, թե ինչպես է պահակախումբը սրսում բորոսներին, ինչպես է նրանց խոցոտում սվիններով՝ որպես սովորական միջատներ. «Բաց արեք ձեր դեմքերը, ավազակներ»: Արդեն պալատում, սանդուղքով բարձրանալիս, նա քացի տալով արթնացնում էր կաթվածահարներին, ցանկանալով իմանալ՝ հայտնի՞ է արդյոք, նրանց, թե ով է իրենց այս աշխարհ բերել, ով է հղիացրել իրենց մայրերին. «Գիտե՞ք այդ բանը, շան որդիներ»: Նա քայլում էր միջանցքներով ու բղավում. «Ճանապարհ բացեք, գրողը տանի, Իշխանությունն է գալիս» - քայլում էր վախեցած պաշտոնյաների ու անդրդվելի, իրեն անմահ կոչող շողոքորթների ուղեկցությամբ, ետեւից, որպես լավայի հոսք, թողնելով իր շիկացած փնչոցը. թափառուն կայծակի պես նա անցավ պետական խորհրդի նիստերի դահլիճով եւ չքվեց իր ննջասենյակում, փակվեց երեք կողպեքով, երեք սողնակով, երեք շղթայով եւ մատների ծայրերով վրայից հանեց ապտուտված շալվարը: Եվ այս պահից սկսած նա կրկին մի բոպե հանգիստ չուներ, անվերջ հոտոտում էր՝ պալատականներից ո՞վ է զենք տվել բորոտին, անվերջ հարցնում

էր՝ ո՞վ է գաղտնի այդ թշնամին: Նա զգում էր, որ թշնամին մոտերքում է, բոլորովին մոտիկ մի տեղ եւ մտերիմներից մեկն է անպայման, որը գիտե նույնիսկ մեղրամանների թաքստոցների տեղը, որի աչքերը հետեւում են իրեն բոլոր դռների բանալիների անցքերից, որի ականջները թաքնված են բոլոր պատերի մեջ, որին կարելի է հանդիպել պալատում ուզածդ ժամանակ եւ ուզածդ անկյունում. «Ինչպես իմ սեփական դիմանկարները, գրողը տանի»: Թշնամին ամենադը էր, նրա ներկայությունը զգացվում էր Հունվարյան պասատներում, նա թաքնվում էր շոգ գիշերվա հասմիկների բույրերում, նա անքնության մղձավանջ էր, նա սարսափազդու, անտեսանելի ուրվականի ոտքերով քստքստացնում էր խավարում, անցնում պալատի ամենածածուկ անկյունները, մինչեւ որ մի անգամ նյութականացավ իրիկնային դոմինո խաղի ժամանակ: Այդ նրա ձեռքը բիչ դանդաղկոտ ավարտեց խաղը՝ դնելով գույդ հինգի քարը, եւ ներքին ձայնը հուշեց խաղընկերոջը՝ հենց այդ ձեռքն է գավազանի ձեռքը. «Դա նա է, գրողը տանի, նա է»: Խաղընկերը գուրս պրծավ չփոթմունքից, աչքերը բարձրացրեց եւ սեղանի կենտրոնի վրա կախված լամպի վառ լույսի տակ հանդիպեց իր հնագույն բարեկամի, իր հավատարիմ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարի գեղեցիկ, արտահայտիչ աչքերով հայացքին: «Աներեւակայելի է,- մտածեց նա,- Ռոդրիգո դե Ագիլարը չէ՞ որ իմ աջ ձեռքն է, մենք կապված ենք բարեկամության սրբազան կապերով, նա ինձ նեցուկ է եղել ամեն հարցում»: Բայց ճշմարտությունից թաքնվելն այլեւս անհնար էր, նա հանկարծ շատ բաներ տեսավ նոր լույսի տակ, տեսավ բոլոր այն նենգ խորամանկությունները, որոնց միջոցով իրենից թաքցնում էին ճշմարտությունը, որոնց ցանցի մեջ խճճում էին իրեն երկար տարիներ շարունակ: Երկար տարիներ շարունակ նա չգիտեր, որ իր թանկագին բարեկամը, ըստ էության՝ հարազատը, ծառայում է հարպիկ, հաջողակ քաղաքագետներին: Բայց մի՞թե ինքը չէր, որ թեկուզեւ անձնական շահերից ելնելով, ամենախուլ ծակերից դուրս բերեց այդ քաղաքագետներին, ի՞նքը չէր դրանց առաջ քաշողը, ֆեդերացիայի համար կոիվներից հետո դրանց ոսկեզօծողը, աներեւակայելի արտոնություններ պարգեւողը: Նա թույլ էր տալիս, որ նրանք իշխանության ու հարստության մի այնպիսի բարձրության հասնեն, ինչի

մասին չէր էլ երազել լիբերական շարժման անդիմադրելի քամուց ջնջված արիստոկրատիան. «Նրանք ավելին էին ուզում գրողը տանի նրանք աչք էին գցել աստծո օծյալ իմ տեղին վիժվածքներ եւ որոշել էին օգտագործել նրան ում ամենից շատ էի վստահում ով ամենամտոն էր ինձ ով ինձ ստորագրելու էր բերում փաստաթղթերը»: Ոչ մեկն իրավունք չուներ ստորագրելու թղթեր բերելու, բացի Ռոդրիգո դե Ագիլարից, քանզի Ռոդրիգո դե Ագիլարն էր ձեւակերպում նրա բոլոր հրամանները, սահմանվող օրենքները՝ նախ բանավոր, հետո՝ բարձրագույնի շտկումներով նաեւ գրավոր, եւ այնուհետեւ հանձնում ստորագրության, իսկ նա բթամատն էր դեմ անում թղթին (դա էլ հենց ստորագրությունն էր), եւ հաստատում ստորագրությունը պետական կնիքով. կնիքով մատանին այն օրերին պահվում էր չհրկիզվող պահարանում, որի գաղտնահամարը գիտեր միայն ինքը: «Ամեն ինչ կարգին-սարքին է, բարեկամս,- ասում էր նա Ռոդրիգո դե Ագիլարին, վերադարձնելով ստորագրված թղթերը, եւ կատակում.- Այժմ դուք դատարկ ձեռքով չեք գնա զուգարան»: Եվ, ահա, օգտվելով անսահման վստահությունից, գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը հաջողացրել էր սահմանել սեփական իշխանության կարգը, պետության ներսում բավականին ընդարձակ ու եկամտաբեր իր պետությունն էր ստեղծել: «Բայց դա էլ քիչ էր նրա համար եւ նա գաղտնաբար Կոնդե գորանոցների խոտությունն էր նախապատրաստում իսկ այդ գործում նրան աջակից էր մի այլ բարեկամ սուսերամարտության ուսուցիչը դեսպան Նորտոնը որի հետ նրանք պոռնիկների մոտ էին գնում հենց այդ Նորտոնն էր մաքսանենգային ճանապարհով խոտավարարներին զինամթերք հասցրել հոլանդական տառեխի տակառներով էին բերել օգտվելով դիվանագետին արտոնված մաքսատան ստուգմանը չենթարկվելու օրենքից իսկ դամինո խաղալիս խնկարկում էր ինձ եւ հավաստիացնում որ չգիտե ավելի օրինապահ մի այլ կառավարություն ավելի բարեկամական ու արդարամիտ քան իմն է: Այդ նրանք էին ստրճանակը տվել կեղծ բորոտի ձեռքը եւ հանձնել նրան հիսուն հազար պեսո նախապես կորատելով արժեթղթերը երկու հավասար մասերի արժեթղթերի մի կեսը դատն բորոտի տունը խուզարկելիս եւ պարզվեց որ երկրորդ մասը մարդասպանին իմ մահից հետո պիտի հանձներ թան-

կապին բարեկամս գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը դու կարո՞ղ ես երևակայել մայր մի՞թե հեշտ է նման բան իմանալը: Երբ մահափորձը ձախողվեց նրանք չհաշտվեցին իրողության հետ եւ սկսեցին մտածել թե ինչպես առանց արյուն թափելու կործանեն ինձ գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը սկսում է վկաների ցուցմունքներ հավաքել թե ես չեմ քնում գիշերները եւ խոսում եմ սատորների խավարում նաեւ հերոսների ու արքեպիսկոպոսների դիմանկարների հետ թե ես ջերմաչափ եմ տալիս կովերին եւ ստիպում նրանց ջերմությունն իջեցնող հաբեր ծամել կարգադրել եմ իբր հանգստարան կառուցել Մեծ ծովակալի համար որն իբր գոյություն ունի միայն իմ հիվանդ երեւակայության մեջ այնինչ ես սեփական աչքերովս եմ տեսել լուսամուտիս տակ խարխիս զցած երեք կարավիներ: Նրանք ապացույցներ էին հավաքել թե ես վատնել եմ պետական միջոցները հազար ու մի տեսակ խելոք սարքեր գնելու վրա թե փորձել եմ հարկադրել ասողագետներին խախտել արեգակնային համակարգության օրենքները միայն թե դրավեմ գեղեցկության թագուհուն որն իբր նույնպես զառանցանք է թե ծերունական խելացնորությամբ հրամայել եմ ցեմենտով բեռնված նավը լցնել երկու հազար երեխաների եւ բաց ծովում հատակը սուզել դու երեւակայո՞ւմ ես թե ինչ սրիկաներ են դրանք մայր ինչ չան որդիներ»: Այնինչ անհրաժեշտ ապացույցները հավաքելով, գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը ծածուկ պայմանավորվածության մեջ էր մտել պրեզիդենտական գվարդիայի շտաբի բոլոր սպաների հետ եւ որոշվել էր պրեզիդենտին ուղարկել ականավոր ծերերի ապաստարան, ուր բնակվում էին նախկին բռնակալները, եւ վճռվել էր այդ գործը իրականացնել սույն տարվա մարտի մեկի գիշերը. պրեզիդենտին գահընկեց էին անելու Սուրբ Հրեշտակ Պահապանի՝ թիկնապահների պատրոնի պատվին կայանալիք ամենամյա ավանդական ընթրիքի ժամանակ. «Այսինքն, երեք օր հետո, իմ գեներալ»: Նա դավադրությանն անտեղյակ ձեւանալով, կասկած չհարուցելով, թե որեւէ բան գիտի, նշանակված ժամին ընդունեց բոլոր հյուրերին՝ իր անձնական գվարդիայի բարձրաստիճան սպաներին, նստեցրեց նրանց ինջույքի սեղանի շուրջը եւ ապերիտիվ առաջարկեց. «Մի-մի գավաթ խմեք, մինչեւ կգա գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը եւ կառաջարկենք գլխավոր կենացը»: Նա

խաղաղ զրուցում էր հյուրերի հետ, կատակում, իսկ սպաները մեկը մյուսի հետևից, կարծես պատահաբար, ժամացույցներին էին նայում, մոտեցնում ականջներին, լարում, ուղղում. արդեն տասներկուսից հինգ էր պակաս, բայց գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը չէր հայտնվում: Շոգ էր արդեն ու հեղձուկ, ինչպես նավի հնոցում, բայց բուրումնավետ էր տոթը՝ գլադիոլուսների եւ վարդակակաչների հոտ էր գալիս, թարմ վարդերի, թեեւ շնչելու օդը չէր հերիքում, եւ մեկը բաց արեց լուսամուտը. «Եվ մենք բոլորս շունչ քաշեցինք ու կրկին նայեցինք ժամացույցներին, իսկ բաց լուսամուտից ջրի մանր ցիտոններ էին ներս լցվում եւ տոնական ուտեստների նուրբ բույրեր»: Բոլորը քրտնեցին, բացի նրանից, եւ բոլորը հանկարծ անհարմար զգացին, ամաչում էին նայել այդ կենդանու լայն չռված, թարթվող աչքերին. այդ կենդանին ներկաներից ասես անջատված էր վաղուց ի վեր անցած տարիներով, այդ կենդանին ծիկրակում էր իր ինչ-որ տարածությունից, ժամանակից դուրս իր աշխարհից. «Ձեր կենացը,- ասաց նա, ինչպես քնքուշ շուշան բարձրացնելով բաժակը,- ձեր կենացը»: Ողջ երեկոն նա չխոսացնում էր այդ բաժակով, չխմելով եւ ոչ մի կում: Եվ ահա, ինչպես ճակատագրական անդունդից, լուության միջից լսվեցին ժամացույցի մեխանիզմի ընդերքային հնչյունները՝ տասներկուսն էր զարկում: Գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը դեռ չկար: Ինչ-որ մեկը փորձեց ոտքի ելնել ու հրաժեշտ տալ, բայց դամվեց աթոռին, քար կտրեց ոչնչացնող հայացքից ու խնդրանքից. «Մի հեռացեք, խնդրում եմ»: Բոլորը հասկացան, որ չի կարելի շարժվել, շնչել, կենդանության նշան ցույց տալ, քանի դեռ չեն հնչել բոլոր տասներկու զարկերը: Եվ երբ մարեց վերջին զարկը, ետ քաշվեց դռան վարագույրը եւ բոլորը տեսան ականավոր դրծիչ, դիվիզիայի գեներալ Ռոդրիգո դե Ագիլարին՝ ողջ հասակով, արծաթյա սկուտեղի վրա, ամեն կողմից զարդարված ծաղկակաղամբի սալաթով, համեմված դափնու տերեւներով եւ այլ համեմունքներով, տապակված փոի շոգում, շքերթային համազգեստով, ոսկյա, նշաձեւ հինգ հատիկներով, թեւքին արիության համար ասեղնակար նշան, կրծքին տասնչորս ֆունտ մեդալ եւ մաղադանոսի ոստիկը բերանում: Սկուտեղը դրվեց խնջույքի սեղանին, եւ հաճոյակատար մատուցողները սկսեցին կտրատել տրված կերակրատեսակը,

ուշը չդարձնելով սարսափից քարացած հյուրերի վրա, եւ երբ յուրաքանչյուրի ափսեում ընկույզով ու բուրումնավետ կանաչիներով համեմված պաշտպանության մինիստրի մարմնից մի-մի խոշոր պատառ հայտնվեց, կարգադրվեց սկսել ընթրիքը. «Բարի ախորժակ, սենյորներ»:

Նա ճաշատեսակի այնքան սահմանքներ էր անցել, այնքան երկրաչարժեր ու խավարումներ տեսել, անվնաս մնացել երկնային կրակի այնքան գնդերի հարվածներից, որ մեր օրերում այլեւս ոչ ոք չէր հավատում, թե երբեւիցե կկատարվի պայծառատես-գուշակի կանխատեսումը, եւ նա կմեռնի: Անհնար էր հավատալ, եւ այդ միտքը չէր տեղավորվում մարդու գիտակցության մեջ, եւ մինչ ձեւակերպվում էր հայտնաբերված դիակը կարգի բերելու ու թաղելու խնդրությունը, մեզանից նույնիսկ ամենաանհավատները իրենք իրենց էլ չխոստովանելով, սպասում էին, որ եթե դա իրոք նրա մարմինն է, ահա-ահա կկատարվեն հինավուրց այն ափանդուխյանների կանխատեսումները, թե նրա մահվան օրը ճահճոտիլմի հոգիները գետերը կլցվեն, արյունոտ անձրեւ կտեղա, հավերը հնգանկյուն ձվեր կածեն, աշխարհում կտիրի լռություն ու խավար, քանզի նրա մահվան օրը աշխարհի կործանման օրն է լինելու: Անհնար էր հավատալ նրա մահվանը նաեւ այն պատճառով, որ վարչակարգի օրոք դեռեւս լույս տեսնող փոքրաթիվ լրագրերը առաջվա պես նրա անմահությունն էին ազդարարում եւ ուսանելի պատմական ծառայությունները՝ արխիվային նյութերով համեմելով իրենց հոդվածները. նրա դիմանկարներն ամեն օր ապրվում էին առաջին էջերում՝ ստեղծելով քարացած ժամանակի ապատվություն. ամեն օր լրագրերում մենք տեսնում էինք նույն դեմքը, փոսքի հինգ արեգակները ուսադիրներին նույն համապատասխան, ամեն օր մենք տեսնում էինք արժանապատվությամբ լեցուն, գործնական եւ վթթուն առողջությամբ,- թեեւ վաղուց կորցրել էին նրա տարիների հաշիվը,- մարդու պատկերը: Լրագրերն անվերջ ապագրում էին միեւնույն լուսանկարները, որոնցում նա բաց էր անում վաղուց ի վեր բացված հուշարձաններ, իրականում գոյություն չունեցող կոմունալ նշանակության ձեռնարկություններ, նախագահում, իբր, երեկվա հանդիսավոր նիս-

տը, այնինչ այդ նիստը կայացել էր անցյալ դարում: Սակայն մենք գիտեինք, որ այս հարցում լրագրերը ստում էին, քանզի մարդկանց աչքին նա չէր երեւացել Լեոնիդաս Նասարենոյի սոսկալի մահվան օրից ի վեր, երբ ամայի պալատում մնաց մեն-մենակ, իսկ պետական գործերն ընթանում էին իրենք իրենց, սովորության ուժով, որ ստեղծվել էր նրա անսահման իշխանության տարիներին: Մենք գիտեինք, որ ճգնավորի կյանք է վարում վերջնականապես բարձիթողի շինության մեջ, որի լուսամուտից մենք խորին տխրությամբ նայեցինք մոտեցող երեկոյին, տեսանք, սկսվող մռայլ մթնշաղը - այս ամենին երկար-երկար տարիներ նայել էր եւ նա՝ բաղմած իր ցնորքների գահին. մենք տեսանք փարոսի թարթվող լույսը, որը ցնորական կանաչ ալիքի նման, ժամանակ առ ժամանակ լուսավորում էր կիսավերակ սենյակները, նախարարությունների ցուցափեղկերի ջարդոտված ապակիներից այն կողմ տեսանք աղքատիկ բնակարանների աղոտ լամպերը. նախարարությունների սենյակները զավթել էին աղքատ մարդկանց հորդաները, անհաշիվ ցիկլոններից էլի մեկից հետո, երբ նավահանգստային շրջանի բլրակներից ընջվեց աղքատների խրճիթների հեռքերը նույնիսկ, մենք տեսանք ներքեւում փռված, ծխապատ քաղաքը, անորսալի հորիզոնը, որ հայտնվում էր հարթավայրի մոխրավուն խառնարանների վրա բռնկվող կայծակների տակ. մի ժամանակ այդ հարթավայրում ճողփում էր հետագայում վաճառված ծովը, նրա բացակայությամբ այդ առաջին գիշերը մենք հանկարծ տեսանք անծայրածիր ողջ կայսրությունը, կայսրության տենդախտի լճերը, հեղձուկի գոլորշիների գարշահոտության մեջ ընկղմված, գետերի ճահճացած հյուղաբերաններում փռված գյուղերը, տեսանք ագահության փչալարը, որ շրջափակել էր իրեն պատկանող գավառները, ուր արածում էին նոր, ընտիր ցեղից սերված կովերի անհամար նախիրներ,- այդ կովերը լույս աշխարհ էին գալիս ժառանգական նշանով՝ պրեզիդենտի անձնական խարանով: Համեմատաբար վերջերս մենք դեռ հավատում էինք, որ նա իրոք ապրելու է մինչեւ զիսաստղի երրորդ հայտնություն (ոչ թե երկրորդ), եւ այս հավատը վստահություն էր ներշնչում, ապահովություն՝ վաղվա օրվա համար, թեեւ նրա տարիքի շուրջ մենք կատակում էինք ամեն առիթով, նրան էինք վերագրում հնագույն կրիաների սովորու-

խյուններրը, ծեր փղերի առանձնահատկություններրը, պանդոկներում զվարճալի պատմություններ էինք պատմում, թե ինչպես մի անգամ, պետական խորհրդին հայտնեցին պրեզիդենտի մահը եւ բոլոր նախնարարները վախեցած իրար նայեցին, վախով հարցրեցին մեկմեկու՝ իսկ ո՞վ է այդ լուրը նրան զեկուցելու՝ հա՛, հա՛, հա՛: Այդ ժամանակներում, սակայն, նրան դժվար թե հետաքրքրեր այդ նորությունը, հազիվ թե կարողանար գլխի ընկնել՝ ճշմարտությո՞ւն է ասվածը, թե՞ փողոցային ասեկոս, որովհետեւ նրա ուղեղի անդունկներում ոչինչ այլեւս չէր մնացել, բացի անցյալի մի քանի փալաս-փուլուսից: Անապատի ծառի պես մենավոր, հայելու արտացոլանքի պես խուլ, նա մռայլ առանձնասենյակներում բառաստացնում էր իր զառամյալ, հարթաթաթ ոտքերով, եւ սենյակներից մեկում մի օր նրա աչքին օսլայած կրծքակալով, սյուրթուկը հագին մի մարդ երեւաց, որ իրեն տեսնելով սկսեց թափահարել սպիտակ թաշկինակը, իսկ ինքն ասաց. «Մնաք բարով»: Թյուրիմացությունը վերածվեց պարտադիր արարողության. պալատի ծառայողները պարտավոր էին նրա յուրաքանչյուր հայտնվելուն պես ոտքի կանգնել եւ սպիտակ թաշկինակ թափահարել. «Մնաք բարով, իմ գեներալ, մնաք բարով»: Սակայն նա նրանց չէր լսում եւ, առհասարակ, ոչինչ չէր լսում Լեոնիդաս Նասարենոյի մահից ի վեր, սկսած այն օրից, երբ նրան թվաց, թե իր դայլայլող թռչնակների ձայնը խզվել է մշտական երգից, եւ նա կերակրում էր դրանց անձնական պաշարների մեղրով, հուսալով, թե մեղրը կօգնի. կոուցների մեջ կանտորին էր կաթեցնում ենթադրելով, թե թռչնակներին անհրաժեշտ է կազդուրիչ այդ դեղամիջոցը, ու կաթեցնելով ինքն էր երգում հին-հնագույն երգեր. «Օ, հունվարյան լուսին»,- երգում էր գլխի չընկնելով, որ բոլորովին էլ չէին խզվել թռչնակների ձայները, այդ իր լսողությունն էր ավելի ու ավելի թուլանում, իսկ մի գիշեր ականջներում հանկարծ ընդհատվեց մշտական բզզոցը, մի տեսակ փշուր-փշուր եղավ, չքվեց, վերածվեց բամբակ-օդի, որի միջով հազիվ էին թափանցում իշխանության մշուշում կորած երեւակայական նավերի հրաժեշտի ազդանշանները. նա լսել սկսեց երեւակայական քամիների աղմուկը, թռչնահամերգը նրա ներսում էր, թռչնակները երգում էին նրա հոգում, եւ հոգու այդ երգիչները, ի վերջո, սփոփեցին նրան իրական թռչուն-

ների լռության խուլ անդունդում. փոքրաթիվ այն մարդիկ, որոնց թույլատրվում էր այդ օրերին կառավարական տուն մտնել, տեսնում էին նրան հյուսկեն ճոճ-բազկաթոռին նստած, կենդանի ծաղիկներով ծածկի տակ, որտեղ անց էր կացնում ամենաշոգ ժամերը՝ սկսած ցերեկվա ժամը երկուսից. նա արձակում էր բահկոնակը, վրայից հանում թուրն ու երկգույն, ինչպես հայրենիքի դրոշը, գոտին, սապոգներն էր հանում եւ մնում ալ գուլպաներով - այդ գուլպաներից նա ուներ տասներկու զույժին, որ գործել էին Հռոմի պապի լավագույն գուլպայագործները եւ պապն էլ հենց դրանք ընծա էր ուղարկել. նա նստում էր իր ճոճ-բազկաթոռին եւ կեսքուն-կեսարթուն տեսնում, թե ինչպես են պալատամերձ դպրոցի աղջիկները բարձրանում ետեւի, ոչ այնքան աչալուրջ հսկվող պարիսպը եւ նայում իրեն. իսկ ինքն անշարժ է, իր անքուն նինջի մեջ, գունատ, քունքերին բուժիչ բույսերի տերեւներ. կենդանի ծաղիկներով ծածկի ճղակներից լույսի դեղին բծերն ընկնում էին նրա վրա, դարձնում յագուարի գույնի, իսկ նրա բերանը բաց էր, ինչպես մանտերարայի բերանն է բացվում, երբ ծովային այդ սատանան երանություն է վայելում ծովի հատակում: «Մեր քավթառ»,- ձեռք էին առնում նրան աղջիկները, իսկ նա նայում էր նրանց շոգի թրթռացող շղարշի միջից, ժպտում ու ձեռքով ողջունում նրանց, բայց չէր լսում ձայները, ինչպես եւ չէր լսում ճռռիկների լուսավոր որոտը, չէր զգում ոչինչ, բացի լոռատիղմի հոտից, որ բերում էր ծովի ցիտոնը, եւ շարժում ոտնամատերը, երբ կցասհարում էին հավերը: Իրական աշխարհի հետ նրա կապը պահպանվում էր ամենանվիրական հիշողությունների մաշված մի քանի պատառիկների միջոցով, սոսկ այդ հիշողությունների շնորհիվ էր նա ապրում, շարունակում ապրել, երբ հեռացավ պետական բոլոր գործերից եւ պարզապես ճախրում էր իշխանության երկնքում, սոսկ այդ հիշողություններն էին օգնում նրան դիմագրավել ծերության մահացու քամիներին, երբ իրիկունները շրջում էր ամայի, դատարկ պալատում, թաքնվում խուլ առանձնասենյակներում, որտեղ ձեռքն ընկած գեկուցագրերից կտրում էր մաքուր լուսանցքները եւ իր նրբագեղ ձեռագրով, այդ նեղ շերտիկների վրա գրի առնում իրեն մահից փրկող նույն այդ հիշողությունները: Մի գիշեր նա գրեց. «Ինձ անվանում են Սաքարիաս», հետո կարդաց գրածը

Փարոսի թարթվող լույսի տակ, վիրակարդաց, եւ մի անգամ կարդաց. չորրորդ, հինգերորդ, հարյուրերորդ անգամ կարդաց եւ այսրան անգամ կրկնված իր անունը թվաց հեռու, օտարոտի, անծանոթ: «Վո՞ւ ինչի՞ն է պետք,- հարցրեց ինքն իրեն ու պատառոտեց խիթի չերտիկը:- Ես՝ ես չեմ»: Նա մի ուրիշ չերտիկ վերցրեց եւ վրան գրեց, որ ինքը հարյուր տարեկան դարձավ գիսաստղի երկրորդ հայտնության տարին, թեեւ արդեն չէր հիշում երբ եւ քանի անգամ էր տեսել գիսաստղը. մյուս երկար չերտիկի վրա նա գրեց. «Փառք ու պատիվ պատվո դաշտում վիրավորվածին, փառք ու պատիվ զավթիչների ձեռքով ընկած քաջարի զինվորներին»,- այս գրառումը վերաբերում էր այն ժամանակաշրջանին, որի մասին կարելի էր գրել ազատորեն, միայն թե գրվելիքը համապատասխաներ նրա մտածումներին: Հետո նա ստվարաթղթի մի կտորի վրա գրեց. «Առգելվում է զուգառանում գրաղվել պիղծ գործեռով» - գնաց եւ գնդասեղով պետքարանի դռանը ամրացրեց ստվարաթուղթը,- վերջերս բացարձակապես պատահականորեն նա պետքարանում բռնեցրել էր բարձրաստիճան մի սպայի ձեռնաշարժությամբ գրաղվելիս,- ետ դարձավ եւ շարունակեց թղթի նեղ չերտիկների վրա գրի առնել այն ամենը, ինչ դեռեւս հիշում էր: «Լեոնիսիա Նասարենոն,- գրեց նա,- իմ միակ եւ օրինական կինն է»: Լեոնիսիա Նասարենոն էր, որ նրան կարդալ-գրել սովորեցրեց, երբ գնդերապն արդեն անհուսալի ծեր էր, եւ հիմա նա ջանք էր թափում հիշողության մեջ արթնացնել կնոջ կերպարը, ճգնում էր պատկերացնել նրան հանդեսներում, ազգային դրոշի պես երկգույն մնասքան հովանոցով, սեւագորշ աղվեսենու օձիքով,- սրանով էր գանագանվում երկրի առաջին տիկինը մնացյալներից,- բայց տեսնում էր միայն մերկ վիճակում, մժղուկներից պաշտպանող չգարշի տակ պառկած, կեսօրվա շոգից հետո, սպիտակ լույսի մեջ. նա հիշեց էլեկտրական հովհարի բզզացող պաղությունից զովացող նրա փափուկ, ճերմակ մարմնի խաղաղ թխլիկությունը, գլխաց տինքների առաձգականությունը, անսանձ ձեռքերը, թեւատակերի կծու քրտնահոտը, որից կաթն էր կտրվում, ժանգոտում էր ոսկին եւ թառամում էին ծաղիկները, բայց եւ ի՞նչ հրաշալի էին այդ ձեռքերը սիրո մեջ: Լեոնիսիա Նասարենոյին հաջողվեց անհնարին. սիրո հանդիպումներին նա ստիպեց գեներալին

հանել հագուստը: «Հապա հանիր սապոգներդ,- ասում էր նա,- թե չէ կկեղտոտես հոլանդական սավաններս»,- եւ նա հանում էր:- «Հապա հանիր լծասարքդ, թե չէ կուրծքս կպատառոտես քո ճարմանդներով»,- եւ նա հանում էր:- «Հապա հանիր թուրդ, կապանդդ, գուլպաներդ, հանիր ամեն ինչդ, կյանքս, որպեսզի ես զգամ քեզ»,- եւ նա հանում էր վրայից ամեն ինչը, մի բան, որ չէր արել երբեք եւ չարեց հետագայում, Լետիսիա Նասարենոյից հետո եւ ոչ մի կնոջ հետ պառկելիս: «Իմ միակ եւ իսկական սեր»,- հառաչեց նա ու իր հառաչանքները գրի առավ դեղնած թղթի նեղ շերտիկների վրա, որ կտրատել էր Նոյի տարվա զեկուցագրերից: Նա գալարում էր այդ շերտիկները սիգարների պես եւ թաքցնում պալատի այս ու այն ճեղքում, ամենածածուկ տեղերում, որտեղից, ցանկության դեպքում միայն ինքը կարող էր հանել, երբ ուզենար հիշել, թե ում է վերաբերում հուշը, երբ ինքն այլեւս ոչինչ չէր հիշելու. այդ գրությունները ոչ ոք չհայտնաբերեց, դրանք մնացին իրենց թաքստոցներում, իսկ ահա Լետիսիա Նասարենոյի պատկերը դուրս լողաց նրա հիշողության առվակով եւ միայն մեն-միակ հուշ մնաց նրա գլխում. մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի հուշն էր, նրա վերջին օրերի հուշը. նա մեռավ իր մենատանը, ճոճ-բազկաթոռին նստած, ետնաբակի կանաչի մեջ, եգիպտացորենի հատիկները ափսեի մեջ շրշեցնելով, հավերին մոտ կանչելով, որպեսզի որդին գլխի չընկներ, որ մեռնում է ինքը: Նա հիշեց իրեն մրգաջուր բերող մորը, երբ ինքը փուլում էր տամարինդների ստվերի տակ կապված ճոճի մեջ. նա էր բերում, որպեսզի որդուն ցույց չտար, որ հալվել է շնչում ցավից. հիշում էր առանց որեւէ մեկի օգնության, առանց որեւէ մեկի մասնակցության իրենով հղիացած մորը, որը այդպես մենակ ու միայնության մեջ էլ ծննդաբերել էր իրեն. հիշեց, թե ինչպես էր նա անտրտունջ հյուծվում, մինչեւ որ տառապանքը հասավ անտանելիության սահմանին եւ միայն այդ ժամանակ նա կարողացավ հաղթահարել ինքն իրեն, իր բնությունը եւ աղաչեց որդուն. «Հապա նայիր Թիկունքիս, տես ինչ է կատարվում այնտեղ, տես, թե ինչո՞ւ է այդպես այրվում, դիմանալ չի լինում»: Նա հանեց շապիկը եւ որդուն դարձավ Թիկունքով, եւ սարսափից կարկամած որդին մոր Թիկունքին տեսավ լայն, գարշահոտ, թարախակալած խոցեր, իսկ Թարախի մեջ որդեր էին խլրտում:

Դրանք վատ ժամանակներ էին, իմ գեներալ, այդ օրերին չկար պետական որեւէ գաղտնիք, որ չընկներ հասարակության բերանը, արձակված ոչ մի հրաման չէր կատարվում անշեղորեն: Ամեն ինչ կարգավորվեց այն օրից հետո, երբ տոնական սեղանին, որպես ընտիր կերակրատեսակ, տապակված գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը մատուցվեց: Սակայն դա չէր հոգը, դա չէր անհանգստացնողը: Պետական հոգսերը ոչ մի նշանակություն չունեին այն դաւը ամիսներին, երբ Բենդիսիոն Ալվարադոն մոխրանում էր հիվանդության դանդաղ կրակի վրա՝ որդու ննջարանին կից մի սենյակում, որտեղ նրան պառկեցրին ասիական հիվանդություններին համեմատաբար գիտակ բժիշկների եզրակացությունից հետո. նրանք պարզեցին, որ հիվանդությունը ոչ ժանտախտ է, ոչ քոս, ոչ բորոտություն եւ ոչ էլ արեւելյան մի ուրիշ ցավ, այլ արդյունք է հնդկական ինչ-որ կախարդության, ուրեմն, ապաքինել կարող է միայն նա, ով կախարդել է: Նա հասկացավ, որ փրկություն չկա եւ ոտքից գլուխ նվիրվեց մորը, փակվեց նրա հետ նույն սենյակում, խնամում էր նրան մայրական անձնազոհությամբ. նա համաձայն էր ինքն էլ նեխել, միայն թե ոչ ոք չտեսներ, թե ինչպես են մորը ողջ-ողջ ուտում որդերը. նա հրամայեց պալատ բերել մոր հավերը, սիրամարգերը, մոր ներկած բոլոր թռչունները եւ թույլատրեց դրանց շրջել, թռչել ամենուր, միայն թե մայրը չկարոտեր գեղջկական իր սովորություններին, իր տանը, իր բակին. նա ինքն էր վառում սենյակում բուրումնավետ բիխա ծառի ճյուղերը, որպեսզի ոչ ոք չզգար մոր մարմնից արձակվող քայքայման գարշահոտը. տարբեր քսուքներով նա ինքն էր օծում մոր մարմինը, որ քսուքների գույներին համեմատ կարմիր էր լինում, դեղին, կապույտ. նա փորձեց մորը բուժել թուրքական բալասանով, թեեւ առարկում էր առողջապահության նախարարը, որն ուղղակի սոսկում էր կախարդություններից. «Սատանան նրա հետ, մայր,- ասում էր նա,- վատ չէր լինի, որ երկուսով էլ մեռնեինք»: Բայց Բենդիսիոն Ալվարադոն գիտակցում էր, որ մեռնողն ինքն է միայն, եւ չտապեց որդուն տեղյակ պահել իր եւ, ուրեմն, որդու անցյալի գաղտնիքներին. նա իր հետ գերեզման չէր ուզում տանել այդ գաղտնիքները, ուստի պատմեց որդուն, թե ինչպես է ինքը անհաշիվ անցորդների մեջ ցանկացել պարզել, թե ով է երեխայի հայրը, հղիանալու պատ-

մությունը արեց - կանգնած է եղել, նույնիսկ գլխարկը գլխին, որովհետեւ իրեն բզկտում էին կապույտ, մետաղական երանգով ճանճերը, որ բուն էին դրել եղեգնօղու տիկերի մոտ, պանդոկի ետնաբնյակում: Նա պատմեց, որ ծննդաբերել է ժամկետից շուտ, օդոստոսյան մի առավոտ, կուսանոցի դարպասի-կամարների տակ, եւ խորդենիների աղոտ լուսավորվածության մեջ նկատել է, որ նորածնի աջ ձվիկը խոշոր է, թզի չափ. «Դու լալիս էիր, արտասուք թափում, իսկ շնչառությունդ այնպիսին էր, կարծես կրծքիդ ներսում պարկապզուկ էր հեկեկում...»: Շուկայի օրերին նա որդու հետ հրապարակ էր գալիս, արձակում մանկան բարուրի շորերը, որ նվիրել էին կուսանոցի միանձնուհիները, եւ մերկ երեխային ցույց տալիս մարդկանց՝ հուսալով, թե կգտնվի մեկը, ով հուսալի ու էժան մի դեղ կհուշի ճողվածքի, ռախիտի եւ այլանդակ կազմվածքի դեմ: Նրան ասացին, որ ամենալավ միջոցը մեղրն է, ասացին՝ ճակատագրին հակառակվել պետք չէ, ասացին՝ երբ մեծանա, ամեն ինչ էլ ձեռքից կգա, միայն փողային գործիքներ չի կարող փչել, եւ ոչ ոք մի կարգին ուշադրություն էլ չդարձրեց մանկանը, մինչեւ զավեշտախաղի մի գուշակուհի գլխի չընկավ. «Նրա ձեռքի ափում, ախր, կյանքի գիծ չկա, իսկ դա նշանակում է, որ թապավոր է դառնալու»: «Տեսա՞ր, նա չսխալվեց, զավակս»,- ասաց Բենդիսիոն Ալվարադոն, իսկ նա աղաչում էր, որ մայրը քնի, այլեւս չքչփորի անցյալը, ինքն իրեն համոզելով, որ Հայրենիքի գրավոր պատմությունից այս բոլոր շեղումները մեռնողի զառացանքներ են եւ ուրիշ ոչինչ: Նա աղաչում էր մորը քնել եւ փաթաթում նրան ոտքից գլուխ վուշե կտավի սավանով - նա հրամայել էր որքան հնարավոր էր շատ կարել այդ նուրբ ու փափուկ սավաններից, որոնց հյուսվածքը չէր գրգռում մարմնի խոցերը: Նա օրոր էր ասում, մինչեւ մայրը կողքի ընկած, ձեռքը սրտին սեղմած քուն էր մտնում. «Այ, այսպես, քնիր, մայր: Եվ չարժե հիշել անցած դառնությունները: Ինչ էլ եղած լինի. ես չէ՞ որ ես եմ»: Նա ջանում էր այնպես անել, որ պալատի պատերից այն կողմ ոչ ոք չիմանա, թե ինչպես է ողջ-ողջ փտում հայրենիքի մեծ մայրը. կառավարական պաշտոնական օրգանները հիվանդության վերաբերյալ կեղծ հաղորդագրություններ էին հրապարակում, որ հրապարակավ կարդում էին մունետիկները, սակայն իսկական հիվանդության բոթն

անհնար էր խլացնել: Մունետիկներն իրենք էին հերթական հաղորդագրությունը կարդալուց հետո հաստատում, որ մեռնողի սենյակից փչող քայքայման գարշահոտն այնպես անտանելի է դարձել, որ փախչում են նույնիսկ բորոտները: Նրանք հաստատում էին այն լուրերը, թե մեռնողին լողացնում են հենց նոր մորթած ոչխարների թարմ արյունով, թե այն սավանները, որ հավաքում են նրա տակից, չեն լվացվում, մնում են չարագի չերտով պատված՝ որքան էլ փորձեն եռացնել: Նրանք ասում էին, որ պրեզիդենտը չի երեւում այլեւս ոչ ֆերմայում, ոչ հարճերի մոտ, որոնց, ի դեպ, նա տեսակցում էր նույնիսկ ամենածանր օրերին, պատմում էին, որ ինքը՝ արքեպիսկոպոսն է պալատ այցելել՝ մահամերձին անձամբ խոստովանեցնելու առաջարկությամբ, սակայն պրեզիդենտը վռնդել է նրան. «Մենք մահամերձ չունենք, սուրբ հայր: Ամեն խոսքին չեն հավատա»: Նա ուտում էր մոր հետ նույն ափսեից, նույն գդալով, ուշք չդարձնելով սենյակը բռնած ժանտախտային բարաքի հրեշավոր հոտը. նա մորը լողացնում էր ամենաազնվացեղ չան ճարպից եփված օճառով եւ նրա սիրտը ճաքում էր խղճահարությունից, երբ լսում էր մոր հրահանգները, թե իր մահից հետո ինչպես պետք է խնամել կենդանիներին: Զայնի վերջին լարերը կտրատվեցին, երբ ասաց. «Սիրամարգերից չհամարձակվեք փետուրներ հանել գլխարկների համար...» - «Լավ, մայր»,- պատասխանեց որդին, շարունակելով օծել մոր մարմինը կպրե քսուքով: «Թռչուններին մի ստիպեք երգել տոն օրերին...» - «Լավ, մայր»,- խոստացավ նա եւ մորը փաթաթեց մաքուր սավանով: «Փոթորկից առաջ թխկաններին դուրս բերեք բներից, թե չէ բասիլիկոսներ կելնեն ձվերից...» - «Լավ, մայր,- ասաց նա եւ ձեռքը սրտին սեղմեց:- Քնիր, քնիր»: Նա համբուրեց մոր ճակատը, պառկեց մահճակալի մոտ, հատակին, բերանքսիվայր, ականջ դնելով մոր քնին, նրա անվերջանալի զառանցանքին, որ մոտալուտ մահվան չնչից ավելի ու ավելի անիմաստ էր դառնում: Այդ գիշերների ընթացքում կուտակված կատաղությունը նրան օգնեց խեղդելու վշտալի երկուշաբթի օրվա ծնած կատաղությունը. նա արթնացել էր նախալուսաբացի սոսկալի լռությունից, արթնացել էր, որովհետեւ մայրը, նրա հարազատ Բենդիսիոն Ալվարադոն դադարել էր չնչելուց: Նա ոտքի ելավ ու բաց արեց սավանը, որի մեջ փաթաթ-

ված էր մոր զարշահոտ մարմինը, եւ լսելով աքաղաղների առաջին կանչերը, վաղ լուսաբացի գորշ լուսավորության մեջ տեսավ, որ սավանի վրա դաջվել է մոր մարմնի պատկերը, մոր զարմանահրաշ պատճենը, որովհետեւ սավանին պատկերվել էր առողջ եւ ոչ ծեր կնոջ մարմինը, եւ միեւնույն ժամանակ դա իր մայրն էր՝ թեք ընկած, ձեռքը կրծքին սեղմած Բենդիսիոն Ալվարադոն. համանման մի դաջվածք էլ սավանի մյուս երեսին էր՝ թանձր ու հարթ, ասես յուղաներկով նկարված լիներ, եւ ոչ թե զարշահոտություն էր արձակվում հրաշք պատկերով այդ սավանից, այլ թարմ, նուրբ ծաղիկների բույր, որ մաքրել էր սենյակի գեշ, հիվանդանոցային հեղձուկ օդը. հետո որքան էլ սողայի ջրով եռացրին սավանը, որքան էլ արորեցին ամեն տեսակի օճառներով, միեւնույն է, պատկերը մնաց անփոփոխ երկու երեսներին էլ - պատկերը դարձել էր հյուսվածքի մասը, վերածվել հավերժական կտավին հանձնված հավերժական նկարի: Այդ պահերին, սակայն, խեղճ որդին չէր գիտակցում հրաշքի ողջ խորությունը, իմաստը, նա համակված էր զայրույթով ու կատաղությամբ մահվան դեմ, եւ թողեց մոր սենյակը դուռը շրխկացնելով - հարվածը թնդանոթի կրակոցի պես հնչեց եւ տարածվեց պալատում: Եվ նույն պահին էլ տաճարի զանգերի հուղարկավորման զնգոցը լսվեց, երկրի մնացած բոլոր եկեղեցիների սգո զանգահարությունը - զանգերը զողանջեցին հարյուր օր շարունակ, առանց դադարի: Բայց առաջին զարկերը լսելուց արդեն մարդիկ սարսափով հասկացան, որ նա կրկին իր անբաժանելի իշխանության հետ է, որ մահվան դիմաց կարծես թուլացած նրա անընդունելի սիրտը կրկին դաժանանում է արթնացող բանականության ու մարդկային արժանապատվության դեմ, այս անգամ այն պատճառով, որ մայրը, անմոռանալի Բենդիսիոն Ալվարադոն էր վախճանվել. փետրվարի քսաներեքն էր, երկուշաբթի վաղ առավոտյան:

Բենդիսիոն Ալվարադոյի մահով երկիրը թեւակոխեց խառը, անհանգիստ նոր մի դար: Մեզանից ոչ մեկն այնքան տարեց չէր, որ հիշեր այդ մահը, բայց հուղարկավորման պատմությունը հասել է մինչեւ մեր օրերը: Մենք գիտենք, որ պրեզիդենտն այլեւս երբեք չդարձավ այնպիսին, ինչպիսին էր մինչեւ մոր մահը, մոռացության տվեց նախկին ապրելակերպը: Ոչ միայն սգի հարյուր օ-

բերի ընթացքում, այլեւ հետագայում էլ ոչ ոք չհամարձակվեց խանգարել որբի նրա քունը, ոչ ոք չհամարձակվեց անհանգստացնել նրան, եւ ինքն էլ ոչ մեկի աչքին չէր երեւում վշտի այդ մենաստանում, թախիծի մեջ ընկղմված այդ պալատում, որտեղ ընդմիշտ քարացել էր հուղարկավորման զանգահարության արձագանքը, որտեղ ժամացույցները միայն մի ժամ էին ցույց տալիս՝ Բենդիսիոն Ալվարադոյի մահվան ժամը, որտեղ բոլորը խոսում էին ծանր հառաչելով, պահակախումբը քայլում էր ոտաբոբիկ, ինչպես վարչակարգի առաջին տարիներին, եւ միայն հավերին էր տրված անսահման ազատություն այդ տանը, որտեղ միապետի կամքը արգելված էր կյանքի որեւէ շարժում, իսկ միապետը վերածվել էր մարդատյաց-անտեսանելիի, որի սիրտը վշտից ու անզորությունից արյունաքամ էր լինում, երբ թեփով ու սառցակտորներով (որպեսզի մահը կյանքից ավելի չքայքայեր) մոր դագաղը բազմել էր հուղարկավորման հանդիսավոր թափորի ուսերին. հանգուցյալին տանում էին հարազատ սարահարթի ու երկրի հեռավոր ու անհայտ անկյունը, որպեսզի ամեն ոք պատիվ ունենար հարգելու նրա հիշատակը: Ամենուր սգո դրոշներ էին ծփծփում. սարահարթի կիսակայարաններում դագաղը թախծալի դիմավորում էին նույն այն ամբոխները, որոնք ժամանակին պրեզիդենտական գնացքն էին դիմավորել. դագաղը հասցրեցին կուսանոց, որի կամարների տակ թռչնավանառ անհայտ կինը, բոլոր ժամանակների սկզբում, ծնեց օրապակաս իր որդուն, որը թագավոր դարձավ - այդ սուրբ դարպասները վերջին հարյուր տարվա մեջ առաջին անգամ բացվեցին: Հեծյալ զինվորները շուրջկալներ կազմեցին, հնդկացիներին, անկում անասունների պես, քշեցին դեպի տաճարի դռները, ներս խցկեցին խզակոթի հարվածներով, իսկ ներսում, որտեղ մարդկանց կաշկանդում էր ապակենկարների սառցե արեւը, ալ հագած ինը եպիսկոպոսներ հանգուցյալի հոգու համար պատարագ էին կարդում, երգչախումբը «Սրբերի հետ հանգստացիր» էր երգում, իսկ տաճարի պատերից դուրս անձրեւը ջրում էր ճիշտ նույն խորդենին, որ աճում էր սրբայայու ապայի ծնվելու ժամանակ. կուսանոցի միանձնուհիները գինի էին վաճառում եւ կուտյու, խոզի մսաններ, տերտղամյաներ, սուրբ ջրի անոթներ. սուեւսուրն ընթանում էր բոլոր հանաբակերի քարե կամարների տակ,

գյուղական պանդոկներում երաժշտություն էր հնչում, մուտքերի մոտ պարում էին, սկսվում էր հավերժական կիրակին, սկսվում էր տարիներով հետաձգված տոնակատարությունը - այդ տոնը շարժվում էր ճիշտ նույն ծածուկ արահետներով ու հավերժական մշուշով պատված ձորերով, որոնցով անցել էր Բենդիսիոն Ալվարադոն ֆեդերացիայի համար պայքարից արբած որդու ետեւից: Այդ նա էր պահպանում որդուն ճակատամարտերի ժամանակ, այդ նա թույլ չտվեց ջրիներին տրորել որդուն, երբ գետնին էր ընկել տերսիանի՝ ջերմ զառանցանքի մեջ, նա վարժեցրեց նրան ճանաչել սարահարթի բնակիչներին դարանակալող վտանգները՝ անհասկանալի ու օտար ծովի ափերին. նա վախենում էր փոխարքաների հուշարձաններից, բոլոր հուշարձաններից առհասարակ, վախենում էր խեցգետիններից, որովհետեւ կարծում էր, թե դրանք նորածինների արցունք են խմում. նա ոտքից գլուխ դողում էր վախից, սարսռում իշխանության տան տեսքից, պրեզիդենտական պալատի վիթխարիության առաջ. անձրեւի շղարշի միջից առաջին անգամ տեսնելով որդուն վճռական գրոհի գիշերը, չէր ենթադրում, որ իրեն վիճակված է մեռնել այդ տանը, ուր հիմա որդին էր, որտեղ նա տառապում էր կորուստի ցավից՝ բերանքսիվայր հատակին պառկած եւ անզոր կատաղության մեջ ինքն իրեն հարցնելով. «Որտե՞ղ ես կորել մայր գրողը տանի ուր ես չքվել ճահճուտի ո՞ր թփուտներում ես մոլորվել ո՞վ է քո դեմքից հիմա քշում ճանճերին»: Նա ծանր տնքում էր, խպտտ ուժասպառվում, իսկ Բենդիսիոն Ալվարադոն այդ նույն ժամանակ լողում էր չինարի տերեւներով ամպհովանու տակ, լողում էր իր դագաղով, թափորի ուսերին բաղմած, անցնում գարշահոտ գոլորշիներ արձակող ճահիճի միջով, լողում էր, որպեսզի հետո դրվեր մեկ գյուղական դպրոցում, մեկ այն անապատային բարաքում, որտեղ սելիտրա են արդյունահանում, մեկ հնդկական գյուղակում. նրա աճյունով դագաղը տանում էին գյուղերի լավագույն տները եւ կողքին դնում հին ժամանակների նրա դիմանկարները: Ջահել տարիների մի նկարում նա գեղեցիկ էր, զուգված, որովհետեւ այդ օրը քող էր գցել գլխին եւ ժանյակավոր գոլա հագել, թեեւ կամքից անկախ, իրեն թույլ էր տվել շպարվել ու ներկել շրթները,- միակ անգամը կյան-

* Տերսիան - տենդախտ, որի նոպաները կրկնվում են երեք օրը մեկ:

քում,- եւ ձեռքն առել վարդակակաչ, իսկ իրեն ասում էին. «Ծաղիկն այդպես մի բռնեք, սենյորա, այլ՝ այսպես: Թույլ տվեք, որ անփութորեն փեչի մեջ ընկնի» - եւ այդ դիրքով նրան նկարեց վենետիկցի լուսանկարիչը, որ նկարահանում էր եվրոպական միապետներին, եւ այդ վենետիկցին նկարեց նաեւ պետության առաջին տիկնոջ այս դիմանկարը, որ հիմա ցուցադրում էին դաղաղի հետ, որպես անհերքելի ապացույց այն բանի, որ դաղաղում պառկածը հենց ինքն էր՝ Բենդիսկոն Ալվարադոն. յուրաքանչյուր ոք կարող էր տեսնել լուսանկարի եւ հանգուցյալի դիմագծերի բացարձակ նմանությունը: Քանզի նախատեսված էր ամեն բան, խնամքով մշակում էին մարմինը, ըստ անհրաժեշտության նորոգում կոսմետիկայի եւ պարաֆինի շերտերը, անձրեւային եղանակներին հանգուցյալի աչքի խոռոչներից հեռացնում էին բորբոսը, բանակի դերձակներն այնպես էին հոգում շրջազգեստի խնդիրը, որ թվում էր, երեկ էին հագցրել, հենց նրանք էլ հետեւում էին նարնջենու ծաղիկներով պսակի թարմությանը եւ իր կյանքում այդպես էլ չվայելած անարատ կույսի հարսնաքողի ճերմակությանը. «Կուռքապաշտության այս բոզանոցում թող որեւէ մեկը համարձակվի ասել, թե դու նման չես քո դիմանկարին, մայր: Թող որեւէ մեկը համարձակվի կասկածել»: Եվ ոչ ոք չհամարձակվեց կասկածել, ինչպես եւ ոչ մեկը չհամարձակվեց մոռանալ, թե ում է պատկանում իշխանությունը. պատկանում էր, պատկանելու էր դար ու դարեր՝ թե այստեղ, թե այնտեղ, թե ամենուր, ընդհուպ մինչեւ ճահճացած անտառների խղճուկ գյուղակները: Այս խուլ, մոռացության գիրկն ընկած վայրերում էլ հենց մի անգամ, կեսգիշերին, հայտնվեց նոյի տարվա անվավոր շոգենավը, թիերով չրմփացրեց ջրերը, առկայծեց տախտակամածի կրակներով, իսկ մարդիկ ափից դիմավորում էին զատկվա թմբուկներով, կարծելով, թե ետ էին եկել հին, փառավոր ժամանակները: «Կեցցե իսկական տղամարդը,- հնչում էին ձայներ:- Օրհնյալ է նա, ով վերադառնում է հանուն ճշմարտության»: Եվ մարդիկ լող տալով դեպի շոգենավն էին շտապում, տանելով իրենց հետ հավուճիվ ու հյութեղ պտուղներ: Փայտե, զարդաքանդակված բազրիքները լոք տալով նրանք տախտակամած ելան, որպեսզի իշխանության ոտքերի առաջ դնեին ընծաները, բայց նրանց հրեցին դեպի դաղաղը: Եվ

Կրանը ցնցված քարացան դագաղի մոտ, նայելով քարաղին ու սառցակոտորներին, որոնցով ծածկված էր դագաղը, իսկ դագաղը, բազմակի խոշորացած, արտացոլվում էր հրաշալիք հայելիներում, որ հասարակական դիտման համար հարմարեցված էին պրեզիդենտական խցիկի մեջտեղում եւ պտտվում էին հնադարյան հովհարի թեւերի օգնությամբ: Շատ ամիսներ լողաց այդ հին զբոսանավը հասարակածի լայնություններում, անցավ հոսանքից մաշվող, վաղանցիկ կղզիների մոտով, մինչեւ մոլորվեց անհաշիվ վտակների ջրիմուռային մղձավանջում. այստեղ ժամանակ չկար, այստեղ գարդենիայի ծաղիկները բանական էին, իսկ իգուանները՝ թեւավոր, եւ, ահա, այստեղ, աշխարհի ծայրին, շոգենավը ծանծաղուտ խրվեց, նրա անիվի փայտե թիակները քերեցին ոսկեբեր ավազը. անիվները ջարդվեցին, շոգենավը կիսով չափ ընկղմվեց, սառցակոտորները հալվեցին, քարաղը լուծվեց, հանգուցյալի մարմինը փքվեց դագաղում եւ սկսեց լողալ թեփի շիտթում. «Եվ հենց այդ ժամանակ կատարվեց հրաշքը, իմ գեներալ: Հենց այդ ժամանակ մենք տեսանք, որ նա բացեց աչքերը, եւ դրանք պսպղում էին ինչպես ակոնիտի ծաղիկները հունվարին, ինչպես լուսնաքար, իմ գեներալ: Նույնիսկ ամենաանհավատները տեսան, թե ինչպես նրա շնչառությունից քրտնեց դագաղի ապակյա կափարիչը, եւ թե ինչպես նա ժպտաց: Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչ կատարվեց այնտեղ, իմ գեներալ, ինչ կատարվեց: Մենք մեր սեփական աչքերով տեսանք, թե ինչպես հղիացան ի բնե անպտուղ ջորիները, սելիտրայի վրա ծաղիկներ բուսնեցին, տեսանք խուլ ու համրերի, որոնք կրկին խուլ ու համր դարձան իրենց իսկ ձայներից ցնցված: «Հրա՜շք, հրա՜շք, հրա՜շք»,- ճչում էին քիչ առաջվա խուլ ու համրերը, մարդիկ ջարդուփշուր արեցին դագաղի ապակյա կափարիչը եւ քիչ մնաց պատառոտեին հանգուցյալի մարմինը, քանզի յուրաքանչյուրը ձգտում էր ստանալ որեւէ մասունք, այնպես որ՝ հարկ եղավ գրենադավորների գումարտակ ուղարկել, եւ սրանք մեծ դժվարությամբ կարողացան ետ մղել խելակորույս մարդկանց ամբոխը: Մարդիկ խումբ-խումբ շոգենավին էին հասնում Կարիբյան բոլոր կղզիներից, սերմի պես ցրիվ եկած, ծովով, գալիս էին հա գալիս՝ հմայված այն լուրով, թե ձեր մայրիկի՝ Բենդիսիոն Ալվարադոյի հոգին աստված օժտել է բնության օրենքնե-

ին հակադրվելու ունակությամբ: Այդ մարդկանց վաճառում էին ձեր մայրիկի պատանքի թելերը, վաճառում էին պատանքից կարված խնկանոթներ, դագաղի ջուրը, թագուհու սուրբ դեմքով նրա թղթե սրբապատկերները, իսկ մարդիկ գալիս էին հա գալիս, իրարանցումը հասավ հրեշավոր չափերի. կարծես ոչ թե մարդիկ, այլ անանձ ցուլերի նախրի կուտակում էր, որ սմբակներով ոչնչացնում էր ինչ պատահեր ճանապարհին եւ որոտում երկրաշարժի նման: Դուք այդ որոտը հիմա էլ կարող եք լսել, իմ գեներալ, այստեղից, եթե մի լավ ականջ դնեք»: Եվ նա ձեռքի ափը շերեփ սարքած դրեց ականջին, որի մեջ այդ օրերին պակասել էր բզզոցը, սեւեռվեց եւ. «Օ՜ մայր իմ Բենդիսիոն Ալվարադո»,- լսեց անվերջանալի որոտման գվվոցը, իսկ հետո տեսավ մինչեւ հորիզոնն ընկած տարածությունը բռնած հսկայական ամբոխի քլթքլթացող ճահիճը, տեսավ վառվող մոմերի լավան, որ քաղաք էր սողում ինչպես վրա հասնող նոր օր, բոցավառվելով ավելի պայծառ, քան խսկայական օրվա լուսավոր ցերեկը. այդ իր մայրը, իր հոգեվարող մայր Բենդիսիոն Ալվարադոն էր վերադառնում քաղաք, որից միշտ սարսափում էր, որտեղ նրան անհանգստացնում էին սարահարթի նախկին բնակչուհու հին վախերը: Նա մտավ այդ քաղաքը ճիշտ այնպես, ինչպես մտել էր առաջին անգամ՝ ամբոխի ուսին, բայց այն ժամանակ դա կատարվում էր պատերազմի խելացնոր անդունդներում, ամեն ինչ այն ժամանակ մարտերի հում մսի հոտ էր արձակում, իսկ հիմա Բենդիսիոն Ալվարադոյին քաղաք էին բերում խաղաղ ամբոխները, եւ հիմա նա վախենալու հիմք չուներ, որովհետեւ նրա որդին հրամայել էր դպրոցական դասագրքերից պատռել փոխարքաներին վերաբերող էջերը, հրամայել էր քարուքանդ անել նրանց հուշարձանները. «Եվ առհասարակ բոլոր հուշարձանները որ անհանգստացնում էին քո քունը մայր»: Նա վախենալու հիմք չուներ, նա բազմել էր խաղաղ ամբոխների ուսերին, առանց դագաղի, ազատ, բաց երկնքի տակ, բայց չնայած տանում էին առանց դագաղի, չէր երեւում՝ այնքան շատ էին նվերները, որ ստացել էր երկարատեւ ու հեռավոր ճանապարհներին՝ վշտի, ապշահար թագավորության անտառներում, հարթավայրերում եւ լեռներում: Նա բեռնված էր ոսկյա հենակներով. ապաքինված կաթվածահարների նվերներն էին. ոսկյա աստղերով,- նավաբե-

կումից վրկվածներն էին նվիրել. մանուկների ոսկյա արձանիկներով,- չբերությունից տառապած, հուսահատված կանայք էին նվիրել, որոնք ստիպված էին եղել հապշտապ ծննդաբերել մոտակա թփուտների տակ: Ինչպես պատերազմի տարիներին, նա ամբոխների կենտրոնում էր, ամենակործան, աստվածաշնչյան ժողովուրդների տեղափոխման հեղեղի գագաթին, ծովացած մարդկանց, որոնք չգիտեին, թե որտեղ տեղադրեն իրենց խոհանոցի նրած-չնրածը, որտեղ տեղավորեն ընտանի կենդանիներին, որտեղ անցկացնեն կյանքի մնացյալ տարիները՝ առանց հոգու փրկության հույսի, միայն Բենդիսիոն Ալվարադոյի անծանոթ աղոթքներով, որոնցով նա, ռազմական գործողությունների ժամանակ, պատահում էր, շեղում էր որդուն ուղղված գնդակը, երբ որդին նետվում էր մարտի հրապույրը, խցկվում իրադարձությունների կրակի մեջ՝ գլխին կարմիր վիրակապ ու կոկորդով մեկ բղավելով. «Կեցցե լիբերալների կուսակցությունը: Կեցցե ֆեդերալիստների հաղթանակը, գրողը տանի: Կորչեն քաքլան զոդոները», թեև այդ կրակի մեջ նրան քաշում էին ոչ այնքան ֆեդերալիստների գաղափարները, որքան սարահարթի ծնունդ մարդու նախաստեղծ հետաքրքրասիրությունը՝ ծովը ճանաչելու ցանկությունը:

Բենդիսիոն Ալվարադոյի մարմինը բերող, քաղաք լցվող աղքատների ամբոխը անսանձ էր ու խելահեղ բոլոր այն ամբոխներից, որոնք երբեմ քարուքանդ էին արել երկիրը, խուճապից էլ սարսափելի ամենահրեշավոր բանն էր այն ամենից, ինչ տեսել էին մեր աչքերը, ձեր անվերջանալի իշխանության տարիներին, իմ գեներալ: Աշխարհը չէր տեսել նման իրարանցում. «Հապա նայեք, իմ գեներալ, տեսեք, թե ինչ հրաշք է»: Եվ նա հմայվեց վերջապես, որ, իրոք, հրաշք է կատարվում. դուրս եկավ իր սգի մռայլությունից՝ գունատ, խիստ, սեւ թեւակապով, մորը՝ Բենդիսիոն Ալվարադոյին սրբացնելու նպատակով իշխանության բոլոր զսպանակները գործի դնելու վճռականությամբ առվեցուն. անհերքելի էին սրբերի առաքինության էության մասը կազմող մոր առաքինությունների փաստարկներն ու ապացույցները: Այս նպատակով նա Հռոմ ուղարկեց իր ամենակիրթ նախարարներին, իր մոտ հրավիրեց պապի նվիրակին՝ թխվածքով շոկոլադ խմելու: Նա նվիրա-

կին ընդունեց շատ հասարակ, կենդանի ձաղիկներով ծածկի տակ, ճոճին նստած, առանց վերնաշապկի, շոգից գլխարկը թափահարելով, իսկ նվիրակը նստեց դիմացը՝ առաջարկված ճոճվող բազկաթոռին,- «Միայն ձեզ եմ գիջում այդ բազկաթոռը, սուրբ Հայր»,- ձեռքն առավ տաք շոկոլադով բաժակը եւ սկսեց խմել համաչափ կումերով: Նվիրակը նոր արդուկած փարաջա էր հագել, նրանից նարդոսի թարմություն էր բուրում եւ ինքն էլ թարմ տեսք ուներ, չէր հանձնվել արեւադարձային մեյամաղձությանը, ուշք չէր դարձնում հեղձուկին ու փոշուն եւ պրեզիդենտի հանդուցյալ մոր թուչնակների ծերտին, որ կենդանի ծաղիկներով ծածկից վար էին թափվում արեւի շողիկների հետ: Նա խմում էր շոկոլադը եւ աղջկա ամոթխածությամբ թխվածք ծամում, ջանալով երկարաձգել վերջին կումի դառնությունը ճաշակելու եւ զրույցը սկսելու պահը: Նա նստել էր այն նույն բազկաթոռին, որի վրա շատ տարիներ առաջ, փառավորագույն ժամանակներում, մալվայի ծաղկման հրաշք օրերին, նստել էր մի ուրիշ նվիրակ՝ ծեր եւ միամիտ, եւ փորձում էր քրիստոնեական հավատին ետ բերել զրուցակցին, բացատրելով նրան Ֆոմա Աքվինացու դոգմաները. «Իսկ հիմա ես եմ ուզում քեզ դարձի բերել, սուրբ Հայր: Ահա թե ինչ օյիններ է հրամցնում կյանքը: Հիմա ես էլ եմ դարձել հավատացյալ... Հիմա ես էլ եմ դարձել հավատացյալ»,- կրկնեց նա, աչքը չթարթելով, թեեւ առաջվա պես ոչ աստծուն էր հավատում, ոչ սատանային եւ, առհասարակ, ոչնչի չէր հավատում այս աշխարհում, սակայն խորապես համոզված էր, որ մայրը իր անսահման նվիրվածության, անձնազոհության եւ կյանքում ցուցաբերած օրինակելի առաքինության համար իրավունք է ձեռք բերել սրբերի կարգը դասվելու: Առաջ քաշելով մոր սրբության փաստարկները, նա, սակայն, չվկայակոչեց ամբոխի գոհհիկ հորինվածքները, թե իբր, բեւեռային աստղը շարժվում էր թափորի ուղղությամբ, իբր երաժշտական գործիքներն իրենք իրենց սկսեցին հնչել փակ սենյակում, երբ մոտից տանում էին հանգուցյալի մարմինը: Նրա գլխավոր փաստարկը սավանն էր, որի վրա մեռել էր մայրը եւ որը նա բաց արեց ինչպես առագաստ, որպեսզի նվիրակը օգոստոսյան օրվա լույսի տակ տեսներ այն, ինչ տեսավ. Բենդիսիոն Արվարատյի մարմնի դրոշմն էր դա, նրա զարմանահրաշ պատկերը, երիտասարդ, առողջ կնոջ

պատկերը, եւ ոչ թե խոցածածկ այն պառավի, որը մեռավ վուշե կտավից կարված այս նուրբ սավանի վրա: Պառկել էր կողքի ընկած, ձեռքը սրտին սեղմած, իսկ որդին շոյում էր նրա պատկերը մատներով, զգալով իրական քրտնքի խոնավությունը, ներշնչելով կտավից փչող նուրբ ծաղիկների բույրը, լսելով հրաշք արթնացում ապրող թռչունների ճռվողյունն ու ժխորը. «Ահա, տեսնո՞ւմ եք, սուրբ հայր: Հրաշք է: Նույնիսկ թռչնակներն են ճանաչում նրան...»: Եվ նա Նվիրակին ցույց տվեց սավանի հակառակ երեսը, որտեղ նույն պատկերն էր, սակայն Նվիրակն ուշադիր մարդ էր, աչալուրջ ու սեւեռուն, նա ընդունակ էր մեծ վարպետների վրձնին պատկանող կտավներում հրաբխի մոխրի մասնիկներ նկատել, նկարների ճաքերով նա կարողանում էր հասկանալ նկարիչների բնավորությունները եւ նույնիսկ հավատի նկատմամբ տատանումները չէին վրիպում նրա աչքից, քանզի նա ընդունակ էր որսալ դրանք գույների ինտենսիվությամբ, նա հասու էր տիեզերքի գեղեցկությանն ու ներդաշնակությանը, նա վայելք էր ապրում բնության տաճարում Երկրի կլորությունը դիտելիս. այդ տաճարում երկինքն աշխարհի մենավոր ժամատան գմբեթն էր, այստեղ ժամանակը չէր անցնում, այլ լողում էր, ահա թե ինչու, վերջապես աչքը սավանից կտրելով, նա շատ մեղմ, միաժամանակ հաստատակամ ասաց, որ վուշե կտավի վրա դրոշմված կնոջ մարմնի պատկերը ոչ մի դեպքում չի կարելի համարել նախախնամության արտահայտություն. «Ոչ մի դեպքում, ձերդ գերազանցություն: Սա նկարչի ձեռքի գործ է, մի նկարչի, որը հավասարապես ճարպիկ է թե՛ իր արհեստում եւ թե՛ խաբելու արվեստում: Սույն նկարիչը չարաշահել է ձերդ գերազանցության պարզամտությունը, քանի որ օգտագործածը իսկական յուղաներկեր չեն, այլ կեղծ, որոնցով միայն պատերն են լզոզում, ձերդ գերազանցություն: Դրանք խառնված են սովորական սկիպիդարով, ավելացված է նաեւ բնական կաուչուկ, գիպս... ահա դրա չորացած կճեպը: Իսկ կտավի մշտական խոնավությունը, որի մասին ասել են ձեզ, թե ձեր մոր քրտինքն է, արդյունք է այն բանի, որ կտավը ներծծված է օլիֆով, ահա այս տեղերում, որտեղ մուգ ներկեր են քսված: Այնպես որ՝ ես խորապես ցավում եմ, ձերդ գերազանցություն»: Անկեղծ վշտացած Նվիրակն այլեւս ոչինչ չկարողացավ ասել քա-

րի պես ամուր այդ ծերունուն, որը նայում էր հոգի միջից անթարթ աչքերով, ոչ մի անգամ չընդհատելով, ընկղմված մի տեսակ ասիական թմբիրի, լռության մեջ: Նա նույնիսկ շրթները չշարժեց առարկելու. չէ՞ որ ինքն է եղել հրաշքի վկան, սավանի խորհրդավոր վերափոխման վկան. «Ես չէ որ անձամբ քեզ փաթաթեցի այդ սավանի մեջ մայր իմ սեփական ձեռքերով եւ ես տեսա հրաշքը երբ վախեցա քո մահվան լռությունից երբ արթնացա վաղ լուսաբացին երբ ինձ թվաց թե աշխարհը ծովի հատակն է սուզվել ես վկան էի հրաշքի գրողը տանի»: Բայց այս ամենը նա չասաց Նվիրակին, երկու անգամ թարթեց աչքը, կոպերն իրար չկպցնելով, ինչպես անում են իգուանները, թույլ ժպտաց, խոր ներշնչեց եւ կամացուկ արտասանեց. «Շատ լավ սուրբ հայր թող ձեր ասածը լինի: Բայց ես զգուշացնում եմ ձեզ որ ողջ կյանքում դուք քարշ եք տալու ձեր բառերի ծանրությունը: Կրկնում եմ տաս տաս որպեսզի երբեք ու ոչ մի հանգամանքում չմոռանաք ասածս ողջ կյանքում դուք քարշ եք տալու ձեր բառերի ծանրությունը: Ես ձեզ համար այլեւս պատասխանատու չեմ սուրբ հայր»:

Աշխարհը չար կանխազգացումներից քարացել էր այն ողջ շաբաթը, որի ընթացքում նա չիջավ իր հոգից, նույնիսկ ուտելու համար. պառկել էր, հովհարով թռչնակներին էր քշում. սրանք վարժվել էին նստել նրա ուսերին, քշում էր ծածկոցի տերեւների արանքից վրան թափվող արեւի շողիկները, որոնց նույնպես թռչնակների տեղ էր դնում: Այդ շաբաթվա ընթացքում նա ոչ մեկին չընդունեց եւ ոչ մի հրահանգ չարձակեց, սակայն մոլեռանդ ամբոխները հասարակական կարգի պահպանության բացարձակ անգործության պայմաններում հարձակվեցին Առաքելական Նվիրակության պարտի վրա, թալանեցին պատմական մասունքների թանգարանը, բռնեցին Նվիրակին, որը սիեստայի այդ ժամերին նստում էր ներքնաբակի ավազանում, դուրս բերեցին փողոց բոլորովին մերկ վիճակում եւ բռնաբարեցին. «Պատկերացնո՞ւմ եք, իմ գեներալ»: Այդ լուրին ի պատասխան, նա նույնիսկ չշարժվեց իր հոգում, նույնիսկ հոնքը չխաղացրեց. հիշա նույն կերպ ընդունեց նաեւ այն տեղեկությունը, թե Նվիրակին ման են տալիս էշին նստած, առեւտրական թաղամասում, կեղտաջրեր են թափում գլխին պատշգամբներից եւ դոռում վրան. «Հեյ, դու միսիս վատի-

կան, ե՞րբ ես ծնելու, Հաստատիր»: Եվ միայն այն բանից հետո, երբ Հայոնի դարձավ, որ կիսամեռ Նվիրակին քարշ են տվել շուկայի աղբանոց եւ թողել այնտեղ, աղտեղությունների կույտի վրա, նա դուրս եկավ ճոճից եւ ինչպես ճանճերից, ձեռքի թափահարումով թռչնակներից ազատվելով, ուղղվեց նիստերի դահլիճ: Նա հայտնվեց դահլիճում ձեռքերի մի այնպիսի շարժումով, ասես դեմքից սգո սարդոստայնն էր պոկում, թեեւ չէր հանել սգո սեւ թեւակապը: Անքնությունից ուռած աչքերով նա նայեց բոլորին եւ հրամայեց Նվիրակի համար լաստ պատրաստել, սննդամթերքի երեք օրվա պաշարով նստեցնել այդ լաստը եւ գցել բաց ծով, Եվրոպայից եկող նավերի ճանապարհի վրա, որպեսզի ամբողջ աշխարհն իմանա, թե ինչպես ենք հաշվեհարդար տեսնում այն օտարերկրացիների հետ, ովքեր ձեռք են բարձրացնում մեր հայրենիքի մեծության վրա. «Թող պապը մեկընդմիշտ ականջին օղ անի, որ ինքը պապ է իր Հռոմում, իր ոսկե գահի վրա, իսկ այստեղ ես՝ ես եմ, գրողը տանի այդ քաքլան փեշավորներին»: Նախագուշացումը ապդեցիկ էր, եւ այդ տարվա վերջին արդեն վերսկսվեց Բենդիսիոն Ալվարադոյին սրբացնելու, սրբերի կարգը դասելու հարցի քննարկումը: Նրա մարմինը ցուցադրելու ազատ հնարավորություն ստեղծվեց, դագաղը դրեցին մայր տաճարի գլխավոր նավում, երգչախմբերը ալելույա էին երգում, Վատիկանի հետ վաղօրոք հայտարարված պատերազմական վիճակը դադարեցվեց, դե Արմաս հրապարակում մարդկանց ամբոխները փառաբանում էին աստծո անունը եւ կեցցեներ ճչում խաղաղության օգտին, առանց հապաղման տեսակցության իրավունք ստացավ սրբազան արարողության կոնգրեգացիայի դատախազ եւ Հավատի պոստուլատոր մոնսինյոր Դեմետրիո Ալդու
ը, նշանավոր էրիտրեացին, որը ժամանել էր Բենդիսիոն Ալվարադոյի կյանքը մանրամասնորեն ուսումնասիրելու առաքելությամբ, որպեսզի կասկածի նշույլ չմնար նրա սրբության վերաբերյալ: «Դուք այստեղ կմնաք այնքան, որքան կկամենաք»,- ասաց պրեսիդենտը էրիտրեացուն, նրա ձեռքն իր ձեռքում պահելով եւ խսկույն վստահելով թխամաշկ այդ հաբեշացուն, քանի որ սա աշխարհում ամենից շատ կյանքն էր սիրում, ուտում էր իգուանի ձվեր, պաշտում աքլորակռիվը, կրակոտ մուլատուհիներին, պարել էր սիրում, մի խոսքով՝ բոլոր այն բաները,

ինչ մենք հնք պաշտում, իմ գեներալ: Ահա թե ինչու գրողի տարած հավատի օրենքի այդ մարդու առջեւ բացվեցին բոլոր փակ դռները, կարգադրվեց ոչ մի արգելք չհարուցել՝ թող համոզվի, որ վշտի այս անապ թագավորության մեջ մարդկային աչքի համար չկա ծածուկ. Բենդիսիոն Ալվարադոյի սրբությունը կասկածի տակ դնող որեւէ փաստ, այդ սրբությունը կանխորոշված էր վերեւից. «Ողջ երկիրը ձեր սրամտղության տակ է, սուրբ Հայր, ահա»: Զինվորները կարգի բերեցին Առաքելական նվիրակության պալատը, որի առջեւ լուսաբացն էին դիմավորում ապաքինվող բորոտների անվերջանալի շարքերը. նրանք գալիս հա գալիս էին, որպեսզի ցույց տային իրենց ջահելացած, մաքուր մաշկը. Սուրբ Վիտալի պարից բուժվածներն անհավատներին ցույց էին տալիս, թե ինչ հարկությամբ են ասեղը թելում. նրանք, ովքեր հարստացել էին պտտավաղում, ցույց էին տալիս շահած գումարը, բացատրելով, որ շահել են շնորհիվ Բենդիսիոն Ալվարադոյի, որը, հայտնվելով իրենց երազում, հուշել էր այս կամ այն համարը. նվիրակության պալատ էին գալիս բոլոր նրանք, ովքեր անհայտ կորածներին էին գտել, ովքեր խեղդված հարազատների մարմիններն էին գտել, գալիս էին հարստացած նախկին աղքատները, եւ բոլոր այս մարդկանց անվերջանալի շարքերն անցնում էին հեղձուկ մի առանձնասենյակով, որ զարդարված էր արկեբուզներով, որոնցով մի ժամանակ ոչնչացնում էին մարդակերներին, եւ սեր Ուոլտեր Ռեյլիջի բրածո գանգերի գրահներով. այդ առանձնասենյակում անխոնջ էրիտրեացին լում էր բոլորին, հարցեր չէր տալիս եւ բանավեճ չէր բացում. նա նստում էր քրանքից բոլորովին թրջված, մարդկային անհամար մարմինների անդուր հոտերին անտարբեր, իրար հետեւից ծխում էժանագին սիգարներ, թեեւ առանձնասենյակում առանց այդ էլ շնչելու օդ չկար, եւ մանրամասն գրի առնում Բենդիսիոն Ալվարադոյի սրբությունը վավերացնող ցուցմունքները, ստիպում ստորագրել ցուցմունքների տակ՝ լրիվ անունով կամ խաչ քաշելով եւ կամ մատնադրոշմով. «Ինչպես դուք, իմ գեներալ»: Յուրաքանչյուրը ստորագրում էր կարողությանը համեմատ եւ հետանում, սեղն իսկույն գրավում էր նախորդից ոչնչով չտարբերվող մեկ ուրիշը եւ սկսում. «Ես հիվանդ էի թոքախտով, սուրբ Հայր»:- «Ես հիվանդ էի թոքախտով»,- գրում էր էրիտրեացին,

իսկ այցելուն շարունակում էր. «Իսկ հիմա լսեք, թե ինչպես եմ երգում»: Ներս մտավ մեկը եւ հայտարարեց. «Ես սեռական թուլություն ունեի, սուրբ հայր: Իսկ հիմա տեսեք, թե ինչ կոպալ ունեմ: Ահա այսպես տնկած էլ ման եմ գալիս օրերով»:- «Ես սեռական թուլություն ունեի»,- գրի առավ էրիտրեացին հավերժական թանաքով, որպեսզի սույն դրառումները չջնջվեին մինչեւ մարդկության պատմության վերջը: «Փորումս կենդանի էր մեծանում, սուրբ հայր»:- «Փորումս կենդանի էր մեծանում»,- գրի էր առնում նա, կազդուրվելով վայրենի թանձրություն ունեցող սրճով, հերթական սիգարը վառելով վերջացող նախորդի կրակից. «Այդ հոգեւորականը իսկական տղամարդ է, իմ գեներալ»:- «Այո, սենյոր, իսկական տղամարդ է: Բիչ են նմանները»:

Ունկնդիրն աշխատում էր առանց շունչ քաշելու, գործը չընդհատելով նույնիսկ ճաշին, մինչեւ երեկո ոչ մի բոպն իզուր չէր վատնում, բայց եւ երեկոյան չէր պառկում հանգստանալու, այլ լոգանալուց հետո հայտնվում էր նավահանգստի պանդոկներում իր կարկատած-վերակարկատած քսթանե փարաջայով, սովից զկռտալով երկար նստում տախտակյա սեղանի մոտ, նավահանգստի բեռնակիրների հետ, ուտում նույն վռիկը, ինչ նրանք, տապակած ձուկը բաժան-բաժան ուտում էր ձեռքերով, ծամում նույնիսկ փշերն իր դիվային ատամներով, որոնք մթության մեջ լույս էին արձակում, իսկ վռիկն ուտում էր առանց գդալի, խմում ափսեից, ինչպես հնդկացիները: Միայն թե տեսնեիք նրան, իմ գեներալ, մարդկային տականքների շրջապատում, առագաստանավերով մարիմոնդոյի եւ գվինեայի պատուղներ, Կուրասաոյի, Գուանտանամոյի, Սանտյագո-դե-լոս-Կաբալյերոսի հայելապատ հյուրանոցների համար ջահել, կանաչ պոռնիկներ մատակարարող նավաստիների մեջ. ծովից զուրկ, սմենահրաշալի ու ամենատխուր այդ կղզիների մասին մենք երազում ենք երեկոյից մինչեւ լուսաբացի առաջին շողերը. «Հիշեք, թե ինչպես մենք կերպարանափոխվեցինք, երբ մակույկով պոկվեցինք ափից, հիշեք Մաթիլդա Արենալեսի տանը լինելու բախտը գուշակած թութակին, հիշեք ծովային խեցգետիններին, որ դուրս էին գալիս վռիկով լի ափսեներից. հիշեք շնաձկների քամիները, հեռավոր թմբուկների որոտը, հիշեք ամբողջ այն կյանքը, սուրբ հայր, պոռնկային այդ կյանքը, ինչպես

դուք ինքներդ արտահայտվեցիք, որովհետեւ դուք, սուրբ հայր, արտահայտվեցիք մեզ նման, կարծես ծնված լինեք Շնային զզվոտոցների թաղամասում»: Եվ, իրոք, սուրբ հայրը ֆուտբոլ էր խաղում ծովափում, սովորեց ակորդեոն նվագել արվարձանի վարպետներից հմուտ, երգում էր ինքնուս երգիչներից ոչ պակաս, սերտեց նավաստիների ընտիր հայհոյանքները, սերտածը պարծանքով կիրառեց լատիներեն լեզվով, խմում էր նավաստիների հետ շուկայի փչացած կանանց խրճիթներում, կռվեց մեկի հետ, որը աստծուն էր հայհոյել. «Նրանք խփում են իրար բռունցքներով: Ի՞նչ եք հրամայում անել, իմ գեներալ»: Կարգադրվեց չբաժանել կռվողներին, շրջան կազմել՝ թող կռվեն: Եվ ի՞նչ: «Սուրբ հայրը հաղթեց, իմ գեներալ»:- «Սուրբ հա՞յրը: Այդպես էլ գիտեի: Նա իսկական տղամարդ է»: Բայց նա այնքան էլ հասարակ մարդ չէր, որքան թվում էր բոլորին. այդ բուռն զիշերներին նա այնքան բան իմացավ, որքան բոլոր օրերի ընթացքում: Այդ զիշերներին նա իմացավ ավելին, քան քաղաքից դուրս գտնվող մռայլ մենատանը, որտեղ նա մտավ մի երեկո հորդ անձրեւի ժամանակ, կարծելով, թե իրեն հաջողվեց խաբել պրեզիդենտական անվտանգության ծառայության անքուն աչքը: Նա զննեց ողջ մենատունը, մինչեւ վերջին ճեղքն ու ճղակը եւ ոտքից գլուխ թրջվեց ոչ այնքան բաց երկնքի տակ, որքան մենատան ներսում, որտեղ կաթում, չոռում էր առաստաղից եւ վախ ունեցավ, երբ զգաց, որ փոքրոգության ճահիճը քաշում է իրեն թունավոր ծաղիկներով պատված շքեղ ննջասենյակները, որ Բենդիսիոն Ալվարադոն, հուրախություն սպասուհիների, զիջել էր իրենց. «Որովհետեւ նա բարեսիրտ էր, սուրբ հայր, որովհետեւ նա համեստ էր: Սպասուհիներին նա բատիստե սավաններ էր տալիս, իսկ ինքը քնում չոր խսիրի վրա, զորանոցային խղճուկ մահճակալին, նա թույլատրում էր սպասուհիներին հագնել իր տոնական շորերը, պետության առաջին տիկնոջ շորերը, նրանք օգտագործում էին տիկնոջ բուրումնավետ աղերը, երբ լողանում էին լոգարանում, մերկ վիճակում լկտիվում սպասյակների հետ, չուզունե առյուծաթաթերին նստած այդ տարոդունակ տաշտակների դեղին փրփուրներում, ապրում էին ոնց թագուհի, իսկ նա աշխատում էր, թուչնակները ներկում, փայտի վառարանի վրա եփում բանջարեղենի իր ապուրը, հարեւաններին

օգնելու համար դեղաբույսեր աճեցնում: Նրան արթնացնում էին գիշերվա որ ժամին ասես. «Ստամոքսի կծկումներ ունեմ, սենյորա»- եւ նա այդ մարդուն կրեսի սերմեր էր տալիս, հրահանգում ծամել. «Սանիկիս աչքը շլացել է»- եւ նա էպաստոտի թուրմ էր տալիս. «Ես մեռնում եմ, սենյորա»- արթնացնում էին նրան անվերջ, սակայն ոչ ոք չմեռավ, որովհետեւ բոլոր դրացիների առողջությունը նրա ձեռքում էր: Նա սուրբ էր դեռ կենդանության օրոք, սուրբ հայր, նա պղծությունից իրեն արգելափակել էր իր անարատությամբ, ապրում էր սեփական աշխարհում՝ օտարոտի շքեղությամբ շրջապատված, այստեղ, մեղքաշատ այս մենաստանը, որտեղ այն օրից, ինչ նրան ուժով պրեզիդենտական պալատ տարան, անխղճորեն չոտում է տանիքից, եւ անձրեւը թմբկահարում է դաշնամուրի ստեղները, շքեղ հյուրասենյակի ալեբաստրե ճերմակությամբ սեղանը, որի մոտ Բենդիսիոն Ալվարադոն երբեք չնստեց, ասելով, թե ուտել այդ սեղանից, նույնն է՝ թե պղծել զոհասեղանը: Պատկերացնո՞ւմ եք, թե իր սրբության որպիսի նախազգացում ուներ նա, սուրբ հայր»: Սակայն Բենդիսիոն Ալվարադոյի հարեւանների կրակոտ նման վկայությունները չխանգարեցին սեւ սատանային դրդել ունկնդրին նկատելու, որ մենատան տիրուհուն հատուկ էր ոչ այնքան համեստությունը, որքան վախը օտարոտի կահկարասուց, ոչ այնքան ինքնահրաժարումը, որքան հոգու աղքատությունը, որ նրան պարզապես անհասկանալի էին բոլոր այդ նեպոտունները՝ քարակարկառ կաղնուց, բնիկների դեւերի բեկորները, զինվորական համազգեստով հրեշտակները, որ թեւածում էին նախկին պարասրահների ամայության մեջ: Բայց եւ ոչ մի անկյունում նա չգտավ եռադեմ այն եզակիին, աստծուն, որը Հաբեշստանի այրող հեռուներից իրեն այստեղ էր ուղարկել ճշմարտությունը փնտրելու. «Նա, ախր, ճշմարտությունը փնտրում է այնտեղ, որտեղ երբեք չի եղել, իմ գեներալ, ահա թե ինչու նա չգտավ ոչինչ, այսպիսի բաներ...»: Մոնսենյոր Դեմետրիո Ալղոուսը, սակայն, չսահմանակվեց քաղաքից հավաքած տեղեկություններով, ջորի հեծած մազլցեց սարահարթի սառցե քիվը, ճգնելով գտնել Բենդիսիոն Ալվարադոյի սրբության ապացույցներն այնտեղ, որտեղ նրա կերպարը չէր աղավաղվել իշխանության լուսապսակով: Ունկնդիրը հայտնվեց մշուշից՝ ավազակի պոնչոյով

փաթաթված, յոթմղոնանոց սապոգներով՝ ինչպես սատանայի ուրվական, եւ սկզբում սարսափ առաջացրեց, հետո զարմանք, ի վերջո հետաքրքրասիրություն՝ բացբերան ավարաների շրջանում, որոնք երբեք չէին տեսել նման սեւամորթ մարդ-արարածի: Խորամանկ էրիտրեացին առաջարկեց ձեռք տալ իրեն, շոշափել, որպեսզի համոզվեն, որ իրենից չի փչում ծծումբի հոտ, զվարճացրեց նրանց՝ մթության մեջ ցույց տալով լույս արձակող ատամները, հարբեց բոլորի հետ, բոլորի հետ պանիր կերավ, բոլորի հետ տոտումի օղի խմեց: Նա ձգտում էր մարդկանց վստահությունը գրավել գյուղական ձանձրալի պանդոկներում, ուր հին-հին օրերում ճանաչում էին թռչնավաճառ այն կնոջը, որը հազիվ էր շարժվում անանուն գորշ թռչնակների ճտերով, ոսկեգույն տուկաններով, իբրեւ սիրամարգի պոչերով գուաչարակիներով լեցուն բազմաթիվ վանդակների բեռան տակ. այդ գուաչարակիները, այդ գորշ, պիրոլ դարձած թռչնակները նախատեսված էին սարահարթի բոի գյուղացիներին խաբելու համար՝ ձանձրալի, ինչպես հուղարկավորություն, կիրակնօրյա շուկայում. «Նա նստում էր այ, այնտեղ, սուրբ հայր, օջախի մոտ, տաքանում էր ու սպասում ողորմության, սպասում էր, որ որեւէ մեկը պառկի իր հետ եղեգնօղու տիկերի վրա, պանդոկի ետնասենյակում: Նա կարող էր պառկել ցանկացածդ տղամարդու հետ, հուսալով, որ կհյուրասիրվի ճաշով, սուրբ հայր: Ճաշ՝ ահա թե ինչ էր միայն նրան պետք, որովհետեւ նա չէր կարողանում կերակրել ինքն իրեն, որովհետեւ չկար, չէր ճարվում մի վայրենի, որ աչք տնկեր անորակ ներկով ներկված նրա թռչնակների վրա,- առաջին իսկ անձրեւիկից ներկը լվացվում էր, թափվում, իսկ սիրամարգի պոչերը թափվում էին: Միամտությունն էր ստիպում նրան զբաղվել այդ գործով, սուրբ հայր, նա թռչնախեւ էր, սարահարթի խեւ, կոչեք՝ ինչպես կուզեք, իսկ ինչ վերաբերում է նրա անվանը, ապա ոչ ոք էլ չի հիշի, թե ինչպես էր նա կոչվում այդ տարիներին, համենայն դեպս, ոչ Բենդիսիոն Ալվարադո, այդ անունը մերը չէ, նման անուններ տարածված են մերձծովյան շրջաններում, սուրբ հայր»:

Ահա թե ինչ: Նույնիսկ այս տեղեկությունը դուրս կորզեց այդ սեւ սատանա-դատախազը, այս եւ շատ ուրիշ այլ տեղեկությունների հետ եւ հոտոտում, անվերջ հոտոտում էր, բացահայտում նո-

բանոր գաղտնիքներ, խուսանավելով պրեզիդենտական անվտանգության ծառայության գաղտնի գործակալներից, որոնք ամենուր կեղծիքի սարդոստայն էին հյուսում եւ էրիտրեացու ճանապարհին հազար ու մի արգելք ստեղծում. «Ի՞նչ եք կարծում, իմ գեներալ, արդյոք ժամանակը չէ՞ հետապնդել նրան, հասցնել անդունդի եզրին: Ժամանակը չէ՞, որ սայթաքի նրա ջորին»: Սակայն հրամայվեց շարունակել հետապնդումը առանց անվտանգությանը դիպչելու, խստիվ հրահանգվեց ապահովել նրա ազատությունը, ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի էրիտրեացին կատարի իր առաքելությունը. «Ես պնդում եմ, ես պահանջում եմ, այդպիսին է իմ բարձրագույն կամքը, կատարե՛ք»: Նման հրաման արձակելով, նա հասկանում էր, որ մեծ համարձակության է դիմում, վտանգի է ենթարկում մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի առաստպելը, թույլ է տալիս, որ էրիտրեացու ջանքերով արգելքի տակ եղած հեռու-հեռավոր ժամանակներից ջրի երես դուրս գա մոր իրական պատկերը, այն կնոջ պատկերը, որն այդ հին օրերում ջահել էր, ցանկություններով առլեցուն, շրջում էր ոտաբոբիկ, ցնցոտիներով, ստիպված էր կերակրվել իր պնթիկի հաշվին, այնքան գեղեցիկ էր, որքան եւ միամիտ, այնքան միամիտ ու պարզասիրտ, որ ամենատարբեր թութակներին ցեղական աքաղաղների պոչեր էր կպցնում ու այդ թութակներին, որպես գուակամայա ներկայացնում, հիվանդ, փետրաթափ հավերին զարդարում հնդկահավի պոչերով եւ ջանում համոզել գնորդներին, թե դրանք դրախտահավեր են: Ոչ ոք, իհարկե, չէր հավատում նրան, նման հիմարներ չկային, որ ընկնեին կիրակնօրյա շուկայի մշուշներում ճղճղացող միայնակ թռչնավաճառուհու խորամանկությունների ծուղակը՝ թե ով վճարի մեկ պեսո մի թռչնակի համար, մնացած բոլորը կստանա ձրի: Սարահարթում բացարձակապես բոլորն էին հիշում հիմարավուն, աղքատ այդ կնոջը, բայց այդպես էլ չհաջողվեց պարզել, թե ով էր նա, ոչ մի կերպ չհաջողվեց, որովհետեւ այն վանքի հնադարանում, ուր կնքել էին նրան, ծննդին վերաբերող ոչ մի գրություն չկար, չհայտնաբերվեց նաեւ. ծննդյան վկայականը, փոխարենը միանգամից գտնվեցին որդու ծննդյան երեք վկայականները. պարզվեց, որ պրեզիդենտը երեք տարբեր անուններ ուներ, երեք անգամ էր սաղմնավորվել՝ երեք տարբեր հանգամանքներում, ե-

րեք անգամ էր ծնվել, երեք անգամն էլ օրապակաս տարբեր ժամկետներում: Այդպես էր եղել, շնորհիվ մեր Հայրենիքի պատմաբանների, շնորհիվ մեր պատմությունը հորինողների, որոնք ճշմարտության թելերը հյուսել էին կեղծիքի թելերի հետ, որպեսզի ոչ ոք չիմանար նրա ծագման գաղտնիքը. էրիտրեացին, սակայն, գրեթե հասավ գաղտնիքին, գրեթե փորեց խաբեության բոլոր շերտերը, մի թիզ էր մնացել, իմ գեներալ, մի թիզ, երբ ճայթեց կրակոցը, որի արձագանքը սահեց Կորդիլերների գորշ լեռնաշղթայով ու ձորերով, եւ անհատակ անդունդը գահավիժող ջորու սոսկալի ոռնոցը արձակվեց. Նա ընկնում էր հավերժական ձյունով ծածկված գագաթներից դեպի կլիմայական բոլոր գոտիները, թռչում էր սառցադաշտերի մոտով, որտեղ նավարկելի մեծ գետերի ջրերն էին ծնվում, թեք քիվերի մոտով, որտեղ հնդկացի հեծած բուսաբանական արշավախմբի դոկտորներն իրենց խորհրդավոր հերբարիումներն էին հավաքում, սարահարթում աճող վայրի մագնոլիայի կողքով, որտեղ արածում էին երկարաբուրդ, առատ սնունդ, տաք հագուստ տվող, օրինակելի վարքով ոչխարները, սրճի պլանտացիաների ու կալվածքների մոտով, որոնց պատշգամբները դատարկ էին ու զարդարված թղթե դրասանգներով, հիվանդ մարդկանց մոտով, որոնք ապրում էին լեռնային բուռն գետակների հավերժական որոտմունքի ու տոթ դաշտավայրի սահմանագծում, որտեղից իրիկնային քամին տանում էր խոշոր, ամուր տերեւներով, կարմիր ծաղիկներով ու պտուղներով կակաոյի պլանտացիայում դավաճանաբար թիկունքից զարկված, մեռած մի ծերունու լեշի գարշահոտությունը, անշարժ արեգակի մոտով, այրող փոշու, ճմերուկների, սեխերի, Ատլանտիկո դեպարտամենտի նիհար, տխուր կովերի արոտավայրերի կողքով, որտեղ բարեգործական դպրոց կար՝ միակը երկու հարյուր մղոն շառավղով տարածության մեջ, բայց վերջիվերջո, խեղճ ջորին ընկավ, շրմփաց, պայթեց, ինչպես հյութեղ գվանաբաո, անդունդի հատակին, գվինեոյի թփուտների մեջ, վախեցնելով կաքավներին եւ ծանր տնքալով վերջում. «Խփեցին նրան, իմ գեներալ, կրակեցին վրան վագրի համար նախատեսված հրացանով, Անիմա-Սոլա ձորակում»:- «Հաշվի չառնելով իմ տված արտոնագիրը, հա՞, չան որդիներ, հաշվի չառնելով իմ խստիվ հեռագրե՞րը: Գրողը տանի,

հիմա ինքներդ եք ստիպված լինելու պարզել, թե ով՝ ով է»,- սպառնաց նա լեզի թափելով, բայց նրան զայրացնողը ոչ այնքան գործակալներից մեկնումեկի անհնազանդությունն էր, որքան համոզվածությունը, որ իրենից ինչ-որ բան են թաքցնում, շատ կարեւոր մի բան, եթե համարձակվել են արհամարհել իր կայծակ հեռագրերը: Նա ականջն էր սրում լսելու դեպքը, զեկուցողների շնչառությունը նույնիսկ, քանի որ գիտեր՝ միայն ճշմարտությունն իմացողն է համարձակվում ստել: Նա փորձում էր կռահել բարձրաստիճան սպաների գաղտնի մտահոգությունները, ճգնում գուշակել, թե ով է նրանց մեջ դավաճանը. «Դո՞ւ որին դուրս հանեցի անհայտությունից: Դո՞ւ որ թավալ էիր գալիս փոշիների մեջ իսկ հիմա իմ շնորհիվ քնում ես ոսկյա մահճակալին: Ձեզանից ո՞ր մեկն է անպատիվ մոր զավակներ: Ո՞ր մեկն է»: Նա հասկանում էր, որ ինչ-որ մեկը թքել էր իր ստորագրած, իշխանության մատանի-կնիքի դրոշմով հաստատած հեռագրի վրա - ահա թե ինչու փրկիչ միջոցառումների գլուխն ինքն անցավ եւ անօրինակ հրաման արձակեց. «Հրամայում եմ քառասունութ ժամվա ընթացքում գտնել Դեմետրիո Ալդոուային ողջ-առողջ եւ բերել ինձ մոտ. եթե գտնվի մեռած, ինձ մոտ պետք է հասնի ողջ-առողջ, իսկ եթե առհասարակ չգտնվի, միեւնույն է, պարտավոր եք բերել նրան»: Հրամանն այնքան միանշանակ էր ու սարսափելի, որ հայտարարված ժամկետն էլ դեռ չբոլորած, վազ տվեցին հայտնելու. «Իմ գեներալ, նրան գտան անդունդի հատակին, թփուտներում: Նրա բոլոր վերքերն ապաքինվել են շնորհիվ այնտեղ աճող ոսկեգույն ծաղիկների: Նա մեզանից ողջ է, իմ գեներալ, նա առողջ է եւ անվնաս, շնորհիվ ձեր մոր կախարդական ուժերի. նա ծաղիկներին բուժիչ հատկություններ էր հաղորդել, մեկ անգամ եւս ցուցաբերելով իր գթասրտությունը եւ սրբությունը այն մարդու նկատմամբ, որը փորձում էր ապականել իր հիշատակը»: Այդ մարդուն լեռներից իջեցրին հնդկական արահետներով, ձողին կապված ճոճով, գրենադավորների պատվո պահակախմբի ուղեկցությամբ, իսկ առջեւից ընթանում էր հեծյալ ալգվասիլը եւ ուրախ, ասես տոնական ժամերգությանը, զանգակ էր հնչեցնում, ի լուր աշխարհին հայտնելու, որ գերագույն իշխանության հրամանը կատարված է, Դեմետրիո Ալդոուաը վերադառնում է ողջ-առողջ: Նրան տարան

պրեզիդենտական պալատ եւ առողջապահության նախարարի անձնական պատասխանատվությամբ տեղավորեցին պատվավոր հյուրերի ննջասենյակում, որտեղ նա ավարտեց իր առաքելությունը, կազմելով յոթ հաստափոր հատորներ եւ երեք հարյուր հիսուն էջանոց հատորների յուրաքանչյուր էջին գրելով հետեւյալը. «Ես, Դեմետրիո Ալվոուսս ստծո ողորմությամբ Սրբազան արարողության կոնգրեգացիայի ունկնդիրս, հավատի դատախազ ու պոստուլատորս, սույն տարվա ապրիլի տասնչորսին, հանուն երկրի վրա արդարության ծաղկման եւ ի փառս մեր տիրոջ, ստորագրում եմ եւ կնիքս եմ դրոշմում, հաստատում եմ, որ այստեղ գրված է ճշմարտությունը, ամբողջ ճշմարտությունը, միայն ճշմարտությունը եւ ուրիշ ոչինչ ճշմարտությունից բացի»: «Ահա, ձերդ գերազանցություն»: Եվ իրոք, Աստվածաշնչի պես վիթխարի, ծավալուն այդ յոթ հատորներում, որոնցից յուրաքանչյուրը զմուռսե կնիք ուներ, ամփոփված էր ճշմարտությունը, այնքան պարզ ու դաժան, որ նախապաշարումներից բացարձակապես զուրկ, բոլորովին անշահախնդիր մարդը միայն կարող էր իրեն թույլ տալ նման շարադրանք. կենդանի այդ ճշմարտությունը քարի պես ամուր ծերունին լսեց առանց աչքը թարթելու, հյուակին բազկաթոռին նստած եւ շոգից գլխարկը թափահարելով, խաբեության ամեն մի սպանիչ մերկացումից հետո հազիվ լսելի հոգոց էր հանում, «ըհը» էր արտասանում ամեն անգամ, երբ ճշմարտության լույսն առանձնապես ուժեղ էր բռնկվում:

«Ըհը»,- ասաց նա, գլխարկով վռնդեց ապրիլյան ճանճերին, որ հավաքվել էին ճաշի մնացորդների վրա, եւ կով տվեց նորանոր ճշմարտություններ՝ մեկ դառը, մեկ՝ շիկացած, ինչպես խավարը ցրող խանձոցատ: «Այս ամենը ֆարս է, ձերդ գերազանցություն, կատակերգական թատերախաղ»,- լսեց նա եւ ասաց. «Ըհը», որովհետեւ չէ՞ որ այդպես էր, եւ ինքն էր բեմադրել թատերախաղը, իրենից անկախ, երբ հրամայեց հասարակությանն ի տես դնել մոր մարմինը, սառույցների հետ տեղավորել նրան դագաղում, որպեսզի վերջ տրվեր այն ասեկոսներին, թե, իբր, փտել է Բենդիսիոն Ալվարադոն, իսկ դրանից հետո կրկես ստացվեց, ներկայացում - հետո, երբ լսեց, որ մայրը մահից հետո հրաշքներ է գործում եւ հրամայեց շքեղ թափոր ուղարկել մարմնի հետ ճամփորդելու սր-

բապտիզությունից զուրկ երկրով մեկ: Նրա ուղածը մեկն էր՝ որ բոլորն իմանային, թե իր մայրը երկար տարիների նվաստությունից հետո սուրբ է մնացել, որ երկնային շնորհ սրբությունը փոխհատուցումն է ջահելության անպտուղ տարիների, երբ նա զբաղված էր թռչնակներին ներկելու անհեթեթ գործով, փոխհատուցումն է ամբողջ կյանքի ընթացքում այդ թռչնակներին աննպատակ ներկելու. «Մանքովս չէր էլ անցնի, որ սգո թափորը կօգտագործեն մարդկանց խաբելու համար»: Իսկ խաբեությունը ուղեկցում էր թափորին հենց սկզբից - սկսվեցին հազար ու մի աճպարարություններ, կեղծ հիվանդները, ասենք իբր ջրդողությամբ տառապողները, ամբոխի աչքերի առջեւ ազատագրվում էին իրենց ջրերից, փողով, անշուշտ. մի մարդ երկու հարյուր պեսոյով, իբր, հարություն առավ, դուրս եկավ գերեզմանից սարսափազդու ցնցոտիներով, բերանը հողով լցված, եւ սողաց թափորին ընդառաջ. ուխտուն պետս վճարեցին այն գնչուհուն, որը կեղծ ծննդյան ցավեր ներկայացրեց, լույս աշխարհ բերեց երկրպլխանի մի այլանդակ, ինչը ամբոխի աչքին պատիժ էր՝ երկնքից ուղարկված, որովհետեւ գնչուհին, իբր, բացբերանություն էր արել, ասել, թե բոլոր հրաշքները կառավարության խարդախություններն են: Զգոնվեց հրաշքի գոնե մեկ վկա, որը վարձված չլիներ, իսկ գլխավորը՝ այս ամենը հանգուցյալի որդուն շողոքորթելու արդյունքն էր, ինչպես ենթադրում էր իր հետաքննության սկզբում մոնսենյոր Դեմետրիո Ալդոուսը. «Ոչ, ձերդ գերազանցություն, դա ձեր գործակիցների կեղտոտ խարդավանքն է»:

Դա ամենախայտառակ, ամենասրբապիղծ խարդախությունն էր բոլոր այն խայտառակություններից, որ երբեւիցէ բարգավաճել էին նրա իշխանության թեւերի տակ. «Քանդի նրանք, ովքեր հրաշքներ էին հորինում եւ այդ հրաշքների վկաներ վարձում, ձեր վարչակարգի ամենամոլի կողմնակիցներն էին, ձերդ գերազանցություն»:- «ԸՀը...»: - «Այդ նրանք էին կարում եւ հետո վաճառում պատառ-պատառ, ինչպես մասունք, ձեր մայրիկի՝ Բենդիսիոն Ալվարադոյի շրջազգեստը...»: - «ԸՀը...»:- «Այդ նրանք հարստացան՝ վաճառելով ձեր մոր մազերի խոպոպները...»: «ԸՀը...» - «Վաճառելով նրա դաշտի ջրով լի սրվակները...» - «ԸՀը...»: - «Վաճառելով սավաններ՝ վրան կոպիտ ներկերով քաշ-

ված ձեր մոր պատկած պատկերը.- այդ սավանները նրանք իրացնում էին հարյուրներով, տակից՝ հնդկացիների շուկայական կրպակներում...»: - «ԸՀՀ...»: - «Այն մարդիկ, ովքեր անվերջանալի հեղեղով անցնում էին Հանդուցյալի դագաղի մոտով, երբ դագաղը դրված էր տաճարի գլխավոր նավում, հրեշավոր խաբեության մեջ էին ընկնում, որովհետեւ վախճանյալի մարմինը չէր նեխում ոչ թե այն պատճառով, որ սրբի մարմին էր, ինչպես ներշնչվում էր ժողովրդին, եւ ոչ էլ պարաֆինի ու կոսմետիկայի շնորհիվ, որ կիրառում էին որդու հասկանալի սնափառությունը հագեցնելու համար, այլ որոհետեւ դա սովորական խրուվիլակ էր, սարքված ճիշտ նույն եղանակով, ինչպես պատրաստում են կենդանիների խրտվիլակները բնագիտական թանգարաններում...»: «ԸՀՀ...»,- ասաց նա եւ շուտով հնարավորություն ստացավ ամեն ինչ տեսնելու իր աչքով. «Ես բացեցի ապակյա սարկոֆագը եւ նրա վրայի սգո ժապավենները ցրիվ եկան իմ շնչառությունից իսկ երբ նարնջենու ծաղիկներից հյուսված պսակը Հանեցի վախճանյալի դանգից նկատեցի որ կոշտ ասես ձիու մազերը գրեթե լրիվ դուրս են քաշվել արմատով որպես մասունք վաճառելու նպատակով եւ ես ձեռքերիս մեջ առա քեզ մայր ձեռքերիս մեջ առա քո չորացած ոսկորները հարսնաքողի ցնցոտիների հետ եւ դու ավելի ծանր չէիր քան արեւի տակ չորացած դդումը իսկ քեզանից հին սնդուկի հոտ էր գալիս եւ ես լսեցի թե ինչպես էր քո մեջ տենդագին ինչ-որ բան թրթռում կարելի էր կարծել թե դա քո հոգու շրշյունն էր բայց դա ցեցն էր մանրում քեզ ներսից ցեցը շրշում էր զրնգացնում իր մկրատը եւ ինձ չվիճակվեց քեզ երկար պահել ձեռքերումս որովհետեւ դու բոլորովին ցրիվ եկար կտոր-կտոր եղար չէ՞ որ քո ներսը դատարկ էր ոչինչ չէր մնացել իմ երջանիկ մոր մարմնից որը քնում էր ձեռքը սրտին դրած քեզանից մնացել էր փոշոտ ու փտող թաղանթ որ ձեռքերիս մեջ վերածվեց փոշու ամպի իսկ դնովի ապակյա աչքերը լվի ցատկերով ոստոստեցին հատակի սալերի վրա տաճարը ընկղմված էր արեւամուտի արնագույն լույսերի մեջ դու վերածվեցիր ոչնչի մայր քայքայված նյութի մի կույտի եւ ալգավասիլները թիերով հավաքեցին քեզ որ էլի դագաղը լցնեն»: Այս ընթացքում քարից էլ պինդ, հանելուկային բռնակալը չդողաց էլ, նրա անթարթ, իգուանի աչքերը ոչ մի զգացմունք չարտահայտե-

ցին ոչ այն ժամանակ, ոչ էլ հետո, երբ մեն-մենակ մնաց աշխարհում այն միակ մարդու հետ, որը համարձակվեց նրան կանգնեցնել ճշմարտության հայելու դիմաց: Նրանք նստել էին առանց զինանշանի, ոչ մի բանով աչքի չընկնող սովորական մի կառք եւ վարագույրների շղարշի միջով նայում էին աղքատների հորդաներին, որ շոգից դադար էին առել կամարավոր դարպասների ստվերների տակ, որտեղ ժամանակին վաճառվում էին դաժան սպանությունների ու դժբախտ սիրո, թունավոր սերմ ունեցող ծաղիկների ու մարդուն կամազուրկ դարձնող խորհրդավոր պտուղների մասին պատմող գրքեր եւ որտեղ հիմա, մշտական իրարանցում էր, մասունքների մշտական առեւտուր, Բենդիսիոն Ալվարադոյի շորերի պատառիկների ու մարմնի մասերի առեւտուր: Մոնսենյոր Դեմետրիո Ալդոուսը անսիալ գուշակեց զրուցակցի մտքերը եւ հայացքը առեւտրից կտրելով ասաց, որ իր հետաքննությունը նաեւ դրական արդյունք ունի: «Ես համոզվեցի, որ այս խեղճ մարդիկ սիրում են ձերդ գերազանցությանը, ինչպես իրենց սեփական կյանքը»: Իրոք, չէ՞ որ Դեմետրիո Ալդոուսը դավաճանություն բացահայտել էր պրեզիդենտական պալատում, նա տեսել էր ագահությունը, սոսոր շահախնդրությունը, նենգ ծնրադրություններ հենց արտոնյալների եւ ունեւորների շրջանում, իսկ աղքատների մեջ, աղքատների հոտում, նա տեսավ ընչազուրկ մարդկանց սերը միայն, այլ մարդիկ ոչինչ չէին ակնկալում տիրակալից, որովհետեւ ոչ մեկից ոչինչ չէին ակնկալում եւ իրենցից վեր կանգնածին պաշտում էին հոգի չափ շոշափելի ջերմեռանդ ասոված ավախությամբ. «Տեր աստվածն ինքը կարող է ձեզ նախանձել, ձերդ գերազանցություն»: Բայց նորին գերազանցությունը հոնքն էլ չշարժեց լսելով սույն խոստովանությունը, թեեւ մի այլ ժամանակ նրա սիրտը քաղցրորեն կթրթռար, նա նույնիսկ հոգոց չքաշեց, բայց մտքում խոսեց թաքուն հուզմունքով. «Իսկ դուք ուզում էիք որ ինձ չսիրեն սուրբ հայր հատկապես հիմա երբ սլիսի մեկնեք ու հաճույք ստանաք իմ խայտառակությամբ եւ իմ վշտով ձեր կեղծ աշխարհի ոսկյա գմբեթների տակ իսկ ես կմնամ մենակ առանց հոգատար մոր որն օգնում էր ինձ կրել այս բեռը մեն-մենակ այս երկրում որ իմ կամքով չեմ ընտրել այլ ստացել ծնված օրից ճիշտ այնպիսին ինչպիսին դուք տեսնում եք ինչպիսին եղել է դարեր շարունակ իր

այս առանձնահատուկ ինքնամոռացման զգացումով այս քաջահոտով պատմությունից զրկված այս մարդկանցով որոնք իրենց կյանքի ընթացքում չեն հավատում ոչնչի այս երկրում որ տրվել է ինձ առանց իմ կամքը հարցնելու սուրբ հայր այս երկրում որտեղ վարագուրված կուռքի ստվերի մեջ քառասուն աստիճան է եւ իննսունութ աստիճան խոնավություն որտեղ խեղդվում ես փոշուց որտեղ քեզ տանջում է նենգ փոշտանկը թեթեւ սուլում հար ու նման սրճատեղի սուլոցին որտեղ ընդունելությունների ժամանակ չկա մեկը որի հետ դմփնոր խաղաս որին ճշմարտությունը վստահես մտեք դրությանս մեջ սուրբ հայր»: Նա հազիվ նկատելի հոգոց քաշեց, հազիվ նկատելի թարթեց իգուանի իր կոպերը եւ խնդրեց մոնսենյոր Դեմետրիո Ալղոուսին, որպեսզի այս դաժան խոսակցությունը մնա իրենց մեջ. «Դուք ինձ ոչինչ չեք ասել, սուրբ հայր: Ես չգիտեմ ճշմարտությունը, եղա՞վ»: Եվ մոնսենյոր Դեմետրիո Ալղոուսը խոստացավ. «Անշուշտ, ձերդ գերազանցություն, դուք չգիտեք ճշմարտությունը: Ամեն ինչ կմնա մեր մեջ, տղամարդու ազնիվ խոսք եմ տալիս»: Բենդիսիոն Ալվարադոյի սրբացման գործը կարճվեց սրբությունը վկայող ապացույցների անբավարարության պատճառով, Հռոմի վերդիկտը այդ կապակցությամբ կառավարության պաշտոնական թույլտվությամբ հրապարակվեց ամբիոններից եւ միաժամանակ կարգադրվեց վճռականորեն կանխարգելել բողոքի ամեն տեսակի փորձերը եւ հասարակական կարգի խախտումները, սակայն կարգի պահպանման ուժերը մատը մատներին չխփեցին, երբ ուխտագնացների հորդաները դե Արմաս հրապարակում մայր տաճարի դարպասների գերաններից խարույկներ վառեցին եւ քարերով ջարդեցին Առաքելական նվիրակության պալատի հրեշտակներով ու գլադիատորներով ապակենկարները. «Նրանք կործանում են ամեն ինչ, իմ գեներալ»: Բայց նա տեղից չշարժվեց իր ճոճում: «Նրանք պաշարել են կույսերի մենաստանը, ուզում են, որ կույսերը մեռնեն սովից: Նրանք թալանում են եկեղեցիները, միսիոներների տները, ոչնչացնում են այն ամենը, ինչ կապ ունի հոգեւորականության հետ, իմ գեներալ»: Բայց նա մնաց անտարբեր իր ճոճում, կենդանի ծաղիկներով ծածկի զով ստվերի տակ, ոչինչ չձեռնարկեց, մինչեւ բոլոր բարձրաստիճան սպաները չհայտարարեցին, որ իրենք անընդու-

նակ են ճնշել հուզումը եւ կարգուկանոն հաստատել առանց ա-
ղյուն թափելու, ինչպես հրահանգված էր: Միայն այդ ժամանակ
նա դուրս եկավ ճոճից եւ մտավ իր առանձնասենյակը, որտեղ չէր
եղել խորհելու երկար ամիսների ընթացքում եւ ստանձնեց ժո-
ղովրդական կամքի միանձնյա արտահայտման ողջ պատասխա-
նատվությունը, ինչն արտահայտվեց դեկրետով, որ նա արարեց
ներշնչանքով եւ հռչակեց իր պատասխանատվությամբ՝ չգլու-
խացնելով զինված ուժերին եւ չխորհրդակցելով իր նախարարների
հետ: Այդ դեկրետի առաջին հոդվածը ազատ ու անկախ ժողովր-
դի կամքով հռչակում էր Բենդիսիոն Ալվարադոյի քաղաքացիա-
կան սրբությունը, եւ շնորհում նրան Ազգի Տիրուհի, Տառապյալ-
ների Ամոքիչ եւ Թռչունների Դաստիարակչուհի կոչումներ, իսկ
Բենդիսիո Ալվարադոյի ծննդյան օրը նույն այդ հոդվածով հայ-
տարարվում էր ազգային տոն: Երկրորդ հոդվածը դեկրետի
հռչակման օրից, պատերազմական վիճակ էր հայտարարում սույն
ազգի եւ Վատիկան կոչվող պետության միջեւ, որանից բխող բո-
լոր հետեւություններով, որոնք պայմանավորված են իրավունքի
պահպանման օրենքներով եւ միջազգային համաձայնագրերով:
Երրորդ հոդվածի ուժով երկրից անհապաղ պետք է վռնդվեին սե-
նյոր արքեպիսկոպոսը, բոլոր եպիսկոպոսները, առաքելական պրե-
ֆեկտները, ծխական քահանաները եւ կույսերը, առհասարակ, հո-
գեւոր կոչում ունեցող, կամ եկեղեցական գործերի հետ կապ ունե-
ցող բնիկ եւ եկվոր բոլոր անձինք: Նրանք բոլորը զրկվում էին երկ-
րի տարածքում եւ ծովային հիսուն մղոնի չափով ջրային սահման-
ներում լինելու իրավունքից: Եվ, վերջապես, չորրորդ հոդվածը
հայտարարում էր եկեղեցական ողջ ունեցվածքի բռնագրավում:
Բռնագրավվեցին տաճարները, մենաստանները, դպրոցները,
հերկվող հողերը՝ գյուղատնտեսական բոլոր գործիքներով եւ անա-
սունները, վանքապատկան շաքարի գործարանները, ֆաբրիկանե-
րը եւ արհեստանոցները, ինչպես նաեւ այն ամենը, ինչը թեեւ
ազնվականների սեփականություն էր համարվում, բայց իրակա-
նում պատկանում էր եկեղեցուն: Այս բոլորը միասին վերցրած եւ
Բենդիսիոն Ալվարադոյի բոլոր թռչնակները, դեկրետի հռչակման
օրից հայտարարվեց պրեզիդենտի մոր եռամահու կալվածքի ան-
քակտելի մասը. դեկրետը ընթերցվեց բարձրաձայն եւ կնքված էր

բարձրագույն իշխանության մատանիով. «Ենթարկվեք ու կատարեք»: Զհրապուրվելով ճայթռուվների ճայթյունով, զանգակների զողանջներով եւ Բենդիսիոն Ալվարադոյի քաղաքացիական սրբացումը փառաբանող ցնծագին մեղեդիներով, նա անձամբ հետեւեց դեկրետի կենսագործման ընթացքին, ոչ մեկին չվստահելով, հաշվի չառնելով եւ ոչ մեկի կասկածելի հեղինակությունը, որովհետեւ չէր կամենում հերթական խաբեության զոհ դառնալ: Նա կրկին իր ձեռքն առավ կառավարման սանձերը, ատլասե ձեռնոցներով ամուր բռնեց կոշտ սանձերից, ինչպես մի ժամանակ, փառավոր այն տարիներին, երբ մարդիկ նրան կանգնեցնում էին սանդուղքին եւ խնդրում վերականգնել ձիարշավները քաղաքի փողոցներում եւ նա վերականգնում էր, երբ խնդրում էին վերականգնել պարկերով վագքը եւ նա վերականգնում էր, երբ նա ամենաաղքատիկ խրճիթն էր մտնում մարդկանց բացատրելու, թե ինչպես պետք է հավին թուխս նստեցնել, կամ ցուլ կռտել: Նա կրկին խորամուխ եղավ ամեն հարցում եւ այդ պատճառով չսահմանափակվեց եկեղեցական ունեցվածքի զույգագրության մանրամասն ակտով, այլ անձամբ ղեկավարեց բռնագրավումը, թույլ չտալով, որ նախատեսվածի ու կենսագործման միջեւ որեւէ ճեղք մնա, պետական թղթերի ճշմարտությունը ստուգելով իրական կյանքի փոփոխական ճշմարտությամբ: Նա հսկում էր եկեղեցական խոշոր համայնքների արտաքսումը. սրանց նկատմամբ կասկած կար, թե նրանք երկտակ հատակ ունեցող ճամպրուկներով եւ խորամանկ կրծկալներով մտմտում են իրենց հետ ծածուկ տանել վերջին փոխարքայի անհաշիվ գանձերը - հենց այն նույն գանձերը, որ կարծում էին, թե թաղված են աղքատաց գերեզմանատանը եւ երկար տարիների դաժան որոնումներից հետո չէին գտել ֆեդերացիայի համար կռվի ղեկավարները: Ահա այդ պատճառով նա հրամայեց. ոչ մի հոգեւորական իրավունք չունի մեկ փոխնորդ սպիտակեղենից բացի որեւէ բան տանելու, նախատեսվում էր նրանց նավ թողնել բացարձակապես մերկ, ինչպես ծնվել էին իրենց մայրերից: Այդպես էլ եղավ. բոլորովին մերկ նավ մտան գյուղական կոպիտ քահանաները, որոնք ոչինչ չէին հասկանում, որոնք համաձայն էին ողջ կյանքը մերկ շրջել, միայն թե չդիպչեին իրենց եւ չստիպեին մեկնել միսիոներական օկրուգների ջերմախտից հյուծված պրեֆեկտ-

ները, վսեմաշուք ճաղատ եպիսկոպոսները, եւ այս ողջ եղբայրությունից հետո նաեւ կանայք. զթության երկյուղած քույրերը, բնությունը որպես վայրի ձի սանձելու եւ անապատում բանջարեղեն աճեցնելու վարժված, խեղճացած միսիոներուհիները, իրենց կլավիկորդներից բաժանված սլացիկ միանձնուհիները, նրբաձեռք, անմատչելի-սելեցիանուհիները- բոլորն էլ մերկ, մորթ մերկ, եւ նրանց մաշկով հնարավոր էր գուշակել դասակարգային ծագումը, սոցիալական դրությունը եւ զբաղմունքը. մաքսատան երկար սրահում կակտոյի հսկերի եւ գետային բադրե կոչվող ապխտած ձկան պարկերի միջեւ ձգված սրանց շարանները վախեցած ոչխարների անօգնական շրջապտույտ էին հիշեցնում. հովհարների թեւերը հովացնում էին նրանց մարմինները, իսկ նրանք ձեռքերով ծածկում էին ստինքները եւ ջանում թաքնվել մեկը մյուսի ետեւում, անցնելով քարե արձանի պես անշարժացած ծերունու մոտով, որը նայում էր ուղիղ իր դիմացը, իգուանի անթարթ աչքերով հայացքը սեւեռած մերկ կանանց անկանոն հեղեղին. նա բացարձակապես անկիրք էր նրանց նայում, բայց նայեց մինչեւ վերջ, մինչեւ վերջին կինը լքեց երկրի սահմանները. «Հեռացան բոլորը, իմ գեներալ»: Իսկ նա զգաց, որ հիշողության մեջ մնայել է մեկը. երբ կանայք անցնում էին կողքով, նա ակնթարթորեն, մի հայացքով, սարսափահար կույսերի հերթում առանձնացրեց մեկին, թեեւ սա ոչնչով չէր առանձնանում. ամրակազմ էր եւ լիքը, առողջ, մսոտ ազդրերով, մեծ կրծքով, ձեռքերն անճոռնի էին, մազերը այգու մկրատով խուզված, ատամները ցանցառ էին ու պինդ, ինչպես կացին, քիթը՝ կճատ, թաթերը՝ հարթ,- սովորական միանձնուհի էր, բոլորի նման, բայց նա իսկույն զգաց, որ մերկ կանանց այս ամբողջ թափառախմբից միայն այդ մեկն է ցանկալի. միայն այդ մեկը մոտից անցնելով, նույնիսկ վրան չնայելով՝ ետեւից թողեց անտառային գազանի մուգ-տագնապ ծնող հոտ. նրա շունչը կտրվեց, նա քիչ նկատելի շլեց աչքերը, որպեսզի տեսնի այդ կնոջը էլի մի անգամ եւ այդ պահին նավ բարձրացողների ցուցակը ստուգող սպան բղավեց. «Նասարենո Լետիսիա»,- եւ այդ կինը արձագանքեց տղամարդկային ձայնով. «Այստեղ եմ»: Ահա այսպես Լետիսիայի անունը «Այստեղ եմ»-ի հետ մինչեւ մահ-գերեզման մտավ նրա հոգու մեջ, ահա այսպես մտավ իր կյանքի մեջ այս

կինը, որի մասին նա հիշում էր մինչեւ այն պահը, քանի դեռ նրա ձանձրալի մտքերը չէին մոլորվել հիշողության քառսում. եւ արդեն հիշողությունը կորցնելիս նա հարություն տվեց կնոջ կերպարին՝ թղթի նեղ շերտերի վրա գրելով. «Իմ հոգու Լետիսիա Նասարենո տես թե ինչ պատահեց ինձ առանց քեզ»: Նա թաքցրեց այս թուղթը այն թաքստոցում, որտեղ մեղրն էր պահում եւ վերընթերցում էր գրածը, երբ համոզված էր լինում, որ ոչ ոք չկա, վերընթերցում ու կրկին թաքցնում էր, ոլորելով, խողովակ սարքած, եւ կրկին ապրում էր այն ակնթարթը, որը ապրել էր լուսավոր անձրեւի անմոռանալի մի օր, երբ իմացավ՝ Լետիսիա Նասարենոյին երկիր են վերադարձրել, թեեւ ինքը ոչ մեկին նման հրահանգ չէր տվել: Պարզապես, դեպի հորիզոնը հեռացող գորշ բեռնանավի ետեւից նայելով, նա շշնջացել էր. «Լետիսիա Նասարենո» եւ հետո կրկնել բարձրաձայն՝ «Լետիսիա Նասարենո...»,- որպեսզի չմոռանար այդ անունը, բայց այսքանն էլ բավական էր, որպեսզի պրեզիդենտական սնվտանդության ծառայությունը առեւանգեր Լետիսիային Ջամայկայի կուսանոցից եւ հայրենիք ետ բերեր: Բերանը խցոցով փակած եւ զսպաշապիկ հագցրած նրան խցկեցին փայտե բեռնարկղ. սոճու փայտից արկղ էր՝ անկյունները զմուռսով կնքված եւ սեւ կուպրե մակագրությամբ. «Ապակի է: Գլուխը: Չշրջել»: Այս բեռնարկղը պաշտոնական փաստաթուղթ ուներ, որ արտոնում էր առանց մաքսի երկիր ընդունել երկու հազար ութ հարյուր բյուրեղապակյա բաժակներ՝ պրեզիդենտական մառաններում պահվող շամպայնների համար. բեռնարկղը տեղավորել էին ածխանավի նավամբարում: Հենց այդտեղից էլ ուժեղ քնաբերով քնած Լետիսիային պալատ բերեցին եւ բոլորովին մերկ պառկեցրին պատվավոր հյուրերի ննջասենյակում, սյունագլխերով մահճակալին - այսպիսին էր նա հիշում Լետիսիային հետագայում մերկ պառկած ցերեկվա ժամը երեքի սպիտակավուն լույսի մեջ, մժղուկներից պաշտպանող շղարշի տակ: Նա քնած էր այնպես, ինչպես տարբեր ժամանակներում քնել էին այստեղ հարյուրավոր այլ կանայք, որոնց մատուցում էին առանց հրահանգի եւ որոնց նա տիրանում էր առանց արթնացնելու, քնի մեջ, լյումինալային լեթարգիայի մեջ ընկղմված, բայց եւ պարտության ամոթ էր ապրում եւ տանջվում դրա համար: Սակայն Լետիսիա Նասարենոյին

նա ձեռք չտվեց. նայում էր նրան մի տեսակ մանկական ապշանքով, եւ զարմանում, որ այդպես փոխվել էր նրա մարմինը. նա բոլորովին նման չէր մաքսատանը տեսած կնոջը: Նրա մատները գանգրացրին, սափրեցին որոշ տեղերը, կարմիր լաքով պատեցին ձեռքերի եւ ոտքերի եղունգները, ներկեցին շրթունքները, այտերին կարմրություն տվեցին, կոպերը սեւացրին, ողջ մաշկը օծեցին բուրումնավետ քսուքներով, նրանից փչող կոսմետիկայի անախորժ հոտերը խեղդում էին թաքնված, գայթակղիչ պատանային հոտը. «Ամեն ինչ փչացրել են անասունները այ քեզ բան...»: Այնպես էին նրան ձեւափոխել, որ կոսմետիկայի շերտի տակ նույնիսկ մերկությունը չէր երեւում...

Նա նայում, անվերջ նայում էր անզգա քնի մեջ սուզված կնոջը, եւ տեսնում, թե ինչպես է նա աստիճանաբար դուրս լողում քնի այդ ջրանցունդից, ինչպես է արթնանում, ինչպես է տեսնում իրեն. «Նա իմ խելագարության Լեոխիա Նասարենոն է մայր»: Իսկ կինը քարացավ սարսափից, շղարշի թեթեւ մշուշի միջից տեսնելով իրեն նայող, քարի պես ամուր ծերունուն, համրացավ իրեն անհասկանալի անհուն լռությունից. նա երեւակայել չէր կարող, որ չնայած աներեւակայելի տարիքին ու անսահման իշխանությանը, այդ ծերունին ավելի էր վախեցել, քան ինքը: Պրեսիդենտին համակած մենության, ընկճվածության ու անզորության զգացումներն ավելի սուր էին, քան այն օրը, երբ առաջին անգամ փորձեց կին վայելել: Հիմա նա ավելի էր շփոթվել, քան այն օրը, երբ կնոջիչերին գետում տեսավ զինվորների լողացող բոլին: Նա մի կարգին չտեսավ էլ նրան, միայն լսում էր, թե ինչպես է զամբիկի պես փնչում ու մնչում գլուխը ջրից հանելիս, եւ այդ փնչոց-մնչոցներով պատկերացրեց նրա մարմնի հզորությունն ու ընդգրկելիությունը: Մթության մեջ նա լսում էր նրա միայնակ, մութ ծիծաղը եւ զգում, թե ինչպես է ցնծում՝ ջուրը վայելող նրա մարմինը. եւ կանգնել էր սարսափից կաթվածահար, որովհետեւ դեռ անտրտունջ էր, թեեւ երրորդ պատերազմն էր մղում եւ Հրիստանու լիյտենանտի կոչում ուներ: Սակայն, ի վերջո, ընդմիշտ անտրտունջ մնալու սարսափը հաղթեց այլ վախերին եւ նա գետը նետվեց ատանց հանվելու, ինչով կար՝ գոտիներով, գուլպաներով, ուսապարկով, մաշեռով ու հրացանով: Այնպես աղմուկ բարձրացրեց, այնպես

թպրտաց ջրերում՝ խճճվելով հանդերձի եւ իր թաքուն վախերի մեջ, որ կինը, սկզբում կարծեց, թե դա հեծյալ է անցնում գետը, բայց իսկույն էլ տեսավ՝ եղածը մի անփորձ տղամարդ է եւ գթասիրությամբ օգնության ձեռք մեկնեց խեղճին, ընկճվածության խավարի միջով տարավ նրան, քանզի նա սեւ ջրերից զատ ուրիշ ոչինչ չէր տեսնում: Նա մայրական ձայնով ասաց նրան խավարում. «Բռնիր ամուր ուսերիցս, թե չէ հոսանքի բերանը կընկնես: Եվ մի պպզիր, ծնկի եկ ու շնչիր հանգիստ, թե չէ ջուր կուլ կտաս»: Եվ նա արեց այն ամենը, ինչ հրահանգեց կինը: Երեխայի նման լսելով ու ինքն իրեն մտածելով. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո ինչպես են կանայք կարողանում ակնթարթորեն որոշել իրենց անելիքը ինչպես են կարողանում գրողը տանի տղամարդ լինել»: Այսպես մտածում էր, իսկ կինը նրա վրայից հանում շպրտում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ է հետեւակին պատերազմի ժամանակ, բայց վնասակար՝ հոսանքի, ջրի դեմ պայքարելիս. ջուրը մինչեւ վիզն էր հասնում, նա մեռնում էր սարսափից, եւ կմեռներ, եթե չլիներ կնոջ կուլպե օճառի հոտով մարմինը: Իսկ կինը արձակելով նրա բոլոր գոտիներն ու կոճակները հանկարծ կծկվեց սոսկումից, երբ ձեռքով դիպավ ինչպես վիքված դոդոշ, ջրում լողացող վիթխարի ինչ-որ բանի: Կինը վախեցած թողեց նրան, հեռացավ մի փոքր ու մռթմռթաց. «Գնա մայրիկիդ մոտ, թող նս քեզ փոխի մեկ ուրիշի հետ, թե չէ եղած-չեղածովդ բանի պետք չես»: Եվ, ահա, հիմա նույն սարսափը, միայն ավելի ուժեղ, գամեց նրան Լետիսիա Նասարենոյի մերկ մարմնի դիմաց եւ նա զգաց, որ չի համարձակվի նետվել նրա խորհրդավոր ջրերի գիրկը, քանի դեռ ինքը չէ գթասիրաբար օգնության ձեռք մեկնելու: Այդ ողորմածության սպասման մեջ նա սավանով ծածկեց կնոջը, նրա համար լարեց պատեֆոնը, քանի դեռ չէր դրել ձայնապնակը՝ Դելգադինայի դժբախտ սիրո մասին. սրան վիճակվել էր մեղսալի սեր իր իսկ հոր կողմից. նա կարգադրեց Լետիսիայի ննջասենյակի սափորներում շորե ծաղիկներ դնել, որովհետեւ կենդանի ծաղիկները թոշնում էին, հենց կինը ձեռք էր տալիս, նա պատրաստ էր կատարել կնոջ ուզածդ քմահաճույքը, բայց միեւնույն ժամանակ նա պիտի մնար փակ սենյակում մերկ, մինչեւ հասկանար, որ այլ ելք չունի, բացի հրաշալի ապահովվածությամբ ծեր մարդու սիրուհին դառնալուց:

Սարսափից սթափվելով Լեոնիսան այս բանը հասկացավ բավականին արագ եւ այնքան լավ, որ հանկարծ, չդիմելով հարգալից դարձվածքներին, սկսեց հրամայել. «Գեներալ, բաց արեք պատուհանը, շոգում եմ»: Իսկ երբ կատարվեց հրամանը, նա իսկույն ասաց. «Փակեք: Լուսնի շողերն ուղիղ աչքերիս մեջ են ընկնում»: Պրեզիդենտը հլու-հնազանդ եւ այս հրամանը կատարեց, եւ մնացյալները, կատարեց այնպես, ասես դրանք սիրո քմահաճույքներ էին: Նա ավելի ու ավելի լսող էր դառնում եւ միեւնույն ժամանակ ավելի ինքնավստահ, մինչեւ, վերջապես, համարձակվեց եւ լուսավոր անձրեւի մի օր մտավ նրա շղարշի տակ իր ողջ հագուստ-կոպուստով, պառկեց կողքին ու անշարժացավ, որ չարթնացնի նրան: Շատ գիշերներ նա անցկացրեց այդպես, նրա կողքին, բայց մենության մեջ, ներշնչելով Լեոնիսայի մարմնի հմայելուկային բույրերը, վայրի գազանի նրա հոտերը, լսելով շնչառությունը, որն աստիճանաբար ավելի ու ավելի տաք էր դառնում: Մի անգամ Լեոնիսան արթնացավ վախեցած ու ճչաց. «Դուրս եկեք, գեներալ»: Նա անխոս դուրս եկավ շղարշի տակից, բայց հենց Լեոնիսան քնեց, կրկին պառկեց կողքին: Այդպես նա տիրացավ Լեոնիսային՝ առանց դիպչելու նրան բանտարկության առաջին տարվա ընթացքում, մինչեւ կինը վարժվեց՝ արթնանալ նրա կողքին, թեեւ դեռ չէր հասկանում, թե ուր եւ ինչին են ուղղված այդ անհասկանալի ծերունու հոգու չօգտագործված հոսանքները. հրաժարվել էր իշխանության վայելքներից, աշխարհի հաճույքներից հանուն ինչի՞, որ միայն զննե՞ր իր մարմինը: Բայց լուսավոր անձրեւի մի օր էլ եղավ, երբ անհասկանալի ծերունին վճռեց տիրանալ քնած Լեոնիսային եւ ինչպես ժամանակին գետն ընկավ, որտեղ լողում էր գինվորների բազը, ճիշտ այդպես էլ նրա վրա ընկավ, ինչպես կար՝ սրակապով, սրով, համազգեստի շալվարի գրպանում բանալիների փնջով, հեծելակի սապոգներով՝ ձախի վրա ոսկյա խթան: Նա դրսի գնաց եւ Լեոնիսան արթնացավ մղձավանջի մեջ, փորձեց ցած գլորել լծասարքը վրան այդ պառավ ձիուն, բայց ծերունին այնքան վճռական էր, որ կինը որոշեց ժամանակ չահել խաբեությամբ. «Հանեք լծասարքը,- ասաց նա,- թե չէ կուրծքս կպատառոտեք ձեր ճարմանդներով»: Իսկ երբ ծերունին հանեց սրակապը, Լեոնիսան պահանջեց. «Հանեք խթանը, գեներալ, թե չէ դրա աստղիկը

ճանկռում է կոճերս: Եվ գրպանից հանեք բանալիները, ցավեցնում են ազդրս»: Նա կատարեց Լետիսիայի բոլոր պահանջները, թեեւ էլի երեք ամիս պահանջվեց մինչեւ նա համաձայնեց հանել սրի դտիները;- «Դրանք ինձ խեղդում են, գեներալ»- եւ էլի մի ամբողջ ամիս պահանջվեց, որպեսզի համաձայներ բաճկոնակը հանել. «Այդ կոճակները հոգիս են ճանկռտում, գեներալ»: Դա մի դժվար, ձգձգվող պայքար էր, որի ավարտը կինը չանում էր հնարավորին չափ հեռացնել, չգրգռելով նրան, պայքար էր, որի ընթացքում նա զիջում էր՝ ցանկանալով հաճոյանալ կնոջը, այնպես որ ոչ Լետիսիան եւ ոչ էլ ծերունին գլխի էլ չընկան, թե ինչպես եղավ այն, ինչը պատահեց Լետիսիայի առեւանգման երրորդ տարվա սկզբին: Պարզապես մի գիշեր ծերունու տաք, փափուկ, ճակատագրի գծերից զուրկ ափերը քսվեցին կույսի կանացի էության թաքուն ինչ-ինչ լարերի, եւ նա արթնացավ իր կրքից ապշած, նույնիսկ չփորձեց ազատվել իրեն սեղմող վայրենի դաղանից, միայն աղերսալի բացականչեց. «Հանիր սապոգները, թե չէ կմուրտատես իմ հոլանդական սավանները»: Եվ շարունակեց, երբ ծերունին մի կերպ հանեց սապոգները. «Հանիր շալվարդ, հանիր կալանդդ, հանիր ամեն ինչդ, կյանքս, թե չէ ես չեմ զգում քեզ»: Եվ նա հանկարծ, տեսավ, որ կանգնած է այն տեսքով, ինչպես միայն մայրն է տեսել իրեն կուսանոցի դարպասների մոտ, լապտերներով լուսավորված խորդենու տխուր լուսարձակման տակ, երբ ինքը ծնվեց, եւ նա իրեն ազատագրված զգաց հին, հին վախից, հետո իրեն մարտական բիզոն զգաց եւ մի հարվածով կործանելով ամեն ինչ, բերանքսիվայր ընկավ լռության անդունդը, որտեղ լսվում էր միայն Լետիսիա Նասարենոյի ատամների կրճտոցը. այդպես ճթճթում են միայն նավակայմերը. «Նասարենո Լետիսիա...» - «Այստեղ եմ» - «Եվ նա երկու ձեռքով կառչեց իմ մազերից որպեսզի մենակ չմեռնի անհատակ այդ ջրանցունդում որտեղ մեռնում էի եւ ես...»: Բայց այսուհանդերձ նա այդ ջրանցունդում նրան մենակ թողեց, մոռացավ նրան խավարում եւ ինքն էլ մենակ էր, փնտրում էր ինքն իրեն իր իսկ արցունքների աղի ջրերում, խճճվելով ցլային իր թուքի թելերի մեջ, ցնցված իր իսկ ցնցումից. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո ինչպես կարելի էր այդքան երկար ապրել ու չճաշակել այդ քաղցր տառապանքը»: Նա լաց ե-

դավ՝ ցնցված իր ներսի տառապալից քաղցը տվայտանքներից, ուժասպառվելով չարտահայտած քնքշանքից, որ համակել էր նրան մինչեւ ալիքները, եւ չհասկացավ, թե ինչ ջղաձգում է բռնել ողջ մարմինը, չհասկացավ, թե ինչու է իրեն մորթված գազան զգում, չհասկացավ, թե ինչ արարած է մուրտառում այս անկողնու հոլանդական սավանները, այս շղարշի տակ, չհասկացավ, թե ինչ պատահեց լուսավոր անձրեւի այս օրվա հետ, բյուրեղապակյա այս օդի հետ, ուր հանկարծ գարշահոտ ընկավ,- դուք չհասկացաք, իմ դիներալ, որ պարզապես ձեր տակն արեցիք...

Երեկոյան մենք պալատից դուրս հանեցինք կովերի նեխած լեշերը, հնարավորին չափ կարգի բերեցինք աներեւակայելի խառնափնթորությունը, սակայն մեզ ոչ մի կերպ չհաջողվեց պատշաճ տեսքի գցել հայտնաբերված դիակը, որպեսզի գոնե փոքր-ինչ համապատասխաներ մեր տիրակալի առասպելական կերպարին. մենք մաքրեցինք նրա մարմինը ձկան քերիչներով, վրայից հեռացրինք փտակալած մամուռը՝ հար ու նման այն մամուռին, որ առաջանում է ծովը սուզված նավերի վրա, մենք տրորեցինք նրան կուպրե քսուքով եւ լողացրինք աղե լուծույթով, որ ջնջենք դիաթները, խծուծի օսլա քսեցինք եւ պարաֆին, որոնց շնորհիվ լցվեցին հանգուցյալի դեմքին անգղերի փորած փոսիկները, կենդանության գույն հաղորդեցինք նրան՝ այտերը կարմրեցնելով, շրթները ներկելով, դատարկ ակնախոռոչներում ապակյա աչքեր դրեցինք, բայց չկարողացանք դեմքին տիրական արտահայտություն տալ, ինչն անհրաժեշտ էր մարմինը հասարակությանը ներկայացնելուց առաջ: Իսկ այս ընթացքում պետական խորհրդի նիստերի դահլիճում կոչեր էին հնչում հանուն համընդհանուր միասնության եւ ընդդեմ դարավոր բռնակալության ժառանգության, կոչեր՝ սիրահոժար բաժանել հանգուցյալի ճանկերից դուրս պրծածը, այն ամենը, ինչը դեռ երեկ հրեշավոր ծերի անբաժանելի ավարն էր: Թեեւ իրողությունը ցանկանում էին առայժմ թաքուն պահել, սակայն նրա մահվան լուրը տարածվում էր մոգական արագությամբ եւ երկիր վերադարձան բոլորը՝ լիբերալներն ու պահպանողականները, որոնք երկարատեւ վտարանդիության խարույկի շուրջը նստոտած այնպես էին հաշտվել միմյանց հետ, որ մոռացել էին փոխա-

դարձ հավակնությունները. գեներալները, որոնք մոռացել էին, թե ինչ բան է իշխանություն կոչված բանը. քաղաքացիական վերջին երեք նախարարները, առաջնորդ արքեպիսկոպոսը,- բոլոր նրանք, ում ծեր բռնակալը չէր կամենում տեսնել ընկուզենու փայտից երկար սեղանի շուրջը նստած: Հիմա նրանք փորձում էին համաձայնության գալ թե՝ ինչպես ժողովրդին հայտնեն պրեզիդենտի մահը, որ կանխարգելեն հուզումները, կանխեն ամբոխների տարերային ցույցերը: Ի վերջո, վճռվեց երկու հաղորդագրություն հրապարակել. համար մեկ հաղորդագրությունը հայտարարում էր, որ պրեզիդենտը թեթեւակի հիվանդ է եւ այդ պատճառով հեռաձգում է իր մասնակցությունը պաշտոնական, հասարակական արարողություններին, ինչպես նաեւ նշանակված տեսակցություններն է հետաձգում. համար երկրորդ հաղորդագրության մեջ ասված էր, որ նորին գերազանցությունը տարիքային բնական թուլության պատճառով չի կարող դուրս գալ իր անձնական սենյակից: Այս հաղորդագրություններից հետո, առանց որեւէ լրացուցիչ հայտարարության, օգոստոսյան մի շոգ երեքշաբթի, երբ լուսաբացի վառ բոցը երկինքն էր գրավում, տաճարի գանգերի զողանջն ազդարարեց տիրակալի մահը, թեեւ ոչ ոք չէր կարող երաշխավորել անվերապահորեն, որ, իրոք, մեռել է, եւ կամ՞ հենց ինքն է մեռել: Ինչեւէ, եղածը եղել էր, բայց մենք բոլորովին զինաթափվեցինք այդ մահով, մեր ոտուձեռը կապեց զարշահոտ այդ դիակը, քանի որ չգիտեինք ու չէինք պատկերացնում, թե ով է փոխարինելու նրան, առանց որի աշխարհը փուչ էր թվում. ծերունական եսասիրությամբ տարված՝ նա չէ՞ որ ժառանգորդ չէր նշանակել, լսել չէր ուզում նման խոսակցություններ, անզիջում համառությամբ հրաժարվում էր քննարկել՝ ով է իրենից հետո լինելու հարցը, ջնջում էր այդ թեմայով բոլոր զրույցները, հատկապես այն օրից, երբ կառավարությունը տեղափոխվեց ապակուց ու բետոնից կառուցված նոր շենք, եւ նա մնաց իր իշխանության ամայի կացարանում բոլորովին մենակ: Ինչպես քնի մեջ՝ նա թափառում էր այնտեղ, շրջում կովերի կմախքների դաշտում, չէր համարձակվում որեւէ մեկին հրաման տալ, բայի կույրերից, բորոտներից ու կաթվածահարներից, որոնք վարդաթփերի տակ մեռնում էին ոչ թե հիվանդությունից, այլ ծերությունից: Բայց ամեն անգամ, երբ

նրան կրկին խնդրում էին մտածել ժառանգորդի մասին, Հայրենիքի ապագա բախտի մասին, նա իսկույն ձեռք էր բերում խուսափելու ամրություն, անորոշության որոշակիություն եւ նաեւ հեռատեսություն էր ցուցաբերում,- «Մահվան նման մութ գործ է հոգս քաշելը, թե ինչ է պատահելու աշխարհին ինձանից հետո: Ձեզ ի՞նչ է պետք: Ինչո՞ւ եք անհանգստացել: Հենց ես մեռնեմ, կհավաքվեն քաղաքագետներն ու իրար մեջ բաժան-բաժան կանեն գրողի տարած այս երկիրը, ինչպես բաժանեցին գրինգոներին վոնդելուց հետո: Այ, կտեսնեք, ալան-թալանին վազ կտան տերտերները, հարուստները, գրինգոները եւ քարշ կտան ամեն ինչ, իսկ ազքատներին էլի ոչինչ չի հասնի եւ նրանք ավելի կաղքատանան: Դրանց բախտն է այդպիսին. եթե կղկղանքը որեւէ արժեք ունենար, աղքատներն առանց քամակի կծնվեին: Այդպես էլ կլինի, այ, կտեսնեք»: Իսկ հետո նա մեջ բերեց իր փառավոր ժամանակներում ապրող մեկի խոսքը, ծաղրեց ինքն իրեն, խնդալով ասաց, որ իր մահից հետո իմաստ չունի շտապել ու չարչարվել դիակը Երուսաղեմ հասցնելու, տիրոջ կողքին թաղելու համար, քանզի ինքը մեռած է մնալու ընդամենը երեք օր,- «Եվ, առհասարակ, դատարկ բաներ են այս ամենը: Ինչը ձեզ անհավանական է թվում կհաստատի ժամանակը: Ես հավերժ եմ»: Եվ, իրոք, այդ օրերին ոչ ոք չէր կասկածում այն ամենի իսկությանը, ինչը նրա պատմությունն էր համարվում, ինչը կապված էր նրա անվան հետ, ինչը ներկայացնում էր նրան: Հնարավոր չէր որեւէ բան ապացուցել, ինչպես եւ հերքելն էր անհնար: Մենք չէ՞ որ նույնիսկ նրա մարմինը չէինք կարողանում ճանաչել: Մենք չգիտեինք մեր երկրի մի այլ պատմություն, բացի այն միակից, որ իրենն էր, մենք չունեինք այլ հայրենիք, բացի նրանից, որ արարել էր ինքը՝ իր տեսքով ու նմանողությամբ, փոխելով երկրի տարածական չափումները ու ստիպելով ժամանակին ընթանալ իր բացարձակ իշխանության կամքը: Այդ պատմության պատկերները, այդ հայրենիքի կերպարը ծնվել էին մշուշոտ հեռուներում, նրա հիշողության ակունքներում, մինչ նա աննպատակ շրջում էր պալատում, որտեղ մշտապես բույն էր դրել ստորությունը եւ ոչ մի անգամ չէր ծիկրակել երջանկությունը. մինչ հավերին էր կերակրում ճոճի մոտ եգիպտացորենի հատիկներ շաղ տալով եւ սպասուհու հոգին հանում անհեթեթ

հրամաններով. սառույցով օշարակ էր պահանջում, թեեւ օշարակով բաժակը հենց նոր էր ստացել եւ ձեռք էլ չէր տվել, պահանջում էր աթոռը տանել այնտեղ, թեեւ քիչ առաջ էր հրամայել այնտեղից այստեղ բերել, մանր-մունր այս պահանջները խղճուկ այն ցախն ու ցուխն էին, որ նա զգում էր իր իշխանասիրության ագահ, արդեն սեւացող խանձողատներով խարույկը. նա իշխում էր անբանությամբ, քիթը վեր քաշելով սեյբոյի սաղարթի տակ, նինջի մեջ հսկելով հեռավոր իր մանկության մշուշոտ տեսիլները, բայց երբ որեւէ տեսիլք պարզվում էր, դառնում տեսանելի մի մանրամասը վիթխարի, անընդգրկելի մանկական այն կոնստրուկտորի, ինչպիսին էր մեր հայրենիքը նրանից առաջ, արթնանում էր, ետ նայելով անվերադարձ անցյալի կողմը, ետ նայելով անծայրածիր, ցնորական երկրին, արեւադարձային մացառուտների ու անանցանելի ճահիճների, նախաստեղծ ու անհատակ անդունդների թագավորությանը, որտեղ տղամարդիկ այնքան էին խիզախ, որ կայմանների որսի էին գնում դատարկ ձեռքերով, մի ցից էին սակ օգտագործում եւ այդ ցիցն այնպես էին կայմանի երախը խրում, որ չփակվեր այլեւս,- «Այ, այսպես»,- բացատրում էր նա ցուցամատը բերանը իցկելով եւ քիմքը սեղմելով: Նա պատմեց, թե ինչպես մի անգամ, ավագ ուրբաթ օրը քամու աղմուկ լսեց եւ քամու տարօրինակ, կեղանքի հոտը առավ եւ տեսավ՝ քամի չէր, այլ մորեխամպ, որ ծածկել էր ցերեկվա երկինքը, ուտում էր ճանապարհին հանդիպած ամեն բան, ետեւից թողնելով տկլոր, մինչեւ վերջին ցողունը սափրված աշխարհ ու պատառոտված երկնքի ցանցառ լույս. երկիրն արարման նախօրեի տեսքն ուներ մորեխամպից հետո. նա լավ էր հիշում այդ աղետը, հիշում էր գլխատված, փայտե ծածկի տակ տոտիկներից կախված աքաղաղների երկար շարանը, հիշում էր, թե ինչպես էր գետնի վրայով արյուն հոսում կաթիլ առ կաթիլ, իսկ պատահարը մեծ ու հինավուրց մի գյուղում էր, որտեղ հենց նոր մի կին էր մեռել. նա մասնակցեց հուղարկավորմանը. ոտաբոբիկ, մոր ձեռքը բռնած քայլում էր պատգարակի ետեւից, որով տանում էին ցնցոտիներ հագած դիակը, իսկ մորեխամպը քամու նման դեռ սուրում էր եւ մեռած մարմնի վրա թափում բյուրավոր կեղանքներ,- «Ահա թե ինչպիսին էր մեր երկիրն այն ժամանակներում: Մարդիկ հարազատներին թաղում էին նույնիսկ ա-

ռանց դագաղի, որովհետեւ զուրկ էին ամեն ինչից»: Նրան վիճակվել էր տեսնել, թե ինչպես մեկը փորձեց կախվել այն պարանով, որն արդեն օգտագործել էր մի այլ ինքնասպան: Պարանը ճոճվում էր գյուղահրապարակի մի ծառից եւ երբ այդ մարդը կախվեց, պարանը կտրվեց, որովհետեւ փտել էր, եւ դժբախտը ջղաձգումների մեջ ընկավ եկեղեցի գնացող, սարսափից համրացած կանանց աչքերի առաջ: Բայց նա չմեռավ: Մահակների հարվածներով նրան ստիպեցին ոտքի ելնել, չհետաքրքրվեցին էլ, թե ով է եւ ինչու էր ուզել ինքնասպան լինել: Օտար էր ու վերջ, իսկ օտար էին համարվում բոլոր նրանք, ովքեր անծանոթ էին տեղական եկեղեցու ծխականներին: Եվ ահա, նրան ոտքի հանեցին մահակներով ու ոտքերին չինական կոճեր հագցնելով՝ նետեցին այրող արեւի տակ ու քամու բերանը՝ բախտակից ընկերների հետ,- «Ահա թե ինչպիսին էր կյանքը գոդոների ժամանակ, երբ աստվածն ավելի հզոր էր, քան կառավարությունը»: Իշխանության գլուխ բարձրանալով՝ նա հրամայեց սղոցել բոլոր գյուղահրապարակների բոլոր ծառերը, որպեսզի կիրակի օրերին մարդկանց չվախեցնեն կախվածները, արգելեց չինական կոճերով հրապարակային պատիժները, արգելեց առանց դագաղի հուղարկավորումները, արգելեց այն ամենը, ինչը հիշեցնում էր իր թագավորությանը նախորդող ժամանակները: Նա երկաթուղագիծ անցկացրեց լեռներում, որպեսզի մունդռիկ ջորիների պատճառով չկրկնվեն աղետները, ինչպես այն անգամ, երբ դաշնամուրներով բեռնված, սրճի պլանտացիաների շրջանը մեկնող մի ամբողջ քարավան գահավիժեց,- երեսուն ջորի պետք է երեսուն դաշնամուր հասցնեին պլանտատորների կալվածքները, որպեսզի հնարավոր լիներ այնտեղ դիմակահանդեսպարահանդեսներ կազմակերպել: Այդ աղետի շուրջը շատ խոսեցին եւ գրեցին նույնիսկ արտասահմանում, թեեւ ճշտորեն միայն ինքը գիտեր, թե ինչպես պատահեց, քանի որ լուսամուտից պատուհակնորեն դուրս էր նայել այն պահին, երբ քարավանը եզրափակող ջորին գայթեց ոսոցի քիվի վրա եւ իր հետեւից տարավ մնացած բոլորին: Միայն ինքը տեսավ, միայն ինքը լսեց ընկնող ջորիների սարսափագդու բառաչները եւ դաշնամուրների որոտանման ակորդները, որ ուղեկցեցին անդունդի հատակը, առեղծվածային, անհասկանալի այդ երկրի տարտարոսն ընկնող քարավա-

նին, իսկ երկիրն այդ ընդարձակ ու անհասկանալի էր այն աստիճան, որ անհնար էր նույնիսկ որոշել՝ գիշե՞ր է թե ցերեկ, այնտեղ, ստորոտում, ուր սպիտակ մշուշները քուլա-քուլա կանգնած էին կիրճերի գլխին, որոնց զարկվելով փշուր-փշուր եղան Ավստրիայից ներմուծված երեսուն դաշնամուրները: Նրա աչքերի առաջ հայտնվեց այդ աղետի տեսիլքը, հայտնվեցին ուրիշ շատ այլ տեսիլներ, որոնց վերաբերյալ նա վստահորեն չէր կարող ասել՝ ի՞ր սեփական հուշերն են, ի՞ր կյանքի պատկերները, թե՞ լսել էր ջերմախտի զառանցանքների մեջ: Բայց գուցե այս ամենը տեսել էր ինչ-որ ժամանակ ուղեւորություններին նվիրված գրքերո՞ւմ, որ ժամերով թերթում էր ու նայում ներդիր նկարներին, վայելելով դրանք քաղաքական ու հասարակական փոթորիկների օրերին: «Այսինքն հիմա ի՞նչ նշանակություն ունի՝ ճշմարտություն է, թե հորինվածք: Ի՞նչ տարբերություն: Ամեն ինչ, ամեն անհեթեթություն ժամանակի ընթացքում ճշմարտություն է դառնում»,- ասաց նա գլխի ընկնելով, որ իր իսկական մանկությունը բոլորովին էլ հեռվում չէ, բոլորովին էլ հիշողության երերուն ճահճում չէ. հիշողությունները, մանավանդ, աթարի ծխի հետ անորսալի կապերով կապված, մեկ հայտնվում էին, մեկ չքվում անհետ: Նա իր մանկությունն ապրել էր այստեղ, իր օրինական միակ կնոջ՝ Լետիսիա Նասարեենոյի կողքին, որն ամեն օր երկուսից մինչեւ չորսը նստեցնում էր իրեն ծաղկած պատատուկներով ծածկի տակ դրված դպրոցական նստարանին եւ գրել կարդալ սովորեցնում: Լետիսիայի սրածը խիզախություն էր, նա այդ պարապմունքներում ներդնում էր կուսանոցի միանձնուհու իր ողջ համառությունը, իսկ պրեզիդենտը պատասխանում էր ծերունական ապշեցուցիչ համբերատարությամբ, ժողովելով հրեշավոր իր կամքը, ուսմանը տրվելով մինչեւ վերջ: Մոռանալով աշխարհում ամեն ինչ, նա վանկարկում էր երգեցիկ. «Պա-տու-հա-նի տակ է սո-ճին ցո-ղը վը-բան». ինքնամոռացման մեջ նա չէր լսում իր ձայնը եւ իրեն ոչ ոք չէր լսում հանգույցյալ մոր թռչնակների անվերջանալի ճռվողյունի տակ, իսկ նա վանկարկում էր, հա վանկարկում. «Հնդկացին քը-սու-քը տուփն է դը-նում... Հայ-ըի-կը ծխա-խուտ է լը-նում ծխա-մոր-ճը... Սե-սիլ-յան վա-ճա-ռում է պա-նիր, սա-լաթ, ճակը-դեղ, կաթնա-սեր, սար-դի-նա, շա-քար... Սեսիլյան վաճառում

է ամեն բան»,- ծիծաղեց նա, ճռիկների աղմուկի տակ կրկնելով կուսանոցի միանձնուհի-դաստիարակչուհու համաչափ ձայնով ընթերցված տեքստը եւ, վերջիվերջո, շրջապատը լցվում էր այդ ձայնով, աշխարհն էր լցվում այդ ձայնով եւ վշտի անծայրածիր այդ երկրում չէր մնում այլեւս ճշմարտություն, բացառությամբ գրավոր ճշմարտությունների, իրական էին միայն երկնքի լուսինը, ոչխարն ու բանանը, գոն Վիկտորի եզը, Օթիլիայի գեղեցիկ շրջազգեստը... Ընթերցանության համատեղ դասերը կրկնվում էին ուղածդ պահին, ուղածդ շրջապատում, վանկարկվող բառերը մարդկանց հետապնդում էին ամենուր, ինչպես նրա դիմանկարները: Հոլանդիայի ֆինանսների նախարարը պաշտոնական այցի ժամանակ կորցրեց մտքի թելը, որովհետեւ մռայլ ծերը ատլասե ձեռնոց հագած՝ ձեռքի տիրական շարժումով ընդհատեց նրան եւ առաջարկեց արտասանել իր հետ. «Ես սի-րում եմ մայ-րի-կին... Իս-մայ-ել կրդ-զի է վրնտ-ում... Տի-կի-նը լո-լիկ է ու-տում...»: Ըստ որում, նա ամանակաչափի նման մատով խոսքը բաժան-բաժան էր անում մետրական դադարների, մատն այս ու այն կողմ շարժում, ջանադրաբար ու հստակ կրկնում երեքշաբթի օրը հանձնարարված ընթերցանության դասը. Հոլանդիայի ներկայացրած պարտամուրհակին ի պատասխան նա ասաց,- «Այդ մասին կխոսենք մի այլ անգամ, պարոն նախարար»: Նա ապշեցրեց կույրերին, կաթվածահարներին ու բորոտներին, որոնք մի վաղ առավոտ արթնանալով վարդաթփերի տակ, տեսան եւ լսեցին իրենց խաչով օրհնող եւ ինչպես պատարագին երգող մռայլ ծերունուն. «Տիրակալ եմ ես, օրենք հարգող եմ ես... Անապատում օգնություն է կանչում մարգարեն... Փարոսը մի շատ բարձր աշտարակ է, որի լույսը գիշերով նավերին ուղղություն է ցույց տալիս»: Նա յուրաքանչյուր նախադասություն երգեց երեք անգամ, արբելով ուշ եկած երջանկությամբ, որ պարգեւել էր Լետիսիա Նասարենոն: Լետիսիա Նասարենոն ինքը ժամանակն էր,- «Իմ կյանքի Լետիսիա Նասարենո»: Ծովային խեցգետինների հոտով ներծծված թանձր, հեղձուկ, միաժամանակ կրակ օդով սիեստայի ժամերին ուրիշ այլ ցանկություն չէր ծնվում, բացի քրտինքից թրջված խսիրի վրա, գերեվարված չղջիկի թեւերի նման էլեկտրական հովհարի թեւերի զովի տակ մերկ Լետիսիայի կողքին տկլորված պառկելու ցանկու-

թյունից,- «Եվ չկար այլ լույս, բացի քո աղդրերի լուսարձակումից, Լեոխիա, չկար ոչինչ, բացի քո տոտեմական կուռք ստինքներից, քո հարթ թաթերից, բուժիչ փեգենայի ճյուղի բույրից, հեռավոր այն Անտիգուա կղզու հունվարյան շոգից, որտեղ մի օր, մենության մի վաղ առավոտ դու լույս աշխարհ եկար ու շնչեցիր նեխած ճահիճների հեղձուկ հոտը»: Նրանք փակվում էին պատվավոր հյուրերի ննջասենյակում եւ ոչ ոք չէր համարձակվում խանգարել, ոչ ոք սիրտ չէր անում մոտենալ ննջասենյակի դռանը ավելի քան հինգ մետրի վրա,- «Որովհետեւ ես շատ խիստ եմ զբաղված, ես գրել ու կարդալ եմ սովորում»: Չհամարձակվեցին անհանգստացնել նույնիսկ այնպիսի նորությամբ, ինչպիսին գյուղական բնակչությանը բառացիորեն կոտորող դեղին տենդախտի բոթն էր. նա սովորում էր, նրա սրտի զարկերը առաջ էին ընկնում ամանակաչափի զարկերից, արագանում էին Լեոխիայից արձակվող սուր, գազանային հոտերից. նա սովորում էր ու վանկարկում. «Լի-լի-պու-տը պար է գա-լիս մի ոտ-քի վը-րա: Զո-րին գը-նում է ջը-բաղաց: Օ-թիլ-յան լը-վա-նում է թաչ-կի-նա-կը: Թաչ-կինակը գրվում է «կ»-ով, ինչպես կինը»: Իսկ Լեոխիան այս ընթացքում սավաններն էր լվանում, հավաքելով սիրտ վայելքներից աղտոտվածները, նստեցնում էր նրան տաք տաշտակում, փրփրեցնում գլխին բուրումնավետ օճառը եւ սրբորում ճիլոպով, պարուրում բուժիչ տերեւների գոլորշիներ արձակող ջրով եւ նրա հետ վանկարկում. «Խ» տառը գրվում է այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ խաղող, խորհուրդ եւ խոզ բառերը»: Հետո նրա ոտքերի ժանգոտած հոդախաղերին կակաոյի հատիկների յուղ էր քսում, օծում էր նաեւ մշտական կալանդ կրելուց գրգռված մաշկը, ինչպես մանկանը, տալկի փոշի ցանում նրա թորշոմած քամակին, միաժամանակ մայրաբար մեղմ ապտակներ հասցնում. «Ահա՛ քեզ հոլանդական նախարա-րի գլխին օյին խաղալու համար: Ահա՛ քեզ»: Հետագայում նա փորձեց համոզել քավելու մեղքերը, երկիր վերադառնալու թույլտվություն տալ խեղճ միաբաններին, չէ՞ որ ոչ ոք այլեւս չէր զբաղվում ապաստարաններով, հիվանդանոցներով եւ աստվածահաճո այլ ձեռնարկություններով: Այս հարցում, սակայն, նա դեմ առավ մոայլ ծերունու անկոտրում հիշաչարությանը,- «Ոչ մի դեպքում»: Չկար մի այնպիսի ուժ, որ կարողանար հարկադրել

նրան լույս աշխարհի առաջ փոխել իր արձակած նախկին որոշումը, սակայն Լեոնիսիան շարունակեց աղերսել սիրո վայելքների ասթմատիկ շնչարգելության ժամանակ. «Մի բան եմ խնդրում միայն, կյանքս, միայն մի բան: Թույլ տուր վերադառնան խեղճ միսիոներները, նրանք չէ՞ որ ապրում էին մեկուսի եւ երբեք չէին խառնվում քո գործերին»: Բայց նա, սովորականի պես փնչացնելով շտապողականությունից ու կրքից, պատասխանեց. «Ոչ մի դեպքում, սիրելիս, ես ավելի շուտ կմեռնեմ, քան թույլ կտամ վերադառնալ փեշակիր այդ հրոսակախմբին, դրանք ջորիների փոխարեն թամբում էին կարմրամորթներին եւ իրենց անպետք ուլունքները փոխանակում ոսկյա նարիդերաների* ու արակադանների** հետ. ոչ, ոչ մի դեպքում»: Այս մերժմանն ի պատասխան, Լեոնիսիան չչտապեց զիջել նրա տղամարդկային նկրտումներին, թույլ չտվեց տիրել իր մարմինը եւ շարունակեց աղերսել, որ նա հոգեւորականությանը վերադարձնի կառավարության կողմից բռնագրավված եկեղեցական դպրոցները, նրանց ունեցվածքի վրայից վերացնի արգելակալանքը, եկեղեցուն ետ տա շաքարի գործարաններն ու գրանոցի վերածված տաճարները: Եվ այդժամ նա կարուկ շրջվեց դեպի պատը. «Ես կհրաժարվեմ քո անհատակ սիրո քաղցրանուշ տառապանքներից, բայց երբեք չեմ զիջի աստծո այդ սվաղակներին, այդ ուրուրներին, որոնք դարեր շարունակ կոծել են հայրենիքի լարդը: Ոչ մի դեպքում: Նրանք չեն վերադառնա»:

Եվ, այսուհանդերձ, նրանք վերադարձան, իմ գեներալ:

Նրանք երկիր վերադարձան ամենանեղ ու ամենաանկատ ճեղքերով, կատարելով ձեր իսկ գաղտնի հրահանգը՝ անաղմուկ ու ծածուկ ափ իջնել աչքից հեռու ծովախորշերում: Վերադարձան բոլորը, ում համար խնդրել էր Լեոնիսիան, եւ բոլորն էլ փոխհատուցում ստացան կրած վնասների համար, մի բան էլ ավելի, իսկ հետո եկեղեցիներին ետ տվեցին բռնագրավված ունեցվածքը՝ ողջ սեփականությունը, չեղյալ հայտարարեցին քաղաքացիական ամուսնության եւ ամուսնալուծության օրենքները, եկեղեցուց դպրոցն անջատելու որոշումը, չեղյալ համարեցին բոլոր այն օ-

---

* Նարիդերա - քթի օղ:

** Արակադա - երկարապոչ ականջօղ:

բենքները, որ սահմանվել էին Բենդիսիոն Ալվարադոյի, աստված հոգին լուսավորի, սրբությունը մերժելու վրեժխնդրությամբ: «Է՞լ ինչ է քեզ պետք»: Լետիսիա Նասարենոյին, սակայն, շատ բան էր պետք, եւ մի անգամ նա ասաց. «Ականջդ դիր փորիս եւ դու կլսես այնտեղ մեծացող երեխայի ձայնը»: Ինքն էլ էր վախեցել այդ ձայնից, որ գալիս էր իր ներսից, իր արգանդից, որտեղ պտղամերձ բարեբեր ջրերի գրկում, պտղավայրի երանելի դրախտում, թրթռում էր նոր մարմինը: «Քոնն է»,- ասաց Լետիսիան, եւ նա կնոջ փորին դրեց լավ լսող, ավելի քիչ աղմկոտ ականջը ու լսեց երեխայի սրտի զարկը: «Մեր մահացու մեղքի զավակն է,- ասաց Լետիսիան,- մեր մեղսալի սիրո երեխան, մեր որդին, որին Էմանուել անունը կտանք, որովհետեւ այդ անունն աստվածային է, եւ նրա մարմինը կշողա ազնվականության նշանով, եւ նա կժառանգի մոր ինքնազոհման ոգին ու հոր հզորությունը, եւ հոր նման նա, ճակատագրի կամոք, կդառնա առաջնորդը ամենայն էակի, բայց երկնից կանիծվի նաեւ ու կվարկաբեկվի իր իսկ երկրում որպես ապօրինի ծնունդ, եթե նրա հայրը զոհասեղանի մոտ օծել չտա այն, ինչը այսքան տարիներ այլասերություն էր, մեղսալի կենակցություն, սրբապղծություն»: Եվ այդժամ նա ոտքի ելավ, մահճակալի տակ շպրտեց շղարշի ժանյակավոր փրփուրը. նրա շնչառությունը դարձավ շոգենավի կաթսայի քլթքլթոց, եւ նրա հոգու հատակից կատաղի ճիչ ժայթքեց. «Երբեք: Ավելի շուտ կմեռնեմ, քան կամուսնանամ»: Վիթխարի ոտքերը քստքստացնելով, նա հեռացավ, շրջեց դահլիճներում, իրեն օտար դարձած այս պալատում, որի նախկին փառավոր տեսքը վերականգնվել էր Բենդիսիոն Ալվարադոյի մահով հայտարարված պաշտոնական երկարատեւ սգից հետո: Քիվերից պոկել էին սգո վարագույրների սեւ ժապավենները. լույսը ողողել էր սենյակները, լուսամուտներից ներս էր խուժում ծովի շնչառությունը, պատշգամբներում ծաղիկներ էին ծաղկում, ռազմական քայլերգեր էին հնչում, եւ այս ամենը իրագործումն էր իր չտրված հրամանի. ինքը չէր հրաման արձակել, բայց հրամանը տրված էր նրա ոճով, հրամանում նրա հանգիստ վճռականությունը կար ու կտրուկությունը: Ահա թե ինչու նա հավանություն տվեց հրամանին,- «Համաձայն եմ»: Իսկ մյուս հրամանի ուժով, որ նույնպես ինքը չէր արձակել եւ էլի հավանության ար-

ժանուցավ, իրենց դռները բացեցին փակված տաճարները, սուրբ Հայրերի անօրինությանը վերադարձվեցին մենաստանները, գերեզմանատները, վերականգնվեցին եկեղեցական տոները եւ մեծ պասը. լայն բաց արած պատշգամբի դռներից լսվում էր ծնկի եկած մարդկանց երգը, որանք դեռ վերջերս անիծում էին պրեզիդենտին, իսկ հիմա ցնծում էին Տիրոջ սրբապատկերը երկիր վերադարձնելու առիթով: Այդ սրբապատկերը բերեցին նավով, Լեոխիայի կարգադրությամբ, որ բոլոր այլ կարգադրությունների նման ծնվել էր ննջասենյակում. Լեոխիան անձամբ էր արձակում կարգադրությունը, իսկ նա հետո ստիպված էր լինում հրապարակավ հավանության արժանացնել եւ օտար աչքերի առաջ հեղինակությունը բարձր պահելու նպատակով ձեւացնում էր, թե դրանք իր սեփական հրահանգներն են եղել: Լեոխիան գաղտնի շարժիչ ուժն էր հավատացյալների անվերջանալի այն թափորների, որոնց մեծ գարմանքով նայում էր պրեզիդենտը իր լուսամուտից. ավելի բազմամարդ էին, ավելի զանգվածային, քան Բենդիսիոն Ալվարադոյի աճյունը երկրպագող մոլեռանդների թափորները: Բենդիսիոն Ալվարադոյի հիշատակն ամենուր արմատախիլ էր արվում, հավատացյալների նույն այդ ամբոխները քամու բերանը տվեցին հանգուցյալի մաշված հարսնաքողն ու ոսկորների փոշին, նրա անունով գերեզմանի սալիկը հակառակ երեսով դամբարանի պատի մեջ խցկեցին, որպեսզի հիշեցնող ոչինչ չմնար երբեմնի թուչնավաճառուհուց, որն իր ողջ կյանքի ընթացքում գորշ թուչնակներին պիրոլ դարձնելու նպատակով ձեռքից բաց չէր թողել վրձինը,- «Եվ այս ամենը քո հրամանով քո կամքով որովհետեւ դու չէիր կարող թույլ տալ որ մի այլ կնոջ հիշատակը ստվեր գցեր իմ նկատմամբ քո սիրո վրա իմ դժբախտության Լեոխիա Նասարենո չան աղջիկ»: Լեոխիան նրան վերափոխեց այն տարիքում, երբ մարդը չի փոխվում այլեւս, միայն մահն է այդ տարիքում ձեւափոխում մարդուն. անկողնային խարդավանքներով նա կուտրեց նրա դիմադրությունը նաեւ ամուսնության կապակցությամբ; հաղթեց նրա երեխայական համառությունը՝ «Ավելի շուտ կմեռնեմ, քան կամուսնանամ»,- եւ ստիպեց նոր կալանդ հագնել,- «Թե չէ հինը վրադ վերուվար է անում, ինչպես խավարում մոլորված ոչխարի զանդակ»,- ստիպեց հագնել լաքած ճտքավոր կոշիկներ, որոնցով նա

գեղեցկության թագուհիների հետ առաջին վալսերն էր պարում, ձախ կոշիկին ստիպեց ամրացնել,- որպես գերագույն իշխանության խորհրդանիշ,- Մեծ ծովակալի նվիրած ոսկյա խթանը, որ նա կրեց մինչև կյանքի վերջը, ստիպեց հագնել ոսկեկար ու տրեզաբարդ, արձանիկի պես ծանր ուսապանակներով բաճկոնակ, որ նա չէր հագել անհիշելի այն ժամանակներից, երբ դեռ լույս աշխարհ էր ելնում, երբ պրեզիդենտական կառքի լուսամուտից դեռ հնարավոր էր հպանցիկ նկատել նրա մտախոհ կիսադեմը, թախծոտ հայացքը, մետաքսյա ձեռնոցով ձեռքի վշտահար շարժումը. ստիպեց օծվել տղամարդու օծանելիքով, կապել մարտական սուրը, կրծքին ամրացնել բոլոր մեդալներն ու Տիրոջ դագաղի միաբանության ասպետական ժապավենը, որով պարգևատրել էր նրան Հռոմի պապը, բռնագրավված ունեցվածքը եկեղեցուն վերադարձնելու համար,- «Դու ինձ պճնեցրիր զավեշտախաղի խրտվիլակի պես»: Այդ տեսքով Լետիսիան նրան վաղ առավոտյան նիստերի մռայլ դահլիճ տարավ, որտեղ մոմերից ու պատուհանի գոգին թառամող նարնջենու ճյուղերից մեռելատան հոտ էր արձակվում, տարավ մենակ, առանց խոչեղբոր ու վկաների, տարավ միանձնուհու իր քողով պարանակալած, փորը թաքցրած երկու փեշի տակ՝ տակինը քաթանե, կոպիտ եւ ամուր, ինչպես գիպսե անվադող, վերինը՝ շրշացող, մուալինե,- յոթ ամսական էր նրա արգանդի մեղսալի պտուղը, եւ նա ջանում էր քողարկել իր խայտառակությունը: Նրանք կանգնել էին քրանած, քար կտրած՝ զգալով մռայլ ու հանդիսավոր դահլիճի շուրջը վխտացող մարդկային ծովի ալիքների մոտիկությունը: Բոլոր մատույցները պաշտպանված էին, բոլոր ելք ու մուտքերը՝ փակված, պատուհանները ծածկված էին պետական գերբ ունեցող կտավներով. դահլիճը մեռած, անկենդան տեսք պետք է ունենար, որովհետեւ պսակադրությունը մեծագույն գաղտնիք էր լինելու եւ աշխարհում ոչ մի արարած պիտի չիմանար ոչինչ: Լետիսիան շնչահեղձ էր լինում շոգից, տառապում իր արգանդի ծանծաղուտային խավարում լող տվող վաղահաս արու պտղի անհամբեր հրմրոցից,- «Դու ինքդ էիր ուզում, չէ՞, որ տղա ծնվի»: Եվ, ահա, այդ տղան երգում էր նրա ընդերքում մի այնպիսի թաքուն ձայնով, ինչպիսին ուներ արքեպիսկոպոսը՝ հանդիսավոր հանդերձը հագին, տիրոջ անունը փառաբանելիս,- այդ ձայնը

արձակվում էր չզիտես որտեղից եւ այնպես խուլ էր, որ միջանցքներում ննջող ժամապահները ոչ մի կերպ չէին կարող լսել: Եվ իր արդանդում լող տվող տղայի վախը, մոլորված ջրասուզակի վախը նույնքան սեւ էր, որքան արքեպիսկոպոսինը, որը սարսափից քիչ էր մնացել հոգին ավանդեր, երբ հրեշավոր ծերին հարց տվեց. «Համաձա՞յն ես կին առնել Լետիսիա Մերսեդես Մարիա Նասարենոյին»: Դեռ ոչ մեկը դրանից առաջ եւ հետագայում էլ չէր համարձակվել նրան նման հարց տալ՝ համաձա՞յն ես սրան կամ նրան կին առնել: «Համաձայն եմ»: Եվ հապիվ լսելի զրնգացին նրա կրծքի նշանները, որովհետեւ սիրտը թպրտաց: Բայց «Համաձայն եմ» խոսքը հնչեց անհողդողդ եւ նույն պահին էլ Լետիսիա Նասարենոյի արգանդի սոսկալի երեխան լիովին կողմնորոշվեց մերձպտղյա ջրերի հոսանքում եւ ուղղություն բռնեց դեպի լույսը: Լետիսիան երեք ծալ ծալվեց եւ հեծկլտալով մրմնջաց. «Ողորմած աստված, գթա քո հնազանդ ստրկուհուն, որը մարմնական հաճույքների համար խախտեց քո սուրբ պատվիրանները: Ընդունում եմ պատիժը քո, տեր»: Եվ այդժամ նա պատառոտեց իր ժանյակավոր ձեռնոցները, պատատոտվող ժանյակների աղմուկով խլացրեց կոնքաղդրային ոսկորների ճռճռոցը, պպզեց եւ երկու փեշերի խառնաշփոթից դուրս հանեց օրապակաս իր վիժվածքին: Նորածինն այնքան անպաշտպան էր եւ այնպիսի չափսերով, ինչպիսին լինում է օրապակաս հորթուկը: Լետիսիան բարձրացրեց նորածնին, գննեց նրան հանպատրաստից զոհասեղանի մոմերի աղոտ լույսի տակ եւ տեսավ, որ տղա է,- «ինչպես եւ ցանկանում էիք, իմ գեներալ, տղա է»: Նիհար, մանր տղա էր, որին վիճակված էր Էմանուել աստվածային անունը կրել եւ ոչնչով աչքի չընկնել, որը դիվիսյալի գեներալի կոչում ստացավ ու կոչման բոլոր արտոնությունները ճիշտ այն պահին, երբ հայրը նրան զոհասեղանին դրեց, պորտալարը կտրեց իր սրով եւ ճանաչեց նրան իր միակ ու օրինական որդի,- «Սուրբ հայր, մկրտեք նրան»:

Աննախադեպ այս իրադարձությունը նախերգանքը դարձավ մի նոր ժամանակաշրջանի, իրենով նշանավորեց սարսափելի տարիների գալուստը: Այդ տարիները հիշողության մեջ են մնացել արգելապահ ջոկատներով, որոնք մինչեւ լուսաբաց փակում էին փողոցները, հետո բանակը մարդկանց ստիպում էր ամուր գոցել

լուսամուտներն ու պատշգամբները, խզակոթի հարվածներով ցրում շուկայական ամբոխը, որպեսզի ոչ ոք չկարողանար տեսնել, թե ինչպես է հայտնվում ու խսկույն էլ անհետանում փայլուն, զրահապատ դռան ոսկյա բռնակներով լիմուզինը. իսկ նրանք, ովքեր, արգելքին հակառակ, տանիքներին թաքնված՝ համարձակվում էին ծիկրակել, տեսել էին, որ դա կառավարական լիմուզինն է, պրեզիդենտի անձնական լիմուզինը, եւ տեսել էին այդ լիմուզինում ոչ թե զինվորական համազգեստով զառամյալ ծերունուն, այլ կարճահասակ, փեսորե ծաղիկներով զարդարված գլխարկը հագին, կուսանոցի նախկին միանձնուհուն, որի պարանոցին սեւ աղվեսենու մի ամբողջ կապ կար,- հետո՞ ինչ, որ շոգ է: Մենք տեսել ենք, թե ինչպես է նա դուրս եկել լիմուզինից, շուկայի դարպասի մոտ,- ամեն չորեքշաբթի առավոտյան,- զինվորների պատվո պահակի ուղեկցությամբ մտել շուկա՝ դիվիզիայի փոքրիկ գեներալի ձեռքը բռնած. այդ օրերին երեք տարեկան կլիներ, այնքան փխրուն էր ու նուրբ, որ աղջկա էր նման, հագին՝ ոսկեկար, զինվորական շքերթային համազգեստ. համազգեստը ճիշտ հագովն էր, ասես հենց դրանով էր ծնվել. համազգեստ սկսել էր կրել ավելի վաղ, քան կհասցնեին դուրս գալ առաջները, այն օրերից, երբ Լեոնիսիան նրան սայլակով պաշտոնական արարողություններին տարավ, որտեղ նա իր հորն էր ներկայացնում, այն օրերից, երբ մոր գրկում նստած՝ զորատես էր անցկացնում. այդ համազգեստն էր հագին այն օրը, երբ մայրը բարձրացրեց նրան գլխից վեր աղմկոտ խաղաղաշտում, որտեղ, ձեռքի գնդակի մրցումից հետո, ամբոխը ծափահարություններով պատվում էր դիվիզիայի մանուկ գեներալին. այդ համազգեստը հագին էր նա մոր ծիծն ուտում բաց ինքնաշարժում, ազգային տոնի առթիվ կայացած շքերթի ժամանակ. Լեոնիսիան ուշք չէր դարձնում ուրչած պտուկին հորթուկի նման կպած մանուկ-գեներալին նայող բարձրաստիճան հաճոյակատարների երկիմաստ ժպիտներին ու ակնարկներին: Դիվանագիտական ընդունելություններին նա սկսեց ներկայանալ այն օրից, երբ վարժվեց իր պետքերը հոգալ առանց ուրիշի օգնության. ընդունելություններին նա ներկայանում էր ոչ միայն համազգեստով, այլեւ մարտական շքանշաններով, որ ըստ իր ճաշակի ընտրում էր հոր շքանշանների զարդատուփից. լուրջ տղա էր, փոքր-ինչ տարօրի-

նակ. արդեն վեց տարեկանում կարողանում էր իրեն պահել հասարակության մեջ, հավասարը հավասարի հետ զրույց էր վարում, շամպայնի փոխարեն մրգաջուր խմում. նա շատ հմայիչ էր ու նրբանկատ մարդկանց հետ զրուցելիս, թեեւ հասկանալի չէր, թե ուսից էր ժառանգել այդ հատկանիշները. ճիշտ է, հաճախ էր պատահում, որ ընդունելության արարողությանը հանկարծ մոայլվում էր, ասես ամպ էր մտնում հանդիսավոր դահլիճ. ամենաբարձր իշխանության տեր խեղճ թագաժառանգը հանկարծ սկսում էր հորանջել, ննջում էր, քնում... Եվ մեռնում էր ժամանակը, երկխոսություններն ընդհատվում էին կես բառի վրա, քարանում էին ձեռքի շարժումները, շշուկ էր լսվում. «Սո՛ւս, փոքրիկ գեներալը քնեց»,- եւ համհարզը ձեռքերի վրա, տանում էր նրան կոկիկ մարդասպաններ ու խստաբարո տիկնանց ամբոխի միջով, եւ սրանք հեգնական ժպիտները թաքնափետրե հովհարների ետեւում թաքցրած՝ համարձակվում էին հազիվ լսելի շշնջալ. «Ինչպիսի՜ խայտառակություն: Եթե միայն նորին գերազանցությունն իմանար»: Դեռեւրայն ինքն էր սնում այն համոզմունքը, թե ինքը ոչինչ չգիտե, նույնիսկ ինքն իրեն էր համոզել, թե չի հուզվում մանր կենցաղային կրքերից, թե իր կոչմանն ու մեծությանը սազական չէ զբաղվել անհաշիվ երեխաներից թեկուզեւ առանձնացված, օրինական որդու իրավունքը վայելող միակի արարքներով, ինչպես սազական չէր չափ ու սահման չճանաչող Լետիսիա Նասարենոյի ցանկություններին ուշք դարձնելը: Ահա, նա քաղաքային շուկա է մտնում,- չորեքշաբթի օրերին, վաղ առավոտյան,- իր խաղալիք գեներալի ձեռքը բռնած, շրջապատված զորանոցային խոհարարուհիներով եւ համհարզի զգեստ հագած անուղղելի մարդասպաններով: Այդ մարդիկ ուրվականներ էին թվում վաղ առավոտվա տարօրինակ լուսավորության մեջ, երեւակայության խաղ, որ ծնվում է այն ակնթարթին միայն, որ լինում է Կարիբյան ծովի խաղաղ մակերեւույթին՝ արեւածագից քիչ առաջ. նրանք ծովախորշի հոտած ջրերն էին մտնում, թրջվում էին մինչեւ գոտկատեղերը, որպեսզի ելնեին կարկատած առագաստներով փոքրիկ նավերը, որոնցով նախկին ստրկավաճառների այս նավահանգիստը Մարտինիկյան ծայրիկներ էին բերում եւ գենջեֆիլ՝ Պարամարիբոյից. ճանապարհին նրանք թալանում էին ինչ պատահեր, ավարը

զսվթում էին գրոհներով, ձկնորսներից խլում ողջ որսը, վերցնում նույնիսկ թափելու ձուկը, ինչով կերակրվում էին վաճառքի հանած խոզերը,- նրանք խոզերին սատկեցնում էին խպակոթների հարվածներով եւ վերցնում աղբարկղը նետելու ձուկը նույնիսկ, նոյի տարվա, բայց մինչեւ օրս էլ գործող կշեռքի մոտից. ստրկավաճառության օրերին այս կշեռքով էին կշռում ստրուկներին,- հեռու-հեռավոր, նախապատմական ժամանակներում այս կշեռքին էր կանգնել աներեւակայելի գեղեցկությամբ սենեգալցի մի ստրուհի, որը վաճառվել էր աճուրդով եւ վճարված ոսկու քաշը գերազանցել էր ստրկուհու սեփական ծանրությունը:

«Նրանք ամայացրել են ամեն ինչ, իմ գեներալ: Մորեխամպից վատթար են, ցիկլոնից վատթար»: Սակայն նա մնում էր անվրդով անխուսափելիորեն հասունացող պայթյունի դեմ-հանդիման, նույնիսկ հերթական այն չորեքշաբթի օրը չանհանգստացավ, երբ Լետիսիան մի այնպիսի խաղ խաղաց, որպիսին ինքն էլ իրեն թույլ չէր տա: Լետիսիան առեւտրական շարքերն էր իցկվել, այնտեղ, ուր թռչնակներ ու բանջարեղեն էին վաճառում, շրջապատված փողոցային շների ոհմակով, եւ սրանք կատաղի հաչում էին սեւ աղվեսենիների վրա, որոնց ապակյա աչքերը գազազեցնում էին շներին, բայց Լետիսիան հաչոցների վրա ուշադրություն չդարձնելով՝ անտարբեր տեսքով շարունակում էր արշավը առեւտրական սրահի վիթխարի կամարների տակ, գեղարվեստական ձուլվածքով երկաթյա սյուների միջեւ, մետաղյա ճյուղերի եւ դեղին ապակուց խոշոր տերեւների ներքո, վարդագույն ապակուց ու հսկայական խնձորների տակ, երկնագույն ապակուց առատության եղջյուրների տակ, հիբրիդային բարիքներով լեցուն, բուսական այս թագավորությունում: Նա ընտրում էր ամենաախորժելի մրգերը, ամենանուրբ, թարմ բանջարեղենը, բայց հենց մոտեցնում էր ձեռքը, դրանք իսկույն կորցնում էին իրենց գրավչությունը, իրենց թարմությունը, քանզի այդպիսին էր նրա ձեռքերի անընմրունելի հատկությունը՝ փչացնել այն ամենը, ինչին դիպչում են: Սակայն նա չէր ընդունում իրողությունը եւ հայհոյանքով հարձակվում էր վաճառողուհիների վրա, մեղադրում, որ նրանք թաքցնում են լավը, թարմը, իսկ իրեն հրամցնում ամեն տեսակի աղբ,- «Սրանք խղճուկ մանգոներ են, որոնցով միայն խոզ կարելի է կերակրել:

խաբերաներ: Ինձ այս սույամանՙ են դեմ անում, կարծես ես չեմ լսում, թե ինչպես է նա զնգում երաժշտի դատարկ գլխի պես»: Իսկ շուկայի մյուս ծայրում նա բղավում էր. «Բա սա տավարի մի՞ս է: Պոռնիկներ: Սա հիճվոտած քաք է: Հիմարն էլ կհասկանա, որ սրանք ցլի մատներ չեն, այլ ժանտախտից սատկած էշի, չան աղջիկներ»: Այսպես նա բղավում էր մինչեւ խոպոռվելը, մինչեւ զամբյուղներով խոհարարուհիները եւ անասուններին կերակրելու բաղյաններով սպասյակները չէին ժողովում այն ամենը, ինչ աչքներին էր ընկնում: Լետիսիայի ավազակային բղավոցներն ավելի սուր էին, քան սեւ աղվեսենու պոչերը հափ անելու ցանկությամբ խենթացած շների հաչոցները,- աղվեսենիները պահպանել էին էղվարդ արքայազնի կղզու,- որտեղից Լետիսիան կենդանի սեւ աղվեսներ էր ստանում,- ձնածածկ աղվեսի որջերի հոտերը. նրա հայհոյանքն ավելի բազմահարկ էր ու փողոցային, քան խոսող թութակների չարանենգ հիշոցները,- կարմրակուրծք այս դուստկամայաներին տերերը ծածուկ վարժեցնում էին ասել այն, ինչ մեծ բավականությամբ իրենք կասեին Լետիսիային. «Գոց Լետիսիա: Բոց կույս»: Կոկորդները ճղելով թութակները ասում էին այս բառերը՝ նստոտած սյուների երկաթյա ճյուղերին, շուկայի գմբեթի տակի ապակյա փոշոտ տերեւներին, որտեղ նրանք անհասանելի էին ծովահենային այն մրրիկին, բուվանդերյան այն սամրապարին՝՝, որ կրկնվում էր ամեն չորեքշաբթի վաղ առավոտյան, այս կերպ նշանավորելով մանկությունը մատնաչափիկ կեղծգեներալի, որի ձայնը ավելի քնքուշ ու նուրբ էր դառնում, իսկ շարժումներն առավել նրբագեղ, հենց փորձում էր տղամարդ երեւալ՝ գրնգոցով նետելից քարշ տալով խաղաքարտե թագավորի թուրը: Նա բացարձակապես անտարբեր էր շուկայական իրարանցման մեջ, ուր իրագործվում էր ողջ այս թալանը, հանգիստ էր պահում իրեն, գուսդ, արժանապատվորեն, ինչպես մայրն էր ներշնչել, որպեսզի նկատվեր ազնվականական ծագումը, իսկ ինքը նույն այդ ժամանակ ամեն ինչ ոտնատակ էր տալիս շուկայական ցեխի մեջ, կատաղած քածի պես ու ամենավերջին բառերով հայհոյում անվրդով, սեւազգեստ, խայտաբղետ չալմաներով պառավների մոտ,- պառավները

---

* *Սույամա - արեւադարձային պտուղ:*

** *Սամրապալ - գրոտեսկային, հինավուրց պար:*

հանգիստ լսում էին նրա հայհոյանքը, անտարբեր դիտում անամոթ թալանը, թափահարում էին հովհարները եւ նույնիսկ չէին թարթում աչքերը՝ կուռքի պես անշարժ նստած իրենց անսահման ինքնամոռացման մեջ. նրանք կարծես չէին շնչում, ծամում էին ծխախոտի տերեւներ ու գնդած կոկա* խաղաղեցնող թույն, որն օգնում էր նրանց տանել այդ խայտառակությունը, բաքոսային այդ թալանը, որ ավարտվում էր իր ոհմակով շրջապատված, իր վայ գեներալիկի ձեռքը բռնած, մազերը ցից-ցից շների միջով դեպի շուկայի ելքը շարժվող Լեոնիսիա Նասարենոյի բղավոցով. «Հաշիվը ներկայացրեք կառավարությանը: Կառավարությունը կվճարի»: Պառավները հպիվ լսելի հառաչում էին. «Տի՛ր աստված, եթե միայն գեներալն իմանար: Գոնե մեկնումեկը համարձակվեր հայտնել նրան»: Խեղճ պառավները համոզված էին, որ նա մինչեւ մահ ու գերեզման չիմացավ այն ամենը, ինչ, ի խայտառակություն իրեն, գիտեր ողջ աշխարհը. նրա միակ եւ օրինական կինը՝ Լեոնիսիա Նասարենոն, հնդկացիների կրպակներից գողանում էր ապակյա այլանգակ կարասներ, խեցիների փշրանքներով զարդարված շրջանակներ ունեցող հայելիներ, մարջանի մոխրամաններ, սիրիացիների խանութներից փախցնում էր սգո ժապավենի համար նախատեսված մետաքսե դիպակներ, առեւտրական փողոցի թափառաշրջիկ ոսկերիչների արկղիկներից, բռերով, ոսկյա ձկնիկներով մանյակներ ու սեղմ բռունցքի տեսքով հմայիլներ էր թռցնում. ոսկերիչները կարողանում էին միայն այսքանը ասել. «Դու ավելի թունդ աղվես ես, քան վզիդ փաթաթված սեւամորթները»: Նա փոցխում էր նախանձ աչքերին ընկած ամեն բան, հագուրդ տալով կուսանոցի նախկին միանձնուհուց մնացած միակ բանին՝ անճաշակությանը եւ տեղի-անտեղի մուրալու կրքին: Բայց նախկինում եթե ստիպված էր լինում հասմիկի բույրով փոխարքայական թաղամասի մուտքերի մոտ մուրալ այս կամ այն իրը, ապա հիմա դուրն եկած փալաս-փուլուսով բանակային սայլեր էր լցնում եւ կարգադրում հաշիվը կառավարությանը ներկայացնել, որ նույնն էր, եթե ասեր. «Վճարը կտանաք տեր աստծուց», որովհետեւ, վաղուց ի վեր, ոչ ոք չգիտեր՝ գոյություն ունի՞, արդյոք, կառավարություն ասվածը, թե վերածվել է ուրվականի: Մինչ դեռ Արմաս

* Կոկա - բույս, որից կոկաին են ստանում:

հրապարակի դիմաց ցցված բլրին տեսանք բերդի պարիսպներ, տեսանք Իշխանության տունը՝ պատմական պատչգամբով, որտեղից ժամանակին պատմական ճառեր էին արտասանվում, եւ լուսամուտներով, որ վարագուրված էին ժանյակավոր զարդենիներով, գոգերին՝ սափորներ: Գիշերով տունը նմանվում էր երկնքով լողացող շոգենավի եւ նկատվում էր ոչ միայն քաղաքի ուզածդ կետից, այլեւ ծովից, յոթ մղոն հեռավորությունից, իսկ այդպես նկատելի դարձավ այն օրից, երբ ներկեցին սպիտակ գույնով ու լուսավորեցին կլոր, գնդերի պես լապտերներով, որ դրվեցին Հայոնի բանաստեղծ Ռուբեն Դարիոյի ժամանման կապակցությամբ: Բայց այս բոլորը միասին վերցրած՝ մեզ դեռ չէր համոզում, թե պրեզիդենտը բնակվում էր սպիտակ այդ պատերի ներսում, Իշխանության այդ տանը, իր պալատում: Ընդհակառակը, մենք հիմարներ ունեինք մտածելու, որ այս ամենը ցուցադրական է, որ պինվորականությունը այդ պատերի ներսում սովորական կյանքի պատրանք է միայն ստեղծում ձգտելով հերքել այն լուրերը, թե օր ծերության հասած պրեզիդենտը ցնորքների գիրկն է ընկել, հրաժարվել բոլոր բարիքներից ու պատիվներից, ուխտ է արել մինչեւ կյանքի վերջը ինքնանվաստացման մեջ ապրել, հոգին խաղաղեցնել քուրձերով, մարմնականը ոչնչացնել ամեն տեսակի երկաթյա հարմարանքներով. ասում էին նույնիսկ, որ նա սնվում է սեւ հացով միայն, ջրհորի ջրով, իսկ անկողին է ընտրել մենաստանի ճգնավորական խցի մերկ հատակը եւ այդպես պիտի ապրի այնքան ժամանակ, քանի դեռ չի քավել ծանր մեղքը՝ բռնի տիրացել էր Լեոնիսային, հղիացրել նրան, այդ քածին, որը աստծո զորությամբ միայն չի արժանացել առայժմ բարձրագույն բոլոր շքանշաններին: Բայց լուրերը մնում էին լուրեր, ամեն ինչ ընթանում էր առաջվա պես նրա վշտալի, անծայրածիր թագավորությունում, որովհետեւ իշխանության բանալիները Լեոնիսա Նասարենոյի ձեռքում էին, եւ երբ սա հրամայում էր հաշիվը կառավարությանը ներկայացնել, ասես ամեն անգամ էլ հայտարարում էր՝ այդպիսին է պրեզիդենտի կամքը: «Հաշիվը ներկայացրեք կառավարությանը» - սկզբում թվում էր, թե հնամենի այս արտահայտությունը որեւէ պարզեւ է խոստանում, բայց օրըստօրե ավելի քիչ հույս էր մնում: «Հաշիվը ներկայացրեք կառավարությանը»: Տարիներ անց առավել համար-

ձակ պարոստոերերի մի խումբ համարձակվեց չվճարված մուրհակներով լեցուն ճամպրուկները ձեռքներին հայտնվել պալատի պարիսկատանը: Ամենազարմանալին այն էր, որ ոչ ոք մեզ չասաց «այո» եւ ոչ ոք չասաց «ոչ»: Հերթապահը մեզ ուղեկցեց մի համեստ ընդունարան, որտեղ մեր հարցով զբաղվեց չափազանց քաղաքավարի, չափազանց երիտասարդ մի սպա, որը ժպտալով եւ նրբակիրթ շարժումներով, սիրալիրությամբ առաջարկեց մեզ միմի բաժակ սուրճ,- «Պրեզիդենտական բերքից է, սենյորներ»: Հետո նա մեզ ցույց տվեց հրաշալիորեն լուսավորված, մետաղական ցանցեր ունեցող լուսամուտներով եւ առաստաղից կախ էլեկտրական հովհարներով առանձնասենյակները. այնպես մաքուր էին ու լուսավոր, որ մեղանից յուրաքանչյուրը սպշած ինքն իրեն հարց տվեց. «Հապա ո՞ւր է իշխանության նեխման հոտը: Հապա ո՞ւր է օծանելիքներով քողարկված նրա գարշահոտությունը: Ժլատությունն ու դաժանությունը մի՞թե կարող են բնորոշ լինել մետաքսի վիրնաչապիկներով այս պաշտոնյաներին, իրենց գործն առանց շտապելու ու ազմուկի կատարող այս մարդկանց»: Երիտասարդ սպան մեզ առաջ տարավ. նա մեզ ցույց տվեց փոքրիկ ներքնաբակը, որտեղ Լեոնիսիա Նասարենոն խուզել էր բոլոր վարդաթփերը, որպեսզի վաղորդյան օդը եւ վաղորդյան ցողը մաքրվեին աստծուց մոռացված անկելանոցները մեռնելու քշված բորոտների, կույրերի ու կաթվածահարների գեշ հոտերից. նա ցույց տվեց մեզ հավանոցի նման բարաքը, որտեղ մի ժամանակ ապրում էին պրեզիդենտի հարճերը, ցույց տվեց ժանգոտած կարի մեքենաները, զորանոցային մահճակալները, որոնց վրա հարեմի բնակչուհիները քնում էին զույգ-զույգ, նույնիսկ երեքով. նա ասաց, որ ամոթալի վանդակներով այս բարաքը պիտի քանդվի, իսկ տեղում ժամատուն է կառուցվելու. նա ցույց տվեց պրեզիդենտական պալատի սուրբ սրբոցը, այն տեղը, որտեղ ետկեսօրյա արեւով ոսկեզօծված, կենդանի ծաղիկներով ծածկի տակ, կանաչ ձողիկներով ցանցավանդակի ներսում սեղան էր դրված, որի շուրջը պրեզիդենտը Լեոնիսիա Նասարենոյի եւ որդու հետ ճաշել էր քիչ առաջ. միայն նրանք իրավունք ունեին ճաշել այդ սեղանի շուրջը. նա ցույց տվեց մեզ առասպելական սեյբան, որի ստվերի տակ կապել էին ազգային դրոշի պես երկգույն ճոճը, որի մեջ նստած էր պրեզիդենտն անցկաց-

նում սիեստայի ամենաշոգ ժամերը. նա ցույց տվեց մեզ կամնա-
ֆերման, պանրագործարանը, մեղվանոցը, իսկ երբ ետ էինք դառ-
նում նույն ճանապարհով, որով պրեզիդենտը ամեն առավոտ ֆեր-
մա էր գնում՝ կիթը հսկելու, երիտասարդ սպան հանկարծ կանգ ա-
ռավ շանթահարվածի նման եւ իր հայանագործության հրճվանքը
մեզ հետ բաժանելով, մատնացույց արեց ցեխի մեջ դրոշմված կո-
շիկի հետքը,- «Տեսեք, նրա ոտնահետքն է»:- Եվ մենք քարացանք
վիթխարի ներբանի դրոշմը տեսնելով: Այդ ոտնահետքից վեհու-
թյուն ու հզորություն էր ճառագում, ուժի հանդարտություն, այդ
ոտնահետքը մենության սովոր յագուարի, տիրակալի իր հոտով
խուզտուտեց մեր քթածակերը, նայելով այդ ոտնահետքին, մենք
նրա նվիրական դաղտնիքին ավելի էինք մոտեցել, քան մեր խմբից
այն մարդը, որին թույլատրել էին պրեզիդենտի մոտ մտնել: Թույ-
լատրությունը հաջողվել էր, որովհետեւ բարձրաստիճան սպանները
սկսել էին ընդվզել Լեոխիա կոչված դուրսպրծուկի դեմ, որն
ավելի մեծ իշխանություն էր զավթել, քան գլխավոր զորահրամա-
նատարինն էր, ավելին, քան կառավարությունն ուներ, քան պրե-
զիդենտը: Փառասիրությունից կուրացած, իրեն թագուհի կարծող
Լեոխիա Նասարենոն այնքան էր հզփացել, որ գերապույն շտաբն
այլեւս չէր կարող հանդուրժել եւ իր պատասխանատվությամբ
համարձակվեց թույլ տալ մեզանից մեկին նրա՝ մեր տիրոջ մոտ
գնալ: «Միայն մեկը,- ասացին մեզ,- եւ թող ձեր ընտրյալը փորձ
անի, թեկուզեւ ակնարկի այն ամենի մասին, ինչ կատարվում է
նրա թիկունքում»:- «Ահա, այսպես պատահեց, որ ես տեսա
նրան: Նա մենակ էր իր ձյունաթույր առանձնասենյակում, պատե-
րից կախված էին անգլիական արշավի նժույգներ պատկերող փո-
բագրություններ: Նա նստել էր փափուկ բազկաթոռին, փոքր-ինչ
ետ ընկած, նրա դիմաց պատվում էին հովհարի թեւերը: Հագին
սպիտակ, ճմրթված բամբակյա հանդերձեստ էր՝ պղնձյա կոճակնե-
րով, առանց տարբերանշանների. մետաքսյա ձեռնոց հագած ձեռ-
քը դրված էր գրասեղանին, որի վրա ոչինչ չկար, բացի ոսկյա շր-
ջանակով, միեւնույն չափսի երեք ակնոցներից: Նրա ետեւում
գրադարակն էր՝ փոշոտ հատորներով, որ նման էին մարդկային
մաշկից կազմված հաշվապահական մայր մատյանների, աջ ձեռքի
կողմը բաց լուսամուտն էր՝ մետաղական ցանցով,- լուսամուտից ե-

բեւում էր ողջ քաղաքը եւ ամբողջ երկնակամարը՝ բոլորովին անամպ, եւ ոչ մի թռչուն չկար, եւ մինչեւ ծովի մյուս կողմը մի քայլ էր թվում: Ես ինձ շատ թեթեւ զգացի, որովհետեւ պալատականների համեմատությամբ նա շատ սովորական մարդ երեւաց. նա մի տեսակ տնավարի տեսք ուներ, բոլորովին նման չէր իր դիմանկարներին, եւ ես սկսեցի խղճալ նրան, որովհետեւ նրա ամեն ինչը ծեր էր, ծանրացած, ասես մաշվել էր անողորմ հիվանդությունից, թուլացել այն աստիճան, որ ուժ չուներ ասելու՝ «նստեք»,- եւ նա ինձ նստել առաջարկեց մետաքսյա ձեռնոցի մեջ մտած ձեռքի վշտալի շարժումով: Նա ինձ լսում էր մի կողմ նայելով, խուլ, ծանր սուլոցի պես շնչելով, եւ այդ շնչից առանձնասենյակը լցվեց ամիակի հոտով, հետո կենտրոնացավ՝ մուրհակները տնտղելու: Ես բացատրեցի նրան, թե ինչ է գրված, դիմեցի զպրոցական ակնառու ու սարդ միջոցներին, որովհետեւ վերացական մտածողությունը անհասանելի էր նրան: Ես սկսեցի նրանից, որ Լետիսիա Նասարենոն պարտքով այնպիսի քանակությամբ դիպակ է գնել, որի երկարությունը այստեղից Սանտա-Մարիա-դե-Արտար կհասնի ու ետ կգա, այսինքն՝ հարյուր իննսուն ծովային մղոն է կազմում վերահիշյալ կտորի երկարությունը, եւ նա ասաց. «ԸՀը»,- այնպես ասաց, կարծես ինքն իրեն էր խոսում: Իսկ բացատրությունս ավարտեցի ասելով, որ պարտքի ընդհանուր գումարը, նորին գերազանցության պատվին հաշվի առած զեղչով, իհարկե, հավասար է տասը տարվա վիճակախաղի գլխավոր վեց շահումների գումարին: Եվ նա կրկին ասաց. «ԸՀը»,- եւ միայն հիմա մեր հայացքները հանդիպեցին: Ակնոցը չէր դրել, եւ ես նկատեցի, որ նրա աչքերը երկչոտ են ու կարեկցող, իսկ երբ խոսեց, ձայնը շատ տարօրինակ թվաց, կարծես կրծքի տակ ֆիզհարմոնիա էր հեծկլտում: «Ձեր փաստարկները համոզիչ են եւ արդարացի,- ասաց նա ինձ:- Հաշիվը ներկայացրեք կառավարությանը»: Այո, ճիշտ այդպիսին էր նա այն օրերին, երբ Լետիսիա Նասարենոն վերափոխում էր ամուսնուն իր ցանկության համաձայն, երբ ամուսնու միջից դուրս էր կորզում Բենդիսիոն Ալվարադոյի, քարե դարի այդ վայրենու քարանձավային դաստիարակությունը: Լետիսիան նրա միջից հանեց ոտքի վրա, մի ձեռքին ափսե, մյուսում գդալը, կանգնած կամ քայլելով ճաշելու սովորությունը,- հիմա երեքով նրանք ճաշում

էին ամառանոցային սեղանի շուրջը, ծաղկած պատատուկների վրանի տակ. նա նստում էր որդու դիմաց, Լեոխիան նստում էր կողքին եւ երկուսին էլ վարժեցնում նրբակիրթ շարժուձեւի, ինչպես նաեւ ուտելիքը կուլ տալու կանոններին, որպեսզի կերածը օգուտ տա եւ ոչ թե վնաս: Լեոխիան սովորեցրեց նրանց սեղանի մոտ նստել ուղիղ, սովորեցրեց պատառաքաղը բռնել ձախ ձեռքով, դանակը՝ աջ, սովորեցրեց Հանգամանորեն ծամել յուրաքանչյուր պատառը՝ տասնհինգ անգամ մի այտով, տասնհինգ անգամ մյուսով, առանց բացելու բերանը, գլուխը բարձր պահած. խրատելիս նա ուշադրություն չէր դարձնում ամուսնու այն դիտողությանը, թե այս ամենն իրեն հիշեցնում է զորանոցային խիստ վարժանքները: Հետո նա վարժեցրեց կարդալ կառավարական պաշտոնաթղթերը. այն լրագիրը, որի մեջ նշված էր, թե պրեսիդենտն է լրագրի խնամակալն ու պատվավոր խմբագիրը. Լեոխիան այս լրագիրն էր տալիս նրա ձեռքը հենց նա ճոճն էր մտնում ընտանեական եռնաբակի վիթխարի սեյբայի սավերի տակ, ճաշից հետո ննջելու մտադրությամբ,- «Պետության գլխավորը պետք է իրազեկ լինի աշխարհի իրադարձություններին»: Ամուսնու քթին էր դնում ոսկյա շրջանակով ակնոցը եւ ճանապարհ գցում դեպի պրեսիդենտական տեղեկատուի ջրիկ էջերը. մինչ Լեոխիան զբաղվում էր որդու մարզումներով, նորին գերազանցություններ աչքի էր անցկացնում լրագրում տպագրված իր լուսանկարները՝ այնքան վաղմի, որ դրսևորից շատերը նույնիսկ իրեն չէին պատկերում, այլ նմանակին, որն օրերից մի օր մնում էր իր փոխարեն, այնքան վաղուց էր դա, որ նա նմանակի անունն էլ չէր հիշում. նա նայում էր այն լուսանկարին, որ պատկերում էր իրեն նախարարների խորհրդի նիստի ժամանակ, նստարանի աթոռին նստած, իբր անցած երեքշաբթի, թեեւ գիսաստղի հայտնվելուց հետո նա չէր մասնակցել եւ ոչ մի նիստի. նա ծանոթանում էր իր իմաստուն այն դարձվածքներին ու պատմական արտահայտություններին, որ իրեն էին վերագրում բարձրակիրթ նախարարները եւ քիթն էր վեր քաշում. թխպոտ օգոստոսի տոթից շշմած՝ նա ստիպանաբար ընկղմվում էր սիեստայի հեղձուկ ճահիճը, քթի տակ մռթմռթալով. «Այս ի՞նչ քաքոտ լրագիր է, գրողը տանի, եւ ինչպես են մարդիկ դիմանում»: Ինչ-որ բան, ասկայն, մնում էր պատուց այդ ընթերցանությունից,

ինչ-որ չափով ընթերցանությունը օժանդակում էր նոր գաղափարների ծնունդին եւ կարճատեւ, ոչ խոր քնից արթնանալիս նա Լետիսիա Նասարենոյի միջոցով նախարարներին հաղորդում էր իր ամենատարբեր հրամանները. նախարարները պատասխանում էին նույն Լետիսիայի միջոցով, ջանալով մտքներում կարդալ նրա մտքերը, որ շարադրում էր իրենց առաջ այդ տիկինը. «Որովհետեւ դու իմ պատգամախոսն էիր, դու կարողանում էիր արտահայտել իմ մտքերը, կարողանում էիր ձեւակերպել իմ ամենավսեմ գաղափարները, դու իմ ձայնն էիր, իմ բանականությունը եւ իմ ուժը, դու ամեն կողմից վրաս եկող լավայանման աշխարհի անդադար վնդոցի ու շառաչի միջից անհրաժեշտը անսխալ որսացող իմ ամենալսող ականջն էիր»: Այսպես էր նա ասում, բայց իրականում տեղեկությունների ամենահուսալի աղբյուրները, որոնցով նա ղեկավարվում էր իր գործողություններում, դարձել էին անստորագիր հղումները, որ խազմգում էին պալատի ընդհանուր օգտագործման պետքարանների պատերին. այդ ուղերձներում նա տեսնում էր այն ճշմարտությունը, որը ոչ ոք,- «նույնիսկ դու, Լետիսիա»- չէր համարձակվում բացահայտել նրա առաջ. նա կարդում էր այդ ուղերձները վաղ լուսաբացին, առավոտվա կովկիթից հետո, մինչեւ օրապահները կհասցնեին դրանք ջնջել. նա հրամայեց ամեն օր ճերմակեցնել պետքարանների պատերը, որպեսզի ոչ մեկը չդիմանար հոգին դատարկելու գայթակղությանը, ճերմակ պատի հետ բաժաներ իր ներսը գցած չարությունը. անստորագիր այդ ուղերձներից նա տեղեկացավ բարձրաստիճան սպաների վշտերին, ճանաչեց քծու այն սողացողներին, ովքեր առաջ էին քաշվել իր իշխանության սաղարթի տակ, բայց հոգու խորքում ատում էին իրեն. նա դրության լիիրավ տեր զգաց այն ժամանակ միայն, երբ հաջողվեց թափանցել մարդկային հոգու ծածուկ խորքերը, իսկ թափանցեց, երբ, ինչպես մերկացնող հայելու մեջ, պետքարանի պատերին տեսավ այս կամ այն սրիկայի գրածը: Զգացմունքների առատությունից նա կրկին սկսեց երգել,- տարիներ ի վեր նա չէր երգում,- եւ շղարշի ծխի միջից նայելով ծանծաղուտն ընկած էգ կետի լեշին՝ քնած կնոջ՝ Լետիսիա Նասարենոյի մարմնին, նա երգեց. «Դե, ել, Լետիսիա, իմ սրտում արդեն առավոտ է: Կյանքը շարունակվում է: Ծովն իր ափերի մեջ է»:

Կյանքը շարունակվում էր, շարունակվում էր Լեոնիսիա Նասարենոյի զարմանալի պատմությունը, միակ այն կնոջ, որը նրանից ստացավ ամեն ինչ, բացի փուչ մի բանից՝ նրա հետ միեւնույն անկողնում արթնանալու իրավունքից: Որովհետեւ ամեն անգամ սիրուց հագենալով, նա իր սենյակն էր քաշվում, ամուրիի իր ննջասենյակի դռան մոտ կախում վառվող լամպը, որ պետք է ծառայեր հնարավոր փախուստի դեպքում, փակվում էր երեք կողպեքով, երեք սողնակով եւ երեք շղթայով, պառկում էր բերանքսիվայր, հատակին եւ քնում մենության մեջ, հագնված, ինչպես եղել էր ամեն գիշեր՝ մինչեւ Լեոնիսիա Նասարենոն, ինչպես լինելու էր Լեոնիսիա Նասարենոյից հետո, մինչեւ մենավոր ջրահեղձի երազով գիշերը: Բայց ամեն առավոտ, կովկիթից հետո, նա վերադառնում էր Լեոնիսիայի ննջասենյակ, որտեղ գիշերային գաղանի հոտ կար, վերադառնում էր, որպեսզի կրկին կատարի Լեոնիսիայի բոլոր ցանկությունները, հագեցնի նրա ագահությունը. նվիրում էր անհաշիվ հարստություններ, անհամեմատ ավելին, քան ուներ հանգուցյալ մայրը՝ Բենդիսոն Ալվարադոն, տալիս էր նրան ավելի շատ, քան կարող էր երազել որեւէ մեկն այս աշխարհում: Սակայն հարկ էր լինում սիրաշահել ոչ միայն Լեոնիսիա Նասարենոյին, այլեւ նրա անհամար ազգականներին, որոնք խումբ-խումբ հայտնվում էին Անթիլյան անհայտ կղզիներից. բոլորն էլ տկլոր, սովից զկտացողներ էին, չունեին ոչինչ, բացի Նասարենո տոհմի պատկանելությունից. սրանց աղամարդիկ կոպիտ էին, խռլոտած, կանայք՝ աչքածակության տենդով բռնված: Լեոնիսիայի ազգականներն իրենց ձեռքն առան ապի, խմելու ջրի սուեստուրը, լկտիաբար խցկվեցին այն մարզերը, որ վազուց ի վեր կապալով տրված էին զինվորականներին, բաժանված զորատեսակների հրամանատարների միջեւ՝ նրանց որոշ նկրտումները չսփոփորելու նպատակով: Եվ ահա, հիմա, բոլոր այդ նասարենոները, փախցնելով սրանց բերանի հացը, տիրացան այլոց արտոնություններին, եւ այս ամենը, իբր, պրեզիդենտի կամքով, թեեւ այդ կամքն արտահայտել էր Լեոնիսիան, իսկ ինքը միայն համաձայնել էր: Նույն այդ օրերին, Լեոնիսիայի սնդմամբ, նա վերացրեց մահապատժի բարբարոսական եղանակը՝ չորս ձիերի օգնությամբ մարդուն մաս-մաս անելու եղանակով բարբարոսական մահապատիժը եւ փորձեց սակայն այդ

պատժաձեւը փոխարինել էլեկտրական աթոռով, որ նվեր էր ստացել երկրում օտարազգի դեսանտի գոյության տարիներին. դեսանտի հրամանատարն էր նվիրել, որպեսզի մենք էլ հաղորդակից դառնայինք սպանության քաղաքակիրթ եղանակին: Եվ ահա, նա մտավ նավահանգստի բերդի տանջարանները, սոսկումի այդ փորձասենյակները, որտեղ ամենահյուծված քաղաքական բանտարկյալները որպես փորձաճագար ընտրվեցին,- նրանց վրա պիտի մշակվեր դահին բազմած մահվան կառավարումը. այդ դահը միացված վիճակում կլանում էր քաղաքի էլեկտրական ողջ էներգիան. մենք գիտեինք մահապարտների հետ փորձի անցկացման ճիշտ ժամը, դժվար չէր իմանալը. հանկարծ մարում էր լույսը, եւ մենք, սարսափից ճզմված, անշարժանում էինք խավարում, պահպանելով լռության բոպեն նավահանգստի բոզանոցներում, խմում մի-մի բաժակ մահապատժի ենթարկվածի հոգու համար. բայց մահապատժի ենթարկվում էին մի քանի անգամ,- մենք գիտեինք, որ մահապարտներից շատերը չէին մեռնում միանգամից, կիսամեռ կախվում էին գոտիներից, ծուխ էին արձակում, ինչպես միսը կրակի վրա, խռխռացնում էին հրեշավոր ցավից, մինչեւ որ դահիճներից մեկը, էլեկտրականությամբ սպանելու երկու-երեք ապարդյուն փորձից հետո, խղճահարվում էր եւ կրակոցով վերջացնում դժբախտին,- «Ահա թե ինչպես եղավ Լետիսիա: Հանուն քեզ դատարկվեցին բանտի խցերը հանուն քեզ ես ներեցի իմ թշնամիներին ու թույլ տվեցի նրանց հայրենիք վերադառնալ»:

Զատկվա նախօրյակին նա հրամանագիր հռչակեց, որի համաձայն ոչ ոք չէր պատժվելու այլախոհության համար, որն ազդարարում էր խղճի բացարձակ ազատություն, քանզի իր աշնան եռուն օրերին նա անկեղծորեն համոզված էր, որ նույնիսկ ամենաերդվյալ թշնամիները մի փշուր երջանկության իրավունք ունեն. նման երջանկություն նա վայելում էր հունվարյան հրաշք գիշերները, Լետիսիա Նասարենոյի հետ, աշխարհում այն միակ կնոջ հետ, որն արժանացել էր պատշգամբում նրան տակի շորերով տեսնելու պատվին, Լետիսիայի հետ նա հիանում էր հանելուկային, արծաթավուն ուռենիներով, որ ծննդյան տոների առթիվ Բաբելոնի տիրակալներն էին ուղարկել եւ տնկված էին Անձրեւների այգում, հիանում էր բյուրեղապակյա անձրեւահեղեղի մեջ արեւի

ճառագայթների բեկբեկումով, թանձր տերեւների մեջ մոլորված Բեւեռային աստղով. Լեոնիսայի հետ նա անապում էր ողջ աշխարհն իր ներսում ամփոփած, մեգահերցերի թվերով համեմված ու աշխարհի մայրաքաղաքների անուններով ռապիսոնդունիչի սանդղակը եւ տարածության խեղումների, իրենց ուղեծրերով շարժվող մոլորակների սուր ծաղրական սուլոցների միջից լսում հերթական գլուխը մի ռադիովեպի, որ ամեն օր հաղորդվում էր Սանտյագո-դե-Կուբայից,- ամեն գլխի վերջը մարդու սիրտը տագնապ էր զգում. «Դոնն մինչեւ վաղն ապրեմ: Տանեմ ինչպե՞ս վերջացավ այս պատմությունը»: Քնելուց առաջ կրկնվում էր որդու դաստիարակությամբ. ծանոթացնում էր զենքի տեսակներին, սովորեցնում որը որ դեպքում է օգտագործվում,- չէ՞ որ սա միակ գիտությունն էր, որ նա տիրապետում էր հանդամանորեն: Ինչ վերաբերում է քաղաքական իմաստության դասերին, ապա նա ամեն անգամ որդուն ասում էր միեւնույն բանը. «Երբեք հրաման մի արձակիր, եթե համոզված չես, որ կկատարվի»: Նա ստիպում էր որդուն կրկնել ու կրկնել այս ձեւակերպումը, որպեսզի նա մեկընդմիշտ սերտեր, որ իշխանության գլուխ կանգնած մարդը միայն մի սխալ պիտի թույլ չտա՝ չարձակի այնպիսի հրաման, որը չի կատարվելու. անշուշտ, այս ձեւակերպումը ոչ այնքան փորձով իմաստնացած հոր, պետական հասուն գործչի ձեւակերպում էր, որքան ձեռքը կրակը խոթած, զառամ ծերունու խրատ, բայց տղան անպայման կհիշեր այդ խրատը մինչեւ մահ ու գերեզման, եթե այդքան երկար ապրեր, որովհետեւ առաջին անգամ լսել էր վեց տարեկանում, այն օրը, երբ հոր ղեկավարությամբ կրակեց ծանր թնդանոթից եւ հայրական պատգամը հիշողության մեջ կապվեց սարսափելի որոտի հետ. իսկ մենք ծանր հրանոթային այդ կրակոցը համարել էինք տարերային ահեղ աղետի սկիզբ, որովհետեւ կրակոցից հետո ասկյալի փոթորիկ սկսվեց՝ առանց անձրեւի, լայց շանթ ու որոտով. այնպես էր թնդում չարաբաղրը, ասես հրաբուխ էր արթնացել, իսկ Կոմոդորս Ռիվադավիայի կողմից փչեց հրեշավոր, բեւեռային քամի, որը շատ ավեց ծովը, իրար խառնեց ջրի բոլոր շերտերը, պոկեց գետնից ու արպես մի փեսուր տարավ թափառական կրկեսը, որ տեղ էր գրավել նավահանգստի հին, ստրկավաճառների նախկին հրապարակում. եւ մենք հետո

ցանցերով փղեր էինք որսում, սուզված ծաղրածուներ, ընձուղտներ, որ լողում էին ճոճաձողերին հենած, ճոճաձողերից նրանք կառչել էին փոթորկի առաջին պոռթկման ժամանակ եւ դրանց հետ էլ ծովը նետվել. նույն այդ կատաղի փոթորիկը քիչ մնաց ծովի հատակը տաներ բանանակիր այն նավը, որի մեջ էր երիտասարդ բանաստեղծ Ֆելիքս Ռուբեն Գարսիա Սարմյենտոն, որը հետագայում հռչակվեց Ռուբեն Դարիո անունով,- փոթորկից մեկ ժամ անց նավը մտավ մեր նավահանգիստ: Կեսօրվա ժամը չորսն էր, փոթորկից թարմացած օդում աշխուժացել էին մժղուկները, ծովը խաղաղվել էր, եւ նորին գերազանցությունը ննջասենյակի լուսամուտից դուրս նայելով՝ տեսավ սաստիկ քամուց ճմրթված մի ճերմակ շոգենավ, որը, աջի վրա թեք ընկած, դանդաղ սահում էր ծովախորշի ոսկեգույն հարթության վրայով. նավապետի կամրջակին կանգնել էր նավապետն ու անձամբ ղեկավարում էր նավի մերձեցումը նավամատույցին, իսկ կողքին, մուգ մահուդից բաճկոնակ եւ երկքղանյք ժիլետ հագած, մի ուղեւոր կար. գեներալն այդ մարդու մասին ոչինչ չլսեց մինչեւ հաջորդ կիրակի, իսկ կիրակի օրը Լեոնիսիա Նասարենոն ամուսնուն դիմեց անհրեւակայելի խնդրանքով. «Ուզում եմ այսօր Ազգային թատրոն գնանք՝ պոեզիայի երեկո է»: Եվ նա համաձայնեց: Այդ նույն երեկո մենք, ոտքի վրա կանգնած, պրեզիդենտին սպասեցինք երեք ժամ, դահլիճի հեղձուկում քրտինքի մեջ լող տալով, տատապելով տոնական հագուստների մեջ, որ մեզ հարկադրեցին հագնել վերջին պահին: Բայց ահա, վերջապես, նվագեցին ազգային հիմնը, իսկ մենք ծափահարելով շրջվեցինք դեպի կառավարական օթյակ, որտեղ հայտնվեց կուսանոցի հաստիկ նախկին միանձնուհին՝ գլխին զանգուր փետուրներով գլխարկ, իսկ դիպակե շրջազգեստի վրա՝ սեւ աղվեսենիներ գցած, չպատասխանելով ողջույններին, նա նստեց գեներալական համազգեստով որդու կողքին, իսկ տղան ծալեց շուշանին շատ նման մետաքսյա ձեռնոցները եւ, ի պատասխան ծափահարությունների, թափահարեց դրանք,- նրա մոր կարծիքով՝ հին ժամանակներում ճիշտ այդկերպ էին ամբոխին ողջունում արքայազները. ուրիշ ոչ ոք չկար կառավարական օթյակում, բայց մենք համոզված էինք, որ նա այնտեղ էր, մենք զգում էինք նրա աննկատելի ներկայությունը, մենք զգում էինք պոեզիայի խռովա-

բար կրքերից մեր հոգիների խաղաղությունը պահպանող մարդու ներկայությունը. չէ՞ որ նա էր նախանշել մեր սիրո ուժը, մեր զգացմունքների խորությունը եւ, նույնիսկ, մեր մահվան ժամկետները: Այո, նա այնտեղ էր, օթյակի չլուսավորված անկյունում, բոլորից աննկատ, բանաստեղծից աննկատ. բանաստեղծը նրա աչքին որոտանման ձայնով հզոր մինոտավրոս թվաց.- բանաստեղծի ձայնի կերկերոցը տարածվում էր ինչպես բաց ծովում, այդ կերկերոցը նորին գերագանցությանը ստիպեց ակամա համբառնալ թե այդ օթյակից, թե դահլիճից եւ թե երկրային այդ պահից, համբառնալ վեր, վեր, դեպի այնտեղ, որտեղ ոսկյա եղջյուրներ էին փչում, որտեղ դրանց արծաթյա հնչյունների լուսավոր շղթերի մեջ նշմարվում էին Մարսի ու Վեներայի հաղթակամարները, փառքի հաղթակամարները,- «Ոչ ձեր փառքի, իմ գեներալ»: Նա տեսավ այնտեղ հերոս դյուցազուններին, մկանուտ դրոշակակիրներին, տեսավ գամփռ, սեւ շներ, հզոր, երկաթյա սմբակներով մարտական ձիեր, կոպիտ փետրափնջերով սաղավարտները գլխներին սպետների նիզակներ ու տապարատեգեր, տեսավ, թե ինչպես այդ սպետները խլեցին տարօրինակ, օտար դրոշը,- «Գրավեցին ոչ ի փառս ձեր հզորության, իմ գեներալ»: Նա տեսավ, հանուն հայրենիքի հավերժ փառքի ու անմահության, կարմիր սմոսվա արեւներին ու սառցե ամեռվա ձյուներին, քամիներին, գիշերներին, սառնամանիքին, ատելությանը, մահվանը մարտահրավեր նետած կատաղի պատանիներ, նրանց հայրենիքն ավելի վեհաշուք էր ու փառավոր, քան այն երեւակայականը, որ հայտնվում էր տենդախտի ցնորքներում, քաղաքացիական կռիվների թոհուբոհում, երբ ինքը ոտաբոբիկ մի զինվոր էր. նա իրեն ոչնչություն զգաց ու խղճալ՝ լսելով ծափահարությունների աներեւակայելի պայթյունը եւ իր խավար անկյունում միանալով նրանց, մտածեց. «Մայր իմ, Ինդիսին Ալվարադո, այ, սա է իսկական հաղթանակը: Սրա համեմատությամբ իմ պատվին կազմակերպված բոլոր ցույցերը ոչք են»: Նա իրեն բռնաբարված էր զգում, ընկճված էր հեղձուկից ու սանկոնամ կոչվող երկարատեւ վնասակար մժղուկներից, նրան վշտացնում էին ոսկեզօծ ծեփազարդերով ու թորչոմած թավիշով պատած օթյակի այուները.- «Գրողը տանի ինչպե՞ս է պատահել որ այս հնդկացին կարողացել է նման հրաշալիք գրել ճիշտ

այն ձեռքով որով քամակն է սրբում»: Մինչեւ հոգու խորքը ցնցված իրեն ցայսօր անհասանելի պոեզիայից, նա գերված փղի նման չէր հանդարտվում եւ մեկ ետ ու առաջ էր քայլում՝ ջանալով վիթխարի՝ իր ոտքերով հանդիսավոր ու վսեմ տողերի մեջ մտնել, մեկ էլ ննջում՝ հնչեղ ու կրքոտ բազմաձայն այն օրհներգից համայված, որ Լետիսիա Նասարենոն արտասանեց նրա համար պալատի ներքնաբակում, վիթխարի սեյբայի ճյուղերից հյուսված հաղթակամարի ստվերի ներքո. նա փորձեց հիշողությամբ կարդալ ողջ պոեմը կաթնաֆերմայի թարմ ու տաք թրիքների օլիմպոսի վրա, երբ հանկարծ գետինը ցնցվեց ուժանակի պայթյունից. ժամանակից շուտ էր պայթել կառասրահում կանգնած պրեզիդենտական լիմուզինի ետնամասում դրված ուժանակը,- «Հրեշավոր պայթյուն էր, իմ դեներալ: Մի այնպիսի հզորությամբ, որ շատ ամիսներ անց մենք քաղաքի տարբեր թաղամասերում դեռ գտնում էինք զրահի ծռմռված կտորներ»: Այդ լիմուզինով պիտի Լետիսիա Նասարենոն որդու հետ չուկա գնար՝ թալանի, ինչպես վարվում էր ամեն չորեքշաբթի: «Այնպես որ մահափորձը նրա վրա էր նախապատրաստվել, իմ դեներալ»: Եվ հիմա միայն նա խփեց իր ճակատին. «Դրողը տանի, ո՞նց իմ աչքսթող արել»: Իսկապես՝ ո՞ւր էր չքվել նրա առասպելական զգոնությունը: Արդեն մի քանի ամիս շարունակ արտաքնոցի պատերին գրված ուղերձները հղված էին ոչ թե իրեն եւ ոչ էլ քաղաքացիական նախարարներից որեւէ մեկին, այլ լկտի այդ նասարենոներին, որոնք իրենց ատամները խրել էին գեներալների, աշխարհիկ իշխանությունների շռայլ ողորմածությունների ապրող եկեղեցական հայրերի շահերի մեջ: Ճիշտ է, նման գրությունները, ինչպես ժամանակին վիրավորական բառերով մոր սրբության դեմ գրածները, նա համարում էր ժամանակի ընթացքում ամենասովորական հայհոյանքի, թութակային բառերի, ծաղրանքի վերածված անվնաս մի բան, որ ծնվում էին արտաքնոցի տաքության մեջ, անձնական վիրավորանքներից. երբեմն այդ վիրավորանքները փողոց էին դուրս գալիս, հաճախ՝ իր օժանդակությամբ. նա ձգտում էր խայտառակ այս կամ այն պատմության դժգոհությունը լիցքաթափել տալ ճչոցներով, բայց մոլեգնել այնպես, որ երկու կվինտալ՝ ուժանա՞կ գնես... Եվ որտե՞ղ:

* Կվինտալ - 46 կգ:

Հենց Իշխանության տաճը: Ինչպե՞ս է դա պատահել, ինչպե՞ս է թույլ տվել պոեզիայի շեփորների հնչյուններով հմայել իրեն այնպես, որ դավանանել սկսի նրբագույն հոտառությունը՝ վագր-մարդակերի հոտառությունը: Այդ ինչպե՞ս նա ժամանակին չկարողացավ ճանաչել վաղեմի ծանոթի՝ վտանգի սուր հոտը: Այս ի՞նչ բան է: Նա շտապ իր մոտ հրավիրեց հրամանատարական կազմին՝ տասնչորս դողդողացող բարձրաստիճան սպաներին. ուրիշի կամքի, այն էլ միջնորդավորված կամքի կատարման այսքան տարիների ծառայության մեջ նրանք երկու քայլ հեռավորության վրա կրկին տեսան անհասանելի ծերին, որի իրական մարմնական գոյությունը ամենապարզն էր նրա բոլոր հանելուկներից,- «Նա ընդունեց մեզ նիստերի դահլիճում, իր գահին՝ պրեսիդենտական բազկաթոռին նստած, շարքային զինվորի համազգեստով. նրանից, ինչպես ժանտաքիսից, մեզի հոտ էր փչում, նա չափազանց նուրբ ոսկյա շրջանակով ակնոց էր դրել,- նույնիսկ իր ամենավերջին դիմանկարներում նա առանց այդ ակնոցի էր պատկերված, նա անհուսալիորեն ծեր էր ու մեզանից անսահման հեռու. նա հանեց մետաքսյա ձեռնոցները, եւ մենք տեսանք, որ նրա ձեռքերը հին զինվորականի ձեռքեր չէին, կանացի էին ու ավելի թարմ, ասես գթասիրտ մարդու ձեռքեր լինեին. մնացած ամեն ինչը մագաղաթե էր ու մռայլ. որքան ուշադիր էինք նրան նայում, այնքան պարզորոշ էինք տեսնում, որ նրա ծանրացած մարմնում կյանքի վերջին շունչն է մնացել, բայց դա անսանձ տիրակալի, բացարձակ, անմատնելի իշխանության շունչն էր,- ինքը, նույնիսկ, դժվարանում էր զսպել իր ներսի հրեշին, ինչպես դժվարանում են սանձել վայրի ձիուն. նա ոչ մի բառ չասաց, գլուխն էլ չշարժեց, երբ մենք հերթականությամբ պատիվ առանք մեր դերագույն հրամանատարի առջեւ, իսկ երբ նստոտեցինք նրա դիմաց, կիսաշրջան կազմած բազկաթոռներին, նա հանեց ակնոցը եւ սկսեց նայել մեզ իր թափանցող աչքերի քննող հայացքով. նա տեսնում էր մեր ետին մտքերի բոլոր որջերը, տեսնում էր, թե ինչպես են մեր ետին մտքերը կոմանդրեխաների* նման ետ-ետ սողում դեպի իրենց մութ ապաստարանները, բայց եւ մերկացնում էր դրանց, մեկը մյուսի ետեւից, անխնա, ամեն մեկիս վրա վատնելով ճիշտ այնքան ժամա-

* Կոմանդրեխա - աքիս:

նակ, որքան պետք էր նրան պարզելու՝ թե ով որքան է փոխվել մոռացության մշուշով պատած այն երեկոյից, երբ վերին ներշնչանքով, մասի-թեթեւակի շարժումով նա մեզ ամենաբարձր կոչումները շնորհեց»:

Որքան երկար էր նա հայացքով ծակում նրանց, այնքան ավելի էր համոզվում, որ մահափորձի կազմակերպիչները տասնչորս այս գաղտնի թշնամիների մեջ են, բայց բոլորի դիմաց իրեն այնպես մենակ ու անպաշտպան էր զգում, որ իգուանի նման աչքը կկոցելով, գլուխը բարձրացրեց ու միասնության կոչ արեց,- «Այժմ, ինչպես երբեք, մեզ անհրաժեշտ է միասնություն եւ համախմբվածություն, քանզի խոսքը գնում է հայրենիքի բարօրության եւ զինված ուժերի պատվի շուրջը»: Նա խորհուրդ տվեց ցուցաբերել խոհեմություն եւ ձեռնարկել եռանդուն միջոցներ՝ իրենց վրա դրված պատասխանատուությունը իրագործելու. համար. անհրաժեշտ էր գտնել մահափորձի կազմակերպիչներին ու հանձնել ռազմական ատյանի ձեռքը. «Այսքանը, սենյորներ»,- ավարտեց նա, հաստատ համոզմունքով, որ մահափորձի կազմակերպիչը նրանց մեջ է, թերեւս, բոլորն էլ կազմակերպիչներ են: Նա սրտում խայթոց զգաց, հոգեկան սպանիչ վերք ստացավ, երբ հանկարծ գիտակցեց, որ Լետիսիա Նասարենոյի կյանքն այսուհետեւ ոչ թե աստծո ձեռքին է, այլ ամբողջովին կախված է իր իմաստությունից. կկարողանա՞, արդյոք, փրկել նրան, գլխավերեւում կախված սպառնալիքից, այն անխուսափելիից, որ վաղ թե ուշ կատարվելու է, գրողը տանի: Նա հարկադրեց Լետիսիային հրաժարվել հասարակական միջոցառումներին մասնակցելուց, ստիպեց նրա առավել ազահ ազգականներին փասափուսաները հավաքել, հեռանալ բարձրագույն հրամկազմի շահախնդրություններից. ամենահասկացողներին նա հյուպատոսներ դարձրեց, ամենալկտիները շուկայի կեղտաջրերով ջրանցքի երեսը ելան տարուլյայի* թփուտների մեջ, երկար տարիների ընդմիջումից հետո նա հանկարծ հայտնվեց նախարարների խորհրդի նիստերին եւ գրավեց թափուր մնացած իր բազկաթոռը՝ համակված այն վճռականությամբ, որ հոգեւորականությանը թույլ չի տա թափանցել պետական գործերի մեջ,- «Որպեսզի փրկեմ քեզ, ո

* Տարուլյա - վայրի թփուտ:

թշնամիներից, Լետիսիա»: Այնուհետեւ նա կրկին շոշափեց բարձրաստիճան հրամկազմի տրամադրությունը եւ համոզվեց, որ վերջին հանդիպումից հետո յոթ հրամանատարներ իր նկատմամբ լոյալ վերաբերմունք ունեն, իսկ ինչ վերաբերում էր պաշտպանության նախարարին, ապա նա իր վաղեմի բարեկամն էր. այսպիսով, անվստահելի էին վեց զորահրամանատար, վեց հանելուկ էր մնում, եւ այդ հանելուկները անսահմանորեն երկարաձգում էին նրա գիշերները. մղձավանջային այն նախազգացումը, թե Լետիսիա Նասարենոն արդեն մահվան կնիք է կրում, նրան հանգիստ չէր տալիս, նրան թվում էր, թե Լետիսիային սպանում են իր աչքերի առաջ, սպանում են՝ անսալով նախազգուշական իր բոլոր միջոցառումները. նա փորձել էր տալիս բոլոր կերակուրները, հատկապես այն օրից, երբ հացի մեջ ձկան փուշ հայտնաբերվեց, ամեն օր ստուգվում էր Լետիսիայի սենյակների օդի բաղադրությունը, որովհետեւ նա վախենում էր, որ մահացու թույնը կարող էին լցնել ֆլիտի* սրվակը, նա սարսափեց, երբ ճաշի ժամին Լետիսիայի դեմքին դունատություն նկատեց, երբ սիրո վայելքի մեջ մարեց Լետիսիայի ձայնը, նրան հետամտում էր այն միտքը, թե Լետիսիայի խմելիք ջուրը կարող են վարակել դեղին տենդի մանրէներով, թե Լետիսիայի աչքի կաթիլների մեջ կարող են արջասպ խառնել, թշնամական մահացու վտանգներով խարդավանքների հնարավորությունը այդ օրերին ամեն պահ մռայլում էր նրա գոյությունը. նա կեսգիշերին վեր էր թռչում քնից, սարսափած դաժան տեսիլներից, որ նրան իրականություն էին թվում. իբր, Լետիսիա Նասարենոն, ահա, այս վայրկյանին, արյունաքամ է լինում հնդկացի կախարդների աչքով տալուց: Նա գրեթե ցնորվել էր հարյուրավոր կեղծ ու իրական, Լետիսիային սպառնացող վտանգներից, եւ արգելեց նրան դուրս գալ պալատից, առանց ամենակատաղի գվարդիականների ուղեկցության. սրանց արտոնված էր կրակել առաջին իսկ կասկած հարուցողի վրա՝ առանց զգուշացման: Իսկ Լետիսիան պալատից դուրս էր գալիս ամեն չորեքշաբթի եւ նա լուսամուտի մոտ կանգնած՝ նայում էր, թե ինչպես է կինը որդու հետ զրահապատ նոր ինքնաշարժը նստում, ջանում էր ներսում խեղդել չար կանխազգացումները, ձեռքերով. փորձանքից հեռու մնալու,

* Ֆլիտ - միջնադարյան դեղամիջոց:

Հմայանքի շարժումներ էր հորինում եւ աղոթում քթի տակ. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո պահպանիր նրանց: Շեղիր նրա կրծքին ուղղված գնդակը հեռացրու թույնով բաժակը դաղտնին հայտնի դարձրու»: Նա մի պահ էլ դադար չուներ, քանի դեռ դե Արմաս հրապարակից չէր լսվում Լեոնսիային ուղեկցող պատվո պահակախմբի ազդանշանը, քանի դեռ Լեոնսիան եւ որդին չէին հայտնվում փարոսի առավոտյան փայլերով լուսավորված եռնաբակի արահետին: Լեոնսիան վերադառնում էր երջանիկ, հուզված, զոհ ձայնով բղավում պահակախմբի զինվորների վրա, որոնք մեքենայից դուրս էին բերում դրասանգներ՝ ծննդյան գիշերվա համար, որի մոտալուտ գալուստը փառաբանում էին փողոցներում կախված ցուցանակներն ու հրավառության աստղերը,- ինքն էր հրամայել վաղօրոք տոնականորեն զարդարել քաղաքը, որպեսզի այդկերպ գոնե դիմակ հագցներ իր անհանդստության երեսին. նա դիմավորում էր Լեոնսիային սանդուղքի վրա, հրճվելով կնոջ ողջությամբ, ներշնչելով նրա սեւ ազվեսենիների նավթալինած հոտը, նրա քրտնքի թթվահոտը, նրա խղճուկ մազերի հոտը. նա օգնում էր կնոջը ննջասենյակ տանել հերթական ավարը, չկարողանալով խեղդել ներսում տարօրինակ այն համոզվածությունը, թե երջանկության վերջին փշուրներն է հավաքում, թե իր այդ երջանկությունը դատապարտված է կործանման,- ավելի լավ չէ՞, ուրեմն, առհասարակ չիմանալ, թե ինչ բան է երջանկությունը: Հուսահատությունը համակում էր նրան առավել ուժեղ, երբ հանգամանորեն կշռադատում էր դժբախտությունը կանխելու քայլերը, նրա բոլոր հմայանքները կատարվելիքն ավելի անխուսափելի էին դարձնում, աստծո ամեն օրը մոտեցնում էր իր կյանքի սոսկալի այն չորեքշաբթին, երբ մշտական վախից ու Լեոնսիայի ճակատագրի համար հուզումներից թուլացած, ի վերջո, դաժան հանգստությամբ մտածեց. «Ինչ լինելու է, թող լինի, գրողը դրանց տանի: Եվ որքան շուտ, այնքան լավ»: Նա դեռ չէր հասցրել գիտակցել մտքում ասածի իմաստը, երբ կատարվեց կատարվելիքը. առանձնասենյակ խուժեցին երկու համհարզ եւ գեկուցեցին, որ Լեոնսիա Նասարենոյին եւ որդուն պատանոտել ու խժռել են շուկայի վայրենացած շները: «Նրանք խժռեցին նրանց ողջ-ողջ, իմ դեներալ: Բայց դրանք մեզ ծանոթ փողոցային շներից չեն, այլ մեկ

անծանոթ գամփռներ՝ կատաղի, դեղին աչքերով եւ հարթ, շնաձկան մորթով: Ինչ-որ մեկը դրանց քսի է տվել Լետիսիա Նասարենոյի սեւ աղվեսենիների վրա: Վախնուն շուն էին, իմ գեներալ, վախնուն բացարձակապես իրար նման շներ: Ոչ մեկը չհասցրեց ուշքի գալ՝ այնքան արագ դուրս պրծան բանջարեղենի վաճառասեղանի ետեւից ու հարձակվեցին Լետիսիայի ու տղայի վրա: Կրակել չէր լինի, որովհետեւ վախենում էինք նրանց եւ ոչ թե շներին սպանել, իմ գեներալ»:

Դա մի դիվային, արյունալի բաքոսատոն էր, հրեշավոր մահվան հողմապտույտ, շնային մարմինների կծիկ, որից շատ կարճ ակնթարթով, աղերսալից դուրս էին պարզվում մեկ Լետիսիայի, մեկ տղայի ձեռքերը, բայց շատ արագորեն երկու զոհն էլ վերածվեցին ագահորեն խժռվող մսապատառների, եւ այս ամենը կատարվեց շուկայական ամբոխի աչքի առաջ, հարյուրավոր մարդկանց աչքի առաջ. ոմանց դեմքը այլայլվել էր սարսափից, ոմանք չէին թաքցնում չարախնդությունը, իսկ ինչ-որ մեկը լաց եղավ խղճահարությունից, բայց, ահա, վերջացավ ամեն ինչ եւ բոլորը տեսան, որ գետնին ընկած է Լետիսիա Նասարենոյի փետրե մանուշակներով զարդարված գլխարկը. սարսափից քարացած, արյունոտված, կուրքերի նման կանաչի վաճառող կանայք անձայն շշնջացին. «Աստված իմ. այս ամենը չէր կատարվի, եթե գեներալը չկամենար»: Ահա, այսպես պատահեց դեպքը՝ ի խայտառակություն պրեզիդենտական գվարդիայի, որին հաջողվեց փրկել միայն ճերմակության չափ մերկացած ոսկորները,- հավաքել էին արյունոտված բանջարեղենի միջից,- «Միայն այս սպիտակ ոսկորներն են մնացել, իմ գեներալ»: Ճիշտ է, ոսկորներից բացի գտնվեցին ու հավաքվեցին նաեւ տղայի մնդալները, նրա խաղաքարտե թագավորի թուրը, Լետիսիա Նասարենոյի սեկե կոշիկները, որ չգիտես ինչու ջրի երես ելան ծովախորշում, շուկայից մի ամբողջ մղոն հեռավորության վրա, գտնվեցին գունավոր ապակուց ուլունքներ եւ օղեզրահի կտորից պատրաստված մի քսակ,- «Այս իրերն, ահա, ձեզ ենք հանձնում, իմ գեներալ, ինչպես նաեւ այս երեք բանալին, սեւացած ոսկու նշանի այս մատանին եւ հիսուն սենտավո՝ հինգ մետաղադրամ տասական սենտավո: Ահա, հաշվեք, խնդրում ենք: Ուրիշ ոչինչ չի մնացել նրանցից»: Նրա համար բացարձակապես

նշանակություն չէր ունենա, թե ինչ է մնացել հարազատներից, եթե կարողանար կանխատեսել, որ ընդամենը մի քանի տարի անց իսպառ մոռանալու էր չարաբաստիկ շորեքշաբթի օրվա պատահարը, բայց հիմա նա հեկեկում էր կատաղությունից ու չքնեց ողջ գիշերը, տառապելով որսված, շղթայված մարդակեր շների ոռնոցից. ոչ մի կերպ նա չէր կարողանում վճռել՝ ինչպես վարվեն այդ շների հետ, որովհետեւ չփոթեցրել էր այն միտքը, թե շների մահապատիժը Լետիսիայի եւ որդու կրկնակի սպանությունն էր լինելու. չէ՞ որ նրանք շների փորում էին. նա հրամայեց քարուքանդ անել բանջարեղենի շուկայի երկաթյա տաղավարը եւ տեղում մագնոլիայի այգի տնկել, լորեր աճեցնել, իսկ այգու կենտրոնում վեր խոյացնել մարմարյա խաչ. այս խաչը փարոսից բարձր պիտի լիներ եւ շողարձակվեր ավելի պայծառ, որպեսզի ապագա սերունդների հիշողության մեջ հավերժանար պատմական այն կինը, որին գեներալն ավելի վաղ մոռացավ, քան կհասցնեին քանդել հուշարձանը, որ պայթեցրին մի գիշեր եւ ոչ մեկին չվրդովեցրեց պայթյունը, իսկ մագնոլիաները խոզերին կեր դարձան, այգին վերածվեց կեղտաջրերի գարշահոտ լճակի, բայց գեներալը երբեք չտեսավ այդ լճակը ոչ միայն այն պատճառով, որ անձնական վարորդին հրահանգել էր շրջանցել բանջարեղենի նախկին շուկան, եթե շրջանցումը, նույնիսկ, շուրջերկրյա ճամփորդության երկարությունն ունենար, այլ որովհետեւ՝ քաղաքում չէր հայտնվում այն օրերից սկսած, երբ իր բոլոր նախա-բարությունները տեղափոխեց արեւոտ ապակուց պատրաստված շենքը եւ մի քանի սպասուհիների հետ պալատում մնաց մեն-մենակ. պալատը դադարեց պալատի նման լինելուց, քանի որ նա հրամայեց ջնջել Լետիսիա Նասարենոյի թագավորական նկրտումների բոլոր հետքերը. նա մեն-մենակ շրջում էր ամայի միջանցքներով ու դատարկ սենյակներով, աննպատակ, անգործ, ժամանակ առ ժամանակ միայն չնչին ցուցումներ տալով հրամկազմին կամ մասնակցում նախարարների խորհրդի նիստերին, երբ որեւէ կնճռոտ հարց էր լուծվում եւ վերջնական վճռի համար պրեզիդենտի կամքն էր անհրաժեշտ լինում. նա հարկադրված էր նաեւ ընդունել չարանենգ դեսպան Ուիլսոնին, որը տեղավորվելով սեյբայի ստվերի տակ, մնում էր երկար, հյուրասիրում Բալտիմորյան քաղցրավենիքով, մերկ կանանց լուսանկարներով ամսագրեր

ցույց տալիս, հեռանալուց առաջ ջանալով համոզել նրան արտաքին պարտքերի վիթխարի տոկոսների մարման դիմաց վճարել երկրի սահմանային ջրերը. նա դեսպանին թույլ էր տալիս խոսել մինչեւ վերջ, մեկ լսելով, մեկ չլսելով՝ նայած չահին,- երբ դեսպանի բառահրաբուխը դառնում էր ծայրաստիճան ձանձրացնող, գրուցակիցն այդ ողջ հեղեղն ականջի կողքով էր բաց թողնում եւ լսում կանաչ ծառին նստած չալիկ թռչնակի մասին երգը, որ երգում էր պալատից ոչ հեռու գտնվող օրիորդաց դպրոցի երգչախումբը. իջնող մթնշաղի հետ նա ետնաբակով ճանապարհ էր գցում դեսպանին, աշխատելով բացատրել, որ թանկագին հյուրը կարող է պահանջել բացարձակապես ամեն ինչ, բացառությամբ ծովի,- «Ինչպե՞ս կարող եմ մնալ առանց լուսամուտիս տակ ծփացող ծովի: Ի՞նչ եմ անելու մենակ առանց ծովի, հսկայական այս տանը: Ի՞նչ կպատահի ինձ, եթե վաղը ես չտեսնեմ արեւամուտի մի պահի բոցավառվող ճահճի նմանվող ծովը: Ինչպե՞ս եմ ապրելու գեկտոմբերյան այն քամիների բացակայությամբ, որոնք առանց փարոսի կանաչ փայլերի էլ խուժում են ջարդված լուսամուտներից ներս. ես չէ՞ որ լքել եմ իմ սարահարթի մշուշները եւ տենդախտից շնչահեղձ լինելով՝ խրվել քաղաքացիական կռիվների քուրան ոչ թե հայրենասիրական զգացմունքներից տոգորված, ինչպես գրված է կենսագրական բոլոր բառարաններում, եւ ոչ էլ արկածախնդրական նկատառումներով, ինչպես պնդում են ոմանք, էլ չեմ խոսում ֆեդերալիստական գաղափարներից, եւ թող սուրբ հողը թեթեւ լինի դրանց վրա, այլ բացարձակապես ծովը տեսնելու համար: Մնացած ամեն ինչը տանձի պոչ են, իմ թանկագին Ուլիսոն, այնպես որ հարկ կլինի մի այլ բան մտածել»: Եվ նա, թեթեւակի թփթփացնելով դեսպանի ուսին, հրաժեշտ էր տալիս: Ճանապարհ գցելով դեսպանին, նա մտնում էր իր ապաստարանը, վառում լույսերը նախկին գերատեսչությունների դատարկ սենյակներում, եւ մի երեկո հանկարծ միջանցքում մոլորված կով տեսավ. նա վռնդեց կովին մինչեւ սանդուղք եւ ծածկված ուղեգորգի մեջ սմբակներով խճճված կենդանին թավալգլոր ցած ընկավ աստիճաններով ու փշրեց գանգը՝ ի ուրախություն քաղցած բորոտների, որոնք իսկույն վրա պրծան լեշը մաշկելու,- բոլոր բորոտները, կսթված ահարները եւ կույրերը վերադարձել էին Լեսի-

սիա Նասարենոյի մահից հետո եւ կրկին բնակվում էին այգում, հուռացած վարդի թփերի մեջ, կրկին մի պտղունց բուժիչ աղ էին խնդրում, աստղոտ գիշերներին երգեր էին ասում, եւ նա նրանց հետ երգում էր հեռավոր ու փառավոր ժամանակների երգը. «Սուսաննա, մոտս արի, Սուսաննա». կեսօրվա ժամը հինգին կովանոցի լուսամուտից նա նայում էր դպրոցից տուն դարձող, կապույտ գոգնոցներով, գուլպաներով, երկար ծամերով աղջիկներին եւ, տոփանքից մարելով, նրանց իր կողմն էր գրավում լուսամուտի երկաթյա ճաղերի արանքից խաղացնելով ձեռնոցի լաթե մատները. «Աղջիկ, այ աղջիկ, մոտ արի, թույլ տուր քեզ կսմթեմ». «Օ, մայր իմ անուշիկ, մենք փախչում էինք նրանից, ինչպես թոքախտավորի աչքերով ուրվականից». իսկ նա տեսնելով նրանց փախուստը, փլվում էր, մտածում. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո ինչ ջահել են այս ժամանակների աղջիկները». Նրան ուրիշ ոչինչ չէր մնում անելու, քան իր վրա ծիծաղելը, իրեն անպետք համարելը, բայց երբ անձնական բուժակը, առողջապահության նախարարը, որին միշտ ճաշի էր հրավիրում, վճռեց չսահմանափակվել, աչքերի զննությամբ, զարկերակի ստուգմամբ եւ ծերունական կարծրախտի դեմ դեղ առաջարկեց, որպեսզի խցանի նրա հիշողության արտահոսքի անոթները, նա իր բուժակին շատ անհարմար տեղեր ուղարկեց,- «Բա ես դեղ խմո՞ղ եմ: Ես մի մարդ եմ, որը բացի տենդախտից, այն էլ քաղաքացիական կռիվների ժամանակ, երբեք չի հիվանդացել»:

Հիմա նա մենակ էր ճաշում՝ ողջ աշխարհից կտրված, թիկունք արած ողջ լույս աշխարհին,- բազմագիտակ գեսպան Տեյրիկենդը նրան հուշեց, որ այդպերպ ճաշում են Մարոկոյի թագավորները. նա ճաշում էր, ջանալով նստել ուղիղ, բարձր պահած գլխով, պատառաքաղը ձախ ձեռքով էր բռնում, դանակը՝ աջով. հանդամանորեն ծամում էր ուտելիքը՝ հավատարիմ մոռացված դաստիարակչուհու խիստ կանոններին, այնուհետեւ շրջում էր ողջ պալատը՝ գտնելու այն թաքստոցները, որտեղ պահում էր մեղրով պուլիկները, բայց գտնելով այս կամ այն թաքստոցը, մի երկու ժամ հետո մոռանում էր տեղը, նոր որոնումներ ձեռնարկում եւ ընթացքում, սիզարետի մնացուկի նման ճեղքերը խլված, խողովակաձեւ ոլորված թղթի շերտիկներ էր գտնում, որ ժամանակին գրասենյա-

կային մատյանների լուսանցքն էին կազմում,- վաղուց, շատ վաղուց, մի այլ ժամանակաշրջանում նա կտրում էր այդ լուսանցքները, որպեսզի դրանց վրա դրեր այն ամենը, ինչը չէր կարող հիշել տարիներ անց: «Վաղը երեքշաբթի է»,- գրված էր շերտիկներից մեկի վրա, իսկ մյուսի վրա նա կարդաց. «Քո ճերմակ թաշկինակին կարմիր թելով սկզբնատառեր են ասեղնագործված, բայց դրանք քո անվան տառերը չեն, իմ տիրակալ»,- նա ոչինչ չհասկացավ եւ զարմացած կարդաց մյուս շերտիկը. «Իմ հոգու Լետիսիա Նասարենո, տես, թե ինչ եմ դարձել առանց քեզ»,- «Լետիսիա Նասարենո».- այս անունը հանդիպում էր գրեթե բոլոր շերտիկներում, եւ նա ոչ մի կերպ գլխի չէր ընկնում, թե ով է եղել իր ետեւից գրավոր այսքան հառաչանք թողած այդ դժբախտը,- «Գրողը տանի, իսկ ինչո՞ւ է իմ ձեռագրով գրված»: Այո, իր ձեռագիրն էր, ձախլիկի անկրկնելի իր ձեռագիրը, որով նա ժամանակին նախշում էր պեռքարանի պատերը, գրում ինքն իրեն ոգեւորելու համար. «Կեցցե գեներալը»: Նա արդեն չէր բարկանում իր վրա, որ փսլնքոտի մեկն է դարձել, իջել է հետեւակային, ծովային, օդային զորամասերի ուղածդ զինվորականի մակարդակից, որ փսլինք է թափում կուսանոցի ինչ-որ միանձնուհու համար, որից միայն անունն է մնացել՝ այն էլ մատիտով գրոտած թղթի նեղ շերտիկների վրա. նա պարզապես չէր հիշում, թե ինչ էր եղել չարաբաստիկ չորեքշաբթիից առաջ եւ հետո, սկսած այն օրից, երբ հրաժարվեց ձեռք տալ Լետիսիայի եւ որդու իրերը, որ գրասեղանին էին դրել համհարզները. մի այլ կողմ նայելով՝ նա հրամայել էր. «Տարեք այդ կոշիկները, այդ մեդալները, տարեք բոլորը, ինչ հիշեցնում է հանգուցյալներին»: Եվ բոլոր իրերը տարան Լետիսիայի ննջասենյակ, որտեղ անցել էին նրա սիրո խենթ սիեստաները,- «Մեխեք այնտեղի բոլոր դռներն ու պատուհանները, գրողը տանի, եւ չհամարձակվեք ներս մտնել, եթե նույնիսկ ես հրամայեմ»: Այս հրամանն արձակելով, նա երկար ամիսներ կծկվել էր սարսափի դողէրոցքի մեջ, լսելով Լետիսիային ու որդուն խժռած չղթայակապ շների ոռնոցները, բայց սիրտ չէր անում դրանց սպանդանոց քշելու հրահանգ տալ, որովհետեւ մտածում էր, որ շներին տրված ցանկացածդ պատիժը ցավ է պատճառելու թոնկագին հանգուցյալներին. նա ճոճն էր խրվում, փորձելով մոռանալ, ջանալով մա-

րել իր կատաղությունը, որովհետեւ գիտեր, թե ովքեր են արյունակիցների դահիճները. իր տանը տեսնելով մարդասպաններին, նա նվաստացում էր ապրում, բայց այդ օրերին ոչինչ չէր կարող անել եւ հարկադրված էր համբերել, քանզի իշխանությունը չէր բավարարում դրանց վիզը ոլորելու համար. նա հրաժարվեց հուղարկավորման արարողությունից, արգելեց ցավակցական այցելությունները, սուգ չհայտարարեց,- սպասում էր ժամին, օրորվում չարության ճոճում, վիթխարի սեյբայի ստվերի տակ. հենց այստեղ, սեյբայի ստվերի տակ վերջին հավատարիմ բարեկամը, արտահայտելով բարձրաստիճան ողջ հրամկազմի կարծիքը, ասաց, թե հրամկազմը, իբր, հպարտանում է այն արժանապատվությամբ եւ զսպվածությամբ, որով ժողովուրդը կրում է այս սոսկալի ողբերգությունը. ամենուր խաղաղություն է ու կարգուկանոն: Նա հազիվ նկատելի քմծիծաղ տվեց. «Հիմարություններ ես դուրս տալիս, բարեկամ, ցավն էլ հենց դա է, որ խաղաղություն է, ցավն էլ հենց դա է, որ կարգուկանոն է: Մարդկանց բոլորովին էլ չի հուզել այդ դժբախտությունը»: Նա վերընթերցեց լրագիրը ծայրից ծայր, ձախից աջ, աջից ձախ, ջանալով ավելին կորզել, քան ասված էր կառավարական թղթակցական կենտրոնի պաշտոնական հաղորդագրության մեջ, կարգադրեց ռադիոընդունիչը կողքին դնել, որպեսզի բաց չթողնի կարեւոր լուրերը եւ վերջապես հասավ նպատակին. Վերակրուից սկսած մինչեւ Ռիոբամբինի բոլոր ռադիոկայանները հաղորդում էին, որ ազգային անվտանգության ծառայությունը բռնել է մահափորձի կազմակերպիչների հետքը: «Հապա ի՞նչ էիք կարծում, մորմի զավակներ»,- մոթմոթաց նա, իսկ ռադիոն շարունակեց, որ մահափորձի կազմակերպիչները բռնվել են արվարձանային հասարակաց տներից մեկում, որի վրա ականանետային կրակ է բացվել. «Ահա այդպես,- հոգոց քաշեց նա,- խեղճ մարդիկ»: Սակայն նա մնաց ճոճում, բոլորովին անտարբեր, ոչ մի շարժումով չմատնելով մտքինը, ինքն իր մեջ ասրթելով. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո պահպանիր կյանքս վրեժխնդրության համար ուղեկցիր ինձ մայր ոգեշնչիր ինձ մայր»: Նա համոզված էր, որ մայրը լսեց աղերսը եւ ընդունեց, ահա թե ինչու լիովին տիրապետեց իրեն եւ հաղթահարեց վիշտը,- այս փոփոխությունը նկատեցին նաեւ հասարակական կարգի ու

ազգային անվտանգության համար պատասխանատու գերագույն չտարի սպաները, որոնք ներկայացել էին զեկուցելու. «Իմ գեներալ, մահափորձի կազմակերպիչներից երեքը սպանվեցին կարգուկանոնի պահպանման ուժերի հետ փոխկրակոցի ժամանակ, երկուսը ձերբակալված են եւ գտնվում են Սան-Խերոնիմոյի խցերում»: Մրգաջրով բաժակը ձեռքին, ճոճում նստած, նա ասաց. «Ը-հը»,- եւ նշանառու հրաձիգի ամուր ձեռքով բոլորի համար հյութ լցրեց,- «Նա իմաստության մարմնացում էր, երբեք չէր եղել այդպիսին, եւ նրբանկատ էր, ինչպես երբեք, այնքան նրբանկատ ու ուշադիր, որ գուշակեց մեր ցանկությունը եւ թույլ տվեց մեզ ծխել: Զլված բան էր՝ թույլ տալ մեզ ծխել ծառայողական պարտականությունները կատարելիս»: «Այս ծառի տակ բոլորս հավասար ենք»,- ասաց նա եւ հանգիստ լսեց զեկույցի մանրամասները՝ թե ինչպես է մտածված եղել ու իրագործվել չուկայի մահափորձը, ինչպես են Շոտլանդիայից առանձին խմբերով բերել որսաշների՝ ցեղական ուժասուներկու քոթոթներ, որոնցից քսաներկուսը սատկել են այս կամ այն պատճառով, իսկ մնացած վաթսունին մեծ վարպետությամբ վարժեցրել է շոտլանդացի շնապահը, որը հանցավոր նպատակներով շներին անողոք ատելություն էր պատվաստել ոչ միայն Լետիսիա Նասարենոյի սեւ աղվեսենիների, այլեւ հենց տիրուհու, ինչպես նաեւ նրա որդու նկատմամբ,- «Շներին վարժեցնում էին՝ օգտագործելով հարդարանքի, ահա, այս իրերը, իմ գեներալ: Հոտ քաշելու էին տալիս պալատական լվացքատունից գողացված, ահա, այս սպիտակեղենը, Լետիսիա Նասարենոյի, ահա, այս իրանակալը, ահա, այս թաշկինակը, գուլպաները, տղայի ահա այս համազգեստը, իմ գեներալ: Ճանաչո՞ւմ եք այս իրերը»: Նա չնայեց էլ ցույց տրվող իրերի կողմը եւ միայն ասաց. «Ը-հը»,- եւ ուշադիր լսում էր զեկույցի շարունակությունը. «Այդ վաթսուն շներին վարժեցրին չհաչել, երբ պետք չէ, որ հաչեն, վարժեցրին մարդկային մսին, իմ գեներալ. նրանց պահում էին փակի տակ, ասածս լույս աշխարհից բոլորովին մեկուսացրած. նրանց վարժեցնում էին մի քանի տարի շարունակ, մայրաքաղաքից յոթ մղոն հեռավորության վրա, չինական բարձիթողի մի ագարակում. այս ագարակում կային Լետիսիայի եւ ձեր որդու խրտվիլակներ՝ բնական չափսերով եւ նրանց հագուստ-կապուա-

տով, բացի դրանից, չներին վարժեցրել էին ճանաչել ձեր որդուն եւ Լետիսիային դեմքով, մշտապես ցույց տալով նրանց լրագրային, ահա, այս լուսանկարները»: Եվ սպաները նրան ցույց տվեցին բոլոր էջերը լուսանկարներով սոսնձված այբոմը, որպեսզի պրեֆեկտը գնահատեր արդուկած, կտրած այդ խոզերի կտտարած վիթխարի աշխատանքը,- «Ամեն մեկն իր գործն է անում, իմ գեներալ»: Բայց նա նրանց կողմը չնայելով իր «ըհը»-ն նետեց, եւ այդժամ նրանք ամենակարեւոր տեղեկությունը հայտնեցին. դավադիրներն, անշուշտ, ինքնուրույն չէին գործել. նրանք գործակալներն էին թաքուն մի կազմակերպության, որի կենտրոնը գտնվում է արտասահմանում,- «Ահա նրանց նշանը, ձերդ գերազանցություն»: Եվ ցույց տվեցին սագի փետուրի եւ դաշույնի խաչաձեւումով դավադիրների նշանը, եւ նա ասաց. «Ըհը»: Իսկ նրանք շարունակեցին զեկույցը, որից պարզվեց, որ բոլոր դավադիրները վաղուց թաքնվում էին արդարադատության աչքից՝ վախենալով նախկինում գործած քրեական հանցագործությունների պատասխանատվությունից: Եվ նրանք ցույց տվեցին մի այբոմ, որտեղ ամփոփված էին ոստիկանական գործերից հանված դավադիրների լուսանկարները. «Այս երեքը սպանված են, իսկ այս երկուսը՝ ձերբակալված ու բանտված Սան-Խերոնիմոյի խցերում, իմ գեներալ: Ինչպե՞ս վարվել նրանց հետ՝ ձեր կամքն է: Մաուրիսիո եւ Գումարո Պոնսե դե Լեոն եղբայրներն են, մեկը՝ քսանութ, մյուսը՝ քսաներեք տարեկան: Առաջինը դասալքել է զինված ուժերի շարքերը, մշտական բնակավայր չունի եւ անորոշ զբաղմունքի տեր է, մյուսը արհեստագործական ուսումնարանում խեցեգործություն է դասավանդում. սրան տեսնելով՝ չները ուրախությունից պոչերը շարժեցին եւ իրենց ողջ պահվածքով հավատարմություն ցուցադրեցին, ինչը անհերքելի ապացույցն է նրա մեղսակցության, իմ գեներալ»: Սակայն նա այս անգամ էլ ասաց իր «Ըհը»-ն, իսկ օրվա պաշտոնական տեղեկագրերը ամփոփելիս գովեստով արտահայտվեց այն երեք բարձրաստիճան սպաների հասցեին, որոնք զբաղվել էին հետաքննությամբ, եւ պարգեւատրեց նրանց «Հայրենիքին հավատարիմ ծառայության համար» պատվավոր մեդալով. նա անձամբ հանձնեց մեդալները եւ հենց տեղում, պարգեւատրման հանդիսավոր արարողության ժամանակ, սահմանեց ռազմադաշ-

տային տայան, որը Մասուրիսիս եւ Գումարս Պոնսե դե Լեոն եղբայրներին դատապարտեց գնդակահարության,- «Դատավճիռը պետք է ի կատար ածվի վճռի հռչակման պահից հետո քառասունութ ժամվա ընթացքում, եթե, իհարկե, ձերդ գերազանցությունը ներում չշնորհի»:

Այդ քառասունութ ժամվա ընթացքում նա պառկեց իր ճոճում, բացարձակ միայնության մեջ, աշխարհի տարբեր ծայրերից լսվող ներման խնդրանքների առաջ խուլ ձեւանալով. նա ռադիոյով լսում էր Ազգերի համագործակցության շատախոսությունը, իր հասցեին նետված հարեւան երկրների հայհոյանքը, լսում էր, թե ինչպես էին իրեն գովաբանում ու պաշտպանում հարեւան մյուս երկրները. այնուհետեւ նա ընդունեց իր նախարարներին եւ նույն ուշադրությամբ ունկնդրեց թե նրանց, ովքեր երկչոտորեն խոսում էին գթասիրությունից, թե նրանց, ովքեր բարձրաձայն պնդում էին վճռական միջոցների անհրաժեշտությունը. նա հրաժարվեց ընդունել մոտրյալ երկու ոչխարների ճակատագրերի անհանդուրժողությամբ լեցուն, հովվական ուղերձը ներկայացնելու չտրված պապի նվիրակին. նա լռելյայն լսեց այն հաղորդագրությունը, ըստ որի ամբողջ երկիրը հուզված էր ու բորբոքված իր լռությամբ, լռելյայն ականջ դրեց հեռավոր կրակոցներին, լռելյայն ընկալեց պայթյունի որոտը, որ կատարվեց ծովախորշում, ծով դուրս գալու պատրաստ ռազմական նավի վրա, առանց նկատելի որեւէ պատճառի,- «Տասնմեկ սպանված, իմ գեներալ, ութսուներկու վիրավոր. նավը շարքից դուրս եկավ»,- «Լավ»,- ասաց նա, ննջասենյակի լուսամուտից նայելով ծովախորշի մատույցների բոցկլտացող գիշերային խարույկին: Սկսվել էր մահվան դատապարտվածների վերջին գիշերը. եղբայրները դատավճռի ի կատար ածմանը սպասում էին Սան-Խերոնիմոյի ռազմական բազայում: Նա այս ժամերին պատկերացնում էր նրանց դեմքը ըստ տեսած լուսանկարների. իսկույն աչք էր զարնում եղբայրությունը. նույն հոնքերն էին,- պատկերացրեց, թե ինչպես են դրանք դողում սարսափից. միայնակ էին, դատապարտված, վզերից կախված համարներով,- պատկերացրեց նրանց խցերում մշտապես վառվող լամպերի պայծառ լույսի տակ. նա հանկարծ զգաց, որ նրանց մտքերը իրեն են ուղղված, զգաց, որ նրանք ներման հույս են փայփայում.

նրա ոչ մի շարժումով, սակայն, հնարավոր չէր ենթադրել, թե ինչպես է վարվելու. նա ավարտեց իր աշխատանքային սովորական օրը, ինչպես միշտ, հրաժեշտ տվեց հերթապահ սպային, որը մնացել էր կանգնած նրա ննջասենյակի դռան մոտ, որպեսզի ցանկացած պահին պատրաստ լիներ աշխարհին հայտնելու պրեզիդենտի վճիռը, եթե վճիռը նույնիսկ արձակվեր մինչեւ առաջին աքլորականչը: «Բարի գիշեր, կապիտան»,- անփութորեն ասաց նա, երեսին էլ չնայելով, կեռից կախեց լամպը, փակվեց երեք կողպեքով, երեք սողնակով եւ երեք շղթայով, պառկեց հատակին եւ երեսնիվայր ընկղմվեց զգայուն քնի մեջ, որի թեթեւ թաղանթի միջով լսվում էին բակից եկող շների հաչոցը, շտապօգնության մեքենաների աղդանշանները, ճայթուկների պայթյունները եւ կասկածելի մի տոնակատարության երաժշտությունը, որ գալիս էր դատավճռի դժանությունից ցնցված քաղաքի թանձր խավարի խորքից. նա արթնացավ կեսգիշերին, տաճարի զանգերի զողանջից, ժամը երկուսին երկրորդ անգամ արթնացավ, իսկ ժամը երեքին արթնացավ մանրամասն անձրեւից, որ ճանկռում էր լուսամուտների ապակիներն ու մետաղական ցանցը, եւ դժվարությամբ վեր ելավ հատակից. այդպես ծանր ու բարդ շարժումներով ելնում է ցուլը՝ սկզբում քամակն է բարձրացնում, հետո հենվում առջեւի ոտքերին ու բարձրացնում է արդեն լրիվ ծորացող բերանով բութ գլուխը. ահա, այսպես, ցլի պես նա ոտքի ելավ եւ հրամայեց հերթապահ սպային ամենից առաջ լուսամուտների տակից վռնդել շներին՝ ուր ուզում են, միայն թե չլսվի դրանց ոռնոցը, բայց չատակեցնեն, կառավարության հաշվին պահեն այնքան, մինչեւ ծերությունից իրենք ոտքերը երկինք տնկեն: Երկրորդ հերթին նա հրամայեց ազատ արձակել չարաբաստիկ այն չորեքշաբթի օրը Լետիսիային եւ որդուն ուղեկցող պահակախմբի զինվորներին. եւ, վերջապես, երրորդ հերթին, նա հրամայեց անհապաղ մահապատժի ենթարկել Մաուրիսիո եւ Գուամերո Պոնսե դե Լեոն եղբայրներին, բայց սպանել ոչ թե գնդակահարությամբ, ինչպես վճռել էր ռազմադաշտային սույանը, այլ կիրառել մահապատժի հիանալի եղանակը՝ քառատել չորս ձիերի օգնությամբ: Եվ Պոնսե դե Լեոն եղբայրներին պատառոտեցին ձիերով եւ նրանց մարմնի մասերը ցից հանեցին մեր վշտալի ու անծայրածիր թագավորության ամենա-

տարբեր շրջաններում համընդհանուր սարսափ տարածելու նպատակով: «Խե՜ղճ տղաներ»,- փնթփնթաց նա, քստքստացնելով ծանր, վիրավոր փղի իր վիթխարի ոտքերը եւ կրքոտ աղոթեց մտքում. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո օգնիր ինձ ուղեցույց եղիր մայր: Երկիր ուղարկիր այն մարդուն որը կօգնի ինձ վրեժխնդիր լինել անմեղ արյան համար»: Նա օր ու գիշեր երազում էր հետախուզելու գերբնական ընդունակությամբ օժտված մարդ գտնելու շուրջ, տենչում, որ նրան իր մոտ նախախնամությունը ուղարկի, նա պատկերացնում էր նրան հիշաչարության իր գառանցանքներում եւ թաքուն հուզմունքով, հանդիպած մարդկանց աչքերի խորքը նայելիս ջանում հանաչել նրան. շրջապատի ձայներին ականջ դնելիս փորձում էր որսալ նրա ձայնի առանձնահատուկ ինչ-ինչ երանգը: Նա սպասում էր սրտի թելագրանքին, քրքրում հիշողության բոլոր անկյունները եւ արդեն զրեթե կորցրել էր նրան գտնելու հույսը, երբ շլացուցիչ հմայքով այդ մարդը ցցվեց իր դեմ. «Նա սմենարնամիր մարդն էր բոլոր մարդկանցից որոնց տեսել էին իմ աչքերը մայր»: Նա հագնված էր այնպես, ինչպես նախկինում գոգոներն էին հագնվում: Հենրի Պոուելի ժամանակների ֆրակ էր հագին՝ մերակում գարդենիա խրած. Պեկովերի ժամանակի շալվար եւ արծաթյա երփներանգ դիպակից ժիլետ. այդ մարդը սովոր էր փայլել Եվրոպայի ամենաբարձրաշխարհիկ սրահներում, որտեղ նա հայտնվում էր վիթխարի, հորթի մեծությամբ, մռայլ, մարդկային աչքերով իր դոբերման շան հետ,- «Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բար,- ներկայացավ նա,- ձեր խոնարհ ծառան եմ, ձերդ գերազանցություն»:

Նա վերջին ազատ շառավիղն էր քաղաքացիական կռիվների փոթորկից ջնջված, ֆեդերալիստական կաուդիլյոների բանակներից ջարդված մեր բարձրաշխարհիկ այն դասի, որը վսեմաշուքության իր բոլոր հավակնություններով, հսկայական, տխրաթախիծ կալվածքներով ու ֆրանսիական արտասանությամբ վերացել էր հայրենիքի երեսից. հրաշալի, տոհմիկ կապրալ էր, չուներ ոչինչ, բացի իր երեսունյոթ տարիներից, յոթ լեզուների իմացությունից եւ թռիչքի պահին հավք զարկելու որսորդական չորս մրցանակից, որ արժանացել էր Դովիլի մրցումներում, բարձրահասակ չէր, սլացիկ կազմվածք ուներ, երկաթագույն մաշկ, բացառությամբ ճեր-

մակ ներկած մի փնջից՝ սեւ, մետիսի, ուղիղ բացվածքի սանրվածքով մազեր, ձիգ, կամային շրթներ, գերթափանցող աչքերի վճռական հայացք, նա սիրում էր կեցվածք ընդունել գունավոր լուսանկարչական սարքերի դիմաց, մեղմանուշ, զարնանային բնանկարի ֆոնով, որ պատկերված էին լինում տարավարների գոբելեններում. այնպես էր իրեն պահում, ասես, կրիկետ էր խաղում բալագույն իր ձեռնափայտով. կապրային տեսնելով, նորին գերազանցությունը թեթեւացած շունչ քաշեց. «Ահա նա: Նա է: Հենց սա է ինձ պետք: Եվ Խոսե Իգնասիո Սաեենս դե լա Բարը մեր գեներալի մոտ ծառայության անցավ՝ մի պայման միայն կապելով. «Ձերդ գերազանցությունը ինձ պետք է հատկացնի ութ հարյուր հիսուն միլիոն պեսո, որոնց ծախսման համար ես հաշվետու չեմ լինելու ոչ մեկի առաջ, բացի ձերդ գերազանցությունից, ինչպես նաեւ ենթարկվելու եմ միայն ձեզ, ձերդ գերազանցությանը: Իմ կողմից պարտավորվում եմ երկու տարվա ընթացքում ձեզ հանձնել Լետիսիա Նասսարենոյի եւ ձեր որդու իսկական զահիճների գլուխները: Պայմանը ընդունվեց,- «Համաձայն եմ»: Քանզի գեներալը հավատաց Խոսե Իգնասիո Սաեենս դե լա Բարի հավատարմությանը, գործելու նրա ընդունակությանը, համոզվեց բազմաթիվ փորձությունների ենթարկելուց, հոգու լաբիրինթոսը թափանցելուց հետո. այս փորձություններին ենթարկում էր՝ պարզելու նրա կամքի ուժը, տարածման չափը, իմանալու՝ կա որեւէ թույլ ճեղք նրա բնավորության մեջ. վերջին փորձությունը դոմինո խաղի մի քանի դաժան փուլերն էին, որ խենթ համարձակությամբ շահեց Խոսե Իգնասիո Սաեենս դե լա Բարը, առանց շահելու թույլտվություն ունենալու,- «Որովհետեւ նա տեսածս մարդկանցից ամենախիզախն էր մայր նա չափազանց համբերատար էր գիտեր ամեն ինչ գիտեր սրճի եփման յոթանասուներկու եղանակ կակղամորթներին տարբերակում էր ըստ սեռի նոտա էր կարդում եւ կույրերի այբուբենին էր ծանոթ նա կարող էր երկար լռելով նայել աչքերիս եւ ես չէի իմանում որտեղ թաքնվեմ այդ անվրդով հայացքից ես չփոթվում էի նրա ձեռքերի նրբագեղ շարժումներից երբ անփույթ հենվում էր բալագույն իր ձեռնափայտի կոթին շողացնելով ճկույթի մաքուր ալմաստը ու ես չգիտեի ուր կորչեմ նրա վիթխարի չան սարսափից որ աչալուրջ ու սհեզ պատկում էր տիրոջ ոտքերի տակ ու

թրթռացնում իր մորթը մարմնի կենդանի ու թավշե այդ պատյանը ես չգիտեի ուր կորչեմ լոսյոնի բուրումնավետ հոտ արձակող այդ մարդուց որի մարմինը ոչ շոյանքից վախ ուներ ոչ մահից որը ապշեցուցիչ էր եւ միաժամանակ սառնարյուն հաճախ չեն այս երկուսը միասին լինում եւ ահա այս մարդը համարձակվեց ասել ինձ որ ես բոլորովին նման չեմ զինվորականի որ զինվորական եմ դարձել վհհ նկատառումներով,- «Դուք նման չեք բոլոր այդ զինվորականներին, գեներալ: Նրանք բավականին պարզունակ եւ նույնպիսի պարզունակ հավակնություններ ունեցող մարդիկ են: Կոչումը նրանց համար բարձր է իշխանությունից, նրանք գերադասում են հրամայել եւ ոչ թե իշխել, նրանք ծառայում են ոչ թե ինչ-ինչ բանի, այլ ինչ-որ մեկին, ահա թե ինչու է հեշտ նրանց կառավարելը, առանձնապես, եթե նրանց մեկ-մեկու դեմ ես լարում»,- այսպես ասաց նա իսկ ինձ մնում էր միայն ժպտալ ինքս իմ մեջ մտածելով որ դժվար թե կարողանամ թաքցնել մտքերս չշմեցնող այս մարդուց որին ես ավելի մեծ արտոնություն էի շնորհել քան որեւէ մեկին իշխանության բոլոր տարիներին եթե չհաշվենք թանկագին բարեկամիս Ռոդրիգո դե Ագիլարին եւ թող աստված փրկի նրա հոգին»: Եվ գեներալը Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարին դարձրեց իր իսկ կայսրության մեջ թաքուն մի կայսրության լիիրավ տեր: Դա ճնշումների ու ոչնչացման աննկատելի ծառայությունն էր՝ ոչ պաշտոնական անվանում ուներ, ոչ էլ պաշտոնավայր, ամենուր էր եւ ոչ մի տեղ, գրեթե անիրական էր, քանզի ոչ ոք պատասխանատու չէր նրա գործողությունների համար, սակայն հրեշավոր այդ քիմեռը գոյություն ուներ, իրականություն էր, աննկատ մնալով, նա ահաբեկումներով իրեն ենթարկեց պետության ճնշիչ այլ ծառայությունները ավելի վաղ, քան բարձրաստիճան սպաները կզգային նրա չարամիտ ազդեցությունը եւ աննկատելի ամենագոյությունը,- գեներալն ինքն էլ չէր կանխատեսել, թե ինչի էր վերածվելու սարսափելի այդ ձեռնարկումը,- «Ես չէի կարծում թե կընկնեմ արքայազնի հանդերձով այս մարդակերի անկուշտ շոշափուկներով գիրկը հենց այն պահից երբ տրվելով նրա սատանայական հմայքին ընդունեցի պայմանը»: Եվ ահա, մի անգամ այդ մարդը պրեզիդենտական պալատ բերեց մի կոշտ ու կոպիտ պարկ, որը, թվում էր, լեցված էր կոկոսի ընկույզներով ու կարգադրեց

դնել մի անկյունում, որպեսզի ոչ մեկին չխանգարի,- «Խցկեք թեկուզեւ այդ պահարանը, որտեղ պահվում են ոչ պիտանի փաստաթղթերը»: Պարկը պահարանը խցկեցին եւ մոռացան դրա գոյությունը, իսկ երեք օր անց շնչելն անհնար դարձավ սոսկալի դիահոտից, որ ներծծվեց պատերի մեջ ու գարշահոտ նստվածքի ձեւով պատեց Հայելիների երեսը. մենք փնտրում էինք սոսկալի այդ գարշահոտի աղբյուրը խոհանոցում, սառուցեցինք կոմանոցները, ստանձնատանյակներում ծուխ բաց թողեցինք, որ դուրս մղենք հոտը, բայց գարշահոտը նիստերի դահլիճ սողոսկեց: Ժանտահոտ գոլորշիները, որ նեխող վարդի քաղցրավուն հոտն էին հիշեցնում, թափանցեցին ամենածածուկ ճեղքերից ներս, ուր երբեք ոչ մի հոտ չէր սողոսկել, ուր ժանտահոտի տարիներին չէր թափանցում նույնիսկ վարակով թունավորված քամու շունչը. գարշահոտն արձակվում էր այնտեղից, որտեղ չէին էլ մտածում աչք ածել,- հին փաստաթղթերով պահարանից, այն կոչտ ու կոպիտ պարկից, որը թվում էր լեցված էր կոկոսի ընկույզներով, որը պահարան էին խցկել Խոսե Իգնասիո Սահնս դե լա Բարի կարգադրությամբ. պարզվեց, որ պարկում նրա առաջին պայմանավճարն էր՝ գեներալի հետ կնքած համաձայնությամբ նախատեսված վեց գլուխներ էին, ըստ որում, յուրաքանչյուր գլխի համար կար համապատասխան վկայական նախկին գլխատիրոջ մահվան վերաբերյալ: Պարկում կույր ծերունի, տոհմիկ պատրիկ, քարե դարի ներկայացուցիչ Նեպոմուսենո Էստրադայի գլուխն էր. ինքնաունչորս տարեկան, մեծ պատերազմի վերջին մասնակից եւ ռազիկալների կուսակցության այդ հիմնադիրը մեռել էր, ինչպես տեղեկացնում էր վկայականը, մայիսի տասնչորսին, արտանոթների ծերունական կարծրախտից, գոկտոր Նեպոմուսենո Էստրադա դե լա Ֆուենտայի, նախորդի որդու գլուխն էր. հիսունյոթ տարեկան, հոմեոպաթ, մեռել էր, եթե հավատանք կլից վկայականին, նույն օրը, ինչ եւ հայրը որսի պայթյունից. Էլիսերա Կաստորայի գլուխը. քսանմեկ տարեկան, ուսանող-բնախոս, մեռել էր, ինչպես տեղեկացնում էր մահվան վկայականը, ծանր մարմնական վնասվածքներից, որ հասցրել էին ծակող առարկայով, հարբածների տուրուդմբոցում. Լիսիսե Սանտայագոյի գլուխը. երեսունեկու տարեկան, հոսանքն ընդհատակյին, մեռել էր քրեական հետապնդվող արտրտից, Ռոկի Պինտոնի, նույն

ինքը՝ Խասինտո անտեսանելիի գլուխը. երեսունութ տարեկան, գունավոր փուչիկների ձեռնարկատեր, մեռել էր նույն օրը, ինչ նախորդները, ալկոհոլային թունավորումից. Նատալասիո Ռուիսի գլուխը. «Հոկտեմբերի տասնյոթը» ընդհատակյա շարժման առաջնորդն էր, երեսուն տարեկան, մեռել էր, ինչպես հավաստիացնում էր մահվան վկայականը, դժբախտ սիրուց. վերոհիշյալ Նատալասիո Ռուիսը ատրճանակով կրակել էր իր բերանի մեջ,- «Եվ այսպես, վեց գլուխ, ձերդ գերազանցություն: Ստորագրեք, ահա, այս ստացականը»: Եվ նա գարշահոտից ու սարսափից սրտխառնուք ունենալով՝ ստորագրեց ստացականը, ինքն իր մեջ մտածելով. «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո այս մարդը պարզապես գազան է: Եվ ո՞վ կարող էր նման բան երեւակայել տեսնելով նրա նրբակիրթ շարժումները ու մերակը խցկած ծաղիկը»: Իսկ բարձրաձայն ասաց. «Ինձ այլեւս մասախո՝ չուղարկեք, Նաչո՝՝, ինձ լիովին բավարարում են ձեր բանավոր տեղեկությունները»: Սակայն Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը եռանդուն առարկեց. «Մեր փոխադարձ համաձայնագիրը տղամարդկային գործ է. ձերդ գերազանցություն: Բայց եթե դուք պլոճիկ չունեք՝ ճշմարտության աչքերին նայելու, ապա ետ վերցրեք ձեր ոսկին եւ եկեք բաժանվենք: Սա ի՞նչ բան է: Անձամբ ես, եթե պահանջվի, սեփական մորս էլ կգնդակահարեմ»:- «Դե, լավ, Նաչո,- հաշտվողարար ասաց գեներալը,- չափազանցնելու կարիք չկա, շարունակեք կատարել ձեր պարտականությունը»: Այնպես որ նույն կոշտ ու կոպիտ պարկերով գլուխները շարունակում էին ստացվել եւ թվում էր, թե պարկերը լեփ-լեցուն են կոկոսի ընկույզներով: Դենեբոյի ներսում ամեն ինչ տակնուվրա էր լինում, եւ նա հրամայեց. «Հեռու տարեք դրանք»,- իսկ հետո, լսելով, թե ինչ է գրված գլուխներին կից մահվան վկայականներում, ստորագրում էր հերթական ստացականները. ընդհանուր հաշվով նա ստորագրեց ինը հարյուր տասնութ գլուխների ստացման համար եւ հենց այն գիշեր, երբ գլխաքանակը այս թվին էր հասել, նա տեսավ իրեն երազում միամսրսկ արարածի, մի անորոշ ու սոսկալի կենդանու տեսքով եւ այս կենդանին իր ետեւից թողնում էր մեծնամասի հետքերի երկար շարան. իր

---

* Մասախո - ապխտած միս:

** Նաչո - Իգնասիո անվան քնքշական ձեւը:

հետքերն էին՝ թարմ ցեմենտով պատված հարթության վրա. նա սկսեց արթնանալ լեղիի համը բերանում, նախալուսաբացի տագնապներից փրկվում էր ֆերմայում՝ վերահաշվելով կտրված գլուխները իր տխուր հիշողությունների թրիքի փոսերի մոտ, այն աստիճան սուզվելով ծերունական խոհերի խորքը, որ սկանջում աղմկող ճռիկին չփոթում էր փտող խոտերի մեջ ճռճռացող միջատների հետ,- «Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո,- մտածում էր նա,- ինչպե՞ս պատահեց որ այսքան թշնամիներ ունեցա: Իսկ բուն թշնամիներին դեռ չենք հասել»: Ինչ վերաբերում էր թշնամիների քանակին, ապա Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը բացատրեց այսպես. «Վաթսուն տարեկանից հետո վեց հարյուր թշնամի ենք վաստակում, վեց հարյուր տարեկանից հետո՝ վեց հազար եւ այսպես՝ մինչեւ վեց միլիոն»- «Բայց, գլուխը տանի, դա ողջ երկիրն է,- բացականչեց նա,- այդկերպ մենք երբեք չենք ավարտի գործը»: Բայց Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը անվրդով նկատեց. «Քնեք հանգիստ, գեներալ: Մենք կավարտենք, երբ նրանք վերջանան»: Այ, թե ինչ բարբարոսն էր:

Այդ մարդը ոչ մի հարցում կասկած չուներ, ոչ մի քայլով չէր նահանջում նախնական իր մտահղացումներից, որոնց մեջ նա երկընտրանքի համար ճեղք չէր թողնում. նա ինքը հենց ամբողջականությունն էր, ինչպես եւ իր դոբերմանը, որի մշտական ներկայությունը տիրոջն ինքնավստահություն էր ներշնչում եւ անհերքություն. շունը միակ վկան էր Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարի եւ գեներալի հանդիպումների ու զրույցների, թեեւ սկզբում գեներալը փորձեց հակառակել. երբ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարն առաջին անգամ նրա առանձնասենյակը մտավ ոչ թե մենակ, այլ վիթխարի շան հետ, որի նյարդերն ու մկանները մորթու տակ երփներանգվում էին սնդիկի պես, հրեշավոր այդ դոբերմանի հետ, որը աշխարհում լսում էր միայն մեկ մարդու՝ ամենաանվախ, բայց ոչ երբեք բարեհոգի տիրոջը, գեներալն ասաց. «Շանը դռան հետեւում թողեք»: Սակայն Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը մտադիր չէր ենթարկվել. «Դա անհնար է, գեներալ: Աշխարհում չկա մի անկյուն, որտեղ ես չկարողանամ մտնել առանց լորդ Կյուխելի»: Այնպես որ շունը նրա հետ միշտ էլ առանձնասենյակ էր մտնում ու մրափում տիրոջ ոտքերի տակ, մինչեւ տերն ու գենե-

բալը կտրված գլուխների առօրյա հաշիվներն էին անում, բայց բավական էր գեներալը փոքր-ինչ բարձրացներ ձայնը, շունն իսկույն նախազգուշացնող տեսքով ոտքի էր ելնում եւ ազահորեն լպստում ողջ մարմինը,- «Մարդկային, զարմանալիորեն կանայի նրա աչքերը խանգարում էին ինձ մտածել, ես ցնցվում էի նրա մարդկային շնչառությունից. նրա մռութից գոլորշի էլավ, նա բլթբլթաց զինվորական կաթսայի նման, ատամները կրճտացրեց, երբ ես բռունցքս սեղանին զարկեցի կատաղությունից՝ հերթական պարկում իմ ամենահին համհարզներից մեկի գլուխը հանաչելով»: Այդ համհարզը նաեւ նրա հին, փորձված խաղընկերն էր դոմինո խաղում, կարելի է ասել՝ ընկերը, բարեկամը, այնպես որ նա չէր կարող դուրս չգալ իր ափերից. «Հերիք է, գրողը տանի: Վերջացնենք այս շիլաշփոթը»: Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը, սակայն, սովորականի պես նրա զայրույթը մեղմեց ոչ այնքան փաստարկներով, որքան վայրի շներ վարժեցնողի քաղցր-մեղր ճոռոմաբանությամբ: Գիշերները գեներալին տանջում էր այն միտքը, թե ինքը ենթարկվում է այդ տականքին, այդ Սաենս դե լա Բարին, միակ մահկանացուին, ով համարձակվում էր տիրոջ նման վարվել իր հետ. միայնության մեջ գեներալը ապստամբում էր նրա թաքուն կայսրության դեմ, վճռում թոթափել վրայից հետզհետե սովորական դարձող նրա իշխանության կառուցվածքի մասը կազմող ճորտի իր հնազանդությունը,- «Հենց վաղը վերջ կտանք այս շիլաշփոթին,- փնթփնթում էր նա,- հերիք է, գրողը տանի: Բենդիսիոն Ալվարադոն ինձ ծնել է հրամայելու եւ ոչ թե հրամաններ կատարելու համար»: Գիշերվա բոլոր որոշումները, սակայն, փոշիանում էին այն պահին, երբ շան ուղեկցությամբ հայտնվում էր Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը. գեներալը կրկին դառնում էր նրա գոհը՝ կուրացած այդ մարդու նրբագեղ, ընավոր շարժուձեւից, մերակը խցկած կենդանի գարդենիայից, հնչեղ ձայնից, լոսյոնի բույրից, օսլայած թեւքածալերի գմբուխտե ճարմանդների փայլից, ազդեցիկ ձեռնափայտից, զուսպ գեղեցկությունից,- դա ամենաանհրաժեշտ ու ամենաանտանելի մարդն էր,- «Բոլոր նրանցից, ում հասցրել էին տեսնել իմ աչքերը»: Բայց նա ասում էր. «Մի չափազանցրեք, Նաչո, կատարեք ձեր պարտականությունը»: Եվ շարունակում էր կտրված գլուխներով պարկեր ընդունել. ստորագ-

ում էր առանց աչք ածելու հերթական ստացականները, ընկղմվելով սեփական իշխանության սորուն ավազների մեջ՝ ոտքի տակ հենարան չզգալով, ինչպես անդունդն ընկնողը. ամեն առավոտ, ամեն քաղաքախի, ծովը ցուցադրող ամեն լուսամուտի մոտ նա հարցնում էր ինքն իրեն. «Այս ի՞նչ է պատահել աշխարհին»:

Արդեն տասնմեկն է, բայց այս մեռյալ տանը ոչ մի շունչ չկա: «Ո՞վ կա այստեղ»,- բղավում էր նա, բայց պատասխան չէր լսվում. նա մենակ էր, բոլորովին մենակ եւ թվում էր ինքը ոչ թե իր պալատում է, այլ օտար մի մենաստանում,- «Ո՞ւր կորան ոտաբոբիկ սպասյակների շարանները որոնք ծանր հակեր էին իջեցնում ավանակների վրայից ու միջանցքներով քարշ տալիս բանջարեղենով հավերով ու մրգերով լի զամբյուղներ ո՞ւր չվեցին հոտած ջրերի լճակները որ իմ շատախոս կնանիք էին սարքում ծաղկասափորները դատարկելով որպեսզի գիշերով թառամածների փոխարեն՝ թարմ ծաղիկներ դնեն ո՞ւր կորան այն կնանիք որոնք օդափոխում եւ քերում էին թուչնավանդակները եւ պատշգամբներում չոր ավելով գորգ ծեծում «Սուսաննա մոտս արի Սուսաննա կարոտ մնացի քո սիրուն» երգի տակ ուր կորան իմ նիհարիկ օրապակասները որոնք հոգում էին պետքերը ամեն դռան տակ եւ պուպուլիկների չիթերով երկսապատավոր ուղտեր նկարում նիստերի դահլիճի պատերին ո՞ւր կորան իմ փութկոտ պաշտոնյաները, որոնք գրասեղանների դարակներից վռնդում էին ածան հավերին ո՞ւր կորան բոզերը որոնք զինվորների հետ սեր էին անում ընդհանուր պետքարանում ո՞ւր կորան բակասլահ իմ անհամար շները որոնք հաչում էին դիվանագետների վրա ո՞վ սանդուղքից ցած գլորեց էլի կաթվածահարներին վարդաթփերի տակից ո՞վ վռնդեց իմ բորոտներին ո՞վ հեռացրեց անբաժան իմ շողոքորթներին»: Բարձրաստիճան սպայակույտից իրեն հավատարիմ մնացած վերջին մարդվանց նա հազիվ էր զանազանում, սակս նայում էր խուլ պարապի, իր անվտանգության համար պատասխանատու նոր մերձավորների թիկունքների հետեւից, նրան գրեթե շնորհ արեցին, հնարավորություն տալով ելույթ ունենալ նախարարների խորհրդի նիստում, որի կազմը ինքը չէր հաստատել,- հուղարկավորման այուրթուկներով եւ օսլայած օձիքներով գիտությունների վեց դոկտորներ էին, որոնք շտապում էին կանխել նրա մտքերը եւ պետա-

կան գործերը լուծել առանց նրա հետ խորհրդակցելու: «Գրողը տանի, վերջիվերջո ես եմ կառավարությունը»,- փորձեց փոթորկել նաս, բայց Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը անվրդով բացատրեց. «Այդպես չէ, գեներալ: Դուք կառավարություն չեք, այլ իշխանություն»: Նա տառապում էր թախծից, անհուսալիորեն ձանձրանում երեկոները դոմինո խաղալիս, եթե նույնիսկ խաղընկերը վարպետ խաղացող լիներ, որովհետեւ նրան չէր հաջողվում գոնե մեկ անգամ տանուլ տալ՝ ինչ խորամանկ հնարք էլ որ բանեցներ. նա ստիպված էր լինում մի ժամից ոչ պակաս ոչ ակնկ հաշելը, որովհետեւ կերակուր ստուգողները նրան մոտ չէին թողնում սեղանին, քանի դեռ չէին փորձում յուրաքանչյուր պատառոտ, նրա թաքստոցներից անհետացան մեղրի պուլիկները եւ նա բողոքեց Սաենս դե լա Բարին. «Գրողի ծոցը թող կորչի այդպիսի իշխանությունը: Այսպիսի՞ իշխանություն էի երազում»: Սաենս դե լա Բարը ի պատասխան ասում էր, որ այլ իշխանություն չի լինում.- «Միակ հնարավորը սա է, որ կա, գեներալ»: Անցած փառավոր ժամանակների կիրակնօրյա շուկայի նման աղմկոտ պալատի դրախտային կյանքը վերածվել էր լեթարգիական քնի, եւ այս նոր կյանքում նա զբաղմունք չուներ, բացի կեսօրվա ժամը հորսին սպասելուց. այդ ժամին միացնում էր ռադիոն եւ լսում հերթական գլուխը դժբախտ այն սիրավեպի, որ հաղորդում էր տեղական ռադիոկայանը. յուրաքանչյուր նոր գլուխը նա լսում էր ճոճի մեջ խրված, ձեռքում պահած մրգաջրով լի բաժակ. նրա աչքերը խոնավանում էին արցունքներից, եւ լսելով հերթական այդ գլուխը՝ նրան տանջում էր հարցը, հո չի՞ մեռնի ռադիովեպի հերոսուհին, բոլորովին երիտասարդ այդ աղջիկը: Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը նրա համար տեղեկություն հավաքեց եւ հայտնեց. «Այո, գեներալ, նա կմեռնի» - «Դե, թող չմեռնի, գրողը տանի,- հրամայեց նա,- թող տպրի մինչեւ վեպի ավարտը եւ ամուսնանա. երեխաներ ծնի, պառավի, ինչպես բոլոր մարդիկ»: Եվ Սաենս դե լա Բարը կարգադրեց փոխել ռադիովեպը, որպեսզի գեներալը սիրվի իր իշխանության պատրանքով: Դրանից հետո ոչ մի ռադիոհերոս առանց թույլտվության չէր մեռնի: Նրա կամքով ամուսնանում էին մեկ-մեկու չսիրող զույգերը, հարություն էին առնում նախորդ գլուխներում մեռածները, բացասական հերոսները պատժվում էին վաղօրոք,

բոլոր դրականները երջանիկ էին, որովհետեւ երջանկություն էր արտոնվում էր հրամանով. այս ամենը գործունեության պատրանք էր ստեղծում, նրա վաղուց ի վեր պարապ կյանքը դարձնում լիարյուն, երբ երեկոյան ժամը ութին, լամպը ձեռքին, իր տիրույթներն էր շրջում. պարզվում էր՝ ինչ-որ մեկն արդեն կեր էր տվել կովերին եւ մարել լույսը պրեզիդենտական գվարդիայի սենյակներում, ինչ-որ մեկն արդեն սպասուհուն ուղարկել էր քնելու եւ քնած էր. խոհանոցները փայլում էին մաքրությունից, հատակները լվացված էին, միսը կտրատելու սեղանները՝ քերված եւ ախտահանված,- ինչ-որ մեկը կանխել էր նրա բոլոր պահանջները. այնուհետեւ պարզում էր, որ մեկը իջեցրել էր արդեն լուսամուտների մղլակները եւ բանալիով փակել բոլոր առանձնասենյակների դռները. թեեւ բոլոր դռների բոլոր բանալիները պահվում էին իր մոտ, միայն իր մոտ, հանդերձարանից մինչեւ նրա ննջասենյակ տանող միջանցքի բոլոր լամպերը մեկը մյուսի հետեւից մարում էին՝ անջատիչներին դեռ ձեռք չտված. նա խավարում քայլում էր՝ քստքստացնելով դիրված միապտույտի իր ծանր ոտքերը, չարտացոլվելով մութ հայելիների մեջ, հետեւից քաշելով սեւ պատյանի մեջ հագցրած ոսկյա խթանը, որպեսզի ոչ ոք չտեսներ նրա աստղային հեռազիծը, լուսամուտների մոտից անցնելիս. նա տեսնում էր Կարիբյան, Հունվարի նույն ծովը. նա տեսնում էր քսաներեք անգամ եւ բոլոր քսաներեք անգամն էլ ծովը նրան երեւում էր այնպես, ինչպես լինում է միշտ հունվար ամսին՝ ոսկեգույն ջրասոպով պատած ճահիճի նման: Այսպես էր ամեն երեկո, բոլոր ամիսներին եւ օգոստոսյան այն երեկո նույնպես. խավարում ոտքերը քստքստացնելով, իր ննջասենյակը գնալիս, նա աչք գցեց Բենդիսիոն Ալվարադոյի սենյակը, որտեղ դեռեւս թուրինջի թփով ծաղկաման էր դրված, վաղուց սատկած թռչուններով վանդակներ կային եւ իր տեղում էր տառապանքի մահիճը, որի մեջ ողջ-ողջ փտել էր մայրը, որի մեջ մայրը փչեց վերջին շունչը: «Բարի գիշեր, մայր»,- ինչպես միշտ, քթի տակ ասաց նա, թեեւ շատ տարիներ ի վեր նրան այլեւս ոչ ոք չէր պատասխանում. «Բարի գիշեր, զավակս, քնիր, աստված քեզ հետ»: Մոր սենյակից նա քստքստացրեց դեպի իր ննջասենյակը, ճանապարհը լուսավորելով լամպով, հնարավոր փախուստի համար նախատեսված լամպով եւ հանկարծ սարսափի դողոցքը

կանգնեցրեց Նրան. շամփրող կրակներով լամպի լույսը արտացոլվել էր լորդ Կյուխելի բիբերում. տղամարդկային օձանելիքի հոտ էր գալիս եւ գեներալը զգաց այն մարդու տիրական ուժը, ումից փչում էր օձանելիքի բույրը, զգաց Նրա քամահրանքը իր սարսափի նկատմամբ: «Ո՞վ է»,- հարցրեց, թեեւ շատ լավ գիտեր, թե ով է. տոնական կոստյումով Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարն էր հայտնվել այս հարկաբաժնում, որպեսզի հիշեցներ պատմական գիշերվա մուտքը,- «Օգոստոսի տասներկուան է, գեներալ: Նշանավոր տարեթիվ: Հարյուր տարի է անցել ձեր՝ իշխանության գլուխ անցնելու օրից: Այնպես որ, գեներալ, աշխարհի բոլոր ծայրերից հյուրեր են ժամանել: Իհարկե, պիտի ժամանեին: Չէ՞ որ նման տոնակատարության կարելի է ներկա լինել ամենատիկար կյանքի ընթացքում միայն մեկ անգամ: Ողջ երկիրն է տոնում, իսկ դո՞ւք»: Բայց ի պատասխան Խոսե Իգնասիոյի համառ պնդումների ու պահանջների՝ գիշերն անցկացնել ծափահարությունների որոտի եւ ժողովրդի սիրո բոցավառ շողերի տակ, նա քնի համար նախատեսված իր խցում սովորականից վաղ փակվեց երեք կողպեքով, երեք սողնակով եւ երեք շղթայով, բերանքսիվայր պառկեց մերկ, ցեմենտյա հատակին, չհանվելով, կոպիտ քաթանե, առանց տարբերանշանների համազգեստով, երկարաճիշտ կոշիկներով, ձախին՝ ոսկյա խաչան, դեմքը ափերի՝ ինչպես բարձի մեջ խրեց եւ անշարժացավ,- իր այս մշտական դիրքով նա հայտնաբերվեց հետագայում անգղներից կայտահարված եւ միջատներով ու ծովահատակի ջրիմուտներով ծածկված,- անշարժացավ ու անքնության աչքը փառակալող մշուշի մեջի միջից լսեց տոնական հրավառության հեռավոր տրաքոցները, զանգերի ցնծագին զողանջը, լսեց տղմոտ հեղեղի պես հոսող մարդկային զանգվածների երկինք հղված փառաբանությունը, որ, ավաղ, իրեն չէր հասցեագրված. նա լսեց այս ամենը եւ ավելի շատ զարմացած, քան վշտացած, ասաց ինքն իրեն. «Մայր իմ, իմ ճակատագրի Բենդիսիոն Ալվարադո: Հարյուր տարի, ահա, արդեն հարյուր տարի է անցել այն օրից: Գրողը տանի, ի՞նչ արագ է թռչում ժամանակը»:

Եվ այսպես, նա այնտեղ էր, հենց ինքն էր եւ ոչ թե իր նմանակը, պառկած էր ընդունելությունների դահլիճում, խնջույքի սեղանին, սգնված ու վհհաշուք, ինչպես մեռած Հռոմի պապ, ոտից գլուխ պատված ծաղիկներով, որոնց մեջ ինքն էլ իրեն չէր ճանաչի,- չէր ճանաչի նրան, ով մի անգամ արդեն մեռել էր եւ նեխել նույն այս սեղանի վրա,- պառկել էր մահվան գրկում առավել ահեղ տեսքով, մետաքսյա ձեռնոցներով, որ փքված էին մեջը լցրած բամբակից, պայծառ, սիրամարգի գույներ ունեցող, ծերունական նրա կուրծքը անսահման լայնացնող տոնական համազգեստը հագին, զրահավորված անհաշիվ շքանշաններով ու մեդալներով, որ արժանացել էր հնարագետ ու անամոթ իր ծառաների հատուկ հորինած չոկոլադային պատերազմներում, կոշիկին ամրացրած ոսկյա խթանով եւ ուսադիրների՝ Տիեզերքի գեներալի վշտաբեկ տասը արեգակներով (այս կոչումը շնորհեցին վերջին պահին, շտապելով վեր դասել նրան մահից), այնպես անսքող կողմնակի աչքի առաջ, որ գույն առաջին անգամ կասկած չէր հարուցում նրա իրական լինելը, թեեւ, ըստ էության, համընդհանուր ուշադրության ներկայացված այդ դիակը ավելի շատ էր տարբերվում իրենից, քան մեղանից յուրաքանչյուրը. մինչ դիակը դադարի մեջ, ասես, մոմերի մարմանդ կրակի վրա կարմրում էր, մենք պետական խորհրդի նիստերի հարեւան դահլիճում ողջ գիշեր քննարկում էինք յուրաքանչյուր բառը՝ բոթը գուժող պաշտոնական հաղորդագրության, մինչեւ վերջ ինքներս էլ չհավատալով իրողությանը,- «Ինձ արթնացրեց ռազմական բեռնատարի երկար ազդանշանը. կլոր ու կանաչ սաղավարտներով, իրենց հանդերձանքի ու զվներից կախ ավտոմատների ծանրությունից քիչ կռացած զինվորները փոքրիկ խմբերով քայլում էին դեռեւս դատարկ մայթերով, անհետանում մուտքերում, կանգնում խաչմերուկներում, պետական շենքերի դռների մոտ, ոմանք պառկեցին առեւտրական փողոցի կամարների տակ, իրենց դիմաց տնկելով արեւի տակ շողացող ավտոմատի փողերը, մյուսները,- աչքովս տեսա,- ծանր գնդացիրներ բարձրացրին փոխարքայական թաղամասի տների տանիքները, իսկ երբ բացեցի պատշգամբի դուռը, որպեսզի դուրս գամ, որեւէ տեղ դնեմ քիչ առաջ ներքնահարկում փնջած թաց մեխակները, լսեցի զինվորների կոպիտ ձայներ ու կոշիկների դոփյուն. լեյտենանտի

գլխավորությամբ պարեկները թակում էին մեկ այս, մեկ այն դուռը եւ պահանջում անմիջապես փակել արդեն բացված խանութները,- «Հրամանը վերից է: Այսօր ազգային տոն է»: Ես լեյտենանտին մի քանի նետեցի եւ հարցրեցի՝ ի՞նչ է պատահել, ինչո՞ւ են փողոցներում այդքան զինվոր հայտնվել եւ ի՞նչ ապմուկ է: Օդում որսալով ծաղիկը, նա սկզբում թոթվեց ուսերը. «Սիրելիս, մենք էլ ոչինչ չգիտենք»,- այնուհետեւ ինձ աչքով արեց, բարձրաձայն ու անգուսպ քրքջաց,- «Գուցե հանգուցյալն է հարություն առել, հը՞»: Այս ենթադրության մեջ զարմանալի ոչինչ չկար, ընդհակառակը, զարմանալին, անըմբռնելին նրա երկրային գոյության ավարտն էր. մեզ դժվար չէր հավատացնել, որ պիտական գործերն այսքան տարիներ քամահրելուց հետո նա, հարություն առնելով, կրկին իր ամուր ձեռքերի մեջ կառնի կառավարման դեկը, եւ առավել եռանդուն, քան երբեւէ, լայն, հարթ ներբանները քստքստացնելով կքայլի ցնորական այն Իշխանության տան անվերջանալի ուղեգործերի վրայով, որտեղ, ինչպես մի ժամանակ, կրկին վառվում էին ծանոթ գունդ-լամպերը. մեզ դժվար չէր հավատացնել, որ նա, նա է դուրս վռնդել ծուլորեն զբոսնող, դե Արմաս Հրապարակի ճաքճքած սալիկների արանքից դուրս պրծած խոտեր պրճկող բոլոր կովերին, ինչպես եւ դժվար չէր բնական համարել, որ այդ սալիկներին մեռնող արմավենու ստվերի տակ նստած կույրը սմբակը փողոցներում դեռ դոփդոփացնող զինվորական կոշիկի հետ չփոթեց եւ սկսեց ոտանավոր արտասանել երջանիկ, մահը հաղթած ու հաղթանակով տուն դարձած ասպետի մասին. արտասանում էր շնչահեղձ լինելով, ձեռքերը պարզած դեպի կովերը, որոնք անտարբերությամբ որոճում էին լքյալ շինությանը՝ տապալված քարե մուտքերի կացարանին փութաթափած բույսամինի շյուղերը. կեր հայթայթելու համար պալատի սանդուղքով ելնել-իջնելուն սովոր կովերին հաճելի էր այստեղ, եւ նրանք մնացին բնակվելու:

Ազգային թատրոնի կիսավերակ շինությունը զարդարող դաշտային քամելիաներից փնջած ավելը ձեռքներին, մուտքերի եւ տավիղներից կախված կապիկների մեջ, ծարավից տոչորվելով նրանք խուժում էին փոխարքայական թաղամասի սրտ, կիսախավար մուտքերը մի այնպիսի որոտով, ասես մուտքերում միանգամից

տասնյակ ծաղկամաններ էին ջարդում եւ իսկույն էլ շիկացած մռութները ետնաբակերի լճակները խոթում. որքան էլ խմեին, մեկ է, ոչ ոք սիրտ չէր անում վռնդել դրանց, որովհետեւ կովերի սրունքներին եւ ցլերի վզերի վրա պրեզիդենտական խարանի հատու դրոշմներն էին նկատվում. այդ կենդանիները սուրբ էին եւ, նույնիսկ, զինվորներն էին նրանց ճանապարհ զիջում ոլոր-մոլոր եւ ոչ այնքան լայն առեւտրական փողոցում, որը վաղուց ի վեր կորցրել էր տոնահանդեսային իր երբեմնի ուրախությունը, եւ սատանայական, գայթակղիչ փառահեղությունը, տարիների հետ վերածվել կոտրված կրծքոսկրի նման ցցված նավակողերի, ժամանակի մեջ մաշված քթակայմերի, ոչ մեկին պետք չեկող, դարշահոտ ջրավազաններում փտող ցանցերի աղրակույտի, երբ մենք դեռեւս ծով ունեինք եւ ձկնորսանավերը մոտենում էին գրեթե առեւտրական շարքերին, այստեղ կենդանի ձուկ եւ թարմ բանջարեղեն էին վաճառում. հիմա թանձր դարշահոտը կախվել էր ամայի տաղավարներում, որտեղ ժամանակին, նրա պրեզիդենտության վաղ տարիներին, աշխույժ առեւտուր էր անում հնդկական շուկան, հետո հնդիկները հեռացան, նույնիսկ, շնորհակալություն չհայտնելով նրան,- «գրողի ծոցը,- բղավեց նա նրանց ետեւից ծերունական անհամբերությամբ եւ չարությամբ լեցուն:- Անգլիացիների ոտքերն ընկեք, նրանց կեղտը մաքրեք»,- բայց այս խոսքերը նրանք չլսեցին. նրանց փոխարեն շուկայում հայտնվեցին թափառական առեւտրականները՝ մոգական հմայիլներով, օձի թույնի դեմ դեղորայքով, իսկ շուկայի կողքին, նեխած թափոններից պարարտացած հողից բուսնեցին խզճուկ, ներսից բարակ միջնորմներով բաժանված խրճիթներ, որոնց մեջ, մաշված ձայնապնակների ձանձրալի խռպոտության տակ, օր ու գիշեր ճռնչում էին սիրո համար տրված մահճակալները. զինվորական խզակոթերը ցրիվ տվեցին այդ մահճակալները հենց զանգն ազդարարեց աղգային սգի սկիզբը: Այո, ինչ էլ ասելու լինեք, դա իսկական սուգ էր, եւ վիշտը կեղծ չէր, որովհետեւ նրա մահը, ինչին այդպես երկար ու մեծ փառագով սպասում էինք, շատ բան բացահայտեց հենց մեր ներսում. ծայրահեղ անհուսության մեջ սպասելով, թե երբ է նա սատկելու արքայական իր որեւէ հիվանդությունից, թե երբ են նրա մահվան լուրերը,- քանի-քանի անգամ չշուկով բերանից բերան անցած եւ

նույնքան անգամ էլ հերքված,- դառնալու, ի վերջո, իրականութիւն, մենք սպառիկ էինք արդեն, այրվել մինչև վերջ, եւ հիմա չէինք հավատում նրա վերջնական հեռանալուն ոչ թե այն պատճառով, որ դեռ կասկածում էինք, այլ որովհետեւ հոգու խորքում այլեւս չէինք ցանկանում նրա մահը. մենք չէինք կարողանում պատկերացնել, թե ինչպես ենք ապրելու այսուհետեւ, ինչպես է շարունակվելու, առհասարակ, կյանքն առանց նրա, մեր կյանքը, որի մեջ նրա գրված տեղը հսկայական էր,- «Ինձ համար շատ թանկ էր այդ մարդը. ինձ՝ տասներկու տարեկան աղջնակիս նա մի այնպիսի երջանկութիւն պարգեւեց, որ չէր տվել եւ չէր կարող տալ եւ ոչ մի տղամարդ: Ես հիշում եմ նրան դեռ հեռավոր այն ժամանակներից, երբ հազիվհազ երեւալով ֆերմայի փոքրիկ պատուհանից, ապահարար մեզ՝ դպրոցից ուղիղ ժամը հինգին դուրս եկող, երկնագույն գոգնոցներով, նավաստու օձիքներով աղջիկներիս էր նայում եւ զննելով մեր բարակ կոնքերը, որոնց վրա օձերի պես մեր սեղմ հյուսած ծամերն էին թափվում, քաղցրակիրթ շշնջում. «Մայր իմ, Բենդիսիոն Ալվարադո, ինչ լավն են այս հորթուկները»: Մենք տեսնում էինք նրա քաղցած աչքերը, ծածկված ձեռնոցի միջից ցցված՝ դեսպան Ֆոուրբիսի ուղարկած գեղեցիկ, ապակյա անոթը բռնած մատները, երբեմն-երբեմն վեր նետելով ապակյա անոթը, նա ուզում էր, որ մենք լսեինք, թե ինչպես են ներսում զնգոցով երգում նաբաթի կտորները, բայց մենք շրջվում էինք ու փախչում հեռու. միայն մի անգամ, համոզվելով, որ ոչ ոք չի տեսնում, ես գաղտագողի մոտեցա պատուհանին եւ ձեռքս պարզեցի դեպի գունավոր անոթը՝ նաբաթների զնգոցը շատ էր դայթակղեցնող. նա ամուր եւ քնքուշ սեղմեց իմ ձեռքերը, թեթեւ, վագրի շարժումով բարձրացրեց ինձ եւ ցավ չպատճառելով, լուսամուտից ներս տարավ, ձգեց այնպես զգույշ ու հարպկորեն, որ չճմրթվեց դպրոցական շրջազգեստիս եւ ոչ մի ծալքը. հետո նա ինձ նստեցրեց սուր միզահոտ փչող խոտերին եւ բացեց բերանը, որ խոսի, բայց լեզուն կարծես կպել էր քիմքին, եւ ես մտածեցի՝ նա վախեցած է ավելի, քան ես, նրա սիրտն այնպես ուժեղ էր խփում, որ ամեն գարկը նկատվում էր կրծքին սոսնձված վերնաշապկի տակից. նա գունատ էր, աչքերում արտասուք կար, ինչը ես իմ ամբողջ կյանքում այլեւս չտեսա ինձ տիրող եւ ոչ մի տղամարդու աչ-

քերում. կառչուն մատներով նա անխոս շոշափում էր իմ թրթռացող մարմինը մի այնպիսի ուժով, մի այնպիսի ցանկությամբ ու քնքշորեն, ինչպես հետագայում երբեք չեմ զգացել, նրա մատները սահում էին փորիս վրայով դեպի վեր, դողէրոցքով սեղմվում, եւ ես զգում էի, թե ինչպես են դրանց տակ ծաղկում կրծքիս կոկոնները, եւ անհամբեր շուռ ու մուռ էի գալիս խոտերին եւ ավելի ամուր սեղմվում կպչուն, անծանոթ, տղամարդկային քրտնահոտով վերնաշապկին. ոչ, նա այլեւս պետքը չուներ դեսպան Բեյլդրիչի նաբաթների, հիմա ես ինքս էի կովանոցի լուսամուտից ներս մտնում, հրճվելով երջանկությամբ՝ կրկին վերապրել հասունացման ժամերը թախծոտ աչքերով, բայց առողջ սրտով այդ մարդու գրկում, որն արդեն սպասում էր ինձ մարագում, ամենատարբեր ուտեստների զամբյուղով. նա պաչտում էր հոտերը եւ սովորեցրեց ինձ նույնպես սիրել այդ հոտերը. եւ սիրում էր, որ ուտելիքը ներծծված լիներ իմ հոտերով ու արտաթորանքներով: «Դու համեղ ես,- շշնջում էր նա,- դու նավահանգստի համ ունես... Ես ուզում եմ ուտել քո երիկամները՝ քո հյութի մեջ եփված, քո քրտնքի աղով...»: Ամեն երեկո նա ոտքիս գլուխ կտրատում էր մարմինս, համեմում իր կրքի այրող պղպեղով եւ դափնու տերեւով, եփում ինձ շիկացած մոլոշավարդի մարմանդ կրակի՝ մեր ցնորական, անհեռանկար սիրո վրա. նա սնում էր ինձ եւ ինքն էլ էր ուտում ծեր մարդու կրքոտությամբ ու շռայլությամբ,- նման կիրք ու շռայլություն ես այլեւս չտեսա նրանից հետո ինձ սիրող, շտապող եւ բութ, ժլատ տղամարդկանց մեջ. հագեցած պահերին, մի կողմ հրելով թաց, խորդուբորդ լեզուներով մեզ լիզել ցանկացող կովերին, նա պատմում էր իր կյանքից, ասում, որ երբեմն իրեն այնքան է վատ զգում, ասես կարող է ամեն ինչ գրողի ծոցն ուղարկել. խոսում էր Հանգիստ, առանց բողոքելու եւ չջանալով կարեկցանք առաջացնել, կարծես, լոկ ճիչով պատառոտվող ներքին լռության մեջ ինքն իր հետ էր զրուցում. բայց ձայնը համաչափ էր եւ կառչուն մատները կրկին սողում էին դեպի ինձ, եւ նա կրկին տղամարդ էր ու անխոնջ, նա իմ կյանքի միակ իմաստն էր դարձել: Հազիվ էր տասնչորսս լրացել, երբ մի օր մեր տանը հայտնվեցին բազմաթիվ, խոշոր աստղերը ուսադիրներին սեղմված երկու զինվորական. նրանք ոսկյա դուբլոններով լիցուն ճամպրուկներ էին բերել

եւ կեսգիշերին ինձ ու ծնողներիս օտարերկրյա նավ նստեցրին. ահա, այսկերպ ես Հայտնվեցի օտար ափերում եւ երկար տարիներ ապրեցի այնտեղ, մինչեւ հասավ լուրը, որ նա մեռել է. մեռել էր՝ չիմանալով, որ ես, իմ ձանձրալի ու աղքատ կյանքում, թերեւս, հազար անգամ էի մեռել՝ հիշելով նրա գիրկը, չիմանալով, որ պառկում էի առաջին պատահածի հետ, որպեսզի ստուգեի՝ աշխարհում կա՞ նրանից լավ տղամարդ, եւ նողկանքով շրջվում էի, որովհետեւ բոլորն էլ խղճուկ փսխնքոտներ էին նրա համեմատությամբ. ես հայրենիք վերադարձա պառաված ու դաստակված, երեխաների մի ամբողջ շարանով, որ ծնել էի տարբեր հայրերից՝ ամեն անգամ ապարդյուն ջանալով համոզել ինձ, թե նա է պողավորել իմ գոգը,- վերադարձա ադոտ հույսով, թե մեռնելիս գոնե հիշած կլինի ինձ...»:

Բայց զեներալը մոռացել էր բաժանումից երկու օր անց արդեն, երբ չէր տեսել նրան ֆերմայի լուսամուտի մոտ. նա գայթակղել էր մեկ ուրիշի, հետո մյուսին, հաջորդին... եւ այդպես ամեն երեկո, որովհետեւ այն ժամանակ նա արդեն դժվարությամբ էր զանազանում զպրոցական նույն համազգեստով աղջիկներին. նրա համար բոլորն էլ նույն դեմքն ունեին, երբ երկնագույն երամով անցնում էին մոտից, դուրս հանում սուր-սուր լեզուները, կչկչոցով տնազ անում, անվանում ծեր քավթառ եւ աչքի տակով նայում դեսպան Ռիմպելմեյերի ուղարկած նարաթներով անոթին. նա կանչում էր նրանց, լուսամուտից ներս խցկում, չփորձելով նույնիսկ իմանալ՝ երեկվա՞ աղջիկն է, թե նորը, նրա համար բոլորն էլ ամփոփված էին երկնագույն շրջազգեստով եւ նավաստու օձիքով մեկ էության մեջ, եւ այդ էությանն ուղղված մտքերն էին քաղցր հոգնությամբ նրան զբաղեցնում, երբ կիսանինջի մեջ չլսելու էր տալիս դեսպան Շարեյմբերգի ձանձրալիորեն միօրինակ դատողությունները. դեսպանը նվիրել էր նրան գրամոֆոնի հզոր մի ձայնավոր (շատ նման այն մեկին, որի վրա շուն էր պատկերված), էլեկտրական բարձրացուցիչով, որպեսզի հնարավոր լիներ միշտ լսել վիթխարի, անվերջ աճող տոկոսներով պարարքի դիմաց սահմանային ջրերը տալու համառ պահանջները. նա անգիր էր արել այդ պահանջները եւ այն ամենը, ինչ հետեւանք էին պահանջների, եւ նույն մեխանիկական միօրինակությամբ կրկնում էր. «Ոչ

մի դեպքում, թանկագին իմ Ստիվենսոն: Կտամ ամեն ինչ, բացի ծովից»,- եւ անջատեց բարձրացուցիչը, որպեսզի լռեր, վերջապես, մետաղական այն ձայնը, որը կրկին ու կրկին, հանգամանորեն բացատրում էր իրեն այն, ինչը առանց իմաստակութեան ու մութ բառերի, վաղուց արդեն հաղորդել էին ինտեսադիտութեան եւ ֆինանսների մեջ հմուտ մարդիկ,- «Մենք տկլոր ենք, իմ գեներալ, վճարելու ոչինչ չունենք»: Ասենք, ինքն էլ շատ լավ գիտեր, որ գանձատունը դատարկ է, պաշարները՝ սպառված, որ երկիրն ապրում էր փոխառութեամբ. նա հիշում էր, որ սկզբում փոխառութեան վերցրեց՝ վճարելու անկախութեան համար կռիվների պարտքերը, հետո այլ փոխառութեաններ եղան, որպեսզի վճարի հետաձգվող վճարումների տոկոսները եւ քանի որ միեւնույն է, փողը չի բավականացնում, պետք էր ինչ-ինչ բան տալ՝ սիրաշահելու փրփրած պարտքատերերին. խինայի ու ծխախոտի մենաշնորհը տրվեց անգլիացիներին, կաուչուկինը եւ կակաոյինը՝ հոլանդացիներին, երկաթուղագծի կառուցման եւ ջրային ուղիների շահագործման արտոնությունը՝ գերմանացիներին. ամեն, ամեն ինչ հարկ եղավ տալ օտարերկրացի այդ գրինգոներին՝ բացահայտ, գաղտնի,- մեծ մասամբ, իհարկե, գաղտնի,- այնքան գաղտնի, որ որոշ ծածուկ համաձայնագրերի մասին նա տեղեկացավ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարի աղմուկ հանած, հրապարակային մահապատժից հետո միայն, եւ թող ասածս ողորմածությամբ հավերժորեն այրվի նա դժոխքի կրակում:

Եվ այսուհանդերձ,- «Մենք այլ ելք չունենք, իմ գեներալ»,- լսում էր նա ֆինանսների յուրաքանչյուր նախարարից, սկսված այն դժվար տարվանից, երբ հրամայեց երկարաձգել վճարումը ժլատ, իր կոկորդը բռնած համբուրգյան այդ բանկիրներին. գերմանական նավատորմիկն այն ժամանակ պաշարեց նավահանգիստը, իսկ անգլիական զրահանավը, որ հայտնվեց անակնկալ, նախազգուշական կրակոց արձակեց եւ արկով ծակեց տաճարի աշտարակը. նա, սակայն, չսարսափեց նրանց հրանոթներից.- «Լցրած եմ ունեցել անգլիական թագավորի վրա: Կորչի կայսրերը: Ես ավելի շուտ կասակեմ, քան կհանձնվեմ»,- բղավեց նա եւ վերջին պահին, երբ թվում է, կորած էր ամեն ինչ, փրկության ձեռք մեկնեց դեսպան Զարլզ Ու. Տրեյկոլերը, որն իր նման մոլի դոմինո

խաղացող էր. նրա ներկայացրած կառավարությունը իրեն հայտարարել էր գեներալի՝ եվրոպական պարտավորությունների հրաշխավոր, փոխարենը ստանալով մեր ընդերքի անժամկետ շահագործման արտոնությունը: Այդ պահից մենք աղքատացանք, դարձանք հավերժական մուրացկաններ,- «Մենք պարտք ենք, նույնիսկ այն փոխանների համար, որ դուք եք հաղնում, իմ գեներալ»: Բայց իրողությունը չէր շփոթեցնում նրան, եւ նա, առաջվա պես արժանապատվորեն, մինչեւ սանդուղքը ճանապարհ էր գցում հերթական դեսպանին, որոնք բոլորն էլ շատախոսելու սովորություն ունեին եւ հրաժեշտի պահին թեթեւակի խփում էր նրանց ուսին. «ոչ մի դեպքում, իմ թանկագին Բեյքստեր: Ես ավելի շուտ կասակեմ, քան կտամ ծովը»:

Չվճարված բոլոր պարտքերից ավելի նրան վշտացնում էին պրեզիդենտական պալատի գերեզմանոցային լռությունը ու ամայությունը, որ սկսվել էր իր վստահությունը չարաշահած, անիծյալ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարի մեղքով. սա գլխատեց բոլորին, բացի նրանցից, ում իսկապես պետք էր գլխատել՝ Լեոնիսիա Նասարենոյին եւ իր զավակին կործանող չարագործներին: Թութակներն այլեւս ձայն չէին հանում, որքան էլ նա բուժիչ դեղահեղուկ էր կաթեցնում նրանց լայն բացված կտուցները, մերձակա դպրոցի աղջիկները դադարեցրել էին երգը՝ կանաչ ծառին նստող չալիկ թռչնակի մասին. անհրաժեշտ էր մոռացման մեջ ընկնել, եւ կյանքը, հիմա, անցնում էր փոքրիկ, պիրկ, չհասունացած կիտրոնների նման ծիծիկներով դպրոցական աղջկան սպասելով, նրա հետ սեր խաղալով. նրան հաճույք էին պատճառում առատ սեղանով խնջույքները մենակության մեջ, կենդանի ծաղիկներով կանաչ ծածկի տակ, մեկուսի ժամավաճառությունը, երբ լողալով շոգ սիեստայի պատրանքներում, երբեմն դուրս էր պրծնում քաղցր նիրհից, որպեսզի չկորցներ սրտին այնքան մոտ հեռուստատեսային կինոնկարի թելը. այդ կինոնկարում ամեն ինչ այնպես էր, ինչպես չի լինում կյանքում: Բայց նա համոզված էր, որ իսկական կյանքն է տեսնում կամ այն կյանքը, որ իր պատկերացմամբ այդպիսին պիտի լիներ եւ շատ ուրախ էր դրա համար. փառաբանված եւ ամենազոր այդ մարդը հավատացած էր, թե գիտե ամեն բան, բայց նա չգիտեր, անշուշտ, որ դեռեւս Խոսե Իգնասիո Սաենս դե

լա Բարի ժամանակներից մենք հատուկ ռադիոհաղորդումներ էինք բաց թողնում եթեր, հետո հեռատատեսային փակ ալիքն օգտագործեցինք, որպեսզի նրա հեռուստացույցի էկրանին ցուցադրվեին միայն իր ճաշակով նկարահանված կամ այդ ճաշակին համապատասխան շտկված ֆիլմեր, որոնց մեջ պարտվում էին լոկ ստորները, սերը հաղթում էր մահին, կյանքը հաճելի ու թեթեւ էր, ինչպես ափահովիկի շունչ. ամեն ինչ հասկանալով, մենք անամոթաբար խաբում էինք նրան, որպեսզի երջանիկ լիներ, եւ իր անվերջանալի ծերության մեջ նա էլի երկար տարիներ երջանիկ կլիներ՝ նավաստու օձիքով դպրոցական թրթռուն աղջիկներին գրկելով, եթե մի օր պատահականորեն չհարցներ նրանցից մեկին. «Քեզ ի՞նչ են սովորեցնում դպրոցում»- ես նրան ճշմարտությունն ասացի. «Ինձ ոչինչ չեն սովորեցնում, սենյոր, ես չէ՞ որ նավահանգստի լրբերից եմ»,- եւ նա նույն պահին ստիպեց կրկնել ասածս, հավանաբար, կարծելով, թե սխալ է հասկացել. եւ ես վանկ առ վանկ ասացի, որ ես դպրոցական չեմ, այլ նավահանգստի լրբերից մեկը, որ ինձ որսացել են պանդոկներից մեկում, լողացրել կուպրե օճառով, արորել ճիլոպով, հրահանգել են հագնել նավաստու օձիքով երկնագույն այս շրջազգեստը, բարոյական աղջկա այս գուլպաները եւ հրամայել՝ ամեն օր երեկոյան ժամը հինգին վազ տալ նրա լուսամուտի մոտով. ես մենակ չէի, ինձ հետ վազում էին սանիտարական ոստիկանության կողմից վարձված, լողացած, դպրոցական նույն համազգեստը եւ տղայական կոշիկները հագած, ձիու մազերից հյուսած նույն ծամերով,- դրանք ամրացվում են սովորական քորոցով,- ինձ նման այլ լրբեր. մեզ զգուշացրել էին չվախենալ խղճուկ, հիմար ծերուկից, որը ոչինչ չէր կարող անել, միայն մերկացնելու էր մեզ, տնտղելու բժշկի նման, շատ-շատ ձեռք կարող էր գցել ու տրորել մի փոքր,- խոսքով է գործ անում, ինչը եւ անում եք դուք, իմ դեներալ, երբ ձեզ մոտ եմ գալիս,- ասացի ես նրան,- իսկ մեզնից պահանջվում էր քնքշանալ փակել աչքերս ու, ասել, այրվելով կրքից, մեղմ շշնջալ. «Օ՜, սեր իմ, օ՜, սեր իմ...»,- ինչը եւ շշնջում եմ եւ դա ձեզ դուր է գալիս. մեզ հետ փորձեցին մեր դերը եւ վճարելուց առաջ ստիպեցին մի քանի անգամ կրկնել, իսկ վճարում են այս մեծ ղվսացավանքի համար չնչին գրոշներ. սանիտարական հարկը եւ սերժանտին

հատկացված միջնորդածախսը հանած, մեզ մնում է ընդամենը նիհարիկ չորս պիսո. արդար բան չէ, մանավանդ եթե հիշելու լինենք տապակած այն մալանգանները, որ մեր քամակն եք խրում եւ բանաններր, որ այն մյուս տեղն եք խոթում: Այս ամենը ես չպրտեցի այդ մռայլ ծերի երեսին, որը լսում էր ինձ առանց աչքը թարթելու»:

«Մայր իմ Բենդիսիոն Ալվարադո,- մտածում էր նա,- ո՞ր մեղքիս համար է այս պատիժը: Բայց ոչ մի բառով, ոչ մի շարժումով նա ցույց չտվեց իր հուսախաբությունը. զարմանքի հանապարհներով նա սկսեց պարզաբանել հանգամանքները, ճշգրտել մանրամասները եւ շատ շուտով տեղեկացավ, որ Իշխանության տան հարեւանությամբ գործող օրիորդաց դպրոցը փակվել էր տարիներ առաջ. եպիսկոպոսի օրհնությամբ ինքը՝ լուսավորության նախարարն էր առավել հարուստ եւ երեւելի ընտանիքների հայրերի հետ թաքուն միացել, միջոցներ տրամադրել ծովափնյա, եռահարկ նոր դպրոցի շինարարության համար եւ այդ նոր դպրոցում պատվախնդիր հայրերի դուստրերը հուսալիորեն պաշտպանված էին երկար ու կառչուն ձեռքերով մռայլ գայթակղեցնողից, որի մարմինը հիմա պառկած էր մեր դիմաց, ինչույքի սեղանին, ինչ-ինչ չափով հիշեցնելով սոուսի մեջ մռութը վեր լողացող սաբալո ձկանը. մեռյալ լույսը գունատություն էր հաղորդել նրա դեմքին. դա ամայի հարթավայրերի թորշոմած պատրանքների ու լուսնային խառնարանների լույսն էր, առանց նորին գերազանցության մեր առաջին լուսաբացի լույսի. սպիտակթույր ծաղիկներով ծածկված, նա վերջապես ազատագրվել էր բացարձակ իշխանությունից, երկարատեւ կյանքի գերությունից, թեեւ Իշխանության տանը, այդ կալանավայրում, կենդանի պրեզիդենտների այդ դամբարանում այնքան էլ դյուրին չէր պարզել, թե ով է ում գերին: Մի ժամանակ, երբ նույնիսկ, տիրոջ համաձայնությունը չհարցնելով, վերակառուցում էին այս դամբարանը, այսինքն՝ պալատը, երբ դրսից ու ներսից ներկում էին մի տեսակ մեռյալ-ճերմակ ներկով, նա՝ տիրակալը, ինչպես անդադրում հոգի, շրջում էր սենյակներով, միջանցքներով եւ նրան չէին ճանաչում, բղավում էին վրան. «Ինչո՞ւ եք պատերին քսվում, սենյոր, ներկը դեռ չի չորացել»,- եւ նա շտապում էր հեռանալ, ջանալով չքսվել հենց նոր ճերմակեցրած

պատերին: Նրա վրա գոռում էին. «Ցած չիջնեք, սենյոր, թե չէ տախտակները կարող են գլխիդ ընկնել,- եւ նա հլու-հնազանդ մնում էր վերեւում խլացած կացնահարվածներից ու այն որմնադիրների չարությունից, որոնց նույնպես խանգարում էր եւ որոնք արդեն չափից դուրս էին անպատկառ,- «Հեռու գնա, ծեր քավթառ, թե չէ մեկ էլ տեսար՝ շաղախի մեջն արեցիր»,- եւ նա հեռանում էր շարքային զինվորի հնազանդությամբ ու անտրտունջ կուլ տալիս ամեն անպատվություն՝ ոչ իր ձեռնարկած, բայց, իբր, իր բարեկեցության համար սկսած՝ անհեթեթ վերակառուցման այդ դժվար ամիսներին. ինքն իրեն չպատկանելով եւ ավելի քան երբեւէ միայնակ, նա ապրում էր՝ մշտապես զգալով թիկնապահների հայացքները. այնպես դաժան ու անթարթ էին նայում նրանք, ասես վարձվել էին ոչ թե պրեզիդենտի կյանքը պահպանելու, այլ նրա ամեն քայլափոխին հետեւելու համար. նրանք լափում էին պրեզիդենտի ուտելիքի կեսը՝ համտես անելով բոլոր կերակրատեսակները, փոխում էին մեղրի թարստոցները, ոսկյա խթանին պատյան հագցնում, որ չզնգար քայլելիս եւ ամենատարբեր այլ նախազգուշական միջոցներ ձեռնարկում, որ հին բարեկամ Սատուրնո Սանթոսի ծիծաղը կբերեր. առավոտից իրիկուն կրկնում ելույթ ունեցող ճապոնացի լարախաղացների նման այդ բաճկոնավոր, փողկապ կապած տասնմեկ մարդասպանները ջանում էին նրա շուրջը հավասարակշռության դաշտը պահպանել՝ անվերջ նայելով հատուկ սարքի կանաչ ու կարմիր լամպիկներին, որոնք տագնապած թարթվում էին, եթե հիսուն մետր շառավղով հեռավորության վրա որեւէ մեկի մոտ զենք էր լինում. նրա շքերթային թափորը բաղկացած էր յոթ համանման, արագասլաց ինքնաշարժից. այնքան արագ էին սլանում, ասես հետապնդվում էին, սլանում էին մեկը մյուսից անցնելով եւ տեղերը փոխելով մի այնպիսի արագությամբ, որ երբեմն պրեզիդենտն էլ գլխի չէր ընկնում, թե որ մեքենայով է ինքը գնում. բոլոր այս նախազգուշական միջոցները, սակայն, նույնքան անհեթեթ էին, որքան անիմաստ էր անգղների վրա կրակելը. բավական եղավ մի կողմ քաշել մեքենայի լուսամուտի վարագույրը եւ երկար տարիների կամավոր բանտարկությունից հետո նա տեսավ, որ ոչ ոք էլ ուշադրության չի արժանացնում պրեզիդենտական շքախմբի լիմուզինների խորամանկ

շարժումները. նա տեսավ նախարարությունների շենքերը, որ նման էին ապակյա ժայռերի եւ ավելի բարձր էին տաճարի գմբեթներից ու իրենցով ծածկում էին նավահանգստային շրջանի բլուրներին փռված նեգրական խայտաբղետ խրճիթների կուտակումը, նա նկատեց մեծ վրձնով պատին գրված ինչ-որ կոչ ընջող զինվորական պարեկին. երբ հարցրեց, թե ինչ էր գրված պատին, նրան պատասխանեցին. «Փառք նոր հայրենիքը արարողին»,- եւ նա գլխով արեց, թեեւ, իհարկե, հասկացավ, որ ստում են, այլապես ինչո՞ւ էին ընջում. այնտեղ, ուր նախկինում ճահիճ էր, նա տեսավ սովորական վեց զբոսայգուց էլ ընդարձակ զբոսայգին՝ կոկոսատու արմավենիներով ու կոկիկ ծաղկաթմբերով, որ ձգվում էին մինչեւ ծովը, տեսավ նոր արվարձանը՝ նոր, իրար նման, անտիկ այունասրահներ ունեցող մենատներով, տեսավ այգիների ամազոնյան փարթամ կանաչով շրջապատված հյուրանոցների արկղերը,- այնտեղ, ուր մի ժամանակ աղբակույտեր էին. նա տեսավ, թե ոլորուն փողոցով, ինչպես են կրիայի արագությամբ շարժվում ինքնաշարժերի անվերջանալի շարքերը, տեսավ կեսօրվա շոգից չչմած մարդկանց խմբեր, որ քայլում էին մայթի արեւոտ կողմով, որովհետեւ սովերաչատ մասով ապատարին պրոմնում էին սովերից օգտվելու համար վճար գանձող հարկային գերատեսչության պաշտոնյաները,- ահա թե ինչու էին արեւի տակ տապակվում խեղճերը: Բայց ամենից շատ նրան զարմացրեց, որ ոչ ոք չցնցվեց վախից՝ նկատելով օդափոխիչ հարմարանքով դաղաղի նման պրեզիդենտական լիմուզինը, որից, թվում էր, իշխանության ալիքային հարվածներ էին արձակվում. ոչ ոք չճանաչեց նրա թախծոտ աչքերը, տագնապից ու տարակուսանքից ծռված շրթները, ոչ ոք ուշք չդարձրեց նրա ձեռքին, նշանավոր այդ ձեռքին, որով նա ողջունում էր աճապարող, ոչինչ չտեսնող այդ մարդկանց. եւ նա սլացավ առաջ՝ լրագրեր ու Հմայիլներ վաճառողների խիտ ճչոցների, պաղպաղակի սայլակների ճռնչոցների, վիճակախաղի տոմսակները դրոշակների պես թափահարողների մաշված բղավոցների միջով, փողոցային աշխարհի առօրեական այս ողջ գվվոցի միջով, եւ այդ աշխարհը գերագույնս չափով թքած էր ունեցել օդափոխիչ հարմարանքով դաղաղի մեջ շնչահեղձ լինող գեներալական համազգեստով ծեր մարդու հոգու իրարանցման վրա: «Մայր իմ Բենդիսիոն

Ալվարադո այս ի՞նչ է պատահել իմ քաղաքին»: Նա խսկապես չէր ճանաչում ոչինչ. ո՞ւր է այն որբեւայրիների նրբանցքը, որոնք արեւամուտին բոլորովին մերկ Հայոնվում էին կրպակների դիմաց՝ ընթրիքի համար մի քանի ձուկ գնելու եւ մինչ կչորանային պատշգամբի բազրիքներին փռված նրանց շրջազգեստները, հայհոյում էին վաճառողներին. ո՞ւր են իրենց կրպակների դռների տակ պետքերը հոգացող հնդիկները. ո՞ւր են նրանց գունատ կանայք, որ կարողանում էին իրենց ձանձրալի երգերով վախեցնել մահին. ո՞ւր է ծնողներին չլսելու համար կարիճ դարձած աղջկա սարսափազդու նկարը. ո՞ւր են գարշահոտ ջրափոսերում ընկղմված ավազակային որջերը: Մեքենան շրջվեց փողոցի ծայրում, երեւացին հրաշալիորեն կարված պարանոցներով հավալուսները եւ հանկարծ նրա սիրտը ուժգին ճմլվեց. իսկ նավահանգի՞ստը, ո՞ւր է նավահանգիստը, որտե՞ղ են մաքսանենգների առագաստանավերը, ո՞ւր է զրահանավը, դեսանտայինների թողած զրահանավը, ո՞ւր է չքվել սովորական քաքահոտը: Չէ, երեւում է, իրոք, ինչ-որ բան է պատահել աշխարհին, մայր, եթե ոչ ոք չճանաչեց վագոնի լուսամուտից Հանած նրա ձեռքը,- լիմուզինից նա վագոն էր փոխադրվել,- նրա կանացի, ամենատիրական ծերի ձեռքը: Հիմա այդ ձեռքը չգիտես եւ ում անիմաստորեն ողջունող ձեռք էր, որ թափահարվում էր դեպի սարահարթը ձգված երկաթուղային նոր կառուցված ուղին բացող առաջին գնացքի վարագուրված պատուհանից. գնացքն անցավ ջերմախտի բույն ճահիճների տեղում աճած բուրումնավետ խոտերի դաշտով, անցավ բրնձի նախկին այն արտերի կողքով, որոնց գլխավերեւում մի ժամանակ ճահճային ճղճղացող թռչուններ էին ճախրում, անցավ, վախեցնելով պրեզիդենտական խարան կրող կովերին, անցավ ծաղիկներով աներեւակայելի երկնագույն դարձած հարթավայրով, իսկ նա նստած վագոնի սգո թավիշով պատած խցում,- այս խուցն ավելի սազական էր իր դառը ճակատագրի համար հոգեհանգստյան ծեսին, քան ուղեւորությանը երկրում,- կարոտով հարցնում էր ինքն իրեն. «Որտե՞ղ է գրողը տանի չորս տոտիկներով իմ հին գնացքը ո՞ւր են անակոնդաների հետ հյուսվող այս կողմերի լիանաները ո՞ւր են կապիկների անպուսապ ճչոցները որտե՞ղ են դրսիտահավերի երգերը ո՞ւր է անրաժանելի իր վիշապով իմ հայրենիքը իմ երկիրը ո՞ւր կո-

բան այդ բոլորը մայր»: Անցյալը հիշեցնում էին միայն անգլիական գլիարկներ դրած լուռ ու մունջ հնդկուհիներով կայարաններն ու կիսակայարանները. այդ կանայք ամենատարբեր գազանիկների տեսքով, շաքարած մրգեր էին վաճառում, կարտոֆիլ եւ տապակած հավեր. վաճառքն այն կամարների տակ էր, որոնց վրա կարելի էր կարդալ ծաղկահյուս կոչեր. «Հավերժ փառք Հայրենիքի մեծ Հորը»: Առաջվա պես նա ամենազոր էր եւ միաժամանակ ոչ ոք չէր իմանում, թե որտեղ է նա սույն պահին, իսկ կարեւորը՝ նրա անունը ամենուր սարսափ էր տարածում, քանզի այն ամենը, ինչ կատարվում էր երկրում, կատարվում էր նրա անունից, թեեւ ինքն էր մշտական սարսափի մեջ եւ երբեմն հետապնդվող փախստականի զգացողություն էր ապրում: «Մոնելուց վատ է այսպիսի կյանքը»,- բղավեց նա հարգալից Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարի երեսին, երբ այլեւս ուժ չկար դիմանալու, բայց միշտ էլ լսում էր ի պատասխան. «Օ՜, ոչ գեներալ, դա Առաջնեթացն է՝ կարգուկանոնի շրջանակներում»,- եւ բազմաթիվ կարճ ու համոզիչ, անբեւեւակայելի ժպիտներով համեմված այլ բառեր լսեց: Եվ նա արդեն որերո՜րդ անգամ անձնատուր էր լինում, համաձայնում այդ անիծյալ Սաենս դե լա Բարի հետ, առանց որի բոլորովին մենակ կմնար, համաձայնում էր այդ գազանի հետ, որն իր երազներում, անքուն ու երկար գիշերներին թուք ու մուր էր ուտում, պաշտոնազրկվում, իսկ առավոտները կրկին ամենազոր էր ու անհրաժեշտ, բավական էր հայտնվեր արեւի լույսի տակ հմայիչ իր ժպիտով, մարդկային ապշեցուցիչ աչքեր եւ մարդկային՝ լորդ Կյուիսել անուն ունեցող շան վզկապը բռնած,- չնից նա չէր բաժանվում նույնիսկ արտաքնոց գնալիս,- որ մեր գեներալը մոռանար գիշերվա զայրույթը. մոռանում էր ու հավանություն էր արժանացնում այդ մարդու առաջարկները եւ դա անում էր այնպես անտրտունջ, այնպես թեթեւ ու շտապ, որ հոգու խորքում զայրանում էր իր վրա: Սակայն զայրույթը երկար չէր մոլեգնում, եւ հենց Սաենս դե լա Բարը իր վարքագծում որեւէ փոփոխություն էր նկատում, խկույն ամեն բան նախկին տեղն էր գնում, հանգստացնում Սաենսին. «Մի հուզվեք, Նաչո, կատարեք ձեր պարտականությունը»: Եվ կրկին ամենազոր ու անխոցելի Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը վերադառնում էր տանջարան, խոշտանգումների այդ կոմբի-

նատը, որ սարքին-կարգին գտնվում էր պրեզիդենտական պայա-
տից հինգ հարյուր մետրի վրա, գաղութային ճարտարապետու-
թյան շենքում, ուր ժամանակին հոլանդական խելագարանոցն էր,-
«Նույնքան վիթխարի, որքան ձեր պալատը, իմ գեներալ»,- նա
քայլ գցեց նշենիների թփուտների մեջ, նրա դիմաց կանաչին տվեց
դաշտային մանուշակներով ծածկված ջրափոսը. առաջին հարկում
տեղավորվել էին քրեական հետախուզության ծառայությունները
եւ քաղաքացիական դրության ակտերի գրանցման բյուրոն, իսկ
մնացած հարկերում տեղադրված էին հնարամիտ ու բարբարոսա-
կան, ճիզվիտական շռայլ երեւակայության ծնունդ խոշտանգում-
ների մեքենաները. նա չցանկացավ տեսնել դրանք եւ միայն զգու-
շացրեց Սաենս դե լա Բարին. «Շարունակեք, որքան հնարավոր է,
լավ կատարել ձեր պարտքը հայրենիքի նկատմամբ, Նաչո, բայց
հիշեք. ես ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ տեսել եւ ոչ մի անգամ չեմ ե-
ղել ձեր գերատեսչությունում»: Խոսե Իգնասիո դե լա Բարը պա-
տասխանեց հարգալից ու հասկացողի խոնարհությամբ եւ ազնիվ
խոսք տվեց, որ նկատի կունենա պրեզիդենտի ցանկությունը: Եվ
նա, անիծյալ այդ Սաենս դե լա Բարն այնպես հավատարիմ մնաց
խոստմանը, ինչպես եւ անշեղ կատարեց սեռական օրգաններով
բաց թողնվող էլեկտրական հոսանքի միջոցով հինգ տարին չլրա-
ցած երեխաներին պատժի չենթարկելու հրամանը, այլապես ծնող-
ների բերանը փակելու հնար չկար: Այդ հրամանի կապակցու-
թյամբ հարկ եղավ առանձնապես համառել, քանի որ նորին գերա-
զանցությունը վախ ուներ, թե նման նողկալի պատժից կսկսվի իր
դաժան այն անքնությունը, որ տանջել էր իրեն վիճակախաղի հետ
կապված պատմության օրերին: Հրամանը կատարվեց, բայց,
միեւնույն է, նա չէր կարողանում մոռանալ, որ մոտերքում, մի
տեղ, սոսկումների արհեստանոց է գործում, եւ ինչպե՞ս կարելի էր
մոռանալ, եթե խաղաղ, լուսնային գիշերներին արթնանում էր
գնացքների չկչկոցից եւ որոտի թնդյունից,- գնացքի եւ որոտի
ձայները ձայնագրված էին Բրուկների ձայնապնակների վրա եւ
դղրդում էին ողջ գիշեր, որպեսզի խլացնեն խոշտանգվողների ճի-
չերը. դժոխային այդ փոթորիկը հեղեղի նման գազազում էր լու-
սաբացին, հեղեղն իր ետեւից նշենիների վրա սպիտակին տվող,
ջահել հարսների քողեր էր թողնում,- այդ հարսները խոշտանգման

տուն՝ այն խելագարանոցն էին ընկել, որտեղ մի ժամանակ Հոլանդացի լուսնոտներն էին բնակվում: Այո, նորին գերազանցությունը վախենում էր անքնությունից, որի մեջ ներխուժում էին խոշտանգումներից մեռնող մարդկանց ճիչերն ու անեծքները, եւ նա անվերջ մտածում էր այդ մարդու՝ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարի մասին, որն իրեն չխնայելով՝ կատարում էր ստանձնած պարտավորությունը: Մի թուղթյուն ուներ միայն այդ Սաենս դե լա Բարը՝ արտաքին շուք էր սիրում. գնում էր ասեղնագործ զանազան պաճուճանկարներով վերնաշապիկներ, թանկարժեք ու գեղեցիկ կոշիկներ, ծաղկի հատուկ տուփերով կենդանի գարդենիաներ, պիտակների վրա տոհմական զինանշաններով ֆրանսիական լույսոններ. մնացած բոլոր հարցերում ժուժկալ էր. սիրուհի չուներ, չէր հետաքրքրվում հահոյակատար ու կնատիպ տղաներով, ոչ ընկեր ուներ, ոչ՝ սեփական տուն եւ իր տանջարանում ապրում էր սրբի պես, աշխատում ուժասպառության աստիճան, մինչեւ հոգնությունը, ի վերջո, իրեն առանձնասենյակի բազմոցին էր գցում. քնում էր շորերով, երեք ժամից ոչ ավելի եւ միայն ցերեկը, քնում էր առանց դռան մոտ ժամապահ կարգելու, առանց ձեռքի տակ ատրճանակ պահելու, կյանքը վստահելով անքուն լորդ Կյուվիեին, որը, բերնեբերան հաղորդվող չչուկների համաձայն, սեփական մորթուց էլ կարող էր դուրս պրծնել, եթե չատանար իր սիրելի, միակ կերը՝ հենց նոր գլխատված մարդու տաք-տաք աղիքները, քլթքլթալով, ինչպես ջուրը զինվորական կաթսայում. այդ հրեշը իսկույն արթնացնում էր տիրոջը, երբ պատից այն կողմ էլ տեսնող մարդկային նրա հայացքը որեւէ մեկի մոտենալն էր նկատում. ով էլ լիներ՝ մեկ է. Սաենսը ոչ մեկին չէր վստահում եւ կասկածով էր նայում նույնիսկ իր արտացոլանքին հայելու մեջ. բոլոր վճիռները կայացնում էր անձամբ, չէր խորհրդակցում ոչ մեկի հետ, կողմնորոշվում էր անհամար գործակալների զեկույցներով միայն: Երկրում չէր կատարվում որեւէ, թեկուզեւ չնչին մի դեպք, մոլորակի ցանկացած կետում չէր արձակվում որեւէ չնչին մի վտարանդիի հառաչանք, որ նա չիմանար իսկույն՝ ողջ երկրագունդը պարուրած ծածուկ իր սարդոստայնի թելերի՝ վախի, ահաբեկման, առատ կաշառքների շնորհիվ. այո, նա շռայլ էր, բայց ոչ միայն պետության հաշվին. նա այնպես էր նվիրված գործին, որ հաճախ մատ-

նիչներ ու լրտեսներ էր վարձում սեփական փողերով. այս անշահախնդրությունը միայն իրեն չէր հաճուկ. անտեսյակ շատախոսներն էին ոչոկ չշնչում քունջուքուճախներում, թե նրա վարձկան դահիճները, լրտեսներն ու խուզարկուները անհերեւակայելի գումարներ են վաստակում,- ահա թե ինչու են համաձայնում գործակցել. այնինչ, նրանցից շատերը իրենց ծառայությունն առաջարկում էին բացարձակապես անվճար, նրանք սեփական մորն էլ կքառատեին ու արյունոտ մարմինը խոզերի առաջ կդցեին, միայն թե ապացուցեին, որ հարմար են դահճի եւ կամավոր խուզարկուի մասնագիտությանը. երաշխավորագրերի եւ անբասիր վարքի վկայագրերի հետ նրանք ներկայացնում էին նաեւ իրագործված չարագործությունների տեղեկանք, որպեսզի աշխատանքի անցնեին սառը դատող ֆրանսիայի խոշտանգողների ձեռքի տակ, իրենց անմարդկայնությամբ հետեւողական, գթասիրության փշուր իսկ չունեցող այդ մարդկանց ղեկավարության ներքո. կամավոր այդ խուզարկուները ու դահիճները հնարավոր դարձրին Առաջնթացի կարգուկանոնի շրջանակներում,- նստոտած ալրաղացի թեւերով զովացող պաղպաղակի տաղավարներում, լրագիր կարդալով չինական ռեստորաններում, ննջելով էժանագին կինոթատրոններում, ավտոբուսում հղի կանանց նստատեղ զիջելով, էլեկտրիկներ եւ սանտեխնիկներ դառնալով, կես կյանքը մայրաքաղաքի գողերի եւ գավառական ավազակների հետ կողք կողքի ապրելով, օվկիանոսային հածանավերի վրա ու միջազգային բարերում սպասուհիների ու պոռնիկների պատահական փեսացու դառնալով, ծառայելով դեպի Կարիբյան դրախտը կազմակերպվող ուղեւորության ամերիկյան զբոսաշրջիկների գործակալություններում, Բելգիայի արտաքին գործերի նախարարի անձնական քարտուղարը դառնալով,- սրանք եւ էլի շատ շատերը, որոնց մասին ոչ ոք նույնիսկ պատկերացում չունի, ահա, սրանք օգնեցին արմատախիլ անել դավադրությունը, շարքից հանել վտանգավոր մարդկանց, դավադրությունը բացահայտել ավելի վաղ, քան ամենակարող ու վճռական գլուխներում կհասունանար գործելու գաղափարը: Նրանք վստահորեն ու լիսիաբար էին կատարում իրենց գործը, իսկ հայրենասերները համոզված էին, թե հրեշավոր այդ աշխատանքը կատարվում է առանց պրեզիդենտի գիտության: «Եթե

դուք միայն իմանաք, եթե միայն իմանաք, իմ գեներալ»,- մտովի դիմում էին նրանք պրեզիդենտին եւ մտովի կրկնում սարսափելի պատմությունները, ենթադրելով, որ եթե իրենց խոսքերը հասնեին գեներալական ականջին, ապա Սաենս դե լա Բարը վաղուց արդեն մարգարիտներ պիտի հաներ նավահանգստային բերդին մերձ դավաճանների գերեզմանատան ընդերքից. բայց մեկը հայրենասերներից, որին հաջողվել էր մի անգամ գեներալի մոտ խցկվել եւ առանց վախի պատմել ամեն ինչի մասին, ցնցվեց, երբ պրեզիդենտը թափանցող հայացքով վրան նայեց ու հրամայեց ականջին օղ անել՝ ինքը երբեք ոչինչ չի իմացել, չգիտե ու չի իմանալու, ինքը ոչ մեկի հետ,- նա էլի քննող հայացքով հայրենասերին նայեց,- ոչ մի հարցի շուրջը չի խոսել. այս հանդիպումից հետո նա որոշ չափով հանգստացավ, բայց կարճ ժամանակով,- ավելի ու ավելի շատ էին ստացվում կտրված գլուխներով պարկերը, այնքան շատ, որ նա այլեւս չէր հավատում, թե Խոսե Իգնասիո դե լա Բարը այսքան արյուն հեղելով՝ անձնական ինչ-ինչ նպատակներ չի հետամտում. նա բացարձակապես անտրամաբանական էր համարում այն հանգամանքը, որ երեք զորատեսակների հրամանատարներ անտրտունջ հաշտվել էին իրենց նվաստացուցիչ վիճակի հետ եւ նույնիսկ աշխատավարձի բարձրացում չէին խնդրում. նա վճռեց շոշափել զինվորականության տրամադրությունը՝ պարզելու նրանց հնազանդության շարժառիթը. ինչո՞ւ չեն ապստամբում, ինչո՞ւ չեն պահանջում, որ ինքը հեռացնի աներեւակայելի իշխանությամբ օժտված այդ քաղաքացիականին: Մի անգամ ամենախիզախ ու ազահ հրամանատարներին նա հարցրեց, թե չի՞ թվում, արդյոք, որ ժամանակն է արդեն թոցնելու արյան ծարավ, զինված ուժերի արժանապատվությունը տրորած այդ դուրսպրծուկի կատարը եւ, ի պատասխան ու ի զարմանս լսեց. «Օ՛, ոչ, իմ գեներալ, դուք չափազանցնում եք»,- այդ պահից նա այլեւս գլուխ չէր հանում, թե ով ում հետ է. ով՝ ում դեմ՝ խորամանկ այդ համակարգում, որ կոչվում էր Ամաջընթաց կարգուկանոնի շրջանակում. որից դիակի սուր հոտ էր փչում, ամեն անգամ հիշեցնելով նրան, վիճակախաղի պատմության հետ կապված, խեղճ երեխաների ճակատագրերը: Բայց Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարն աչալուրջ էր. սանձահարողի սառը ինքնատիրապետությամբ նա մա-

բեց իր տիրակալի այրող տագնապները. «Քնեք հանգիստ, իմ գեներալ, ձերն է աշխարհը,- հաճախ կրկնում էր Սաենսը եւ կրկին համոզում գեներալին, որ իրեն պատկանող աշխարհում ամեն բան պարզ ու հասարակ է, եւ սահմանված կարգը փոխելու հարկը չկա. եւ կյանքն ընթանում էր առաջվա պես, եւ կրկին նա դեսուդեն էր նետվում գերեզմանային այդ խավարում, ըստ էության ոչ մեկին չպատկանող այդ տանը, իրեն խորապես զզվեցրած պրեզիդենտական այդ դամբարանում եւ հարցնում ինքն իրեն. «Ո՞վ եմ ես գրողը տանի մա՞րդ եմ թե նրա արտացոլանքը հայելու մեջ ո՞վ եմ ես եթե արդեն առավոտվա ժամը տասնմեկն է իսկ շուրջբոլորս ոչ մի շունչ չկա նույնիսկ հավ մի խղճուկ հավ չկա պալատ կոչված այս անապատում»,- այսպես, ինքն իր հետ խոսելով, նա տրվում էր հիշողություններին. փառավոր այն ժամանակներն էր հիշում, երբ արեւածագի հետ լսում էր բորոտների ու կաթվածահարների աղմկոտ իրարանցումը,- ճաշի մնացորդների համար սրանք կռվում էին շների հետ,- երբ սանդուղքներին կռվերը թրքում էին հոտավետ բլիթներ, որոնց վրա քանի՛-քանիսն են սայթաքել, երբ հեռավոր վայրերից եկած տղամարդիկ ու կանայք ծնկի էին իջնում իր դիմաց, խնդրում բուժել իրենց խոցերը, կնքել երեխաներին, փրկել փորլուծից (նրանք կասկած չունեին, որ գեներալի կամքը ի զորու է ստամոքս պնդացնել), երբ աղերսում էին. «Տվեք ձեր ձեռքը, իմ գեներալ, խաղաղեցրեք իմ սիրտը, դուք, միայն դուք կարող եք դադարեցնել կրծքատակիս այս երկրաշարժը»- երբ անսահման հավատով ասում էին. «Նայեք ծովին, իմ գեներալ, միայն ձեր առաջ են խաղաղվում փոթորիկները: Աչքներդ երկնքին հառեք, իմ գեներալ, միայն դուք կարող եք պատռել խավարման վարագույրը: Գետնին գցեք ձեր հայացքը, միայն ձեզանից է սարսափում ժանտախտը»: Իր ոտքը եկած հազարավոր այդ մարդիկ խորապես համոզված էին, որ նա ամենազոր է, որ իր կամքը կարող է թելադրել քամիներին ու կարգի գցել տիեզերքը, որ, եթե պահանջվի, կարող է ուժերը չափել հենց աստվածային նախախնամության հետ. նա չէր մերժում ոչ մեկին, բավարարում էր խնդրանքները, հետզհետե ինքն էլ տոգորվելով մոլեռանդ այդ հավատով,- նա տալիս էր մարդկանց ինչ կարող էր եւ վերցնում առաջարկածը ոչ թե այն պատճառով, որ ծայրաստիճան բարի էր ու զգայուն, այլ ա-

բովհետեւ երկաթյա լարդ էր պետք ունենալ, որ կարողանայիր զլանալ փոքրիկ ուրախություններ պատճառել նրանց, ովքեր այդպես անմնացորդ նվիրումով հավատում էին իրեն, ովքեր այդպես անկեղծորեն փառաբանում էին նրա հզորությունը, գովերգում նրա իսկական եւ կեղծ առաքինությունները: Իսկ հիմա, ահա, չկար մեկը, որ դիմեր իրեն խնդրանքով, չկար մեկը, որը, պարզապես, ասեր. «Բարի լույս, իմ գեներալ: Ինչպե՞ս քնեցիք»,- նրա հոգում չէր մնացել նույնիսկ տարօրինակ այն սիրվանքը, որ ծնում էին լուսամուտի ապակիները փչրող գիշերային պայթյունները եւ խուճապ գցում բանակում,- այդ պայթյուններն էին օգնել նրան զգալու, որ դեռ ողջ է ինքը. լավ է պայթյուն լինի, քան այս մեռյալ լռությունը, որ թագավորում է հիմա պալատում եւ զլուխ ճաքեցնում, խանգարում քնել գիշերը. նա տերն էր ողջ երկրի, բայց ավելի ուժեղ չէր, քան պատին ընկած իր ստվերը. բոլոր կարգադրությունները, որ նա տալիս էր կամ մտադիր էր տալ, պարզվում էր, կատարված էին լինում մինչեւ շրթները շարժելը, ուղեղում լրիվ չհասունացած ծածուկ մտքերը մեկն արդեն իրագործած էր լինում եւ նույնիսկ տեղեկացրած պաշտոնական լրագրին, որ նա, սովորության համաձայն, կարդում էր սիեստայի ժամերին, ճոճում պառկած. խոշոր տառերը ճչում էին նրա յուրաքանչյուր քայլի, յուրաքանչյուր տնքոցի ու յուրաքանչյուր մտադրության մասին, իսկ լուսանկարները ցուցադրում էին այն կամուրջը, որ նա մտադրվել էր կառուցել, բայց մոռացել էր հրամանն արձակել, այն դպրոցը, ուր երեխաներին փողոցներն ավել էին սովորեցնում միայն, եւ վերջապես, իրեն՝ շքանշաններով ու ժապավեններով, կաթնատու կովի եւ հայի ծառի կողքին, ինչ-ինչ հանդիսավոր արարողության բացման ժապավենը կտրելիս: Եվ նա առաջվա պես հանդիսա չուներ, պատավ փղի վիթխարի ոտքերով քստքստացնում էր իր մենության ամայի տան ներսում, փնտրում նույնիսկ չկորցրածը, որովհետեւ կորուստի զգացողությունն անվերջ հետապնդում էր նրան, եւ նկատում էր, որ մեկն արդեն թուչնավանդակների վրա շոր էր գցել, հաշվել ֆերմայի կովերը եւ յուրաքանչյուր լուսամուտից նայել ծովին. ամեն ինչ իր տեղում էր, անվնաս, եւ նա լամպը ձեռքին ննջասենյակ էր գնում. մի անգամ, միջանցքով անցնելիս, հանկարծ ճանաչեց իր իսկ ձայնը, որ լվում էր

պրեզիդենտական գվարդիայի պարեկների սենյակից եւ ծանուկ ծիկրակելով, ծիսոտ սենյակում, հեռուստատեսային էկրանի ապոտ լուսարձակման դիմաց տեսավ ննջող մի խումբ սպաների, իսկ էկրանին ինքն էր՝ փոքր-ինչ նիհարավուն ու ձիգ,- «Բայց ոտքից գլուխ ես էի մայր»: Նա նստած էր պետական զինանշանի փոնին, սեղանի մոտ, որի վրա ոսկյա շրջանակներով երեք ակնոց էր դրված, իր առանձնասենյակում, որտեղ պիտի մեռներ համաձայն գուշակ-պայծառատեսի կանխատեսման եւ ելույթ էր ունենում պետական գործերի վերլուծությամբ, օգտագործելով այնպիսի խելոք, հույժ գիտական տերմիններ, որ իրականում երբեք չէր կարող արտասանել, գրողը տանի: Այս տեսապատկերը նրան ավելի հուզեց, քան ծաղիկների մեջ ընկղմված սեփական դիակի ժամանակին տեսած պատկերը,- «Ոտքից գլուխ ես էի մայր եւ խոսում էի իմ սեփական ձայնով ես որ երբեք էլ չհաղթահարեցի պատշգամբից մարդկանց երեւալու ամոթս որ երբեք չհաղթահարեցի ժողովրդի առաջ ելույթ ունենալու վախս... Ոտքից գլուխ ես էի մի իսկական մահկանացու մայր: Եվ ես քարացել էի այն մտածմունքից թե ինչպես է ստացվում նման հրաշքը»:

Հեռուստատեսային այս հաղորդումը մեծ պայթյուն առաջացրեց՝ վարչակարգի բոլոր տարիների մեջ գեներալի դժգոհության հազվադեպ պայթյուններից մեկը, սակայն Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը նրա դիմաց կանգնեց բացարձակապես անվրդով. «Զափազանցնելու կարիք չկա, գեներալ,- ասաց նա իր քաղցրավուն ձայնով,- հարկ եղավ դիմել անօրինակ այդ միջոցին, որպեսզի խորտակումից փրկենք կարգուկանոնի շրջանակներում մեր Առաջընթացի նավը. երկնային ներշնչանքով եղավ, գեներալ, եւ դրա շնորհիվ մենք կարողացանք կրճատել ժողովրդի կասկածը, միս ու արյուն իշխանության գոյության՝ ձեր գոյության նկատմամբ, գեներալ: Մարդիկ պետք է իմանան, որ յուրաքանչյուր ամսվա յուրաքանչյուր վերջին չորեքշաբթի օրը դուք զեկուցելու եք կառավարության գործունեության մասին, եւ նրանք պետք է լսեն ռադիոյով ու տեսնեն հեռուստատեսությամբ, քանզի նման զեկուցումները փարատում են հասարակության վիշտը: Ես ինձ վրա եմ վերցնում պատասխանատվությունը, գեներալ: Ես եմ այստեղ հարմարեցրել վեց արեւածաղկի նման վեց միկրոֆոնների այս

սափորը. այս միկրոֆոններով ձայնագրվել են բարձրաձայն ասված ձեր բոլոր մտքերը եւ ձեր բոլոր պատասխանները իմ հարցերին, որ տալիս եմ ձեզ ուրբաթ օրերին: Դուք չէիք էլ ենթադրում, որ ձեր պարզհոգի պատասխանները մի-մի դրվագ են ազգին ուղղված ամենամայա ուղերձից: Բայց ես ուզում եմ հատուկ ընդգծել, որ երբեք չեն օգտագործվել կեղծ, սարքովի կադրեր, ինչպես եւ չեն հաղորդվել ձեր կողմից չարտասանված բառեր: Այդ հարցում կարող եք համոզվել անձամբ, ահա կինոժապավենները եւ ձայնապնակները»: Եվ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը սեղանին դրեց կինոժապավեններն ու ձայնապնակները, նաեւ այն թուղթը, որի վրա շարադրված էր եղելության բացատրությունը,- «Ես ստորագրում եմ այս թուղթը ձեր ներկայությամբ, գեներալ, եւ սպասում ձեր վճռին»: Նա ապշանքով նայեց Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարին եւ հանկարծ նկատեց, որ նա առաջին անգամ իր մոտ է եկել առանց շան, առանց զենքի ու գունատ է մեռյալի պես, եւ հոգոց քաշելով ասաց. «Դե, լավ, Նաչո, կատարեք ձեր պարտականությունը»: Եվ ավելի ծեր, քան եղել էր երբեւէ, անսահման հոգնած տեսքով խրվեց փափուկ բազկաթոռի մեջ, նայելով դիմանկարներում պատկերված հերոսների դավաճանական աչքերին. նրա հայացքը սովորականից ավելի թախծոտ էր ու մռայլ, իսկ դեմքին քարացել էր թաքուն մտադրությունների մշտական արտահայտությունը. նույն այդ քար արտահայտությունը նրա դեմքին տեսավ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը երկու շաբաթ անց, երբ առանց թույլատրության առանձնասենյակ մտավ, ետեւից քարշ տալով իր դոդերմանին,- «Արտակարգ նորություն է, ձերդ գերազանցություն: Զինված ապստամբություն է պատրաստվում: Միայն դուք կարող եք կանխարգելել»: Եվ գեներալը վերջապես նկատեց պարսպի պես անառիկ, կախարդանքի պես հանելուկային այդ մարդու հոգու աննկատելի ճաքը, որ փնտրել էր երկար տարիներ: «Իմ վրեժխնդրության մայր Բենդիսիոն Ալվարադո,- ասաց նա ինքն իրեն,- վախից սիր տակը թրջել էր խղճուկ այդ կոտոշավորը»: Ոչ մի ակնարկով, սակայն, նա չմատնեց իր մտքերը, մտադրությունները. Սաենս դե լա Բարին բարուրեց հայրական գորովանքի շոգերով. «Մի հուզվեք, Նաչո, մենք շատ ժամանակ ունենք եւ ոչ ոք մեզ չի խանգարի պարզել, թե կեղծիքից էլ անհա-

վաստի թվացող հակասական այս տեսակետերի [illegible] տե՞ղ է, գրողը տանի, ճշմարտությունը, իսկական ճշմարտությունը»: Լսելով այս արտահայտությունը, Սանտոս դե լա Բարը նայեց գրպանի ժամացույցին. «Շուտով յոթը կլինի, գեներալ: Երեք պրատեսակների հրամանատարները հիմա ընթրում են իրենց տնում, ընտանեկան շրջապատում, կանանց, երեխաների հետ, որ պեսոի նույնիսկ տնեցիները ոչինչ չկասկածեն. նրանք տներից դուրս կգան քաղաքացիական հագուստով, առանց պահակախմբի, դուրս կգան ետնամուտքերից, որտեղ նրանց սպասելու են ծառայողական ինքնաշարժերը, որ կանչել են հեռախոսով, իրենց հետեւող մեր մարդկանց խճճելու նպատակով, սակայն վարորդները մեր մարդիկ են, գեներալ»- «ՀՀը,- ասաց նա ու ժպտաց:- Պետք չէ այդպես հուզվել: Նաչո: Բացատրեք ինձ, ավելի լավ է, թե ինչպե՞ս եք կարողացել մինչեւ օրս փրկել ձեր կաշին, երբ մենք ավելի շատ թշնամի ենք ունեցել, քան զինվոր, եթե նկատի ունենանք ձեր ձեռքով կտրված գլուխների քանակը»: Սանտոս դե լա Բարը, սակայն, ականջ էր դնում միայն իր գրպանի ժամացույցի թույլ զարկերակին, որովհետեւ այդ զարկերակի թելից էր կախված իր կյանքը: «Երեք ժամից քիչ է մնացել, գեներալ: Հետեւակային զորքերի հրամանատարն այս պահին Կոնդե զորանոցն է մեկնում, ռազմածովային ուժերի հրամանատարը՝ նավահանգստի ամրոց, օդային նավատորմիղինը՝ Սան Խերոնիմոյի բազա: Նրանց դեռեւս կարելի է ձերբակալել, նրանց պոչից կառչած շարժվում են ազգային անվտանգության, իբրեւ, բանջարեղեն տեղափոխող սայլերը»: Բայց գեներալը բոլորովին չանհանգստացավ. նա զգաց, որ Խոսե Իգնասիո Սանտոս դե լա Բարի ահող տագնապը ազատագրում է իրեն այդ մարդու ծառայությունների բեռից, ծառայություններ, որոնք առավել դաժան էին, քան ինքը՝ իշխելասիրությունը կկարողանա դաժանանալ: «Հանգստացեք, Նաչո,- ասաց նա,- հանգստացեք եւ բացատրեք ինձ, թե ինչո՞ւ դուք տեր չդարձաք մեծ, շոգենավի պես մեծ մենաստանը: Ինչո՞ւ եք դուք աշխատում եզի նման, եթե փողը ձեզ չի հետաքրքրում: Ինչո՞ւ եք դուք սպրում զորանոցային նորակոչիկի պես, երբ նույնիսկ ամենաաղքատի տիկնոջ վարտիքն է տրաքում ձեզ հետ սնկողին մտնելու ցանկությունից: Ի՞նչ է դուրս գալիս. դուք վանականի՞ց էլ սուրբ եք, Նաչո»: Բայց խո-

սե Իգնասիո Սաենս դե լա Բարը թրջվել էր սառցե քրտինքից, որ դուրս էր գալիս անվրդովության դիմակի տակից, շնչահեղձ էր լինում դիակիզման վառարանի կրակ ունեցող այս շոգ առանձնասենյակում: «Ժամը տասնմեկն է,- ասաց նա,- այլևս ուշ է: Հիմա ապստամբության պայմանական ազդանշանը հեռագրով հաղորդվում է երկրի բոլոր զորանոցներին»: Այդպես էլ կար, ապստամբած գեներալները չքանչաններն էին ամրացնում չքերթային համազգեստներին, որ լուսանկարվեին նոր, կառավարող խունտայի պաշտոնական խմբանկարի համար. ապստամբած գեներալների համհարզները նրանց անունից անհակառակորդ այս վերջին կռվի հրամաններն էին արձակում. մարտական բոլոր գործողությունների էությունը սա էր. բանակը իր հսկողությունն էր սահմանում կապի կենտրոնների եւ կառավարական կարեւորագույն շենքերի վրա: Իսկ այնտեղ, պրեզիդենտի առանձնասենյակում, նորին գերազանցությունը աչքն էլ չթարթեց, երբ թավշամորթ լորդ Կյուխելը ազեռը կանխազդայով՝ թրթռացրեց բոլոր մկանները, ուռքի ելավ եւ նրա ստորին շրթունքից թաթերին ծորաց անվերջանալի արտասուքի պես թուքը: «Մի վախեցեք, Նաչո,- ասաց գեներալը,- ավելի լավ է բացատրեք, թե ինչո՞ւ եք այդպես սարսափում մահից»: Եվ Խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարը վրայից պոկեց քրտինքից թրջված, ցելուլոիդե օձիքը եւ օպերետային երգիչ-բարիտոնի նրա դեմքը անշարժացավ. «Դա բնական է,- ասաց նա:- Վախը մահից՝ կյանքի երջանկության այրվող ածուխն է: Ձեզ անհասանելի է այդ վախը, ահա թե ինչու չեք զգում, գեներալ»: Եվ, սովորության համաձայն, հաշվելով տաճարի զանգերի զարկերը, ուռքի ելավ. «Տասներկու: Ամեն ինչ վերջացած է: Այս երկնքի տակ ձեզ հավատարիմ ոչ մի կենդանի շունչ չկա այլեւս: Ես վերջինն էի, գեներալ»: Բայց գեներալը չշարժվեց իր բազկաթոռում, մինչեւ չլսեց դե Արմաս հրապարակով ընթացող, գետինը թնդացնող տանկերի ծանր դղրդոցը եւ լսելով այդ գվվոցը, ժպտաց. «Դուք սխալվում եք, Նաչո, ինձ հետ է ժողովուրդը»: Եվ դա այդպես էր: Նրա հետ էր խեղճ ու հավերժական ժողովուրդը, որը լուսաբացից էլ առաջ փողոց էր ելել անհասանելի ծերի անակնկալ քայլով ոգեշնչված, պետական ռադիոյով եւ հեռուստատեսությամբ նա հուզված դիմեց ողջ ազգին, բոլոր հայրենասերներին՝

քաղաքական ինչ հայացքների պատկանելիս էլ լինեն, եւ հայտարարեց, որ բոլոր զորատեսակների հրամանատարները իր անձնական ցուցումով, վարչակարգի անխախտելի գաղափարներով տոգորված, ինչպես միշտ՝ արտահայտելով ժողովրդի ազատ կամքը, պատմական այս կեսգիշերին ոչնչացրին տարերային արդարադատությամբ պատժված արյունախում այդ քաղաքացիականի ահաբեկման գերատեսչությունը: Խոսե Իգնասիո Սաեն դե լա Բարը զլխիվայր կախվեց դե Արմաս հրապարակի լապտերից, իր իսկ սեռական օրգանը բերանը խցկած, ինչպես եւ դուք կանխատեսել էիք, իմ գեներալ, երբ հրամայեցիք օտարերկրյա դեսպանատները պաշարել, որպեսզի արյունարբու դահիճը չթաքնվեր դրանցից որեւէ մեկում եւ չխնդրեր քաղաքական ապաստարան: Մինչեւ կախելը ժողովուրդը քարկոծեց նրան, բայց հարկ եղավ նախ գնդակներով մաղ սարքել նրա գիշատիչ շանը, որը երեք քաղաքացիականի փոր թափեց եւ բզկտեց չորս զինվորականի. դա պատահեց ստոր դահճի որջը գրոհելիս. մարդիկ այդ որջի լուսամուտներից փողոց շպրտեցին ավելի քան երկու հարյուր նոր, գործարանային պիտակներով դիպակե ժիլետ, երեք հազար զույգ իտալական չհագած կոշիկներ,- երեք հազար, իմ գեներալ, ահա թե ինչի վրա էր մսխում նա պետական միջոցները,- եւ, սատանան գիտե, թե գարդենիայի քանի տուփ,- չէ՞ որ նա մշտապես մերակը թարմ գարդենիա էր խցկում,- եւ հետաքննության պարտիտուրայով Բրուկների բոլոր ձայնապնակները: Այնուհետեւ մարդիկ նկուղներից բաց թողեցին կալանավորներին եւ այրեցին հոլանդական նախկին գժանոցի խոշտանգման խցերը, բղավելով. «Կեցցե գեներալը, կեցցե իսկական տղամարդը: Կեցցե նա, ով բացահայտեց ճշմարտությունը»: Բոլորն էլ համոզված էին, որ դուք ոչինչ չգիտեիք, իմ գեներալ, որ դուք ճախրում էիք ամպերի մեջ, որ ձեր հոգու բարությունը չարաշահում էին անվտանգության ծառայության նողկալի խոշտանգիչները, որոնց որպես առնետների, որսացինք ձեր օգնությամբ, իմ գեներալ, որովհետեւ դուք հրամայեցիք զրկել դահիճներին ամեն կարգի պաշտպանությունից ու հսկողությունից, որպեսզի մարդիկ կարողանային ազատություն տալ իրենց ատելությանը, որ կուտակվել էր անվտանգության ամենազոր ծառայության երկար տարիների ընթացքում:

Նա հավանություն տվեց տարբերային գործողություններին՝ «Համաձայն եմ», եւ նրա սիրտը լցվեց զանգերի ցնծալի զողանջից, դե Արմաս հրապարակում հսկայական ցուցանակներով հավաքված մարդկային ամբոխների ազատության երգերից ու շնորհակալական, ուրախ բացականչություններից. ցուցանակներին գրված էր. «Թող աստված պահի-պահպանի բոլոր մեծերից մեծագույնին, որը մեզ ազատագրեց սհաբեկման խավարից»: Զանգերի զողանջը եւ մարդկային ամբոխների գվվոցը նրան հիշեցնում էին հեռավոր, փառավոր ժամանակները,- թեեւ ընդամենը վաղանցիկ արձագանքներ էին,- եւ լսելով այդ զողանջն ու գվվոցը, նա ետնաբակում հավաքեց իր իսկ իշխանության վզից կալանավորի շղթան կտրելուն օգնած սպաներին, եւ ներշնչման պոռթկման մեջ, մատի մի շարժումով նրանցից կազմեց զառամյալ վարչակարգի վերջին գերագույն հրամանատարությունը: Սրանք փոխարինեցին գեներալներին՝ Լետիսիա Նասարենոյի եւ որդու դահիճներին, որոնց տկլորված, միայն տակաշորերով որսացին օտարերկրյա դեսպանատների դարպասների տակ, ուր նրանք փորձում էին ապաստարան ստանալ: Սակայն նորին գերազանցությունը չճանաչեց նրանց, մոռացել էր անունները, իսկ գլխավորը՝ սրտում փնտրում ու չէր գտնում զայրույթի այն լիցքը, որ մի ժամանակ ուզում էր մինչեւ կյանքի վերջը պահել,- փնտրեց ու չգտավ ոչինչ, բացի վիրավորված ինքնասիրության մոխրից եւ ուշ էր այլեւս այդ մոխրից կրակ բորբոքել: Չէր բորբոքվում: «Թող ռադները քաշեն»,- հրամայեց նա եւ մարդասպան-գեներալներին նստեցրին այն նավը, որը մեկնում էր մի երկիր, որտեղ ոչ մեկին նրանք պետք չէին, որտեղ ոչ ոք չէր հիշելու այդ խղճուկ կոտոշավորներին: Նա նոր կառավարության առաջին նիստը վարեց որոշակի այն զգացողությամբ, որ նոր դարի, նոր սերնդի բոլոր այս ընտիր ներկայացուցիչները հին ժամանակների քաղաքացիական նույն նախապարներն են՝ թույլ ընավորությամբ, փոշոտ, արձակ սյուրթուկներով, միայն թե այս նորերը ավելի փառասեր են, վախկոտ, ստորաքարշ, անօգտակար, անպետք եւ այս անպատեհությունը՝ արտաքին անհերեւակայելի պարտքերի առկայության դեպքում. պարտքերի գումարը, գերազանցում էր այն ամենի արժեքը, ինչը դեռեւս կարելի էր վաճառել վերջնականապես անկում ապրող վշտի այս

թագավորությունում. «Սարահարթի երկաթուղագծի վերջին գնացքն անդունդն ընկավ, խոլորձների մացառուտների մեջ, իմ գեներալ, եւ հիմա հովազներն են ննջում նրա վագուկ նստարաններին. Նոյի տարվա անվավոր շոգենավի բեկորները լողում են բրնձարտերի ճահիճներում, նամակները, որ բերում էր շոգենավը, փտում են փոստային պարկերում, եւ ստելերյան կովերի՝ մի զույգ խայտում է պրեզիդենտական խցիկի լուսնային հայելիների մեջ, ապարդյուն հուսալով գեղեցկուհի ջրահարսեր սաղմնավորել: Եվ միայն դուք եք անտեղյակ, իմ գեներալ: Անշուշտ, դուք հեշտությամբ էիք հավատում կարգուկանոնի շրջանակներում Առաջընթացին, որովհետեւ ձեր շփումը իրականության հետ սահմանափակվում էր միայն մեկ օրինակ տպաքանակով, միայն ձեզ համար հրատարակվող պաշտոնական լրագրի ընթերցմամբ. այդ լրագիրը տպագրում էր ձեզ ցանկալի լուրեր եւ հաճելի լուսանկարներ, ազդագրեր, հայտարարություններ, որոնք ձեզ տանում էին գայթակղությունների ու վայելքների, մեր առօրյա ձանձրալի սիեստայից այնքան տարբերվող աշխարհը»:

«Ի՞նչ ասեմ այդպես էլ կար քանի դեռ ոչնչի չհավատացող իմ աչքերով չտեսա ու չհամոզվեցի որ նախարարական ապակյա հսկա շենքերի ետեւում թաքնվում են նավամատույցի մերձակա բլուրներին թառած նեգրական խայտաբղետ նույն խրճիթները որ զբոսայգիների երկայնքով մինչեւ ծովը տնկած արմավենիները ինչպես նաեւ մենատների միաձեւ կեղծ դասական ոճի սյունասրահները քողարկում են անհամար մեր փոթորիկներից մեկի ավերած ետնախորշերի թաղամասերը որ երկաթուղագծի երկկողմյան ծաղկանոցները նրա համար են որպեսզի պրեզիդենտական վագոնի լուսամուտից աշխարհը երեւա գույնզգույն այն ջրաներկերի նման որոնցով մայրս իմ հոգու Բենդիսիոն Ալվարադոն պիրոլ էր դարձնում միակերպ ու գորշ թռչնակները»: Նոր արբանյակները խաբում էին նրան ոչ թե սիրաշահելու նպատակով, ինչպես հիշարժան ժամանակների վերջում վարվում էր գեներալ Ռոդրիգո դե Ագիլարը, եւ ոչ նրա համար, որ ավելորդ անհանգստություն չպատճառեն, ինչպես, ավելի շատ խղճահարվելով, Լետիսիա Նասարենոն էր վարվում, այլ որովհետեւ ուզում էին վերջնա-

* Ստելերի կով - ծովային կաթնասուն, վերացել է մեր դարում:

կանապես ստրուկ դարձնել նրան իր իշխանությամբ, եւ նա դառնում էր՝ ընկնելով ու ավելի խոր ընկղմվելով ծերունական զառամության մեջ՝ իր եռանաբակում, սեյբոյի տակ, ճոճում պառկած. ամենն ինչ պատրանք էր ու խաբկանք, նույնիսկ դպրոցական աղջիկների երգչախումբը, որ երգում էր կանուչ ծառին նստած չալիկ թռչնակի մասին. շուրջն ամենն ինչ անիրական էր.- «Սա կյանք չէ, այլ անհեթեթ մի բան»: Նա ջանում էր արդեն սրտին չափազանց մոտ չընդունել կեղծիքը եւ փորձեց Հաչովել իրականության հետ պատության բարդավաճման համար անհրաժեշտ հայրենական հինա եւ այլ դեղանյութեր արտադրող ձեռնարկությունների վերականգնման վերաբերյալ հրամարտակ արձակելով. սակայն իրականություններ հզի էր չնախատեսված անակնկալներով. այնպես էր փոխվել աշխարհը, որ կյանքում կային իր իշխանությանը բացարձակապես չենթարկվող ինչ-ինչ բաներ եւ սա նա չգիտեր.- «Ինչպե՞ս վերականգնել որեւէ արտադրություն, իմ գեներալ, եթե մենք չունենք այլեւս հինայի ծառ, չունենք կակտ, ինդիգո, եթե չի մնացել ոչինչ. բայի ձեր անձնական, անհատնում հարստությունից, որը, սակայն, կորչում է իզուր»: Եվ, այսուհանդերձ, տեղեկանալով իրավիճակին, նա իրեն չկորցրեց եւ մարտահրավերի ոճով գրություն հղեց հին դեսպան Ռաուկարբերին, հուսալով, թե նա գոմինս խաղալիս կրկին մի ձեւակերպում կգտնի, բայց դեսպանը պատասխանեց նույն ոճով. «Ոչ մի բան, ձերդ գերազանցություն. չի ստացվի: Այս ոգի երկիրը մի գրոշ էլ չարժե, բացառությամբ, իհարկե, ծովի, որն այնքան թափանցիկ է ու սիրաշարժալի, որ կարելի է հատակին կրակ վառել եւ ամբողջ աշխարհի համար խեցգետնի հոտակալ ապուր եփել: Այնպես որ՝ մոռացեք, ձերդ գերազանցություն, մենք պատրաստ ենք ծովն ընդունել այն պարտքերի դիմաց, որ չեն մարի ձերդ գերազանցության նման գործարար հերոսների նույնիսկ հարյուրավոր սերունդները»: Նա Ռաուկարբերի առաջարկը լրջորեն չընդունեց եւ ճանապարհ դրեց նրան մինչեւ սանդուղք, ինքն իր մեջ մոռացելով. «Մայր իմ Բենդիսիոն Արմարաղ տես թե ինչ վայրենիներն են այս գրինգոները: Նրանց մարինոր մեկն է՝ ոնց խժռեն մեր ծովը»: Նա հրաժեշտ տվեց հյուրին, սովորականի նման թփթփացրեց նրա ուսը եւ կրկին մնաց ինքն իր հետ, հասավ ստրահարթի մշուշների ցնորական ամպե-

ին, մոլորվեց այնտեղ, որովհետեւ շուրջբոլորը դատարկություն էր. մարդկային ամբոխները լքեցին դե Արմաս հրապարակը, իրենց հետ տարան միանման ցուցանակներն ու թաքցրին իշխանության տված ծեծված կոչերը, որ պետք էին գալու հաջորդ անգամ, երբ նման իրավիճակ ստեղծվեր. ամբոխները ցրվեցին՝ հենց զինվորները դադարեցրին ծափահարությունների արանքում ուտելիքի բաշխումը եւ ամայացավ ոչ միայն դե Արմաս հրապարակը, այլեւ պալատը, թեեւ նա հրաման էր արձակել չփակել դարպասները, որպեսզի ուզածդ պահին ներս մտներ յուրաքանչյուր ոք, ինչպես այն տարիներին, երբ սա տուն էր բոլորի համար եւ ոչ թե հուզարկավորման գրասենյակ: Բայց նա մենակ չէր, քանի որ վերադարձել էին իշխանության տան պատերի տակ երկար տարիներ ապրած նրա բորոտները, կաթվածահարները, կույրերը, որոնց պարզորոշ պատկերացրել էր Դեմիտրիո Ալղոուսը՝ այրվելով Երուսաղեմի դարպասների մոտ եւ, ասես, տեսնելով աչքք, թե ինչպես են վերադառնում նրանք՝ կործանված, բայց արմատախիլ չեղած, քաջ գիտենալով, որ կրկին պալատ են մտնելու, իշխանության այդ բնակատեղին եւ բուժիչ աղ են խնդրելու այն մարդու ձեռքից, ով դիմացել էր ճակատագրի բոլոր հարվածներին եւ չէր հնթարկվել ամենադաժան կրքերին, ով խուսափել էր մոռացության ամենանենգ ծուղակներից, քանզի հավերժական էր: Այո, իրագործվեց Դեմիտրիո Ալղոուսի կանխատեսումը. առավոտվա կովկիթից հետո պալատ վերադառնալիս դեներալը կրկին տեսավ այդ ամբողջ եղբայրությունը. ինչ-ինչ մթերքների մնացորդներից նրանք կերակուր էին եփում պահածոյի տուփերի մեջ, աղյուսաշար, օջախանման կրակարանի վրա. նրանք զբաղեցրել էին ողջ ետնաբակը, ձեռքերը խաչած փռվել խսիրներին, թունավոր արտաթորանքներից քայքայված իրենց խոցերի վրա, բուրումնավետ վարդաթփերի ստվերի տակ: Նա կարդադրեց նրանց համար իսկական օջախ սարքել, գնել տվեց նոր խսիրներ եւ ետնաբակի խորքում հրամայեց արմավենու տերեւներից ծածկ հյուսել, որպեսզի ամբողջ այդ եղբայրությունը չխցկվեր Իշխանության տուն, բայց օր չէր լինում, որ այս կամ այն բորոտին չտեսնեին ընդունելությունների դահլիճում, պալատի որեւէ գորգին մեկնված, օր չէր լինում, որ կաթվածահարներից որեւէ մեկը վայր չընկներ սանդուղքից ու

մահացու չՀարդոտվեր. նա կարգադրեց փակել դռները, որ բորոտները ներս չխուժեին, պատերին հենվելով թարախի ու արնաՀոտերի բծեր չթողնեին. նա չէր կամենում, որ սանիտարական ծառայության սրսկումից, պալատի ամեն ինչը, կարբոլաթթվի հոտ արձակեր. սակայն, որքան եւ ինչպես էլ վռնդեին, միեւնույն է, բորոտները, կույրերն ու կաթվածահարները թափանցում էին Իշխանության տուն, սողոսկում սենյակները, քանզի նրանց առաջ էր մղում հին, վայրի ու անհաղթահարելի հավատը՝ թե կսպաքինվեն անպաշտպան, զառամյալ այդ ծերի հրաշագործ շնորհով, որից ոչ ոք արդեն ոչինչ չէր ակնկալում, որը լուսնոտի նման թափառում էր իր հիշողության գոլորշիների ճահճում, կողմնորոշվում ափլփելով, պատի ճեղքերում պահված օրագրային թղթի շերտիկներով, որը ժամեր շարունակ դուրս չէր գալիս ճոճից, խորհում, խորհում էր, թե ինչպե՞ս, գրողը տանի, խուսափի նոր դեսպան Ցիշերից,- սա համառորեն պնդում էր երկրում տարածված դեղին տենդախտի համաճարակի բոթը հայտարարել, որպեսզի համաճարակը առիթ ծառայեր ծովային հետեւակի ափելին, անշուշտ, դեսպանի ներկայացրած երկրի նավերով. փոխադարձ օգնության պայմանագրի համաձայն ծովային հետեւակը երկրում մնալու էր անորոշ ժամանակով, որքան անհրաժեշտությունը պահանջեր՝ մինչեւ նոր կյանքի շունչը հաղորդվեր մեր մեռնող երկրին: Նա մտածում էր՝ ի՞նչ անել, եւ հիշեց վարչակարգի առաջին տարիները, հիշեց, թե ինչպես համաճարակը պատրվակ բռնելով՝ ինքն իր վրա վերցրեց արտակարգ լիազորություններ եւ ժողովրդական հուզումների լուրջ սպառնալիքի քթի առաջ ռազմական դրության կարգ սահմանեց: Բայց այն օրերին նա ժանտախտի եւ ոչ թե դեղին տենդախտի համաճարակն էր հայտարարել: Փարոսի կատարին դեղին դրոշ տնկեցին, փակեցին նավահանգիստը, չեղյալ հայտարարեցին կիրակի օրերը, արգելեցին հրապարակայնորեն սգալ հանգուցյալների համար եւ հուղարկավորման ժամանակ սգո քայլերգեր նվագել. զինված ուժերը կոչվեցին պրեզիդենտի արտակարգ սահմանումներն ապահովելու, եւ հիվանդությամբ վարակվածների հետ արտոնվեցին վարվել՝ ինչպես կամենան. սանիտարական թեւակապերով զինվորները հրապարակավ գնդակահարում էին ամենատարբեր դասի մարդկանց, կարմիր շրջանով նշան անում այն տնե-

րի դռները, որոնց բնակիչները կասկածելի էին վարչակարգի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով, որպես կենդանու խարանում էին քրեականների ճակատները, տղամարդակերպ լեզբոսուհիներին ու հաշիշամոլներին, իսկ դեսպան Միտչելի պնդմամբ ժամանած սանիտարական առաքելությունը զբաղվեց պրեզիդենտական պալատի բնակիչներին ժանտախտի վարակից փրկելու գործով. առաքելության անդամները հատակից հավաքում էին օրապակասների կղկղանքը եւ գցնում ոսպնյակի տակ, եւ այս գործողությունը կոչվում էր անալիզ, ջրի ամանների մեջ ախտահանիչ հարեր էին գցում, փորձանմուշ կենդանիներին սնում զզվելի ու անծանոթ խյուսով, եւ գեներալը ծիծաղից թուլանալով, թարգմանչի միջոցով ասում էր նրանց. «Հիմար մի եղեք, միստրներ, այստեղ ձեզանից բացի ուրիշ վարակ չկա»: Բայց նրանք պատասխանում էին. «Ոչ, ձերդ գերազանցություն, կա: Մենք վերից հրաման ունենք՝ որ կա, հրաման ունենք՝ որ լինի»: Եվ նրանք մեղրանման ինչ-որ բան սարքեցին, կանխարգելիչ, թանձր ու կանաչագույն մի դեղամիջոց եւ դրանով ոսքից գլուխ, անկախ դեմքից-դիրքից, լցրեցին պալատի բոլոր այցելուներին,- բոլորին, եւ ամենաանշաններին, եւ ամենանշանավորներին,- եւ այցելուները պրեզիդենտի մոտ ընդունելությանը պարտավոր էին պահպանել սահմանված տարածությունը. նա նստում էր դահլիճի խորքում, ուր հազիվ էր հասնում այցելուի ձայնը, բայց ոչ երբեք չունչը, եւ բարձր բղավելով քննարկում գործնական խնդիրներ տկլոր, ամենաբարձրաստիճան մարդկանց հետ, որոնք չեմին կանգնած մի ձեռքով դիմում էին՝ «Ձերդ գերազանցություն», իսկ մյուսով ջանում ծածկել անօգնականորեն կախ ընկած, զզվելի քսուքով պատած իրենց աղունիկները. ահա թե ինչ էր կատարվում, որպեսզի վարակից փրկեին նրան, ով անքնության տառապանքի մեջ ինքն էր հորինել այդ վարակը ու ամենայն մանրամասնությամբ մշակել աղետի ողջ ընթացքը, ով սարսափազդու լուրեր էր տարածել եւ մարդկանց ստիպում էր հավատալ աշխարհակործան կանխատեսությանը, եւ այս ամենն արել էր առաջնորդ ընտրելով այն սկզբունքը, թե մարդիկ որքան քիչ իմանան, այնքան շատ կվախենան: Նա հոնքն էլ չշարժեց, երբ համհարզներից մեկը, սարսափից գունատված, պատիվ առավ եւ գեկուցեց. «Իմ գեներալ, քաղաքա-

ցիական բնակչության մեջ ժանտախտն ուղղակի կոտորած է սարքել»: Եվ պրեզիդենտական կառքի պղտոր սպակու միջից նա ամայի փողոցներում իր հրամանով կանգնեցրած ժամանակը տեսավ, անշարժ կախված դրոշները, տեսավ խուլ փակված դռները նույնիսկ այն տների, որ խարանված չէին կարմրաշրջան նշաններով, տների քիվերին նստոտած կուշտ ու կուշտ անգղեր տեսավ եւ տեսավ զոհե՛ր, զոհե՛ր, զոհե՛ր... Ամենուր էին, այնքան շատ, որ անհնար էր հաշվելը. դիակներն ընկած էին ցեխոտ ջրափոսերում, կույտ-կույտ թափված էին սրեւի կատաղի լուսավորվածությամբ պատշգամբներում, նեխում էին շուկայի կենտրոնում, բանջարեղենների մեջ: Ոչ ոք չգիտեր զոհերի ստույգ թիվը, համենայն դեպս, ավելի մեծ էր, քան հաշվել էին թշնամական հորդաները, ավելի մեծ, քան ինքն էր ցանկանում. զոհերից շատերը, որպես սատկած առնետներ, աղբարկղն էին նետվել եւ նեխող դիակների ժանտահոտի ու փողոցների սովորական դարշահոտի մեջ նա ճանաչեց, պարզորոշ առանձնացրեց քոսի եւ իսկական ժանտախտի հոտերը, բայց չերկնչեց, չնահանջեց ոչ մեկի խնդրանքի առջեւ՝ կանգնեցնել, դադարեցնել աղետը, քանի դեռ չէր զգացել իրեն դրության ու ողջ իշխանության բացարձակ տեր: Եվ այն ժամանակ միայն, երբ թվում էր, թե ժանտամահը կանգնեցնել չի կարող այլեւս եւ ոչ մի մահկանացու եւ նույնիսկ՝ աստված, փողոցներում անծանոթ մի կառք տեսանք, որի տիրական, սառցե վեհությունը սկզբում ոչ ոք չնկատեց. ներսից սգո թավիշով պատված կառքի լուսամուտից մեզ երեւացին մեռյալ աչքեր, բարակ, նյարդային շրթներ եւ սպիտակ ձեռնոցով մի ձեռք, որն ամեն տան դարպասի մոտ պտղունց-պտղունց աղ էր շաղ տալիս. մենք տեսանք ազգային դրոշի գույնով ներկված գնացքը, որը ճեղքելով գարդենիաների մացառուտները, ընձառյուծներին վախեցնելով, մագիլավորի պես ամենաղժվարանց բարձրեռնային գավառները մագլցեց,- միակ վագոնի վարագուրված լուսամուտից երեւում էին նրա վշտաբեկ դեմքին նկարված աղոտ աչքերը, իր իսկ մանկության անկենդան դարձած անապատի վրա աղ շաղ տվող նույն ձեռքը. մենք տեսանք Նոյի տարվա անվավոր շոգենավը, որը գրամաֆոնային աշխույժ պարեղանակներ զկրտալով, խուսավարում էր խութերի, ավազոտ ծանծաղուտների եւ գարնանային ողողման դեւի կատաղության

ծնունդ, իսկը կուսական անտառ, ծառակուտակների միջեւ,- պրեզիդենտական խցիկի լուսամուտին մենք տեսանք վերջալույսի պես աղոտ նրա աչքերը, անգույն շրթները եւ երաշտից տոչորված ծառերին ամենափրկիչ ադի պաղունցներ շաղ տվող ձեռքը, ավելի ճիշտ՝ միայն դաստակը. նրանք, ովքեր ուտում էին այդ աղը կամ լիզում աղեցան հողը, ակնթարթորեն ապաքինվում էին եւ դառնում անխոցելի՝ հիվանդության, չար աչքի եւ մնացած այլ փորձանքների դիմաց:

Այժմ, դեպի իր վերջը գնալով, նա արդեն չզարմացավ քաղաքական տենդախտի դեմ հին, կեղծ պատրվակներով երկրի նոր զավթման առաջարկից, բայց մի կողմ հրելով անուղեղ նախարարների փոստարկները,- սրանք բացականչում էին. «Թող վերադառնա ծովային հետեւակը, գեներալ, թող նրանք գան պեստիցիդ փոշեցան անող իրենց մեքենաներով, կյանքը հարյուր տարով երկարաձգող ճերմակ հիվանդանոցներով, դրանց դիմաց փուլող կանաչ լճակներով ու պատվող չատրվաններով. թող գան ու վերցնեն՝ ինչ ցանկանում են»,- նա բռունցքով հարվածեց սեղանին եւ դիմադրեց այնքան, մինչեւ անամոթ դեսպան Մակ-Քուինը ուղղակի ասաց. «Հետագա վճռերն անօգուտ են, ձերդ գերազանցություն, ձեր վարչակարգը պահպանվում է ոչ թե խոստումներով, ոչ թե անտարբերությամբ եւ կամ նույնիսկ ահաբեկումով, այլ միայն սովորության ուժով. անխուսափելի կործանում է սպասվում, ձերդ գերազանցություն, հապա փողոց ելեք եւ նայեք ճշմարտության աչքերին. դուք վերջին շրջապտույտի վրա եք. կամ պիտի գա ծովային հետեւակը, կամ վերցնելու ենք ծովը, այլ ելք չկա»,- «Այլ ելք չկար մայր նրանք զավթեցին Կարիբյան ծովը»: Դեսպան Էուինգի ինժեներները մաս-մաս բաժանեցին ծովը, համարակալեցին այդ մասերը, որպեսզի ճշտությամբ հավաքեն կրկին, մեր փոթորիկներից հեռու Արիզոնի երկնքի տակ, եւ տարան, իմ գեներալ, տարան իր ողջ հարստությամբ մեր քաղաքների արտացոլանքով, մեր խենթ ու խելառ ջրհեղեղներով ու մեր ջրահեղձներով: Որքան էլ նա փորձեց սեղմել հարուստ ստեղնաշարով իր բացառիկ հնարամտության ամենանուրբ ստեղնը,- թալանի դեմ ազգային բողոքի պոռթկում դրգռելու համար,- ոչինչ չստացվեց, կներեք, գեներալ, բայց ոչ ոք փողոց դուրս չեկավ, եւ չօգնեց ոչ սպառնա-

լիր, ոչ՝ ուժ,- մենք չէինք կարող չմտածել, որ բողոքի հրավերը հերթական խորամանկություն է, իշխանության տուփանքը բավարարելու նպատակը հետամտող հին խաղ, թող լինի, ինչ լինելու է, մտածեցինք մենք, թող նույնիսկ ծովը տանեն, գրողի մոր ծոցը թող տանեն, վիշապանկար ազգային դրոշի հետ թող խլեն ողջ հայրենիքը: Եվ մենք խուլ էինք զինվորականների շողոմ ճառերի եւ խոստումների նկատմամբ. նրանք քաղաքացիական շորերով հայտնվում էին մեր տներում եւ հանուն հայրենիքի աղերսում ելնել փողոց ու վանկարկել. «Կորչի գրինգոն»,- որպեսզի վերջ տրվեր թալանին, բայց նրանք մեզ կոչ էին անում, որ ինքներս թալանենք ու այրենք օտարերկրացիների խանութներն ու մենատները, կաշառում էին փողով, որ բանակի պաշտպանությամբ ցույցի ելնենք լկտի զավթիչների դեմ, սակայն ոչ ոք, իմ գեներալ, փողոց դուրս չեկավ, քանզի ոչ ոք չէր մոռացել՝ ինչպես էին զինվորականները նախկինում էլ ազնիվ խոսք տվել, իսկ հետո գնդակահարել մարդկանց ճիշտ այն նույն պատրվակով, թե գանգվածների մեջ սողոսկած թշնամի գրգռիչները կրակ են բաց արել զինվորական ստորաբաժանումների վրա,- «Այնպես որ, իմ գեներալ, այս անգամ ժողովուրդը մեզ հետ չէ»:

«Եվ ես ստիպված եղա իմ վրա վերցնել վճռի ծանրությունը ու ես ստորագրեցի այդ փաստաթուղթը մայր իմ Բենդիսիոն Ալվարադո դու Հո բոլորից լավ գիտես որ լավ է անծով մնալ քան թույլ տալ ծովային հետեւակին ափ իջնել: Ծովային այդ հետեւակայիններն ախր հրամաններ էին հորինում ու հարկադրում ինձ ստորագրել այդ նրանք երկիր բերեցին Աստվածաշունչն ու սիֆիլիսը դերասաններին նրանք արվամոլ դարձրին նրանք ներշնչեցին մարդկանց թե կյանքը փուչ է մայր թե ամեն ինչ վաճառվում է եւ գնվում թե նեգրերից հոտ է գալիս այդ նրանք համոզեցին իմ զինվորներին թե հայրենիքն այնտեղ է որտեղ շատ փող ես վաստակում թե զինվորական պատիվը տանձի պոչ է հորինված կառավարության կողմից որպեսզի զորքին ստիպի կռվել անվճար: Եվ որպեսզի չկրկնվեր այս ամենը ես նրանց իրավունք տվեցի օգտվել մեր սահմանային ջրերից ըստ իրենց կամեցողության ի շահ մարդկության ժողովուրդների միջեւ խաղաղության»: Նա տվեց ոչ միայն իր լուսամուտից մինչեւ հորիզոնը տեսանելի, շոշափելի ջրե-

ը, այլեւ ջրերի կենդանական ու բուսական աշխարհները, քամիների ռեժիմը, եղանակի բոլոր քմահաճույքներն ու ողջ մթնոլորտը, նույնիսկ վերջին միլիբարը, բայց նա չէր կարող երեւակայել, թե նրանք կարող են ավելին անել. վիթխարի պոմպերով նրանք ծծեցին նախապես ջրարգելակներով կտրատված, շախմատի տախտակի վանդակների պես համասարակալված մեր հինավուրց ծովի ալիքները՝ մերկացնելով մարած հրաբուխներով հատակը,- դրանցից մեկի հակայական խառնարանում բացվեցին ինչ-որ ժամանակ ծովին կուլ գնացած հնադարյան Սանտաս-Մարիա-դել-Դարիեն քաղաքի ավերակները: Այնուհետեւ մենք տեսանք բոլոր ծովերի ու օվկիանոսների մեծագույն ծովակալի հրամանատարական, մարջանների մեջ խրված նավը,- ինչպիսին որ տեսել էի իմ պատուհանից մայր». հողացունց արկերով մարջանների շերտը պոկեցին արմատից ավելի շուտ, քան կտրվեր հրամանը՝ պատշաճ պատվի արժանացնել պատմական նավարեկությունը: Նրանք տարան ամեն բան, ինչը հիմքն էր նրա իշխանության, խմաստն էր նրա բոլոր պատերազմների. իրենցից հետո նրանք թողեցին միայն լուսնային բնանկարներով անապատ, որին գեներալը ծանր սրտով նայում էր լուսամուտների մոտից անցնելիս եւ ամեն անգամ բացականչում. «Մայր իմ իմ աշնան Բենդիսիոն Ալվարադո լուսավորիր ինձ քո իմաստության լույսով»: Նա արթնանում էր այն սարսափից, թե հանուն հայրենիքի ընկած մարտիկները կելնեն գերեզմաններից ու պատասխան կպահանջեն վաճառված ծովի համար. նա պարզորոշ լսում էր, թե ինչպես են նրանք ոտիլվում պատերը, լսում էր նրանց խուլ, անդրշիրիմյան ձայները, զգում ինչպես ճահճում, այս մռայլ տան լոռատիղմում խրված գիշատիչ մողեսի ոտքերին նման իր վիթխարի ոտքերին բանալու անդրից նայող հայացքները. նա ստանց հոգնության քայլում էր սենյակներում, եւ նրան շրջապատում էին քամու մեքենայի պատատներն ու միստրալները. այդ մեքենան նվիրել էր դեսպան Էբերգիյը, որպեսզի արհեստական քամիները փոխարինեին անհետացած ծովի քամիներին. նա տեսնում էր ժայռակատարի՝ տասալված բոնակայների ոսպաստարանի մենավոր լույսը եւ մտածում,- «Նրանց համար լավ է, քնած են*

* *Միլիբար - մթնոլորտային ճնշման չափի միավորի հազարերորդ մասը:*

կուշտ կերած այդ խոզերը, իսկ ես տառապում եմ»,- նա հիշեց նույնիսկ մոր տառջ խոմփոցը մահից առաջ, աշխատավոր այդ կնոջ՝ Բենդիսիոն Այվարադոյի խաղաղ քունը օրեգանոյի թփով օծված սենյակում,- «Եթե ես երջանիկ քնով քնած նրա մայրը լինեի նա երբեք չէր սարսափի ժանտախտից չէր վախենա սիրուց չէր երկնչի մահից»: Նա այնպես էր հյուծվել, որ նույնիսկ անծով փարոսի բռնկումներն էին կասկածելի թվում, կապված չիրիմներից հարություն առնելու՝ հանգուցյալների մտաղրության հետ, եւ նա սարսափով փախչում էր անմնաս այդ լուսատուիկից ու մտածում, որ փարոսը, պտտվելով, մեռյալների ոսկրածուծից կորզած լուսարձակող փոշի է ցրիվ տալիս շուրջբոլորս,- «Անջատել»,- ճչաց նա եւ փարոսն անջատեցին. նա հրամայեց ներսից խծուծել ողջ տունը, աչքաթող չանել եւ ոչ մի ճղակ, որպեսզի տուն չսողոսկի մահվամբ հագեցած գիշերվա օդի ամենաչնչին տարրը նույնիսկ. նա մենակ մնաց խավարում, նա խեղդվում էր խոնավ, հեղձուկ շոգու մեջ եւ ատեց հայելիները, թեեւ չէր տեսնում, միայն զգում էր դրանց ներկայությունը, երբ անցնում էր մոտից եւ հայելիները ստիպում էին մտածել, որ սենյակում ինքը մենակ չէ. նա ծովահատակի հրաբխի չորացած խառնարանում տեսավ սլացող մի հեծյալի, տեսավ ձիու սմբակների տակից թռչող, տարօրինակորեն խոշոր կայծերը, բայց դա մեռյալ-ճերմակ գույնով լուսինն էր դուրս գալիս: «Հեռացրեք դրան,- ճչաց նա:- Մարեք աստղերը, գրողը տանի, հրամայում եմ աստծո անունից»,- սակայն ոչ ոք չարձագանքեց, ոչ ոք չլսեց նրան, նախարարական նախկին առանձնասենյակներում ցնցվեցին եւ արթնացան միայն կաթվածահարները, սանդուղքների վրա՝ կույրերը, եւ ցողից թրջված չորերով բորոտները, որոնք նրա ճանապարհը կտրելով՝ բուժիչ աղ էին խնդրում,- «Անհավատներ, ախր, հենց այսպես է եղել. նա շոյում էր մեր գլուխները, դիպչում յուրաքանչյուրիս խոցին իր մոգական ձեռքով, ճշմարտության ձեռքով եւ նույն պահին էլ մենք մարմնական առողջություն եւ հոգեկան խաղաղություն էինք ձեռք բերում, ուժերի արթնացում ունենում եւ ապրելու տենչ. մենք տեսել ենք կույրերի, որոնք բուժվեցին ու կրկին կուրացան, բայց այս անգամ վարդերի փայլից. մենք տեսել ենք կաթվածահարների, որոնք վազում էին սանդուղքով. ահա ձեղ իմ սեփական նորածնի

մաշկը, որ գոյացել է սպիացած վերքերի վրա, ներծծված է վաղ շուշանների բուրմունքով եւ որը ես ցուցադրում եմ աշխարհի բոլոր շուկաներում խայտառակելով անհավատներին եւ զգուշացնելով անառակներին»: Քաղաքներում ու գյուղերում թափառելիս, զբոսավայրերում ու ամենատարբեր արարողություններում այս խոսքերը ճչացող մարդիկ ձգտում էին մեզ ներշնչել ոչ միայն հավատ հրաշքի նկատմամբ, այլեւ վախ. նրանց վաղուց ի վեր ոչ ոք չէր հավատում, մեր կարծիքով, նրանք ծպտյալ այն պալատականներից էին, որոնց մի ժամանակ ուղարկում էին հրամանագրերը տարածելու, իսկ հիմա, ահա՝ մեզ հավատացնելու,- ինչին այլեւս անհնար էր հավատալ,- թե նա բուժում է բորոտներին, կույրերին լույս է պարգեւում եւ կաթվածահարներին՝ շարժում. մենք կարծում էինք, որ վարչակարգն այդկերպ ճգնում էր պրեզիդենտի գոյության պատրանքը ստեղծել: Նրա պալատի պահակախումբը, իր իսկ հրահանգով, կրճատվեց խիստ եւ մնացին միայն դեղնակտուցնորակոչիկ պարեկները,- թեեւ միահամուռ դեմ էին պետական խորհրդի անդամները, որոնք պնդում էին. «Դոնե կարաբինավորների մի դասակ է անհրաժեշտ պահել, իմ գեներալ: Զգույշ է պետք լինել»,- ինչին նա համառորեն առարկեց. «Ոչ մեկը չի ցանկանում եւ կարիքը չունի ինձ սպանելու, բացի ձեզանից՝ անպետք նախարարներից ու իմ պարապ-սարապ հրամանատարներից, բայց դուք էլ չեք համարձակվի, որովհետեւ քաջ գիտեք՝ ինձ վերացնելով, կսկսեք սպանել մեկ-մեկու»,- եւ միայն անբեղ պատանիների պարեկախումբը մնաց անժառանգ պալատում, որտեղ կովերը առանց արգելքի ճամում էին հանդերձարանից պետական խորհրդի նիստերի դահլիճ տանող միջանցքով,- «Նրանք ծամծմել են ծաղկած մարգագետին պատկերող գորգերը, իմ գեներալ, կերել փաստաթղթերի պահոցը»,- նա չէր լսում. միայն մի անգամ փորձեց վռնդել հոկտեմբերյան կատաղի անձրեւից փախած, պալատ մտած կովին, բայց «Կով... կով...» կրկնելով թողեց իր փորձերը, հիշելով, որ «կովը» գրվում է «ո»-ով. մի այլ անգամ տեսնելով ժամանակին այդ տեղում լույս արձակող լամպի սնկապուխը ծամող կովին, նա վճռեց, որ կենդանուն հետապնդելու համար չարժե վազ տալ սանդուղքով եւ մնաց անտարբեր, երբ ինքնույթի դահլիճում նկատեց երկու կով, որոնց թիկունքներին բուն դրած տիզերին կտցում

էին հավերը. այդ գիշերներին մենք երբեմն առկայծող լույս էինք տեսնում նրա լուսամուտներից ներս եւ պալատի պատերի մյուս կողմից լսում խոշոր կենդանիների սմբակների ծանր դոփյուն. նա էր քայլում կորսբելյան լամպը ձեռքին, կովերի համար գիշերվա տեղ ընտրելու: Պաշտոնական կյանքը առանց նրա ընթանում էր այնպես, ինչպես իր մասնակցությամբ էր ընթացել,- վարչակարգի լրագրերը կեղծ լուսանկարներ էին տպագրում այս կամ այն հանդիսավոր ընդունելություններից, որտեղ նա, ընդունելության բնույթին համապատասխան, երեւում էր տարբեր համազգեստներով. ռադիոն պարբերաբար հաղորդում էր նրա ճառերը, որ մենք լսել էինք տարիներ շարունակ, ազգային տոներին. նա շարունակում էր ապրել մեր շարքերում,- դուրս էր գալիս պալատից, եկեղեցի էր գնում, քնում էր, խմում, ուտում,- ինչպես հավաստիացնում էին լուսանկարները, թեեւ բոլորս գիտեինք, որ նա ավերակված պալատում հազիվհազ է շարժվում իր անփոփոխ, ճամփորդական կոշիկներով. նրա սպասուհիների թիվը կրճատվեց, մնացին երեք-չորս սպասյակ, որոնք սնում էին նրան, մեղրի պաշարն էին լրացնում, եւ սրանք մի անգամ, այնուամենայնիվ, վռնդեցին կովերին,- ջարդուփշուր էին արել, ախր, գերապույն շտարի սենյակը եւ փշրել հախճապակյա բոլոր մարշալներին, գաղտնի առանձնասենյակում, որտեղ նա պիտի մեռներ, համաձայն գուշակուհու կանխատեսման, որին, ի դեպ, գեներալը չէր էլ հիշում. սպասյակները ձանձրանում էին որեւէ հրաման չլսելով եւ անհամբեր սպասում այն պահին, երբ վերջապես դռան մոտ կկախվեր լամպը եւ կլսվեր ատմուկն ու չխկչխկոցը երեք սողնակի, երեք շղթայի ու կփակվեր առանձնասենյակը, որի օդը,- առանց ծովի,- չէր թարմացվում այլեւս. ահա այդ ժամանակ էին միայն սպասյակները առաջին հարկի իրենց սենյակը գնում, համոզված, որ նա մեռածի պես կքնի մինչեւ առավոտ. սակայն քնի մեջ ցնցվելով նա արթնանում էր ու սկսում հսկել իր անքնությունը, ուրվականի նման քայլում մռայլ պալատում՝ ոչ կովերի համաչափ որոճը նկատելով, ոչ էլ փոխարքայական կախիչին թառած հավերի շնչառությունը զգալով. ժամանակի ընթացքի մասին նրան հիշեցնում էր նախկին ծովի լուսնային ամայության մեջ քամու սուլոցը. նա տեսնում էր իր մորը՝ Բենդիսիոն Ալվարադոյին՝ ձեւքին կանաչ ճյուղերից

հյուսված ավելը, որով Կորնելիա Նեպոտի առաջին հրատարակության այրված էջերն էր ավլում, մոռացված ճարտասաններ՝ Լիվիո Անդրոնիկոյի եւ Սեսիլիա Էստատոյի գրքերի էջերը, որ աղբ էին դարձել արյունոտ այն դիշերը, երբ ինքն առաջին անգամ մտավ իր համար ազատված Իշխանության այս տունը, երբ փողոցներում դեռեւս դիմադրում էին ականավոր լատինագետ, գեներալ Լաուտարո Մունյոսի,- աստված լուսավորի այդ հիմարի հոգին,- ինքնասպանների բարիկադները, երբ հրդեհների բոցերից լուսավորված, ինքը՝ տենդախտի դողէրոցքի մեջ եւ մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն, զինված կանաչ ճյուղերից հյուսված ավելով, կտրեցինանցան ներքնաբակը, մթության մեջ դիպչելով պրեզիդենտական հիանալի ախոռի ձիերի լեզերին, վեր ելան հանդերձարան տանող սանդուղքով եւ հասան նիստերի դահլիճ. դժվար էր չնչելը վառոդի ու ձիերի արյան թանձր, թթու հոտերի պատճառով,- «Այնտեղ մենք տեսանք բոբիկ ոտքերի արյունոտ հետքեր. այստեղով անցել էին ձիերի արյան լճակները տրորած մարդիկ. տեսանք նույն արյան ձեռնահետքեր միջանցքների պատերին, իսկ նիստերի դահլիճում տեսանք արյունաքամ լինող գեղեցիկ ֆլորենտուհու մարմինը՝ մարտական սուրը կուրծքը խրված,- նա պրեզիդենտի կինն էր. նրա կողքին տեսանք լարովի խաղալիք-պարուհու նման մի աղջկա՝ ճակատին գնդակի հետք,- նա պրեզիդենտի իննամյա դուստրն էր: Եվ, վերջապես, մենք տեսանք գարիբալդիական կեսարի՝ պրեզիդենտ Լաուտարո Մունյոսի դիակը. նա ամենաճարպիկն ու խելացին էր ֆեդերալիստական տասնչորս այն գեներալներից, որոնք տասնմեկ տարվա ընթացքում, իշխանության համար պայքարի արյունոտ խառնաշփոթում, փոխարինում էին մեկը մյուսին, միակն էր, որ համարձակվեց իր լեզվով անգլիական հյուպատոսին ասել «ոչ» եւ հիմա պատժված էր դրա համար, պառկած ոտաբոբիկ, փշրված գանգով. գնդակը բերանն էր ուղղել այն բանից հետո, երբ ստիպված էր եղել սրով խոցել կնոջը, գնդակահարել դստերը եւ սատկեցնել անդալուզյան քառասուներկու ձիերին, որպեսզի իրենից ոչինչ չթողնի բրիտանական պատժախմբի մասնակիցներին. եւ այդ ժամանակ նրանց հրամանատար Կիտչեները մատնացույց անելով դիակը, ասաց մեր գեներալին. «Տեսնո՞ւմ ես, գեներալ, թե ինչպես են վերջացնում նրանք, ովքեր ձեռք

են բարձրացնում իրենց հոր վրա: Զմոռանաս այս բանը, երբ կառավարել սկսես»:

«Նա ասաց «սկսես» թեև սպասման երկար ու անքուն գիշերներից հետո ես հուչակվել էի արդեն բոլոր երեք զորատեսակների գերագույն հրամանատար եւ հանրապետության պրեզիդենտ մի այնպիսի ժամկետով որն անհրաժեշտ էր կարգուկանոնը վերականգնելու եւ երկրում տնտեսական կայունությունն ապահովելու համար»,- ահա, այսպես, սենատի եւ դեպուտատների պալատի համաձայնությամբ, ֆեդերալիստական վերջին կառուցվածքը ընտրեցին եւ ընտրությունը հաստատվեց անգլիական պատժախմբի կողմից եւ կնքվեց դոմինոյի խաղաքարտերով, որոնցով նա անհաշիվ երեկոներ խաղում էր Մակ-Դոնելլ հյուպատոսի հետ,- «Միայն թե ոչ ես ոչ էլ մյուսները սկզբում չէինք հավատում հաջողությանը»,- եւ ո՞վ կհավատար, հատկապես սարսափելի այն գիշերվա իրականացման մեջ, եթե ինքը՝ Բենդիսոն Ալվարադոն էլ մինչեւ օրերի վերջը եւ արդեն մահվան մահճում հավատ չէր ընծայում որդուն, որը ստեղծված քաոսում գլխի չէր ընկնում, թե ինչից է պետք սկսել կառավարումը. նրանք փնտրեցին ու չգտան տենդախտի դեմ խոչոտի եւ ոչ մի խոտ՝ առանց կահույքի այդ տանը, որտեղ արժեքավոր ոչինչ չկար, բացի անցյալի գերկն ընկած իսպանական տիրակալության ժամանակաշրջանի՝ ճանճածերտերով պատված փոխարքաների ու արքեպիսկոպոսների դիմանկարներից. մնացյալը թալանել էին նախորդ պրեզիդենտները, եւ պատմական խոշոր իրադարձությունները պատկերող պատի գորգերի տեղը հուշող քառակուսիները վաղուց արդեն պատատների գույնն էին ստացել, ննջասենյակները լեցուն էին զորանոցային աղբով. պատմությունը պատերին գրի էր առնված մի գիշերվա ընթացքում, պրեզիդենտի արյունոտված մատներով. ոչ մի տեղ նույնիսկ խսիր չգտնվեց. որ փոքթթվեր մեջն ու քրտներ,- «Այնպես որ մայրս Բենդիսոն Ալվարադոն պոկեց լուսամուտի փոշոտ վարագույրը փոքթթեց ինձ դրանով եւ պատկեցրեց գլխավոր սանդուղքի մի անկյունում իսկ ինքը կանաչ ճյուղերից հյուսված սվելով մաքրեց պալատի այն սենյակները որտեղից անգլիական ծովային հետեւակի մեռած պրոկոնները այլեւս ոչինչ չունեին թոցնելու»,- մայրը ավելց հատակը, վանդակով թռչանչիներին, որոնք սմենն դեռն տակ

փորձում էին բռնաբարել նրան, եւ լուսաբացից էլ առաջ նստեց գլխավոր սանդուղքի ամենավերին աստիճանին, թավշե վարագույրով փաթաթված, քրտինք ծորող եւ դողացող որդու կողքին. տենդի այրող ջերմությունը նա փորձեց մեղմել այն հանգիստ դատողություններով, թե չարժե ուշադրություն դարձնել այս անկարգության վրա, թե հարկավոր է գնել մի քանի կաչվեպատ, էժանագին աթոռներ, ներկել ու զարդարել դրանք տարբեր գազանիկների նկարներով,- «Ես ինքս կանեմ, հարկավոր է մի քանի ճոճ առնել, ճոճերը, թերեւս, առաջին հերթին, որովհետեւ այս տունը անպայման.շատ հյուրեր է ընդունելու. այնուհետեւ,- խորհում էր նա,- մենք կառնենք ճաշասեղան, երկաթյա գդալներ եւ պատառաքաղներ, ալյումինե ափսեներ,- զինվորական կյանքին դրանք են հարմար, կառնենք մի կարգին կավե սափոր՝ խմելու ջրի համար եւ քարածխի վառարան, եւ այս բոլորը պետության հաշվին»,- սփոփեց նա մորը չլսող որդուն. բացվել էին լուսաբացի ալ ճերմակ առաջին մոլոշավարդերը,- ալ, ինչպես արյուն եւ ճերմակ, ինչպես այն մարմինները, որոնցից այդ գիշեր արյուն էր հոսել. եւ այդ կրկնակի լույսի տակ մերկացավ ճշմարտության թաքնված էությունը: Նա հասկացավ, որ ինքը մի խղճուկ ծերունի է. տենդի ջերմության մեջ նա դողացնում էր սանդուղքի գլխին եւ անվերջ մտածում. «Եվ ա՞յս է բոլորը: Ա՞յս է իշխանությունը այրված ձիու մսի ու խանձված բրդի այս հոտերը հոգու այս դատարկությունը խորտակված նավի նման այս տունը այս լուսաբացը որ նույնն է ինչ բոլոր օգոստոսների բոլոր տասներկուների լուսաբացները: Այս ի՞նչ պատմության մեջ ընկանք մայր»: Դա մի անասնական վախ էր իր համար էլ անսպասելի իջած խավարից, թեեւ ծովի մոտերքում հրճվանք ապրելով, լուսաբացի համար երգում էին արդեն աքաղաղները, թեեւ պալատի դիակները հավաքող անգլիացիները ուրախ երգեր էին դեղդեղում, իսկ մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն իր հաշվարկների սփոփիչ արդյունքն ամփոփելով ասաց, որ ոչ մի հարց իրեն այնպես չի մտահոգում, ինչպես սավաններին է. ինքն է, չէ՞, լվանալու այս տան բնակիչների համար. իր հիասթափությունների ամենահաստակն իմնելով՝ նա կարծես հող զգաց ոտքի տակ եւ նույնիսկ մխիթարել սկսեց մորը. «Ոչինչ, քնիր հանգիստ, մայր, պրեզիդենտներն այս պալատում եր-

կար չեն ապրում, աստված տա դիմանամ դոնե կես ամիս»,- եւ նա չէր կեղծում ոչ այդ պահին, ոչ էլ բռնակալի ու ճգնավորի իր երկար կյանքի բոլոր ակնթարթներին, եւ որքան հավատում էր, այնքան առավել համոզվում էր՝ տիրակալը երբեք չի ապրում երկու միանման օր. նրա աչքին միշտ էլ թաքուն նպատակ էր երեւում, երբ պրեմիեր-մինիստրը ամենօրյա զեկույցներում, ստի շքեղ փնջի մեջ ճշմարտության մի ծաղիկ էր ավելացնում. նա թեթեւակի ժպտում էր, ասում. «Ինձ ճշմարտությունը մի ասեք, լիցենցիատ*, դուք ձեզ վտանգի եք ենթարկում, ես չէ՞ որ կարող եմ հավատալ»,- եւ այս մի արտահայտությամբ նա ի չիք դարձրեց պետական խորհրդի վիթխարի ողջ ռազմավարությունը, որի նպատակը մեկն էր՝ ստանալ պրեզիդենտների ստորագրությունը, առանց ավելորդ հարցուփորձի: «Երբեք նա այնքան խորաթափանց չի երեւացել, որքան այն ժամանակներում, երբ ավելի ու ավելի համոզիչ էին դառնում լուրերը, թե պաշտոնական ընդունելություններին պրեզիդենտը, ինքն էլ դա չնկատելով, թրջում է շալվարը»,- «Իմ կարծիքով, նա ավելի էր խստանում ծերանալու հետ, քայլում արդեն բորիկ ոտքերին հողաթափեր հագած եւ մի աղենակով ակոցը քթին, իսկ մյուսին հասարակ թել էր փոխարինում»- «Նրա զսպությունը ավելի ու ավելի էր ուժեղանում, զգացողությունը՝ սրվում, եւ նա առանց կարդալու թղթերի կույտերից անսխալ հանում, ստորագրում էր անհրաժեշտը»,- «Ձեզ ի՞նչ է պետք,- ժպտում էր նա:- Ի վերջո ինձ, միեւնույն է, ոչ ոք չի լսում»,- «Երեւակայեք, որ նա այսուհանդերձ հրամայեց փայտե երկար նիգ օգտագործել ֆերմայում, որպեսզի կովերը պալատում զբոսնելու հնարավորություն ունենան, իսկ հետո տեսավ, թե ինչպես կովերից մեկը,- «կո՞վ թե կով...»- գլուխն իր առանձնասենյակի լուսամուտը խցկեց ու խժռեց գրասեղանին, հայրենիքի այդ զոհասեղանին դրված թղթե ծաղիկները. նա միայն ժպտաց. «Ահա տեսնո՞ւմ եք, լիցենցիատ, ասում էի, չէ՞, ձեզ: Այս երկրի բոլոր դժբախտությունները նրանից են, որ ինձ ոչ ոք երբեք չի լսում»,- այդ տարիքի համեմատ՝ ուղեղի ինչպիսի՜ արտակարգ պարզություն: Այնինչ դեսպան Կիպլինգը արգելված իր հուշագրությունում պատմում է, թե տեսել է նրան մանկության մեջ ընկած եւ բացարձա-

* Լիցենցիատ - իրավաբանին դիմելու հարգալից ձեւ:

կապես անընդունակ ինքնուրույն որևէ արարքի, պնդում, թե նրա մարմնի բոլոր ծակոտիները հեղուկ էին արտադրում, իբր փքված էր ջրահեղձի նման եւ բոլոր շարժումները ծույլ էին, դանդաղ, այո, ալիքների վրա օրորվող հենց ջրահեղձի նման,- «Նա նույնիսկ արձակեց շապիկը, որպեսզի ցույց տա ինձ ջրահեղձի իր ճերմակ, ջրոտ մարմինը, որ ափ էր շպրտվել, մաշկի կախված ծալքերում ծովի հատակի մակաբույծներ պահած»,- նա ինքը հաստատեց, որ թիկունքին ռեմորաներ* կան, թեւերի տակ՝ պոլիպներ ու մանր խեցգետիններ, ըստ որում նա համոզված էր, որ դրանք սոսկ առաջին նշաններն էին մեզնից խլված ծովի տարերային վերադարձի, որովհետեւ ծովերը, սիրելի Ջոնսոն, կետերի նման միշտ էլ վերադառնում են. նա համոզված էր, որ իր վորի խեցգետնակերպների գաղութը նախանշանն է երջանիկ այն լուսաբացի, երբ ինքը կբացի ննջասենյակի լուսամուտը եւ կրկին կտեսնի երեք նավերը ամենայն ծովաց ու օվկիանոսաց ծովակալի, որին այս երկնքի տակ հոգնել է փնտրելուց, քանզի համոզվել էր ուղում հի՞շա է, արդյոք, որ նրա ձեռնափերը պատմության մեջ բոլոր մեծ մարդկանց ձեռնափերի պես հարթ են, առանց բախտի գծերի, ինչպես եւ իրենը: Այո, նա փնտրում էր ծովակալին, հրամայել էր բերել նրան նույնիսկ ուժ գործադրելով, երբ լսել էր ծովայինների պատմությունները, թե իբր, հարեւան ծովերում ցրված մանր կղզիները քարտեզագրելու եւ դրանք ոչ թե կոնկիստադորների, այլ թագավորների ու սրբերի անուններով անվանակոչելու ժամանակ տեսել էին նրան բնիկների գիտությունները ուսումնասիրելիս. իբր փնտրում էր իրեն հետաքրքրող միակ բանը՝ միջոցը հաղատացման դեմ: Մենք արդեն կորցրել էինք հույսներս, բայց լիմուզինից դուրս դուրս չեկած, պրեզիդենտը ճանաչեց նրան. ծպտված էր ֆրանցիսկյան վանականի դարչնագույն փարաջայով, մեղա եկող մեղսագործի ճչանակով, որ չխկչխկացնում էր կիրակնօրյա շուկայի ամբոխի մեջ, այնպես նվաստացած, խղճուկ վիճակում, որ ոչ մի կերպ չէինք կարողանում հավատալ, թե ինքն է, նույն ինքը, որին տեսել էինք ընդունելությունների դահլիճում կարմիր կամզոլով, ոսկյա շղթաներով, տեսել ափ իջնելիս՝ հաղթող զինվորականի քայլքով. սակայն, երբ հրամայվեց նրան մերկնա նստեցնել, հետքն

* Ռեմորա - նավաբրանին կառչող ձուկ:

էլ չքվեց, իմ գեներալ, ասես, գետնի տակն անցավ. պնդում էին, թե նա մուսուլման է դարձել, մեռել Սենեգալում՝ պելագրայից եւ թաղվել միաժամանակ երեք գերեզմաններում, աշխարհի երեք տարբեր քաղաքներում, թեեւ իրականում նա չէր թաղվել, քանի որ հողը չէր ընդունել նրան եւ ոչ մի գերեզմանոցում եւ մինչեւ աշխարհի կործանումը նա գերեզմանից գերեզման էր թափառելու. աստծո նման պատիժ էր բաժին ընկել նրան բռնած բոլոր ծուռ հանապարհների համար, քանզի այդ մարդը սրիկա էր, իմ գեներալ, ավելի անարգ, քան կեղծ ոսկին. սակայն գեներալը երբեք չհավատաց իրողությանը եւ անվերջ սպասում էր իր պաշտամունքի վերադարձին, ապրում այդ սպասումով, նույնիսկ խոր ծերության վերջին այն օրերին, երբ առողջապահության նախարարը ունելիով դուրս էր քաշում նրա մաշկը խրված կովի մակաբույծներին, ըստ որում՝ նա հավաստիացնում էր բժշկին, թե դրանք բոլորովին էլ մակաբույծներ չեն, այլ ծովադարձի նշաններ, հավաստիացնում էր այնպես տրամաբանորեն ու համոզիչ, որ նախարարը սկսեց մտածել. «Նա այնքան էլ խուլ չէ, որքան ձեւացնում է մարդկանց շրջապատում եւ ոչ էլ այնքան միամիտ, որքան խաղում է իր համար տհաճ ընդունելություններին»: Բայց նա անսահման ծեր էր եւ բազմակողմանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրա արյունատար անոթները դարձել են ապակի, երիկամները լցվել ավազով, ասես ինքն է կուլ տվել ծովափը, սիրտը ճաքճքել է սիրո բացակայությունից, այնպես որ հին բժիշկը, մտերմական հարաբերություններից օգտվելով, ուղղակի ասաց. «Ժամը մոտենում է, իմ գեներալ: Համենայն դեպս, ճիշտ ժամանակն է մտածելու, թե ում եք հանձնելու կառավարման սանձերը: Չի կարելի, չէ՞, թողնել մեզ որբ, հակատագրի կամքին»: Բայց նա զարմացած հարցրեց. «Ո՞վ ձեզ ասաց, թե ես մտադիր եմ մեռնել, իմ թանկագին բժիշկ: Սա ի՞նչ բան է: Թող ուրիշները մեռնեն, ես չեմ շտապում»:- Եվ ավելացրեց կատակով.- «Երեկ չէ, առաջին օրը երեկոյան ես տեսա ինձ հեռուստատեսությամբ եւ զգացի, որ տեսքս, ավելի քան երբեւէ, հրաշալի է: Ցլամարտի ցուլը՝ քեզ օրինակ»: Եվ քրքջաց, որովհետեւ հիշեց, թե ինչպես քիթը վեր քաշելով, թաց սրբիչը գլխին նստել էր այդ երեկո մունջ հեռուստացույցի դիմաց,- ձայնը չէր միացնում իր այդ վերջին, մենության երեկոներին,- եւ նայում

էր ինքն իրեն, զարմանալով իր իսկ շարժումների վհռականութեամբ (իրոք, ոնց որ ցուլը ասպարեզում), Ֆրանսիացի դեսպանի կնոջ հետ ջահելական իր վարվեցողութեամբ,- բայց գուցե Թուրքիայի՞, Շվեդիայի, սատանան էլ գլուխ չի հանի, բոլորն էլ նույն դեմքն ունեին. նկարահանման օրերից ի վեր այնքան ժամանակ էր անցել, որ նա իսկապես չէր կարողանում հիշել՝ իրո՞ք ինքն է եղել հմայիչ այդ կանանց շրջապատում, ի՞նքն է, արդյոք, ընդունելության երեկոյին եղել շքեղ համազգեստով, համտես չարած շամպայնի գավաթը ձեռքին կամ օգոստոսի քսաներկուսի՝ իշխանության գլուխ բարձրանալու հերթական տարեդարձի, հունվարի տասնչորսի՝ հաղթանակի պատվին կամ մարտի տասներեքի՝ ծննդյան օրվա կապակցությամբ,- ո՞վ է հիշում բոլոր այդ տարեթվերը,- կազմակերպված հանդիսություններին: Նրա վարչակարգի տարիներին այդ հանդիսություններն այնպես շատացան, որ նա սկսեց խճճվել, չէր հիշում, թե դրանցից որն է ինչ կապակցությամբ, եւ պատմական տարեթվերի գերկուտակումից գլուխ հանելուն բացարձակապես չէին օժանդակում խողովակաձեւ գալարված թղթի այն շերտիկները, որ նա ժամանակին խնամքով ամենատարբեր ճեղքերն էր խցկոտում, բարեհոգաբար հուսալով, թե դրանց օգնությամբ հետագայում կմտաբերի ամեն բան. ապավինելով դրանց, նա մոռացել էր ամեն ինչ եւ պատահաբար գտնելով որեւէ թղթաշերտ, ոչինչ չէր հասկանում. այսպես, ահա, մեղրի մի թաքստոցում գտավ հերթական գալարը եւ կարդաց վանկ առ վանկ. «Ապ-րի-լի յո-թին դոկ-տոր Մար-կոս-դե-լե-ո-նի ծը-նընդ-յան օրն է հար-կա-վոր է ըն-ծա ու-զար-կել մի քա-նի յա-գու-ար»: Ձեռագիրն, անկասկած, իրենն էր, բայց բացարձակապես պատկերացում չուներ, թե ում մասին է խոսքը, ով է այդ դոկտոր Մարկոսը եւ նա մտածեց, որ մարդուս համար չկա ավելի նվաստացուցիչ, միաժամանակ առավել արդարացի պատիժ, քան սեփական էության փոփոխությունը, սեփական մարմնի ու հիշողության ծերացումը. այս բանը նա հասկացավ խոսե Իգնասիո Սաենս դե լա Բարի անմոռանալի օրերից շատ առաջ, երբ բազմամարդ ընդունելություններից մեկի ժամանակ նկատեց հանկարծ, որ չի ճանաչում գրեթե բոլորին, չի հիշում՝ ով ով է,- այդ նա, ով մի ժամանակ հիշողության մեջ պահում էր իր վշտարեկ ու անսահման թագավո-

ությունն ամենատարբեր շրջանների շատ ու շատ գյուղերի բնակիչների անուն-ազգանունները եւ գիտեր բոլորին դեմքով: Բանը նրան հասավ, որ կառքի լուսամուտից տեսնելով մի տղայի, որի դեմքը ծանոթ թվաց, ոչ մի կերպ չկարողացավ հիշել, թե ով է նա, վախեցավ հիշողության կորստից եւ հրամայեց պահակախմբին որսալ տղային.- «Թող կալանքի տակ մնա, մինչեւ հիշեմ թե որտեղից եմ ճանաչում»: Խեղճ գեղջուկը բանտում նստեց քսաներկու տարի, ամեն օր կրկնելով այն, ինչ հենց սկզբից պարզել էին դատական պաշտոնյաները, ինչը համապատասխանում էր իրականությանը. նրան կոչում են Բրաուլիո Լինարես Մոսկոտե, ապօրինի զավակն էր գետային նավատորմիղի նավաստի Մարկոս Լինարեսի եւ Դելֆինա Մոսկոտեի, որը յագուարների որսի համար շների բուծարան էր պահում. երկուսն էլ ապրում են Ռոսալե-դե-Վիրեյում, ինքը նույնպես այնտեղ է բնակվում, իսկ մայրաքաղաք է եկել կյանքում առաջին անգամ եւ եկել է, որովհետեւ մայրն էր ուղարկել՝ մարտյան տոնախմբությանը իր բուծարանի երկու քոթոթը վաճառելու. նա առանց հորինելու կրկնում էր, որ մայրաքաղաք է ժամանել վարձված ավտոնակը հեծած, որ ինքը չունի եւ չի ունեցել այլ հագուստ, բացի հագինից, որով ձերբակալվել էր այն հինգշաբթի օրը, երբ նստած է եղել շուկայի խորտկարանի ծածկի տակ եւ խմելիս է եղել էժանագին սուրճը, վաճառողուհիներին հարցուփորձ անելով՝ չգիտե՞ն, արդյոք, թե ով է կամենում յագուարների ապագա որսորդ, խաչասերված երկու քոթոթ ձեռք բերել. նրան պատասխանեցին, որ չգիտեն եւ հենց խոսակցության միջոցին իրարանցում ու վազվզոց սկսվեց, թմբուկներ զարկեցին, շեփորներ հնչեցին, երկինք սուրացին դունավոր հրթիռներ, շուկայում հավաքված մարդիկ ըղավեցին. «Գալիս է: Գալիս է: Գալիս է իսկական տղամարդը: Ահա նա»: Տղան հարցրել էր վաճառողուհիներին, թե ո՞վ է «իսկական տղամարդը»: Իսկ նրանք պատասխանել էին. «Ինչպե՞ս թե ով է: Նա է, ով գլուխն է իշխանության»: Տղան քոթոթներին ստվարաթղթե արկղ է խոթում եւ ինդրում վաճառողուհիներին՝ աչքները վրան պահեն մինչեւ իր վերադարձը ու փողոց է վազում, բարձրանում մի տան պատուհանին, որմնախորշին եւ ամբոխի գլխի վրայով տեսնում ձիերի պատվո պահակախումբը, վիշապանկար դռներով կառքն ուղեկցող

ձիերի ոսկյա ծածկոցներն ու շքեղ փեսարափնջերը, տեսնում է, կառքի լուսամուտից թափահարվող, մետաքսյա ձեռնոցով ձեռքը, իշխանության մարդու գունատ դեմքը, թորշոմած, անժպիտ շրթները, տեսնում է նրա թախծոտ աչքերը եւ այդ աչքերը հանկարծ հազարավոր այլ մարդկանց միջից որսում են տղային, գտնում են նրան, ինչպես ասեղն են գտնում ծովում, եւ կառքի լուսամուտից դուրս ցցված մատը տղայի կողմն է ուղղվում. «Ձերբակալեք, ահա, նրան, որը պատուհանին է բարձրացել: Թող նստի բանտում, մինչեւ հիշեմ, թե որտեղից եմ ճանաչում»: Ահա այսպես բռնեցին տղային եւ սկսեցին սրերով մաշկահան անել խեղճին, խորովել ածուխների վրա, որ խոստովաներ՝ թե որտեղ է իրեն տեսել իշխանության մարդը: Բայց նավահանգստի բերդի սոսկալի խցում ոչ մի խոշտանգում չհարկադրեց կայանավորին ետ կանգնել սրբազան ճշմարտությունից. նա կրկնում էր եղելությունը մի այնպիսի համոզչականությամբ ու աննկուն խիզախությամբ, որ գեներալն, ի վերջո, ստիպված էր խոստովանել իր սխալմունքը՝ երբեք նախկինում չի հանդիպել Բրաուլիո Լինարես Մոսկոսեին,- «Բայց հիմա այլ ելք չկա, պիտի նստի: Այնպես վատ են վարվել հետը, որ եթե չի էլ եղել, հիմա դարձած կլինի թշնամի»: Եվ դժբախտը փտում էր խցում, իսկ գեներալը ոչինչ չհիշելով, դեռ թափառում էր իր մռայլ Իշխանության տանը, քթի տակ փնթփնթալով. «Իմ լավ օրերի մայր Բենդիսիոն Ալվարադո օգնիր ինձ նայիր վրաս դեմքիդ ծածկոցը մի կողմ տար որպեսզի կարողանամ տեսնել քեզ: Օգնիր ինձ մայր այլապես արժե՞ր այսքան փառավոր մեծագործություններ գործել այսքան հաղթանակներ տոնել եթե չես հիշելու դրանցից գոնե մեկը որպեսզի սիրտիս ուժ առնես ծերության ճահիճը սուզվելիս»: Բայց նրա կյանքի թե ամենադաժը վշտերը, թե ամենասերջանիկ ակնթարթները, թե իր վեհության ամենափառավոր բոպեները մոռացության սև ծակերն էին մտել, չնայած անհեթեթ, միամիտ փորձերին՝ խցկտել այդ ծակերը խողովակաձեւ գալարված թղթի չերտիկներով. նա դատապարտված էր երբեք էլ չիմանալու, թե ով էր Ֆրանսիսկա Լինարոն, ինքնունվեց տարեկան այդ պառավը, որին արքայավայել պատիվներով թաղելու հրաման արձակեց,- այդկերպ՝ վարվել էր ճեղքերից մեկում հայտնաբերված, իր ձեռքով գրառած թղթաշեր-

տի դրդմամբ. նա նաեւ տեսողությունն էր կորցրել եւ հարկ էր լինում կառավարել կուրորեն,- տասնմեկ ակնոցները բացարձակապես անօգուտ էին, սակայն նա օգտագործում էր դրանք, հանելով գրասեղանի դարակից առաջին պատահածը եւ քթին հարմարեցնելով, որովհետեւ այդկերպ միայն կարող էր ձեւացնել, թե գերազանցորեն տեսնում է բոլորին, ում հետ խոսում է, թեեւ զրուցակիցներին, իրականում, ընկալում էր որպես անմարմին հոգիներ, չէր լսում ձայները, հոտառությամբ էր գուշակում դիմացինի ով լինելը. ծայր աստիճան անօգնական էր դարձել, թվում էր, ահա, ահա, կավանդի հոգին եւ այդպես կարծելով, մի տեսակցության ժամանակ վախից քիչ մնաց մեռներ պաշտպանության նախարարը. գեներալը հանկարծ փոշտացել էր, եւ պաշտպանության նախարարն ասել էր. «Առողջություն»: Նա տեղն ու տեղը երկրորդ անգամ էր փոշտացել եւ պաշտպանության նախարարը երկրորդ անգամ էր ասել. «Առողջություն»: Բայց փոշտոցը չէր կտրվում,- «Երբ նա փոշտաց իններորդ անգամ, ես այլեւս նրան առողջություն չցանկացա, վախեցա նրա կատաղած դեմքից, արտասվալից, հոված աչքերից, որ դաժանորեն ինձ էին նայում հոգեվարքի մշուշից. ես տեսա նրա դուրս ընկած լեզուն,- ասես խեղդված պառավ կենդանու լեզու լիներ,- եւ հարմար գտա չքվել շտապ առանձնասենյակից, որտեղ նա բառացիորեն մեռնում էր աչքերիս առաջ եւ որտեղ անմեղությունս ապացուցող ոչ մի վկա չկար. ոչ մի կենդանի շունչ չկար մոտերքում. բայց հազիվ էի քայլ գցել փախչելու, երբ նա երկու փոշտոցի արանքում հասցրեց գոռալ. «Վախկոտ մի եղեք, բրիգադի գեներալ Ռոսենդո Սաքրիստան: Հանգիստ մնացեք, գրողը տանի, ես այնքան ապուշ չեմ, որ մեռնեմ ձեր ներկայությամբ»: Պաշտպանության նախարարը, քար կտրեց, իսկ նա շարունակում էր փոշտալ, զգալով իրեն, իրոք, մահվան սահմանագծին, հազիվ տեղը պահելով գիտակցությունը. անհամար լուստոտիկների նման կայծեր էին ցատկոտում նրա աչքերի դիմաց, բայց նա ամբողջ ուժով կառչել էր այն համոզմունքին, թե մայրը՝ Բենդիսիոն Ալվարադոն թույլ չի տա նման խայտառակություն, թույլ չի տա իրեն մեռնել փոշտոցից, այն էլ ստորադասի ներկայությամբ.- «Դատարկ բան է, մենք դեռ կապրենք: Ոչ մի գնով չեմ նվաստանա»: Այս դեպքից հետո նա եզրահանգեց, որ լավ է կովե-

րի մեջ մեռնել, քան մարդկանց, որոնք կարող են թույլ տալ մեռնել արժանապատվությունը ոտնահարված,- «Գրողի ծոցը թող կորչեն դրանք»: Նա չընդունեց այլևս պապի նվիրակին, հրաժարվեց աստվածաբանական վեճերից, որովհետև չոկոլադը ստիպված էր նորածնի պես գդալով խմել և չէր ցանկանում, որ նվիրակը դա նկատեր. հրաժարվեց դոմինո խաղալուց, վախենալով, թե որևէ մեկը տանուլ կտա խղճահարությունից դրդված, նա չէր ուզում տեսնել և ոչ մեկին, որովհետև չէր կարող թույլ տալ, որ որևէ մեկը նկատեր,- չնայած իր բոլոր ջանքերին՝ չքստքստացնել հարթաթաթ, վիթխարի ոտքերով, թեև ողջ կյանքում էլ քստքստացնում էր և թաքցնելու բան չէր,- որ նա ի վիճակի չի այլևս քողարկելու իր տարիները. նա սկսեց ամաչել իր տարիքից, զգալով իրեն անելանելիության այն անդունդի եզրին, որտեղ ընկվում էին թշվառ վիրջին բոնակալները, որոնց նա պահում էր ավելի շատ կալանավորի, քան քաղաքական ապաստան ստացած մարդկանց պես,- նրանք այնտեղ, ժայռակտտարի ապաստարանում էին ատատպում, որպեսզի աշխարհը չվարակեին զառամախտի ժանտախտով: Նա ըմբռնեց այդ բանը, ճաշակեց սեփական խղճուկ, անօգնականության զգայողությունը չարաբաստիկ այն առավոտյան, երբ քնեց ներքնաբակի ավազանում, բուժիչ ջրերի մեջ ընկղմված. «Երազումս քեզ տեսա մայր տեսա որ դու էիր ծնել զվարերեւումս նշենու ծառի ծաղկուն սաղարթում ճռռացող ու տրաքվող ճռռիկներին ես տեսա որ քո վրձիններով դու էիր ներկել երգող պիրոյների խայտաբղետ ձայները բայց ես արթնացա աղիքներիս անակնկալ ժայթքումից մայր արթնացա գազազած իմ իսկ ապականած ջրի մեջ որտեղ լողում էին օրեգանոյի մոլոշավարդի բուրումնավետ ծաղկաթերթեր և նարնջենուց թափված տերևներ և որտեղ իկոտեա կրիաները ուրախ-ուրախս լողում էին դեպի այն ոսկեզույնը որ դուրս էր շպրտել իմ ներսը ահա թե ինչ հիմար բան ստացվեց մայր»: Նա զիմացավ զառամած իր մարմնի այս սոր արարքին, զիմացավ տարիքի ուրիշ այլ սոսրությունների և ապաստուհիների թիվը հասցրեց նվազագույնի, որպեսզի իսր ծերության նորանոր անակնկալները զիմավորի ստանց ավելորդ վկաների. համենայն դեպս, ոչ ոք չի տեսնի, թե ինչպես է աննպատակ շրջում այս լքյալ Իշխանության տանը, գլուխը թաց սրբիչով

փաթաթած, անհուն հուսահատությունից, ամեն պատի տակ ատամները կրճտացնելով, տառապելով բոռերից չշմած անտանելի գլխացավից, որի մասին ոչ մի անգամ չէր ակնարկել բուժակին, որովհետեւ հասկանում էր՝ ցավը նույն այդ ծերությունից է. ցավը սկսվում էր նախ ցավի նախազգացումից, որոտի գլաքսարային դղրդով մոտենում ավելի շուտ, քան երկնքում հայտնվում են փոթորիկի ամպերը, եւ այդժամ նա հրամայում էր, որ ոչ ոք չհամարձակվի անհանգստացնել իրեն. այնուհետեւ ցավը սեղմվում էր քունքերում եւ նա բղավում էր, որպեսզի ոչ մեկին ներս չթողնեն՝ ինչ էլ պատահի, իսկ երբ դանդը սկսում էր կոտրատվել գլխաներսի պողպատյա պտուտակաղռների շարժումից, նա ճչում էր, որ ներս չթողնեն նույնիսկ տեր աստծուն, եթե հանկարծ բարեհաճի հայտնվել,- «Ոչ մեկին ներս չթողնել, եթե նույնիսկ մեռնելու լինեմ»:

Ցավը նրան կեղեքում էր անպիտորեն, չունչ քաշելու դադար չտալով, զրկում նույնիսկ աշխարհի կործանման չափով հուսահատությունը զիտակցելու ունակությունից, բայց հենց թափվում էր օրհնյալ անձրեւի հեղեղը, ցավը մեղմվում էր, եւ նա բոլորին իր մոտ էր կանչում եւ այնպիսի տեսք էր ունենում, ասես նոր-նոր էր աշխարհ եկել: Նա նստած էր լինում մունջ էկրանի դիմաց, սեղանի մոտ, որի վրա մինչ ընթրիքն էինք մատուցում տապակած բեկոնով լոբի, ծեծած կոկոս եւ խորոված բանաններ,- նրա տարիքին անհամապատասխան կերակրատեսակներ: Ուտելիքին, սակայն, նա ձեռք չէր տալիս, որովհետեւ տարված էր լինում Նոյի տարվա հեռուստատեսային կինոնկարով: Այն հանգամանքը, որ կինոնկարը կրկնում էին հեռուստատեսության հատուկ ծրագրով, ըստ որում մի այնպիսի հապճեպությամբ, որ ժապավենը գլխիվայր էր պտտվում, վկայում էր պետական գործերի անմխիթար վիճակը. կառավարությունն ակնհայտորեն ինչ-ինչ բան էր թաքցնում: «Այս ի՞նչ է կատարվում այնտեղ»,- մրթմրթաց նա, սակայն իսկույն էլ ինքնահանգստացման կարգով համոզեց իրեն, որ ոչինչ էլ չէր թաքցնում, որ եթե որեւէ լուրջ բան պատահած լիներ, ինքն արդեն տեղյակ կլիներ. այսպես ահա, այս մտքերով տարված նա նստեց մենության մեջ, սառած ընթրիքի դիմաց, իսկ երբ տաճարի ժամացույցը զարկեց ութ անգամ, ուքի եկավ եւ ընթրիքը զուգա-

բանի կոնքը թափեց, ինչպես վարվում էր վաղուց ի վեր, իրիկնային ուշ ժամերին, որպեսզի ոչ ոք չիմանար իր համար նվաստացուցիչ այդ վիճակի մասին. նրա ստամոքսն այլեւս ոչ մի կեր չէր ընդունում. նա ուզում էր, որ մարդիկ կարծեին, թե ինքը նույն մարդն է, ում պատկերում էին փառավոր ժամանակների առասպելները եւ ինքն էլ էր սիրվում այդ առասպելներով, դրանց շնորհիվ մոռանում իր իսկ նկատմամբ ծնվող ատելությունը, զզվանքը, որ համակում էր նրան ամեն անգամ, երբ օրգանիզմը զառամախտի հերթական խաղն էր խաղում. նա ճգնում էր մոռանալ, որ հազիվհազ է քարշ տալիս գոյությունը. ջանում էր չհիշել, որ ինքն էր արտաքնոցի պատերին գրում. «Կեցցե գեներալը: Կեցցե իսկական տղամարդը»,- նա աշխատում էր չհիշել, թե ինչպես մի օր ծածուկ հերիմական դեղ ընդունեց, որ գիշերվա ընթացքում բավարարի երեք կնոջ եւ թե անկարողության ինչ չար արցունքներով վճարեց ծերունական այդ միամտության դիմաց. այդ խայտառակությունից հետո արտաքնոցում նստած եւ ջրաթափի թելից բռնած, նա լաց եղավ. «Իմ սրտի իմ մայր Բենդիսիոն Արվարադո ատիր ինձ մաքրիր ինձ քո կրակ-ջրով»: Սակայն այդ խայտառակությունը հասկանալի էր նրան, հասկանալի էր, թե ինչու էր նման այլ անհաջողություններ հանդիպել, նա հրաշալորեն գիտեր, որ ինչպես միշտ, այս դեպքում էլ անկողնում իրեն սերն էր պակասել եւ ոչ թե տղամարդկային ուժը, իրեն տաք կնիկներ էին պետք եւ ոչ թե բարեկամ պրեմիեր-մինիստրի հրամցրածները,- «Որպեսզի օրիորդաց հարեւան դպրոցը փակելուց հետո ես մտահան չանեի փառավոր այդ զբաղմունքը»: Դրանք անոսկը էգեր էին,- «Հատուկ ձեզ համար, իմ գեներալ»,- որ բերում էին ինքնաթիռներով՝ Ամստերդամի հենց ցուցափեղկերի եռեւից, բուդապեշտյան կինոփառատոներից, իտալական Միջերկրականի կապուտակ ծովափերից,- «Հապա նայեք, իմ գեներալ, ինչ հրաշալիք են: Աշխարհի ամենագեղեցիկ կանայք են»: Այդ կանայք սպասում էին նրան առանձնասենյակի կիսախավարում, երկկրոդությանդասատուի համեստ կեցվածքով, հանվում էին մշակված շարժումներով՝ մերկացնելով հոյակապ մարմինները,- նրանց տաք, մեղրագույն մաշկին նկատվում էին լոդազիատի շիրտերը, ասես սպված լուսանկարչական եղանակով. ատամի մանուկի անանուխային.

ծաղկե լոսյոնի բույրեր արձակելով, նրանք պառկում էին թավշապատ բազմոցին, վիթխարի եզան կողքին, որը նման էր երկաթբետոնի խոշոր բեկորի,- «Բայց նա ոչ մի կերպ չէր համաձայնում հանել համազգեստը, ոչ մի կերպ չէր համաձայնում մերկանալ: Որքան էլ ջանք թափեցի, ինչ միջոցների էլ դիմեցի, չստացվեց: Ինձ չհաջողվեց նույնիսկ շարժել նրան տեղից»,- «Ինձ հոգնեցրին այդ գեղեցիկ, սառը, մեռած ձկան խաղերը, եւ ես ասացի. Հերիք է, դստրիկս, ավելի լավ է կուսանոց մտնես»: Այո, այսպես էր հարաբերությունը գերված, երազային գեղեցկությամբ, ամենաբարձ դրույքով վճարվող կանանց հետ, եւ նա շատ էր ընկճվում հանդիպումների նման ընթացքից: Բայց մի անգամ, երեկոյան, ժամը ութին, պալատի լվացքատանը նա զինվորական սպիտակեղենը եռացնող լվացարարուհուն տեսավ եւ թաթի մի հարվածով նրան դատարկ տաշտակը գցեց. կինը վեր թռավ տաշտից, փորձեց ծլկել ու վախեցած արդարացավ. «Այսօր չեմ կարող, գեներալ, արնախում վիշապն է այսօր ինձ հյուր եկել»,- բայց նա լռելյայն կռացրեց նրան՝ դեմքով դեպի լվացքի տախտակները եւ ետեւից տիրացավ աստվածաշնչյան մի այնպիսի կրքով, որ խեղճ կինը, ողնաշարի ու հոգու շիկրտոցը զգալով, տնքաց. «Այ թե գազանն էք, գեներալ: Դուք երեւի էշերից եք դաս առել»: Իսկ նա շոյվել էր կնոջ տնքոցից ավելի, քան իր մասնագետ-շողոքորթների հանդիսավոր ներբողներից, եւ լվացարարուհուն ցմահ թոշակ նշանակեց՝ երեխաներին դաստիարակելու համար. երկար տարիների ընդմիջումից հետո կովերին գիշերվա կեր տալիս նա կրկին երգեց. «Օ՜, հունվարյան լուսին»: Նա երգում ու չէր մտածում մահվան մասին, անսխալ իմանալով, որ նույնիսկ իր վերջին գիշերը չի տրվի թույլությանը եւ թույլ չի տա իրեն գիտակցության մեջ չտեղավորվող հարցի շուրջը մտածել. նա հաշվում էր կովերին եւ երգում քթի տակ. «Դու իմ խավար ճանապարհների լույսն ես, դու ուղեցույց աստղ ես»,- հաշվեց երկու անգամ եւ համոզվեց, որ պակաս են չորար, որից հետո պայտ գնաց, հաշվեց փոխարքայության ժամանակների կախիչներին թառած հավերին, թռչնավանդակները հաշվեց,- «Փառասունութ»,- ծածկեց բոլորն էլ սեւ ծածկոցներով. այնուհետեւ վառեց կովի չորացած բոլոր բլիթները,- այդ օրվա թրքած,- եւ, ինչպես միշտ, այրվող աթարի ծուխն ու հոտը

արթնացրին նրա մեջ մանկության հուշեր, բայց այս անգամ հայտնված տեսիլները ակնթարթային ու մշուշոտ չէին, այլ բացարձակապես պարզորոշ. նա տեսավ իրեն տղայական հասակում, սարահարթի սառցե քամու բերանն ընկած, ցրտից դողալիս եւ կողքին տեսավ հենց նոր, աղբակույտի գիշերակերներից ոչխարի փորոտիք խլած մորը՝ Բենդիսխան Ալվարադոյին, որը մինչեւ ոսկորները սառած որդուն կերակրելու համար ճաշ էր եփելու:

Տասնմեկը խփեց, եւ նա սկսեց մարել լույսերը միջանցքում ու դատարկ սենյակներում, մի անգամ էլ շրջեց պալատում լամպը ձեռքին. տասնչորս մթնած հայելիներում տասնչորս անգամ տեսավ իր արտացոլանքը՝ լամպը ձեռքներին տասնչորս միանման գեներալներ: Բայց հայելիներից մեկի խորքում, համերգային դահլիճում, նա սմբակները վեր ցցած, հասակին ընկած մի կով նկատեց եւ ձայն տվեց իսկույն. «Կով, այ կով, սա ի՞նչ բան է: Ստակե՞ղ է, ի՞նչ է»: Նա քաղաքացրեց դեպի պահակախմբի սենյակը՝ զգուշացնելու, որ քիչ առաջ հայելու մեջ ստեսած կով է տեսել,- «Հարկավոր է վաղ առավոտյան դուրս բերել դրան, թե չէ վրա կթափվեն անգղները»: Այս հրահանգը տալով, լամպը ձեռքին, առաջին հարկի ողջ երկարությամբ սկսեց փնտրել պակասող երեք կովերին,- նա փնտրեց նրանց սրասրնոցներում, սեղանների տակ, բոլոր հայելիների եռանում, հետո մի հարկ վեր եկավ եւ փնտրեց այնտեղ, աչք գցելով բոլոր սենյակները, բայց ոչ մի տեղ ոչինչ չհայտնաբերեց, բացի մի թխսկան հավից, որ նստել էր վարդագույն ու ժանյակավոր ամպհովանու տակ, անհիշելի ժամանակներից կուսանոցի միանձնուհու անկողնու վրա,- նա նույնիսկ նրա անունն էր մոռացել. հետո, քնելուց առաջ, մի գդալ մեղր կերավ եւ պուլիկը կրկին թաքստոցը դնելիս գտավ իր անհաշիվ թղթե շերտիկներից մեկը.- այդ թղթին մի ինչ-որ նշանավոր տարեթիվ էր նշված՝ կապված ականավոր բանաստեղծ Ռուբեն Դարիոյի անվան հետ, եւ թող ասածս արքայությունում փառավորվի նրա հոգին: Կարդալով գրությունը եւ ոչինչ չհասկանալով, նա կրկին գալարեց այն խողովակաձեւ, տեղը դրեց ու աղոթք մրմնջաց. «Հայր մեր, հրաշագործ ուսուցիչ մեր երկնքի, դու, որ օդում սավառնակներ ես պահում եւ ծովի հարթության վրա՝ նավեր...»: Այս աղոթքը շրթներին նա քաղաքացրեց առաջ ընչազուրկ փղի իր վիթխարի

ուռքերով, անքնությունից տառապած, լուսավորված կանաչ՝ լուսաբացների վերջին ակնթարթներով, լույսի վերջին կանաչ փնջերով, որ արձակում էր պտտվող փարոսը. նա լսում էր վաճառված ծովին կարոտած քամու աղմուկը, ժամանակի ցնորքային հեռուներում ինչ-որ հարսանեկան ուրախության երաժշտություն. այդ հարսանիքում տեր ատածո անհաշվենկատությամբ քիչ մնաց դանակ խրեն նրա թիկունքը. հանկարծ նա դեմ առավ մոլորված կովին եւ ճանապարհ ուղեց տալ. «Կով, այ կով, գնա այստեղից»: Կովին վոնդելով, նա իր ննջասենյակը գնաց, բոլոր քսաներեք լուսամուտներից տեսնելով ծովազուրկ քաղաքի լույսերը. յուրաքանչյուր պատուհանից նրա վրա փչում էր քաղաքի ընդերքից ելնող գաղանիքների շունչը, հոգարավոր մարդկանց խորհրդավոր շնչառությունը՝ քաղաքի միաձույլ շնչառությունը. քսաներեք անգամ նա տեսավ նրան,- բոլոր լուսամուտներից,- եւ, ինչպես միշտ, ամեն անգամ նոր ուժով ընկալեց մեծ ու ահեղ փոփոխականությամբ այդ անընդգրկելի, անհասանելի օվկիանոսը, որի անունը ժողովուրդ էր. նա պատկերացրեց այդ ժողովրդին քնած, ձեռքը սրտին դրած եւ հանկարծ գիտակցեց, թե որքան խոր են ատում իրեն նրանք, ովքեր, թվում էր, ամենից շատ էին սիրում: Նրա պատվին մոմեր էին վառում, մոլեռանդ հավատով արտասանում անունը, այդ անունով խնդրում, որ ծննդկանները հաջող ազատվեն հղիությունից եւ որ մահը հեռանա մեռնողների մահճից, եւ անիծում էին նրան լույս աշխարհ բերողին՝ մորը, երբ անցած օրերի լուսնոտային լիմուզինների զրահապակու միջից տեսնում էին նրա թախծոտ, իգուանի աչքերը, վշտարեկ շրթները, կանացի ձեռքը. համբուրում էին նրա հաքավոր կոշիկների հետքերը, որ դաջվում էին ցեխերի մեջ եւ ետեւից հղում անեծքներ, ամենասարսափելի մահին էին օգնության կանչում այն շոգ գիշերներին, երբ քաղաքային ամեն ներքնաբակից անմարդաբնակ Իշխանության տան լուսամուտների թափառող կրակներն էին նշմարվում: «Ոչ ոք մեզ չի սիրում»,- հառաչեց նա եւ աչք գցեց թուչնապահ վարպետի, պիրոյների նկարչուհու, մոր՝ Բենդիսիոն Ալվարադոյի ննջասենյակը. մոր մարմինը վաղուց փտել էր հուղարկավորման դամբարանում: «Խաղաղ մահ քեզ, մայր»,- շշնջաց նա:- «Խաղաղ մահ քեզ, զավակս»,- արձագանքեց մայրը դամբարանից:

Ուղիղ տասներկուսն էր, երբ նա լամպը կախեց Ննջասենյակի դռան մոտի կեռից, շամփրված փոշտանկի դաժան ցավից,- փոշտանկը նույնիսկ սուլում էր սոսկալի այդ ցավից: Ցավը զավթել էր ամեն ինչ, աշխարհն էր դրավել, տարածությունը, այլևս չկար ոչինչ, բացի ցավից, եւ նա վերջին անգամ փակվեց երեք բանալիով, երեք սողնակով եւ երեք շղթայով, վերջին զոհը մատուցեց իր փոքրիկ աթոռակին՝ իրագործելով վերջին ու ժլատ միզաթափությունը, եւ բերանքսիվայր ընկավ մերկ հատակին՝ առանց հանվելու, կոշտ կտորի շալվարով, որ հագից չէր հանել ընդունելություններն ու տեսակցությունները դադարեցնելու օրերից, առանց դնովի օձիքի շերտավոր վերնաշապկով, իսկուն, մուրացիկի հողաթափերով, դեմքը, ինչպես բարձին, ափերի մեջ խրեց եւ ակնթարթորեն քնեց, բայց երկուսն անց հինգ բոպիին արթնացավ ծանր, շշմած գլխով, ոտքից գլուխ քրտինքի մեջ կորած,- նույնիսկ հագուստն էր թրջվել քրտինքից, ինչպես լինում էր միշտ, փոթորկից առաջ: «Ո՞վ է»,- դողացող ձայնով հարցրեց նա, որովհետեւ հիշեց, որ երազում մեկը ձայն էր տվել իրեն, բայց դիմել էր այլ անունով. «Նիկանոր:- Եվ էլի.- Նիկանոր»: Հավանաբար ներս էր խցկվել առանց կողպեքներին դիպչելու. փակ սենյակ մտնելու ընդունակությամբ օժտված մեկը: Իսկ երբ շուրջբոլորը նայեց, տեսավ, որ մահն էր,- «Ձեր մահն էր, իմ գեներալ, մեղա նկող մեղսագործի քրձեր հագած, կեռգլուխ ցուպը ձեռքին. գանգը փաթաթված էր գերեզմանոցային խոտերով, ոսկորների ջարդված-քներում ստորերկրյա ծաղիկներ էին բուսել, ակնախոռոչներում առկայծում էին այն հին օրերի գուշակուհու աչքերը»: Եվ երբ նա տեսավ նրան ողջ հասակով, իսկույն գլխի ընկավ, թե ինչու էր մահն իրեն «Նիկանոր*, Նիկանոր» կանչում: Մահը չէ՞ որ այդ անունով է դիմում նրանց, ում շատ է հավանում: Բայց նա բացականչեց. «Սպասիր, մահ: Չէ՞ որ դեռ չի հասել իմ ժամը: Ես պետք է մեռնեմ քնի մեջ, իմ առանձնասենյակի կիսախավարում, ինչպես անհիշելի ժամանակներում կանխատեսել է կույր պայծառատեսը՝ նախաստեղծ ջրերի հայելուն նայելով»: Բայց մահը պատասխանեց. «Ոչ, գեներալ, դուք կմեռնեք այստեղ, հիմա: Դուք կմեռնեք

* Նիկանոր (Հուն.) - հաղթանակը տանող, այս դեպքում մահի հաղթանակը, ամենազորությունը:

ոտաբոբիկ, մուրացիկի հագուստով, ինչով որ կաք, թեեւ նրանք, ովքեր կգտնեն ձեր մարմինը, կհավատեն, թե գտել են ձեզ առանձնասենյակում, առանց տարբերանշանի դաշտային համազգեստով, ձախ կոշիկի ոսկյա խթանով,- նրանք այդպես կասեն առաստղերին չհակադրվելու համար, մարդասիրության նկատմամբ հավատը պահպանելու համար»: Եվ նա մեռավ այնպես, ինչպես ասաց մահը, մեռավ այն պահին, երբ ամենից քիչ էր ուզում մեռնել, երբ այդքան տարիների անպտուղ պատրանքներից ու ինքնախաբեությունից հետո սկսել էր գլխի ընկնել, որ մարդիկ չեն ապրում, գրողը տանի, այլ գոյություններն են պահպանում, որ ամենաերկար ու գործունյա կյանքն էլ հազիվ է բավականացնում ապրել սովորելուն, այն էլ ամենավերջում: Նա մեռավ, երբ հասավ իր ամփոփմանը. մի ժամանակ (ճանապարհի սկզբին) հավատալով, թե ընդունակ չէ սիրելու, ինչը վկայում էին, իբր, հարթ, առանց գծերի ձեռնափները եւ հայտնում գուշակուհիների խաղաքարտերը, նա փորձեց մարմնական սերը փոխարինել իշխելու սիրով, իր հոգում խնամելով իշխելասիրության հրեշին, տալով նրան ամեն բան. նա կամավոր զոհ դարձավ եւ ողջ կյանքում այրվեց հրեշավոր զոհասեղանի մարմանդ կրակի վրա. նա իրեն սնում էր խաբեությամբ ու մեղքերով, հասունանում դաժանության ու ապականության վրա, ճգմում նեղսի տենդագին ապահովությունը, ի ծնե վախկոտությունը հանուն այն բանի, որ մինչեւ աշխարհի կործանումը սեղմ բռունցքում պահի իր ապակյա գնդիկը, չհասկանալով, որ իշխելու ծարավն է ծնում միայն իշխելու անհագ ծարավ, չհասկանալով, որ իշխանությամբ հագեցնել անհնար է՝ թե մինչեւ մեր, թե մինչեւ այլ աշխարհների կործանումը, իմ գեներալ:

Այնինչ նա հենց ամենասկզբից գիտեր, որ իրեն առաջին հերթին խաբում են նրանք, ովքեր սիրաշահում են նրանք, գիտեր, որ քծնանքի գիմաց կանխիկ են վճարում, գիտեր, որ ցնծությամբ իրեն փառաբանող եւ հավերժական կյանք մաղթող մարդկանց զենքի ուժով են փողոց դուրս բերում, գիտեր այս բոլորը եւ վարժեցրել էր իրեն ապրել այս ստով, նվաստացուցիչ այս փառքի տուրքով, քանզի անհաշիվ տարիների ընթացքում բազմիցս համոզվել էր՝ ստոր հարմար է կասկածից, օգտակար՝ սիրուց, երկարակյաց՝ ճշմարտությունից. նա այլեւս ոչ մի բանի վրա չէր զարմանում, երբ հա-

սավ իշխանության ամոթալի պատրանքին. հրամայում էր՝ իշխանության տակ ոչինչ չունենալով, փառաբանվում էր՝ փառքը կորցրած, եւ սփոփվում էր՝ պալատականների հնազանդությամբ միայն, չվայելելով եւ ոչ մի հեղինակություն: Իր աշնան դեղին տերեւաթափի տարիներին նա համոզվեց, որ երբեք ի զորու չի լինի իր ողջ իշխանության տերը լինելու, երբեք չի ընդգրկի ողջ կյանքը, քանզի դատապարտված է կյանքի թիկունքային կողմը ճանաչելու ճակատագրով, դատապարտված է կեղծ իրականության գոբելենի, պատրանքային գորգելենի կարերը գննելու, հենքի թելերը խճճելու եւ թեզանի հանգույցները քանդելու ճակատագրով միայն. նա գլխի չէր ընկնում եւ չհասկացավ ամենավերջին պահին նույնիսկ, որ իսկական, իրական կյանքը բոլորիս աչքի առաջ էր, բայց մենք տեսնում էինք այդ կյանքը բոլորովին այլ տեսանկյունից, իմ գեներալ,- թշվառների տեսանկյունից, տեսնում էինք անվերջանալի տարիների մեր վշտի ու մեր տառապանքների միջից, առանց նկատի ունենալու, թե այդ տարիներից որում ենք մենք, այնուամենայնիվ, տպրիլ, եւ մեր դժբախտությունը դժբախտություն էր, իսկ ակնթարթային երջանկությունը՝ երջանկություն. մենք գիտեինք, որ մեր սերը վարակված է մահվան հարուցիչով, բայց դա իսկական սեր էր, անդավաճան սեր, իմ գեներալ: Սերը մեր պայծառ աստղն էր այն կյանքում, որտեղ դուք ընդամենը ցնորքային տեսիլք էիք վագոնի լուսամուտի փոշոտ ապակու ետեւում, որտեղից մեզ տեսանելի էին ձեր խղճուկ աչքերը, դողացող, անգույն շրթները, մեռաքայլ ձեռնոց հագած ձեր ձեռքի հրաժեշտի թափահարումը,- առանց կյանքի գծերի ձեռքի թափահարումը այն ծերի, որին մենք երբեք էլ չճանաչեցինք, չիմացանք նրա ինչ լինելը. արդյոք, աստվածե՛ր չէ՞ր անհեթեթ այդ բանակալը, որը չէր ջոկում երեսի եւ ետեւի կողմերը այն կյանքի, որ մենք սիրում էինք նրա երեւակայությանը անհասանելի, անսպառ կրքով. նա չէ՞ որ սարսափում էր իմանալ մեր իմացածը՝ կյանքը դժվարին է ու արագընթաց, բայց ուրիշ այլ կյանք չկա, իմ գեներալ: Մենք չէինք սարսափում այդ միակ, իրական կյանքից, որովհետեւ գիտեինք, թե ով ենք մենք, իսկ նա, սուլող փոշոտանկով անվերջ քայլող այդ ծերը, որ հատակին փռվեց կյանքից արմատախիլ անող ճակատագրական հյուրի մի հարվածից, թե իր եւ թե մեր վերա-

բերմամբ մնաց խոր անտեղյակության մեջ. իր աշնան սառը, վերջին տերեւների մութ-հեղեղ շրշյունի մեջ նա ձգվեց դեպի մոռացության մռայլ երկիրը, սարսափով կառչեց մահվան նավակի փտած առագաստների լաթերից, կյանքին օտար, մարդկային ամբոխների անզուսպ խնդությանը անհաղորդ, ազատության թմբուկներին եւ տոնական հրավառությանը խուլ, խուլ ու անհաղորդ ցնծության զանգերին, որ մարդկանց հայտնում էին բարի ավետիսը՝ սպառվեց հավերժության անհաշիվ ժամանակը:

Գարսիա Մարկես, Գաբրիել

Գ 363 **Նահապետի** աշունը: Վեպ (թարգմ. ռուս. Ռ.Հովսեփյանի): Երևան: Նորք, 2000 - 294 էջ:

Վերջին տարիների իրադարձությունները մեզ ընդհուպ մոտեցնելով նոբելյան մրցանակի դափնեկիր Գարսիա Մարկեսի գեղարվեստական աշխարհին, անմիջական մասնակիցը դարձնելով այդ աշխարհի հետ աղերսներ ունեցող մեր նորօրյա գրականությունը, ընդկլայնել են «Նահապետի աշունը» վեպի կենսական տարածքը: Այս վեպը նաև մեր կյանքի արտացոլումն է:

Գ 4703040100 2000 ԳՄԴ 84.7 Կո
0142(01)-2000

Գաբրիել Գարսիա Մարկես

ՆԱՀԱՊԵՏԻ ԱՇՈՒՆԸ

Խմբագիր ՖԵԼԻՔՍ ՄԵԼՈՅԱՆ
Շարվածքը համակարգչային
էջադրումը, սրբագրումը ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
Ձևավորումը՝ ՄՈՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

Հանձնված է շարվածքի 10.03.2000թ.
Ստացված է տպագրության՝ 6.06.2000թ.
Չափսը 84X108 1/32: Ծավալը՝ 18.25
Տպաքանակը 500: պատվեր՝ 101

«Նորք» հրատարակչություն
Երևան, Մարշալ Բաղրամյան 3, հեռ. 58-45-17

«Երևանի առաջին տպարան» ՓԲԸ
Երևան 10, Հանրապետության 65
հեռ. 52-36-00.